



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

Հ Ա Յ  
Մ Ա Տ Ե  
Ն Ա Պ Ի Ր  
Ն Ե Ր

# ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՉԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ո Չ

Թարգմանություններ, ներածություններ  
և ծանոթագրություններն  
ակադեմիկոս Ար.Մալխասյանցի



ՀԱՅԿԱՍՏԱՆ

Իրապարակություններ  
Երևան  
1968

Խմբագրական կոլեգիա՝

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա., ԱՌԱՔԵԼՅԱՆ Վ. Գ.,  
ԲԱՐՍԵՂՅԱՆ Խ. Հ., ԽԱԶԻԿՅԱՆ Լ. Ս.,  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Գ., ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա.,  
ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լ. Վ., ՈՒՓՄԱԶՏԱՆ Հ. Մ.

Բնագրի հետ համեմատեցին, խմբագրեցին  
Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԸ և Վ. Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

ФАВСТОС БУЗАНД  
ИСТОРИЯ АРМЕНИИ

(На армянском языке)  
Издательство «Айастан»  
Ереван, 1968

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Փավստոս Բուզանդի «Այոց պատմություն» գրքի ներկա աշխարհաբար հրատարակությունը ակադեմիկոս Ստ. Մալխաչյանցի թարգմանությունն է, որ առաջին անգամ լույս է տեսել 1947 թվականին: Սակայն այս հրատարակությունը զգալիապես տարբերվում է նախորդից: Խմբագրությունը նպատակահարմար գտավ հիմնովին վերանայել, լրացնել, ճշտել ու բարեփոխել հիշյալ թարգմանությունը: Այսպիսով, Փավստոսի երկի աշխարհաբար թարգմանությունը ընթերցողին է ներկայացվում բազմաթիվ փոփոխություններով ու լրացումներով: Նախ՝ թարգմանվել են այն հատվածները, որոնք այս կամ այն պատճառով բաց էին թողնված նախորդ հրատարակության մեջ (համեմատի՛ր IV, Ե թարգմ. էջ 150, բնագիր՝ 83—88, VI, Դ թարգմ. էջ 242, բնագիր՝ 200—202, V, LU թարգմ. էջ 269, բնագիր՝ 236 և այլն): Բնագրի հիման վրա բազմաթիվ տեղեր թարգմանվել են նոր մոտեցումով, հայ բանասիրության վերջին նվաճումների տեսանկյունից:

Վերանայված են թարգմանչի ծանոթագրությունները, ուր կատարված են որոշ անհրաժեշտ կրճատումներ և մասնակի լրացումներ:

Ժամանակակից հայերենի օրինաչափությունների նկատառումով թարգմանության լեզուն և ոճը հիմնավորապես վերանայված են: Մասնակի փոփոխության է ենթարկված նաև ներածությունը: Այս հրատարակության մեջ օգտագործվել է նաև Վարազ Առաքելյանի գրախոսությունը Փավստոսի երկի աշխարհաբար թարգմանության մասին («ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատոր III, Երևան, 1948 թ.):

Թարգմանությունը բնագրի հետ համեմատելով բարեփոխեցին և խզմբագրեցին Վ. Գ. Առաքելյանը և Ա. Ա. Արթուրյանը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փավստոս Բուպանդ.— Պատմության համառոտ բովանդակությունը.— Դպրությունների հարցը.— Կարծիքներ Պատմության ծավալի, լեզվի, գրության ժամանակի և հեղինակի ազգության մասին.— Ա և Բ դպրությունները եղե՞լ են, թե ոչ.— Փաստարկումներ հոգուտ հեղինակի հոպյն լինելուն և նրանց քննությունը.— Փաստարկումներ հոգուտ հեղինակի հայ լինելուն.— Հեղինակը ժամանակակից չէ.— Ակնարկություններ Ե դարի անցքերի վրա.— Ժամանակագրություն չունի.— Պատմության հայ գրավոր աղբյուրները.— Գրության ժամանակը.— Հեղինակի հայասիրությունը.— Լեզուն, ոճը.— Ո՞վ է հեղինակը.— Փավստոս Բուպանդ անունը.— Բուպանդարանի էությունը.— Չորույցների գլխավոր տարրերը.— Հոգևոր վեպ.— Արքունական տան վեպ.— Մամիկոնյան տան վեպ.— Խորենացի և Փավստոս.— Բնագրի տպագրություններն ու թարգմանությունները.— Ներկա թարգմանության հանգամանքները:

## ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴ—ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հինգերորդ դարից մեր ձեռքն է հասել մի պատմական հիշատակարան, որ կրում է «Փաստոսի Բուզանդացոյ պատմութիւն Հայոց», կամ ավելի հին, իսկական աճուճով՝ «Բուզանդարան պատմութիւնք» վերնագիրը: Այս գրվածքը պարունակում է Հայոց պատմությունը՝ սկսած Տրդատի որդի և հաջորդ Խոսրով Կոտակից մինչև Հայաստանի երկու մասի բաժանվելը Պարսից և Հունաց միջև, այսինքն՝ 319-ից մինչև 384 թվականը, ուրեմն 65 տարվա պատմություն: Գրվածքը բաժանված է չորս դպրության, որոնք կոչված են Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ և Վեցերորդ դպրություններ: Երրորդ դպրության վերնագրում դրված է «Իսկիզբն» բառը, Վեցերորդ դպրու-



թյան վերնագրում՝ «Վերջ» բառը, որոնք ցույց են տալիս, թե գրվածքն ըսկալում է Երրորդ դպրությանը և վերջանում Վեցերորդով: Դպրությունները բաժանված են մանրամասն վերնագրեր ունեցող գլուխների: Երրորդ դպրությունը բաղկացած է 21 գլխից և ընդգրկում է Խոսրով Կոտակի ու Տիրանի թագավորությունների ժամանակաշրջանը: Չորրորդ դպրությունը բաղկացած է 59 գլխից և ընդգրկում է Արշակի թագավորության շրջանը մինչև Երա Անհուշ բերդում բանտարկվելը: Հինգերորդ դպրությունը բաղկացած է 44 գլխից և վերաբերում է Պապի ու Վարազդատի թագավորությունների ժամանակին, Արշակի և Վաղարշակի թագավորներին: Վեցերորդ դպրությունը բաղկացած է 16 գլխից, որոնցից առաջինում պատմվում է Հայաստանի երկու մասի բաժանվելը Պարսից և Հունաց միջև՝ Արշակ ու Վաղարշակ թագավորներով, իսկ հաջորդ 15 գլուխները պարունակում են համառոտ տեղեկություններ մի քանի հայ եպիսկոպոսների մասին:

Թագավորների պատմության հետ մեծ տեղ է տրված նաև Մամիկոնյան ցեղից մի քանի սպարապետների պատմության, ինչպես՝ Վասակի, Մուշեղի, Մանուելի, որոնք դուրս են բերված իբրև աննկուն, քաջահաղթ կովողներ, հայրենիքի, եկեղեցու և բնիկ Արշակունցի հայ թագավորների համար ապրող ու մեռնող հերոսներ: Քաղաքական պատմությանը զուգընթաց ընդարձակ տեղեկություններ են հաղորդված հայ նշանավոր հոգևորականների մասին, որոնց մեջ կենտրոնական տեղ է գրավում Ներսես Մեծը: Բերված են նրանց վարքը, քարոզները, աղոթքները, կատարած բարեգործություններն ու հրաշագործությունները: Հեղինակի անձի մասին Գ դպրության վերջում կա այսպիսի հիշատակարան. «Կատարեցաւ երրորդ դարք քսան և մի պատմութեանց դպրութիւնք, ժամանակագիր կանոնք Փաստեայ (տակած է՝ փախստեայք) Բիւզանդեայ մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց»: Իսկ Վեցերորդ դպրության ցանկի վերջում՝ հետևյալը. «Ստորոտ ամենայն պատմութեանց, լաղազս իմ տեղեկութեան, որք միանգամ գմատեանս ընթեռնոյք՝ տունք տասն համարական թուօք»: Սակայն գրքի վերջում այս տասը տունը չկա:

### ԳՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԸ

Գիրքն ունի առաջաբան, որի մեջ հեղինակը (կամ խմբագրողը), առաջին դեմքով (եզակի) խոսելով, հայտնում է, որ գիրքը բաղկացած է չորս դպրությունից, Երրորդից Վեցերորդ, որոնք պարունակում են Հայոց պատմությունը Խոսրով Կոտակից մինչև Հայոց թագավորության անկումը, այսինքն՝ ցույց է տալիս գրքի ծավալն ու բովանդակությունը ճիշտ այնպես, ինչպես որ ներկայումս գոյություն ունի: Իսկ Գ. դպրության Ա գլխում ուրիշ բան ենք տեսնում: Այստեղ հեղինակը (կամ խմբագրողը), առաջին դեմքով (հոգնակի) խոսելով, հայտնում է, թե «Թաղեաւ առաջալի քարոզությունից և Երա մարտիրոսական վախճանից մինչև Գրիգորի վարդապետության վերջը... և առաքելապան Սանատրուկ թագավորից մինչև

Տրդատ թագավորի... վախճանը... ուրիշների կողմից արդեն գրված են: Բայց մենք էլ մեր պատմության ընթացքում փոքրիշատե նշանակեցինք... սխառնաճ կարգը պահպանելու համար, որովհետև տեղ կա, որ մեր պատմությունը առաջինն է, տեղ կա, որ վերջինը, իսկ ինչ որ միջին է, այն ուրիշների ձեռքով արդեն գրվեց»: Այս խոսքերից երևում է, թե հեղինակը միջին է կոչում պատմական անցքերը Սանատրուկից մինչև Տրդատի մահը: Վերջին է կոչում պատմական անցքերը Տրդատի որդու՝ Խոսրովի ժամանակից այս կողմ, այսինքն՝ այն, ինչ ներկայումս գտնում ենք Փավստոսի Պատմության մեջ: Ըստ այսմ՝ հեղինակի կոչած «մեր պատմության» առաջին մասը կազմելիս են եղել պատմական անցքերը Սանատրուկից առաջ, և հեղինակը այս առաջին մասը վերջին մասի, այսինքն՝ Խոսրովի և հաջորդների պատմության հետ կապելու համար հիշատակում է ուրիշներից գրված միջին մասը Սանատրուկից մինչև Տրդատ, որպեսզի պատմության ընթացքը չընդհատվի, կամ ինչպես ինքն է ասում՝ որպես մի աղյուս դրված շենքի պատի մեջ: Այս խոսքերից հետևում է, թե «մեր պատմության» հեղինակը գրած է եղել նաև «Հաստատանի պատմությունը», նախքան Սանատրուկի թագավորելը, որ ոչ միայն մեր այժմյան բնագրերում չկա, այլև հակասում է առաջաբանին, ըստ որի՝ Փավստոսի Պատմությունը բաղկացած է ընդամենը չորս դպրությունից (Գ—Զ), որոնք անմիջապես հասել են մեր ձեռքը:

Բացի վերոհիշյալ կարևոր հակասությունից, այս Պատմության մեջ աչքի են ընկնում մի շարք տարօրինակություններ. այսպես են՝ ժամանակագրության բացակայություն, կամ ժամանակագրական տվյալների մեջ անպատեհություն, գլուխների ոչ հաջորդական դասավորություն, այնպես որ շատ գլուխներ կարելի է իրենց տեղերից հանել և ուրիշ տեղ դնել՝ առանց խանգարելու պատմության ընթացքը: Արշակ թագավորի և Շապուհի միջև մղված երեսնամյա պատերազմի մեջ, որին նվիրված են Փավստոսի դպրության ԻԶ—ԽԶ գլուխները, անտեղի կերպով ընկած ԽԴ գլուխը՝ Պապ թագավորի կյանքի նկարագրով:

Վերը տեսանք, որ Պատմության առաջաբանը և Ա գլուխը միմյանց հակասում են, և հարց է ծագում՝ արդյոք լրի՛վ է հասել մեր ձեռքը այս Պատմությունը, թե սկզբից թերի է: Դարձյալ բանասիրության համար վիճելի հարցեր են—ո՛վ է այս Պատմության հեղինակը. հա՛յ, թե մի օտարագրի. ի՛նչ առնչություն ունի գրքի վրա դրոշմված Փավստոս անունը գրքի հեղինակի հետ. ի՛նչ լեզվով է գրված Պատմությունը, հայերեն, թե մի ուրիշ լեզվով, այսինքն՝ մեր ձեռքին եղած գրվածքը բնագիր է, թե թարգմանություն. ե՛րբ է գրված այս Պատմությունը, ինչո՞վ պետք է բացատրել վերոհիշյալ տարօրինակությունները: Այս հարցերի ընթացքը և լուծմանը նվիրված են շատ ուսումնասիրություններ, և դեռ չեն գտնված ընդհանուրին ընդունելի պատասխաններ:

Հարկավոր ենք համարում համառոտակի մեջ բերել զանազան բանասերների կողմից այս հարցերի մասին հայտնված կարծիքները, որքան մեզ հայտնի են:

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ, ԼԵՋՎԻ, ԳՐՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԼԵՂՈՆԱԿԻ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փավստոսի Պատմության առաջին քննադատող եղել է դեռ հինգերորդ դարի վերջերին Ղազար Փարպեցին: Նա հիշելով նախընթաց երկու պատմիչներին՝ Ագաթանգեղոսին և Փավստոսին, վերջինիս մասին հետևյալն է ասում. «Երկրորդ Պատմության հեղինակ են կոչում մի ոմն Փավստոս Բյուզանդացու: Բայց որովհետև նրա Պատմության մեջ տեղ-տեղ պատահում են ոչ հարմար և ոչ պատշաճ խոսքեր... ուստի ստիպվում եմ ասել, թե այդպիսի անպատշաճ գրվածքի հեղինակ չէր կարող լինել Բյուզանդիայում ուսած մարդ (կամ Բյուզանդացի ուսումնական) ... Արդ՝ այսպիսի քաղաքում և այսքան ուսումնական մարդկանց մեջ կրթություն ստացած Փավստոսը կարող էր իր Պատմության մեջ գրել լսողներին այնքան անհաճո բաներ: Այս չի կարող լինել: Ուստի ես այս բանը անհավատալի համարելով՝ իմ կարճ խելքով, կարծում եմ, թե մի այլ հանդուգն և անկիրթ մարդ լրբաբար ձեռք է խառնել նրա գրածի մեջ և իր գլխից գրել է ինչ որ կամեցել է: Կամ գուցե մեկը, չկարողանալով ավելի պատշաճ բան գրել, այլևայլ բաներ գրեց և Փավստոսի անունով կամեցավ ծածկել իր հանդգնության սխալները, և այս բանը պարզ երևում է ամեն մի քննողի, որովհետև հույների, մանավանդ ասորիների մեջ շատերը կան, որ այսպիսի լրբություն են գործել: Տգետ և հանդուգն մարդիկ իրենց գլխից գրել են անպիտան և դատարկ բաներ ու խառնել գիտնականների գրքերի մեջ»: Ինչպես հետո կտեսնենք, Փարպեցու այս սուր դիտողությունը փոքր բարեփոխությամբ միանգամայն հիմնավոր է:

Փարպեցու այս անգլաստ գնահատությունից ազդված կամ ինքնուրույնաբար՝ հետագա հայ պատմագիրներն ևս արհամարհանքով են վերաբերվել Փավստոսի Պատմությանը և իրենց պատմությունները գրելիս ընդհանրապես հետևել են Մ. Խորենացու, բայց ոչ Փավստոսի Պատմությանը:

Մ. Չամչյանն իր ընդարձակ Հայոց պատմության մեջ (Վեցերորդ, 1781) խիստ աննպաստ կարծիք է հայտնում Փավստոսի մասին՝ նրան համարելով թշնամի Հայոց ազգի և թագավորության. ասում է, թե նա եղել է մի օտարազգի (հույն) բախտախնդիր, փառամուլ, խոտվարար հոգևորական (Ե. Մ., եր. V):

Փավստոսի Պատմության առաջին գնահատողը եղավ ֆրանսիացի հայագետ Սեյ Մարտենը. նա ասում է, թե Փավստոսի Պատմությունը ավելի ճիշտ գաղափար է տալիս Հայաստանի վիճակի մասին չորրորդ դարում, քան Խորենացու Պատմությունը: Նրա կարծիքով՝ Փավստոսի Պատմությունը գրված է չորրորդ դարի ինքնուրույն թվականներին (Ե. Մ., VI, 8):

Հայկազյան բառարանի հեղինակները, հատկապես Մ. Ավգերյանը, Չամչյանի տեսակետն ունեն: Նրանք կարծում են, թե Պատմության հեղինակը հույն Փավստոս եպիսկոպոսն է, Մ. Սահակի կաթողիկոսությունից առաջ, որ գրել է հունարեն լեզվով՝ Երրորդ դարությունից մինչև Վեցերորդը,

կրկնաբանություններով և անհեթեթություններով լի, որոնք առասպելների են ցմանվում: Հեղինակը վատարանում է հայ ազգը: Շատ հայկաբան թարգմանություն է, որ կատարել է Մետրոպի աշակերտներից մեկը, հավանորեն Կորյունը, որ Բուզանդի խոսքերից ինչ-ինչ հատվածներ փոխ է առնում ու հարմարեցնում Ս. Մետրոպի Վարքին: Դիտում են նաև, որ հույն պատմագիր Պրոկոպիոսը (Ջ դարում) ինչ-ինչ հատվածներ վերցնում է Փավստոսից՝ կոչելով այն Պատմություն Հայոց: Ենթադրում են դարձյալ, որ այս Պատմությունն սկզբնապես ունեցել է նաև ճախնական ժամանակի Հայոց պատմությունը, բայց հայերեն թարգմանված են միայն վերջի չորս դարությունները քրիստոնեության ժամանակի մասին, որտեղ ժամանակագրությունը ավելի ստույգ է երևում:

Ղ. Ինճիճյանը կարծում է, թե Պատմության հեղինակը հայ է, Սահահունյան տոհմից<sup>1</sup>, որ Բյուզանդիայում ուսած լինելով՝ կոչվել է Բյուզանդացի և ընդունել է Փավստոս անունը: Նա իր Պատմության համար շատ բան քաղել է Հայոց մատյաններից և դիվաններից. նա շատ պարագաներ պատմում է մանրամասնորեն, որոնք Խորենացին իր հայտնի համառոտասիրությամբ զանց է արել կամ շատ համառոտ է պատմել: Ուստի չպետք է արհամարհել այս Պատմությունը, պետք է աշխատել այս երկու հեղինակներին մոտեցնել և մերժել միայն այն, ինչ որ հայտնապես հակառակ է Խորենացու Պատմությանը: (Այս կարծիքը բերված է Զարթհանյանի «Հայկական հին դպրության պատմություն» մեջ, 1886, էջ 230—2):

Ղ. Գաթրոնյանը Ղ. Փարպեցու նման նույն կարծիքին է, թե մի անծանոթ հայ իր սեփական գրվածքը զարդարել է ծանոթ հույն ժամանակագրի անունով, այս հույն ժամանակագրի անունը Փավստոս Բյուզանդ (Բյուզանդ) է և ոչ Փավստոս Բյուզանդացի: Բուն հեղինակը հայ է, Սահահունյան տոհմից—զում հայ հողեն բուսած, բուրբ հայ երկիրը թզալ և քալ չափած, ամեն մեկ տողին մեջ իր հայրենակցաց գաղափարաց գունով սնած», որ հավաքել ու գրի է առել հայկական առակները, առասպելները, ցուցքերը, ազգային և ընտանեկան սովորությունները: Նա խոստանում է գրքի վերջում («Ստորոտ ամենայն պատմութեանց») իր մասին տասը տող տեղեկություն տալ, բայց այդ տասը տողից և ոչ մեկը չկա. հավանորեն Ղ. Փարպեցին էլ չի կարդացել: Այս անծանոթ հեղինակը աչքի առաջ ունեցել է մի հույն պատմագիր, հավանորեն Ամմիանոս Մարկելիանոսին, որի հետևողությամբ գրել է մի քանի գլուխ՝ Կեսարիայի Եվսեբիոս պատրիարքի և Բարսեղի կյանքին վերաբերող պալանդություններով հանդերձ: Ուրիշ անձների մասին պատմված ինչ-որ տեղեկություններ նա փոխադրել է հայ մարդկանց վրա.

<sup>1</sup> Փավստոսը (Գ. ԺԲ), թվելով այն նախարարներին, որոնք մանուկ Հուսիկին Կեսարիա տարան կաթողիկոս ձեռնադրվելու, ի միջի ալոց հիշում է. «զմերոյ տանմի ազգի իշխանն Սահահունաց»: Բայց շատ բանասերներ հետո նկատել են, որ զմերոյ տոհմի ազգի» աղավաղություն է, փոխանակ Մերոհադատի կամ մի այլ հատուկ անվան:

այսպես՝ Վաղես կայսեր հետ նրա հիվանդ որդու մասին խոսողը Բարսեղն է, իսկ ըստ Փավստոսի՝ Ներսես կաթողիկոսը: Հայ անապատականների պատմություններից ընդօրինակում է Խաղ սարկավագապետի գործած հըրաշքները, Մամբրեի միայնանոցում կատարված հրաշալի դեպքը (Ե, 28) հեղինակն առել է ուրիշ վանական պատմություններից, շատ բան աղոթքների մեջ փոխ է առել Բարսեղի պատարագամատուցից: Իր թերություններով հանդերձ՝ բավական նյութ է մատակարարում բանասիրության կամ լեզվաբանության համար, ինչպես նաև աշխարհագրական ու պատմական ծանոթությունների համար: (Հրատարակված է «Հանդես ամսօրյա»-ում 1889, մարտ, էջ 40—43): Իր հիեզերական պատմության մեջ Գաթըրճյանը հաճախ օգտվում է Փավստոսից:

Գ. Զարբհանալյանը «Հայկական հին դպրության պատմության» մեջ (Վեներտիկ, 1865, Բ տպ. 1886) Փավստոսի Պատմության հեղինակին հույն է համարում՝ հիմնվելով հետևյալ փաստերի վրա. գրքի մեջ հիշատակվում են Փավստոս եպիսկոպոս և նրա եղբայրը՝ Առոստոմ, որոնց համար պատմիչը վկայում է, թե «էին ազգաւ հոռոմ», այս Փավստոսը, Զարբհանալյանի կարծիքով, կարող է լինել Պատմության հեղինակը. դարձյալ Երրորդ դպրության վերջին գլխից հետո տրված կարճ հիշատակարանում վկայվում է, թե Փավստոս Բուզանդ մեծ պատմագիրը հունաց ժամանակագիր էր: Սրանցից ավելի՝ Բուզանդի գիրքը ինքը հայտնում է հեղինակի ազգությունը: Այս գրքում անցքերի պատմությունը ավանդվում է բոլորովին տարբեր մյուս հայ պատմիչներից և մանավանդ Խորենացուց, և հայ հեղինակի համար անկարելի կլիներ այսպիսի անգիտություն ժամանակով մերձավոր մարդկանց և դեպքերի վերաբերմամբ: Մի կարևոր հանգամանք էլ այն է, որ հեղինակի մեջ երբեմն նկատվում է մի հնացած ասելություն դեպի հայ ազգը, որի պատճառով միշտ առիթ է փնտրում մեր ազգը պարսավելու\*։ Զարբհանալյանը կարծում է, որ հույն հեղինակը քաջահմուտ է եղել հայերեն լեզվին և գրել է հայերեն: Հիմնվելով Պատմության առաջաբանի վկայության վրա՝ Զարբհանալյանը գտնում է, որ Պատմությունը լրիվ է հասել մեր ձեռքը, իսկ որ Առաջին դպրությունը կոչված է Երրորդ դպրություն, նա բացատրում է նրանով, որ Առաջին և Երկրորդ դպրություն համարված են Թադեոս առաքյալի և Գր. Լուսավորչի (Լաբուրճայի և Ագաթանգեղոսի) գրվածքները:

Մ. Էմինը Փավստոսի Պատմության Ֆրանսերեն թարգմանության մեջ, որ հրատարակվեց Լանգլուայի հայ պատմագիրների ժողովածուի (Collection) Ա հատրում 1867 թվականին, երկու տարբեր կարծիք է հայտնում Փավստոսի Պատմության բնագրի մասին: Առաջին՝ նա գտնում է, որ այս Պատմությունը լրիվ է հասել մեր ձեռքը, իսկ Պատմության Երրորդ դպրությանը սկսվելը բացատրում է նրանով, որ հեղինակը Առաջին և Երկրորդ դպրություն համարել է Ագաթանգեղոսի երկմասնյա Պատմությունը: Երկրորդ՝ նա

«Բուզանդարան պատմությունը» վերնագիրը հասկանում է իբրև «Պատմական մատենադարան Փ. Բուզանդի», և կարծում է, թե Բուզանդը գրած է եղել ուրիշ ազգերի պատմություններ, որոնք կազմել են նրա այժմ կորած Ա և Բ դպրությունները, հաջորդ չորս դպրությունները (Գ—Զ), որ Հայոց պատմության են վերաբերում, թարգմանված են հունարենից հայերեն հինգերորդ դարի առաջին կեսում:

Գուտշմիդը (Glaubwürdigkeit) Ագաթանգեղոսից հետո հիշում է Փավստոս Բուզանդին և կոչում է նրան առաջին իսկական պատմագիր, որ չորրորդ դարում հունարեն գրել է Հայոց պատմություն, որի հայերեն թարգմանությունը պահպանվել է: Նա ամենակարևոր աղբյուրներից մեկն է այն ժամանակի պատմության, բայց զգուշությամբ պետք է օգտագործվի նրա չափազանցությունների և մոլեռանդ կուսակցականության պատճառով, որ նա հանդես է բերում՝ իբրև հոգևորականության կողմնակից՝ թագավորության դեմ: Բայց սրանից ավելի՝ հայ թարգմանության ծանր, կոպիտ, «ոչ-դասական» ոճը պատճառ եղավ, որ այս ամենահին պատմագիրը հայ գրականագետների կողմից մինչև այսօր անարդարացի կերպով արհամարհված է:

Զ. Պատկանյանը կարծում է («Ванские надписи», ըստ Ե. Մ.-ի), թե Փավստոսի Պատմությունը հայերեն է թարգմանված ասորերենից, հիմնվելով այն բանի վրա, որ Պատմության մեջ Հայաստանը կոչված է Թորգոմական աշխարհ, իսկ ըստ Կիպերտի վկայության՝ հնագույն ժամանակներում սեմական ազգերն էին այս անունով կոչում մեր աշխարհը: «Библиографический очерк Армянской исторической литературы» աշխատության (1879) առաջաբանում նա անցողակի խոսում է և Փավստոս Բուզանդի մասին, համարում է նրան չորրորդ դարում ասորացի. նա ժողովրդական պատմիչ է, պահպանել է ժողովրդական ավանդությունների արձագանքները՝ սրանց հատուկ չափազանցություններով ու պատմական սխալներով: Երկու հիմնական պատմվածք կազմում են նրա բովանդակությունը՝ ս. Ներսեսի կենսագրությունը և Արշակ ու Պապ թագավորների վարած պատերազմները Շապուհի դեմ: Հեղինակը այս երկու նյութերը ճարտարորեն հյուսել է իրար: Հինգերորդ դարության մեջ զրույցի ձևով պատմել է Արշակ թագավորի երեսնամյա պատերազմները Շապուհի հետ, որտեղ նկարագրվում են Մամիկոնյան տան սպարապետների քաջագործությունները: Իսկ Փավստոսի Պատմության իր հրատարակության առաջաբանում նա Փավստոսին կոչում է «անհամեմատն ի պատմագիրս մեր և քան զբազումս արդարախօսն Փաւստոս»:

Ա. Մ. Գարսագաշյանը («Զննական պատմություն Հայոց», 1880, Բ տպ., 1895) Բուզանդ պատմագրին համարում է ծաղկած Տրդատի անմիջական հաջորդների ժամանակակից, այսինքն՝ Խոսրով Կոստակից մինչև Հայոց թա-

\* Փավստոսը երբեմն բացասական վերաբերմունք է ցուցաբերում առանձին անձերի ու դեպքերի նկատմամբ և այն էլ ցավով:—Խմբ.:

1 Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, Leipzig, 1876.

գավորության բաժանումը կամ մինչև Արշակ (Բ) թագավորը, որ գրել է այդ ժամանակի պատմությունը, որի մեծագույն մասին ականատես է եղել կամ ի մոտո տեղյակ: Սրանից հետևում է, որ Գարագաշյանը նրան համարում է հույն և Պատմությունը՝ հունարեն գրված, որ հետո թարգմանվել է հայերեն: Գարագաշյանը այս ժամանակի պատմությունը գրել է հետևելով Փավստոսին՝ «ինչպես Արիադնյան թելի»: Սակայն այս նախամեծարությունը, որ նա տալիս է Փավստոսին Խորենացու նկատմամբ, նրան չի արգելում անաչառ ըննել այս հեղինակին ևս, «մանավանդ որ միամիտ պատմիչն մեր կթողու զինքն տանել հորձանաց յուրո միտմանն ի հրաշալիս՝ և ի կրասկցությունն եկեղեցական խմբի, հորմե և ինքն է» (Բ տպ., հատ. Բ, էջ 2 և 8):

Նորայր Բյուզանդացին («Քննասեր», 1887) Փավստոսի Պատմության մեջ նկատում է երկու իրար հակասող ոգի, մեկը՝ լկտի, զվարճացող, ծիծաղեցող, մյուսը՝ բարեպաշտական, լի աղոթքներով, հրաշքներով և այլն: Նրա կարծիքով գրքի հեղինակը հույն Փավստոս Բուզանդն է, աշխարհական, որ գրել է լկտիաբան պատմություն, ապա այս գրվածքը անցել է մի աստիի եկեղեցականի ձեռքը, որ այն համեմել է կրոնաբարեպաշտական մասերով: Փոփոխության ենթարկված ու ընդմիջարկված այս օրինակն է հասել մեր ձեռքը հայերեն թարգմանությամբ: Թարգմանիչն է Կորյունը: «Բուզանդարան պատմութիւնք» կապակցությունից Ն. Բյուզանդացին ենթադրում է, թե «նախնաբար երկու կամ երեք զանազան բյուզանդացի մատենագրաց պատմություններ ամփոփյալ էին ի միում տփի... և օտար ոմն հանած է այս տփեն միայն զԳ, զԴ, զԵ և զԶ դպրությունս»:

Փավստոսի Պատմության առաջին բազմակողմանի քննությունը պատկանում է Ե. Մ.-ին (Եղիշե Մատթայան): Նա 1890 թվականին Վիեննայում տպագրեց մի գրքուկ՝ «Փավստոս Բյուզանդ» վերնագրով: Նախ նա բերում է այն փաստերը, որոնց հիման վրա բանասերները Պատմության հեղինակին համարել են հույն կամ հայ, և ցույց է տալիս, որ այդ փաստերից ոչ մեկը համոզիչ չէ: Հետո իր կողմից մի նոր մեկնություն է առաջարկում «Ստորոտ ամենայն պատմութեանց» հիշատակարանին (տ. եր. 7), այսինքն՝ «Իմ մասին հաղորդված տեղեկություններից հետո գալիս են տասը գլուխ», և որովհետև Ջ դպրությունը 16 գլուխ ունի, իսկ վերջից սկսած տասը գլուխ առաջ, Ե գլխում գրված է «Փավստոս և Ջորթ եպիսկոպոսների մասին», Ջ գլխում էլ՝ «Փավստոս եպիսկոպոսի եղբոր՝ Առոստոմի մասին», սրանից Ե. Մ. մակաբերում է, որ Պատմության հեղինակի խոստացած տեղեկությունը իր անձի մասին պետք է փնտրել այս գլուխներում: Իսկ այստեղ Ե գլխում պատմվում է, թե Փավստոսը Ներսես կաթողիկոսի տանը ապրում էր իբրև նրա տասներկու ներքին խորհրդականներից ու գործակիցներից մեկը, իսկ հաջորդ Ջ գլխում ասված է, թե Փավստոսը և նրա Առոստոմ եղբայրը «ազգաւ Հոռոմ էին»: Սրանով, Ե. Մ.-ի կարծիքով, այլևս առանց որևէ կասկածի լուծվում են հեղինակի ազգության և նրա արարած ժամանակի կարողիցալ հարցերը: Այս հույն հեղինակը՝ Փավստոսը, ժամանակակից և շատ անգամ ականատես է եղել իր պատմած անցքերին: Պատմությունը

գրել է ոչ ուշ, քան 391 թվականը, դեռ Ասպուրակես կաթողիկոսի կենդանության ժամանակ, որովհետև չի հիշում, թե նա քանի տարի է կաթողիկոսություն արել: Սրանով էլ վճռվում է Պատմության սկզբնագրի լեզվի հարցը:

Մետրոպոլիտան գրեթե (որոնց գլուխը Ե. Մ. դնում է 406-ին) հայերեն գրականություն չի եղել, գրում էին հույն կամ ասորի տառերով, ուրեմն, այս Պատմությունը գրված է հունարեն և հայերեն է թարգմանված հինգերորդ դարում: Սրանով էլ բացատրվում է այն երևույթը, որ ս. Գրքից բերված ցիտատները համապատասխանում են ս. Գրքի հայերեն թարգմանությանը, ուրեմն, այս թարգմանությունից են վերցված (բերում է հինգ օրինակ): Նրա լեզուն ամենևին չի հիշեցնում Ե դարում թարգմանված այլ գրվածքների լեզուն: Դասական լեզվին զուգընթաց Հայաստանում զարգանում էր և ժողովրդական լեզուն, և այս ժողովրդական լեզվով է թարգմանված Փավստոսի Պատմությունը, որ ավելի բնական է, քան հինգերորդ դարի նույնիսկ ինքնուրույն հեղինակությունները: Նրա մեջ պատահում են քիչ քանակությամբ հունարեն բառեր, բայց Ե. Մ. գտնում է, որ դրանք սովորական են մեր հին գրականության մեջ:

Բնագրի ծավալի վերաբերմամբ Ե. Մ. նկատում է, թե Գ, ա գլխում «... է ինչ մեր պատմութիւն, որ՝ առաջին է»... Նախադասությունը ցույց է տալիս, թե Փավստոսի Պատմությունն ունեցել է նաև նախնական ժամանակների պատմությունը մինչև Թադեոս առաքյալը և Սանատրուկը, որ մեր ձեռքը չի հասել: Պրոկոպիոսից բերում է մի հատված, թե Պարսից մի թագավոր Հայաստանի վրա թագավոր է կարգում իր եղբայր Արշակին, ինչպես գրված է Հայոց պատմության մեջ: Ե. Մ. կարծում է, թե այս տեղեկությունը գտնվում էր Փավստոսի նախնական ժամանակի պատմության մեջ, որ այժմ չկա: Նա գտնում է, որ Դ դպրության մեջ թերի է ժՋ գլուխը՝ Արշակի Պարսկաստանից փախչելու մասին (տե՛ս մեր ծանոթ. 102) բնագիրը պարունակում է աղավաղություններ, որոնցից ինքը ուղղում է 27 հատ: Փավստոսի Պատմության մեջ մնացել են նրա գործածած աղբյուրների հետքեր: Ե. Մ. անհրաժեշտ հավելվածներ է համարում Դանիել եպիսկոպոսի և Ներսես Մեծի անեծքներն ու զուշակությունները, որոնք մուծվել են Պատմության մեջ հինգերորդ դարի առաջին կեսից ոչ առաջ: Մի քանի գլուխներ ակնհայտ կերպով ձգձգված են, ինչպես Ներսես Մեծի քարոզությունը Վաղես կայսրի առաջ, անապատ կղզում և Բագավանի ճակատամարտի ժամանակ նրա աղոթքները և այլն: Աղբյուրների մեջ, բացի ս. Գրքից, Ե. Մ.-ը հիշում է նաև Կորյունին և Ագաթանգեղոսին, որոնցից մի-մի օրինակ է բերում: Փավստոսը ուրիշ աղբյուրներից ծանոթ լինելով որևէ մի անցքի՝ այս անցքը վերագրում է հայերին: Այսպես, Վաղեսի հիվանդ որդու պատմությունը, որ վերաբերում է ս. Բարսեղին, Փավստոսը վերագրում է Ներսես Մեծին: Փեքիանոսի վրա աղավաղի իջնելը վերագրում է ս. Բարսեղին և Ներսես Մեծին: Վաղեսի աջտրած եպիսկոպոսների մեջ է դնում նաև Ներսեսին: Նա շատ բան գրել է իբրև ժամանակակից և ականատես, մանավանդ

հոգևորականներին վերաբերող մասերում, բայց և շատ բան պատմում է՝ օգտը-վելով անգիր ավանդություններից, և որովհետև զուրկ է ըննադատության կա-րողությունից, ուստի առանց այլևայլության, առանց երկբայության, լոջորեն պատմում է ամենամահավատալի առասպելներ՝ լիովին նրանց հավատ ընծայե-լով: Կրոնական նեղ հայացք ունենալով՝ նա շատ պատմական անցքեր բա-ցատրում է աստուծո միջամտությանը, իբրև վարձատրություն բարեպաշտական գործերի կամ իբրև պատիժ անօրինությունների (առաջինի համար օրինակներ՝ Հուսիկը, Դանիելը, Ներսեսը, Մուշեղը, երկրորդի համար՝ Սանեսանը, Տիրանը, Պապը...): Ավանդությունների վրա հիմնված, կղերական ոգով լուսաբանված այս Պատմությունը ներկայացնում է բազմաթիվ անճշտություններ, չափա-զանցություններ, ժամանակագրական սխալներ (օրինակներ), ուստի «որ-պես Պատմություն Փավստոսի երկասիրությունը չի դիմանում լուրջ կրի-տիկայի»: Բայց ունի մեծ արժեք՝ ուսումնասիրելու համար Դ դարի հայոց հավատալիքները, սովորությունները, նախարարների հարաբերությունը թա-գավորի իշխանության հետ, մեր եկեղեցու սկզբնական վիճակը, Հայաստա-նի տեղագրությունը, աշխարհագրությունը: Հենց նրա առասպելներն էլ, Խորենացու ասածի նման, «զճշմարտութիւն իրացն այլաբանաբար լինքեա-նըս ունին թաքուցեալ», այնպես որ հմուտ բանասերը կարող է նրա հա-ղորդած տեղեկություններից դուրս բերել իսկական իրողությունը: Այս տե-սակետից Փավստոսը թանկագին աղբյուր է Խորենացու Պատմության եր-րորդ գրքի ընդության համար: Լեզուն ընտիր է, բայց խտնուրդ է դասական և ուսմական ոճի, զուրկ է պարզ տրամաբանական կատարելությունից, գե-ղարվեստական ճաշակից: Փավստոսի նկարչական գործությունը նրա անխնա իրապաշտությունն է. ընթերցողի աչքի առջևով անցնում են մի շարք պատ-մական գործիչներ՝ իրենց ֆիզիկական և բարոյական կերպարանքով:

Հ. Տ.-ը (Հ. Տաշյան) Ե. Մ.-ի այս գրվածքի ըննադատության մեջ («Հան-դես ամսօրյա», 1890, մարտ, էջ 68—71) հերքում է Ե. Մ.-ի տված բացատ-րությունը Փավստոսի «Ստորոտ ամենայն պատմութեանց» հիշատակարանին. հերքում է նաև Ե. Մ.-ի նկատած հունաբանությունները և հունարեն բառերը Փավստոսի մեջ: Ինքը համարում է, որ Փավստոսի հեղինակը հայ է և գը-րել է հայերեն, մեծագույն ապացույց համարելով այն իրողությունը, որ Փավստոսը բառացի ճշտությամբ ցիտատներ է բերում ս. Գրքից և Բարսեղի պատարագամատույցի հայերեն թարգմանությունից: Խիստ է գտնում Ե. Մ.-ի դատաստանը Փավստոսի մասին, թե «որպես Պատմություն» Փավստոսի եր-կասիրությունը չի դիմանում լուրջ կրիտիկայի»: Ինքն իր կողմից նկատում է, թե «ո՛չ յուր (Փավստոսի) անթիվ գրույցներն ու առասպելները, ո՛չ ժա-մանակագրության և պատմության սխալներն և ոչ այլ թերություններ կըր-նան յուր նաև պատմական նշանակությունը ոչնչացնել»: Նույն բանասերը մի ուրիշ անգամ («Հանդես ամսօրյա», 1905, «Արշակունի դրամներ», էջ 163, ծանոթ.) այլ կերպ է հասկանում Փավստոսի խոսքը՝ «...է ինչ մեր պատ-մութիւն, որ առաջին է» և այլն, այն մտքով, թե Բուզանդ կհայտնե, թե յուր Պատմության մեջ կան երեք կարգի ժամանակներ ալ. առաջին, միջին և

վերջին, և թեպետև միջինը գրված ալ է ուրիշներե, «Բայց զի մի ի միջի մերոյ Պատմութեանս ընդհատ երևեսցի՝ հուն մի նշանակեցաք»: «Ուստի Բուզանդա գիրքն հինքայն իսկ պակաս մ'ունենալու չէր.— իսկ եթե «կորս-ված» գրքերու դրությունը կընդունաի, անշուշտ, ազատ է ամեն բանասեր յուր կարծիքն ունենալ, բայց համոզիչ փաստեր՝ ներկա հանգամանաց մեջ անկարելի է բերել»:

Հ. Բ. Սարգիսյանն իր «Ազաթանգեղոս և յուր բազմադարյան գաղտնիքն» աշխատության մեջ (Վենետիկ, 1890) այն կարծիքն է հայտնում, թե Փա-վլեստոսի Պատմության հեղինակը «պետք է որ Դ դարու վերջերը ապրող հայ մի եղած լինի (Սահառունի կամ Բուզանդացի) և յուր գործը ոչ թե հայերեն, այլ հունարեն լեզվով շարադրած է, օգտվելով ասորի և հույն հիշատակարաններե, որուն մեջ ապա Ե դարում կամ թարգմանության և կամ մի ուրիշ առիթով անծանոթ գրչե մը այլ և այլ եկամուտ հատվածներ ներմուծված են... Նա չէր կարող Ե դարում և գլխովին հայերեն լեզվով շարադրված լինել, ապա թե ոչ՝ վերոհիշյալ հեղինակներն (Սուկրատ, Սողո-մեն և Պրոկոպիոս) ոչ կարողալ պիտի կարողանային գայն և ոչ այլ անտի հատվածս մեջ բերել, և սակայն Պրոկոպիոս ըստ հունարեն բնագրին մեջ բերած է բոլոր Արշակա պատմությունն, և ոչ թե ըստ բերանացի ավան-դության կամ ըստ հայերեն գրության»: Կորյունի և Փավստոսի մեջ նկատ-ված մի քանի կտորների նույնությունը այս բանասերը բացատրում է նրա-նով, որ Կորյունն օգտվել է Բուզանդի Պատմության հայերեն թարգմանու-թյունից:

Ն. Մառը («О начальной истории Армении Анонима», «Визант. Вре-менник», 1894) այն կարծիքն է հայտնում, թե Փավստոսի Պատմությունը, որ սկսվում է Երրորդ դարությունից, սկզբնապես ունեցել է նաև Առաջին և երկրորդ դարությունները. սրանք այն երկու դարություններն են, որ ընկած են այժմ Սեբեոսի Պատմության սկզբին (ըստ Զ. Պատկանյանի հրատարա-կության) դարություն Առաջին, դարություն երկրորդ անունով:

Փավստոսի Պատմության հեղինակին նա, ըստ երևույթին, համարում է հայ. բացարձակ մերժում է Փավստոսի «Ստորոտ ամենայն պատմութեանց» հիշատակարանի Ե. Մ.-ի բացատրությունը, ըստ որում հեղինակը հոռոմ Փա-վլեստոս եպիսկոպոսն է, որ հիշվում է Պատմության Զ դարության Ե գլխում: Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ կարծիք ուներ Ն. Մառը Փավստոսի Պատմության վերաբերյալ ուրիշ հարցերի նկատմամբ:

«Հանդես ամսօրյա»-ում (1896, № № 1, 2, 3) տպագրվեց իմ «Ուսում-նասիրություն Փավստոս Բուզանդի» հոդվածը, որի մեջ աշխատել եմ ցույց տալ, թե Փավստոսի Պատմության հեղինակը հայ է, դարոցական ուսում չստացած, բոտն հայասեր, որ գրել է Ե դարի երկրորդ կեսում հայերեն՝ օգտվելով ժողովրդական ավանդություններից, որոնք երեք գլխավոր շարքից

1 Այս հարցի մասին տե՛ս մանրամասն մեր՝ Սեբեոսի հրատարակու-թյան առաջաբանը:

են բաղկացած՝ արքունական տան՝ կենտրոնական տեղում ունենալով Արշակ թագավորին, եկեղեցական ուխտի՝ կենտրոնական տեղում ունենալով Ներսես Մեծին, և Մամիկոնյան տան՝ իր Վասակ, Մուշեղ, Մանուել հերոսներով: Անհայտ հայ հեղինակը վերցրել է գրքի մեջ հիշատակված Փավստոս հույն եպիսկոպոսի անունը, որպեսզի դրանով ավելի վստահություն ներշնչի ընթերցողներին: (Մանրամասնություններն ու ապացույցները այստեղ չենք բերում կրկնությունից խուսափելով, որովհետև քիչ հետո նույն հարցերը նույն տեսակետով մանրամասն պիտի շոշափենք):

ժ. Մարկվարտը («Untersuchungen... S. Zur Kritik des Faustus von Byzanz», «Philologus», հայերեն թարգմանությունը՝ «Հանդ. ամսօրյա», 1897, էջ 5—9, 183—186. 1898, էջ 320—326) գրել է քննադատություն Փավստոսի Պատմության բովանդակության, նրա հաղորդած պատմական փաստերը, անձերի անունները և ժամանակագրական տեղեկությունները համեմատելով հույն հեղինակների տեղեկությունների հետ: Կարևոր աղբյուր է Փավստոսի երկի բովանդակության քննության, ինչպես և պատմական անցքերը ճշտիվ որոշելու համար:

«Հանդես ամսօրյա»-ում 1898-ին տպագրվեց և ապա արտատպվեց այնտեղից Լ. Դադբաշյանի քննությունը՝ «Փ. Բյուզանդացի և լուր Պատմության խարդախողը» վերնագրով: Հեղինակը նկատում է, որ Փավստոս Բուզանդացու և Մովսես Խորենացու Պատմությունների մեջ «մի կողմից՝ բառացի ակնհայտնի նմանություններ կան, իսկ մյուս կողմից՝ հակառակ տարբերություններ, անհամաձայնություններ ու հակասություններ: Պետք է փորձել այս երկու տրամախնայ պատմագիրներին միմյանց հետ համեմատելով նոցա մեջ եղած առնչությունը հաստատելու և բացատրելու նոցա մեջ գոյություն ունեցող հակասությանց պատճառները»: Իր քննության մեջ հեղինակը կատարում է այս համեմատությունը Փավստոսի և Խորենացու ավանդածների՝ սկսած Խոսրով Կոտակից ու Վրթանեսից մինչև Պապը և ս. Ներսեսի հաջորդները, այսինքն՝ ամբողջ Փավստոսը Խորենացու Պատմության 9 գրքի բ—գր գլուխների հետ: Իբրև ընդհանուր գիծ՝ այս քննության մեջ արտահայտվում է այն հայացքը, թե Փավստոսի պատմածները ճշմարիտ են, իսկ Խորենացին, որտեղ որ նրանից տարբեր է ավանդում, խարդախում է նրա Պատմությունը, և ինքը՝ հեղինակը, աշխատում է ցույց տալ, թե ինչն'ից ողորկված Խորենացին այլափոխել է Փավստոսի պատմածները: Հեղինակը կատաղի թշնամի է Խորենացուն, նրա տված բացատրությունները հաճախ անհիմն ու ծիծաղաշարժ են, չափազանց անվայել, փողոցային հայրոյանքներ է թափում Խորենացու վրա:

Գր. Տեր-Պողոսյանը «Հանդես ամսօրյա»-ում (1900 թ.) մի ուսումնասիրության մեջ՝ «Նկատողություններ Փավստոսի Պատմության վերաբերյալ» վերնագրով աշխատում է ցույց տալ, թե այս Պատմության 2 դպրությունը, առաջին գլխից սկսած մինչև վերջինը, Պատմության բուն հեղինակի գրածը չէ, այլ մի օտար գրչի անհարազատ հավելված: Փավստոսին վերաբերող մյուս հարցերի մասին հեղինակը խոստանում է խոսել իր աշխատության

երկրորդ և երրորդ մասերում, բայց որքան մեզ հայտնի է՝ սրանք լույս չեն տեսել:

Դ. Ալիշանը («Հայաստան» , Վենետիկ, 1901) Պատմության հեղինակին համարում է հունահայ, այսինքն Հայաստանի հունական բաժնում ծնված քնիկ հայոց ծնունդ, որ երկար ժամանակ, գուցե մանկությունից ի վեր, ապրած ու վարժված է Բյուզանդիոնում: Պրոկոպիոսը նրա Պատմությունից է առել Արշակ Բ-ի՝ Անհուշ բերդն աքտրվելու և մեռնելու պատմությունը, և սրանից Դ. Ալիշանը հետևցնում է իբրև անտարակուսելի ապացույց, թե Փավստոսի Պատմությունը գրված է եղել հունարեն, պատմած անցքերին ժամանակակից և ակնհայտ անձի կողմից, մոտ մի դար հետո թարգմանվել է հայերեն: Հեղինակին նա համարում է աշխարհական մարդ: Պատմության մեջ նկատվող կրկնաբանությունները և ճոխությունը Դ. Ալիշանը ավելի վերագրում է թարգմանչին, քան հեղինակին: Քանի որ Պատմությունն սկսվում է 9 դպրությամբ, սրանից ենթադրվում է Ա և Բ դպրությունների գոյությունը: Այս մասին որոշակի կարծիք չունի Դ. Ալիշանը: Նա համարում է, որ այս դպրությունները կամ կորած են, կամ նրանց տակ հասկացվում է Ագաթանգեղոսի գրածը, կամ մի ուրիշ պատճառ:

Ն. Ադոնցը («Начальная история Армении у Себеоса», «Визант. Временник», 1901, т. VIII, № № 1, 2), խոսելով Սեբեոսի, Մար-Աբաս Մծուրացու և Ս. Խորենացու Պատմության փոխարաբերության մասին, շոշափում է նաև Փավստոս Բյուզանդացու հարցը. նրա կարծիքով՝ Փավստոսի Պատմությունը նախ գրված է եղել հունարեն, չորրորդ դարի վերջերին կամ հինգերորդի սկզբներին, մետրոպոլիտային հնարումից առաջ, և հինգերորդ դարում թարգմանվել է հայերեն: Նա պարունակելիս է եղել վեց դպրություն՝ Ա—Զ, որոնցից առաջինը բովանդակել է հայոց նախնական ժամանակի պատմությունը (Մար-Աբաս Մծուրացի փիլիսոփայից). Երկրորդ դպրությունը՝ Թադեոս առաքյալի քարոզությունը. իսկ 9—2 դպրությունները՝ Խոսրով Կոտակից այս կողմ, ինչ որ հասել է մեզ: Ադոնցի կարծիքով՝ Պատմության հայ թարգմանիչը բաց է թողել առաջին երկու դպրությունները, առաջինը՝ որովհետև հեթանոսական ժամանակի պատմություններ են, որոնք նեղահայաց կրոնավոր թարգմանչի համար անհանդուրժելի էին, երկրորդը՝ որովհետև առանձին գրքով գոյություն ուներ, այնպես որ նա թարգմանել է միայն 9—2 դպրությունները, և Ղազար Փարպեցին այս հայերեն թարգմանությամբ է ծանոթ Փավստոսին, ուստի և նրա այժմյան 9 դպրությունը ճանաչում է ինչպես Առաջին դպրություն: Պրոկոպիոս պատմիչը ծանոթ է եղել Փավստոսի Պատմությանը, որը կոչում է Հայոց պատմություն և նրանից քաղվածքներ է անում: Խորենացին ևս ծանոթ է Փավստոսի լիակատար Պատմությանը (Ա—2 դպրություն), և ինչպես որ նրա 9 գիրքը համառոտությունն է Փավստոսի 9—2 դպրությունների, այնպես էլ, հավանորեն, նրա Ա և Բ գրքերը համառոտությունն են Փավստոսի այժմ կորած Ա և Բ դպրությունների՝ լրացված ուրիշ աղբյուրներով: Փավստոսը

գրավոր աղբյուր չի ունեցել. գրել է ժողովրդի կենդանի ավանդուհանգրվանները, և գրույցների հիման վրա:

Ա. Մատիկյանը («Անանունը կամ կեղծ Սեբեոս» գրվածքում, Կիեւնա, 1913), հիմնվելով Փավստոսի «...է ինչ մեր պատմութիւն, որ առաջին է» և այն նախադասութեան վրա, հաստատապես պնդում է, թե Փավստոսը սկզբնապես ունեցել է նաև Ա և Բ դպրությունները, որոնց մեջ պատմած է եղել Հայաստանի անցքերը ջրհեղեղից մինչև Սանատրուկ թագավորը: Այս կորած մասից մի փոքր բեկոր պահպանված է Սեբեոսի Անանունի գրվածքում (Հայկից մինչև Շամիրամ և Արա Գեղեցիկ): Եվ որովհետև Անանունը այս բեկորը բերում է Մար-Աբաս Սծուրնացու գրքից, որ Խորենացու Մար-Աբաս Կատիճայի աղբյուրն է, սրանից եզրակացնում է, թե Խորենացու Մար-Աբաս Կատիճան Փավստոսն է: Խորենացին Փավստոսի առաջին երկու գլուխներից (որոնք համապատասխանում են նրա Պատմության Ա և Բ գրքերին) օգտվել է այնպես, ինչպես Փավստոսի այժմ գոյություն ունեցող գրքից՝ իր Գ գրքում, մի կողմից՝ ստրկորեն հետևելով և մյուս կողմից՝ այլալեզու կամ խորհրդակցելով: Որ Փավստոսի Ա Պատմությունը սկսվելիս է եղել ջրհեղեղից «զեթ այս մասին, հեղինակի ասելով, հայտնի ակնարկություններ ունենք»: (Բայց ոչ մեկը այդ հայտնի (?) ակնարկություններից չի բերում: Անանուն—Փավստոս—Խորենացի աղբյուրի նկատմամբ նա ընդհանրապես նույն հայացքն ունի, ինչ որ Արոնցը՝

Ահա՛ այն կարծիքները, որ, որչափ մենք գիտենք, հայտնել են բանասերները Փավստոսի Պատմության և նրա հեղինակի մասին: Որքան և բազմաթիվ ու բազմազան են այս կարծիքները, բայց երկու գլխավոր հարցերի շուրջն են պտտվում. 1. Ո՞վ է այս Պատմության հեղինակը, որի հետ բնանորոնել կապված է գրության ժամանակի և բնագրի լեզվի հարցը, 2. Լեռնի՞վ է հասել այս Պատմությունը մեր ձեռքը, թե սկզբից պակասում է երկու դպրություն: Նախքան այս հարցերի մասին վերև բերված կարծիքները քննելը հարկավոր է մի քանի խոսք ասել Փավստոսի Պատմության խմբագրության մասին:

Հինգերորդ դարի մեր պատմական հիշատակարանները թողորդ ենթարկված են խմբագրության: Կորյունից երկու խմբագրություն կա, որոնք երկուսն էլ տպագրված են: Եղիշեն ունի շատ խմբագրություններ, որոնցից միայն մեկն է տպագրված (Աճնաջայց օրինակն էլ այս խմբագրության մեջ հաշ-

1 Այս առաջարկը գրվելուց հետո, 1945 թվականին լույս տեսավ «Կաթողիկոս Մ. Արքայանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը Փավստոսի Պատմության մասին խոսելով՝ նա համառոտ հիշատակում է զանազան կարծիքները, որ հայտնված են այս գրքի հեղինակի և նրա գրվածքի մասին, և վերջը իբրև ստույգ մեջ է բերում այն հայացքները, որ մենք հայտնել ենք մեր «Փավստոս Բուզանդի Պատմության ուսումնասիրության» մեջ, ժանդարմության մեջ երկու անգամ հիշատակելով այս ուսումնասիրությունն իբրև աղբյուր (եր. 169—170):

վելով): Ազաթանգեղոսի սկզբնական բնագիրը կորած է. մեր ունեցածը նրա մի խմբագրությունն է. մի ուրիշ խմբագրությունից ծագել է արաբական թարգմանությունը: Խորենացին նույնպես ենթարկված է եղել մի քանի անգամ խմբագրության, որոնց ժամանակ մուծվել են նրա մեջ հավելվածներ ու ժամանակի հեղինակներից կամ դուրս են գցվել ամբողջ գլուխներ: Փարպեցին նույնպես ենթարկված է խմբագրության, այլապես անբացատրելի կմնան ս. Սահակի տեսիլն ու նրա մեկնությունը:

Բացառություն չի կազմում և Փավստոսի Պատմությունը, որ նույնպես կրում է խմբագրության հետքեր: Այսպես, տեսնում ենք, որ

1. Գիրքն ընկն էրկու առաջաբան, մեկը կոչվում է Խոստաբանություն, որ գրել է խմբագիրը, մյուսն ունի վերնագիր՝ Գլուխ առաջին, որ գրել է գրքի հեղինակը:

2. Խմբագիրը յուր մասին եզակի թվով է խոսում՝ «նկարեցի», «պատվաստեցի», «ասելոցս են», այնինչ հեղինակը յուր մասին խոսում է հոգնակի թվով՝ «մեք», «ի մերում», «եղաք», «թողաք», «մեր պատմութիւնն», «նշանակեցաք»:

3. Խմբագիրը նշանակում է յուր կատարած աշխատանքը՝ գլուխների վերնագրեր գրելը, դպրությունների առաջ ցանկեր (= Խոստաբանություն) դնելը, գլխակարգությունը, այնինչ հեղինակը ցույց է տալիս գրքի ծավալը, իբրև շարունակություն Ազաթանգեղոսի Պատմության:

4. Երրորդ դպրության վերջում նկատողությունը՝ «կատարեցաւ երրորդ դարք»... պատկանում է խմբագրին, որովհետև հեղինակը չէր կարող ասել յուր մասին, «որ էր ժամանակագիր Յունաց», չէր կարող իրեն կոչել «մեծ պատմագիր»:

5. Նույնպես խմբագրին է պատկանում «Ստորոտ ամենայն պատմութեանց...», որովհետև հեղինակը, որ ծպտված է Փավստոս Բուզանդ կեղծանվան տակ, չէր կարող իր մասին տեղեկություն տալ, որով իր կեղծիքը կրացվեր:

Ա ԵՎ Բ ԴՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՂԵ՛Լ ԵՆ, ԹԵ ՈՉ

Նախ քննենք այս երկրորդ հարցը: Այս հարցի լուծումը դժվարանում է նրանով, որ Պատմությունը սրա վերաբերյալ երկու իրար հակասող տեղեկություն է պարունակում: Առաջին տեղեկությունը գտնում ենք Խոստաբանության մեջ. «Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս—ժամանակագիր կանոնք մատենից և առ նմին դպրութիւնք երեք. այս ինքն են սոքա չորք մատենք, և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են...»: Մի քիչ ներքև բերում է այս չորս մատյանների ծավալը. «...ժամանակագիր արարեայ ի թագաւորութենէն Խոսրովու որդու Տրդատայ մինչև ի միս վերջին ժամանակն վատթարելոյ թագաւորացն Հայոց, և ի քահանայապետութենէն Կրթանայ որդու Գրիգորի առաջնոյ քահանայապետի մինչև յայնոսիկ ի վերջինսն որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց»: Այստեղ շատ որոշակի ասված է, որ այս Պատմությունն սկսվում է Երրորդ դպրությանը և

Գրան կից կան էլի երեք դպրություն և միասին կազմում են չորս դպրություն, և թե այս չորս դպրությունները պարունակում են հայոց պատմությունը՝ Խոսրովից և Վրթանեսից սկսած մինչև Հայոց թագավորների տկարանալը և գլխավոր եպիսկոպոսները, այսինքն՝ ճիշտ այն, ինչ գտնում ենք մեր ձեռքը հասած Պատմության մեջ: Եվ ամեն կասկած փարատելու համար Երրորդ դպրության վերնագրում դրված է «Իսկիզբն» (ուղղական հոլով), իսկ Վեցերորդ դպրության վերնագրում դրված է «Վերջ», այսինքն՝ որ Փավստոսի Պատմությունը սկսվում է Երրորդ դպրությամբ և վերջանում է Վեցերորդով:

Խոստաբանության այս տեղեկությունը հաստատվում է նաև Ղ. Փարպեցու վկայությամբ, որ իբրև առաջին պատմական գիրք հիշելով Ագաթանգեղոսի հայոց դարձի պատմությունը Գրիգոր Լուսավորչի ձեռքով՝ հայտնում է, թե երկրորդ գիրքը գրել է ոմն Փավստոս Բյուզանդացի, շարունակելով առաջին (Ագաթանգեղոսի) գիրքը և հասցնելով մինչև Արշակունյաց թագավորության երկու մասի բաժանվելը. ճիշտ այնպես, ինչպես որ ունի Խոստաբանությունը և ինչպես իրոք կա մեր ձեռքը հասած Պատմության մեջ: Այս երկու անկասկածելի վկայության հիման վրա պետք է եզրակացնենք, թե Փավստոսի Պատմությունը մեր ձեռքը հասել է ամբողջապես:

Բայց ինչո՞ւ այս Պատմությունն սկսվում է Երրորդ դպրությամբ և ոչ Առաջինով, ինչպես սպասելի էր: Այս հանելուկը բացատրելու միջոց է տալիս դարձյալ Ղ. Փարպեցին: Հիշելով, որ Լեոսես Մեծը անիծեց Արշակ թագավորին անմեղ Գնելի արյունը թափելու պատճառով, մեջ է բերում այդ անեծքը, որը բառացի նման է Փավստոսի երկում եղածին... «Եղիցես դու հեղեալ լերկիր իբրև զզուր լուսլեաց, և ի լարել աղեղան բարձրելոյն տկարացիր. և կործանումն որ բերանով մարգարեից ասացաւ, հասցէ ի վերայ ձեր—լմպել ազգիդ Արշակունեսաց զյետին բաժակն. արբջիք, արբեսջիք և կործանեսջիք և այլ մի՛ հաստատեսջիք» (Գլ. ԺԷ): Ղ. Փարպեցին ասում է, թե այս անեծքը գրված է «Ի Պատմութեան Երկրորդումն ի ճառին հնգետասաներորդի», այսինքն՝ Երկրորդ դպրության տասնհինգերորդ գլխում: Սակայն Փավստոսի երկում այս անեծքը գտնվում է Զորրորդ դպրության տասնհինգերորդ գլխում: Ուրեմն, մեր այժմյան Զորրորդ դպրությունը Ղ. Փարպեցու օրինակում եղել է Երկրորդ դպրություն, որից հետևում է, որ մեր այժմյան Երրորդ դպրությունը Ղազարի օրինակում կոչվելիս է եղել Առաջին դպրություն, որ միանգամայն արդարաբանում է Գ դպրության վեր-

1 Մ. Արեղյանը «Հայոց հին գրականության պատմության» մեջ (հր. 589) աշխատում է հերքել իմ այս բացատրությունը, որ ես Փարպեցու պատմութիւնն բառը հասկացել եմ Փավստոսի «դպրութիւն» բառով նշանակութամբ, նա կարծում է, թե Փարպեցու «պատմութիւն» բառով պետք է հասկանալ Փավստոսի ամբողջ Պատմությունը, ամբողջ գիրքը, իսկ դպրության հիշատակությունը, որ պակասում է Փարպեցու մոտ, կա՛մ Փարպեցին է մոռացել նշանակել, կա՛մ դուրս է ընկել, կորել է:

ճագրում գրված «Իսկիզբն» բառով: Ղ. Փարպեցու այս հատվածը օգնում է բացատրելու Փավստոսի Պատմության «Երրորդ դպրութիւն» նշումը փոխանակ Առաջին դպրության: Բացի սրանից, ինչպես բանասիրությունը ենթադրում է, այդ անհայտ խմբագիրը կազմելիս է եղել հայոց պատմագիրը, այսինքն՝ պատմական գրվածքների ժողովածու, որպիսիները շատ ունենք մեր ձեռագրերում: Ամեն մի պատմական գրվածք նա կնքել է «Դպրութիւն» անունով: Առաջին դպրությունը այս ժողովածուի մեջ եղել է, հավանորեն, վկայաբանություն ս. Թադեոս առաքյալի, Երկրորդ դպրությունը եղել է հայոց դարձի պատմությունը, որ Ղ. Փարպեցին կոչում է «Գիրք Գրիգորիսի»: Երբ դարձի պատմությունը, որ Ղ. Փարպեցին կոչում է Փավստոսինը, որի վրա դրել է հերթական թվահամարը՝ «Դպրութիւն երրորդ», ավելացնելով «Իսկիզբն», որպեսզի ընթերցողները տարակուսանքի մեջ չընկնեն, կարծելով, թե այս Պատմությունը սկզբից թերի է: Բայց որովհետև Փավստոսի Պատմությունն ունեցել է չորս դպրություն՝ Առաջինից Զորրորդ, այս անհայտ խմբագիրը, իր ժողովածուի հերթականությանը հետևելով, կոչել է Երրորդ-Վեցերորդ դպրություններ՝ վերջինի վրա ավելացնելով, դարձյալ ընթերցողներին հավաստիացնելու համար, «վերջ»: Այնուհետև գուցե դարձյալ շարունակել է ուրիշ պատմական երկեր մտցնել իր ժողովածուի մեջ՝ կոչելով Յոթերորդ, Ութերորդ... դպրություններ:

Բայց այստեղից բխում է մի կարևոր եզրակացություն. Խոստաբանությունը իր «Գ—Զ դպրություն» անուններով անճանոթ է Ղ. Փարպեցուն, որ գրել է Փավստոսի Պատմությունից 20—30 տարի հետո. Փարպեցին Փավստոսի Պատմությունը ճանաչում է Ա—Գ դպրություններով, ուրեմն, Գ—Զ դպրության անվանակոչությունը և խմբագրական այլ աշխատանքները կատարվել են Ղ. Փարպեցուց հետո՝ մի անհայտ խմբագրի ձեռքով. ուրեմն, Խոստաբանությունը բուն հեղինակին չի պատկանում:

Ամեն ինչ կարծես պարզ է և անկասկածելի:

Բայց արև հանդես է գալիս Գ դպրության առաջին գլուխը, որ վերիվայր

1 Տեղը չէ այստեղ մանրամասն հերքել Մ. Արեղյանի հիշյալ ենթադրությունները, այդ ուրիշ տեղ կանենք: Այստեղ բավականանում եմ միայն նկատելով, որ Փարպեցին Փավստոսի Պատմությունը ոչ մի անգամ չի կոչում Պատմություն երկրորդ, այլ միշտ կոչում է Երկրորդ գիրք (ինչպես Ագաթանգեղոսինը կոչում է Առաջին գիրք): Այնպես որ, եթե Փարպեցին կամենար Փավստոսի Պատմությունը նշանակել, նա կգրեր «Երկրորդ գիրք»: Եթե Փարպեցու գրածում խոսքը թերի է, ապա պետք է լրացնել այսպես. «Երկրորդ գիրքն ի պատմութեան երրորդունն»: Իմ տված բացատրությունը միանգամայն ուղիղ է:

Դարձյալ Մ. Արեղյանը սխալվում է՝ ենթադրելով, թե Խոստաբանության հեղինակը նույն ինքը Փավստոսն է, գրքի հեղինակը Խոստաբանության հեղինակը Փավստոսի երկը խմբագրողն է, ինչպես ցույց ենք տվել երբ 19-ում:



է տապալում խոստաբանությունից և Ղ. Փարպեցու վկայություններից դուրս  
քերված եզրակացությունները: Այս առաջին գլխում հեղինակը հայտնում է,  
թե Թադեոս առաքյալի քարոզությունից մինչև Գրիգոր Լուսավորչի վարդա-  
պետությունն ու նրա մահը և առաքելասպան Սանատրուկ թագավորից մին-  
չև Տրդատ թագավորի ականա հավատալն ու մահը՝ այս ամենը ուրիշների  
ձեռքով գրվեցին. «Բայց և մեք,— շարունակում է հեղինակը,— ի մերում  
աստ եղաք փոքր ի շատ է ի կարգի պատմութեանս, ոչ զանց արարեալ թո-  
ղաք վասն պատշաճ իրաց կարգին: Վասնզի է ինչ մեր պատմութիւն՝ որ  
առաջին է, և է ինչ՝ որ վերջին է, իսկ որ միջին ինչ եղև, այն ի ձեռն այ-  
լոց գրել գրեցաւ: Բայց զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևես-  
ցի, հուն մի նշանակեցաք, գոր օրինակ աղիւս մի կարգած ի մեջ որմոյն  
շինուածոյ, ի կատարումն րովանդակութեան»:

Ուրեմն, հեղինակը տարբերակում է հայոց պատմության երեք մաս, որ  
կոչում է առաջին, միջին և վերջին: Միջին է կոչում պատմությունը Սա-  
նատրուկից մինչև Տրդատի վախճանը, որ ուրիշներից արդեն գրված է.  
վերջին է կոչում Տրդատի հաջորդից՝ Խոսրովից սկսած պատմությունը, իսկ  
առաջին է կոչում պատմական անցքերը՝ բնականապես մինչև Սանատրուկը:  
Ինքն ասում է, թե իր Պատմությունը մասամբ առաջին է (մինչև Սանատ-  
րուկ) և մասամբ վերջին (Տրդատից հետո). միջինը (Սանատրուկից մինչև  
Տրդատի մահը) չի գրում, որովհետև ուրիշներից գրված է արդեն, բայց  
միայն հիշում է այստեղ մի քանի խոսքով՝ պատմության ընթացքը չընդ-  
հատելու համար, ինչպես որ մարդ մի աղուս ունի՝ շարվածքն ամբողջաց-  
նելու համար: Ուրեմն, այստեղ հեղինակը հայտնում է, թե իր Պատմության  
առաջին մասը կազմում է Սանատրուկին անմիջապես նախորդող հայոց  
պատմության շրջանը, որ մեր այժմյան ձեռագիր օրինակներում չկա, ուրեմն  
և Փավստոսի Պատմությունը սկզբից թերի է:

Ա գլուխն այնքան պարզ, բնական և որոշակի է, որ այս եզրակացու-  
թյունը անհրաժեշտորեն բխում է նրանից: Սակայն սխալ կլիներ ենթադրել,  
թե այս պակասող մասը կազմում էին այն երկու դարությունները, որոնք  
պակասում են Փավստոսի ներկա ձեռագրերում, որովհետև Փավստոսի  
Պատմության սկզբնագրում այդ թերի մասը (եթե եղել է) պետք է պարու-  
նակեր հայոց պատմության սկզբնական շրջանը մինչև Սանատրուկը. այն-  
ինչ մեր ձեռքը հասած Պատմության մեջ Ա և Բ դարությունները, որոնք  
հայտնի չեն եղել Ղ. Փարպեցուն և գրված են եղել «ի ձեռն այլոց», պետք  
է պարունակներ հայոց պատմությունը մինչև Տրդատը և Գրիգոր Լուսավո-  
րիչը, որի շարունակությունն էլ կազմում է այժմ մեր ունեցած Փավստոսը՝  
Խոսրով Կոտակից և Վրթաճեսից սկսած:

Ժամանակագրական կարգով ավագագույնն է Գ դարության Ա գլուխը, որ  
պատկանում է հեղինակին, երկրորդ տեղը բռնում են Ղ. Փարպեցու տեղե-  
կությունները, որոնց մեջ Փավստոսի սկզբի դարությունը Ա դարություն է  
կոչվում, երրորդ տեղը բռնում է Խոստաբանությունը, որի գրողը՝ խմբա-  
գրողը, իր ժողովածուի մեջ առաջին երկու դարության մեջ զետեղելով Թա-

դեոս առաքյալի վկայաբանությունը և հայոց դարձը, սկզբնապես Փավս-  
տոսի Պատմության առաջին դարությունը կոչել է Երրորդ դարություն՝ ըստ  
իր ժողովածուի: Բայց այս երկու վերջին աղյուսների հեղինակները, այ-  
սինքն՝ Ղ. Փարպեցին և Խոստաբանության խմբագրողը, ծանոթ էին հեղի-  
նակի Առաջին գլխին և սակայն բոլորովին անտես են անում նրա բովան-  
դակությունը, ո՛չ հիշում են նրա մեջ «Առաջին» կոչված մասը և ոչ օգտը-  
վում նրանից:

Ինչո՞վ կարելի է բացատրել այս ակնհայտ հակասությունը մի կողմից՝  
Ա գլխի և մյուս կողմից՝ Ղ. Փարպեցու և Խոստաբանության մեջ: Ներկա-  
յումս մեր ունեցած միջոցներով, որքան կարծում եմ, մենք չենք կարող  
հեղեղել կամ մեկը և կամ մյուսը և ոչ էլ հաշտեցնել դրանք միմյանց հետ: Եվ  
քանի որ Ղ. Փարպեցու և Խոստաբանության տեղեկություններն իրար բո-  
լորովին համեմատել են ու արդարանում են մեր ունեցած Փավստոսի ծա-  
վալով, ուստի այս տեղեկությունները մենք համարում ենք անկասկածելի և  
ստույգ: Գալով Ա գլխի տեղեկությանը, «...է ինչ մեր պատմութիւն՝ որ առա-  
ջին է»... երկու ենթադրություն կարող ենք անել. կամ նա սխալ է, կամ  
ստույգ: Եթե սխալ է, այսինքն՝ եթե Փավստոսի Պատմությունը ոչ մի ժա-  
մանակ չի պարունակել մի սկզբնական՝ այժմ կորած մաս, այս դեպքում  
պարտավոր ենք եզրակացնել, թե Ա գլուխը աղավաղված է, որ նրա մեջ  
ընդմիջարկություն պետք է համարել «...է ինչ մեր պատմութիւն՝ որ առա-  
ջին է, և ինչ՝ որ վերջին է, իսկ որ միջին ինչ եղև, այն ի ձեռն այլոց  
գրել գրեցաւ»: Եթե այս երկու տողը դուրս գցենք Ա գլխից, մնացածը զե-  
ղեցիկ կերպով կհամապատասխանի Ղ. Փարպեցու գրածին և Խոստաբանու-  
թյանը: Իսկ եթե Ա գլուխը ստույգ է, նրա մեջ աղավաղություն չկա, այս  
դեպքում պարտավոր ենք ընդունել, որ Փավստոսը գրած է եղել հայոց պատ-  
մության մի սկզբնական մաս էլ, որ հայտնի չէ որտեղից սկսվելով՝ հասնում  
էր մինչև Սանատրուկ թագավորը: Այս մասը պետք է համարենք անհետ  
կորած դեռ հինգերորդ դարի վերջերում, քանի որ Ղ. Փարպեցին, որ գրում  
էր նույն դարի իննսունական թվականների վերջերին, այս մասը չգիտեր:

1 Այսպես էլ ենթադրել են Գ. Մենկերշյանը և Fr. Murad-ը: Տճ՝  
Ա. Մատիկյան, «Անանունը կամ կեղծ Սեբեոս», եր. 16—17, ծանոթ. 1:

2 Խոստաբանության և Ա գլխի մեջ եղած այս հակասությունը թերև  
կարելի լինի հաշտեցնել, եթե «պատմութիւն» բառին տանք ոչ գիրք նշա-  
նակությունը, ինչպես մինչև այժմ ընդունվում է, այլ «պատմվածք», «գրույց»  
նշանակությունը, ինչպես շարունակ գործ է անվում Փավստոսի երկում: Այս  
դեպքում Ա գլխի հատվածը «է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է» են.,  
կարելի է հասկանալ այս մտքով, թե մենք այնպիսի պատմություն ունենք,  
որ առաջին է, և այնպիսի, որ վերջին է, իսկ միջին պատմությունները  
գրված են ուրիշների ձեռքով, այսինքն՝ մեր գրած պատմությունների մեջ  
կան, որ վերջին ժամանակներին են վերաբերում, կան որ առաջին անգամ  
են գրվում, իսկ միջին բաները գրվել են ուրիշների ձեռքով: Այս մտքով  
առաջին պատմությունները հիրավի կան Փավստոսի գրած. օրինակ՝ Գ

Ամփոփելով մինչև այստեղ ասածներս՝ մենք գալիս ենք այն եզրակա-  
ցության, որ մեր ձեռքը հասած Փավստոսի Պատմությունը նույն ծավալն  
ունի, ինչ որ ունեցել է հինգերորդ դարի վերջերին, այսինքն՝ գրվելով մոտ  
20—30 տարի հետո, ուրեմն, ամենայն հավանականությամբ, լրիվ է: Իսկ թե  
նա, ունեցել է և մի սկզբնական մաս, որ դեռ վաղ ժամանակներում անհե-  
տացել է որևէ պատճառով, այս դեռ ենթադրական է: Գուցե նոր լավագույն  
ձեռագրերի երևան գալով կամ բանասիրական խորամուխ հետազոտություն-  
ներով այս հարցը վերջնականապես լուծվի դրական կամ բացասական կեր-  
պով: Բայց մինչև այժմ եղած փաստարկումները հօգուտ այս սկզբնական  
մասի գոյության և նրա ենթադրական բովանդակության, համոզիչ չեն:

Դառնանք առաջին հարցին՝ հեղինակի ազգությամբ: Այս հարցի նկատ-  
մամբ բանասերների մեծ մասը (Չամչյան, Սեն Մարտեն, Հայկազյան բա-  
նարան, Էմին, Գուտշմիդ, Գարագաշյան, Նորայր, Ե. Մ., Ադոնց) այն կարծիքի  
է, թե Պատմության հեղինակը հույն է, Պատմության մեջ հիշված Փավստ-  
ոսու եպիսկոպոսը, որ գրել է հունարեն Դ դարի վերջերում, իսկ մեր ունե-  
ցած հայերեն բնագիրը թարգմանություն է՝ Ե դարի կեսերին: Բանասերնե-  
րի մի ուրիշ մաս (Ինճիճյան, Գաթըրճյան, Տաշյան, Գեղցեր և Լաուեր, ինչ-  
պես և մենք) հեղինակին համարում է հայ, որ գրել է հայերեն Ե դարի  
կեսերին: Ստանձին կարծիք ունի այս մասին Զ. Պատկանյանը, որ կարծում  
է, թե Պատմությունը թարգմանված է ասորերենից. մասամբ սրան նման է  
և Նորայրը, որ գտնում է, թե հույն հեղինակի բնագրում մատ է խառնել մի  
ասորի եկեղեցական: Զարբանալյանը կարծում է, թե հեղինակը հույն է

դպրության մեջ Գլ. Ժ, Դ դպրության մեջ՝ Գլ. Ը, Թ, Ժ, Ի և Զ դպրության  
մեծ մասը:

1 Այսպես, Ն. Մառի կարծիքը, թե կորած Ա և Բ դպրությունները Սե-  
բեոսի մոտ պահված Ա և Բ դպրություններն են Անանուն հեղինակի, հերք-  
վում է նրանով, որ Սեբեոսի մոտ չեն եղել այսպիսի դպրություններ:  
«Դպրությունն» բառն ստեղծել է Սեբեոսի Պատմության առաջին հրատարա-  
կիչ Միհրդատյանը: Մառի, Ադոնցի և Մատիկյանի կարծիքը, Սեբեոսի մոտ  
պահված Մար-Արաս Մծուրնացին իբրև աղբյուր է ծառայել Խորենացու  
Առաջին և երկրորդ գրքերին, հերքվում է նրանով, որ, ընդհակառակն,  
Մար-Արաս Մծուրնացին է օգտվել Մ. Խորենացու Պատմությունից (տե՛ս  
Սեբեոսի վերջին հրատարակության ծանոթ. 8 և 9): Ադոնցի կարծիքը, թե  
Ա և Բ դպրությունները դուրս է գցել Փավստոսի թարգմանիչը, հերքվում  
է նրանով, որ Փավստոսի Պատմությունը ինքնուրույն հայերեն գրվածք է  
և ոչ թե թարգմանություն, և այդ ենթադրված Ա և Բ դպրությունները  
չէին կարող դուրս գցվել մեկ այն պատճառով, որ Փավստոսը չի գրել հա-  
յոց դարձի պատմությունը, որ թի ձեռն այլոց» գրված է եղել, և մեկ էլ  
այն պատճառով, որ Փավստոսի նման բարեպաշտ հեղինակը չէր կարող  
այնպիսի հեթանոսական անպատշաճ բաներ գրել, որ հարկ զգացվեր  
դրանք դուրս գցել:

եղել, բայց գրել է հայերեն: Ընդհակառակն, Բ. Սարգիսյանը և Դ. Ալիշանը  
կարծում են, թե հեղինակը հայ է եղել, բայց գրել է հունարեն: Դ. Փարպե-  
ցու գրածից չի հասկացվում, թե նա ի՞նչ ազգից է համարում հեղինակին,  
որովհետև «Բիզանդացույ ուսելոյ» կապակցությունը կարելի է հասկանալ  
թե՛ ուսյալ բյուզանդացի (ուրեմն՝ հույն) և թե՛ Բյուզանդիայում ուսած  
(հայ):

#### ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԼՕԳՈՒՏ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՈՒՅՆ ԼԻՆԵԼՈՒՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակին հույն համարող բանասերները քերում են մի քանի փա-  
ստարկումներ, որոնք՝ միասին վերցրած՝ կարող են հիրավի ապացույց թվալ  
այդ կարծիքի ճշմարտության: Բայց մանրամասն քննությունը ցույց է տա-  
լիս, որ դրանցից ոչ մեկը և ոչ բոլորը միասին վճռական ու աներկբայելի  
ապացույցներ չեն հեղինակի հույն լինելուն: ԲՁՁՆԵՔ այդ փաստարկումները.

1. Երրորդ դարության ցանկի վերջում գրված է. «Կատարեցաւ երրորդ  
դարը... ժամանակագիր կանոնք Փաստեայ Բիզանդեայ ժամանակագիր մեծ  
պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց: Միանգամայն պարզ է, որ այս  
խոսքերը հեղինակի գրածը չեն: Ոչ մի օրինակ ուրիշ տեղ չի տեսնվել, որ  
մի հեղինակ ինքն իրեն կոչեր մեծ պատմագիր: Այդ խոսքերը ուրեմն գրել  
է մի անհայտ անձ, հավանորեն խմբագրողը՝ գրվածքի հարզը բարձրացնելու  
նպատակով: Անհայտ հեղինակի հիշյալ դիտավորությամբ գրած տողերը  
զուրկ են արժեքից իբրև ապացույց:

2. Վեցերորդ դարության ցանկի վերջում կա հիշատակարան՝ «Ստորոտ  
ամենայն պատմութեանց լաղազս իմ տեղեկութեան, որ միանգամ գմատեանս  
ընթեռնոյք՝ տունք տասն համարական թուօք»: Ե. Մ. այս նախադասություն-  
ները հասկանում է այսպես. «Իմ մասին տեղեկություններ բովանդակող բո-  
լոր գլուխներից հետո ընթերցողները կգտնեք թվով տասը գլուխ»: Գարա-  
գաշյանը այսպես է կարդում (ուղղում). «Ստորոտ (վերջ) բովանդակ պատ-  
մութեանց: Յողազս իմ տեղեկութիւն, որոց ընթեռնունս գմատեանս՝ և այլ  
նա տասն գլուխք»: Բայց Ե. Մ.-ի պես հասկանալ այդ հատվածը չի կարելի,  
ո՛չ բառերը և ոչ քերականությունը թույլ չեն տալիս: Հեղինակը, ոսկեղի-  
նիկ լեզվով գրող հայկաբան, չէր կարող գործածել «ստորոտ»՝ փոխանակ  
«լետ» կամ «զկնի» գրելու, չէր կարող գործածել «տունք»՝ փոխանակ  
«գլուխ» կամ «պատմութեանց դպրութիւն», չէր կարող «ամենայն պատմու-  
թիւնք վասն իմ տեղեկութեանց» մեծադիրորդ արտահայտությունը գործածել  
երկու կցկտուր տեղեկությունների մասին, թե Փավստոս եպիսկոպոսը և եր-  
սես կաթողիկոսի ներքին խորհրդական եպիսկոպոսներից մեկն էր, և թե  
ինքն ու իր եղբայր Առոստոմը հոռոմ էին: Գարագաշյանի ուղղումն էլ կա-  
մայական է, և ինքն էլ խոստովանում է, թե այս մեկնությունը կարող է բռնի  
համարվել (ԲՁՁ. պատմ., Բ, 68): Բացի սրանցից, եթե հիշյալ երկու բանա-  
սերների բացատրությունն ընդունեինք, դուրս կգար այնպիսի մի անպատե-

հոգեյուն, որ հեղինակը (Փավստոս) իր-ն Ջորթ-եպիսկոպոսի մասին վկայում է, թե «յաճա Խոսրովու և Արշակայ, երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչ դեռ ևս կային նոքա կենդանիք», այսինքն՝ հեղինակն իր մասին ասելիս կլիներ. «Խոսրով և Արշակ թագավորների ժամանակ ես դեռ կենդանի էի»: Ե. Մ.-ի և Գարագաշյանի տված մեկնությունը «Ստորոտ»-ին՝ մերժվեց բանասերների կողմից: «Ստորոտ»-ի բուն նշանակությունը է՝ «վերջ բոլոր պատմությունների: Ինձ վերաբերող տեղեկության տասը թվահամարված տուն ընթերցողների համար», այսինքն՝ հեղինակը (կամ խմբագրողը) խոստանում է գրքի վերջում դնել տասը տուն (ոտանավոր)՝ իր մասին տեղեկություններ պարունակող, բայց այդ տասը տունը չկա այժմյան ձեռագրերում, կորել է: Այսպես էլ հասկանում են բանասերներն այս «Ստորոտ»-ը:

3 Մեծ կարևորություն են տալիս այն հանգամանքին, որ Ջ դարի հույն հեղինակ Պրոկոպիոսը Փավստոսին բավական նման պատմում է Արշակ Բ-ի վերջին արկածները—Հայաստանի հողով ու ջրով հմայությունը, Անհուշ բերող աքեռովելը, այնտեղ մի օր թագավորավայել կյանք վարելը (Դրոստամատի շնորհիվ) և անձնապանություն գործելը, և գրում է, որ այս բաները գրված են «Հայոց պատմության» մեջ: Սրանից եզրակացնում են, թե Պրոկոպիոսը կարողացել էր հիշյալ Պատմությունը, որ կարող էր միայն Փավստոսինը լինել, և կարողացել է հուճարեն, ուրեմն, Պատմության սկզբ-նագիրը գրված է եղել հուճարեն: Ենթադրենք՝, թե Պրոկոպիոսը հիրավի Փավստոսի Պատմությունից է ծանոթ Արշակ թագավորի այս արկածներին, բայց մի՞թե սրանից հետևում է, թե նա անպատճառ հուճարեն պետք է կարդացած լիներ այդ պատմությունը: Չէ՛ր կարող ինքը՝ Պրոկոպիոսը հայերեն ճարտացած լինել, որի մեջ ոչ մի անհավանականություն չկա. հիշենք ինչ որ պատմում է Անանիա Շիրակունցին իր հայազետ հույն ուսուցիչ Տյուքիկոս մաթեմատիկոսի մասին: Չէ՛ր կարող, վերջապես, մի ուրիշը Պրոկոպիոսի

1 Ասում ենք «ենթադրենք», որովհետև Պրոկոպիոսի Պատմության մեջ շատ կենսոր՝ դան, որ չեն համաձայնվում Փավստոսին և ենթադրել են տալիս մի ուրիշ աղբյուր: Այնպես, նա Գարսից թագավորին շարունակ կոչում է Բակուր, մինչդեռ Փավստոսի մոտ Շապուհ է, և Պրոկոպիոսը չէր կարող չփոխենալ այս շատ հայտնի անունը: Հմայության ժամանակ, ըստ Պրոկոպիոսի, քավոյաները առաջարկում են թագավորին, որ իրենք էլ ներկա լինեն փորձին՝ իբրև վկաներ. այսինչ ըստ Փավստոսի՝ Շապուհը հրամայում է բոլորին դուրս գալ խորանից, և ինքը մենակ է մնում Արշակի հետ: Պրոկոպիոսը չի պատմում ընթերցի ժամանակ Արշակի հանգուցն սպառնալիքը Շապուհին՝ բազմականների ներկայությամբ, որով վճռվեց նրա բախտը: Պրոկոպիոսը չի հիշում Դրաստամատի անունը և նրա անձնագրհույնը Արշակից հետո և այլն: Մրանք ցույց են տալիս, որ Պրոկոպիոսը կամ մի ուրիշ՝ մեզ այժմ անհայտ գրավոր աղբյուրից է վերցրել իր պատմածը Արշակի մասին, կամ լսել է բերանացի ավանդություններից, որոնց մեջ աղավաղված է եղել Փավստոսի պատմածը:

համար հայերենից հուճարեն թարգմանած լինել Փավստոսի այս կտորները:

4: Հեղինակի հույն լինելուն ապացույց են համարում և այն, որ, իբր թե, նա ասում է հայերից, նախատիքներ է թափում Յրանց վրա: Այսպես մտածողները մոռանում են, որ ջնճարատեղը, հանդիմանելը չի նշանակում ատել: Եթե հայըը պատժում, նախատում է որդուն նրա պակասությունների համար, տա չի նշանակում, որ նա ասում է որդուն, օտար է, այլ նշանակում է, որ նրան սիրում է և խրատներով ու պատիժներով աշխատում է ուղղության քերել: Եթե նկատի ունենանք ամեն ինչ չափազանցություններով և ուղղության վրաստուսի ընդհանուր սովորությունը, ապա պետք է խոստովանենք, որ Փավստոսը ոչ մի տեղ այնքան ճշմարտասիրտ չէ, որքան ազգի դեմ ուղղած հանդիմանությունների մեջ. երբ, իբրև կրոնավոր, նկատում է նրանց քեռքերի հակաքրիստոնեական ուղղությունը: Եթե ազգի պակասությունները հանդիմանելը ատելության կամ օտարազգի ծագման նշան լիներ, ապա խորենացին ավելի հայատյաց և օտարազգի պետք է համարվեր, որ հայ ժողովրդի ամեն մի դասակարգի ճակատին խարանի նման դողմուն է նրանց պակասությունները: Փավստոսը ոչ միայն հայերին չի ատում, օտարազգի չէ, այլև չափազանց հայասեր է, նախանձախնդիր, ինչպես կոտենենք հետո, բայց վերոհիշյալ կարծիքն ունեցող բանասերներն այդ չեն նկատել:

5. Դարձյալ հեղինակի օտարազգի լինելուն իբրև ապացույց մեջ են բերում այդ բանասերները, թե Փավստոսը չի ասում «թագաւորն մեր», «աշխարհս Հայոց», այլ իբրև օտար՝ երրորդ դեմքով—«թագաւորն Հայոց», «աշխարհն Հայոց»: Այդ դիտողությունն էլ գուրկ է նշանակությունից: Ազգը կամ ազգի թագավորները երրորդ դեմքով նշանակելը այն ժամանակվա գրելու սովորությունն էր: Կորյունը, որ անպայման հայ է, միշտ գրում է երրորդ դեմքով—«Գիրս նշանագրոց Հայաստան ազգին», «դառնալոյ յերկիրն Հայոց», «աշխարհին Հայոց» «թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վոսմշապուհ», «Վոսմշապուհոյ արքային Հայոց» և այլն: Բայց Փավստոսը առաջին դեմքով էլ է գրում—«եկն եքեր յերկիրս Հայոց», «տայցեն նմա զաշխարհս Հայոց», «եկն երես յերկիրս Հայոց» (և դրա կողքին՝ «ընդ երկիրն Հայոց») և այլն: Ուրեմն, երրորդ դեմքով գործածությունը սովորական մատենագրական ձևն է եղել, իսկ «երկիրս Հայոց», «աշխարհս Հայոց» թեկուզ մի անգամ էլ պատահեր, կնշանակեր, թե հեղինակը հայ է, որովհետև Հայոց աշխարհը կոչում է իբրև իր աշխարհը: Նույնը պետք է ասել և այն մասին, որ իբր թե Փավստոսը պարծանքով է հիշում Հունաց թագավորներին ու քաղաքները— «մեծ թագաւորն Յունաց», «մեծ քաղաքին Աթենացոց»: Ի՞նչ պարմանք, եթե Փավստոսը մեծ կոչեր, ինչ որ արդարև մեծ էր, բայց զարմանքն այն է, որ Փավստոսը մեծ մակդիրը տալիս է նրանց, որոնց չէր կամարել այսպես որակել—«թագաւորն մեծ Արշակ», «մեծ թագաւորն Վարազդատ», «զմեծ քաղաքն Երուսաղէմացոց», «քաղաքին մեծի Արտաշատու» և այլն: Հայոց թույլ վասալ թագավորներին և հայոց քաղաքները մեծ կոչելու համար հարկավոր էր հայրենասիրության մի փոքր քանակ:

6. Բերում են, վերջապես, այն փաստը, թե Փավստոսի Պատմությունը

պարունակում է այնպիսի մանրամասն և ճիշտ նկարագրություններ անցքերի, որոնք կարող էր անել այդ անցքերին ժամանակակից և ականատես անձը, որից եզրակացնում են, թե հեղինակն ապրել է 7 դարում, ուրեմն, հույն Փավստոս եպիսկոպոսն է: Ներսես Մեծի թունավորման նկարագրությունը արդարև կարող է այսպիսի ենթադրության տեղիք տալ. բայց ի՞նչ ասենք այն բազմաթիվ անցքերի մասին, որոնց չէր կարող ականատես լինել հեղինակը, կամ որոնք բնավ տեղի չեն ունեցել, բայց Փավստոսի կողմից մանրամասն նկարագրված են իբրև եղելություն: Այսպես, օրինակ, հեղինակը չէր կարող ներկա և ականատես լինել Պապ թագավորի դավաճանական սպանության (Ե, ք), Դրակ մարդպետի սպանության թագավորի ապարանքում (Ե, գ) կամ Արշակ թագավորի հմայության փորձին Շապուր թագավորի վրանում (Դ, ծ), սրբերի հոգիների ժողովի գումարվելուն սրբուհի Թեկղիեի վկայարանում (Դ, ժ), Վաղես կայսրի ունկնդրության Ներսես Մեծի երկար խրատին (Դ, ե): Վերջին երեքը մտացածին բաներ են, ապա և նրանց նկարագրությունը հեղինակի երևակայության ծնունդն է: Զրույցները, հեքիաթները լի են մանրամասն նկարագրություններով, բայց ո՞վ կարող է ասել, թե նրանց հեղինակները ականատես կամ ժամանակակից են եղել իրենց նկարագրած անցքերին: Խորենացին մանրամասն նկարագրում է Չիրավ դաշտի ճակատամարտը (Գ, լե), բայց հայտնի է, որ ժամանակակից և ականատես չէ:

Առայժմ թողնելով Փավստոս Բուզանդ օտարագրի անվան բացատրությունը, տեսնում ենք, որ բոլոր այն կետերը, որ բերվել են իբրև ապացույց հեղինակի հույն լինելուն, համոզիչ չեն և չեն կարող խախտել այն տեսակետը, թե Փավստոսի Պատմության հեղինակը հայ է և գրել է հայերեն:

Այս վերջին տեսակետն ունեն. ինչպես վերը տեսանք, ինճիճյանը, Գաթրոյանը, Տաշյանը (գուցե Սառը), Գեյցերը և այլք: Այս տեսակետը ամենից մանրամասն և բազմակողմանի կերպով ապացուցված է իմ «Ուսումնասիրություն Փավստոս Բուզանդի» ջննդության մեջ («Հանդես ամսօրյա», 1896, փետր.— մարտ.— ապրիլ համարներում): Գարագաշյանը տատանվող դիրք է բռնում: Նա իր Ջննական Հայոց պատմության մեջ և «Հանդ. ամսօրյա»-ում տպված հոդվածում (1896, հուլիս) Փավստոսի Պատմությունը համարում է թարգմանություն հունարենից, բայց նույն հոդվածում (էջ 201) կասկածանքով հայտնում է. «Այսպես է և Բյուզանդ, որո հայերենն հայտնի չէ, թե թարգմանություն է, թե բնագիր, մանավանդ թե գրության ոճին նայելով կոպի բնագիր քան թե թարգմանություն»:

#### ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԼՕԳՈՒՏ ԼԵՂԻՆԱԿԻ ԼԱՅ ԼԻՆԵԼՈՒՆ

Շանթաճանք այժմ այն փաստերին, որոնք վկայում են, թե Փավստոսի Պատմության հեղինակը հայ է, գրել է հայերեն, հինգերորդ դարի երկրորդ կեսին:

Պատմության հեղինակը ժամանակակից չէ իր պատմած դեպքերին:

Զանազան ապացույցներ կան այս բանի համար: Փավստոսի Պատմությունը ծայրեծայր լիքն է անհավատալի առասպելներով, չափազանցություններով, հրաշքներով. այնքան շատ են նրանք, որ օրինակներ բերելն ավելորդ է: Որտեղից են առաջ եկել այս անիրական տեղեկությունները: Դրանք հեղինակը չի ստեղծել իրենից՝ գիտակցաբար ստեր հորինելով, դրանք ժողովրդի ստեղծագործություններն են. մի որևէ աչքի ընկնող դեպք, բերնից բերան անցնելով, սերնդից սերունդ ավանդվելով, հետզհետե զարգացել ու զարդարվել է ժողովրդի երևակայությամբ և կատարյալ վիպական բնույթ է ըստացել՝ բնականից գերբնականի փոխվելով: Այսպես են ստեղծվում սովորաբար ժողովրդական ավանդություններն ու հրաշքները: Ժողովրդական ավանդության գոյությունը Փավստոսի Պատմության մեջ արդեն շատերն են նկատել բանասերներից, ինչպես վերը տեսանք: Երկու բանասեր նույնիսկ այնքան առաջ են գնացել, որ փորձել են, մեկը մյուսից անկախ, Փավստոսի առաջածը տողատել, չափական ձևերի վերածել, ինչպես «Սասնա ծռեր»-ի պատումները<sup>1</sup>: Արդ՝ այն հանգամանքը, որ Պատմության հեղինակին իբրև աղբյուր են ծառայել ժողովրդական ավանդությունները կամ վեպը, ցույց է տալիս, որ նա ժամանակակից չէ այն իրական անցքերին, որոնցից ձևացել են ավանդությունները կամ վեպը. նա այնպես լսել է ժողովրդից, այս կամ այն ծերունու կամ գուսանի բերանից ու գրի առել:

#### ԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ԴՐՈՒ ԱՆՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Փավստոսի Պատմության մեջ երկու տեղ, տեսիլի կամ անեծքի ձևով, կան ակնարկություններ հինգերորդ դարի անցքերի մասին: Մանուկ Հուսիկը, որ տխրում էր իր երկու որդիների անառակ վարքի պատճառով, տեսիլ է տեսնում, որի մեջ աստծու հրեշտակը նրան մխիթարում է՝ ասելով, թե նրա զավակից ուրիշ զավակներ կծնվեն, որոնք Հայաստան աշխարհը կլուսավորեն, գիտություն և իմաստություն կտարածեն, նրանց միջոցով Քրիստոսը շատ լեզուներով կփառավորվի և այլն (Գ, ե): Հրեշտակը շարունակ հոգնակի դեմ է գործածում Հուսիկի այս շնորհալի զավակների մասին խոսելիս, ուրեմն, այս խոսքերում ակնարկություն կա ոչ միայն Ներսես Մեծի, այլև ս. Սահակի (գուցե և Մեսրոպի) մասին, որոնք լուսավորություն տարածեցին Հայաստանում և ս. Գիրքը թարգմանեցին հայերեն, որով Քրիստոսը շատ լեզուներով փառավորվեց: Այստեղ, ուրեմն, նկատում ենք ակնարկություն հինգերորդ դարի առաջին կեսի մատենագրական շարժման մասին՝ ս. Սահակի և Մեսրոպի անմիջական մասնակցությամբ: Ուրիշ տեղ (Գ, ժե) Ներսես Մեծը անիծում է Արշակին Գեղի անպարտ սպանության պատճառով և ի միջի այլոց ասում է. «Դուք՝ Արշակունցները, կիսմեջ վերջին բա-

<sup>1</sup> Ակինյան, «Սեբեոս եպիսկոպոս Բագրատունեաց», յաւելում, ԵՊԳ տոմարնաց Տիրիթայ, էջ 105—135. Մ. Արեղյան, «Սովետական գրականություն», 1941, հունվար, էջ 78, «Մասունցի Դավիթ», էջ 57 և այլն:

ժակը, կիսմբե կհարբեք, կկործանվեք և այլն ունքի չեք կանգնի», որ պարզ ակնարկություն է Արշակունյաց թագավորության վերջանալու մասին: Արշակունյաց թագավորության կործանումը, Հայաստանի՝ օտար թշնամիների լծի տակ ընկնելն ավելի դառն խոսքերով գուշակում է նաև Դանիել քորեպիսկոպոսը (Գ, Ժ): Սրանք էլ ապացույց են, որ Փավստոսի Պատմության հեղինակին հայտնի էին Հայաստանի անցքերը հինգերորդ դարի առաջին կեսում, ուրեմն, այդ Պատմությունը գրված է այս ժամանակից հետո:

Փավստոսի Պատմությունը, որ 65 տարվա ժամանակամիջոց է ընդգրկում՝ 319 թվականից մինչև 384 թվականը, բյուզանդական միայն մի կայսրի անուն գիտե. Վաղեսին (այն էլ ժամանակագրական սխալով), այնինչ այդ ժամանակամիջոցում Բյուզանդիայում բացի Երանից թագավորել են Կոստանդ Բ, Լուիանոս, Գրացիանոս, Թեոդոս Մեծն: Սրանցից ոչ մեկին չգիտե Պատմության հեղինակը, միշտ գործ է ածում անորոշ կերպով՝ «թագաձորն Յունաց»: Ժամանակակից հեղինակը չէր կարող այնքան տգետ լինել, որ չգիտենար, թե իր ապրած ժամանակ ո՞վ էր Հունաց այդ թագավորը, որ այնքան մեծ դեր էր խաղում Հայոց պատմության մեջ: Այս անգիտությունը դարձյալ ապացույց է, թե հեղինակը ավելի ուշ ժամանակ է գրել՝ ի լրո, և պատմողներն իրենք էլ չեն իմացել անցած-գնացած Հունաց թագավորների անունները:

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆ

Մի հեղինակ, որ ժամանակակից է իր պատմած անցքերին, պետք է ճիշտ ժամանակագրություն ունենա, թեկուզ ոչ մանրամասն: Փավստոսը ժամանակագրություն չունի: Նա Հայոց հինգ թագավորների պատմությունն է գրում՝ Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակի, Պապի, Վարազդատի. բայց ոչ մեկի մասին չի հիշում, թե ե՞րբ և քանի՞ տարի թագավորեց ու ե՞րբ մեռավ: Նրա պատմած անցքերի մեջ ժամանակագրական հաջորդականություն չկա, ամեն մի գլուխ մի առանձին դրվագի նկարագրություն է, ու գլուխները մեծ մասամբ սկսվում են «այսպես», «այսին ժամանակին», «ես այսորիկ» անորոշ խոսքերով, և կարող են մեկը մյուսից առաջ կամ ետ դասավորվել կամ դուրս գցվել՝ առանց Պատմության ամբողջությանը վնասելու: Ծապուհի՝ Արշակի դեմ մղած պատերազմներում հեղինակը հիշում է 23 ճակատամարտ, ամեն մեկում նշանակելով Պարսից զորավարի անունը, մեծ մասամբ ուղեկցությունը Մերուծան Արծրունու: Տասնութ ճակատամարտ հիշելուց հետո (Դ, իզ—իզ) անտեղի կերպով պատմում է Պապի պղծագործության տեսարանը, որից հետո էլի շարունակում է թվել հինգ ճակատամարտ: Ինչպես է ընկել Պապի վարքի դրվագը Արշակի պատերազմների շարքի մեջ, մնում է հանելուկ:

Երբ մենք փորձում ենք Փավստոսի հաղորդած պատմական տեղեկությունները ժամանակագրական հողի վրա դնել, հանդիպում ենք խոշոր սխալների, քառասյին խառնաշփոթությունների: Բերենք մի քանի օրինակ:

Փավստոսը վկայում է, որ Արշակ երկրորդը թագավորել է Պարսից Ներսեհ արքայի և Հունաց Վաղես կայսրի ժամանակ՝ Երանց փոխարձար համաձայնությամբ, մի պատերազմից հետո, որի ժամանակ կայսրը լրտեսել է Պարսից բանակը, գերի է բռնել Ներսեհի կանանց (Գ, իա, Դ, ա): Իրականում Ներսեհը թագավորել է 293—302 թվականներին, իսկ Վաղեսը՝ 364—378, ուրեմն, Երանց իրար ժամանակակից չեն և չէին կարող իրար հետ պատերազմել: Արշակն էլ ո՛չ Ներսեհի ժամանակ է թագավորել և ոչ Վաղեսի: Իսկ Պարսից բանակը լրտեսողն ու Ներսեհի կանանց գերի բռնողը եղել է Գաղերիոս զորավարը՝ Դիոկղետիանոս կայսրի ժամանակ՝ 297-ին, և այս անցքի հետ կապ չունի Արշակի թագավորելը, որ տեղի ունեցավ շատ հետո (ըստ Խորենացու՝ 339-ին, իսկ ըստ Գարագաշյանի՝ 353-ին):

Փավստոսը պատմում է, թե Արշակ թագավորը Ներսես Մեծին ձեռնադրել տվեց կաթողիկոս և Երանց Վաղես կայսեր մոտ ուղարկեց պատժամալոր. Ներսեսը չկամեցավ աղոթել արիանոս կայսեր հիվանդ որդու համար, և երեխան մեռավ. զայրացած կայսրը Երանց քստրեց մի անմարդաբնակ կղզի, որտեղ նա մնաց 9 տարի՝ մինչև Վաղեսի մահը: Հայաստան դառնալով՝ նա ականատես եղավ Գնելի սպանությանը: Սրանից հետո Արշակը ամուսնացավ Գնելի այրու՝ գեղեցկուհի Փառանձեմի հետ: Ապա Արշակը իր զորքով գնում է Հունաց դեմ և առանց սպասելու պարսիկների գալուս, կոտորում է Հունաց ամբողջ զորքը ու կատարյալ հաղթություն տանում: Ծապուհը գալիս է պատերազմի տեղը, տեսնելով Արշակի գործած քաջությունը՝ կամենում է Երանց արժանապես վարձատրել, ի միջի այլոց ցանկանում է Երանց կին տալ իր դստերը: Արշակի աները՝ Անդոկը, նկատելով, որ այս ամուսնությունը կարող է արհամարհանք ու վտանգ բերել իր Փառանձեմ դստերը, սուտ վկաների միջոցով Արշակին երկյուղ է ներշնչում, իբր թե Ծապուհը մտադիր է Երանց սպանել, և փախչել է տալիս Ծապուհի մոտից: Ծապուհը մարդ է ուրախվում, ետ է կանչում: Արշակը չի գալիս: Ծապուհը զայրանում է Արշակի վրա և ուզում է վրեժխնդիր լինել, բայց ութ տարի լուռ է, քանի որ պատերազմները շարունակվում էին հույների հետ: Երբ սրանք վերջանում են, ապա սկսվում է երկարատև պատերազմ Ծապուհի և Արշակի միջև, որը տևում է ավելի քան երեսուն տարի, որից հետո Արշակն ստիպված գնում է Պարսկաստան և այնտեղ կորչում Աճուռ բերդում:

Մի կողմ թողնելով անցքերի փիպական բնույթը՝ կանգ առնենք ժամանակագրության վրա: Որքան էլ տարիների թիվը կրճատենք, կողմնակի անցքերի ժամանակները դուրս գցենք, այնուամենայնիվ կմնան Արշակի թագավորության համար Փավստոսի հաղորդած հետևյալ թվերը. 9 տարի Ներսես Մեծի քստրի տարիները, 8 տարի, երբ Ծապուհը հետաձգում է Արշակի հետ պատերազմելը՝ Հունաց հետ զբաղված լինելու պատճառով, և 30 տարի՝ նրա պատերազմները Արշակի հետ. ուրեմն, ըստ Փավստոսի՝ Արշակը թագավորել է ամենաքիչը 47 տարի: Եթե նա թագավորած լիներ, ըստ Խորենացու՝ 339 թվականին, ապա նրա թագավորությունը պետք է վերջանար 386 թվականին, և եթե վերցնենք ըստ Գարագաշյանի՝ 353-ին,

ապա նրա թագավորությունը պետք է տներ մինչև 400 թվականը, իսկ եթե՝ ըստ Փավստոսի՝ նրա թագավորության սկիզբը դենք Կաղես կայսրի օրով, ապա այս թագավորությունը պետք է վերջանար հինգերորդ դարի տասնական թվականներին: Թեկուզ Երեսնի 9 տարին (ամս ինճ՝ ըստ Փավստոսի) ուղղենք 9 ամիս, ուրեմն, Արշակի թագավորության վերջին տարիները 9 տարով առաջ գցենք՝ 379-ին կամ 405-ին, այնուամենայնիվ բոլորն էլ սխալ կլինեն, քանի որ ստույգ հայտնի է, թե Արշակը Աճուռ բերող դրվեց 368-ին, իսկ նրա որդի Պապը թագավորեց 368-ին կամ 369-ին:

Մի ուրիշ հաշիվ. ըստ Փավստոսի՝ Արշակն ամուսնանում է Գնելի այրու՝ Փառանձեմի հետ, որից ունենում է մի որդի՝ Պապ անուցով. իսկ սա չափահաս դառնալով ու ամուսնանալով՝ ունենում է երկու որդի՝ Արշակ և Կաղարշակ: Սրանք մեծանում ու ամուսնանում են և միասին թագավորում Մանուելի խնամակալության ժամանակ (Ե, իդ), որից հետո տեղի է ունենում Հայաստանի բաժանումը Պարսից և Հունաց միջև: Քանի որ Արշակը Փառանձեմի հետ ամուսնացել է Երեսն Մեծի արքայից վերադառնալուց կամ, որ նույն է, Կաղես կայսրի մահից հետո, ուրեմն այս ամուսնությունը և Պապի ծնունդը կարող էին տեղի ունեցած լինել ամենավաղը 378—379 թվականներին. Պապի որդիները կարող էին ծնվել 398—399-ին և ամուսնանալ ամենավաղը 410—12 թվականին: Այնինչ ըստ ստույգ տվյալների՝ Պապն սպանվել է 374 թվականին, իսկ Հայաստանի բաժանումը եղել է 384-ին:

Բավականանում ենք այս մի քանի օրինակներով: Այսքանից էլ պարզ երևում է, որ Փավստոսի պատմած անցքերը լի են անտեղություններով ու հակասություններով, քանի որ ժամանակագրորեն սխալ են դուրս գալիս: Անցքերին ժամանակակից հեղինակը չէր կարող այսպիսի ակնհայտ սխալներ գործել. ուրեմն, նա գրի է առել զանազան աղբյուրներից ծագած ավանդություններ, որոնց մեջ սուսն ու ստույգը խառնված են իրար, և հեղինակը, անկարող լինելով դրանք ստուգել, անխտիր գրի է առել, որից առաջ են եկել մեր այժմ նկատած անհեթեթությունները:

Մինչև այստեղ բերվածները անուղղակի վկայություններ էին, թե հեղինակը ժամանակակից չէ իր պատմած անցքերին, այսինքն՝ նա չի ապրել չորրորդ դարում, ուրեմն, բնագիրը հունարեն գրված չի եղել: Այժմ դառնանք ուղղակի վկայությունների, որոնք ցույց են տալիս, թե Փավստոսի Պատմությունն անշուշտ գրված է հինգերորդ դարի երկրորդ կեսում, ուրեմն, գրված է հայերեն և հայի ձեռքով:

Այս վկայությունները նախ այն գրավոր աղբյուրներն են, որոնցից հեղինակը հաճախ օգտվում է պատմության ընթացքում:

Փավստոսի Պատմության մեջ մեծ քանակությամբ քաղվածքներ կան և Գրքից, որոնք բոլորը բերված են ըստ հայերեն թարգմանության, որ կատարված ու ավարտված է հինգերորդ դարի երեսնական թվականներին (զոհն գլխավոր մասերը): Եթե Պատմությունն սկզբնապես հունարեն գրված լիներ և ապա հինգերորդ դարում հայերեն թարգմանված, այս մեջբերումները թարգմանիչը ինքը պետք է թարգմաներ, որ հարկավ կտարբերվեր և Գրքի թարգմանությունից:

Նպատ լեռան վրա Երեսն Մեծը աղոթելիս մի ընդարձակ կտոր բերում է երեք մանուկների օրհնությունից, որոնք Լաբուգողոնոսորի հրամանով նետվել էին Բաբելոնի հոնքը՝ այրվելու համար (Ե, դ):

Արդ, այս ընդարձակ կտորը, որ սկսվում է «Յիրաունս անցուցեր դու գայս ամենայն ընդ մեզ» և վերջանում է «Փառաարեայլ ես ի վերայ ամենայն տիեզերաց», բառացի առնված է հայերեն ժամագրքից և ոչ և Գրքից (Դանհել, Գ), որ տարբերվում է ժամագրքից:

Մամբրեի անապատում կատարված հրաշքի ժամանակ (Ե, իը), երբ պատարագիչ քահանան աղոթում է մի թերահավատ միաբանի համար, մեջ է բերված մի ընդարձակ աղոթք, որ սկսվում է «Տէր աստուած զօրութեանց» և վերջանում է «որ քննես զսիրտս և զերիկամունս որդւոց մարդկան»: Այս ընդարձակ աղոթքն առնված է և Բարսեղի պատարագամատուցից, որ հայերեն թարգմանված է դարձյալ հինգերորդ դարում, բայց ներկայումս հայոց եկեղեցիներում չի գործածվում: Հ. Գաթըրճյանը, որ առաջին անգամ երևան է հանել այս փոխառությունը, վկայում է, թե Փավստոսի մոտ այս հատվածն ավելի անաղարտ է պահպանված, քան բուն պատարագամատուցի մեջ, այնպես որ Փավստոսով կարելի է ուղղել պատարագամատուցի մի քանի աղավաղությունները:

Պատմության հեղինակն օգտվել է նաև հայ պատմական աղբյուրներից՝ Կորյունից, Ագաթանգեղոսից և և Թադեոս առաքյալի վկայաբանությունից, որոնք առանձին կարևորություն ունեն այս Պատմության գրության ժամանակը բավական ճիշտ որոշելու համար:

Կորյունից առնված են հետևյալ հատվածները. «Եւ առեալ դառնայր անտի, հանդերձ շնորհատուր պարգևելոյն, և որք ընդ նմա երթեալք՝ իւրովքն ճանապարհորդ լինէր» (Գ, Ժ):

Մի ընդարձակ հատված՝ «Եւ ոչ այնպես մեծն Մովսէս—դիտատրութիւն զճանապարհաց աւետաբերաց» (Գ, Ժա), որի մեջ Կորյունը նկարագրում է Մեսրոպի վերադարձը Միջագետքից՝ աստվածատուր այրութեամբ, իսկ Փավստոսը նույն խոսքերով նկարագրում է Մծիքի և Լակոբ հայրապետի իջնելը լեռից՝ Լոյի տապանից մի կտոր փայտով, որ հրեշտակը բերել էր նրան քնած ժամանակ:

1 Յետտեր հայագետը կարծիք է հայտնել, թե այս հատվածում Կոր-

1 Ժամանակագրական ուրիշ անտեղություններ և մանրամասն ժամանակագրական հաշիվներ բերված են իմ «Ռուսումնասիրություն Փավստոս Բուզանդի» քննության մեջ, «Հանդ. ամսօրյա», 1896, փետր.—ապրիլ համարներում:



ցիներում հայերեն ժամակարգություն մուծվելուց հետո: Բայց պատմական աղբյուրների հետ համեմատությունը հնարավորություն է տալիս ավելի ճիշտ որոշելու այն ժամանակը, երբ այս Պատմությունը գրվեց: Իրողությունը այն է, որ Փավստոսի Պատմությունը գրված է Կորյունից, Ագաթանգեղոսից և Թադեոսի վկայաբանությունից հետո. այս գրվածքների ժամանակը որոշելով՝ կզտենք նաև այն սահմանը, որից առաջ չէր կարող գրվել Փավստոսի Պատմությունը:

Կորյունի «Վարք սրբոյն Մեսրոպայ» գրված է հինգերորդ դարի քառասնական թվականներին (մասնավորապես ո՞ր թվականին, մեր հարցի համար նշանակություն չունի): Կորյունից լայն չափով օգտվել է Ագաթանգեղոսի խմբագիրը, այն աստիճան, որ շատ բանասերներ Կորյունին են համարում Ագաթանգեղոսի Պատմության թարգմանիչը (որն ինձ թվում է անհավանական): Իսկ թե ե՞րբ է գրվել կամ խմբագրվել Ագաթանգեղոսի Պատմությունը, այս հարցը դեռ չի լուծված որոշակի: Լ. Բ. Սարգսյանը, զանազան գրչագրական անստույգ տեղեկությունների վրա հիմնվելով, Ագաթանգեղոսի թարգմանությունը համարում է կատարված 426—430 թվականներին՝ Կորյունի, Եզնիկի և ուրիշ թարգմանիչների հավաքական աշխատանքով («Ագաթ. և յուր բազմադարյան գաղտնիքն», եր. 319): Իրականությունը ավելի մոտ է մի ուրիշ բանասերի կարծիքը, թե Ագաթանգեղոսի երկը գրված է 445—460 թվականների միջև: Ես այս վերջին թվականը մի-երկու տարով էլ ներքև եմ իջեցնում հետևյալ պատճառով: Աչքի ընկնող երևույթ է, որ Կորյունը, որն այնքան համախա ու մեծ պատկառանքով հիշում է ս. Սահակ կաթողիկոսին, ոչ մի անգամ Գրիգոր Լուսավորչի անունը չի տալիս, ոչ մի անգամ չի հիշատակում, որ իր սիրած ուսուցիչը՝ Հայաստանի լուսավորիչը, պանծալի ծագում ունի, Գրիգոր Լուսավորչի զավակն է, նրա թոռան թոռնորդին, ինչպես գիտեն և կրկնում են Խորենացին ու Դ. Փարպեցին: Սա նշանակում է, որ Կորյունը դեռ Գրիգոր Լուսավորչին չի ճանաչում: Նույն երևույթը անեսնում ենք և Եղիշեի մոտ: Մինչ Դ. Փարպեցին առաջին կրոնական պատերազմի պատմության մեջ քանիցս հիշում է Գր. Լուսավորչին, Եղիշեն ոչ մի անգամ նույն անցքի պատմության մեջ չի հիշում: Նույնիսկ Ղևոնդ Երեցի ընդարձակ քարոզի մեջ, պատերազմի նախօրյակին, երբ աս հիշեցնում է բարեպաշտ մարդկանց օրինակներ Հին կտակարանից, և երբ անշուշտ պահանջվում էին հիշյալ Գրիգորի կրած չարչարանքները, Հայաստանի՝ քրիստոնեական լույսով լուսավորվելը, Ղևոնդն էլ զանց է անում այս անունը: Դեռ ավելին. Եղիշեն բերում է Հայոց ժողովի թուղթը՝ ուղղված Թեոդոս կայսրին, որով օգնություն են խնդրում պարսիկների դեմ: Այս թղթում հիշված է, որ Տրդատը քրիստոնեություն է ընդունել Լոռուի եպիսկոպոսից (և ոչ թե Գրիգոր Լուսավորչից): Սրանք էլ նշանակում են, թե Եղիշեն էլ, որ գրել է 461 թվականին՝ Պետրոսի թագավորության հինգերորդ տարում, Գրիգոր Լուսավորչին դեռ չգիտե: Սրա պատճառն այն է, որ Գրիգոր Լուսավորիչը իր վեժ կերպարանքով, իբրև խոստովանող, իբրև Հայաստանի լուսավորիչ և առաջին կաթողիկոս, առաջին անգամ ստեղծվել է

Ագաթանգեղոսի անունը կրող լեգենդար պատմության մեջ, իսկ մինչ այդ, մոտ 180 տարի, նրա անձնավորությունը մնացած է եղել մթության մեջ: Արդ, քանի որ Ագաթանգեղոսի Պատմությունը 461 թվականին դեռ չկար, ս.եւոք է նրա գրության ժամանակը դնել այդ թվականից սկսած 4—5 տարվա ընթացքում, այսինքն՝ 461—465 թվականներին: Ավելի ուշ դնել չենք կարող այն պատճառով, որ նրանից հետո է գրվել Թադեոս առաքյալի վկայաբանությունը, իսկ այս երկուսից հետո՝ Փավստոսի Պատմությունը:

Որ Թադեոս առաքյալի վկայաբանությունը գրված է Ագաթանգեղոսից հետո, երևում է նրանից, որ Թադեոս առաքյալի քարոզությունը Հայաստանում և նահատակությունը Սանատրուկի ձեռքով՝ Ագաթանգեղոսին հայտնի չեն: Եթե այս բաները հայտնի լինեին Հայաստանում, անկարելի է, որ Ագաթանգեղոսը զանց աներ հիշել. անկարելի էր, որ Լուսավորիչն իր երկար քարոզների մեջ չհիշեցներ, որ հայ ազգի լուսավորության համար նախարյուն է թափել Քրիստոսի աշակերտներից մեկը: Մանավանդ, ընդարձակ վարդապետության մեջ, որտեղ հեղինակը թվում է Քրիստոսի առաքյալներին և յոթանասուներկու աշակերտներին, նա Թադեոս առաքյալի լոկ անունն է հիշում մյուս առաքյալների թվում, և երբ հիշատակում է այն երկրները, որտեղ առաքյալները քարոզեցին, անորոշ կերպով ասում է. «Ոմանք ի Մարս և ոմանք ի Պարթևս, ոմանք ի Խուժաստան և ոմանք ի Միջագետս, ոմն ի կողմանս Գամրաց, ոմն ի Պոնտոս, ոմն յԱսիա, ոմն ի Փոլիզիա, ոմն ի Պանփիլիա» և այլն, առանց Հայաստանի անունը հիշելու: Այս աչքի ընկնող երևույթը ուրիշ կերպ չի կարելի բացատրել, քան ենթադրելով, որ Թադեոս առաքյալի քարոզությունն ու նահատակությունը հայտնի դարձան Թադեոս առաքյալի վկայաբանության միջոցով, և այս վկայաբանությունը գրվել է Ագաթանգեղոսի Պատմությունը գրվելուց հետո: Որ Թադեոս առաքյալի՝ Հայաստանում քարոզելը և այստեղ նահատակվելը շինծու են, կարիք չկա ապացուցելու: Սա Հայաստանի ասորասեր հոգևորականության ստեղծած կեղծիքն է՝ հուճասեր հոգևորականության ստեղծած Ագաթանգեղոսին ու Լուսավորչին իբրև հակակշիռ՝ Հուճաստանից ծագած Գրիգորի նշանակությունը նսեմացնելու համար: Բայց հեղինակը կամ հեղինակներն իրենց նպատակին չհասան. Լուսավորիչը դարձավ ամբողջ Հայաստանի ազգային սուրբ:

Արդ, քանի որ Փավստոսը գիտե թե՛ Ագաթանգեղոսին և թե՛ Թադեոս առաքյալի վկայաբանությունը, և մյուս կողմից Մովսես Խորենացին հիմնաբար ողորդ դարի ութսունական թվականներին օգտվում է Փավստոսից (առանց անունը հիշելու), սրանից հետևում է, որ Ագաթանգեղոսի գրությունը պետք է դնենք 461—465-ին, վկայաբանությունը՝ 465—470-ին, իսկ Փավստոսի Պատմությունը՝ հինգերորդ դարի յոթանասնական թվականներին, վկայաբանությունից հետո, Խորենացուց առաջ\*:

\* Նկատի ունենալով հենց միայն այն հանգամանքը, որ Փավստոսի երկը գրված է մեսրոպյան շրջանի հայերենով, կարիքի է առել, որ այս կարծիքը իրականության չի համապատասխանում:— Նմբ.:



Փափառուի գործածած աղբյուրների ջննդությունը և ժամանակագրական հաշիվները այլևս ոչ մի տարակույս չեն թողնում, որ այս Պատմությունը գրված է հիմնականում դարի երկրորդ կեսին, յոթանասական թվականներին. սրանով էլ կանխորոշվում է, թե այս Պատմությունը գրված է հայի ձեռքով և հայերեն:

### ՆԵՂԻՆԱԿԻ ՆԱՅԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Բայց մենք ունենք նաև ուղղակի ապացույցներ հեղինակի հայ լինելու և հայերեն գրելու վերաբերյալ:

Արդարև, մեծ թուրքիանություն էր հին բանասերների պնդումը, թե այս Պատմության հեղինակը առում է հայերին, նախառում է նրանց, ուստի հույն է: Ընդհակառակն, Պատմությունը լիքն է այնպիսի տեղեկություններով, որ միայն հայը կարող էր գրել. ամբողջ գրվածքից զգացվում է հեղինակի ոգին. նա ոչ միայն հայ է, այլև ազգային պատվին նախանձախնդիր հայ, զորքի քաջությունները փառաբանող, Արշակունյաց թագավորների համատարիմ ու անձնվեր պաշտպան: Որպիսի՜ գուրգուրանքով և պարծանքով է նկարագրում նա հայկական զորքը, նրա սարքն ու կարգը, նրա տիրասիրությունը. «Չորեքհարիւր հազար զօր կոտ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արուսեամբ արուեստաց նահատակութեանց, նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք, անվրէպք, կորովիք, վարդաւորք, սակրաւորք, որք ըչ զխտէից զեղկալ զանգիտեղոյ յարանց շխտչեանց. համակ հեծելազօրք գրահաւորք, պատենազէնք, սաղաարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք, թագաձայն փողաբօջն» (7, 1):

Մի ուրիշ տեղ (7, 10) նա գրում է. «Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրև վարսուն հազար, ընտիրք և պատերազմողք, որ միամիտք և միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդոց և կանանց իւրեանց, և ի վերայ աշխարհին դեռ զանձինս խրեանց մինչև ի մահ... հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իրեանց... փոխանակ բնակ տեքանց իւրեանց Արշակունսոց»: Լույնիակ Ծապուր թագավորը, զմայլված հայ զորքի քաջության ու տիրասիրության վրա, իր իշխաններին սքանչանքով պատմում է իր տեսածը վերջին պատերազմում. «Յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին, որպէս զլեռան մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբետո հօր և անշարժ... մինչև անմի զօրսն Արեւաց ստնէին: Եւ միւս ևս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտեղանութիւն միամտութեանն Հայաստան զնդին ընդ տիրասիրութեանն: Զի այնչափ ամբ են՝ զի տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, և նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին: Եւ յորժամ զախոյեանսն ընկեցուկն, համակ ասէին՝ թէ «առ Արշակ», և նա չէր ի մէջ նոցա... Եւ կամ մոլեկան զունդն Մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր, եթէ հուր բոց ի գնդէն ելանիցեր և ի նշանացն... Այլ, ասեր, երանի՜ որ Հայոց զնդին տեր իցէ այնպիսի տիրա-

ւեր և միաբան միամիտ զօրացն» (Ե, Ե): Ահա այս տիրասեր ու միաբան զորքն է, որ Փափառուի Պատմության մեջ հարյուրավոր անգամներ պատերազմներ է մղում թշնամիների դեմ և ոչ մի անգամ պարտություն չի կրում. միշտ հաղթում է թշնամիներին և հաճախ մինչև վերջին մարդը կոտորում է նրանց: Տասնյակ միլիոններով թշնամիներ են կոտորում Հայոց զորքերը, և իրենցից ոչ մի կորուստ, բացի չորս զորագլուխներից, որոնցից երեքը պատահականության զոհ են դառնում:

Ճիշտ է, Փափառուը նկարագրում է մի քանի խոշոր արշավանքներ Հայաստանի վրա: Պարսիկներն ավերում, քանդում են երկիրը, անթիվ մարդիկ կոտորում, բայց դրանք բնավ հետևանք չեն հայերի տկարության. դրանք տեղի են ունենում այն ժամանակ, երբ երկիրն անտեր է, թագավոր չունի, կամ երբ թագավորը սահմանն է պաշտպանում, իսկ թշնամին ուրիշ ճանապարհով գաղտագողի ներս է խուժում երկիրը, կամ մի այլ այսպիսի անզգուշություն հայերի կողմից. բայց ոչ մի անգամ իբրև հետևանք հայերի պարտության կամ տկարության:

Հայ Արշակունցի թագավորները Փափառուի աչքում Հայաստանի բնիկ տերերն են. հեղինակը շարունակ բնակ է կոչում նրանց: Երանց համար ապրել ու մեռնելը հայ զորքի և զորավարների սուրբ պարտականությունն է: Հնազանդ և հավատարիմ մնալ Արշակունցի թագավորներին՝ այս պատմություն էր, որ տալիս էին Մամիկոնյան զորավարներն իրենց հաջորդներին: Ենդինակը բառեր չի գտնում պարսավելու համար այն մարդկանց, որոնք դավաճանել են Արշակունցի թագավորին, թեկուզև անպիտան ու անմիտ լինի նա: Մեհրուժան Արծրունուն, որ ապստամբվել էր Հայոց թագավորների դեմ և Պարսից զորքին առաջնորդ էր հանդիսանում հաճախ Հայաստան արշավելիս՝ հեղինակը անվանում է «վատանջան», «չարագործ», «պիղծ», «անօրեն», «մեղավոր», «կախարդ»: Մի ուրիշ իշխան Սյունյաց տոհմից՝ Փիսակ անունով, Տիրան թագավորի սենեկապետը, մատուցություն է անում իր թագավորի վրա Պարսից Վարազ-Շապուր զորավարի մտ... Երան Փափառուը նկարագրում է այսպես. «Այր մի անարգ, որ ոչ ինչ պակաս քան զոն էր մոլորութեամբ... զայս ամենայն լուսա Վարազ Շապուր... ի կատարախօս ի շնաբերանն Փիսակայ... Եւ այն բանքն, որ վասն որսոյն ի թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն, շոգմոզն, տիրաննկն և տիրադրուժն, տիրասպանուն և տիրամատնիչն Փիսակայ, յայն աշխարհակորույս յառնէ անտի» (9, 1):

Փափառուի Պատմությունից երևում է, որ նրա նկարագրած Պատմության շրջանում Արշակունցի թագավորները թույլ և անզոր են եղել, խաղալիք երկու հզոր հարևանների՝ պարսիկների և հույների քաղաքականության կամ ուղղակի նրանց վասալ: Բայց սա չի խանգարում հայրենասեր հեղինակին՝ փրկուն մակդիրներ տալ նրանց—«քաջարանց», «մեծ թագաւորն Հայոց» (շատ անգամ): Երանց աղետալի վախճանը հետևանք է ոչ թե նրանց տկա-

րության, այլ պատահականության, դավաճանության, ներքին անմիաբանության: Վարագ-Շապուրը 3000 զորքով գալիս է Տիրանին հյուր, որ նրան միամտաբար ընդունում է իբրև բարեկամի. Վարագ-Շապուրը նրան բռնում է, հենց Հայաստանի սահմաններում էլ կուրացնում, որովհետև այդ ժամանակ Տիրանի մոտ չէին եղել զորքերը: Պապին Հունաց գորավարները ճաշի են հրավիրում և դավաճանորեն սպանում. բայց այսպիսի ստոր ճանապարհով կարելի է սպանել աշխարհի ամենահզոր մարդուն անգամ: Արշակին Շապուրը հրավիրում է Պարսկաստան, և նա կամա թե ակամա գնում է ու այնտեղ կորչում, որովհետև Հայոց նախարարները միլիոնավոր պարսիկներ կտորրելով՝ հոգնում են կտորրելուց և վճռում են այլևս չպատերազմել Արշակի համար:

Այսպիսի պատճառաբանություններով է վարագորում հայրենասեր հեղինակը իր ազգի ու Արշակունի թագավորների աղետները: Ազգի պատվի նախանձախնդրությունը նրան թույլ չի տալիս դառն իրականությունը պարզ խոստովանել:

Կարող էր մի օտարազգի պատմագիր այսքան պանծացնել հայոց անպարտելի քաջությունները, նրանց տարած առասպելական հաղթությունները և այսքան սքողել հայերի կրած աղետները: Այսպես կարող էր վարվել միայն ծայրահեղորեն իր ազգը սիրող, նրա պատվին նախանձախնդի հեղինակը:

## ԼԵՂՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Բայց գերազանց վկայությունը հեղինակի հայ լինելուն և հայերեն գրելուն նրա լեզուն է:

Այս լեզուն ամենից առաջ բնական է, ազատ որևէ արվեստականությունից, գեղեցկացնելու կամ գարդարելու ջանքից: Նա հեղինակի մտածողության անմիջական արտահայտությունն է, որ հորդաբուխ դուրս է հոսում: Այս պատճառով նա պարզ է ու ընտանի և կրում է մայրենի լեզվի ամբողջ քաղցրությունն ու հմայքը: Նա կանոնավոր է, ունի դասական կամ, ինչպես ասում են, ոսկեղենիկ հայերենի ընտիր հատկությունները, մանավանդ բաների գործածության կողմից նրանց վաղեմի նշանակությամբ: Նա ճկուն է և հյութեղ, կրում է լեզվի երիտասարդական հասակի կրողը, ունակ ամեն կերպ թեքվելու և ստեղծագործելու: Ամենահմուտ հայագետն անգամ շատ բան ունի սովորելու այս լեզվի մեջ, որ արտացոլում է հայերենի բուն ոգին: Այս հատկությունները կազմում են Փավստոսի լեզվի ընդհանուր գիծը: Բայց սրանց հետ միասին այս լեզվի մեջ նկատվում են տեսակ-տեսակ անհարթություններ ու անկանոնություններ, ինչպես մի ծաղկավետ դաշտում տեղ-տեղ մարդ պատահում է խոիվների, ցախերի կամ փորփրված հողակոշտերի:

Փավստոսի լեզուն և նրա այս հակառակ հատկությունները գեղեցիկ կերպով բնորոշել է Ա. Այտընյանը իր «Քննական քերականության» «Նախա-

շավիղ»-ի մեջ (եր. 58—59): «Ասոր (Փ. Բուզանդի) ստուգիվ ոսկեղեն լեզուն, որ գրողին բանաստեղծական անզուսպ ցնորիցը թափովն ամեն գրավոր օրինաց կապանքե ապստամբ կելլե, ամեն տեղ կրկին իրարու հակառակ հատկություններ միանգամայն գիտե ճարտարությամբ լծակցել: Ինչպես որ հիներու սեպհական ամփոփ կարճաբանության հետ միացած են անհավատալի կերպով կրկնաբանություններ, նմանապես ընտիր և խորին հայկաբանության հետ բնական կերպով մը հյուսված է ընտանեկան բարբառը՝ առանց գոեհկանալու. հարթ ու դյուրուկ խոսվածքի մեջ ճշգրիտ նկարներ, կենդանի պատկերներ: Մանկական պարզությանց մեջ առույզ ոգի և հաճախ խայթող պատմություն մը... Բայց ամենայն ինչ բնական է, առանց արվեստի և արվեստականության, և հարկ է ըսել, թե հոն լոկ բնությունն է խոսողը. վերջապես լեզվավը խորին հայկաբան, քերականական տրամաբանությամբ ճշտիվ ուսմիկ, ոճովն ամենևին արևելյան՝ այս եզական գործը բազմապատիկ արժեք ունի»:

Վերը հիշված անհարթությունների մեջ նախ և առաջ նշանակելու է ուսմական կամ հինգերորդ դարի ընտանեկան լեզվի տարրը, բառեր ու դարձվածքներ, որոնք օտար են դասական լեզվին և համապատասխանում են աշխարհաբար լեզվին ու քերականությանը: Այսպես, Փավստոսի մեջ նկատում ենք հետևյալ ուսմականությունները—«ե՛կ, հասի՛ր», «գլխախտածն», «ի հնոցն շինած քաղաք», «մտօքն բախած էր», «զտուեալ հրամանս նորա», «գեղեալ ուխտս կատարէին», «ազգի տակի և տոհմի Արշակունեաց», «բան ի գետին ոչ անկանէր», «տարցին յայն տեղ», «ի տեղաց իշխանութանց իւրեանց», «ես մկրտեալ չէի», «այնչափ գայրացոյց զթագաւորն որ», «թէ կամիք և թէ ոչ կամիք բայց թէ մտածեմ», «հարստացան անցին ըստ չափ», «լնոյր գերկիրն վաներով» կամ «վաներաւ», «արի՛ք, յաղօթս կամք», «թող բառնամ», «ո՛վ եմ ես զի կարեմ», «զմեր թագաւորն որո՛վ երեսօք տեսանեմք», «իմ երկու աչքս խաւարեցան», «զայն ժամանակս», «քո կամացդ», «իւր որդովն», «այս անգամ», «ո՛ր օր հասանէ» և այլն, և այլն (օրինակներն այստեղ մեծ մասամբ քաղված են Ա. Այտընյանի «Քննական քերականության» ներածության ծանոթություններից):

Սրանց հետ պետք է հիշել մի շարք քերականական անկանոնություններ, ինչպես են՝ «քան զքսան հազարք սատակեցան երոջ մարդկան» «ընդ ամենայն տիեզերք», «զիւր զօրքն կազմէր», «ի վանք մի», «ի չորք անկեալ», «անուանեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն», «ուրախութիւն բազում հոգևորս», «մեծ եղև փորձութիւնք նեղութեանց», «առն աստուծոյ ասացեալքն կատարեցաւ», «վասն զմիտս հաճել թագաւորին», «ի ժամանակեան միոջ», «առ թագաւորան հասից», խափան լիցի իւր յառաջն նմա», «Ուրջին վկայիւք», «պատուաւ», «արուեստաց» և շատ ուրիշները: Սրանք դասական հայերեն լեզվի քերականության տեսակետից պարզ սխալներ են: Սրանցից մի քանիսը կարող են հետևանք լինել ձեռագրական աղավաղության, սակայն մեծ մասը պետք է համարվի նույն ուսմականության երե-

վույթ: Լկատելի են նաև Փավստոսի երկում հաճախակի հանդիպող բառերի կուտակությունը և կրկնությունները: Շատերից բերենք մի քանի օրինակ. «աթալես պաշարեալք, ընկապեալք, գելեալք, վանեալք, կծկեալք, ամենեքեան առհասարակ լերկիր անկեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղը տեղէն»: «Փառաւորեսցէ ստուփին՝ յապարասան յանճնատէր, յարծաթատէր ի մտախար յանպատա: Կարան յանպիտան ի սուտակ և ի բանարկու մարդկանէ», «այլ ոչ ոք էր, որ գառաջնորդութիւն գլխարութեան քահանայապետութեանն վերակացութեանն, որ տէրունական տանն հրամանատարութեանն կատարեալ պաշտամանն յաջորդէր»: «Ջանարժանս զանկատար, զանջնջելի, զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործսն, զանարժանս զանտես զանլոր», «Եւ այն բանքն, որ վասն որսոյն ի թագաւորէն ասացան՝ վաղվադակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ ջորիկն շոգմոզն, տիրանեկն և տիրադրոժն, տիրասպանուն, տիրամատնիչն Փիսակայ, յայն յաշխարհակորոյս յանէ անտի»: «Եթէ զցայգ և զցերեկ ցատեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև գորդարեղեղ ինչ անճրևաց սաստկութեան զվարդապետութիւն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն իշատակ ինչ և ոչ նշմարանս ինչ, զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի»: «Իսկ այն, որ զենգութիւն քսութեանց նիւթեաց և դատով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն, զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա, զՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զենգութիւն սպանութեանցն թագաւորան զործեաց»: «Սովորութիւն էր՝ Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին, զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, ի միում զահոյս»: «Եւ սկիզբն զործակալութեանն, հազարապետութեանն, աշխարհատեան խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատեան դեկանութեան՝ շինականաշէն ազգն Գունեաց, հազարապետն ամենայն երկրին: Եոյնպէս արաւաքապետութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարտի կռուելոյ ռազմիկ ճակատամուղ ճիզակի՞ն՝ իրափառն աղանազգիք, աղանադոջք, արծուէնջանք, վարժնականիքք, աներկիւղք, քաջասիրտք նահատակք քաջանունք բարենջանս բարեհամբաք բարեզործք, յաջողակք ի գործ պատերազմաց... ի Մամիկոնեան ազգին» և այլն:

Այս կուտակություններն ու կրկնությունները նպատակ չունեն խոսքը զարդարելու, գեղեցկացնելու կամ հեղինակի ճարտարությունը ցուցադրելու, այլ ուղղակի բխում են զգացմունքից («ի յանկաւորսն սրտի խօսի բերան») կամ հետևանք են հեղինակի՝ կանոնավոր դպրոցական կրթություն չունենալուն, կամ որ նուրբն է՝ ժողովրդական մարդ լինելուն: Երանք ես: Իրենց անկանոնությամբ հանդերձ, այսորժեյի են և ժայիտ են հարուցում:

Վերջապես, Փավստոսի գիրքը շտեմարան է հայերեն բառերի: Հարյուրներով պատահում են նրա մեջ բարդ և պարզ բառեր, որոնք միայն նրա մոտ

և մի անգամ են գործածված: Բարդ բառերից շատերը գուցե հենց հեղինակի ստեղծածներն են, իսկ պարզ բառերն առկած են հեղինակին ժամանակակից դասական կամ զավառական լեզվից և ցույց են տալիս, թե բառերով ո՞րքան հարուստ է եղել լեզուն այն ժամանակ և դեռ քանի՞ հարյուրավոր նոր բառեր մենք կունենեալինք, եթե Փավստոսի նման երկու-երեք գիրք ավելի գրված լիցեին այն ժամանակ:

Բերենք մի փոքր մասն այսպիսի բառերից: Բարդ բառեր.— բաներթուկ, սրտկեղ, մարմնավար, կարճագատ, չարակեղ, նոյնսհաս... նոյնագգեաց, զկնիագոյն, մեծաքանչելաշուք, առաքելաշնորհ (զոյական), ուղղափառահաւատ, բարիագութ, երախտապարզ, տառապելաւեր, պատուիրանակատար, վարձկանագրիչ, խօթապատճառ լինել, ոսկիվարաւանդ, կանանցահանդերձ, աղքատակերութիւն, անօթապարտեալ, շաղաշատութիւն, ամուսնութիւնընկալ, ստացուածաշատութիւն, տիրամատնիչ, աշխարհապաղատ, աշխարհատեմ, շինականաշէն, իրափառն, աղանազգի, աղանադոջ, արծուէնջան, վարժնականիքք, ճակատամուղ, օրհնութիւնընկալու, զմիմեանագրկութիւն, զայլոցկերութիւն, զամապետ, խոտորկտուրք և այլն:

Պարզ բառեր են.— ճարտուկ, ճանճկէն, սիւս կամ սիւսիք, փոյթ կնքանց, կոտինդ (ն), զարգմանակ, ապիզակ, աթինեալ, տապակեալ, միահանէք կամ միահանէսք, սպրդում, լուրան, մկթալ, առոշոգի, նայեաց (զոյական), մամխի, ժամուար, բանուկան, խաշար, գուգազ, շորիկ և այլն:

#### Ո՛Վ Է ԼԵՂԻՆԱԿ

Ո՛վ է այս գրքի հայ հեղինակը՝ չգիտենք: Եւ անշուշտ և. Մետրոպոլիտան Երևանի աշակերտներից մեկն է, որ, սակայն, արտասահման չի ուղարկվել բարձրագույն ուսում ստանալու կամ թարգմանելու: Եւ Հայաստանի դպրոցի աշակերտ է՝ ուսում առած կրոնական գրքերի և ժամանակագրության սահմաններում, կրոնասեր, բարեպաշտ, հրաշքների հավատացող, միամիտ, դուրահավան, հայոց եկեղեցու ջերմ պաշտպան: Եւ ի բնե սեր է ունեցել հեքիաթային բնույթ կրող պատմությունների: Գուցե իր վարած պաշտոնի շնորհիվ առիթ է ունեցել շրջելու Հայաստանի զանազան վայրեր և ամեն տեղ այսորժանցով լսել է ժողովրդական ստեղծագործությունները՝ հեքիաթներ, սրբերի վարքեր, պատմություններ, գրույցներ, առասպելներ և գրի է առել ամեն ինչ, որ լսել է, սուտ կամ ճշմարիտ, պիտանի կամ անպիտան, բարեպաշտական թե բամբառակ: Այսպիսով, հետզհետե գոյացել է մի բավական ընդարձակ ժողովածու տարբեր արժեքի ու բովանդակության պատմություններից, թե՛ հայոց և թե՛ օտարների կյանքից: Իր հավաքած: Ոյուրը հեղինակը աշխատել է դասավորել ժամանակագրական կարգով, որ, սակայն, քիչ անգամ է հաջողվել, իր կողմից ավելացրել է հոգեշահ խրատներ ու աղոթքներ, և այս կերպով ստեղծվել է այն գիրքը, որ մեզ հասել է Փավստոս Բուզանդի անունով:

## ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱԼԻ ԱՆՈՒՆԸ

Բայց որտեղից է Փավստոս Բուզանդ աճուճը: Սա կեղծ, հնարովի աճուճ չէ. այսպես հիշված է հեղինակի 9 դպրության վերջում դրված հիշատակարանում «Կատարեցաւ Երրորդ դարը... ժամանակագիր կանոնը Փաստեալ Բիզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի»: Այս Փավստոսը անշուշտ այն Փավստոս եպիսկոպոսն է, որ մի քանի անգամ հիշվում է Պատմության մեջ, նա, որ սարկավազ ձեռնադրեց Ներսես Մեծին (Գ, գ), նա, որ նույն Ներսեսի մարմինը տարավ թաղելու (Ե, իդ), նա, որ Ներսեսի աթոռակիցը, գործակիցն ու խորհրդականն էր, նրա հավատարիմ մերձավորը և ազգով հոռոմ էր, այսինքն՝ բյուզանդացի (Զ, եզ): Գրքի անձանոթ հեղինակը այս նշանավոր եպիսկոպոսին է վերագրել իր աշխատանքը՝ իբրև Ներսեսին ժամանակակից լավատեղյակ և արժանահավատ անձի, որպեսզի իր գրվածքի վարկը բարձրանա ու վստահություն ներշնչի: Նա հետևել է իրենցից հազիվ մի տասը տարի առաջ հայոց դարձի պատմությունը գրող, գուցե և՛ իր ընկեր հեղինակին, որ նույնպիսի նպատակով իր հորինած լեգենդական պատմության վրա գրել էր Ագաթանգեղոս աճուճը, որ իբր թե եղել է ազգով հոռոմացի և Տրդատի քարտուղար: Եթե անցյալ դարի յոթանասնական թվականներից 9. Սրվանձտյան եպիսկոպոսը, գրի առնելով «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպը, կասկած էր հայտնում, որ գուցե ուրիշները կծաղրեն իր կատարած գործը, մանկամտություն կհամարեն, կարհամարհեն, որքան ավելի թերահավատ պետք է լիներ իր գործի նկատմամբ հինգերորդ դարի այս առաջին հայ բանահավաքը, որ ավելի բնական ճաշակով, բնագրով, քան գիտակցությամբ գեահատեց ժողովրդական ստեղծագործություններն ու գրի առավ: Այս պատճառով է, որ նա թաքցրել է իր իսկական աճուճը և ժողովածուն վերագրել է մի հեղինակավոր աճուճ, որպեսզի իր աշխատանքը արհամարհանքից ու կորստից փրկի:

## ԲՈՒՋԱԼՆԱՐԱՆԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Միայն այս տեսակետից դիտելով Փավստոսի Պատմությունը, այսինքն՝ ընդունելով այն իբրև մի ժողովածու ավանդությունների ու գրույցների, կարելի է լիովին հասկանալ այս գրվածքի էությունը և բացատրել սրա տարօրինակությունները: Այս գրվածքը իսկապես պատմություն չէ, այս բառի սովորական նշանակությամբ, այսինքն՝ որևէ ազգի կյանքում որոշ ժամանակաշրջանում տեղի ունեցած անցքերի հաջորդական պատճառաբանված նկարագրությունը, այլ ժողովածու է զանազան «պատմությունների», այսինքն՝ գրույցների կամ պատմվածքների: «Փաստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց» թվում է հրատարակիչների կամ ընդօրինակողների հորինած վերնագիր է. գրվածքի իսկական և համապատասխան աճուճը եղել է «Բուզանդարան պատմութիւնը», բնորոշ հոգնակի ձևով, այսինքն՝ պատմությունների ժողովածու Բուզանդի: Նույն հոգնակի ձևը գտնում ենք գոր-

ծածված նաև «Ստորոտում»—«Ստորոտ անենայն պատմութեանց», այսինքն՝ վերջ բոլոր պատմությունների: Իսկ թե ի՞նչ է նշանակում «Պատմութիւն» Փավստոսի լեզվով, այդ գտնում ենք 9 դպրության վերջը գրված հիշատակարանում. «Կատարեցաւ երրորդ դարը, քան և մի պատմութեանց դպրութիւնը». քանանել պատմությունները 9 դպրության քանանել գլուխներն են, ուրեմն, ամեն մի գլուխ պարունակում է մի պատմություն որևէ անցքի մասին: («Բուզանդարան» բառի նշանակության մասին տե՛ս ծանոթ. 1):

Այս պատմությունները, որ հավաքածու են զանազան անձերի պատմածներից, տարբերվում են միմյանցից թե՛ որակով և թե՛ բովանդակությամբ: Որակը գնահատելը, սուտն ու ճշմարիտը, պիտանին ու ոչ-պիտանին որոշելը պատմական քննադատության գործ է, որը մեր ներածության ծրագրի մեջ չի մտնում: Գալով այդ պատմությունների բովանդակությանը, կարելի է նշանակել Փավստոսի մեջ հետևյալ գլխավոր մասերը:

Պատահում են այստեղ պատմություններ, որոնք ոչ մի կապ չունեն հայոց պատմության կամ հայոց կյանքի հետ: Այսպես են ասորի Հակոբ Մըծբընա հայրապետի Արարատ լեռը բարձրանալը և տեսիլքում հրեշտակի միջոցով Նոյան տապանից մի կտոր փայտ ստանալը, որին փափագում էր (Գ, ժ). Վաղես կայսրի հարուցած հալածանքները ուղղափառ քրիստոնյաների դեմ (Դ, ե, գ). Եվսեբիոս եպիսկոպոսի նախանձը ս. Բարսեղի նկատմամբ (Դ, է). Սոփեստեսի տեսած սքանչելի տեսիլքը և Վաղեսի մահը (Դ, ժ):

Պատահում են պատմություններ, որոնց մեջ որևէ օտար անձի պատահած անցքը վերագրված է մի հայի: Օրինակ՝ Ներսես Մեծի ձեռնադրության ժամանակ աղավինն ս. Բարսեղի վրայից վերանալով՝ գալիս հանգչում է նրա վրա (Դ, ե): Այսպիսի դիպված պատահել է մի ոմն Փաթիանոսի, որին այս պատճառով ընտրել են Հոռմի եպիսկոպոս (Եվսեբ., Ե. պատմ., Զ, իթ.): Ներսես Մեծը հրաժարվում է աղոթել արիանոս Վաղես կայսրից հիվանդ որդու վրա, և երեխան մեռնում է (Դ, ե.): Այս դեպքը պատմում է Սոկրատը (Եվ. պատմ., Դ, իզ) ս. Բարսեղի մասին: Ներսես Մեծը ուրիշ եպիսկոպոսների և հոգևորականների հետ Վաղես կայսրից աքսորվում է մի անապատ կղզի (Դ, գ): Այս աքսորվածների մեջ չէր կարող լինել Ներսես Մեծը, որովհետև այս աքսորին ժամանակակից չէր: Շաղիտա անապատականը շրջում է առյուծների հետ և մի առյուծի թաթից հանում է խրված եղջեր ու թաթը բժշկում է: Նա կոշիկներով ման է գալիս ջրերի վրայով, և կոշիկները չեն թրջվում: Այս բաները պատմված են ս. Երասիմոսի մասին Հարանց վարքում (Ակինյան, «Փ. Բյուզանդի աղբյուրներն», 142—146): Մամբրեի անապատում մի թերահավատ կրոնավորի տեսած սքանչելի տեսիլքը (Դ, իը) նույնպես առնված է Հարանց վարքից (Գաթըրճյան, «Սիրագան պատարագամատույց», եր. 94):

Պատահում են սրբերի վարքագրություններ՝ անխուսափելի հրաշքներով, ինչպես են՝ Հակոբ Մըծբնա հայրապետը (Գ, ժ), Դանիել քորեպիսկոպոսը (Գ, ժդ), Ներսես Մեծի տեղակալ Խաղ եպիսկոպոսը (Դ, ժբ), Մամբրեի անապատի քահանայ (Ե, իդ), Շաղիտան (Ե, ե, գ), Եպիփանը (Ե, իե),

Գիժը և նրա ընկեր անապատականները (Ջ, ժգ): Պատահում են, վերջապես, կարճ և երկար քարոզներ, վարդապետություններ, աղոթքներ, որոնց նկատմամբ մասնավորապես սեր ունի հեղինակը և հավանորեն ինքն է շարադրել. այսպես են Լեւոն Մեծի ընդարձակ խրատ-վարդապետությունը Վաղեն կայսեր առաջ, որով հորդորել է նրան ետ կանգնել արիսական աղանդից, հակառակ դեպքում ինքը կհրաժարվի աղոթել կայսեր հիվանդ որդու առողջանալու համար (Դ, Ե), նույն Լեւոնի քարոզ անապատ կղզում (Դ, զ), նրա աղոթքը Լպատ լեռան վրա պատերազմի ամբողջ ընթացքում (Ե, ր), Զվիթի աղոթքը մահապատից առաջ (Դ, ժե) և այլն:

### ՋՐՈՒՅՅՆԵՐԻ ՊԼՆԱՎՈՐ ՏԱՐԻՐԸ

Վերը հիշված այս տարրերը, որոնք մասամբ հայ ազգին չեն վերաբերում և ընդհանրապես օտար են Պատմության, Բուզանդարանի մոտ մի երրորդ մասն են գրավում. Եթե սրանք մի կողմ թողնենք, մնացածը վերաբերում է մեր ազգին և պարունակում է արժեքավոր հիշողություններ Հայոց քաղաքական ու ընտանեկան կյանքի մասին չորրորդ դարի երկրորդ կեսում, մեծ մասամբ ժողովրդական վեպի բնույթով: Երեք գլխավոր ճյուղի կարելի է բաժանել այս վիպական նյութը՝ հոգևոր, արքունական տան և Մամիկոնյան տան՝ ամեն մեկը յուր հերոսներով:

### ՀՈԳԵՎՈՐ ՎԵՊ

Հոգևոր վեպի գլխավոր հերոսն է Լեւոն Մեծը, որի կյանքն ու գործունեությունը ամեն կերպով զարդարել է ժողովրդի հիշողությունը՝ նրա վրա փոխադրելով բազմաթիվ գործեր ու հատկություններ ուրիշ նշանավոր մարդկանց գործերից: Արդեն վերը ցույց տվինք, որ նրան են վերագրված ձեռնարկության ժամանակ վրան աղավնի իջնելը, Վաղես կայսեր հիվանդ որդու վրա աղոթել գլանալը, անապատ կղզի քարոզելը: Գրիգոր Լուսավորչի կյանքից է առնված նրա Կեսարիա գնալը ձեռնարկություն ստանալու համար և վերադարձը, նրա գործունեության մեջ շատ բան գրված է հետևողությամբ նույն Գրիգորի գործունեության (Փավստ., Դ, գ—Ազ., ճծը—ճի): Լպատ լեռան վրա աղոթելը նմանություն է Մովսես մարգարեի աղոթելուն բլրի վրա՝ Ամաղեկացիների հետ պատերազմելու ժամանակ (Փավստ., Ե, ր.—Ելից, ժե 8—13): Նրա մահն ու թաղումը նմանություն են ս. Սահակի մահվան ու թաղման և այլն: Լեւոն Մեծը Փավստոսի երկի մեջ գուրա է բերված իբրև տիպար արթուն ու առաջինի հոգևոր հովվի: Նա հոգևոր հայրն է հայ ժողովրդի՝ սկսած թագավորից մինչև հետին մշակը. նրանք առաջնորդը կյանքի մեջ, վարքերը ուղղողը. նա անաչառ լեզու ունի հանդիմանության և չի ակնածում հզորներից: Նա անիծում է անզեղներին, և նրա անեծքը անմիջապես կատարվում է, նա, բարեկամ և խնամակալ է աղքատներին, տնայեցիներին, հիվանդներին: Հայաստանի բոլոր գավառները

նրան հիմնում է աղքատացուցներ, ուրվանոցներ, հյուրանոցներ, որտեղ պետք է պատսպարվեին աղքատները, ուրուկները, օտարականները: Նա մտցնում է բարեկարգություն ամուսնական կարգի մեջ՝ արգելելով մերձավոր ազգականների ամուսնությունը շահադիտական նպատակով. նույնպես և մեռելների թաղման ծեսի մեջ՝ խախտելով սգի վայրենական արտահայտության ձևերը: Խեղճերից ազատում է անհրաժեշտ պահանջատերերի ձեռքից, ուր որ գնում է, ամեն տեղ հրաշքներ է գործում, բժշկություններ կատարում, բաց է անում հունարեն և ստորերեն ուսման դպրոցներ՝ հոգևորականներ պատրաստելու համար: Նա նույնիսկ մեռնում է իր հովվական պարտականությունը անթերի կատարելու պատճառով, թունախորվելով Պապ թագավորից՝ նրա պիղծ գործերը հանդիմանելու համար:

Նույն ճյուղին են պատկանում հիշողությունները Վրթանես և Հուսիկ կաթողիկոսների ու Դանիել ջորեպիսկոպոսի մասին, որոնք ավելի վիպական բնույթ ունեն, քան պատմական:

### ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏԱՆ ՎԵՊ

Արքունական տան վեպի գլխավոր անձնավորությունն է Արշակ Երկրորդը, որի կյանքին ու գործունեությանը շատ տեղ է նվիրված Փավստոսի Պատմության մեջ: Վեպի մեջ նա դուրս է բերված անորոշ, խառն բնութագրով: Նա շատ նախանձախնդիր է իր արժանապատվությանը: Երբ Վաղեսը նրա պատգամավոր Լեւոն Մեծին աքսորում է, մեղադրելով, որ պատճառ դարձավ իր միակ որդու մահվան, իսկ Արշակի սիրտը շահելու համար ազատ է արձակում իր մոտ պատանդ դրված՝ Արշակի երկու եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին, և անհամար գանձեր է նվեր ուղարկում Արշակին, սա արհամարհում է նվերները, պատանդներին արձակելը, նախատիքներ ու ըսպառնայիքներ է թափում նվերներն ուղարկողի ու բերողների վրա և իր նախատիքի վրեժն առնելու համար վեց ամիս ասպատակում ու ապերում է հունաց երկրները Վասակ զորավարի ձեռքով: Նա քաջ է և հայրենասեր, թույլ չի տալիս, որ Հայաստանի սահմաններից թեկուզ մի կորիի չափ գետին թշնամու ձեռքն անցնի, և այս պատճառով ամբողջ իր թագավորության ընթացքում ոգորում է պարսիկների դեմ ու միշտ հաղթական դուրս գալիս: Նա դուրահավան է և հեշտությամբ ենթարկվում է ուրիշների ազդեցության. Տիրիթի մատնությամբ նա սպանել է տալիս իր Գնել եղբորորդուն և երբ զգում է, որ զոհ է դարձել Տիրիթի ստոր մատնությանը, զղջում է իր սխալը և սպանել է տալիս Տիրիթին: Նա Մամիկոնյան տան պարսկասեր Վարդան նահապետի թելադրանքով բարեկամանում է Պարսից Ծապուհ թագավորի հետ՝ և՛ երդումով դաշն է կապում նրա հետ. բայց հետո Վարդանի եղբոր՝ հունասեր Վասակ զորավարի թելադրանքով դրժում է իր ուխտը և գաղտնի փախչում է Պարսկաստանից: Նա չունի ազգի և իր շահերի համապատասխան քաղաքականություն. երբ հույների և պարսիկների մեջ կոխվ է ծագում, նա սպասում է, թե նրանցից ո՞րը իրեն օգնության պետք է կանչի, որ գնա

Նրան օգնելու: Նրա համակրությունը հույների կողմն է եղել, բայց սրանք նրան բանի տեղ չեն դնում, ո՛չ նրանից օգնություն են խնդրում և ո՛չ մեծարում: Այնինչ Շապուհը կեղծավոր խոսքերով նրա սիրտը շահում է, մոռացության է տալիս նրա երդումը դրժելը և Պարսկաստանից գաղտնի փախչելը, խնդրում է նրանից օգնություն: «Եթե դու մեր կողմը լինես, ասում է, հաղթությունը մերը կլինի»: Արշակը հրապարկում է ու գնում է իր թշնամուն օգնության և իր բարեկամ հույների գործերը կոտորում է մինչև վերջին մարդը, առանց պարսկական զորքի մասնակցության: Նա թեթևամիտ է. մի քաղաք է շինում իր անունով (Արշակավան): Նրա մեջ ապարանք է շինում իր համար և կամենալով, որ քաղաքը շուտով բազմամարդանա՝ այն հայտարարում է քաղաք ապաստանի, այսինքն՝ ինչ հանցավոր որ փախչի, այդ քաղաքին ապավինի, նրա դեմ դատ չի լինի: Մեծամեծ չարիքների տեղիք տվեց Արշակի այս անխոհեմ գործը: Երկրում բազմացան գողեր, ավազակներ, հափշտակիչներ, որոնք անիրավ գործեր կատարելուց հետո փախչում-ընկնում էին այդ քաղաքը: Պարտապանները, ավանդառուները այդտեղ էին ապավինում պատասխանատվությունից խուսափելու համար. մարդիկ հափշտակում էին ուրիշների կանանց և փախչում այդ քաղաքը: Երկիրը սուգի մեջ մտավ. հառաչելով ասում էին. «Իրավունքը մեռավ մեր երկրում»: Չարիքին վերջ դրեց ժանտախտը, որ մի քանի օրում կոտորեց ժողովուրդը, մյուսներն էլ սարսափահար ցիրուցան եղան: Ժողովուրդը այս պատուհասը վերագրեց Ներսես Մեծի անձեռին:

Խոր վիպական բնույթ է կրում Արշակի վրա գործ դրված հմայությունը Հայաստանի հողով ու ջրով և նույնիսկ պահպանել է վեպի չափական ձևը (Դ, ծր): Շապուհի դահլիճում Արշակը պարսկական հողի վրա եղած ռուպեներից տեղձանում, Սգլաստանում է, մեղա է գալիս, ուզում է Շապուհի ոտքերը համբուրել, իսկ երբ գալիս են հայկական հող ցանած հատակի վրա, նա խրոխտանում է, սպառնալիքներ թափում Շապուհի վրա՝ մոռանալով, որ Պարսկաստանում է գտնվում, Շապուհի ձեռքում: Մանավանդ հուզիչ է ընթրիքի տեսարանը, երբ Արշակին անարգելու համար վերջին տեղում են

ճատեցնում, փոխանակ սովորական տեղում՝ Շապուհի կողքին, բայց ոտքերի տակ դարձյալ Հայաստանի հող են շաղ տալիս: Անարգանքի զգացումը ճնշում է նրա հոգին, բայց ներքևից, Հայաստանի հողից, կարծես էլեկտրական հոսանքներ են անցնում նրա մարմնով, գրգռում, գայրացնում են. նա չի կարողանում դիմանալ այս ուժեղ հոսանքներին, վեր է կենում, կանգնում, բարձր ձայնով, բոլոր նստածների առաջ ձայն է տալիս Շապուհին. «Վե՛ր կաց այդտեղից, որ ես այդտեղ բազմեմ, որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ, իսկ եթե իմ երկիրը հասնեմ, քեզանից խիստ վրեժխնդիր կլինեմ»: Նրան շղթաներով կապում են և Անհուշ բերդն աքսորում ցմահ: Որքան դժբախտ է այս խելակորույս թագավորը և միննույն ժամանակ որքան վսեմ: Մայրենի հողը, որի վրա կանգնած է նա, այնքան հզոր է, այնքան լցնում է նրան արիությանը, արժանապատվության զգացումով, որ նա արհամարհում է անխուսափելի կորուստը, հզոր է, քան մահը: Այս սքանչելի վեպը բանալի է դառնում հասկանալու համար վեպի նախորդ անցքերը՝ հայի անպարտելի ուժը թշնամու միլիոնավոր բանակների դեմ կռվելիս ու հաղթահարելիս: Չէ՛ որ այդ կռիվների ժամանակ Արշակը ազատ էր, թագավոր էր և իր բնիկ մայրենի հողի վրա էր գտնվում. նա, իհարկե, անպարտելի պիտի լիներ: Կարծես այս վեպը մի հայկական տարբերակը լինի հունաց դիցաբանության վեպի՝ Անթեսու հսկայի մասին, որի հայրը Պոսեյդոնն էր, իսկ մայրը՝ Գեան (= Երկիրը): Նա բոլոր օտարագրիներին մենամարտի էր հրապիրում և բոլորին հաղթում, սպանում էր, որովհետև իր մորից՝ հողից, շարունակ ուժ էր ստանում: Հերակլեսը նրա հետ մենամարտելիս նրան չէր կարողանում հաղթել, մինչև որ նրան օդի մեջ բարձրացնելով՝ ոտքերը գետնից չկտրեց, և մինչև ոտքերը նորից գետին դնելը խեղդեց: Այստեղ մայր հողը ֆիզիկական ուժ է ներշնչում, իսկ հայկական վեպում մայրենի հողը հոգեկան արիություն, աներկյուղություն է ներշնչում:

Վիպական է վերջապես Արշակի մահվան նկարագիրը, որ գեղեցկությամբ և հոգեբանական ճշմարտությամբ մի անմասն ստեղծագործություն է: Մի քանի տարի Անհուշ բերդի գնդանում ապրելով՝ ընտելացել է խավարին, կեղտին, շղթաներին, խղճուկ պարենին, արհամարհանքին: Նա արդեն կորցրել է զգացողությունը: Եվ ահա մի օր հանկարծ բացվում է զնդանի դուռը, ներս է մտնում իր վաղուց մոռացված նախկին սիրելի ներքինին՝ Դրաստամառը, երկրպագում է նրան, դուրս է բերում լույս աշխարհ, արձապետներ հագցնում, ճոխ սեղան բաց անում նրա առաջ, երաժիշտների խումբով ու գինիներով զվարճացնում, ուրախացնում է նրան: Արշակը հետզհետե սթափվում է, վերհիշում է իր անցյալ թագավորական ճոխ կյանքը, ազատության և կյանքի սերը նորից արժարծվում է նրա մեջ: Բայց շատ կարճատև է լինելու այս նոր կյանքը, ընդամենը մի օր, վաղը էլի նույն զոհ դանը, նույն շղթաները, նույն խավարն ու կեղտը: Գինին նրա գլուխն է զարկել. նա պատկերացնում է այդ թշվառական կեցությունը, որ մի քանի ժամից վրա է հասնելու ընդմիշտ, առանց փոփոխության հույսի: Այդ մո-

<sup>1</sup> Ապաստանի տեղեր՝ հուն. ἄσυλον, լատ. asylus, ֆրանս. asile, պարսկ. bast, գոյություն ունեին հին ժամանակներից ի վեր և այլ երկրներում. ինչպես հրեաների մեջ իբրև ապաստանի տեղ էր ծառայում տաճարի սեղանի եղջյուրը (Գ. Քազ., Ա, 50), հին Հունաստանում և Իտալիայում՝ աստվածների մեհյանները, աստվածների արձանները, սեղանները, դամբարանները: Պարսկաստանում՝ շահերի ախոռատունը, վերջերջ՝ մզկիթը, փոսոք և այլն: Ապաստանի տեղի իրավունքը մտավ նաև եվրոպական պետությունների մեջ: Այժմ վերացված է, բայց շարունակվում է դեռ Պարսկաստանում: Արշակ թագավորն էլ, երևի օրինակ առնելով Պարսկաստանից (կամ Հունաստանից), կամեցավ նույնպիսի ապաստանի տեղ դարձնել ամբողջ քաղաքը, որ բնակաճակատի տեղիք տվեց մեծամեծ զեղձումների:

տալուտ կեցութիւնը նրան այլն անհանդուրծելի է թվում, նա բացականշում է. «Օ՛, Արշակ, ի՛նչ էիր և ի՛նչ օրի հասար», և դանակը, որով միոգ էր ուտում, խրում է իր սիրտը ու շունչը փչում: Դրաստամատը, որ եկել էր նրան մխիթարելու բարի նպատակով, բայց պատճառ դարձավ նրա անճանապարհության, չի կամենում իր սիրած թագավորից հետո ապրել. դուրս է քաշում դանակը նրա կրծքից և խրում իր կուրծքը: Ինքն էլ անշնչացած ընկնում է նրա կողքին:

Փակտոսի գրքում Արշակ Բ-ի կյանքը լի է դրամատիզմով, նույնիսկ օպերա գրելու արժանի, և կարծում եմ, ապագա սերունդները կտեսնեն լավագույն դրամաներ, օպերաներ ու սիմֆոնիաներ նրա արկածալից կյանքից: Կիպական գծեր է պարունակում նաև Պապ և Վարազդատ թագավորների կյանքը: Պապին առում էր հողատիրականությունը, որովհետև նա սահմանափակել էր հողատիրականների մեծ արտոնությունները՝ նրանց հողերի մեծ մասը խլելով, նրանց ընտանիքի անդամների մեծ մասին ազատությունից (հարկից ազատ լինելուց) զրկելով ու շինական դարձնելով և Ներսես Մեծի հիմնարկությունների մեծ մասը փակելով: Այս պատճառով նրան ժողովրդողական հիշողությունները ներկայացնում են իբրև դևերի նվիրված, մեղքերի ու տեսակ-տեսակ պղծությունների մեջ թավալված և իբրև Ներսես Մեծին թունավորող: Վարազդատի կյանքում վիպական բնույթ ունեն նրա ռուսացությունները Մանուելի հետ, մեծամարտությունը նրա ու Մանուելի միջև և վերջինիս փախուստը:

### ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՆՆ ՎԵՊ

Մամիկոնյան տան ճյուղի վեպերում ամեն մի գորավար մի դյուցազն է, օժտված բոլոր ֆիզիկական և բարոյական հատկություններով, որոնք հատուկ են դյուցազնին: Նրանք հայ ժողովրդի ստեղծած տիպարներն են արիության, քաջության, անվերելիության, վերանձնության, հայրենասիրության, պաշտպանել հայրենի երկիրը, մի կորիի չափ հող անգամ չզիջել թշնամուն, պաշտպանել եկեղեցիները և եկեղեցական ուխտը, հավատարմությամբ ծառայել բնիկ տերերին՝ Արշակունի թագավորներին, ապրել ու մեռել նրանց համար՝ տրանք են ամեն մի Մամիկոնյան գորավարի բարձր նպատակները:

Նրանց համար ցանկալի և պանծալի է մահը պատերազմի դաշտում և ոչ թե տանը՝ անկողնում: Ինչպիսի դատությունամբ է գանգատվում հիվանդացած Մանուելը՝ իրեն շրջապատող ազգականներին դիմելով: Բաց է աճում մարմինը, ցույց է տալիս անհամար սպիներ խոցվածքներից և ատում. «Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերջ հանձն եմ առել քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի նման մեռնեի» (Ե, խդ):

Նրանց համար նվիրական էր թագավորի անձը, ոչ միայն իրենց՝ Արշակունի թագավորների, այլև օտարների: Մի պատերազմի ժամանակ Ար-

վանից Ուռնայր թագավորը Շապուհից խնդրում է, որ իրեն թույլ տա ապականական զորքով ակոյան դուրս գալ Մուշեղ սպարապետի դեմ: Կույի ժամանակ Մուշեղը հաղթում, շարդում է աղվաններին: Ուռնայրը փախչում է Մուշեղը հասնում է ետևից. Սիզակի կոթով երկար ծեծում է նրա գլուխը և առում. «Շնորհակալ եմիր, որ թագավոր ես, թագ ես կրում. ես թագավոր մարդ չեմ սպանի, թեկուզ որքան էլ նեղն ընկնեմ»: Թույլ է տալիս նրան ութ ձիավորով փախչել: Երբ Մուշեղին ամբաստանում են Պապի մոտ թե նա թշնամի թագավորներին բռնում է և ազատ արձակում. Մուշեղն արդարանում է, ասելով. «Ես իմ ընկերներն քոլորին կտորրեցի, իսկ թագ կրողներն իմ ընկերները չեն, ես թագավոր մարդու վրա երբեք ձեռք չեմ բարձրացրել և այսուհետև էլ չեմ բարձրացնի: Ուզում ես ինձ ըստ պահիր» (Ե, դ): Սա միակ դեպքը չէ: Մանուել սպարապետը կոկում է Վարազդատ թագավորի դեմ այն պատճառով, որ նա սպարապետության կաշունը Ամմիկոնյաններից խլել, իր դայակ Բատ Սահառունուն էր տվել, որ նույն այդ Բատի խորհրդով աչաքնել էր տվել Մուշեղ սպարապետին, և մանավանդ այն պատճառով, որ Վարազդատը Արշակունի չէ (ըստ երևույթի, Պապի ապօրինի զավակն է): Մանուելը Վարազդատին առաջարկում է Հայաստանից հեռանալ: Նա չի լսում: Կույի ժամանակ Վարազդատը նիզակով հարվածում է Մանուելի բերանին, շատ ատամներ թափում, և նիզակի տեղը նրա աչքը ծակում դուրս է գալիս: Մանուելը նրա նիզակից բռնելով՝ քաշում ատամն է նրա ձեռքից և անզեն հակառակորդին առաջ գցած՝ Սիզակի կոթով հարվածում է: Որդիները վրա են հասնում, որ Վարազդատին սպանեն, իսկ նա բղավում է նրանց ետևից. «Է՛յ, մի՛ լինեք տիրապան»: Իր արյունարբու հակառակորդ թագավորի կյանքին խնայում է և նրան Հայաստանի սահմաններից դուրս է քշում (Ե, լէ):

Ինչպես նվիրական է նրանց համար թագավորի անձը, այնպես էլ նվիրական է օտար կնոջ պատիվը: Մի պատերազմի ժամանակ Մուշեղը կտորում է պարսիկներին և Շապուհի բոլոր կանանց գերի վերցնում: Նա թույլ չի տալիս ոչ ոքի նրանց որևէ անարգանք հասցնել, այլ ժանկարներ պատրաստել տալով՝ նրանց բոլորին պահապանների ուղեկցությամբ ուղարկում է իրենց ամուսնու՝ Շապուհի մոտ: Մուշեղի այս ասպետական վարմունքն ավելի աչքի է ընկնում, երբ համեմատում ենք նրան Շապուհի հետ և մտաբերում ինչպիսի կտի անարգանքի էր սա ենթարկում գերի ընկած ազնվական հայ կանանց (Դ, ծը) և Փռառնեմ թագուհուն (Դ, ծե): Զի կարելի չզգայվել այն անվերելիությամբ, որ ցույց տվեց Վասակ սպարապետը Պարսկաստանում, երբ նրան դատում էր Շապուհը: Երբ Արշակը վերջին անգամ սկանալից Պարսկաստան գնաց Շապուհի կոչին, Վասակը իր սիրած թագավորին մեծակ չթողեց, կանեցավ նրան վիճակակից դառնալ: Երբ Հայաստանի հողով հմայությունից հետո Շապուհը Արշակին շղթաներով կապել տվեց և Անհուշ երդոն աքտրեց, հերթը հասավ Վասակին: Շապուհը երգեցանքով հարցնում է նրան. «Աղվես, այդ դո՛ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ շարձաբեցիր, դո՛ւ էիր, որ այսքան տարի կտորում էիր

արիւններին, հիմա ինչպէ՛ս ես, որ քեզ աղվեսի մահով սպանեմ»: Վասակը թեպէտ պարսկական հողի վրա էր կանգնած, չի ստորաճում, աղաչանքի, լեռման չի դիմում, այլ արժանապատուությամբ պատասխանում է. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, իմ մեծութեան չափը չգտա՞ցիր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես: Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի, մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»: «Դե սաս, իմանա՞նք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»,— հարցնում է Ծապուհը:— «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը» (Դ, Ժդ): Այս նույն Վասակն էր, որ դրանից առաջ Պարսկաստան եղած ժամանակ Ծապուհի այնոռատանը սրով սպանեց այնոռատեան, որովհետև նա անպատկառ կատակով Արշակ թագավորին կոչեց. «Հայոց այծերի թագավոր» (տես Դ, Ժգ): Իր թագավորի պատվին նախանձախնդիր լինելով՝ նա վտանգի ենթարկեց իրեն և այնոռատեան, որ բարձր պաշտոնյա էր, սպանեց: Բայց Ծապուհը հավանեց նրա աներկյուղությունն ու տիրասիրությունը և պարզների արժանացրեց: Այս առյուծ զորավարներն ունեին իրենց արժանավոր կորյունները: Մանուէլ սպարապետը պատրաստվում է պատերազմի՝ Մերուժան Արծրունու դեմ: Մանուկ Արտավազը՝ Վաչեի որդին, նույնպես ուզում է պատերազմին մասնակցել. սպարապետը թույլ չի տալիս, նկատի ունենալով նրա փոքր հասակը. մտրակով թակում է նրա ամիլած գլուխը և պատվիրում կանանց հետ գնալ նշանակված ապահով տեղը: Զանապարհին Արտավազը գաղտնի փախչում է և խտուճվում պատերազմին: Երբ Մերուժանն սպանվում է, և պատերազմը վերջանում, կովորները ետ են գալիս իրենց սպանած թշնամիների գլուխներով: Գալիս է մանուկ Արտավազը. նա բոլորից շատ գլուխ է բերել և միայն սրանով է ազատվում մահից՝ իբրև սպարապետի հրամանին անհնազանդ: Նա գործով ցույց է տալիս, որ ընդունակ է կովելու, ուրեմն սխալ է եղել սպարապետի դրած արգելքը:

Այս օրինակները բավականաչափ ցույց են տալիս Փավստոսի գրվածքի ոգին ու էությունը: Այն ոչ թե պատմություն է այս բառի սովորական նշանակությամբ, այլ ժողովածու է ժողովրդական ավանդությունների, հավաքված տարբեր աղբյուրներից, երբեմն իրական ու ճիշտ պատմական և երբեմն առասպելական, և այս տարբեր տարրերն այնպես հյուսված են իրար հետ, որ դժվար է լինում որոշել՝ որտե՞ղ է վերջանում պատմականը, և սկսվում առասպելականը: Բայց այս առասպելական տարրերը թեպետ անվավերական են իբրև պատմական նյութ, սակայն դրա փոխարեն մեծ արժեք են ներկայացնում իբրև ժողովրդական բանահյուսություն և իբրև այսպիսին հարազատ արտահայտություններ են հայ ժողովրդի իղձերի, ձրգտումների, հավատալիքների, սովորությունների: Իրավունք ունեն ներկայիս բանասերները, որոնք Փավստոսի Մամիկոնյան հերոսների մեջ նկատում են Մասունցի Դավթին և Սասնա մյուս Տոերին: Ծիշտ է, Փավստոսի Մուշեղի

մեջ դեռ չկա Դավթի գերմարդկային ուժը, չկան Ռուր-Կեծակին, Քուռկիկ Զալալին, բայց ամենահաղթ հերոսն է, որ պատերազմների մեջ տասնյակ միլիոններով թշնամի է կոտորել. բայց չպետք է մոռանալ, որ Փավստոսի մեջ վեպը Մուշեղի մասին դեռ Նոր է ստեղծվել, հազիվ մի հարյուր տարվա զարգացում ունի, այնինչ Դավթի Սասունցու վեպը դրանից հետո դարձյալ մի քանի հարյուր տարի աճել է ու զարգացել գուսանների կամ վիպասացների մի շարք սերունդների ստեղծագործություններով: Այս պատճառով Փավստոսի գրվածքը պետք է հանել Խորենացի—Փարպեցի—Սեբեոս և այլն զուտ պատմական հիշատակարանների շարքից և զետեղել Ազատագրողի, Ջենոբ Գլակի, Հոհան Մամիկոնյանի պատմական գրույցների շարքում: Դրանք պատմագրության տարբեր ժանրեր են:

### ՆՈՐԵՆԱՅԻ ԵՎ ՓԱՎՍՏՈՍ

Երբ այս ուղիղ տեսակետից նայում ենք Փավստոսի Պատմության էությունը վրա, մեզ համար լիովին պարզվում է Մ. Խորենացու վերաբերմունքը դեպի այս պատմական հիշատակարանը, որ տեղիք է տվել բազմաթիվ այլընդայլու մեկնությունների: Նախ նկատենք, որ այս երկու հեղինակներն իրենց պատմագրելու հատկություններով կատարյալ հակոտնյաներ են, ծայրահեղորեն իրար հակառակ. Խորենացին ժամանակագրությունը համարում է պատմության անհրաժեշտ հատկություն—«Ոչ է պատմութիւն ստոյգ՝ առանց ժամանակագրութեան»: Այս սկզբունքն ունենալով՝ նա Պատմությունը գրելուց առաջ պատրաստել է ժամանակագրական աղյուսակ Արշակունյաց թագավորության ամբողջ շրջանի համար, որին անշեղ հետևել է Պատմության այս մասում (Բ և Գ գրքերում)՝ նշանակելով ամեն մի թագավորի և կաթողիկոսի գահակալության սկիզբը, վերջը և տևողությունը, և այս մասում ոչ մի սխալ կամ հակասություն չի երևում: Նրա ժամանակագրական սխալը ուրիշ տեղ է՝ հռոմեական և բյուզանդական կայսրների ու Սասանյան թագավորների ժամանակագրական սխալ աղյուսակներում, որոնք իր պատրաստածը չեն եղել, այլ առել է ուրիշ աղբյուրներից. և սրանից են ծագում նրա պատմական ու համաժամանակյա սխալները: Այնինչ Փավստոսը ժամանակագրություն չունի. նրա համար գոյություն չունի ժամանակագրություն. ոչ մի թագավորի կամ կաթողիկոսի տարիները նա չգիտե (բացառությամբ Ջ դպրության մի քանի գլխավոր եպիսկոպոսների տարիների, իսկ այս դպրությունը համարվում է անհարազատ). և եթե մարդ փորձում է նրա տվյալների հիման վրա մի ժամանակագրություն կազմել, ստացվում են սկզբնական անպատեհություններ:

Խորենացու մեջ շատ զարգացած է քննադատական ոգին. նա քննում է աղբյուրները և ընտրում է ինչ որ իրեն արժանահավատ է թվում, քննում է ժողովրդական աղբյուրները, նրանց այլաբանությունները «ճմարտում» և նրանցից հանում իրական պատմությունը, ինչպես ինքն է հասկանում. նա քննում է անցքերը և որոշում է հավաստին ու կասկածելին. քննում է գործող անձերը, նրանց գովաբանում կամ պախարակում. քննում է նույնիսկ



ինքն իրեն՝ պարծենալով, երբ մի հաջող գյուտ է անում, կամ կասկած հայտնելով իր հաղորդած այս կամ այն տեղեկության ստուգության մասին: Փավստոսը միանգամայն զուրկ է ըննադատական ոգուց. ոչ մի տեղ չի նկատվում հեղինակի (= հավաքողի) վերաբերմունքը դեպի իր հաղորդած տեղեկությունը. նա հավասար լրջությամբ ու մանրամասնությամբ գետնորում է իրար կողքի ճշմարիտ պատմականը և անհավաստալի սուտը, բարեաշտական աղոթքներն ու խրատները և ցոփ ու բամբասակ նկարագրությունները, հրաշքներն ու իրական դեպքերը, ոչ մի տարբերություն չդնելով նրանց միջև: Եւ ընթերցողի զարմանքն է շարժում ոչ այնքան իր պատմածի անհեթեթություններով, որքան պատմողի դյուրահավատությամբ ու միամտությամբ:

Խորենացին ուսցիոնալիստ է, գերբնական տարրին տեղ չի տալիս իր Պատմության մեջ. նա եթե իր աղբյուրների մեջ գտնում է որևէ հրաշք կամ գերբնական երևույթ, աշխատում է նրանցից դուրս բերել բնական իրողությունը. նա նույնիսկ հեթանոսական աստվածներին էլ մարդկայնացնում է. ըստ եվհեներյան փիլիսոփայության: Իսկ Փավստոսի մոտ հրաշքներն առատ են՝ ինչպես սովորական երևույթներ: Հեղինակը այնպիսի հավատով և լքուշությամբ է պատմում հրաշքները, ինչպես պառավ տատիկը պատմում է թոռնիկներին հեքիաթների հրաշալի դիպվածները:

Խորենացին իսկական մտածող հեղինակ է. նրա ամեն մի խոսքը չափված է, կշռված է, ո՛չ կվելորդ խոսք, ո՛չ չափազանցություն: Եւ հիշում է, ինչ որ ասել է մի անձի կամ դիպվածի մասին և ոչ մի անգամ չի ընկնում հակասության մեջ: Իսկ Փավստոսի մոտ բառերը հեղեղորեն հոսում են, նա հաշիվ չի տալիս իրեն իր գործածած ամեն մի բառի մասին. կրկնություններն ու չափազանցությունները սովորական երևույթ են նրա մոտ: Եվ հաճախ նա ընկնում է հակասությունների մեջ: Օրինակ՝ Մամիկոնյան երկու հարազատ եղբայրներից՝ Նահապետ Վարդանից և սպարապետ Վասակից, առաջինը պարսկասեր է, երկրորդը՝ հունասեր: Առաջինը հաջողեցնում է դաշն կապել Արշակի և Շապուհի միջև, երկրորդը կարողանում է Արշակին համոզել, որ այդ դաշինքը խզի և Պարսկաստանից փախչի: Հայաստանում էլ Վարդանը շարունակում է ջանք գործ դնել Արշակին Շապուհի հետ հաշտեցնելու և դաշինքը վերահաստատելու. այս պատճառով Վասակը գնում, նրան սպանում է: Բայց ահա այս նույն Վասակը ոչ միայն չի խանգարում Արշակին՝ օգնության գնալու Շապուհին նրա պատերազմի ժամանակ հույների հետ, այլ հենց ինքն էլ առաջնորդում է հայ զորքին և կոտորում հունաց ամբողջ բանակը, որոնց հետ հայերը այդ ժամանակ ոչ մի տարածալուծություն չունեին: Կամ նույն այս Վասակը, որ երկարամյա պատերազմների ժամանակ հարյուրապատիկ պակաս զորքերով կոտորում է Պարսից միլիոնավոր բանակները, ամբողջ հայկական բանակով գիշերը փախչում է Շապուհի մոտից՝ հույների բանակը բնաջինջ անելուց հետո, այնինչ հեշտությամբ կարող էր գիշերով հարձակվել ոչ մի բանից չկասկածող Պարսից բանակի վրա և բնաջինջ անել Շապուհի հետ միասին: Հեղինակի

մտքովն էլ չի անցել Վասակի այս հակասական գործողությունները համեմատել իրար հետ և այս հակասությունները հարթել: Եւ հավատարմությամբ գո՛ր է առել ավանդությունը:

Խորենացին ձգտում է գրել հավաստի Պատմություն, որի մեջ դեպքերը հաջորդում են միմյանց ժամանակագրական կարգով և ներքին պատճառաբանական կապ ունեն իրար հետ: Եւ դուրս է գցում անհավաստին, նա բաց է թողնում ավելի քան հարյուր տարվա ժամանակաշրջանի հայոց պատմությունը, հայտնելով, թե ոչինչ հավաստի բան չունի պատմելու այդ ժամանակաշրջանի մասին: Իսկ Փավստոսի երկում դեպքերը կուտակված են անխընթիվ և խառն, առանց պատճառաբանական կապի կամ ժամանակի հաջորդության. նրա մեջ կան շատ գլուխներ, որոնք ոչ մի կապ չունեն հայոց պատմության և ընդհանրապես պատմության հետ:

Խորենացին խիստ սրհամարում է պարսից առասպելները, կոչելով դրանք անպիտան, անճոռնի, անհարմար, անճաշակ անբանություն: Իսկ Փավստոսի Պատմությունը լիքն է պարսկական ճաշակի առասպելներով:

Այս ներքին բովանդակությանը վերաբերող տարբերությունների հետ նկատելի են և արտաքին՝ լեզվի ու ոճի տարբերությունները: Խորենացու լեզուն արվեստական է, բարձր, հաճախ գեղարվեստական, երբեմն պարզ ու հասարակ, բայց երբեք գոեհկական ու ժողովրդական: Փավստոսի լեզուն անկանոն է և անհավասար, պարզ, ընտանի լեզվի կողքին անշափ կուտակություններ, որ տարափի նման տեղում են և ընթերցողին շփարեցնում: Խորենացին շարունակ ընթերցողի աչքի առաջն է գրուցում է նրա հետ, իր կարծիքները հայտնում, գնահատում, ուրախանում կամ տխրում: Փավստոսի գրվածքում հեղինակը բնավ չի նկատվում. նա միանգամայն անանուն է. բացի գրքի խոստաբանությունից և Գ դպրության Ա գլխից, որտեղ անծանոթ խմբագիրն ու հեղինակը խոսում են առաջին դեմքով (մի տեղ եզակի, մյուս տեղ հոգնակի), ամբողջ գրքում չի պատահում «ես» կամ «մենք» բառը:

Այս տարբերությունները կարելի էր դարձյալ շարունակել, բայց այսքանը էլ բավական է՝ ցույց տալու համար, թե որքան մեծ է զանազանությունը երկու հեղինակների հայացքների միջև պատմական գրվածքի էության և նպատակի մասին: Այս տեսակետից երկու գրվածքների մեջ սար ու ձորեր կան. մեկը իսկական պատմություն է, մյուսը պատմական գրույցների և վեպերի ժողովածու է, թեպետև այնտեղ պատահում են ստույգ պատմական իրողություններ: Եվ ինչպես մենք ենք նկատում այժմ այս անհաշտելի տարբերությունները երկու հեղինակների միջև, ավելի ևս նկատում էր Խորենացու խորաթափանց աչքը Փավստոսի գրվածքի և իսկական պատմության միջև:

Սրանից արդեն հեշտ է նախագուշակել, թե ինչպես պետք է վերաբերվեր Խորենացին Փավստոսի գրվածքին՝ Բուզանդարան պատմություններից՝ իբրև պատմական աղբյուրի: Եւ եթե չի հիշում Փավստոսի անունը, նրանից չէ, որ կամեցել է բացքներ իր աղբյուրը, ինչպես ենթադրել են ոմանք: Եւ

հիշում է Ազաթանգեղոսի անունը և նրանցից պատմական նյութ է քաղում (թեպետ զգուշությամբ, բոլորովին բաց թողնելով ս. Գրիգորի չարչարանքները, խոր վիրապ գցվելը, Տրդատի խոզակերպ դառնալը և այլ այսպիսի առասպելական տարրեր)։ ապա ինչու՞ չպիտի հիշեր Լերսես Մեծի մերձավոր խորհրդակալն և ժամանակակից հեղինակին (ինչպես նա ներկայացված է գրքում), որ գրել է Ազաթանգեղոսի Պատմության շարունակությունը։ Եւ չի հիշել Փավստոսին բոլորովին այլ պատճառով՝ նրա գրվածքի ոգու և բովանդակության պատճառով, որ լուրջ քննադատության չի դիմանում, ինչպես ասել է Ե. Մ.-ն։ Վերը տեսանք ինչպիսի արհամարհանքով է նայում Ղ. Փարպեցին Փավստոսի առասպելախառն Պատմության վրա։ Որքան ավելի խիստ պետք է վերաբերվեր այս Պատմությանը Ս. Խորենացին իր հայտնի քննադատական ոգով։ Բուզանդարանի նման ժողովածուն իբրև պատմական աղբյուր հիշելը, Խորենացու կարծիքով, սովեր կզցեր իր Պատմության վրա։ Բայց նա նկատել է Բուզանդարանի խառն առասպելների մեջ նաև պատմական ստույգ տեղեկություններ, որոնցից ազատորեն օգտվել է՝ զգուշանալով աղբյուրը նշանակելուց վերոհիշյալ պատճառով։ Եւ ամեն բանում չի հետևում Փավստոսին, այլ այնքան միայն, որքան նա ճշմարիտ կամ հավանական է համարում նրա հաղորդած տեղեկությունները։ Իսկ ինչ որ նա համարում է անհավանական առասպել, նա հարկավ դնել է զգույն և այս դուրս գցած մասերը փոխարինում է ուրիշ տեղեկություններով, որքան ինքը հավանական է համարում կամ գիտե ուրիշ աղբյուրներից։ Այնպես որ նա թեպետ Փավստոսից օգտվել է, բայց իր Պատմության մեջ նրանցից անխախտ է, ինչպես եթե մեկը մի անցքի պատմությունը կարդացել է մի գրքում, բայց այդ անցքը ինքը պատմում է՝ ուղղելով և փոփոխելով կարողացածը ըստ իր հայացքի կամ տեղեկությունների։ Այսպես, Խորենացին Գնելի ըստ պատմության պատմության մեջ բոլորովին դնել է զգույն սիրահարության հանգամանքը և ուրիշ պատճառ է բերում նրա սպանության։ Նույնպես նա բոլորովին բաց է թողնում Շապուրի երեսնամյա պատերազմները Արշակի դեմ (Անդովկ նահապետի մեքենայության շնորհիվ), Հայաստանի հողով ու ջրով հմայությունը և ուրիշ պատճառ է բերում Արշակի կորստյան, և այսպես շատ օրինակներ։ Պատմական քննադատը չի կարող իրավունք չտալ Խորենացուն, որ նա այս վեպերը իբրև պատմական անցքեր չի ընդունել և նրանց տեղ չի տվել իր Պատմության մեջ։ Այլ հարց է, թե որքան ճիշտ են այն պատճառները, որոնցով Խորենացին փոխարինել է Փավստոսի հաղորդած տվյալները։ Կան դեպքեր, երբ Փավստոսի պատմածը ճշմարիտ է, բայց Խորենացին փոխարինել է սխալ պատմությամբ, ինչպես, օրինակ, Պապ թագավորի սպանությունը ճաշի ժամանակ Հունաց զորավարների թելադրությամբ։ Սրա պատճառն այն է, որ Խորենացին չի կարողացել հավատալ, թե Հունաց զորավարները կհամարձակվեին Հայաստանում Հայոց թագավորին ճաշի հրավիրել ու ճաշի ժամանակ դավաճանորեն սպանել, և որովհետև ուրիշ աղբյուր չի ունեցել Փավստոսի հաղորդածը ստուգելու, դուրս է գցել այն՝ իբրև դարձյալ մի ժողովրդական առասպել, և Պապին սպանել

է տալիս Բուզանդիայում կայսեր հրամանով։ Նկատելի է նույնպես, որ Փավստոսի երկում նկարագրված Մամիկոնյան զորավարների սխալի գործունեությունը Խորենացու Պատմության մեջ կամ ուրիշ տղամի գորավարի է վերագրված, կամ լուրջան մատնված։ Այս երևույթը բացատրում են Խորենացու՝ Մամիկոնյանների նկատմամբ տածած հակակրոնությամբ. ընդունում ենք, բայց միևնույն ժամանակ չպետք է անտես անենք, որ Փավստոսն էլ իր հերթին ծայրահեղորեն համակրում է Մամիկոնյաններին և չատուսն էլ իր հերթին ծայրահեղորեն համակրում է Մամիկոնյաններին, այնպես որ պատմական ճշմարտությունը այլալված է երկու հեղինակների կողմից ևս, մեկի կողմից թերագնահատվելով Մամիկոնյանների դեմը, մյուս կողմից գերագնահատվելով։

Ուրեմն, Խորենացին Բուզանդարանի վրա նայել է քննադատաբար, առել է նրանից այն, ինչ որ գտել է ճշմարիտ կամ հավանական, դեմ է գցել այն, ինչ որ համարել է առասպելական կամ սխալ։ Այս է բուն պատճառը Խորենացու և Փավստոս Բուզանդի միջև եղած տարբերությունների. մյուս պատճառները, որ բերել են ուրիշ բանասերներ, ոչ միայն անհիմն են, այլև սխալ եզրակացությունների են հասցնում երկու հեղինակի նկատմամբ էլ։ Այստեղ ցույց տրված այդ տեսակետից նայելով երկու հեղինակների միջև եղած տարբերությունների վրա՝ մենք մի խոշոր օգուտ էլ կունենանք, այսինքն՝ կտեսնենք, թե ժամանակով Փավստոսի գրության ժամանակին մոտ մի նշանավոր հեղինակ ինչպե՞ս է ընդունել նրա պատմածների այս կամ այն մասերը, ճշմարիտ է համարել, թե սուտ։ Իհարկե, Խորենացու քննադատությունը կարող է երբեմն նաև սխալ լինել (ինչպես հաճախ սխալ են նրա բերած մեկնությունները ժողովրդական վեպի), բայց, համեմայն դեպս, նա հետաքրքրական է իբրև հիմնգետորդ դարի վերջերի ամենազարգացած հայ հեղինակի կարծիք պատմական այս կամ այն անցքի մասին։ Ուրեմն, Խորենացու Պատմության և Բուզանդարան պատմությունների վրա, որոնցից մեկնայել իբրև հակադիր՝ իրար հերքող հիշատակարանների վրա, որոնցից մեկի հաղթությունը նշանակում է մյուսի պարտությունը, ինչպես եղել է մինչև այժմ դարերի ընթացքում, երբ Խորենացու հեղինակությունը բարձր էր, որևէ կասկածից դուրս, իսկ Փավստոսը արհամարված էր։ Այս երկու վերաբերմունքն էլ սխալ են. Խորենացին և Փավստոսը ոչ թե հակամարտ՝ իրար հերքող հեղինակներ են, այլ պատմագրության երկու տարբեր ժանրի ներկայացուցիչներ. մեկը զուտ պատմական, որ Փավստոսից առել է զուտ պատմականը, որքան ինքն է հասկացել, իսկ Փավստոսը պատմական ավանդությունների, զրույցների և վեպերի հավաքող, որոնց մեջ բուն պատմական տարրերը ձուլացվել են, զարդարվել են ժողովրդական առասպելներով։ Նրանք երկուսն էլ անփոխարինելի, անզից գանձերն են մեր հին գրականության. նրանք ոչ միայն մեկը մյուսին չպետք է տապալեն, այլև պետք է իրար լրացնեն, փոխադարձաբար պետք է ուղղեն մեկի կամ մյուսի մեջ այս կամ այն պատճառով սպրդած սխալները և նպաստեն բուն պատմական իրողությունը վերականգնելուն։

## ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փավստոսի Պատմությունը մինչև այժմ տարագրված է հինգ անգամ:

Ա տպագրությունը եղել է Հայոց ՌՃԼԹ (= 1730 թվականին, հավանորեն Կ. Պոլսում և կրում է վերնագիր՝ «Բիզանդոսթան պատմությունը շարդրեալ Բիզանդայ Մեծի պատմագրի» և այլն:

Բ տպագրությունը եղել է Կենետիկում 1832 թվականին և կրում է վերնագիր՝ «Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս»: Հրատարակիչները հայտնում են, թե այս տպագրությունը կատարել են հինգ գրչագիր օրինակների բաղադրությամբ, բայց խոստովանում են, թե այդ օրինակները բավական չեն եղել գրվածքի անսխալ տպագրության համար, որովհետև բնագրի ակնհայտ սխալներն էլ այդ հինգ օրինակը մի տեսակ ունեին:

Գ տպագրությունը կատարել է պրոֆեսոր Բ. Պատկանյանը Պետերբուրգում 1883 թվականին, վենետիկյան Բ տպագրությունից, որը բաղադրված է մի նոր գրչագիր օրինակի հետ, որ քիչ է եղել զանազանվելիս վենետիկյան ձեռագրերից:

Դ տպ. կատարվել է Կենետիկում 1889 թվականին (թվում է վերադրուտպություն Բ տպագրության):

Ե տպագրությունը կատարել է Գ. Գալստյանը Թիֆլիսում 1913 թվականին: Սա տառացի արտատպությունն է Բ. Պատկանյանի տպագրության:

Զ տպագրությունը կատարվել է Կենետիկում (չենք տեսել): Մի նոր տպագրություն պատրաստում է Կ. Մելիք-Օհանջանյանը պետական Մատենադարանի Փավստոսի բոլոր ձեռագրերի մանրամասն բաղադրությամբ, որը և կլինի Փավստոսի առաջին ըննական հրատարակությունը:

Փավստոսի Պատմության երկու թարգմանություն կա օտար լեզուներով: Առաջինն է ֆրանսերեն թարգմանությունը Ս. Էմինի ձեռքով, — որ մտել է Կ. Լանգուայի «Հայ պատմագիրներ» ժողովածուի (Collection) առաջին հատորի մեջ, Փարիզ, 1867, և կրում է վերնագիր՝ «Faustus de Byzance. Bibliothéque historique en quatre livres, traduite pour la première fois de l'arménien par Jean-Batiste Eimine»:

Երկրորդն է Լատերի գերմաներեն թարգմանությունը, որ լույս տեսավ Բյուլոնում 1879-ից՝ հետևյալ վերնագրով:

«Des Faustus von Byzanz Geschichte Armeniens. Aus dem Armenischen übersetzt und mit einer Abhandlung über die Geographie Armeniens eingeleitet von d-r M. Lauer»:

Երրորդն է իմ այս առաջին աշխարհաբար թարգմանությունը<sup>1</sup>:

Երեք թարգմանություններն էլ ունեն ծանոթություններ:

<sup>1</sup> Հաստատ տեղեկություններ կան, որ Խորեն Ստեփանիեն, Խորենացու թարգմանիչը, մտազեր է եղել Փավստոսը թարգմանել և մի մասն էլ թարգմանել է: Այս գործը անտիպ է մնացել:

Փավստոսի աղավաղված բնագրի ուղղագրություններ առաջարկված են զանազան անձերից: Ինձ հայտնի են հետևյալները:

Ե. Մ. իր վերոհիշյալ «Փավստոս Բյուզանդ» ուսումնասիրության մեջ առաջարկել է 27 ուղղում:

Գ. Մ. («Բազմավեպ», 1917) առաջարկել է 21 ուղղում:

Նորայր Բյուզանդացին իր «Կորյուն վարդապետ» հետազոտության մեջ առաջարկել է բազմաթիվ ուղղումներ՝ մեծ մասը քերականական սխալների ուղղումներ: Նորայրը ոչ թե ամբողջ Փավստոսն է ընճել այս նպատակով, այլ նկատի է ունեցել Փավստոսի երկի այն հատվածները միայն, որ նա համեմատել է ուրիշ հեղինակների համապատասխան հատվածների հետ և միայն այս հատվածներում նկատած աղավաղումներն է ուղղել: Եթե նա ամբողջ Փավստոսը ընճեր, նրա ուղղումների թիվը անշուշտ շատ ավելի կլիներ:

Լր. Աճառյանն ինձ հաղորդեց, թե ինքը Փարիզում տպագրել է Փավստոսի Պատմության մոտ 100 ուղղում: Այս հոդվածը ես չեմ տեսել:

Վերջապես, Երեկա թարգմանության ժամանակ իմ կողմից ուղղել են 39 աղավաղություն և ըստ իմ ուղղածի կատարել են թարգմանությունը: Բացի դրանից, վերցրել են վերը հիշված ուղղումներից 19 հատ, ամեն անգամ հիշատակելով առաջարկող հեղինակների անունները<sup>\*</sup>:

## ՆԵՐԿԱ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՉԱՄԱՆՔՆԵՐԸ

Մի քանի խոսք էլ Երեկա թարգմանության մասին:

Երբ Պետերբուրգ ինձ առաջարկեց Փավստոսը թարգմանել, ես գիտեի, որ Փավստոսի գրաբար բնագիրը շատ աղավաղված է, ուստի ցանկություն ունեցա ձեռագրերի հետ բաղադրված և ուղղված բնագրից թարգմանել: Ինձ հայտնի էր նաև, որ Փավստոսի բնագրի բաղադրությունը մի քանի տարի առաջ հանձնված է եղել երկու անձի, բայց բաղադրությունը կիսատ է մընացել: Դիմեցի Պետական ձեռագրադարանի աշխատակիցներից մեկին և խնդրեցի հանձն առնել այս բաղադրությունը կատարել, բայց նա հրաժարվեց, պատճառ բերելով, որ զբաղված է ուրիշ գործերով: Երևաց նույնպես, որ Փավստոսի բաղադրության և նոր հրատարակության վերաբերմամբ, որ Փավստոսի բաղադրության և նոր հիմնարկների միջև, և գործը կանգ ինձ-որ տարաշայնություն է ծագել երկու հիմնարկների միջև, և գործը կանգ է առել: Ուստի քանի որ ձեռ. Մատենադարանը ձեռագրերը չէր կարող ինձ տալ հետս Թբիլիսի բերելու, ես ստիպված եղա բավականաճախ գոյություն ունեցող աղավաղված տպագրությամբ, հույս ունենալով, որ աղճատումները

\* Այս աշխատությունը հրատարակվելուց հետո լույս է տեսել Վարդա Առաքելյանի «Փավստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը հոդվածը (ՀՄՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատոր III, 1948), որտեղ նույնպես առաջարկված են մի շարք ուղղումներ: — Խմբ.:

բավական ուղղում իմ ձեռքի տակ եղած ուղղումներով, որոնք քիչ վերը հիշեցի: Մ այն այս տարվա ապրիլին, երբ երևան էի գնացել, Հր. Աճառյանից լսեցի, որ նա պատրաստում է Փավստոսի նոր ընձական հրատարակությունը, ձեռագրատան Փավստոսի բոլոր ձեռագրերի մանրամասն բաղդատությամբ, բայց այդ ժամանակ ես արդեն թարգմանել էի գիրքը և գրել ծանոթությունները: Մնում էր առաջաբանը: Թարգմանության ընթացքում ես բազմաթիվ աղճատումներ վերականգնեցի, ինչպես ինձ հավանական թվացին, սրանք բոլորը նշանակված են ծանոթությունների մեջ: Այս ուղղումներից 19-ը վերցրել եմ վերը հիշված աշխատանքներից (Ե. Մ., Գ. Մ., մանավանդ Նորայր Բյուզանդացի): Մնացած 39-ը պատկանում են ինձ (գոնե ես ուրիշ տեղ չեմ պատահել նրանց): Առանց հիշատակության եմ թողել թե՛ իմ և թե՛ այլ բանասերների այն ուղղումները, որոնք լեզվի բերականական ձևերին էին վերաբերում և իմաստի փոփոխություն չէին մտցնում: Այսպիսի ուղղումների հիշատակությունը միտք ունի բնագրի հրատարակության մեջ և ոչ նրա թարգմանության:

Բնագրի վերաբերմամբ էլ ես աննպաստ պայմանի մեջ էի. ձեռքիս ունեի Պատկանյանի հրատարակությունը, բայց չկարողացա ձեռք բերել Վենետիկի 1889 թվականի հրատարակությունը, որ գուցե մի քանի տեղ լավագույն ընթերցվածքներ պարունակեր: Ես ժամանակին խնդրել էի Պետրոստից՝ այս հրատարակությունը մի քանի ամսով ինձ տրամադրել, բայց բավարարություն չգտա՛:

Նույնպես ինձ չհաջողվեց ձեռք բերել ո՛չ էմինի և ոչ Լաուերի թարգմանությունները, որոնք կարող էին ինձ օգտակար լինել՝ աղճատված կամ մուգ հատվածները թարգմանելու ժամանակ, կամ գուցե պարունակում էին բնագրի որոշ ուղղումներ, որոնք իմ աչքից խուսափել են:

Փավստոսի լեզուն ընդհանրապես բնական է ու պարզ, նախադասությունները կանոնավոր են կազմված և ոչ ընդարձակ, այնպես որ թարգմանությունը առանձին ղծվարություն չի հարուցում: Բայց, ինչպես վերը հիշեցի, այս լեզուն պարունակում է նաև բազմաթիվ անհարթություններ և բառերի կուտակումներ: Երբեմն մի շարք գոյական անուններ հաջորդում են միմյանց մինևույն հոլովով և առանց բայի: Հարկ է լինում այդ գոյականներից մեկը վերածել բայի, մյուս գոյականները այդ նորակերտ բայի հետ կապել իբրև լրացուցիչներ, նախադասություն ստեղծել: Սրանով բնականաբար հեռանում ենք սկզբնագրի ոճից և ստեղծում ենք մեզանից նախադասություն, որ կարող է և ճիշտ չլինել, բայց ուրիշ կերպ վարվել չէր լինի, այլապես կստացվեր նույնհոլով բառերի մի խումբ՝ առանց իմաստի. էլ չեմ ասում, որ բնագրին համապատասխան այդքան բառ մեր աշխարհա-

բարի բառամթերքում չկա: Այսպիսի դեպքեր համեմատաբար քիչ են պատահում, և աշխատել եմ այս կամ այն միջոցով հաղթել այսպիսի դժվարությունները: Ընդհանրապես աշխատել եմ թարգմանության մեջ պահպանել բնագրի բառերը, ոճերը, արտահայտության ձևերը, որքան թույլ են տալիս մեր այժմյան գրական լեզվի ոգին ու բառամթերքը, նպատակ ունենալով ընթերցողին ճաշակ տալ բնագրի լեզվի և արտահայտության խուսափել եմ նորակերտ բառերից և այժմ գործածական շատ նոր ոճերից, որոնք օտարոտի կհնչեին Փավստոսի լեզվի մեջ: Տեղ-տեղ գործ եմ անել գավառական բառեր ու դարձվածքներ, հարմարվելով բնագրի լեզվին: Բայց, իհարկե, անկարելի էր այժմյան գրական լեզվով թարգմանության մեջ լրիվ պահպանել հինգերորդ դարի կենդանի հայերեն լեզվի բույրն ու քաղցրությունը:

Ծանոթությունների մեջ ես սահմանափակվել եմ լոկ բնագրի բացատրությամբ՝ անծանոթ կամ քիչ գործածական բառերի բացատրությամբ, հաշիվ տալով կատարված ուղղումների մասին, մեկնելով հեղինակի այս կամ այն ակնարկությունները: Մի քանի ծանոթություններ կան, որոնց մեջ պատմված են ս. Գրքում հիշատակված անցքեր. սրանք, թերևս, ավելորդ լինեին սրանից շատ տարի առաջ, բայց ես հարկ համարեցի բերել՝ նկատի ունենալով, որ կրոնի ուսուցումը վերացված է դարոցներից, որով և մեր ընթերցող երիտասարդ սերունդն անծանոթ է այդ անցքերին և առանց այսպիսի ծանոթությունների չէր հասկանա հեղինակի ակնարկությունը: Ուրիշ բովանդակության ծանոթություններ՝ պատմական, աշխարհագրական, համեմատություն ուրիշ հեղինակների հետ, բնագրի ընձադասություն և այլն, բայց են թողնված, որովհետև դրանք բանասիրական և պատմական ընձադասության են վերաբերում, իսկ թարգմանության մեջ ծանոթությունների նշանակությունը շատ ավելի համեստ է, այն է՝ օգնել ընթերցողին հեղինակի գրվածքն ուղիղ հասկանալու: Զանց եմ արել նույնպես ցույց տալու ծանոթությունների մեջ, թե ս. Գրքի ո՛ր տեղերից են առնված բնագրի ջաղվածքները, որոնց թիվը շատ մեծ է: Այս ցուցումները պետք են գրքի գրաբար բնագրի մեջ՝ բնագրաբանական նպատակներով, բայց աշխարհաբար թարգմանության մեջ նրանք նշանակություն չունեն:

ՍՍ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

7 հունիսի, 1941 թ.

Քրիիսի

1 Բայց 1945 հոկտեմբերին կարողացա ձեռք բերել վենետիկյան 1889-ի տպագրությունը և մանրամասն բաղդատելով Փատկանյանի հրատարակության հետ՝ մի քանի տասնյակ աննշան փոփոխություններ կամ լրացումներ մտցրի իմ թարգմանության մեջ:

**ՆԱԽԱԳԻՏՆԵԼԻՔ**

Պատմութիւնների այս Երրորդ դպրութիւնը պարունակում է պատմական գրվածքների գլուխներ, և նրան կից կան ուրիշ երեք դպրութիւններ, այսինքն՝ սրանք չորս մատյան են և չորսն էլ միևնույն անցքերի հիշատակարաններ են, որոնք հիշեցնում են Հայաստան աշխարհի Քորգոմի որդիները պատմութիւնները, այսինքն՝ անցած եղելութիւնների շարքը — գործերն ու վարքերը աստու մարդկանց՝ սուրբ քահանայապետների և աշխարհիս տեր Արշակունի թագավորների ու անվանի մարդկանց՝ զորավարների և քաջ նախարարների՝ մինչև նրանց մահը, ալև (եբկրի) խաղաղութիւնն ու պատերազմները, շինութիւնն ու ավերմունքները, արդարութիւնն ու անօրինութիւնը, աստվածապաշտութիւնն ու անբարեպաշտութիւնը: Պատմութիւնն սկսելով Տրդատի որդի Խոսրովի թագավորութիւնից մինչև Հայոց թագավորների թուլանալը վերջին ժամանակներում և առաջին քահանայապետ Գրիգորի որդի Վրթանեսի քահանայապետութիւնից մինչև այն վերջինները, որոնք Հայոց գլխավոր եպիսկոպոսներն էին՝ մի առ մի կարգով, թվով ու համարով, առանձին-առանձին գլխակարգելով նկարագրեցի: Եվ չորս դպրութիւնների համար առանձին ցանկեր կազմեցի յուրաքանչյուրի սկզբում՝ մինչև վերջը, որպեսզի օգտվել կարողանան նրանք, որոնք սրտանց փափագում են վերահասու լինել իմ ասելիքներին:

Յ Ա Լ Կ Ե Ր Ր Ո Ր Կ ( Գ Պ Ր Ո Ւ Ք Յ Ա Լ )

Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Յ Ա Լ Մ Ա Տ Յ Ա Լ Ն Ե Ր Ո Ւ Ք Ս Ա Լ Մ Ե Կ Գ Ո Ւ Կ Ե Ն Ե Ր Ը

Ա. Այն մասին, ինչ որ Թորգոմի որդիների Հայաստան աշխարհում տեղի ունեցավ Թադեոս առաքյալի զարդուցումից հետո:

Բ. Առաջին մեծ քահանայապետ Գրիգորի (և Արիստակեսի)<sup>2</sup> ու նրանց շիրիմների մասին:

Գ. Տրդատի որդի Խոսրովի թագավորության և Գրիգորի որդի Մեծ Վրթանեսի քահանայապետի մասին:

Դ. Երկու տոհմերի՝ Մանավազյանների և Որդունիների մասին, որոնք Հայաստան աշխարհում իրենց սերունդներով ընաչինջ եղան:

Ե. Վրթանես քահանայապետի որդիների մասին, որոնցից ավագը կոչվում էր Գրիգորիս, իսկ կրտսերը՝ Հուսիկ:

Զ. Վրթանեսի որդի Գրիգորիսի և նրա մահվան ու այն տեղի մասին, որտեղ թաղվեց:

Է. Մասքութների թագավորի ավագակային հարձակումը Հայոց թագավորի իշխանության երկրի վրա, տեղի ունեցած պատերազմը, և թե ինչպե՛ս նա զորքով միասին կոտորվեց:

Ը. Անտառներ տնկելու, պարսիկների հետ մղած պատերազմների և Ռզնունցաց նախարարական տոհմի ընաչնջման մասին:

Թ. Բակուր բղեշխի մասին, թե ինչպե՛ս ապստամբվեց Հայոց թագավորի դեմ և սպանվեց Հայոց զորքերից, որի փոխարեն բղեշխ գարձավ Վաղինակ Սյունին:

Ժ. Մծբինի Հակոբ եպիսկոպոսի մասին:

ԺԱ. Պարսից և Հայոց միջև տեղի ունեցած մեծ պատերազմի, Վաչե մեծ զորավարի նահատակման, Խոսրով թագավորի և Վրթանես հայրապետի մահվան մասին:

ԺԲ. Տիրանի թագավորից Հայոց աշխարհի վրա իր հոր մահից հետո, եույնպես Հուսիկի՝ հայրապետական աթոռը նստելը իր Վրթանես հորից հետո, և թե ինչպե՛ս նա սպանվեց Տիրան թագավորից՝ նրան հանդիմանելու պատճառով:

ԺԳ. Թե ինչպե՛ս Հուսիկի մահից հետո անառաչնորդ մնաց Հայոց աշխարհը, և Հուսիկի որդիները արժանի շեղան իրենց հոր ախոբին:

ԺԴ. Մեծ Դանիելի՝ աստծու մարդու վարքի մասին, թե ինչպե՛ս նա հանդիմանեց Տիրան թագավորին և թե ինչպե՛ս նրանից պատժվելով սպանվեց:

ԺԵ. Հուսիկի որդիների մասին, թե ինչպե՛ս ոտնատակ անելով արհամարհեցին աստծու մեծ քահանայության պատիվը:

ԺԶ. Փառնի մասին, որ հայրապետական աթոռը նստեց:

ԺԷ. Շահակի մասին, որ Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից էր և հայրապետական աթոռը ժառանգեց, և թե ինչպե՛ս այդ ժամանակ Հայոց աշխարհը թողել էր տիրոջը և նրա պատվիրանները:

ԺԸ. Հայր Մարդպետի մասին, որ թագավորին վատ խրատ տալով կոտորել էր տալիս Հայոց նախարարական տոհմերը:

ԺԹ. Հուսիկի որդիների՝ Պապի և Աթանազիսների մասին, թե ինչպե՛ս իրենց անօրինությանը սպանվեցին սրբավայրում:

Ի. Թե ինչպե՛ս Տիրան թագավորը իր սենեկապետի՝ Սյունի Փիսակի կողմից մատնվեց ու կորավ. ինչպե՛ս խաղաղության ժամանակ հանկարծ գերի բռնվեց պարսիկ Վարազ իշխանից, և ինչպե՛ս ամբողջ Հայոց երկիրն էլ նրա հետ միասին կործանվեց ու կորավ:

ԻԱ. Թե ինչպե՛ս Հայոց բոլոր նախարարները հավաքվեցին և միասնություն գնացին, Հունաց թագավորին Հայաստան բերին իրենց օգնական, և ինչպե՛ս Պարսից թագավորը մեծ զորքով եկավ. ինչպե՛ս Պարսից զորքը կոտորվեց Հունաց զորքերից ու Հայոց զորքերի մնացորդներից, և Պարսից ներսեհ թագավորը մի ձիով ճողաղբեց Հայոց աշխարհից ու փախավ ընկավ Պարսից աշխարհը:

# ԲՈՒՋՈՆԻՐՈՆ ԳԱՏՄՈՒԹՅԱՒՆՆԵՐ

## ԵՐՐՈՐԴ ԿՊՐՈՒԹՅՈՒՆ

Ս կ ի գ ր ²

### Գ յ ու խ Ա

ԱՅ ԱՄՍԻՆ, ԻՆՉ ՈՐ ԲԱԿՆՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԶԱՐՁՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՏԱՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ: ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՅՅԱՆՆԵՐԻ ԿՈՒՆԵՐ²:

Թագնոս առաքյալի քարոզությունից և նրա մարտիրոսական վախճանից մինչև Գրիգորի վարդապետության վերջըն ու նրա վախճանը, և առաքելասպան Սանատրուկ թագավորից մինչև Տրդատ թագավորի ազամա հնազանդվելը (քրիստոնեական) կրոնին ու նրա վախճանը,— անցյալ հիանցքերի ու առաքինի անձերի վարքի մասին, ինչպես և նրանց հակաազդողների ու դիմադրողների մասին՝ բոլոր ուրիշների կողմից արդեն գրված են: Բայց մենք էլ մեր պատմության ընթացքում փոքրիշատե նշանակեցինք, առանց հիշատակության չթողեցինք՝ պատշաճ կարգը պահպանելու համար, որովհետև տեղ կա, որ մեր Պատմությունը առաջինն է, և տեղ կա, որ վերջինը. իսկ ինչ որ միջին է, այն ուրիշների ձեռքով արդեն գրվեց: Բայց որպեսզի մեր պատմության մեջ ընդհատում չնկատվի, հիշատակեցինք՝ ինչպես մի աղյուս գրված շենքի պատի մեջ՝ բովանդակությունը ամբողջացնելու համար: Այսպես անելուց հետո ինչ որ այնուհետև պատահել է, այստեղ հաջորդաբար պատմվում է:

² Բնագրում գլխակարգության մեջ նշված որոշ վերնագրեր լիովին չեն համընկնում բուն շարագրանքի վերնագրերին: Տրվում են ըստ բնագրի.— Խմբ.:

### Գ յ ու խ Բ

ՄԵՍ ՔԱՀԱՆԱՑԱԳԵՏ ԳՐԻԳՈՐԻ (ԵՎ ԱՐԻՍԱԿԵՍԻ) ՈՐ ՆՐԱՆՑ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Արդ՝ Խոսրովի որդի Տրդատի թագավորության ժամանակ (Հայոց աշխարհը) լուսավորվեց հաճոյական սիրով և աստվածապաշտության հավատով, որին ծանոթացավ մեծ քահանայի՝ Գրիգորի միջոցով, որ Անակի որդին էր: Նրա կրթուսեր որդին՝ Արիստակեսը, իր հորը գործակից և եպիսկոպոսակից էր նրա վարդապետության ամբողջ ընթացքում, իր կյանքի բոլոր օրերում մինչև իր քրիստոսակոչ վախճանի օրը: Սրանց համար հանգստարաններ և արժանավոր շիրիմներ պատրաստվեցին—Մեծ Գրիգորի համար Դարանաղյաց գավառում, Քորդան կոչված գյուղում, իսկ նրա որդի սուրբ Արիստակեսին, իր խոստովանական մահից հետո, Սոփագ գավառից տարան Եկեղյաց գավառը ու թաղեցին Քիլ ավանում, իր հայր Գրիգորի կալվածքում:

### Գ յ ու խ Գ

ԱՅ ԱՄՍԻՆ, ԻՆՉ ՎԵՐԱՔԵՐՈՒՄ Է ՏՐԴԱՏԻ ՈՐԿԻ ԽՈՍՐՈՎԻ ԲԱԿՎՈՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԿԻ ՄԵՍ ՎՐՔԱՆԵՍԻ ՔԱՀԱՆԱՑԱԳԵՏՈՒԹՅԱՆԸ:

Սրանից հետո թագավորեց Խոսրով Կոտակը՝ (Մեծ) Խոսրովի թոռը, քաջ և հզոր Տրդատ թագավորի որդին: Սրա օրոք հայրական աթոռը նստեց և իր հոր ու եղբոր փոխարեն քահանայապետեց Վրթանեսը՝ Գրիգորի ավագ որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղությունը և շենությունը, մարդաշատությունը և առողջությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը, աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարքը: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր ու առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը:

Այն ժամանակները (մի անգամ) Վրթանես եպիսկոպոս-

սպասար գնացել էր Հայոց մեծ և առաջին մայր եկեղեցին, որ գտնվում էր Տարոն գավառում, որտեղ դեռ վաղ ժամանակ, մեծ քահանայապետ Գրիգորի օրերում կատարված հրաշքներով կործանվել էին մեհյանների բազմությունները: Այնտեղ գնալով՝ նա իր մշտական սովորություններ կատարում էր փրկչի խաչելության փրկական գոհացողական պատարագը, (Քրիստոսի) շարժարանքների հաղորդության հիշատակը, (այսինքն) աստվածորդի տեր Հիսուս Քրիստոսի կենդանարար և ազատիչ մարմինն ու արյունը: Որովհետև հենց այսպես սովոր էին Հայոց եպիսկոպոսապետները՝ թագավորի, մեծամեծների, նախարարների ու ժողովրդի խուռն բազմության հետ միասին պատվել այն տեղերը, որոնք առաջ կուռքերի պատկերների տեղեր էին և հետո աստծու անունով մաքրվեցին ու դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ բոլորի համար: Մանավանդ սովորություն ունեին հավաքվել այն գլխավոր եկեղեցում և կատարել այնտեղ եղած սրբերի հիշատակը տարեցտարի սահմի՞ր ամսի յոթին, Հովհաննես մեծ մարգարեի մատուռում: Նույնպես և տիրոջ աշակերտների առաքելական (մատուռներում) և նահատակների վկայարաններում ամեն տարի հավաքվում էին, նրանց վարքի, կյանքի և քաջ գործերի հիշատակի տոնի օրը խմբովին ցնծում էին: Այնպես պատահեց, որ այդ ժամանակ Վրթանես մեծ քահանայապետը սակավաթիվ մարդկանցով շրջում էր առանձին՝ օրհնության պատարագը մատուցելու: Արդ՝ այն մարդիկ, որոնք մինչև այդ ժամանակ գաղտնի պահում էին հեթանոսական կուսակազմի սովորությունները, մոտ երկու հազար հոգի, միասին հավաքվելով՝ խորհուրդ արին սպանել աստծու քահանայապետ Վրթանեսին: Այս բանն անելու նրանք համարձակվեցին մասամբ նաև թագավորի կնոջից, որովհետև սուրբը նրան հանդիմանում էր գաղտնի շնության՝ պոռնկական վարքի պատճառով: Նրանք հասան և շրջապատեցին Աշտիշատի եկեղեցու մեծ պարիսպը: Մինչ նա ներսում պատարագն էր մատուցում, բազմաթիվ զորքը դրսից կամեցավ շրջափակել, պաշարել: (Բայց) գնդի մեջ եղած յուրաքանչյուր մարդու բազուկները ետ շրջվեցին և թիկունքների վրա հրաշքով կապվեցին, առանց որևէ բանի: Այսպես պաշար-

ված, կաշկանդված, կապկպված, կծկված՝ բոլորն առհասարակ գետին ընկան անխոս ու անշարժ: Սրանք աշխարհավեր, աշխարհակեր, շարագործ քուրմերի սերունդներն էին, նրանց տոհմից: Այսպես այդ ամբողջ պաշարված, դիզված (մնում էր) եկեղեցու գավթում. ինքը՝ Վրթանեսը, դուրս գալով ու մոտենալով նրանց հարցրեց. «Ո՞վ եք դուք, որտեղի՞ց եք գալիս կամ ո՞ւմ եք ուզում, կամ ինչո՞ւ եք եկել»: Նրանք սկսեցին ճշմարիտը խոսել ու խոստովանեցին, թե «Եկել էինք այս տեղերն ավերելու և քեզ սպանելու՝ Հայոց մեծ տիկնաք հրամանից համարձակություն գտնելով. բայց տեր աստված յուր գորությունը հայտնի դարձրեց և մեզ ցույց տվեց, թե միայն ինքն է աստված, և այժմ մենք ճանաչեցինք ու հավատացինք, թե միայն նա է աստված: Ահա մենք այսպես կծկված մնացել ենք, այնպես որ նույնիսկ տեղներիցս շարժվել չենք կարող»: Իսկ երանելի Վրթանեսը վարդապետության խոսքը մեջ բերելով՝ նրանց հաստատում էր տեր Հիսուս Քրիստոսի հավատի մեջ և շատ բան էր ասում նրանց: Հետո նա աղոթք անելով խնդրում էր աստծուց, նրանց բժշկում և արձակում էր աներևույթ կապանքներից ու կծկման անտանելի տանջանքից: Երբ նրանք սրանից փրկվեցին, բոլորն ընկան նրա առաջ և խնդրեցին ապաշխարության դեղը. նա էլ նրանց տվեց ապաշխարության համար որոշ ժամանակ: Եվ երբ նրանք սովորեցին միասնական սուրբ երրորդության հավատը, ապա նրանց մկրտեց՝ մոտ երկու հազար մարդ, շահաված նրանց կանանց ու երեխաներին: Այսպես նրանց հավատի բերեց և արձակեց սրբված ու հավատացած:

## Գ Ր Ո Ւ խ Դ

ԵՐԿՈՒ ՏՈՀՄԵՐԻ՝ ՄԱՆԱՎԱԶՏԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԴՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀՈՄ ԻՐՆԵՏ ՍԵՐՈՒՆԳՆԵՐՈՎ  
ԲՆԱԶԻՆԵ ԵՂԱՆ:

Այն ժամանակները մեծ խռովություն ծագեց Հայոց աշխարհում, որովհետև երկու մեծ նախարարներ ու իշխաններ, գավառների ու աշխարհների տերեր, իրար հետ թշնամացան, մեծ ռիսակալությամբ կռիվ բորբոքեցին և միմյանց հետ պա-



տերազմում էին առանց իրավունքի ու պղտորում էին Հայոց մեծ աշխարհը. մեկը Մանավազյան տոհմի իշխանն էր, իսկ մյուսը՝ Որդունյաց տոհմի նահապետը: Սրանք մեծ պատերազմով կռվեցին, և շատ մարդիկ կոտորվեցին ու ոչնչացան: Ապա խոսրով թագավորը և Վրթանես մեծ եպիսկոպոսապետը Աղբիանոս պատվական մեծ եպիսկոպոսին ուղարկեցին նրանց մոտ, որպեսզի հորդորելով հաշտեցնի և խաղաղություն հաստատի: Եվ երանելի Աղբիանոսը գնաց նրանց մոտ, որ համոզի, իրար հետ հաշտեցնի: (Բայց) նրան անարգեցին, նրա բարեխոսությունը չլսեցին, ուղարկողներին արհամարհեցին, եպիսկոպոսին մեծ անարգանքով ետ դարձրին և արքունական տունն առան ու ավերեցին, և խիստ զայրացած, հապճեպ կերպով պատերազմում էին միմյանց դեմ: Ապա թագավորը, սաստիկ զայրանալով, նրանց վրա ուղարկեց Արթավազդի որդի Վաչեին՝ Մամիկոնյան տոհմի նահապետին, Հայոց սպարապետության տոհմից, իր զորքերի մեծ զորավարին՝ այդ երկու տոհմը ոչնչացնելու, վերացնելու: Ապա Վաչե զորավարը գնաց նրանց վրա. երկու տոհմն էլ շարժեց, ոչնչացրեց, երկու տոհմերից էլ ոչ մի արու զավակ չթողեց, ինքը վերադարձավ Հայոց խոսրով թագավորի և Վրթանես բահանայապետի մոտ: Եվ (թագավորը) Աղբիանոս եպիսկոպոսին տվեց հօգուտ եկեղեցու Մանավազյանների ավանը ու նրանց նահապետի բուն աթոռանիստ գյուղը, (այսինքն) Մանավազակերտը յուր բոլոր սահմաններով և նրա շուրջն եղած գավառակով՝ Եփրատ գետի կողմերում: Իսկ Որդունիներին Որդորու անունով բուն գյուղը, յուր բոլոր սահմաններով, որ գտնվում է Բասանի երկրում, տվին Բասանի եպիսկոպոսին, որ Որդորու գյուղիցն էր:

### Գ Լ Ո Ւ Խ Ե

ՎՐԹԱՆԵՍԻ ՈՐԴՒՆԵՐԻ ՄԱՍԻ, ՈՐՔԵՑ ԱՆՈՒՆԵՐՈՒ ԵՆ՝  
ԱՌԱՋԻՆԵՆԸ ԳՐԻԳՈՐՍՍ, ԵՐԿՐՈՐԴԻՆԸ ՀՈՒՍԿ:

Այս Վրթանեսը և Արիստակեսը Գրիգոր մեծ բահանայապետի որդիներն էին: Արիստակեսը կույս էր, մանկությունից ի վեր մաքուր, թեպետև կրտսեր որդին էր, ավելի վազ հար

ևպիսկոպոսական աթոռը նստեց: Իսկ Վրթանեսը ամուսնացած էր և անորդի: Նա երկար ժամանակ խնդրում էր աստծուց, որ չզրկվի զավակ ունենալու շնորհից, այլ որ իր պրազից մեկը կանգնի իր առաջ տիրոջ ծառայության համար: Եվ նրա ծերության ժամանակ տերը լսեց նրա աղոթքին՝ նրա կինը հղիացավ և ծնեց երկվորյակ, երկու տղա. մեծի անունը նա դրեց իր հոր անունով՝ Գրիգորիս, իսկ կրտսերինը՝ Հուսիկ: Նրանք մեծացան Հայոց թագավորի առաջ, և հոգ տարան նրանց ուսում տալու: Հետո Գրիգորիսը՝ նրա ավագ որդին, որ վայելչակազմ, առաքինի անձ էր, հոգևոր արժանիքներով լի և աստվածային գիտության հմուտ, հասավ Վրաց ու Աղվանից կողմերի եպիսկոպոսությանը: Նա շամուսնացավ և արդեն տասնհինգ տարեկան հասակում հասավ եպիսկոպոսական աստիճանի Վրաց ու Աղվանից աշխարհների վրա, այսինքն՝ Մասրութների սահմաններին: Այնտեղ գնալով նա եկեղեցիները նորոգեց լուսավոր կարգերով, առաջին Գրիգորի՝ իր պապի՞ գործերին նմանվելով:

Իսկ Հուսիկին սնուցանում էր խոսրով թագավորի որդին՝ Տիրանը. և արքայորդի Տիրանը իր դաստաբ կնուսթյան տվեց Հուսիկին՝ Վրթանեսի որդուն: Եվ մինչդեռ մանուկ էր հասակով, մի անգամ առաջին գիշերը կնոջը մերձավորվելիս կինը հղիացավ: Նա իսկությունը երազում տեսավ, որ երկու մանուկներ կային, որոնք արժանավոր շեն լինելու տիրոջ՝ աստծու ծառայությանը, և զղջաց, որ ամուսնացել է: Լալիս էր, աղաչում էր աստծուն, մեծ տառապանքով ապաշխարում էր: Նա մանկահասակ լինելով՝ թագավորից հարկադրվեց ամուսնանալու: Բայց այս էլ կատարվում էր աստծու կամքով, որովհետև ապագայում նրանից պետք է առաջ գային գլխավոր հովիվներ, որոնք պետք է ավետարանական հրամաններին սպասավորեին հօգուտ աշխարհին և ի շահ եկեղեցիներին: Բայց նա, բացի այդ գիշերից, այլևս կնոջը չմերձեցավ: Կինը ծնեց երկվորյակներ, ինչպես երազում նախապես տեսել էր (Հուսիկը): Առաջինի անունը դրին Պապ, երկրորդինը՝ Աթանագինես:

Եվ այն մի գիշերը կնոջը մերձենալուց հետո այլևս նրան չմերձեցավ՝ իր մանկական առաքինությամբ: Նա ոչ թե ա-

մուսնութիւնը աղտոյի բան էր համարում, այլ կասկածում էր իր տեսած երազից, թե ինչո՞ւ իրենից այնպիսի անպիտան զավակ պիտի ծնվի: Որովհետև նա ցանկանում էր ոչ թե աշխարհական զավակ, այլ այնպիսին, որը տեր աստծուն սպասավորի, ծառայի: Նա առհասարակ ամեն աշխարհիկ բան ոչինչ էր համարում. նա լավ էր համարում ոչ թե անցավորը, այլ վերինը, նա երկնային կյանք էր ակնկալում, նա գերադասում էր միայն Քրիստոսին ծառայել, որը իր համար փառք էր համարում: Նա անտես էր անում թագավորի սերը, նրանից գտած պատիվն ու մեծարանքը կամ թագավորի հետ ունեցած փեսայական բարեկամութիւնը. այս բոլորը նա ուրանում, նրանցից հրաժարվում էր, համարելով իր համար օտար, գարշելի և խաբեութիւն: Այն առաջին անգամից հետո այլևս ոչ մի անգամ չխաբվեց իբրև մանուկ, այլ հայրական միտք, ծերունական հանճարի խրատն ստանալով՝ իմաստնացավ դեպի անմահութիւն ձգտելու: Ավելի լավ համարեց Քրիստոսի համար նախատինջներ կրելը, քան թագավորների մեծարանքը, ընտրեց իր համար զուսպ կյանք, և տասներկու տարեկան հասակից ապրում էր առաքինի վարքով: Նա նմանվեց իր հայրերին, հետևեց իր եղբոր՝ Գրիգորիսի օրինակին և Քրիստոսի լուծը մինչև իր կյանքի վերջը քաշում էր առանց որևէ հապաղման:

Բայց թագավորական տունը նրա հետ թշնամացել էր, և մինչ աներները այս բանի համար նրան անարգում էին, կինը մեռավ, և Հուսիկը վեճ ու աղմուկից ազատվեց<sup>10</sup>: Եվ մինչ նա հոգս էր տանում իր ծնած, (մորից որք) մնացած զավակների մասին և այսպիսի մտահոգութեամբ աղոթում էր աստծուն, տիրոջ հրեշտակը երազում երևաց ու ասաց նրան. «Հուսի՛կ, Գրիգորի որդի, մի՛ վախենա, որովհետև տերը քո աղոթքները լսեց, և ահա քո այդ զավակներից կծնվեն ուրիշ զավակներ<sup>11</sup>, որոնք Հայաստան աշխարհիս լուսավորչներ և հոգևոր իմաստութեան աղբյուրներ կլինեն: Նրանցից կբխեն աստծու պատվիրանների շնորհներ, լիուլի խաղաղութիւն և շենութիւն, շատ եկեղեցիների հաստատութիւն կտրվի նրանց տիրոջից, մեծ հաղթութեամբ ու զորութեամբ, շատ մտորվածներ կդառնան դեպի ճշմարտութեան ճանապարհը:

ուստի և նրանց շնորհիվ Քրիստոսը կփառաբանվի շատ լեզուներով: Նրանք կլինեն եկեղեցիների սյուներ, կյանքի խոսքի մատակարարներ, հավատքի հիմք, Քրիստոսի սպասավորներ և ս. հոգու ծառաներ, որովհետև որտեղից որ շինվածքի հիմքն է, այնտեղից էլ կատարն է: Նրանց մշակող ձեռքերով շատ պտղաբեր, շահավետ և օգտավետ տունկեր կտնկվեն հոգևոր պարտեզում և աստուց կօրհնվեն: Իսկ որոնք որ շին կամենա նրանց միջոցով տնկել և գիտութեան նույն հոգևոր ցողից ոռոգվել, նրանք կանիծվեն ու կմերժվեն, և նրանց վերջը կլինի (դժոխքի) կրակը: Նրանք շատ անգամ տիրոջ համար անարժանների կողմից կենթարկվեն թշնամանքի ու նախանձի, բայց վեճի նման հաստատ կմնան իրենց հավատում և մեծ համբերութեամբ նրանց կհաղթեն: Նրանցից հետո կթագավորի ստութիւնը՝ անզուսպ, անձնասեր, արծաթասեր, խաբեբա, անվստահելի, անպիտան, ստախոս, բանասարկու մարդկանց ձեռքով, այնպես որ շատ քշերը կմնան, որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը»:

Մանուկ Հուսիկը հրեշտակից այս ամենը լսելով՝ մեծ մխիթարութեամբ գոհանում էր տեր աստծուց, որ իրեն արժանացրեց այսպիսի բան հայտնող պատասխանի. և իր կյանքի օրերում միշտ ու հանապազ գոհանում էր:

## Գ Լ Ո Ւ Խ Զ

ԳՐԻԳՈՐԻՍԻ ՎԱԵՃԱՆԻ ՄԱՍԻՆ:

Ինչ վերաբերում է Վրթանեսի որդի Հուսիկի եղբայր Գրիգորիս եպիսկոպոսին, որ Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոսն էր, իր ծառայութեանը կանգնելով դեռևս մանուկ հասակում, շինեց և նորոգեց այն կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Ատրպատականի կողմերի գավառները: Նա բարոզիչ էր քրիստոնեական ճշմարիտ հավատին և ամենքին կրեում էր սքանչելի ու զարմանալի իր խստակյաց՝ անտանելի ճգնողական վարքով, պահեցողութեամբ, մաքուր կյանքով, անքո՞ւս՝ անձանձրույթ չերմ աղոթքներով

առ տեր աստված՝ բոլոր մարդկանց համար: Նա աստու-  
շնորհով անթերի վարում էր ավետարանական ընթացքը և  
սուրբ եկեղեցու վերակացութունը, շանք էր անում, հորդա-  
րում, քաշալերում էր ամենքին դեպի բարին, գիշեր ու ցե-  
րեկ պահով և ազոթքներով, ուժգին խնդրվածքներով ու  
կատարյալ հավատով մերձավորներին և հեռավորներին հո-  
գեոր եռանդ էր ներշնչում. իբրև մի քաջարի պատերազմող՝  
միշտ իր անձը վարժեցնում և պատրաստ էր պահում ամեն  
տեսակ փորձությունների ու վշտերի, որպեսզի ամենայն հա-  
մարձակությամբ կարողանա դուրս գալ կուլի՝ Քրիստոսի ճշ-  
մարիտ հավատի համար:

Եվ երբ այն կողմերի բոլոր եկեղեցիները կարգի բերեց ու  
նորոգեց, հասավ մինչև Մասքութների<sup>12</sup> Արշակունի Սանեսան  
անունով թագավորի բանակի ճամբարը, որովհետև նրանք և  
Հայոց թագավորները նույն ծագումն ունեին, միևնույն տոհ-  
մից էին: Գնաց, ներկայացավ Մասքութների թագավորին,  
Հոնաց բազմաթիվ զորքերի իշխանին, կանգնեց նրանց առաջ  
և սկսեց նրանց քարոզել ու ավետարանել քրիստոնեություն-  
նը: Նրանց ասաց. «Ճանաչեցե՛ք աստծուն»: Սկզբում նրանք  
ընդունեցին ու հառաչեցին: Հետո սկսեցին քննել Քրիս-  
տոսի օրհնքները և այդտեղից իմացան, թե աստծուն ատելի  
են ավարառությունը, հափշտակությունը, սպանությունը,  
ագահությունը, ուրիշին զրկելը, ուրիշինը ուտելը, ուրիշների  
ունեցվածքներին աչք դնելը: Երբ այս բաներն իմացան, նրա  
խոսքերի վրա զայրացան ու ասացին. «Եթե մենք չհափշտա-  
կենք, եթե չթալանենք, եթե ուրիշների ունեցածը չխլենք,  
ապա ինչո՞վ պիտի ապրենք այսբան բազմաթիվ զորքերս»: Եվ  
թեպետ նա բյուրավոր բարի խոսքերով կամենում էր նը-  
րանց սիրտը շահել, բայց չէին ուզում լսել: Նրանք ասում էին  
միմյանց. «Սա եկել է մեզ քաջությունից՝ զրկելու, մեր ապ-  
րուստի աղբյուրը խափանելու. եթե մենք սրան լսենք ու  
քրիստոնեական հավատին դառնանք, ապա ինչո՞վ պիտի  
ապրենք, եթե մեր բնիկ սովորության համաձայն ձի չհեծ-  
նենք: Ո՛չ, ասում էին, սա Հայոց թագավորի մտադրությունն  
է, որ սրան ուղարկի մեզ մոտ, այս կրոնով խափանի մեր  
ավարառության արշավանքներն իր աշխարհից: Եկեք սրան

մեջտեղից վերացնենք ու արշավենք Հայաստան, ավարով  
մեր աշխարհը լցնենք»:

Թագավորը լսեց իր զորքի խոսքերին ու միտքը փոխեց:  
Ապա բռնեցին մի կատաղի ձի, մանուկ Գրիգորիսին կապե-  
ցին ու կախեցին ձիու պոչից և ձին բաց թողեցին հյուսիսա-  
յին մեծ ծովի առափնյա Վատնյա դաշտում, իրենց բանակից  
դուրս: Եվ այսպես սպանեցին Քրիստոսի քաջ քարոզիչն՝  
մանուկ Գրիգորիսին: Ապա այն մարդիկ, որոնք Հաբանդ գա-  
վառից գնացել էին նրա հետ, վերցրին նրա մարմինը և բե-  
րին իրենց գավառը Հաբանդ, Աղվանից կողմերում, Հայաս-  
տանի սահմանում, Ամարագ կոչված գյուղը: Նրան թաղեցին  
այն եկեղեցու մոտ, որ շինել էր Գրիգորիսի պապը՝ առաջին  
Գրիգորը, Հայաստան աշխարհի մեծ քահանայապետը: Եվ  
ամեն տարի այդ կողմերի ու գավառների ժողովուրդն այդ-  
անդ հավաքվելով նրա քաջության հիշատակի տոնը կատա-  
րում է ցնծություններ:

## Գ Լ Ո Ւ Խ Է

ՄԱՍՔՈՒԹՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՐԿՐԻ ՎՐԱ ԱՎԱԶԱԿԱՑԱՐ ՀԱՐՁԱԿԱՆՈՒ ԵՎ ՄԵՍ ՉԱՏԵՐԱԶՄԻ  
ՄԱՍԻՆ, ՈՒ ԹԵ ԻՆՁՊԵՍ ԵՎ ԶՈՐՔՈՎ ՄԻԱՍԻՆ ԿՈՏՈՐՎԵՑ:

Այն ժամանակ Մասքութների Սանեսան թագավորը սաս-  
տիկ բարկանալով թշնամացավ իր ազգակից Հայոց խոսրով  
թագավորի հետ և հավաքեց, գումարեց բոլոր զորքերը<sup>13</sup> —  
հոններ, փոխեր, թավասպարներ, հեճմատակներ, իծմախներ,  
գաթեր, գլվարներ, գուգարներ, շքեր, ճզբեր, բաղասիճներ,  
եզբսովաններ և այլ խառնիճաղանջ, թափառական վաշկա-  
տուն ցեղերի անթիվ բազմություն, որոնց առհասարակ ինքն  
էր իշխում: Եկավ, անցավ իր սահմանը, մեծ կուր գետը,  
սփուկեց ու լցրեց Հայոց աշխարհը: Թիվ չկար նրա հեծյալ  
գնդերի բազմությանը և ոչ հաշիվ՝ տապարավոր հետևակ  
զորքին, որովհետև իրենք էլ չէին կարողանում իրենց զոր-  
քը հաշվել: Բայց երբ մի նշանավոր երևելի տեղ էին հասնում  
և հանդես էին կազմում ըստ գնդերի, դրոշակների և վաշ-

տերի, հրամայում էին, որ ամեն մի մարդ մի ձեռքի քար բերի, մի տեղ ածեն, կույտ կազմեն, որպեսզի ինչքան որ լինի՝ նրանով էլ հասկացվի բազմության չափը, և ապագայի համար մնա անցած օրերի այս ահավոր նշանը: Եվ որտեղից որ անցնում էին, այսպիսի նշաններ էին թողնում ճանապարհների խաչվող տեղերում, պողոտաների վրա: Նրանք եկան, լցվեցին, Հայոց ամբողջ երկիրը ծածկեցին. քանդեցին, գերեցին, ամբողջովին ավերեցին, երկրի բոլոր սահմաններում ծավալվեցին մինչև Սատաղ փոքրիկ քաղաքը, մինչև Գանձակ՝ Ատրպատականի սահմաններում: Ծարժվեցին, մի սահմանված տեղ հավաքվեցին Այրարատյան գավառում, որտեղ մեծ բանակ գոյացավ:

Եվ Հայոց խոսքով թագավորը խույս տվեց իր եղբորից<sup>14</sup>, այսինքն՝ Մասքութների Սանեսան թագավորից, և գնաց կովզի<sup>15</sup> երկիրը, ընկավ ամուր Դարեոնք բերդը: Նրա հետ էր նաև Հայոց ծերունի եպիսկոպոսապետ Վրթանեսը: Այնտեղ նրանք սկսեցին պահք պահել և աստծուց խնդրել, որ նրանց փրկի այն դաժան դահճից. այս էին խնդրում տեր աստծուց: Իսկ նա գրեթե մի տարի բռնացել, գրավել էր ամբողջ երկիրը:

Ապա եկավ հասավ Մեծ Հայքի զորավար Վաչեն՝ Արտավազդի որդին, Մամիկոնյան տոհմից, որ այդ ժամանակ երկար ճանապարհորդություն էր կատարել Հունաց կողմերում: Նա հավաքեց նախարարներից քաջերին, խիստ բազմամարդ գունդ կազմեց և հարձակվեց (Սանեսանի) բանակի վրա լուսադեմին պաշտամունքային արարողության ժամանակ: Նրանք բանակ էին գրել Յլու գլուխ կոչված լեռան վրա: (Վաչեն) նրանց բոլորին սրի քաշեց, ոչ մեկին կենդանի չթողեց և գերիների ողջ բազմությունը ետ դարձրեց: Հետո հավաքեց ավարը և գնաց իջավ Այրարատյան գավառի դաշտը: Այնտեղ նա Վաղարշապատ քաղաքում գտավ Մասքութների Սանեսան թագավորին բուն գնդի հետ, որ անհամար բազմություն էր կազմում: Վաչեն զորքը վերցնելով հանկարծակի հարձակվեց քաղաքի վրա, և տերը նրանց նրա ձեռքը մատնեց:

Երբ թշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա, քաղաքից դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական

բերդի կողմը՝ ապավինելով այն անապատին ու քարքարուտ տեղերին: Սաստիկ մեծ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները, Ամատունյաց տոհմի նախարար Վահանը, Վարազ Կամինականը, հասան, խփեցին, կոտորեցին ալանների, մասքութների, հոների ու մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը առճասարակ լցրին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսեց, և թիվ չկար սպանված զորքերին: Սակավաթիվ մնացորդներին էլ առաջները գցած հայածուճ էին մինչև բաղասիճների աշխարհը: Սանեսան մեծ թագավորի գլուխն էլ բերեցին Հայոց թագավորի մոտ: Իսկ նա երբ տեսավ, սկսեց լալ ու ասաց. «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից»: Այնուհետև թագավորը Հայոց մեծ եպիսկոպոսապետի հետ եկավ ճակատամարտի տեղը: Տեսան սպանված զորքերի կոտորածը. մեռածների հոտից երկիրը լցվել էր գարշահոտություն: Հրաման տվին՝ երկրից գուգազ<sup>16</sup> հանել, դիակները թաղել, քարակույտերով ծածկելով, որ երկիրը մեռելների դիակների գարշահոտությունից ու թարախից չապականվի:

Երկիրը խաղաղվեց բավական տարիներ: Այսպես սուրբ Գրիգորիսի վրեժը լուծվեց Սանեսան թագավորից և նրա բանակից, որովհետև նրանցից ոչ մեկը չմնաց:

### Գ Լ Ո Ւ Խ Ը

ԱՆՏԱՌՆԵՐ ՏԵԿՆՈՒ, ՊԱՐՍԻԿՆԵՐԻ շԵՏ ՄՂԱՍ ՊԱՏԵՐԱԶՄԵՐԻ ԵՎ ԲՋՆՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՂՄԻ ԲՆԱԶՆՋՄԱՆ ՄԱՍԻՆ:

Երբ Հայոց երկիրն առժամանակ խաղաղվեց, ապա Հայոց խոսքով թագավորը հրամայեց պարգևներ տալ այն քաջ մարդկանց, որոնք իր համար շարշարվեցին և պատերազմների ճակատամարտերում իրենց անձը գրին Մեծ Հայքի աշխարհի համար: Նա Վաչե զորավարին տվեց Ջանջանակի ակունքները, Ջրաբաշխիքը և Յլու գլուխը բոլոր գավառականերով, նույնպես և մեծամեծ պարգևներ՝ մյուս նախարարներին:

Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ երկրից բազմաթիվ մշակներ<sup>17</sup> հանել, անտառներից վայրի կաղնի

բերելու տնկել Այրարատյան գավառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչ Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին<sup>18</sup> և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնուների ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի քերիչ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եզեզնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. որտեղ անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու անտառներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուղարձի ճանապարհի համար: Անտառն աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ որսի կենդանիներ ու գազաններ հավաքել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի և ուրախության տեղեր դառնան: Վաչե զորավարը անմիջապես կատարեց թագավորի ասածները:

Եվ մինչ Խոսրովն զբաղված էր անտառները տնկելով, հանկարծ լրաբեր եկավ նրա մոտ Հեր և Զարավանդ գավառները<sup>19</sup>, թե Պարսից զորքերը պատրաստվում են պատերազմով քեզ վրա գալու: Խոսրով թագավորը հրաման տվեց Բրգնունյաց Դատաբա նահապետին՝ երկրից գուզազ հանել անշափ ու անհամար, և մատենիկ գնդի<sup>20</sup> հետ միասին դուրս գալ թշնամու առաջ, դիմադրել, նրա առաջն առնել: Եվ Դատաբեն գնաց Պարսից զորքին ընդառաջ Հայոց զորքի բազմություններ: Երբ Դատաբեն հասավ, Պարսից զորքերի մեծերի հետ միաբանվեց և կամեցավ նրանց ձեռքը տալ Հայոց թագավորին՝ իր տիրոջը: Նա թշնամիներին հրամայեց դարան սարքել իր զորքի դեմ և անմիջապես թշնամու սրբերին մատնեց իր զորքը: Հանկարծ, անսպասելի կերպով կոտորվեց Հայոց բազմաթիվ հազար զորքը և մնացած զորքը դիմեց փախուստի: Իսկ չարագործ Դատաբեն առավ Պարսից զորքը և կամեցավ Հայոց թագավորի վրա հարձակվել: Փախստական զորքերն ավելի վաղ հասան Հայոց թագավորի բանակը, գուժեցին պատահած սարսափելի կործանումը, անօրեն Դատաբենի մատուցած չարագործությունը:

Այն ժամանակ Հայոց Խոսրով թագավորը Վրթանես քահանայապետի հետ ընկնում, թավալվում է գետին, մեծ պաղատանքով, շերտ արտասուքներով ասածուց (օգնություն) է խնդրում: Սրանից հետո փութով հավաքեց իր մոտ զորքերը, մոտ երեսուն հազար մարդ, Վաչե զորավարի հետ, և գնաց նրանց դեմ բոլոր իր ավագ նախարարների հետ միասին: Նրանք իրար հանդիպեցին Առեստ ավանում, փոքր գետակի վրա արքունական ձկնորսարանում<sup>21</sup>: Տեսան Պարսից զորքի անհամար բազմությունը՝ ինչպես երկնքի աստղերը և ինչպես ավագ ծովի ափին, որ եկել էին անթիվ փղերով ու անշափ զորքով: Իսկ սրանք հասան, հարձակվեցին նրանց բանակի վրա, աստծուն հուսալով. խփեցին, կոտորեցին, ոչընչացրին. մեկին էլ կենդանի չթողին: Եվ շատ ավար խելեցին նրանցից՝ և՛ փղերը, և՛ նրանց զորքյան ամբողջ ուժը: Դատաբենին Վաչե սպարապետը և քաջ Վահան Ամատունին ձերբակալեցին ու բերին Խոսրով մեծ թագավորի առջև. նրանք քարերով քարկոծեցին իբրև մի մարդու, որ դավաճան է եղել իր աշխարհին և իր տիրոջ գնդին ու զորքերին: Նրա տոհմը, կիներ և որդիները գտնվում էին Ոչտունյաց իշխանի ամրոցում, Աղթամար կոչված կղզում: Վաչե սպարապետը նավ նստեց ու կղզին մտնելով առհասարակ ո՛չ էզ թողեց և ոչ արու: Այս կերպով այդ նախարարական տոհմը ոչնչացավ, և նրա տունը զրավվեց որպես արքունի սեփականություն:

Բայց սրանից հետո էլ պարսիկները չէին դադարում Խոսրով թագավորի հետ պատերազմելուց: Եվ նա օրենք սահմանեց, որ մեծամեծ ավագանին, աշխարհակալ, աշխարհատեր նախարարները, որոնք բլուրավոր և հազարամյոթ (զինվորների տեր էին)<sup>22</sup>, թագավորի մոտ մնան ու նրա հետ շրջեն, և նրանցից ոչ ոք չգնա արքունի զորքի հետ: Որովհետև նա վախենում էր նրանց երկմտությունից, միգուցե Դատաբենի նման վարվեն և իր դեմ ապստամբվեն: Բայց նա վստահ էր ծերունի Վաչեի՝ Մեծ Հայքի բուն սպարապետի, զորավարի և քաջ Վահան Ամատունու վրա: Բոլոր ավագ նախարարական տների զորքերը գումարում էր արքունի զորքերի հետ և ամբողջ գումարտակը տալիս էր սրանց ձեռքը, և սրանք շարունակ քաջարար պատերազմում էին Պարսից սահմաններում

ու թույլ չէին տալիս համարձակությամբ մտնել և ավերել  
Հայոց երկիրը<sup>23</sup>, Եվ թագավորը հանգստություն էր վայել-  
լում, աշխարհը շեն ու խաղաղ էր նրանց կյանքի բոլոր  
օրերում:

### Գ յ ու խ Թ

ԲԱԿՈՒՐ ԲԳԵՇԵՒ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՊՍՏԱՄԲՈՎԵՑ ՀԱՅՈՑ ԲԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ,  
ՈՐԻ ՓՈՆԱՐԵՆ ԲԳԵՇԵ ՂԱՐՁԱՎ ՎԱՂԻՆԱԿԸ:

Այն ժամանակները Հայոց թագավորի դեմ ապստամբվեց  
նրա պաշտոնյաներից մեկը՝ Աղձնյաց մեծ իշխանը, որ բղբշխ  
էր կոչվում<sup>24</sup>, որ արքունական դահլիճի չորս բարձր գահերը  
գրավողներից մեկն էր: Նա հարեց Պարսից թագավորին և  
նրան մատնեց թագավորությունը, որին ինքը հենարան էր:  
Նա Պարսից թագավորից զորք բերել տվեց իրեն օգնության,  
անշատվեց Հայաստանից և Հայոց թագավորի դեմ պատե-  
րազմ էր մղում Պարսից թագավորության ուժերով, և պատե-  
րազմը սաստկանում էր: Եվ Հայոց թագավորը (նրանց  
դեմ) ուղարկեց մեծ զորքով իր հավատարիմ պաշտոնյանե-  
րին — Կորդվաց Զոն իշխանին, Մեծ Մոսիքի Մար իշխանին,  
Շահի Մոսիքի<sup>25</sup> իշխան ներսահին, Սյունյաց Վաղինակ իշ-  
խանին, Հաշտենից Դատ իշխանին և Բասենի Մանակ իշխա-  
նին: Սրանք գնացին, հաղթեցին Պարսից զորքերին և բոլոր-  
րին առհասարակ սրի քաշեցին, նույնպես սպանեցին բղբշ-  
խին՝ եղբայրների ու որդիների հետ: Բայց Բակուրի գլուխը  
և մի նորածին աղջիկ բերին թագավորին: Եվ որովհետև նրա  
տոհմից ուրիշ ոչ ոք չէր մնացել, թագավորն այդ աղջիկը  
կնուխյան տվեց իր սիրելի Վաղինակ Սյունիին, նրան տվեց  
նաև Աղձնյաց տունը և նրան դարձրեց բղբշխ ու ժառանգ այդ  
տան: Ժառանգը բազմացավ, և Վաղինակն ամբողջ այդ հրկ-  
րով ու բոլոր ուժով միշտ ծառայում էր թագավորին. բայց  
Բակուր բղբշխի որդիներից մի պատանի փախավ ու ապաս-  
տանեց Հայոց Վաչե զորավարի մոտ և նրա տանը թաքնվե-  
լով (մահից) ազատվեց, որ և հետո, ուրիշ ժամանակ, դար-  
ձավ, իր տունը գրավեց ու ժառանգ դարձավ: Նրա անունն էր  
Խեշա:

20

### Գ յ ու խ Ժ

ՄՄԲԻՆԻ ՀԱԿՈՐ ԵԳԻՍԿՈԳՈՍԻ ՄԱՍԻՆ:

Այն ժամանակները Մծրինի մեծ եպիսկոպոսը՝ մի քան-  
չի ծերունի, ճշմարիտ գործերի մեջ վաստակավոր, որի ա-  
նունն էր Հակոբ, Զգոն կոչված, աստվածընտիր մի մարդ  
(պարսիկ լինելով հանդերձ), վեր կացավ իր քաղաքից, որ-  
պեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարարադ լեռը<sup>26</sup>, որ գրտ-  
նրվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց  
գավառում: Նա լի էր Քրիստոսի շնորհներով, այնպես որ նրա  
ձեռքով հրաշքներ էին կատարվում: Նա եկավ մեծ փափագով  
ու ցանկությունով և աղաչում էր աստծուն, որ կարողանա տես-  
նել Նոյի փրկական տապանը, որ շրհեղեղից հետո այս լե-  
ռան վրա հանգրվանեց, որովհետև ինչ որ նա աստծուց խնդ-  
րում էր, ստանում էր: Արդ՝ երբ նա բարձրանում էր Սարա-  
րադյան լեռան անշրդի անապատ, քարքարոտ տեղերով, ինքը  
և իր հետ եղողները հոգնեցին ու ծարավեցին: Այդ ժամա-  
նակ Մեծ Հակոբը ծունկ չոքեց գետնի վրա և տիրոջը աղո-  
թեց: Եվ այն տեղից, որտեղ դրել էր իր գլուխը, մի աղ-  
բյուր բխեց. և ինքն ու իր հետ եղողները խմեցին: Մինչև  
այսօր էլ այդ աղբյուրին ասում են Հակոբի աղբյուր: Եվ ին-  
քը նույն շարշարալից գործը շարունակում էր, տիրոջն աղո-  
թում էր, որպեսզի ցանկացածը անհապաղ տեսնի:

Արդ՝ երբ նա հոգնած էր վերը, կատարի մոտ, դժվար  
տեղում, խիստ տանջված էր, քունը տարավ: Եվ աստծու  
հրեշտակը եկավ ու նրան ասաց. «Հակոբ, Հակոբ»: Եվ նա  
ասաց. «Այստեղ եմ, տե՛ր»: Եվ հրեշտակն ասաց. «Տեքը քո  
աղաչանքներն ընդունեց և խնդրանքդ կատարեց. այդ, ինչ որ  
գլխիդ տակ դրված է, տապանակի փայտերից է. ահա բերի  
քեզ համար. այնտեղից է այդ: Էլ կրկին չձգտես տեսնել,  
որովհետև տեքը այսպես կամեցավ»: Նա մեծ խնդությամբ  
ոտքի կանգնելով երկրպագեց տիրոջը մեծ գոհությամբ և տե-  
սավ տախտակը, որ կարծես կացնով կտրած՝ ճեղքած հա-  
նած էր ինչ-որ մեծ փայտից: Առնելով շնորհատուր պարգե-  
վը՝ ինքը և հետը եղողները այնտեղից ետ դարձան ու գնա-

81

ցին իրենց հանապարհը<sup>27</sup>: Եվ Մեծ Մովսեսը այնպես զվարթ չէր ցնծում Միննական լեռնից իջնելիս, թեպետ չեմ ուզում ասել, որ նրա բերածը պակաս բան էր, իսկ սրանը՝ ավելի: Որովհետև այն աստվածատես մարդը աստծուց էր ստացել աստվածագիր հրամանները և ձեռքերին բռնած իջնում էր լեռնից: Որովհետև այն շարագործ ժողովուրդը տիրոջից երես դարձնելով, կործանվելով՝ տիրադրում գտնվեց և իր ձուլածին երկրպագում էր, որով (աստծու) հրամանը բերողի սիրտը կոտրում, վհատեցնում էր, և հենց տախտակների խորտակելուց հայտնի երևում էր բերողի թախծը: Իսկ այս երանելուն, որի մասին այստեղ շարադրում ենք, այնպես չպատահեց, ինչպես այստեղ եղավ. այլ ինքը և յուրայինները լցված էին հոգևոր մխիթարությունով՝ կարծելով, որ ընդունողները հոժարություն և հույսով սպասում են (նրա վերադարձին) հեռավոր ավետաբեր ճանապարհից: Որովհետև<sup>28</sup> հայտնի ու անհայտ կերպով միայն մեկ ամենակարողից էին մատակարարվում շնորհներ բոլոր երկրածին ազգերին:

Եվ երբ աստծու մարդը եկավ, բերեց նոյան փրկարար տապանի փայտը, — բոլոր բանավորների ու շնչավորների ցեղերին հասած պատուհասի հավիտենական նշանը, հայրենի գործերի նշանակը, — ապա ամբողջ քաղաքը և նրա շուրջն եղած գավառները անչափ, աննման ցնծությամբ և խնդրությամբ նրան ընդառաջ ելան: Նրան համարում էին իբրև Քրիստոսի առաքյալ, իբրև երկնային հրեշտակ, նրան շքուշապատում էին, իրենց քաջ հովվին իբրև աստվածախոս էին համարում, փաթաթվում էին նրան, համբուրում էին նրա վաստակավոր ու օգտաբեր ոտքերի հետքերը: Եվ նրա բերած պարգևները իբրև իրենց համար շնորհներ ընդունում էին հոժարությամբ, որ մինչև այսօր էլ նրանց մոտ պահվում է այդ սքանչելի նշանը՝ հայրապետական նոյան տապանի նշանավոր փայտը:

Մրանից հետո սքանչելի Հակոբ եպիսկոպոսը լուր ստացավ Հայաստան աշխարհից, ելավ եկավ Հայոց թագավորի մեծ ծառայի, աշխարհատեր մեծ իշխանի՝ Մանածիրհ Ռշտունու մոտ. եկավ, մտավ նրա աշխարհը, որովհետև լսել էր նրա մասին, թե շար ու անզգամ մարդ է և սրտի անտեղի

դառն ցասումից շարանում ու անթիվ մարդիկ է կոտորում: Եկավ նրան ուսուցանելու և խրատելու, որ աստծու ահից վախենալով՝ բնավորությամբ բարեհամբույր դառնա, մի կողմ դնի անասնաբարո, զազանային կատաղությունը: Իսկ երբ անօրեն Մանածիրհը տեսավ աստծու մարդուն՝ Հակոբ եպիսկոպոսին, նրան արհամարհեց, ծաղրի ու նախատինքի ենթարկեց: Եվ իր մեջ ունեցած վայրենի բնավորությամբ, ի հեճուկս նրա՝ ութ հարյուր մարդ, որոնք կապանքի մեջ էին առանց հանցանքի, բերել տվեց նրա առաջ և հրամայեց՝ մի գահավեժ<sup>29</sup> տեղից ծովը թափել ու այնքան հողի կորցնել առանց որևէ հանցանքի: Եվ կատակով ու ծաղրով հրամայեց հալածել նրան իր աշխարհից: Նրան ասաց. «Տեսա՞ր ինչպես քեզ մեծարեցի, քո բարեխոսության պատճառով նրանց ազատեցի կապանքներից, հիմա նրանք ծովում դեռ լող են տալիս»: Իսկ նա մեծ տրտմությամբ այնտեղից գնաց և տիրոջ պատվիրանի համաձայն՝ իր ոտքի փոշին թափ տվեց նրանց վրա<sup>30</sup>: Նա իր հետի մարդկանցով գնաց Ռշտունիքով, հասավ երկաթահատների և կապարահատների լեռը: Սա մի սահմանաբաժան բարձր լեռ է, որ կոչվում է Ընձաքիարս, որի վերևից բոլոր գավառները երևում էին: Երբ այս լեռանը մոտեցավ, ստորոտը հասավ, շատ օրեր բոլորովին բան չէր կերել. այդտեղ խիստ ծարավ զգաց: Մունկ չոքեց, աղոթք արեց տիրոջը և գլուխը գետին դրեց, ազբյուր քիսեց, որից ինքն էլ, հետը եղողներն էլ խմեցին: Այստեղ էլ Ռշտունյաց (գավառում), ծովեկերքի մոտ, Ընձաքիարսի ստորոտում, նույն ձևով արեց, ինչպես արել էր Սարարագ լեռան վրա: Այս աղբյուրն էլ, առաջինի նման, մինչև այսօր կոչվում է Հակոբի աղբյուր:

Հետո աստծու քահանայապետ Հակոբը բարձրացավ լեռան գլուխը և անիծեց այն աշխարհը, որպեսզի այնտեղից իսպառ խոռվությունը չպակասի, նրա համար, որ նրանք շլսեցին տերունական խաղաղության խոսքին: Հետո սուրբ ավետարանիչ եպիսկոպոսը գնաց իր տեղը: Իսկ նրա գնացելուց երկու օր հետո այդ գավառում մեռավ Մանածիրհի կինը իր յոթ որդիներով. հետո ինքն էլ ծակոտվելով շարաշար մա-

հով գնաց այս աշխարհից: Եվ նրա ասածի պես՝ այն օրից ի վեր խաղաղություն չեղավ այն աշխարհում:

Բայց այս Հակոբը մեծամեծ հրաշքներ էր գործում. նա եղավ Նիկիո մեծ ժողովում, որ տեղի ունեցավ Հռոմոսյ Կոստանդիանոս կայսեր տարիներին, երբ հավաքվեցին երեք հարյուր տասնութ եպիսկոպոսներ Արիանոս Աղեքսանդրացու անիծված աղանդի պատճառով, որ Եգիպտոսի նահանգից էր: Արդ՝ բոլոր եպիսկոպոսները նստած էին Կոստանդիանոսի առաջ: Հայերի կողմից էլ այնտեղ էր Արիստակեսը՝ Մեծ Հայքի առաջին կաթողիկոսի՝ սբանչլի Գրիգորի որդին: Եվ սուրբ հոգու սբանչլի հրաշքով այս Հակոբին սկսեցին երևալ թագավորի զարմանալի թաքուն գործերը: Նա տեսավ, որ Կոստանդիանոս թագավորը քուրձ էր հագել իր ծիրանի պատմուճանի տակ, և հրեշտակը կանգնել էր նրան սպասավորելու: Հակոբ եպիսկոպոսը զարմանալով՝ ժողովի մյուս բազմաթիվ եպիսկոպոսներին հաղորդեց հրեշտակի իրողությունը, բայց նրանք չհավատացին: Իսկ նա վիճում, պնդում էր և ասում. «Որովհետև դուք թաքուն բաները գիտեք, ուստի նախ այն հայտնեցեք, թե ի՛նչ է հագել թագավորը պատմուճանի տակ»: Եվ ինչը մեջտեղը կանգնելով՝ սուրբ հոգու շնորհիվ երևան է հանում Կոստանդիանոս թագավորի կրոնասիրական խոնարհությունը, նրա աստվածասիրության հատկությունը, և զննելով՝ բոլորին ցույց էր տալիս, որ ծիրանու տակ քուրձ էր հագել՝ դեպի Քրիստոս ունեցած սիրո և ջերմեռանդ հավատի համար: Սրանից հետո Կոստանդիանոսը ինքն էլ տեսավ սպասավոր հրեշտակին, Հակոբի շնորհիվ. նրա ոտքերի առաջ ընկավ և մեծ պատվով ու պարգևով նրան մեծարեց և նրա աթոռը ժողովում եղողներից շատ-շատերի (աթոռներից) բարձր դրեց:

Բայց նրա ոսկորները շնորհվեցին Ամիդ քաղաքին, այլ մծբինցիների հետ Հունաց և Պարսից թագավորների պատերազմների ժամանակ (ոսկորները) Մծբինից այնտեղ փոխադրվեցին:

ՊԱՐՍԻՑ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՌԵՆԵՑԱՄ ՄԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ,  
ԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՎԱՋԵ ԶՈՐԱՎԱՐԻ ԸՆԿԵՆՈՒ, ԵՈՐՈՎ  
ԲԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՎՐԹԱՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ:

Սրանից հետո դարձյալ խիստ պատերազմ տեղի ունեցավ պարսիկների և հայերի միջև, որովհետև (պարսիկները) մեծ բազմությամբ հավաքվեցին, եկան Հայոց աշխարհն առնելու: Ապա Մեծ Հայքի սպարապետ և զորավար<sup>31</sup> Վաչեն հավաքեց նախարարական զորքերի ազատների բանակը և դուրս եկավ Պարսից զորքերի հետ պատերազմելու: Երկու կողմից էլ անասելի կոտորած էր լինում, և շատ մեծամեծ ավազանիներ կոտորվում, ոչնչանում էին: Այս պատերազմում ընկավ նաև Վաչեն՝ Հայոց մեծ սպարապետը. և ամբողջ աշխարհը մեծ սգի մեջ ընկավ, որովհետև տեղը շատ անգամ նրա ձեռքով փրկություն էր շնորհել հայերին: Ապա Վրթանես եպիսկոպոսապետը հավաքում, մխիթարում էր բոլորին, իրեն՝ հոսրով թագավորին, և բոլոր զորքերին, որոնք սրտակեզ ողբով ու արտասուքով, թախծալից հոգսերով, մեծ լաց ու կոծով բռնված սգում էին՝ գնացածների տառապանքները մնացածներին համարելով: Մեծ Վրթանեսը մոտենալով նրանց սփոփում էր և ասում.

«Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք, որ մեռան, մե՛ր աշխարհի, եկեղեցիների և աստվածատուր հավատի համար (մեռան), որպեսզի մեր աշխարհը չգերվի, քարուքանդ չլինի, սուրբ եկեղեցիները չպղծվեն, նահատակները չանարգվեն, (եկեղեցական) սպասները պիղծ և անհավատ մարդկանց ձեռքը չանցնեն, սուրբ ուխտը չաղավաղվի, մկրտված ժողովուրդը գերի չգնա ու շմատնվի անհավատների պաշտամունքի զանազան պղծություններին: Եթե թըշնամիները մեր աշխարհը գրավեն, այստեղ կհաստատեն իրենց անօրեն, անհավատ, անաստված կարգերը, որ հուսանք, թե երբեք լինելու չէ: Իսկ մեր բարեպաշտ նահատակները այս բանի համար պատերազմ մղեցին և շարիքը մեր աշխարհից հալածելով ու հեռացնելով՝ մեռան, որպեսզի անհավատությունը այս աստվածապաշտ ու աստվածասեր աշխարհը մուտք չգործի և շարի կամքին ծառա չդարձնի ու



շատ հոգիներ, որ ջերմեռանդ, անկեղծ սիրով իրար հետ կապված են, միմյանցից շքածանի, շքայքայի: Իսկ սրանք մինչ կենդանի էին, արդար ջանքով շարշարվեցին այս բանի համար և մեռնելիս հաստատ պահեցին իրենց հավատարմությունը ու իրենց անձերը զոհեցին աստվածային ճշմարտության համար, եկեղեցիների, նահատակների, կրոնի սուրբ ուխտի, հավատի կարգերի համար, քահանայական ուխտի և Քրիստոսի անունով անթիվ նոր մկրտվածների ու աշխարհի բնիկ<sup>32</sup> տիրոջ համար. և նրանք, որ իրենց կյանքը շինայեցին այս բոլորի համար, պետք է մեծարվեն Քրիստոսի համար զոհվածների հետ: Ուրեմն նրանց շողբանք, այլ արժանապես պատվենք նահատակների հետ. մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարի սրանց բարի հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք և ուրախ լինենք, որ աստված սրանցով մեզ հետ հաշտ լինի ու այսուհետև խաղաղություն շնորհի»:

Եվ Վրթանես մեծ քահանայապետը օրենք սահմանեց՝ երկրում տարեցտարի նրանց հիշատակը կատարել, ինչպես և նրանց, որոնք նույն կերպով երկրի փրկության համար կմեռնեն: Կանոն դրեց՝ սրանց անունները հիշել աստծու սեղանի առաջ պատարագի ժամանակ՝ երբ սրբերի անունները հիշատակվեն, որոնցից հետո՝ սրանցը, իսկ ընկածների հարազատներին հոգ և խնամք տանեն: Որովհետև, ասում էր, սրանք պատերազմի ճակատամարտում ընկան Հուդա և Մատթիա Մակարենների ու նրանց եղբայրների նմանությամբ:

Սակայն Վաչե զորավարի որդուն, որ փոքր մանուկ էր, հայրենական գահն ու բարձր տվեցին, որ նրա (Վաչեի) հոր<sup>33</sup> անունով կոչվում էր Արտավազդ: Թագավորի առաջ նրան շնորհեցին հոր աստիճանը՝ սպարապետությունը, որովհետև մեծ վաստակավորի որդի էր, վաստակավոր տոհմից, իսկ նրանց տոհմում ուրիշ շափահաս մարդ չգտնվեց, որովհետև մեծ պատերազմում մեռել էին: Իսկ զորավարության գործը հանձնարարեցին Արշավիր Կամսարականին՝ Շիրակի ու Արշարունյաց գավառի իշխանին և Սյունյաց իշխան Անդոկին, շարունյաց գավառի իշխանին և Սյունյաց իշխան Անդոկին, որովհետև սրանք Մամիկոնյան տոհմի փեսաներ էին: Եվ

Վրթանես մեծ եպիսկոպոսապետն ու թագավորը հրաման տվին Արշավիրին ու Անդոկին՝ պատանի Արտավազդին խնամել, որպեսզի իր նախնիների ու իր հոր տեղը գրավի, քաջագործություն անի, ամենատեր Քրիստոսի ու իր մարմնավոր բնիկ տերերի՝ Արշակունիների քաջ մարդկանց կյանքի ու տան համար, որբերին ու այրիներին խնամակալ լինի և սպարապետության ու անվանի զորավարության քաջագործությունները ծառանգի իր ամբողջ կյանքի ընթացքում:

Սրանից հետո մեռավ քաջարանց՝ աշխարհաշեն Խոսրովը՝ Մեծ Հայքի թագավորը: Ամբողջ Մեծ Հայքի աշխարհներից ու գավառներից հավաքվեցին, սուզ արին, լացին ու տարան իր նախնիների մոտ, Անի, Դարանազդի եկեղյաց գավառը: Նրանից հետո մեռավ նաև Վրթանեսը՝ մեծ քահանայապետը: Ամբողջ Հայոց աշխարհը հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմոսներով ու հոգևոր երգերով, կանթեղներով, մոմերով, անուշահոտ խնկով՝ արքունական կառքերով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որբ մնացին իրենց բնիկ տիրոջից և հոգևոր վարդապետից. և մեծ լացով ու կոծով և տրտմությամբ հուղարկավորեցին Դարանազյաց գավառի Թորդան գյուղը ու Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար հիշատակը կատարելով՝ ետ դարձան:

### Գ լ ու խ Ժ Բ

ՏՐԻԱՆԻ ԻՐ ՀՈՐԻՑ ՉԵՏՈ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ  
ՀՈՒՍԻԿԸ ԻՐ ՎՐԹԱՆԵՍ ՀՈՐ ՄԱՀԻՑ ՉԵՏՈ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՇ  
ՆՍՏԵՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՏՐԻԱՆԻՑ ՍՊԱՆՎԵՍ՝ ՆՐԱՆ ՀԱՆՈՒՄԱՆԵԼՈՒ  
ՊԱՏՃԱՌՈՎ:

Երբ Խոսրով թագավորը մեռավ, Մեծ Հայք աշխարհի թագավորական իշխանությունն ստանձնեց Խոսրովի որդին՝ Տիրանը: Նույնպես և մանուկ սուրբ Հուսիկը հաջորդեց ու գրավեց Հայոց հայրապետների տեղը: Տիրան թագավորը, սովորության համաձայն, նրա հետ զուամրեց մեծ նախարարներին՝ Վաղարշ մեծ հազարապետին<sup>34</sup>, որ Մեծ Հայքի հա-

զարապետութեան տոհմից էր ու Անձիտի իշխանն էր, և նրա հետ Մեծ Սոփքի Զարեհ իշխանին և (մյուս) Մոփաց աշխարհի վարազ Շահունի իշխանին ու Հաշտեհից գավառի Գնիթ իշխանին Կամիւնական տոհմից և Վանանդի գավառի իշխան Որոթին և Անձեազցաց տոհմի իշխան Շահենին և Գողթնի իշխան Ատամին և Կողբացոց իշխան Մանավագին և Զորի աշխարհի իշխան Գորութին և Խոռխոռունյաց տոհմից Մախազութեան տան իշխան Մանասային և Սահառունյաց տոհմի իշխան Տիրոցին\* և Գնունյաց իշխան Աբային: Այս բնութիւնն հրամայեց Վաղարշ մեծ հազարապետի հետ գնալ, երանելի Հուսիկին արքունական կառքը նստեցնել, առնել տանել սահմանակից Գամիրքի<sup>35</sup> Կեսարիա մայրաքաղաքը՝ մանուկ Հուսիկին հայրապետների առաքելական աթոռը բարձրացնելու համար:

Նրանք ելան գնացին ու հասան Կեսարիա քաղաքը և կաթողիկոս ձեռնադրել տվին Հուսիկին՝ վրթանեսի որդուն, նրան նստեցրին Քաղեոս առաքյալի և իր պապի՝ Մեծ Գրիգորի աթոռը ու մեծ խնդութեամբ ետ դարձան ողջ առողջ և հաշողութեամբ եկան հասան Այրարատյան աշխարհը: Եվ իրենցից առաջ լրաբերներ ուղարկեցին երկու Մոփքերի երկու իշխաններին:

Այս լսելով ինքը՝ թագավորը, անձամբ ամբողջ բանակի բազմութեան հետ նրան ընդառաջ գնաց դաշտով մինչև Տափեր կամուրջի<sup>36</sup> այն կողմը: Ապա միմյանց ցանկալի ողջույնը տալով՝ անցան Տափերի կամուրջը, մտան մեծ Արտաշատ քաղաքը, դիմեցին եկեղեցին, ցանկալի մանուկ Հուսիկին նստեցրին հայրապետական աթոռը: Սա իր վրթանես հորիլ ժառանգել էր առաքելական (ընթացքը)՝ հատկութեաններով հորը նման որդի դառնալով. ամեն բանում իրեն ամբողջովին հրեշտակային վարքով էր հանդես բերում, ամեն ինչ կատարում էր աստծուց պարզեցված շնորհով: Նա հովվում էր Քրիստոսի բանավոր հոտը և խրատում էր ավետարանի պատգամներով: Նա տարիքով դեռ մանուկ էր, բայց առույգ, բարձր հասակով, դեմքի սքանչելի գեղեցկութեամբ և շքե-

\* Ուղղում ենք Տիրոց:—Խմբ.:

նաղ, որի նմանը երկրում ուրիշ տեղ չէր գտնվում: Հոգով մաքուր էր և պայծառ, աշխարհիկ բաներով բնավ չէր զբաղվում, այլ իբրև Քրիստոսի քաջ սպառաչեն, իբրև առաջամարտիկ, մանուկ հասակից ի վեր արհամարհում էր՝ աներևույթ թշնամուն հաղթել սպառնալով: Նա մարդկանց նկատմամբ բոլորովին անաշուտ էր և սուրբ հոգու պատգամը կրում էր ինչպես մեջքին կապած սուր. իսկ շնորհատուր հոգին նրան լրցրեց գիտութեամբ, որ աղբյուրի նման ոռոգում էր մարդկանց ականջները և սրտերը:

Իսկ Տիրան թագավորը և մյուս ավագ նախարարներն ու ամբողջ երկիրը ամենևին չէին վարվում աստծու կամքով, խելացի կյանք վարելով: Մանավանդ թագավորն ու իշխանները առավելապես անխտիր սպանութիւններ էին գործում, զուր տեղը անմեղ արյուն թափում և ուրիշ շատ մեղքեր էին գործում. նրանք ուշք չէին դարձնում տիրոջ հրամաններին, շնայած որ (Հուսիկը) անդադար խրատում էր նրանց և հիշեցնում աստծու պատվիրանները: Այս պատճառով երանելի Հուսիկ հայրապետը շարունակ նրանց դիմադրում էր, վարժ խոսքերով, համեստութեամբ, ըստ Քրիստոսի խրատի, միշտ նրանց երեսուվն էր տալիս, հանդիմանում էր, խրատում, մեղադրում. պատմում էր (աստծու) բարկութեան հավիտենական տանջանքներին՝ (վերջին) դատաստանի անշեջ հուրը և բողոքում էր: Որովհետև թեպետ տարիքով մանուկ էր, բայց իր մեջ ցուցաբերում էր ավագ տարիքի՝ ծերութեան իմաստութիւն, խրատական և առաքելութեան հայրենական գործը մեծ քաջութեամբ կատարում էր: Մանկութեանից ի վեր իմաստութեամբ հայրերին նմանվելով՝ ծերութեան պատվաբեր պատիվը, զվարթ հանճարը արտահայտում էր ինչպես մի անուշահոտ ծաղիկ. ճշմարտութեան համար կովում էր մինչև մահ. նախ իր անձը փրկելու, հետո նաև ուրիշների հոգիների համար նույն բանն ուզում էր անել: Այնքան երկյուղած էր տիրոջից, որ ոչինչ չէր համարում թագավորի սերը կամ նրա ահը: Իսկ աստծու գիտութեամբ, սուրբ Գրքի ընթերցման արվեստով լի էր, որ և գործ էր դնում պատժելու ու հանդիմանելու համար և արգելում՝ թույլ չէր տալիս թագավորին ու մեծամեծներին եկեղեցի մտնել:

Այսպես նա քահանայական իշխանության խոսքով նրանց կաշկանդում, հանդիմանում էր ու խիստ պատուհասում նրանց անօրինություն, պողոտայական, արվագիտության, արյունահեղության, զրկողության, հափշտակության, աղքատատեցության ու սրանց նման ուրիշ շատ մեղքերի համար և տիրոջ օրենքի սաստի պատճառով միշտ թշնամի էր համարվում նրանց, որոնք այդ օրենքից դուրս էին գալիս, որովհետև նրանք շարունակ նրանից խոցոտվում էին աստծու սուրբ խոսքով: Եվ սա հանդիմանական մի պատերազմ էր մղում բոլորի հետ իր ամբողջ կյանքի ընթացքում:

Եվ ահա մի անգամ, տարեկան (տոնի) մի օր, Տիրան թագավորը մյուս ավագանիների հետ եկավ, որ եկեղեցին մտնի, իսկ նա դեմ դուրս գալով ասաց. «Արժանի չես, ինչու ես եկել. ներս մի՛ գա»: Ուստի նրան ծեծեցին հենց այնտեղ՝ եկեղեցու մեջ. աստծու քահանայապետ սուրբ և երանելի մանուկ Հուսիկը բրածեծ լինելով, ջախջախված, խոշտանգված, կիսամահ գցվեց մնաց: Նրան վերցրին արքունական եկեղեցու պաշտոնյաները Ահմետ Գալատի արքանի Բնաբեղ բերդից քերին հասցրին Բարանաղայաց գավառի Քորդան գյուղը, որտեղ քիչ ժամանակ անց վախճանվեց ու թաղվեց Գրիգորի և իր հայրերի մոտ:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

ՔԵ ԻՆՉՊԵՄ ՀՈՒՄԻԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏԻ ԱՆԱՌԱՋԵՆՈՐԿ ՄԵԱՑ  
ՀԱՅՈՑ ԱՇԵԱՐԸԸ, ԵՎ ՀՈՒՄԻԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ ԱՐԺԱՆԻ  
ՉԵՂԱՆ ԻՐԵՆԵ ՀՈՐ ԱՔՈՈՒՆ:

Որոշ ժամանակ անցնելուց հետո, երբ երանելի Հուսիկը բրածեծ լինելով մեռավ, հայ լեզվով խոսող Քորդոմական աշխարհը անառաջնորդ մնալով՝ կույրերի նման մոլորվեց: Նրանց տրվեց մոլորության հոգի, — աշքեր՝ որ շտեմենն, ալկանջներ՝ որ շտեմ և սիրտ՝ որ չհասկանան և չդառնան ապաշխարության: Նրանք խավարած՝ կորուստի խորխորատը հասան, իրենք իրենց ճանապարհը կտրելով կործանվեցին ու ընկան, և չկար մեկը, որ նրանց ամաչեցներ մոլեգնության

գործերից ու մեղքերից, որովհետև առանց առաջնորդի էին մնացել: Նրանք համարձակ գնում էին կորուստի ճանապարհով, իրենց կամքով շարիքների մեջ էին ընկնում, իրենց կամքով դառնում էին բարկության որդիներ և աշխարհում շրջում էին առանց աստծու՝ Հայոց աշխարհի այդ կամակոր ազգը: Նրանք նմանվում էին ոշխարհների այն հոտին, որոնք իրենց պահապան և պաշտպանող շնորը իրենցից հեռացրին ու իրենց կամքով մատնվեցին թշնամի գայլերին, նրանց կեռակոր դարձան Աթենք մեծ քաղաքի նմանությունը:

Այդ ժամանակ (մարդիկ) իրենց համար շար օրինակ վերցրին թագավորին, նրա պես սկսեցին վարվել, նրա պես գործել: Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնյա անունն ստացան՝ այդ (կրոնը) հանձն առան հարկադրաբար՝ իբրև մի մարդկային մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: (Կրոնն ընդունեցին) ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քշերը, որոնք փոքրիշատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության, մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճաղանջ բազմությունը — եթե ուսուցիչները նստելով գիշեր-ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ: Որովհետև նրանց մտքերն զբաղված էին անպիտան, անօգուտ բաներով, ինչպես փոքր կրեթաները, որոնք մանկական հասակում տարվում են իրենց տղայական խաղալիքներով, պիտանի ու կարևոր բաների վերաբերյալ հոգ չեն տանում, նրանք էլ սրանց նման տհաս մտքերով խարխափում էին պարսավելի գործերի, հին հեթանոսական սովորությունների մեջ՝ խուժաղուժ բարբարոսական միտք ունենալով: Նրանք սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց հանդեպ փութեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում: Իրար նկատմամբ տաժում էին ատելություն ու նախանձ, թշնամություն, դիտակալություն, իրար բզկտում էին, մարդը նենգում էր ընկերո-

ջը և եղբորը: Սիրելիները սիրելիներին, մերձավորները մերձավորներին, ընտանիքներն ընտանիքներին, ազգականները ազգականներին, խնամիները խնամիներին դավեր էին սարքում: Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես մարդը ընկերոջ արյանը ծարավելով՝ խմում էր, թե ինչպես մրցում էին իրար վնասելու՝ անուղիղ վարք և անհանձար միտք ունենալով: Աստվածների հին պաշտամունքները կատարում էին գիշերները՝ նման պոռնկության. ոմանք հենց իրենց վրա կատարում էին նույն պոռնկական ցանկությունը: Ուստի ո՛չ խելացի խըրատի էին լսում և ո՛չ հնազանդվում էին առաջնորդների քարոզած աստծու պատգամներին, այլ նրանց հանդիմանական խոսքերի համար նրանց ատում էին, հալածում և սպանում: Եվ ինչպես մարգարեական խոսքը ասել էր նրանց վերաբերմամբ, թե «Հանդիմանողներին ատում էին դուներում». այսպես էլ նրանք արհամարհեցին սուրբ խոսքերը: Որովհետև աստվածային խոսքի քարոզությունը նրանց չտվեց ճշմարիտ հավատի գիտությունը ինչպես ուրիշ ազգերին, հավատացյալներին ու իմաստուններին<sup>37</sup>, որոնք գոհությամբ ընդունեցին, հավատացին և աստծու մարդասիրության շնորհը վայելեցին. այլ հրեաների կուրացած ու խավարած մտքերի նման նրանք կաղում էին ճշմարտության մեջ: Գուցե այս ազգին էլ էր վերաբերում մարգարեի նախագուշակ խոսքը, թե «Անմիտ որդիներ և ոչ թե իմաստուն որդիներ, իմաստուն են շարիք գործելու մեջ, իսկ բարիք գործել նրանք երբեք չկարողացան»: Եվ դարձյալ ասում է. «Պնդերես, խստասիրտ, խստաշունչ որդիները և իրենց հայրերը ինձ վշտացրին»: Սրանք էլ նույնպես լքված էին, որովհետև չհասկացան և աստծու աներևույթներին չհավատացին երևացող բաների միջոցով. արարածներից չկարողացան ճանաչել արարչին, կարգչին ու խնամողին: Նա շատացրեց իր երևացող հրաշքները, այնպես որ մարդկային բնությունը վերածեց անասունի կերպարանքի, որ և պատճառ դարձավ նրանց փրկության:

Եվ հենց այս անպիտան ու անմիտ թագավորության ժամանակ, այն Տիրան թագավորի օրերում, հենց նրան նայելով՝ շարություններով բոլոր դարերից գերազանցեցին: Ամենամեծ (շարությունն) այն էր, որ իրենց գլխավորին և առաջ-

նորդին բրածեծ անելով՝ սպանեցին, և այնուհետև ամեն ոք վարվում էր իր ուզածի պես: Որովհետև այլևս չկար մեկը, որի հանդիմանությունից քաշվեին, որ նրանց արգելք դնեք անուշադրության մատնվեցին, իրենց կամքին, իրենց սրտի ցանկություններին հետևեցին, որովհետև չկար ո՛չ առաջնորդ և ոչ էլ քահանայության գլուխ:

Բայց նրանք անփույթ շատնվեցին (մի մարդ ընտրել), ոչ նրա համար, որ իսկապես իրենց հովիվ ու առաջնորդ լինի, ժողովրդի հոտապետ դառնա, այլ փնտրում էին այնպիսի մեկին, որ իրենց զրուցընկեր լինի և իրենց ուզածի պես կառավարի:

Այն ժամանակ թագավորը, իշխանները և ամբողջ (Հայոց) աշխարհը խորհուրդ արին, թե ո՞վ է արժանի այդ պաշտոնին, որովհետև (Հուսիկից) մնացած երկվորյակ մանուկները, որ կոչվում էին Պապ և Աթանագիեսս, անխրատ և ստահակներ էին, որոնք ոչ աստվածային Գրքի ուսումն ունեին, ո՛չ դաստիարակված էին առաքինության մեջ, ո՛չ իրենց հայրերին նմանվեցին, ո՛չ իրենց ծնողին՝ Հուսիկին, նայեցին, ո՛չ Մեծ Գրիգորի առաքինություններին ուշադիր եղան և ոչ իրենց հոգևոր պատվականությունը՝ հավիտենական կյանքի պատիվը, մտաբերեցին. այլ իրենց դարին նմանվելով, իրենց անտի մարմնավոր ազնվականությամբ և ազգականությամբ պանծալով՝ զինվորական կյանքն ընտրեցին: Այս պատճառով ընտրելի չդարձան նրանք, այլ իրենց հպարտության պատճառով մերժվեցին՝ ըստ առաջուց իրենց հոր տեսած երազի, նրանք աստվածապաշտության լծի տակ շմտան: Եվ Գրիգորի տան սերնդից ուրիշ մեկը չկար. որովհետև նրա մարմնավոր զավակները միայն սրանք էին, իսկ սրանք իրենց վարքով շմանվեցին իրենց հայրերին: Եվ ուրիշ մեկը չկար, որ առաջնորդության, գլխավոր քահանայապետության, եկեղեցիների վերակացության ու հրամանատարության պաշտոնը կատարեր:

ՄԵԾ ԴԱՆԻՆԻՒՄ ԱՍԾՈՒ ՄԱՐԴՈՒ ՎԱՐՔԻ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ  
ՄԱՍԻՆ ԵՎ ՔԵ ԻՆՉՊԵՍ ԵՎ ՀԱՆԴԻՄԱՆԵՑ ՏՐՈՒՆ  
ԲԱԳԱՎՈՐԻՆ ՈՒ ՆՐԱՆԵՑ ՊԵՏՎԵՆՈՎ ՍՊԱՆՎԵՑ:

Այս ժամանակ դեռ կենդանի էր սուրբ և մեծ ժեյրունի Գանիել քորեպիսկոպոսը<sup>38</sup>՝ մի սքանչելի մարդ: Սա եղել էր Մեծ Գրիգորի աշակերտը և (նշանակված էր) վերակացու ու գլխավոր Տարոն նահանգի եկեղեցիներին<sup>39</sup>, որ Գրիգորի սեփական իշխանությունն էր կազմում, և այդ կողմի մեծ դատավորական իշխանության գործակալ: Այս իշխանությունը նա առանձին ուներ, բայց (ընդհանրապես) վերակացու, կարգադրիչ, տեսուչ և հոգաբարձու էր Մեծ Հայքի բոլոր եկեղեցիներին՝ ամեն տեղ. նա նույնիսկ Պարսկաստանի կողմերում օտար վայրերում (քրիստոնեություն) քարոզեց և անթիվ մարդիկ մուրուրությունից դարձրեց:

Սա ազգով ասորի էր և ամբողջ Հայաստանի մայր եկեղեցիներից ամենամեծի ու առաջինի՝ Տարոնի եկեղեցու գլխավոր աթոռի, այսինքն՝ առաջին և պատվական գլխավոր տեղի աստիճանն ուներ, որովհետև առաջին անգամ այնտեղ էր շինված սուրբ եկեղեցին և տիրոջ անվան սեղան կանգնեցված. նույնպես նրանից ներքև Հովհաննեսի մարգարեանոցը, նույնպես և առաքյալների Հանգստարանը՝ տիրոջ տան մոտ: Արդ՝ այս տեղերը, առաջնակարգ լինելու համար հայրապետներից ու թագավորներից սահմանված կանոնով պատվովում էին, ինչպես և Գարանաղյաց գավառում պատվովում են Քորդանի եկեղեցուն կից տեղերը՝ Գրիգոր հայրապետի գերեզմանի պատճառով, նույնպես և Տրդատ թագավորի հիշատակի համար, որ կամա թե ակամա արժանավոր դարձավ քրիստոնեական հավատն առաջին անգամ ընդունելու: Ուստի աշխարհը կամեցավ պատվել այս տեղերը, որտեղ թաղված էին նախնի հայրերն ու եպիսկոպոսները: Երկիրը սիրում էր մեծարել իր Տրդատ թագավորին՝ Քրիստոսի առաջին հավատացյալին, նույնպես և առաջին եպիսկոպոսապետ նախավաստակ Գրիգորիսին, այսպես և Այրարատյան գավառում Քրիստոսի նախավկաններին՝ Գայանեին ու Հովհասիմեին, որ

այնտեղ թաղված էին իրենց գործակիցների հետ միասին, և մանավանդ առաջին եկեղեցին:

Այս տեղերը հանձնված էին նրան գավառներով հանդերձ, որտեղ նրանք գտնվում էին. և նա հավատարիմ էր այն գրեթե ամբողջ սեղանին, հայրապետական աթոռի իշխանությունը, կաթողիկե եկեղեցու հաստատուն ուխտին: Սա քորեպիսկոպոսական աստիճանի ձեռնադրությունն ստացել էր Մեծ Գրիգորի ձեռքից այն ժամանակ, երբ նա կործանեց Հերակլի, այսինքն Վահագնի մեհյանի բազիլիկները, Աշտիշատ կոչված տեղում, որտեղ և հիմք դրեց առաջին սուրբ եկեղեցուն:

Սա զարմանալի մարդ էր, մեծամեծ հրաշքներ էր գործում մեր տեղ Հիսուս Քրիստոսի անունով: Առանց կոշիկները հանելու՝ ոտքով քայլելով անցնում էր գետերի ջրերի վրայով, և կոշիկները շինի թրջվում: Ձմեռվա օրերին, երբ խոր ձյունը կուտակված, դիզված էր լինում լեռների վրա, և նա կամենում էր այսպիսի ժամանակ այսպիսի լեռներով ճանապարհորդել, ձյունը հանկարծակի ցամաքում էր նրա առաջ, և հողը բացվում: Եվ երբ կամենում էր մի հեռու տեղ գնալ, առանց նեղություն սլանում անցնում էր փայլակի նման. կարծես թե թռչելով իսկույն այնտեղ էր լինում, ուր կամենում էր գնալ: Մեռելներին հարություն էր տալիս, հիվանդներ բժշկում, և դեռ սրանցից ավելի մեծ հրաշքներ էր գործում, որ նույնիսկ գրով հնարավոր չէ նկարագրել: Նրա բնակատեղին անմարդաբնակ լեռներում էր, բայց մարդկանց կարիքները անտես չէր անում: Նա մի զգեստ էր կրում՝ շուրջառ և սանդալներ. նա կերակրվում էր բանջարներով ու արմատներով, մինչև անգամ գավազան չէր գործածում. աստվածային խոսքի կողմից այնչափ հզոր էր, որ ինչ աստծուց խնդրում էր, ստանում էր, ինչ որ ասում էր, այնպես էլ լինում էր: Եվ իր տեսչության տեղերը, երբ անապատներից<sup>40</sup> շեներն էր իջնում աստծու գործի համար, գլխավոր եկեղեցիներն էին լինում: Հաճախ նա (գալիս էր) այն աղբյուրի մոտ, Հերակլի բարձրադիր մեհենատեղի ներքև, որ գտնվում է Ցուլ կոչված մեծ լեռան դեմուղեմ, բազիլի տեղից մոտ մի քարընկեց հեռավորությամբ դեպի ներքև, փոքրիկ ձորակում, հացի ծառերի անշան պուրակում,

որին ասում են Հացյաց դրախտ: Այս այն աղբյուրն է, որտեղ հնում Մեծ Գրիգորը բազմաթիվ գործերի մկրտությունը կատարեց: Այստեղ էր սուրբ Դանիելի բնակության խցիկը, գետնի մեջ փորված. այստեղ էր նա կատարում իր տեսչական այցելությունը:

Արդ՝ մեծամեծ նախարարները մի տեղ հավաքվելով՝ ժողով կազմեցին, խորհուրդ արին և թագավորին համոզեցին, որ ծերունի Դանիելին բերեն իրենց կողմը, որպեսզի նրան իրենց գլուխ և առաջնորդ նշանակեն, և նա նստի հայրապետական աթոռը: Նրա մոտ ուղարկեցին Սահա-  
նունյաց տոհմի Զոմի իշխանին, Վանանգի Աբասական իշ-  
խանին, Ամատունյաց տոհմի Կարեն իշխանին և Դիմաք-  
սյան տոհմի Վարազ իշխանին: Այս նախարարներն եկան, նրան գտան Եկեղյաց գավառում, Թիլ գյուղի եկեղեցում, որտեղ նա զբաղված էր աստծու սպասավորության գործով: Նրան առան բերին Աղձնյաց գավառի Բառաեջ ավանը, Տիրան թագավորի մոտ: Եվ երբ մեծ Դանիել քորեպիսկոպոսը Տիրանին ներկայացավ, իսկույն սկսեց մեղադրել ու հանդիմանել:

Նա առաջ եկավ, սկսեց խոսել, ասելով. «Ինչո՞ւ դուք մոռացաք ձեր արարիչ աստծուն, նրա՝ ձեզ ցույց տված գութը, հրաշքները և խրատները, որ կատարեց ձեր հայրերի ու ձեր հանդեպ, իսկ դուք էլ դարձաք ձեր նախնիների մուլար կռապաշտության՝ ատելության, ագահության, զրկողության, աղքատներին հարստահարելու, պողոնկության, նենգության, միմյանց զրկելու, սպանությունների: Դուք լքվեցիք ու ընկաք, ետ կանգնեցիք արդարության ճանապարհից, դուք թողիք ձեր բարերար աստծուն, որ ձեզ ոչնչից ստեղծեց ու հաստատեց, և մոլորվելով նրանից օտարացաք: Մինչ դուք ձեր անձերը կորուստի էիք մատնել, նա ինքը եկավ ձեզ փնտրելու և զրտնելու, թեպետ նա ինքը աստծու միածին որդին էր, բայց եկավ, իջավ՝ իր արարածներին իր հորը ճանաչեցնելու: Նրան թեպետ չլսեցին, այլ դեռ մինչև մահ շարշարեցին, բայց նա համբերեց, իր գորությունը ոչ ոքից չթաքցրեց, որպեսզի ամենքի կյանքի պատճառ դառնա: Ում որ նա արժանավոր

գտավ և իր հարուժյանը պատրաստված, նրանց ընտրեց, սովորեցրեց և արձակեց իբրև քարոզիչներ, կոչնակներ և հրավիրակներ՝ ձեզ դեպի փրկության լույսը հրավիրելու:

Սակայն դուք այն բանում էլ նրա երախտիքների փոխարեն ապերախտություն ցույց տվիք. դուք նախ և առաջ սպանեցիք այն նպատակով ձեզ մոտ եկած քարոզիչն, առաքյալին, հրավիրակին, որ եկել էր ձեզ հրավիրելու մեր տեր Հիսուս Քրիստոսի արքայությունը, դեպի փրկության շնորհը: Դուք ձեր անմտությամբ տիրասպան հրեական ազգի խորհրդին հաղորդակից եղաք. որովհետև նրանք իրենց կարծիքով տիրոջն սպանեցին, իսկ ձեր հայրերը նրա առաքյալներին (սպանեցին), և հետո նրանց նմաններին շարշարեցին նույնպիսի բանի համար: Այս անցքերից հետո եկան աստծու բազմաթիվ սուրբ վկաներ, նույն առաքյալների ճգնակիցներ. նրանք շարշարանքների վտանգին ենթարկվեցին, մինչև մահ տոկացին մնացին, որպեսզի ցույց տան ձեզ ճշմարտությունը, գուցե նրանց միջոցով խելոքանաք և աստծու որդուն ճանաչեք: Բայց դուք նրանց վերաբերությամբ էլ կատարեցիք ձեր շար կամքը, ձեր սովորական սպանությունը, բայց և այնպես նա նրանց<sup>41</sup> արյունով, որ ասացի, և զանազան հրաշքներով ձեզ խրատեց և ձեզ մահվան շնթարկեց իր մեծ ողորմությամբ, ձեզ իրեն մերձավորներ դարձրեց, ձեզ հաղորդակից արեց իր բուն, կենդանի վարդապետությանը, ուղիղ օրենքներին, իր սիրելի որդու մեծությանը:

Սրանից հետո ձեզ ներեց ձեր բոլոր հանցանքները և իր սիրելիներին ձեզ համար ուսուցիչներ դարձրեց: Բայց դուք ոչ մեկը չհիշեցիք, մտքում ու սրտում չպահեցիք, այլ հրեական ազգին նմանվելով, ետ կանգնեցիք, նրանց գործերի նման սկսեցիք և դուք գործել: Մինչդեռ դուք պետք է հիշեիք ձեր տիրոջ՝ Քրիստոսի երախտիքը, որ չհիշեց ձեր հայրերի մեղքերը և ձեր անօրեն գործերը: Դուք պարտավոր էիք շնորհալիք և ձեր սուրբ հայրերի՝ ձեր խրատիչների և ուսուցիչների հիգ ու ջանքը, որոնք շարունակ տքնում էին ձեր հոգիների փրկության համար, դուք պետք է սեր ունենայիք նրանց նրկատմամբ, որոնք (աստծու) խոսքը ուսուցանելով ձեզ՝ հոգեպես երկնեցին և նորից ձեզ ծնեցին ու նորից ձեր անհա-

վատ դառնալու համաձայն, դարձյալ իրենց ընկերների, շա-  
րագործութունները ապաշխարելու համար իրենք իրենց  
խնդրանքներով վերստին երկնեցին ձեզ՝ մինչև որ Քրիստո-  
սին տպավորեն ձեր մեջ, որպեսզի արժանանաք երկնքի ար-  
քայությունը մտնելու: Պատշաճ էր, որ դուք էլ խնամեիք  
նրանց որդիներին ու աշակերտներին, որոնք ըստ հոգևոր  
խոսքի նրանց որդիներն էին աստվածային ծնունդով, ձեր  
առաջնորդներն ու վերակացուները, տիրոջ կողմից, մանա-  
վանդ որ մարմնով էլ նրանց ծնունդներն էին և հոգևոր գոր-  
ծերով իրենց հայրերից պակաս չէին:

Բայց դուք թողիք աստծուն և կրկնեցիք ձեր նախկին շա-  
րիքներն ու ձեր հայրերի մեղքերը գերազանցեցիք: Ինչպես որ  
(ձեր հայրերը) շարշարելով սպանեցին սուրբ հայրերին՝ չկա-  
մենալով օգտակար խրատը լսել նրանցից, այսպես էլ դուք  
նրանց որդիներին ու ժառանգներին, նրանց գործակիցներին  
և նմանվողներին սպանեցիք, որոնք ձեր հանցավոր գործե-  
րին համաձայն չէին. սուրբ մանուկ Հուսիկին՝ ձեր հայրա-  
պետին, Քաղեոս առաքյալի և նրան նմանվող Գրիգորի վի-  
ճակի վիճակակալին ու աթոռակալին: Դուք հրեական վար-  
մունքին ու օրինակին հետևեցիք, նրանց սպանություններին,  
զրկողություններին. ինչպես որ նրանք, անխրատ լինելով,  
իրենց առաքյալներին ու մարգարեներին կոտորեցին, նրանց  
պես արեցիք և դուք:

Արդ՝ ձեր այսքան ստույգությունների ու պղծությունների  
պատճառով տերը ձեր թագավորությունը, քահանայապետու-  
թյունը ձեզանից կվերացնի: Դուք կցրվեք ու կբաժանվեք, ձեր  
սահմաններն էլ Իսրայելի նման ցրիվ կգան, դուք կմնաք  
անտեր, անխնամ, ոչ ոք ձեզ չի խնայի, դուք խաշներ կդառ-  
նաք, որոնք հովիվ չունեն: Ինչպես հոտ՝ կմատնվեք գազան-  
ների ձեռքը, ձեր փառքերից կզրկվեք, օտար թշնամիների  
ձեռքը կմատնվեք իբրև գերի, նրանց ծառայության լծի տակ  
կընկնեք, և այս ծառայության լուծը երբեք ձեզանից չի վե-  
րանա, չի պակասի, ձեր պարանոցից երբեք չի պակասի ծա-  
ռայության՝ շարաշար ստրկության լուծը, ձեր ցանկություն-  
ների մեջ հալումաշ կլինեք: Ինչպես որ Իսրայելը պատառվեց  
և այլևս չկարկատվեց, այնպես էլ դուք կցրվեք ու կկործան-

վեք. ձեր վաստակները ուրիշները կվայելեն, ձեր բարիքնե-  
րը ուրիշները կուտեն, և չի լինի մեկը, որ ձեզ փրկի, տերը  
չի քաղցրանա, ձեզ չի նայի, ձեզ այլևս չի փրկի:

Բայց դուք ինչու՞ ինձ կանչեցիք, որ ելնեմ զամ ձեզ մոտ.  
ա՛յս էիք դուք կամենում ինձանից լսել: Բայց ես թեկուզ այս  
ամենը ձեզ չպատմեի, այնուամենայնիվ այս բոլորը պետք է  
ձեզ պատահեր, որովհետև դուք սպանեցիք այն արդար մա-  
նուկ Մեծ Հուսիկին՝ ձեր առաջինի առաջնորդին, որ Գրիգորի  
զավակի տնից էր: Այո՛, այս բոլորը ձեզ պիտի պատահի.  
որովհետև տերը այսպես ինձ ցույց տվեց: Այլ որ դուք  
(մարդ) ուղարկեցիք ինձ մոտ, ինձ կանչեցիք, թե ե՛կ, մեզ  
ղեկավար և առաջնորդ եղիր. ես ինչպե՞ս առաջնորդ լինեմ  
նրանց, որոնք տիրոջը չեն հետևում, կամ ինչպե՞ս ղեկավար  
լինեմ մի ազգի, որին տերը լքեց: Ինչպե՞ս կարող եմ ես  
ձեռքերս բարձրացնել առ աստված աղոթելու այն մարդկանց  
համար, որոնց ձեռքերը շողախված են տիրոջ սրբերի ար-  
յունով. կամ ինչպե՞ս ազոթք ու պաղատանք մատուցեմ նը-  
րանց համար, որոնք թիկունքները դարձրին դեպի տերը և ոչ  
երեսները. կամ ինչպե՞ս բարեխոս լինեմ նրանց համար,  
որոնք ըմբոստացան. կամ ինչպե՞ս (աստծուն) հաշտեցնելու  
խոսք ասեմ նրանց համար, որոնք (նրանից) փախել են և չեն  
ուզում ետ դառնալ, որոնց համար տերն ինքը պատրաստել է  
այս բոլոր շարիքները այն պատճառով, որ ասացիք, թե տե-  
րը չի տեսնում:

Այս բոլորը և սրանց նման ուրիշ բաներ ասաց ծերունի  
Դանիել բորեպիսկոպոսը՝ Տիրան թագավորի, իշխանների,  
պետերի և բոլոր զորքերի առաջ: Եվ մինչև նա ասում էր այս  
ամենը, թագավորը ապշած, զարմացած լուռ լսում էր: Եվ  
երբ այս բոլորը լսեց, զայրացավ. բռնակալական շար ու  
դառն ցատումով բորբոքվեց, հրամայեց անմիջապես նրան  
խեղդամահ անել: Սպասավորները հրամանը լսելով՝ իսկույն  
կատարեցին: Թեպետ մեծամեծ ավագ եպիսկոպոսները շատ  
հորդորեցին թագավորին, որ շար կամքը չկատարի, բայց նա  
այնքան դառնացած էր սրտով, այնքան զայրացած էր, որ  
նրանց չլսեց: Պարանը վիզը գցելով խեղդամահ արին: Այս-  
պես վախճանվեց օտար Դանիելը:

Եվ բազմաթիվ մարդիկ, որոնք նրան ճանաչում էին ու գիտեին, նրա մարմինը վերցրին և ուզում էին մեծարել Քրիստոսի սուրբ վկաների ոսկորների հետ: Բայց ինքը (Դանիելը) երևաց իր աշակերտին՝ Եպիփանին, որ մի սուրբ մարդ էր, և հայտնեց, որ իր ոսկորները չպատվեն ինչպես ուրիշներիները, այլ տանեն հողի տակ թաղեն այնտեղ, որտեղ ինքը կամեցավ և հրամայեց: (Դանիելը) այսպես ասաց. «Եթե տեղումնական մարմինը երկու օր գերեզմանում ծածկվեց մինչև երրորդ օրը, երբ բարձրացավ իր հոր մոտ, որչափ ավելի պետք է, որ մեր մարմինները հողի տակ ծածկվեն»: Ուստի նրա մարմինը վերցրին նրա սիրելի սուրբ աշակերտները, որոնցից գլխավորը կոչվում էր Շաղիտա, որ նրանից նշանակված էր կորզվաց աշխարհի վարդապետ, և երկրորդը Եպիփան, որ դարձյալ նրա կողմից նշանակված էր ուսուցանող<sup>42</sup> Աղձնիքի և Մեծ Մոփքի. սրանց հետ էին նաև բանակի հոգևոր պաշտոնյաները: Սրանք մարմինն առան, տարան Տարոն ու թաղեցին այն տեղում, ուր նրա բնակության խցիկն էր գտնվում, որ Հայոց մայր եկեղեցին էր, այն աղբյուրի մոտ, որտեղ Գրիգորը մկրտում էր աշխարհի զորքի բազմությունը, Հացյաց դրախտ կոչված տեղում: Այստեղ հողի տակ ծածկեցին սուրբ Դանիելի մարմինը, ինչպես որ առաջուց տեսած երազում նրանց հրամայել էր:

### Գ յ ու խ Ժ Ե

ՀՈՒՍԻՒԻ ՈՐԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԽՁՊԵՍ ՈՏԱՆՏԱԿ ԱՆԵԼՈՎ  
ԱՐՀԱՄԱՐՉԵՑԻՆ ԱՍՏՈՒ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԸ:

Ապա խորհուրդ արին սուրբ Հուսիկի որդիներից ընտրել քահանայապետության համար: Նրանց, իրենց կամքի հակառակ, բռնեցին, եպիսկոպոսների միահամուռ կամքով ստիպեցին և հարկադրեցին սարկավազության ձեռնադրություն ստանալ—Պապին ու Աթանագինեսին: (Իսկ) նրանք հոգևոր պատվի ավանդը գետին գցելով իրենց կամքով զինվորական ունայն արվեստով զինվեցին և կործանվեցին: Նրանք գերադասեցին աշխարհիկ կյանքը, իրենց կին առան թագավորի քույրերին և հրաժարվեցին աստծու ժառանգությունից:

Նրանց կանանց անուններն էին—Պապի կնոջը՝ Վարագդուխա, որոնք անորդի, անզավակ մեռան,— իսկ Աթանագինեսի կնոջը՝ Բամբռը: Սրանցից ծնվեց սբանչելի և զարմանալի Ներսեսը, որ հետո քահանայապետ դարձավ:

Բայց այն ժամանակ չկար մեկը, որ նրանց համար քահանայապետությունը վարեր: Ապա խորհուրդ արին, թե ո՛ւմ ընտրեն առաջնորդ: Բոլորը միաբան որոշեցին, որ նույն Գրիգորի իշխանության տնից գտնեն մեկին, որ իր հայրերի աթոռը նստի:

### Գ յ ու խ Ժ Զ

ՓԱՌՆԵՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱՌՈՒՐ ՆՍՏԵՑ:

Այս ժամանակ (կաթողիկոսության) արժան համարեցին մի ոմն Փառեն քահանայի՝ Տարոն գավառից, Հովհաննեսի մեծ մարգարեանոցից, որը նախապես շինված էր որպես աղոթատուն՝ ի հանգստություն սրբերի և վստահված էր նրան (Փառենին): Նրան կանչեցին թագավորի մոտ: Թագավորը նրան ուղարկեց ընծաներով ու հրովարտակներով և մեծամեծ իշխանների ուղեկցությամբ, որ էին՝ Հայոց Վասակ զորավարը Մամիկոնյան տոհմից, Մեհենդակ Ռշտունին, Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը՝ մեծ ու գլխավոր նահապետներ, և էլի ուրիշ տասը պատվավոր մարդիկ: Սրանք Փառենին առան գնացին Գամիթի մայրաքաղաք Կեսարիա և այնտեղ նրան ձեռնադրեցին Մեծ Հայքի կաթողիկոս ու խաղաղության վերադարձան իրենց աշխարհը:

Փառենը կարճ ժամանակ նստեց հայրապետական աթոռը: Նա չէր համարձակվում նրանց խրատել, որևէ մեկի մոլորությունը կամ ամբարիշտ գործերը հանդիմանել: Նա միայն ինքն իրեն մաքուր էր պահում և հարկադրված ընկերակցում էր անօրեն թագավորին, նրան հնազանդվում էր ու նրա կամքով շարժվում: Ապա նա վախճանվեց, հայրերի մոտ գնաց: Եկեղեցու սպասավորների խումբը նրա մարմինը վերցրեց, տարավ Տարոն գավառը, Հովհաննեսի մեծ մարգարեանոցի



ագարակը, որտեղ ինքը նախապես ապրում էր կենդանի ժամանակ, և այնտեղ նրա մարմինը թաղեցին ու գեղեցիկ շիրիմ շինեցին վրան:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Է

ՇԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՂԲԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ ՍԵՐԵՊԻՑ  
ԷՐ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՔՈՌԸ ԺԱՌԱՆԳԵՑ, ԵՎ ՔԵ ԻՆՉՊԵՄ  
ԱՅՊ ԺԱՄԱՆԱԿ ԱՄԲՈՂՋ ՀԱՅՈՑ ԱՇԵԱՐՉԸ ՔՈՂԵԼ ԷՐ  
ՏԻՐՈՋԸ ՈՒ ՆՐԱ ՊԱՏՎՈՐԱՆԵՐԸ:

Այն ժամանակ բոլորը աշխարհովին միաբան խորհուրդ արին, թե ո՞վ պետք է հայրապետության աթոռը նստի: Եվ որովհետև Գրիգորի տնից ոչ ոք չկար այդ (պաշտոնին) արժանավոր, ուստի հարմար գտան մի ոմն Շահակի, որ Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից էր: Նրան հանձնեցին մարդպետության իշխանին, որի անունն էր Հայր<sup>43</sup>. նրա հետ դրին ավագներից Գարդմանաձորի իշխանին և ուրիշ տասը նախարար ու նրան ուղևորեցին մեծ հանդեսով Գամրաց երկիրը, կեսարիա մեծ քաղաքը: Այնտեղ Շահակին ձեռնադրեցին Մեծ Հայքի կաթողիկոս և պատվով վերադարձան թագավորի մոտ:

Եվ Շահակը ժառանգեց հայրապետների տեղը. սա էլ Փառենին նմանվեց իր վարքով. նրա օրինակով էր սա առաջնորդում աշխարհը: Բայց որոնց որ նա հովվում էր, չէին լսում նրա ճշմարիտ խրատներին, այլ հանդիմանվելիս էլ՝ բացեիքաց ու համարձակ գործում էին իրենց մեղքերը, առանց վախի կատարում էին ամեն տեսակ շարիքներ, մոռանալով (տիրոջը) և նրա պատվիրանները— առհասարակ՝ թագավորը, նախարարներն ու իշխանները: Նրանցից էլ՝ ավելի վատ էին մյուս մարդիկ, որոնք ամբարշտացած էին մարդկանց նկատմամբ և իրենց հայրերի առաջին հին գործերին դարձան. մեծերից մինչ փոքրերը անձնատուր էին եղել այս բանին: Այս բոլորի համար աստված բարկանալով նրանցից երես դարձրեց, նրանց ոտքի կոխան դարձրեց նրանց զեմ դուրս եկած թշնամիներին: Որովհետև Տրդատի թագավորության ժամանա-

կից ի վեր տիրոջը ճանաչելուց հետո (աստված) խաղաղություն պարգևեց, նրանց շրջապատող թշնամիներին լռեցրեց, նրանց սահմաններից պատերազմները հեռացրեց, և ոչ ոքի հետ նրանք խոռվության կամ թշնամության գործ չունեցան ու ապրում էին կատարյալ խաղաղության մեջ: Իսկ այն ժամանակ տերը զրգոթյուն առաջացրեց նրանց բոլոր սահմաններում, զորացրեց նրանց թշնամիներին, և ոչ մեկը ուրիշ ազգերի թագավորներից<sup>44</sup> նրանց բարեկամ չէր, այլ բոլորը թշնամի էին:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Է

ՀԱՅՐ ՄԱՐԳՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿՈՏՈՐԵԼ ԷՐ ՏԱԼԻՍ  
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏՈՂՄԵՐԸ:

Բայց այս անմիտ թագավորության ժամանակ ոչ միայն թշնամիները թշնամիներին, այլ նաև բարեկամները բարեկամներին, ընկերները ընկերներին դավաճանում ու մատնում էին Հայոց աշխարհում և տեսակ-տեսակ թշնամություններ էին անում միմյանց նկատմամբ: Որովհետև տիրոջից նրանց մեջ խոռվություն ընկավ, զիղծ դև ու մոլորության ոգի (հայտնվեցին), նրանք մեկը մյուսին քանդեցին ու ավերեցին իրենց անօրինության պատճառով: Բայց բոլորից գերազանցում էր մի անօրեն, սատանայաբարո մարդ, որ Տիրան թագավորին զրգոում էր մանավանդ նախարարական տոհմերի դեմ, այսինքն՝ մեծ մարդպետության պատիվը կրող ներքինին, մի շարասիրտ, շարամիտ, շարագործ մարդ, որին Հայր էին ասում: Նա մատնությամբ շատ նախարարներ կոտորել տվեց առանց որևէ հանցանքի և մեծ թագավորության կարգը խաթուխեց. Մանավանդ նա իր շարախոսությամբ սրի քաշել տվեց ու միաժամանակ անզավակ դարձրեց երկու ավագ տոհմեր՝ Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերը, որոնց առանց որևէ մեղքի ու հանցանքի մեջտեղից վերացրին, նույնիսկ տոհմերի էգերին կոտորեցին: Այն ժամանակ երկու երեխա գտան, որոնք փախել ապաստանել էին դայակների մոտ — Մեհհնդակ Ռշտունու որդուն՝ Տաճատին, և Արծրունի

Վաչեի որդուն՝ Շավասպին, որոնք ծծկեր երեխաներ էին: Նրանց բերին թագավորի մոտ: Նա երբ տեսավ երեխաներին, հրամայեց մորթել, որովհետև միայն նրանք էին մնացել այդ երկու տոհմերից շառավիղներ: Այդտեղ պատահեցին Արտավազը և Վասակը՝ Մամիկոնյան տոհմի մարդիկ, որոնք Հայոց բոլոր զորքերի զորավարներն էին: Նրանք վեր կացան, ընկան երեխաների վրա, ամեն մեկը մի երեխա թևի տակ առնելով դուրս եկան, զենքերը հանած, երեխաների համար մեռնելու պատրաստ: Որովհետև թեպետ նրանք խնամում էին թագավորի որդուն՝ Արշակին, բայց այդ ժամանակվա գործերից զայրանալով՝ թողին իրենց Արշակ սանին և արքունական բանակից հեռացան: Նրանք գնացին իրենց երկիրը՝ Տայքի ամրոցները և այնտեղ մնացին իրենց ընտանիքների հետ բավական տարիներ, իրենց մյուս կալվածքները թողնելով: Այնտեղ նրանք խնամում էին այն երկու երեխաներին՝ Շավասպին ու Տաճատին, և (հետո) նրանց կնություն տվին իրենց աղջիկները, որից այդ տոհմերը նորից բազմացան: Նրանք երկար տարիներ Հայոց գործերին չէին խառնըվում:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ՀՈՒՍԻԿԻ ՈՐԴԻՆԵՐԻ՝ ՊԱԿՆ ԵՎ ԱԹԱՆԱԳԻՆԵՍԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆՑ ԱՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆՎԵՑԻՆ:

Իսկ Հուսիկի որդիները՝ Պապն ու Աթանագինեսը, իրենց կյանքը վարեցին աստվածատեցությամբ. շրջում էին անօրինությունյամբ և ամբարտավանությունյամբ: Նրանք ամբողջ կյանքի ընթացքում սաստիկ հանդուգն էին, աստծուց երկյուղ չունեին, կյանք էին վարում մեծ անառակությունյամբ և ցոփությունյամբ, աստվածային կարգերն արհամարհում ու ծաղրում էին:

Նրանք Տարոնի երկրումն էին, եկեղեցու ավան Աշտիշատում, որտեղ նրանց պապ Գրիգորը շինեց առաջին եկեղեցին: Երկու եղբայրները՝ Պապն ու Աթանագինեսը, գնացին հասան այն գյուղը: Սաստիկ հարբելով՝ նրանք ծաղրում էին

աստծու տաճարը, երկուսով գնում մտնում էին այնտեղ գրտա նրվող եպիսկոպոսանոցը, այնտեղ գինի էին խմում բոգերի, վարձակների, գուսանների և կատակաբանների հետ, սուրբ ու նվիրական տեղերը արհամարհելով ոտնակոխ էին անում:

Երբ նրանք եպիսկոպոսանոցում նստած ուտում խմում էին, ուրախություն էին անում, հանկարծ երևաց տիրոջ հրեշտակը փայլակի նման և երկու եղբայրներին միասին խփեց սպանեց նստած տեղերում: Իսկ մյուս մարդիկ, որ այնտեղ էին, նրանց հետ նստած սեղանակից և ուրախակից էին, բոլորը թողին ու փախան, դուրս եկան սենյակից: Եվ այնքան մեծ էր հաշը, որ նրանցից ոչ մեկն էլ ետ չդարձավ, ոչ մի մարդ չհամարձակվեց նրանց մտաբերել ու ներս մտնել, ոչ ոք դռանը չմոտեցավ, դուռը չդրեց: Նրանց փախչելիս դուռը բաց մնաց, և այնուհետև էլ ոչ ոք չէր համարձակվում դռների մոտով անցնել:

Այս կերպով սպանվեցին այն երկու եղբայրները՝ Պապն ու Աթանագինեսը, նրանք եպիսկոպոսանոցում ճաշի սեղանի տակ ընկած մնացին: Տաճարի դռները բաց էին մնացել, և ոչ ոք չէր համարձակվում մոտենալ, մինչև նրանց մարմինները նեխվեցին, քայքայվեցին, անդամ-անդամ լուծվեցին, ոսկորները ցրվեցին: Այս դեպքից շատ ամիսներ անցան, ապա սիրտ արին, ներս մտան՝ հավաքելու և այնտեղից դուրս հանելու նրանց ոսկորները, որ ցամաքել չորացել էին: Նրանց հանեցին (ու թաղեցին) եկեղեցու այգում, որ Ագարակ էր կոչվում:

Բայց Աթանագինեսին մնաց մի որդի Բամբիշ (կնոջից), որ թագավորի բույրն էր. նրա անունն էր Ներսես, որ հետո ամբողջ Հայաստանի հայրապետական աթոռը նստեց: Իսկ Պապը իսկական կնոջից որդի չունեցավ, բայց նա մի հարձ ունեի Տարոն գավառի կարճագատների<sup>45</sup> Հացյաց գյուղից, և այս հացեկացի հարձից մնաց մի որդի, որի անունն էր Վրիկ<sup>45</sup>:

Գ յ ու խ Ի

ՏԻՐԱՆ ԲԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՏԱՎԵՑ ԻՐ  
ՍԵՆԵԿԱՊԵՏ ՓԻՍԱԿ ՍՅՈՒՆՈՒ ԶԵՆՔՈՎ, ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԶՅԵՑ ԳԵՐԻ  
ԲՈՒՎԵՑ ՈՒ ԿՈՐԱՎ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՄԲՈՂՋ ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ ԷՆ  
ՆՐԱ ՀԵՏ ԳԵՐՎԵՑ:

Բայց դեռ բարեկամություն էր տիրում երկու թագավորների՝ Հայոց և Պարսից միջև: Այս ժամանակ Ատրպատականում նստում էր մի բարձր պաշտոնյա, որի անունն էր Շապուհ-Վարազ: Արդ՝ մինչ կատարյալ խաղաղություն էր տիրում երկու թագավորների միջև, տիրոջ կամքով մի շնչին բանի պատճառով խոռվություն ծագեց մի անարգ մարդու ձեռքով, որ մոլորությունը դեկից պակաս չէր, անունը Փիսակ, որը Տիրան թագավորի սենեկապետն էր՝ Սյունյաց տոհմից: Սա պատվիրակ էր գնացել Վարազ-Շապուհի մոտ, որին Պարսից թագավորը սահմանապահ էր թողել Ատրպատականում:

Այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը գարմանում էին: Այդ ձին մուգ-շագանակագույն և պուտպուտիկ<sup>46</sup> էր, ուժով լի, հոյակապ, հռչակված, բոլոր ձիերից մեծ և բարձր, տեսքով բոլորից գեղեցիկ ու սիրուն, որի նման ուրիշը չկար: Փիսակը՝ թագավորի սենեկապետը, պատվիրակ գնալիս այս ձին մատնեց Վարազին, որի հետ բարեկամացել էր, և նրանից թուղթ առնելով՝ բերեց մատուցեց Հայոց թագավորին: Դրան համաձայն շինելով՝ թագավորը շկամեցավ (ձին) տալ: Բայց որովհետև այն մարդուց կասկածում էր, միգուցե երկու թագավորների միջև խռովություն առաջացնի, որոնեց և գտավ այն գուլնի մի ձի, նույն նշանով, նույն տեսքով, բացի մեծությունից, — որովհետև այնպիսի մեծությունը ուրիշ տեղ չկար, — նույն տեսակ պուտպուտիկ, մուգ-շագանակագույն, և հրովարտակով ու բնծանրով Ատրպատականի եշխանին՝ Վարազին ուղարկեց նույն մոլի Փիսակի ձեռքով: Նրան խրատում ու խորհուրդ էր տալիս, թե «այս, այս այն ձին է, որ խնդրեցիր. քո սիրո համար քեզ շինայեց»: Իսկ նա երբ Վարազի մոտ հասավ, խնայելու գաղտնիքը բացեց և ջանաց գրգռել՝ շկամենալով ազատվել իր

նենգախոսությունից. նա ավելի սրեց իր շարախոսությունը, ասելով. «Հայոց Տիրան թագավորը այնքան լցված է նախանձով, չկամություն, թշնամություն և ատելություն, այնքան անհավատարիմ և աներկյուղ է Պարսից թագավորի և Պարսից բոլոր զորքերի նկատմամբ, որ մինչև իսկ մի կաշի խնայեց ու թաքցրեց և քեզ խաբելով ու ծաղրելով՝ մի ուրիշ ձի քեզ ուղարկեց իմ ձեռքով: Եվ միայն այս չէ, — ասում էր նա, — նա հույս է դրել կայսեր ու նրա զորքի վրա, մտազրվել է Սասանի գեղից խլել Պարսից թագավորությունը, որովհետև, ասում է, այդ տերությունը մերն է եղել և մեր հայրերինը. ես, ասում է, չեմ հանգստանա, մինչև մեր նախնի հայրերի պատիվը ետ չդառնա, մինչև նախնի թագավորությունը նորից չդարձնեմ հայրենի գավառներին, այսինքն իմ տոհմին, իմ տանը և ինձ»: Այս և այսպիսի խոսքերով անօրեն Փիսակը գրգռում էր Վարազին իր բնիկ տիրոջ դեմ, իր թագավորի համար մահ էր նյութում:

Երբ Վարազ-Շապուհը՝ Ատրպատականի մարզպանը, այս բոլորը լսեց կատաղախոս, շնաբերան Փիսակից, անմիջապես ամբաստանության թուղթ գրեց Հայոց թագավորի մասին և ուղարկեց Պարսից ներսեհ թագավորին: Եվ այն աստիճան Պարսից թագավորին գրգռեց, զայրացրեց, դրդեց, շարացրեց, բարկացրեց Հայոց թագավորի դեմ, որ նրանից հրաման ստացավ, թե արդյոք հնար չկա՞ որևէ միջոց որոնել ու գտնել Հայոց թագավորին մեքենայությունը գայթակղելու, որսալու և բռնելու: Եվ մինչ երկու թագավորների միջև խաղաղություն էր տիրում, աստված բարկանալով՝ վրեժ գրգռեց, որպեսզի անօրեն Տիրանից վրեժ լուծվի երկու մեծ բահանաների ու առաջնորդների անմեղ մահվան և արյան համար:

Այն ժամանակ Վարազը պատվիրակ ուղարկեց Հայոց թագավորի մոտ՝ հաշտության և խաղաղության պատրվակով խոսելու նրա հետ: Նա սերն ու կարոտը պատճառ բերելով՝ թույլտվություն էր խնդրում նրան այցելության գալու: Երբ Հայոց Տիրան թագավորն այս լսեց, փութով, մեծ ուրախությամբ հրամայեց հրավիրել նրան: Դեռ նա շեկած՝ թագավորը իր սենյակի ներքին սպասավորների հետ խորհուրդ էր

անում: նա ասում էր. «Մեզ մոտ եկող հյուրին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխումով ու ամեն տեսակ վայելչություններով: Բայց պետք չէ, որ նա այստեղ մեր երկրում առատ որսի տեղեր տեսնի, որովհետև Պարսից ազգը շարասիրտ, նախանձոտ, շարաբարո, նենգ է. այլ պետք է գտնել որսով ոչ հարուստ տեղեր, որով նրան զվարճացնենք, բայց առատ որս չանենք, որսի մեծ կոտորածներ չանենք ցուլցի համար. միայն ձևի համար անենք՝ պարսիկների դառնության և շարության պատճառով: Ապահունյաց երկրում Մեծ Աստիս ստորադուր որս անենք, այնտեղ, որի անունը կոչվում է Ադիոսք քաղաք»<sup>47</sup>:

Շապուհ-Վարազը եկավ հասավ երեք հազար մարդով, ներկայացավ թագավորին Ապահունյաց երկրում և մեծ պատվով նրանից մեծարվեց: Իսկ այն խոսքերը, որ թագավորը որսի մասին ասաց, անմիջապես Պարսից զորավարի ականջին հասան այն քուռ և բանասարկու, այն տիրանենգ ու տիրադրուժ, տիրասպան ու տիրամատնիչ Փիսակի, այն աշխարհավեր մարդու բերանով:

Մակավ օրեր նրանք միասին ուրախություն էին անում, բայց Պարսից իշխանը իր մեջ ունեցած թշնամությունը խորամանկությամբ ծածուկ էր պահում և հարմար առիթի էր սպասում, որ դավը գլուխ բերի:

Դեպքն այնպես բերեց, որ այդ ժամանակները զորավարներն այնտեղ չէին, այլ խոռովել հեռացել էին<sup>48</sup>, այսպես էլ մյուս ազատանին, մեծամեծ նախարարներն ու ավագ տանուտերերը. նույնպես էլ արքունական զորքերը իրենց տնեում, իրենց կացարաններում հանգստանում էին: Թագավորի մոտ ուրիշ մարդ չէր մնացել, ոչ հետևակազոր և ոչ այրուձի, բայց միայն սակավաթիվ սպասավորներ, որսորդական շների պահապաններ, ճանապարհների մշակներ, վրանապահ, խառնիճաղանջ զինվորներ և աշխարհազոր: Այնտեղ էին նաև տիկիներ և արքայորդին՝ մանկահասակ Արշակը: Այսպես, քիչ մարդիկ կային այնտեղ այդ ժամանակ. որովհետև թեպետ տեսնում էր, որ Պարսից զորավարը ուժեղ զենքով է եկել, — որովհետև երեք հազար լավ սպառազինված մարդիկ կային նրա հետ, — բայց չէր զգուշանում ու կասկա-

ծում, քանի որ տեսնում էր, թե նա խաղաղության համար է եկել մեծ նվերներով, ընծաներով և շքեղ մեծարանքներով:

Ոչ շատ օրեր անցնելուց հետո թագավորին ընթրիքի հրավիրեցին՝ նրան պատվելու համար: Երբ խմելն սկսեցին, թագավորը և նրա հետ եղողները սաստիկ հարբեցին, և այս ժամանակ դարանակալ զորքը անսպասելի կերպով, հանկարծակի հարձակվելով սեղանակիցների վրա՝ յուրաքանչյուրին առանձին բռնեցին, իսկ վահանավորներն ու տապարավորները Տիրան թագավորին շրջապատեցին: Բռնելով, նրա ոտքերն ու ձեռքերը կապեցին երկաթե շղթաներով. ամբողջ բանակը, ինչ որ գտան, ավար առան: Թագավորի գանձերը, գուլքը, կինը, որդիները, ինչ որ բանակում գտան, Ապահունյաց երկրից տարան:

Նկան հասան մի գյուղ, որին ասում էին Դայարիք: Երբ Պարսից զորավարը եկավ Դայարիք գյուղը մտավ, իր հետ տանում էր կապված Տիրան թագավորին: Եվ վարազն ասաց. «Ապա ածուխ գտեք, որով երկաթ շիկացնենք, որ Հայոց այս թագավորի աչքերը դաղենք»: Իսկույն ածուխ բերին և Տիրանի աչքերը դաղեցին: Այն ժամանակ Տիրանը խոսեց ու ասաց. «Փոխանակ որ իմ զույգ լուսավոր աչքերը այս տեղում խավարեցին՝ թող այսուհետև Դայարիքի փոխարեն Ածուխ կոչվի սա հավիտյան, և այս հայտնի նշանը մնա ինձ հիշատակ. բայց ես միտքս բերի և գիտեմ, որ իմ գործած շարիքների ու մեղքերի վրեժը ինձանից պահանջվեց, որովհետև ես այս աշխարհը, որում թագավորում էի, խավարեցրի՝ երկու լուսատու ուսուցիչներից (զրկելով) և կարծում էի, թե ճշմարիտ վարդապետության երկու հավատարիմ քարոզիչների լույսը կհանգցնեմ. այս պատճառով էլ իմ աչքերի լույսը խավարեց»:

Այնուհետև Պարսից թագավորի իշխանը ամենայն շտապով Ածուխ գյուղից մեկնեց, հետև առնելով Տիրան թագավորին և ամբողջ գերությունը, փութով գնաց հասավ Պարսից աշխարհը և գնաց Ասորեստան<sup>49</sup>, իր տիրոջ՝ Պարսից թագավորի մոտ:

Հանկարծակի վրա հասած այս շարիքի ու թշվառության՝ այս կործանման գուլժը լսելի եղավ: Հավաքվեցին նախարար-

ներն ու իշխանները, գործակալներն ու գորագույնները, պետերը, երկրի բոլոր տեղերից հավաքված մեծ բազմություն:  
Նրանք թեև հավաքվեցին, զորք կազմեցին, պատրաստու-  
թյամբ հետամուտ եղան Վարացին, բայց չկարողացան հաս-  
նել: Բայց և այնպես հասան, Պարսից աշխարհի մի կողմը  
գրավեցին, մարդկանց առհասարակ կոտորեցին, աշխարհը  
այրեցին ու ավարեցին: Մի տեղ հավաքվելով՝ կոծում, սգում  
ու ողբում էին իրենց բնիկ տիրոջը՝ Հայոց թագավորին, ինչ-  
պես և աշխարհի կորուստն ու իրենց անտիրական մնալն ու  
կործանվելը. աղիողորմ կերպով լալիս էին:

### Փ լ ու ի ի Ա

Թ Ե Չ Պ Ե Ս Հ Ա Յ Ո Յ Բ Ո Ւ Ր Լ Ա Խ Ա Ր Ա Ր Ե Ն Ը Հ Ա Վ Ա Ք Վ Ե Ց Ի Ն Ե Վ  
Մ Ի Ա Ք Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Մ Բ Գ Ե Ա Ց Ի Ն, Հ Ո Ւ Ն Ա Ց Բ Ա Գ Ա Վ Ո Ր Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն  
Բ Ե Ր Ի Ն Ի Բ Ե Ն Ց Ծ Գ Ե Ա Կ Ա Ն, Ե Վ Ի Ն Չ Պ Ե Ս Պ Ա Ր Մ Ի Ց Բ Ա Գ Ա Վ Ո Ր Ը  
Մ Ե Ց Զ Ո Ր Ք Ո Վ Ե Կ Ա Վ, Մ Ի Ա Ջ Ի Զ Ո Ղ Պ Ր Ե Ց Փ Ա Խ Ա Վ  
Պ Ա Ր Մ Ի Ց Ա Շ Խ Ա Ր Ը:

Այնուհետև ավելի մեծ միաբանություններ հավաքվեցին  
Հայոց աշխարհի մարդիկ—մեծամեծ նախարարները, ավագ-  
ները, կուսակալները, երկրի տերերը, ազնվականները, գո-  
րագույնները, դատավորները, պետերը, իշխանները, բացի  
գորավարներից, նույնիսկ ուսմիկ շինական մարդիկ: Սկսե-  
ցին իրար հետ խոսել և ասում էին. «Այս ի՛նչ է մեր արածը,  
նստել սուգ ենք անում. թշնամիները սրանից կօգտվեն. շատ  
չանցած՝ էլի մեր երկիրը կարշավեն: Եկեք, մենք մեզ մխի-  
թարենք, մեզ ու մեր երկրին տեր կանգնենք և մեր բնիկ տի-  
րոջ համար վրեժխնդիր լինենք»: Այսպես երկրի բոլոր մար-  
դիկ հավաքվելով մի մտքի եկան, միաբանվեցին, որ իրենց  
համար օգնություն ու թիկունք գտնեն:

Այն ժամանակ Հայոց ավագանին մեծ նախարարներից  
(բաղկացած պատգամավորություն) ուղարկեց Հունաց թա-  
գավորի մոտ նվերներով (առաջարկելով), որ նրան ձեռք  
մեկնեն և հնազանդությամբ նրան ծառայեն. իսկ նա իրենց  
թիկունք լինի և օգնի վրեժխնդիր լինելու թշնամիներից:  
Ուղարկեցին Սյունյաց Անդովկ նահապետին և Արշարունյաց

նահապետ Արշավիր Կամսարականին: Սրանք գնացին հա-  
սան Հունաց աշխարհը, կայսերական պալատը, հանձնեցին  
հրովարտակը, բերած նվերները առաջ բերին և թագավորին  
ներկայացրին ամբողջ ժողովրդի խնդրանքը: Կայսրը բոլոր  
հանգամանքները լսելով՝ մեծ փութով ու պատրաստությամբ  
ձեռնարկեց գործին վերահասու լինելու և թիկունք ու օգնա-  
կան լինելու Հայոց աշխարհին, մանավանդ որ հիշում էր այն  
գաշինքը՝ երդումով կնքված ու հաստատված կոստանդիանոս  
կայսեր և Տրդատ թագավորի միջև:

Եվ մինչ դեսպանները, որոնք Հայոց աշխարհից կայսե-  
րական պալատն էին գնացել, դեռ չէին դարձել իրենց աշ-  
խարհը, արևելքի կողմից ինքը՝ Պարսից ներսեհ թագավորը,  
շարժվեց ու եկավ, որ Հայոց աշխարհը գրավի, այրի, ավե-  
րի, ամբողջապես փշացնի և ամբողջ սահմաններով իր երկ-  
րին կցի: Նա եկավ իր բոլոր զորքով, բոլոր աղխով, մեծ կա-  
րավանով, բազմաթիվ փղերով, անշափ մթերքներով, բուն  
մաշկապաճյանով<sup>50</sup>, բոլոր կանանցով և տիկնանց տիկիներով.  
եկավ մտավ Հայաստանի սահմանները, ամբողջ աշխարհը  
բռնեց: Այս ժամանակ Հայոց նախարարների ազնվական զոր-  
քերն իրենց ընտանիքներն առնելով փախչում էին Հունաց  
կողմերը, գուժում էին (այս լուրը) կայսերական բազմա-  
գունդ բանակի նախարարներին: Հունաց թագավորը երբ այս  
բոլորը լսեց, ապա ինքն էլ իր զորքը գումարեց և շարժվեց,  
եկավ Հայոց աշխարհը՝ Պարսից թագավորի դեմ:

Նա բանակը թողեց Սատաղ<sup>51</sup> քաղաքի մոտերը. ինքն  
ընտրեց հայկական բանակից երկու գլխավոր խելոք մարդ,  
այսինքն Արշավիրին և Անդովկին, որոնք իբրև պատվիրակ-  
ներ նրա մոտ էին գնացել առաջ: Նրանց հետ միասին ինքը՝  
կայսրը, շինականի կերպարանքով, իբրև կաղամբավաճառ  
մտավ Պարսից բանակը, որ այդ ժամանակ գտնվում էր Բաս-  
յան գավառում, Ոսխա կոչված գյուղում: Նրանք մտան Պար-  
սից թագավորի բանակը, դիտեցին, քննեցին, նրանց զորքե-  
րի զորության չափն առան և այստեղից դարձան իրենց բա-  
նակը: Կազմակերպվեցին, պատրաստվեցին, վրա հարձակ-  
վեցին և գտան Պարսից բանակը նույն տեղում բանակած՝  
մեղկ, անհոգ, միամիտ, աներկյուղ խաղաղություն: Ցերն-

կով նրանք հարձակվեցին Պարսից թագավորի վրա, ամբողջ բանակը սրի քաշեցին, ոչ մեկին կենդանի չթողին: Բանակը կողոպտեցին, ավար առան, բռնեցին թագավորի կանանց ու Բամբելչին (տիկնանց տիկին) և նրանց հետ տիկիններին<sup>52</sup>, նրանց բոլոր գույքն ու ստացվածքները, գանձերը, պաշարեղենը, սարքը կանանց հետ միասին գերի վերցրին: Միայն թագավորը հազիվհազ պրծնելով մի առաջընթաց ձիավոր սուրհանդակով փախավ, հազիվ կարողացավ իր աշխարհն ընկնել: Իսկ կայսրը մեծ շքեղությամբ պերճացած երևաց բանակում. բոլոր շափահասներին կոտորեցին, իսկ մնացածներին գերի տարան Հունաց երկիրը: Իսկ (Հայոց) աշխարհի վրա վերակացու թողեց երկու իշխաններին՝ Անդովկին և Արշավիրին, որոնց մեծ պարգևներով մեծարեց. և նրանց հանձնելով բոլոր իշխաններին ու երկիրը՝ ինքը վերադարձավ Հունաստան՝ իր երկիրը:

Իսկ Պարսից թագավորը փախավ գնաց իր երկիրը: Երբ այնտեղ հասավ, իր մոտ հավաքեց իր իշխանության մեջ մնացածներին, սկսեց քննություն ու հարցուփորձ անել: Խորհուրդ արեց, հրամայեց նորից քննել, իմանալ և հայտնել, թե որտեղից սկիզբ առավ այս պատերազմը: Այն ժամանակ հանգամանքները բացվեցին և հայտնի դարձավ, որ մի շնչին բանից, մի վատթար շարախոսությունից է ծագել, այն մոլի Շապուհ-Վարազը այդ խռովությունը հարուցել է մի ձիու պատճառով: Ուստի հրաման տվեց՝ պատիվը նրանից առնել, պատվական պատմուճանը վրայից հանել և մեծամեծ շարշարանքների ենթարկել Վարազին: Եվ ըստ պարսկական սովորության՝ հրամայեց նրա մորթը հանել, խոտով լցնել ու հրապարակում կանգնեցնել նախատինքի համար: Ինքն էլ եղածի վրա զոջալով՝ պատվական իշխաններ էր ուղարկում (կայսեր մոտ) հաշտության մասին (բանակցելու), գերիները հետ դարձնելու համար. աղաչավորներ էր ուղարկում կայսեր հետ խաղաղության ու հաշտության մասին բանակցելու, որ գոնե իր կանանց գերությունից արձակի և խայտառակությունն ու նախատինքը վերացնի:

Այն ժամանակ Հունաց Վաղես թագավորը հրովարտակ գրեց<sup>53</sup> Պարսից թագավորին. «Ենթա դու,— ասում է,— ետ

դարձրու Հայոց աշխարհից տարածդ գերիները, Տիրան թագավորով հանդերձ, և առհասարակ ինչ որ այնտեղից առել ես. երբ դու այս անես, ապա ես էլ ետ կդարձնեմ՝ ինչ որ առել եմ. ուրեմն առաջ դու նրանցից առածդ ավարը վերադարձրու, ապա ես քոնը կվերադարձնեմ»:

Պարսից թագավորը երբ այս հրամանը լսեց, իսկույն նրա ասածները կատարեց. կապված Տիրանին բանտից ու կանանքներից արձակեց. քաղցրությամբ խոսեց հետը, թե նրան կրկին կթագավորեցնի և պատվով իր աշխարհը կուղարկի: Իսկ Տիրանը պատասխանեց, թե «Ինձ կույր տեղովս, անօգուտ, անպատշաճ, նույնիսկ անկարելի է թագավորություն անել. իմ փոխարեն թագավորեցրու իմ որդուն՝ Արշակին»:

Այն ժամանակ (Պարսից թագավորը) նրա Արշակ որդուն թագավորեցնում է Հայոց աշխարհի վրա և թագավորի կանանց ու մյուս բոլոր գերիներին, գանձերով, ընծաներով, ստացվածքներով հանդերձ, առհասարակ գերությունից ետ է դարձնում. իրեն՝ Տիրան թագավորին էլ Պարսից թագավորը մեծ պատրաստությամբ ու պատվով իր երկրից ուղարկեց Հայոց աշխարհը: Այսպես նա հավատարմությամբ կատարեց Հունաց թագավորի հրամայածները: Երբ նրանց բոլորին Հայաստան ուղարկեց, ապա Հունաց թագավորի կողմից իր մոտ եկած պատվիրակներին էլ արձակեց, որպեսզի գնան, Հունաց թագավորին պատմեն, թե ինչպե՛ս ինքը կատարեց Հունաց թագավորի հրամանները, որպեսզի Հունաց թագավորն էլ վերադարձնի Պարսից թագավորի գերիներին, որ տարել էր:

Երբ Հունաց թագավորը լսեց, թե Պարսից թագավորը լիովին կատարեց իր տված հրամանները և Հայաստանի գերիներին ու Տիրան թագավորին ազատ արձակեց, գոհացավ. ապա ինքն էլ՝ Հունաց թագավորը, Պարսից թագավորի գերիներին ազատ արձակեց և Պարսից թագավորի կանանց կարգով-սարքով ու մեծ պատվով, բոլոր գերիներին էլ նրանց հետ Հունաց աշխարհից վերադարձրեց Պարսից աշխարհը ու բարեհաջող ուղարկեց իրենց թագավորի մոտ:

Ավարտվեց երրորդ մասը՝<sup>54</sup> Բաբելոնի գլուխ պատմություններ Փավստոս Բուզանդ մեծ ժամանակագիր պատմագրի, որ Հունաց ժամանակագիր էր:

8 Բուզանդ — Պատմություն հայոց

**ԲՈՒՋԱՆԳԻ ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ**

**Յ Ա Ն Կ Զ Ո Ր Ր Ո Ր Դ Դ Պ Ր ՈՒ Թ Յ Ա Ն**

**Ինչ որ ստեղծ էմ, պատմական գրույցների շարքեր55:**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՄ**

Ա. Քե ինչպե՛ս պատերազմներից և մեծ շփոթություններից հետո Պարսից Ներսէ՛ս թագավորը թագավորեցրեց Տիրանի Արշակ որդուն և ինչպե՛ս նրան ուզարկեց Հայոց աշխարհը իր հայր Տիրանի ու բոլոր գերիներէ հետ:

Բ. Հայոց աշխարհի շինանալու ու բարեկարգվելու, բարբառի, կարգ և կանոնի հաստատման, թագավորության նորոգելու և կարգավորելու մասին:

Գ. Սուրբ Ներսեսի մասին, թե որտեղից և ինչպե՛ս ընտրվեց՝ Մեծ Հայքի կաթողիկոս լինելու:

Դ. Քե ինչպե՛ս Ներսեսին առան տարան Կեսարիա և ինչպիսի՛ հրաշքներ եղան աստծուց:

Ե. Հայոց Ներսես կաթողիկոսի մասին, թե ինչպե՛ս նախարարների հետ Հայոց Արշակ թագավորից ուղարկվեց Ղունաց Վաղես թագավորի մատ, ինչպե՛ս նա աքսորվեց, և թե ինչպե՛ս (Վաղեսը) մյուս նախարարներին (այլ պատանգների հետ)56 նվերներով արձակեց Հայոց աշխարհը:

Զ. Քե ինչպե՛ս սուրբ Ներսեսն արքայովեց ու ամալի կղզին ձգվեց և թե ինչպե՛ս կերակրվեց, կամ ինչպե՛ս աստծուց հրաշքներ եղան ինչ տարի:

Է. Աստու հրաշքի մասին, որ երևաց Ներսեսի և Բարսիլիսոսի վրա, և թե ինչպե՛ս Ծվածբիոս եպիսկոպոսը նախանձու՞մ էր Բարսիլիսոսին:

Ը. Քե ինչպե՛ս Ղունաց թագավորը հայածնց բոլոր ուղղափառ հավատացյալներին, ինչպե՛ս կամեցավ վիճարանություն սարքել ճշմարիտ հավատացյալների և արքանոռայան մուրթ ազանդավորների միջև, կամ ինչպե՛ս աստու հրաշքով Բարսիլիսոսը կայսեր կողմից հրավիրվեց այս վիճա-

բանությանը և Եվսեբիոս եպիսկոպոսի ներկայութեամբ աթոռանին հաղթեց մեծ զորութեամբ. կամ ինչպե՛ս Կեսարիայի Եվսեբիոս եպիսկոպոսապետը վախճանվեց բանտում, իսկ Բարսիլիսոսը ազատ արձակվեց:

Ք. Քե ինչպե՛ս Բարսիլիսոսին Կեսարիայի եպիսկոպոսապետ ընտրեցին, և ի՛նչ հրաշքներ եղան աստծուց, կամ ինչպե՛ս թագավորը հրամայեց Քրիստոսի հավատացյալների ամբողջ ունեցվածքը հափշտակել, և ինչպե՛ս իրենց հավատի համար ուրախութեամբ դուրս էին բերում զոսերի մոտ ատալիս կամ ինչպե՛ս աղոթում էին աստծուն իրենց եպիսկոպոսների համար:

Ժ. Քե ինչպե՛ս Վաղես Կաջարը կանչում էր սովորեալն հանձանալու ճշմարիտ հավատի դեմ, կամ ինչպե՛ս սովիստը ածնավ հրաշքը, և Վաղես թագավորը սպանվեց եղած հրաշքով, և եկեղեցիները խաղաղության գտան:

ԺԱ. Իշխանների՝ Ղունաստանից Հայոց աշխարհը վերադառնալը, որոնք Հայոց Ներսես հայրապետի հետ գնացել էին Վաղես թագավորի մոտ, և էլի դարձան եկան Արշակ թագավորի մոտ, և թե ինչպե՛ս Հայոց Արշակ թագավորն ըմբոստանալով ասպետակեց ու վնասեց Ղունաց թագավորությանը:

ԺԲ. Բագրևանդի ևսաք եպիսկոպոսի մասին, որին Հայոց Ներսես հայրապետը իրեն տեղապահ էր թողել, ինչպիսի՛ մարդ էր նա, կամ ինչպիսի՛ հրաշքներ էր գործում, հասաատ մեռում էր ճշմարտության մեջ, չէր անհնաձում Հայոց Արշակ մեծ թագավորից, կամ ինչպե՛ս ընդդիմանում էր նրան՝ նրա անօրին գործերի պատճառով և որքան սիրում էր աղբատներին Հայոց Ներսես հայրապետի նման:

ԺԳ. Քե ինչպե՛ս Հայոց Ներսես սուրբ կաթողիկոսը ետ դարձավ Ղունաց աշխարհից, ինչպե՛ս հանդիմանում էր Հայոց Արշակ մեծ թագավորին, և ինչպե՛ս աստծուց հարգանքներ հասան Արշակավան տվանի վրա, և միանգամից կոտորվեց այնտեղ հալածված մարդկանց ամբողջ բազմությունը:

ԺԴ. Հայր մարգարեի մասին, որ եկավ իջավ Տարոն գավառը, Աշտիշատի աղոթատունը և ինչպե՛ս այնտեղից գնաց՝ իր բերանի խոսքերով դատապարտված և ինչպե՛ս մահապարտ դառնալով Մովսայ Արծրունուց սպանվեց:

ԺԵ. Արշակ թագավորի մասին, թե ինչպե՛ս Տրիթի շարխառութեամբ սպանեց իր Գնել եղբորորդուն, ինչպե՛ս կշտամբվեց ու հանդիմանվեց Ներսեսից՝ աստծու մարդուց, կամ ինչպե՛ս նույն Տրիթին էլ սպանեց, կամ ինչպե՛ս իրեն կին առավ սպանված Գնելի կնոջը, կամ ինչպե՛ս Արշակ թագավորը բացի այն կնոջից ուրիշ կին առավ՝ Ողոմբին անունով, որին բերել տվեց Ղունաց աշխարհից: Եվ ինչպե՛ս արքունական թահանա Մրշյանիկը, Փասանձձիի նենգավոր խորհրդով, սպանեց Ողոմբին՝ հազարդուսյան մեջ մահադեղ խառնելով:

ԺԶ. Քե ինչպե՛ս Պարսից թագավորը հրավիրեց Հայոց Արշակ թագավորին և ինչպե՛ս նրան մեծաբեց, կամ ինչպե՛ս Հայոց սպարապետ Վասակ

Մամիկոնյանն սպանեց Պարսից թագավորի ախոռի պետին: Կամ ինչպե՛ս  
Հայոց Արշակ թագավորը, ավետարանի վրա երդվելով, ուխտեց Պարսից  
թագավորին և սպա երդումը դրժելով, նրանից փախավ, և թե ինչպե՛ս այս  
պատճառով Շապուհը կոտորեց աստծու սպասավորներից յոթանասուն  
հոգու:

ԺԷ. Թե ինչպե՛ս Պարսից Շապուհ թագավորը հալածանքներ հարու-  
ցեց քրիստոնեական հավատի դեմ:՝

ԺԸ. Վարդանի մահը Արշակ թագավորից իր Վասակ եղբոր նենգու-  
թյամբ:

ԺԹ. Թե ինչպե՛ս Հայոց Արշակ թագավորը անմտաբար, հանդգնու-  
թյամբ, անխորհր կոտորում էր նախարարներին:

Ի. Թե ինչպե՛ս պատերազմը սաստկացավ Հունաց և Պարսից միջև, և  
ինչպե՛ս Հայոց Արշակ թագավորը օգնում է Պարսից թագավորին և սրա-  
ծամ Հունաց զորքերը, և թե ինչպե՛ս Անզոկ Սյունու ղավաճանությամբ  
Արշակը փախուստ տվեց Պարսից Շապուհ թագավորից:

ԻԱ. Թե ինչպե՛ս պատերազմ ծագեց Պարսից Շապուհ թագավորի և  
Հայոց Արշակ թագավորի միջև, և թե ինչպե՛ս հաղթեց Հայոց Արշակ թա-  
գավորը:

ԻԲ. Թե ինչպե՛ս սրանից հետո Հայոց աշխարհում երեք տեղ ճակա-  
ամարտ տեղի ունեցավ նույն ամսում, նույն օրը և նույն ժամին Պար-  
սից զորավարների հետ, և երեքումն էլ հաղթություն տարան հայերը:

ԻԳ. Մերոսման Արծրունու մասին, որ Հայոց Արշակ թագավորի դեմ  
ապստամբվելով Պարսից թագավորի կողմն անցավ ու ավելի ևս զրգուռ  
էր պատերազմները, ինչպե՛ս նա աստծուն ուրացավ և այնուհետև Հայոց  
աշխարհի խանգարիչն եղավ մինչև վերջ:

ԻԴ. Մերոսմանի մասին, թե ինչպե՛ս ապստամբվելով՝ Շապուհ թագա-  
վորին զրգուռ էր և հաճախակի պատերազմներ էր անում. թե ինչպե՛ս  
նա Պարսից Շապուհ թագավորին առաջնորդ դառնալով՝ ասպատակ զորք  
է բերում Հայոց աշխարհը, գերի է տանում Արշակունի թագավորների ու-  
կորները, և ինչպե՛ս Հայոց Վասակ զորավարը թշնամիներին հաղթեց ու  
գերիներին նրանցից ետ խլեց:

ԻԵ. Թե ինչպե՛ս Հայոց Արշակ թագավորը արշավեց Պարսից աշ-  
խարհը, Ատրպատական ավերեց, քարուքանդ արեց և գերեց Շապուհ  
թագավորի բանակը Թավրիզում:

ԻԶ. Վին պարսկի և չորս հարյուր հազար (զորքի) մասին, որ եկել  
էին պատերազմի ու Հայոց զորքերից պարտություն կրեցին:

ԻԷ. Պարսից Անդիկան զորավարի մասին, որ քառասուն բյուրով  
եկավ Հայաստան աշխարհն ավերելու, և թե ինչպե՛ս նրա դեմ դուրս եկավ  
Վասակ սպարապետը տասներկու բյուր հայկական զորքով ու կոտորեց  
Պարսիկ զորքերը իրենց զորավարի հետ միասին:

ԻԸ. Հազարավուխտի մասին, որ Պարսից նախարարներից մեկն էր,  
որին Շապուհ թագավորն ուղարկեց ութսուն բյուրով՝ Հայոց աշխարհը

կոտորելու, և թե ինչպե՛ս նրա դեմ դուրս եկավ Վասակը տասներեկ հա-  
զարով ու նրան զորքի հետ միասին շարդեց Աղձնիքի սահմաններում:

ԹԹ. Դեմայունը Վսեմականի մասին, որին Պարսից արքան իննսուն բյուր  
տասպարավոր զորքով ուղարկեց Հայոց Արշակ թագավորի վրա. նրա դեմ  
եկավ Հայոց Վասակ սպարապետը, հասավ, սպանեց նրան և զորքերը  
կոտորեց:

Լ. Վահրիճ Կահրիճի մասին, որ Պարսից թագավորի կողմից եկավ  
չորս հարյուր բյուրով և պատերազմեց Հայոց թագավորի հետ, և թե ինչ-  
պե՛ս նա մատնվեց Վասակ սպարապետի ձեռքը ու ինքն իր զորքի հետ  
Հայոց զորքի ձեռքն ընկավ:

Ա. Գուճանը Շապուհի մասին, որ շատ պարծեցավ Պարսից Շա-  
պուհ թագավորի առաջ և հարյուր հազար զորքով եկավ հասավ մինչև  
Հայաստան ու պարտություն կրելով դուրս շարվեց Հայոց աշխարհից:

ԼԲ. Գեհուկ նահապետի մասին, որ մեծ զորքով Պարսից Շապուհ  
թագավորի կողմից ուղարկվեց Հայոց Արշակ թագավորի դեմ, իսկ Հա-  
յոց Վասակ զորավարը շարդեց նրան իր զորքի հետ:

ԼԳ. Սուրեն Պահլավի մասին, որ Հայաստանի վրա եկավ. սա ևս  
պարտություն կրեց առաջինների նման:

ԼԴ. Ապական Վսեմականի մասին, որ անթիվ, անհամար զորքերով  
եկավ Հայոց աշխարհը պատերազմի. նա էլ առաջինների նման ձախող-  
վեց:

ԼԵ. Պարսից Զիկ պատվիրակապետի մասին, որ Պարսից Շապուհ  
թագավորի կողմից պատերազմի ուղարկվեց Հայաստանի դեմ բազմաթիվ  
զորքով. նա ևս առաջինների նման խորտակվեց:

ԼԶ. Սուրեն պարսկի մասին, որ Զիկից հետո նույնպես եկավ պա-  
տերազմի. նա էլ իր զորքի հետ Հայոց Վասակ սպարապետի ձեռքն ըն-  
կավ ու սպանվեց:

ԼԷ. Հրեշտգամի մասին, որ Պարսից թագավորի կողմից իննս և բյու-  
րով ուղարկվեց Հայաստանի վրա, այս անգամ ևս հաղթությունը մնաց  
հայերին:

ԼԸ. Ալանոզանի մասին, որ Պարսից թագավորի կողմից եկավ չորս  
հարյուր բյուրով՝ Հայոց թագավորի դեմ պատերազմելու, և թե ինչպե՛ս  
նա էլ պարտություն կրեց Վասակից:

ԼԹ. Բոյականի և քառասուն բյուր(զորքի) մասին, որոնց կոտորեց,  
չնչեց Հայոց Վասակ սպարապետը:

Խ. Վալական պարսկի մասին, որ Հայաստան եկավ տասներ բյու-  
րով և կամենում էր երկիրն ասպատակել ու ավարի ենթարկել. նրան էլ  
հաղթահարեց Հայոց Վասակ սպարապետը և նրա ամբողջ զորքը սրի ճա-  
րակ դարձրեց:

ԽԱ. Մշկանի և նրա երեսունհինգ բյուր(զորքի) մասին, որոնք արշա-  
վեցին Հայոց աշխարհը, և թե ինչպե՛ս կոտորվեցին Վասակից ու նրա  
զորքերից:



ԽԲ. Մարուհանի և Նրա վաճառն բյուր(զորքերի) մասին, թե ինչպիսիքն Գարսիստանից եկան Արշակ թագավորի վրա, և թե ինչպիսիքն նրանց զարկեց ու կոտորեց Վասակ զորավարը:

ԽԳ. Ձնդակապետի մասին, որ իննսուն բյուրով եկավ Հայոց աշխարհը. նրան զորքի հետ միասին ունշաքրեց Վասակը:

ԽԴ. Արշակի որդու մասին, որի անունն էր Պայ, թե ինչպիսիքն նա Փնկած օրդի ի վեր լի էր գեներով, թե ինչպիսիքն գեները հայտնի ձգեալով էին Նրա մոտ, որոնց հետ նա պղծութիւն էր գործում:

ԽԵ. Սակստան հանդերձապետի մասին, որ Պարսից Շապուհ թագավորի կողմից ուղարկվեց շորս հարյուր բյուրով. նրան ևս փախցրեց Վասակ զորավարը Հայոց զորքերով:

ԽԶ. Պարսից Շապուհան տակառապետի մասին, որ հինգ հարյուր բյուրով եկավ Հայոց աշխարհի վրա. Հայոց զորքերը նրանց էլ շարժեցին, աշխարհին:

ԽԷ. Մոգուց հանդերձապետի մասին, որ տասնութ բյուրով եկավ հասավ պատերազմ մղելու Հայոց թագավորի դեմ. սա էլ կործանվեց առաջինների նման:

ԽԸ. Պարսից համբարակապետի մասին, որ իննսուն բյուրով եկավ ու պատերազմեց Հայոց զորքի հետ և Սաղամասում կոտորվեց Հայոց զորքերից ու Վասակի բանակից:

ԽԹ. Մոկանի մասին, որ Պարսկաստանից քառասուն բյուրով եկավ Հայոց թագավորի հետ պատերազմելու և Մախազանում իր զորքերի հետ միասին կոտորվեց Հայոց գեղերից ու Վասակ զորավարից:

Մ. Թե ինչպիսիքն Հայոց թագավորությունը քանդվեց ու քայքայվեց: Ինչպիսիքն Հայոց շատ նախարարներ ապստամբվեցին Հայոց թագավորի դեմ և ձեռք մեկնեցին Պարսից Շապուհ թագավորին ու ինչպիսիքն հետո այս ու այն կողմ ցրվեցին, և Հայոց թագավորությունը մեծապես թուլացավ:

ՄԱ. Թե ինչպիսիքն աշխարհում մնացածները միաբան միասին հավաքվում էին իրենց ներսես հայրապետի մոտ և ինչպիսիքն նրա առաջ քաղաքում էին (Արշակ թագավորի դեմ) և նրանից ձեռք քաշեցին ու հրաժարվեցին:

ՄԲ. Պարսից թագավորի մասին, թե ինչպիսիքն այդ ժամանակ դադարեցրեց պատերազմը Հայոց Արշակ թագավորի դեմ և նենգութամբ իր մոտ կանչեց հաշտութեան համար:

ՄԳ. Թե ինչպիսիքն Պարսից Շապուհ թագավորը կրկին անգամ Հայոց Արշակ թագավորին կանչեց, և նա գնաց նրա մոտ ու միանգամայն կոտորվեց:

ՄԴ. Թե ինչպիսիքն Շապուհը վճուկներին, քավվեաներին և կախարհներին հարցնելով՝ հմայութամբ փորձում էր Արշակի միտքը և նրան պատժելու համար բանտարկեց Անհուշ քերդում և ինչպիսիքն հրամայեց շարաշար մահով սպանել Հայոց սպարապետին:

ՄԵ. Հայոց աշխարհի գերությունն ու հարվածները, Փառանքն ափի-

նոջ գերի տարվելը Պարսկաստան, Հայոց քաղաքների ավերումները և աշխարհի հիմնովին կործանվելը:

ՄԶ. Արտաշատ քաղաքի Զվիթ քահանայի նահատակությունը Պարսից աշխարհում:

ՄԷ. Զվիթի աղոթքը մահվան ժամանակ:

ՄԸ. Պարսից Շապուհ թագավորի Հայաստան գալը և Հայոց աշխարհի մնացած մարդկանց ամբողջովին կոտորելը:

ՄԹ. Մեհրուդանի և Վահանի մասին, թե ինչպիսիքն մնացին Հայոց աշխարհում: ու որքան շարիքներ գործեցին աշխարհում, և ինչպիսիքն Վահանն ու իր կինը սպանվեցին իրենց որդուց:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՇԵՆԱՆԱԼՈՒ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼՈՒ, ԱՄԵՆ ՏԵՂ  
ԽԱՎԱՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ, ՀԱՅՈՑ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈԳՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

**ՉՈՐՐՈՐԿԻ ԳՊՐՈՒԹՅՈՒՆ**

**ԹՈՐԳՈՄԻ ՈՐԿԻՆԵՐԻ ՏԱՆ՝ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԳՂՈՒՆՆԵՐ՝**

**Գ լ ու խ Ա**

Թե ինչպե՛ս ՊԱՏՄԱՂՄԵՐԻՑ ԵՎ ՄԵՄ ՇՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ  
ՊԱՐՄԻՑ ՆԵՐՍԵՀ ԹԱԳԱՎՈՐԸ ԹԱԳԱՎՈՐԵՑՐԵՑ ՏՈՐԱՆԻ ԱՐՇԱԿ ՈՐԿՈՒՆ  
ԵՎ ՈՐՎԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԻՐ ՀԱՅՐ ՏԻՐԱՆԻ  
ՈՒ ԲՈՂՈՐ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԵՑ:

Երբ հաշտութիւնը կայացավ, և կատարյալ խաղաղու-  
թիւն հաստատվեց Հունաց թագավորի ու Պարսից Ներ-  
սեհ թագավորի միջև, ապա սիրով համաձայնվեցին մեկը  
մյուսի կամքը կատարել, և Հունաց կայսրը հտ դարձրեց  
Պարսից թագավորի գերիներին: Ապա Պարսից Ներսեհ թա-  
գավորն էլ թագավորեցրեց Տիրանի Արշակ որդուն և նրա  
հոր, նրանց կանանց ու բոլոր գերիների հետ, նրանց ամբողջ  
գանձերով ու ստացվածքներով ուղարկեց մեծ փառքով: Ար-  
շակը՝ Մեծ Հայքի թագավորը, Ատորեստանում թագավոր  
դառնալով (այնտեղից)՝ իր հոր և բոլոր ընտանիքի հետ  
միասին եկավ հասավ Հայոց աշխարհը, երկրի ցրվածներին  
հավաքեց ու նրանց վրա թագավորեց:

Այն ժամանակ մեծ խաղաղութիւն հաստատվեց: Հայոց  
աշխարհի բոլոր մարդիկ, որոնք կորել էին, փախել ու թաք  
էին կացել, հավաքվեցին և ապահով ու խաղաղ ապրեցին  
Արշակ թագավորի հովանավորութեան տակ: Աշխարհն էլ եր-  
կու թագավորների միջև խաղաղվեց, բարեկարգվեց, կազմա-  
կերպվեց, և այնուհետև (մարդիկ) բնակվում էին խաղաղու-  
թյամբ, յուրաքանչյուրը վայելում էր իր ունեցվածքն ու  
արդյունքը:

Այն ժամանակ Արշակ թագավորը դուրս եկավ փնտրելու  
բայ Մամիկոնյան զորավարների տոհմը, մանավանդ որ նրանք  
իր դայակներն<sup>58</sup> ու սնուցողներն էին եղել: Գնաց, նրանց  
գտավ Տայքի ամուր վայրերում, իրենց աշխարհում.  
Նրանց սիրտն առավ ու հաշտեցրեց, որովհետև նրանք Տի-  
րանի խելագար<sup>59</sup> գործերի ժամանակից ի վեր պառակտվել,  
անջատվել էին Հայոց միաբանութիւնից և բոլոր գործե-  
րից: Թագավորը Վարդանին՝ ավագ եղբորը, նշանակեց նը-  
րանց ցեղի նահապետ, միջին եղբորը՝ Վասակին, իր դա-  
յակին, նշանակեց սպարապետ և զորավար պատերազմա-  
կան գործերում, նույնպես և կրտսերին նշանակեց զորապետ:  
Նույնպես և մյուս մեծամեծ նահապետները՝ զորքերն ըստ  
իրենց աստիճանների հաստատեց՝ ինչպես որ նախկին թա-  
գավորների ժամանակ<sup>60</sup> եղել էր: Մեծամեծներին էլ հնա-  
դանդութեան էր բերում, բոլորի զորքերը կողմերի վրա  
բաշխելով՝ Հայաստանի սահմանների վրա սահմանապահ  
էր նշանակում:

Եվ Հայաստան աշխարհի թագավորութիւնը նորոգվեց  
ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գա-  
հերում, գործակալներն իրենց աստիճաններում: Եվ առա-  
ջին գործակալ-հազարապետ նշանակեց շինականներին շե-  
նացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև ամբողջ երկրի  
հազարապետներ՝ հոգատարութեամբ խնամեն աշխարհա-  
շեն, աշխարհը կերակրող գյուղացիութեանը: Նույնպես և  
սպարապետութեան՝ զորավարութեան<sup>61</sup> գործում, ճակատ առ  
ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փա-  
ռավոր ու ազնվազգի, աղավաղի<sup>62</sup> գորշակներով, արծվի՝  
Վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախա-  
մարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ,  
պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյանների

ցեղից, բուն նախնայաց կարգերի համաձայն, որին երկինքը միշտ և հանապազ պարգևում էր հաղթութեան ու քաջութեան բարի անուն պատերազմական գործերում, և տվեց նրանց զորավարութեան իշխանություն Մեծ Հայքի բոլոր գործերի վրա: Այս ցեղերից զատ՝ խոնարհ աստիճանի գործակալներ որոնք թագավորի ներկայությամբ բարձրի վրա բազմում էին, պատիվները գլխներին, — շնաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերերին, յոկ միայն գործակալներ՝ ինք հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի հոտնկայս սպասավորության պաշտոնյաներից:

### Գ յ ու խ Գ

ՍՈՒՐԲ ԽՐՄԻՍԻՒՄ ՄԱՍԻՆ, ԲԵ ԻՆՉՊԵՍ ԵՎ ՈՐՏԵՂԻՑ ԷՐ  
ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐՊԵՍ՝ ՀԱՅՈՑ ԱՇՆԱՐՀԻ ԿԱՌՈՂԻԿՈՍ  
ԼԻՆԵԼՈՒ:

Ապա Արշակ թագավորի մոտ ժողովի գումարվեցին նախարարական շատ ցեղերի ու տոհմերի մեծամեծ նահապետները, զնդերի և զբռնակների տերերը, բոլոր սատրապները<sup>63</sup>, նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները: Ընդհանուր համաձայնությամբ խորհուրդ արին, որ հավաքվեն ու մըտածեն իրենց առաջնորդի մասին, թե ո՞վ է արժանավոր հայրապետական աթոռը նստելու և Քրիստոսի բանական հոտը հովվելու: Բոլոր ժողովականների մեջ այս միտքն ընդհանուր հավանություն գտավ, որ առաջնորդ ընտրեն Գրիգորի տան հետնորդներից, նրա սերնդից: Որովհետե բոլորն ասում էին թագավորին. «Ինչպես որ աստված նորոգեց ձեր թագավորությունը, պետք է նույնպես նրա սերնդից նորոգել հոգևոր նահապետությունը. երբ այդ աթոռը նորոգվի, — ասում էին, — ապա և պայծառ վարք ու բարքը կնորոգվի Հայոց աշխարհում»:

Ապա աշխարհաժողով բազմությունը հականե հանվածե հիշեց ներսեսին՝ Աթանազիոսի որդու՝ Հուսիկ քահանայապետի թոռանը, Վրթանեսի որդու, որ առաջին մեծ քա-

հանայապետ Գրիգորի որդին էր. նրա մոր անունն էր Բամբիշ, որ Տիրան թագավորի թույլն էր: Սա մանկության հասկում աշխարհականի կյանք վարելով՝ ամուսնացած էր. փոքր հասակից ի վեր սնվել ու սովորել էր Գամիրքի կեսաբիա քաղաքում, վստահելի ուսուցիչների ձեռքի տակ և սիրելի էր դարձել իր դասընկերներին: Իսկ այս ժամանակ նա զինվորական պաշտոնյա էր, Արշակ թագավորի սիրելի սենեկապետն էր, թագավորի կյանքի բոլոր կարգերին հավատարիմ ներքուստ և արտաքուստ:

Սա մի հաղթանդամ տղամարդ էր՝ բարձր և հաճելի հասակով, գրավիչ գեղեցկությամբ, որի նման գեղեցիկ աշխարհի վրա ուրիշ տեղ չէր գտնվում. տնեշալի, ցանկալի, զարմանալի և պատկառելի բոլոր նայողների համար ու զինվորական վարժությունների մեջ նախանձելի արիություն էր կրա պատվիրանները, մարդասեր, սուրբ և պարկեշտ էր, շատ խելոք էր, անաչառ, իրավադատ, հեզ, քաղցր, խոնարհ, աղքատասեր, ամուսնական կյանքում օրինավոր, աստծու սիրով կատարյալ: Ընկերների հետ վարվում էր պատվիրանի համաձայն — սիրել ընկերոջը, ինչպես ինքն իրեն: Զինվորական աստիճանի մեջ էլ նա այսպես կատարյալ էր առաքինի վարքով: Նա դեռ մանկության հասակից ապրում էր տիրոջ պատվիրանների համաձայն, արդարությամբ, անարատությամբ, ընկերակրին ծառայություններ անելով: Նա ձանձրանալ չգիտեր, աստծու եռանդը սրտումն ուներ, սուրբ հոգով եռում էր և ամեն բանով կատարյալ էր: Աղքատներին, տառապալներին սիրում էր, նրանց նկատմամբ խնամք էր տանում, մինչև իսկ իր զգեստներն ու կերակուրը նրանց հետ կես էր անում: Նեղվածներին, դժվարության մեջ ընկածներին օգնում էր, զրկվածներին հովանավոր ու պաշտպան էր դառնում:

Արդ՝ մինչդեռ նա զինվորական զգեստ հագած, զարդարված էր գեղեցիկ պատմունճանով և վայելուչ զարդերով, հաճելի գեղեցկությամբ, երկայն հասակով, շքեղ վարսերով, կանգնած էր թագավորի սպասավորության, նրա սնաբրուս, գոտուց կախած արքայական պողպատյա սուրբ՝ ոսկի պատյանով,

ականակուռ, մարգարտազարդ գոտիով, ատյանի ամբողջ բազմութիւնը ձայն բարձրացնելով միաբերան աղաղակեց. «Ներսեսը լինի մեր հովիվը»: Երբ նա լսեց, բողոք բարձրացրեց, չէր կամենում, հրաժարվում էր՝ իրեն անարժան համարելով: Բայց նա տեսավ, որ բոլորը նույն բանի վրա պնդելով թագավորի առաջ նույնն էին աղաղակում. «Ուրիշ ոչ ոքի չենք ուզում մեզ հովիվ, այլ միայն դրան. ուրիշ ոչ ոք չպիտի նստի այն աթոռը, այլ միայն դա»: Իսկ նա, քանի որ իր համեստութիւնից իրեն արժանավոր չէր համարում այդ (աստիճանին), առաջ եկավ, սկսեց մի քիչ սուտ խոսել իր մասին, սկսեց իրեն բամբասել այնպիսի մեղքերի և անօրինութիւնների մեջ, որ չէր գործել:

Երբ բազմութիւնը այս լսեց և գիտեր, որ նա իր մասին ստեր է հնարում, բոլորը միասին թագավորի հետ ծիծաղից թուլանում էին: Իսկ զորքերը միաբերան աղաղակում էին. «Թող մեզ վրա, մեր գլուխների վրա ընկնեն քո գործած մեղքերը. թող մեզ վրա, մեր որդիների վրա թափվեն քո (անօրեն) գործերը. բայց դու քո հայր Գրիգորի գործերը, նույն առաջնորդութիւնը նորոգիր մեզ համար»: Իսկ նա որովհետև ուրիշ բան չգտավ նրանց պատասխանելու, որ զորքի համար վիրավորանք կլիներ, ասաց. «Դուք անօրեն եք ու պիղծ. ես չեմ կարող ձեզ հովիվ լինել և ձեր մեղքերը ինձ վրա վերցնել. ես չեմ կարող աշուտ լինել, չեմ կարող ձեր գործած շարիքներին դիմանալ: Դուք այսօր զուր եք ինձ սիրում, վաղն իմ թշնամիներն ու ատողները կդառնաք. դուք ինձ կապում եք գլխին որպես ծեծող թակ: Ինձ հանգիստ թողեք. թերևս առանց հոգսերի իմ տառապանքներով ու մեղքերով լի կյանքը ըստ իմ անարժանութիւնի անցկացնեմ՝ հանդերձյալ հավիտենական դատաստանին սպասելով»:

Բայց զորքի բազմութիւնը բողոք բարձրացնելով ձայն տվեց. «Հենց դու՝ մեղավորդ, պետք է մեզ հովիվ լինես»: Աստուծու նախախնամութիւնից էր, որ մարդիկ այսքան պընդում էին: Այն ժամանակ Արշակ թագավորը, շարացած ու զայրացած՝ դեպի իրեն քաշեց սուրը արքունական գոտիով, որ նա կրում էր իբրև սենեկապետ՝ թագավորին սպասավորելիս, և նրա վրայից հանեց: Ապա հրամայեց նրան իր առաջ կապել, խուզել նրա գանգուր, վայելուչ վարսերը, որոնց նմանը ոչ մի տեղ չէր գտնվում. նույնպես հրամայեց պատռել, վրայից հանել վայելուչ պատմուճանը: Հրաման տվեց. բերին կրոնավորի զգեստներ ու նրան հագցրին: Ապա հրաման տվեց. կանչեցին ծերունի Փափստոս եպիսկոպոսին և նրան ձեռնադրել տվին սարկավագ: Բայց մինչ մազերը խուզում էին, նրանց գեղեցկութիւնն պատճառով շատերը արտասովում էին անպատասխան, երբ տեսնում էին, թե ինչպե՛ս կերպարանքը փոխվելով գեղեցկութիւնը կորավ: Բայց երբ տեսան նրան քրիստոնեական գեղեցկութեամբ զարդարված՝ շատերն ուրախացան, որ բարերար (աստուծու) շնորհով նա հրավիրվեց Քրիստոսի տան հոգաբարձուն լինելու:

Տերն էր, որ բոլորի մեջ միտք արթնացրեց իրենց համար հովիվ խնդրելու նրան, որ կարող էր նրանց առաջնորդել և ցույց տալ կյանքի ճանապարհը: Նա դեռևս երբ զինվորական տեսքով էր, ներքուստ Քրիստոսի զգեստն էր կրում և ազնվական վարք ու բարք էր իր մեջ մարմնավորում: Իր ունեցած հույսով նա խաչված էր Քրիստոսի հետ, սիրով մասնակից էր եղել նրա թաղմանը և հավատով մեռած էր մեղքերի համար ու արդար հույսով սպասում էր հարութիւն: Ուստի նա իրավացի կերպով արժանացավ հայրապետների աթոռին և իր մարմնավոր, նույնպես և հոգևոր հայր Գրիգորի ժառանգութիւնը: Բայց տիրոջ ազդեցութեամբ էր, որ նա հասավ այն պաշտոնին, և նա էր, որ բոլորի մեջ միտք ծագեցրեց՝ նրան այս պաշտոնին արժանավոր համարելու: Թեպետ նա սաստիկ երկյուղածութիւնից և համեստութիւնից իրեն անարժան էր համարում աստուծուն սպասավորելու բարձր աստիճանին, որին մղեցին նրան, բայց հարկադրանքը, (ժողովրդի) միաբանութիւնը աստուծու հրամանով էր, մանավանդ որ նախնիների օրոք էլ սրա մասին ասվել էր Հուսիկին աստվածային տեսիլքում, թե նրա սերնդից կլինի մի մարդ, որ երկրին լույս կլինի:

ՔԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՍԵՍԻՆ ԱՌԱՆ ՏԱՐԱՆ ԿԵՍԱՐԻԱ, ԵՎ ԻՆՉՊԵՍՄ  
ՀՐԱՇՔՆԵՐ ԵՂԱՆ ԱՍՏՍՈՒՑ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՆՔՔԵԼԱՔԱՐ ՀՈՎՎԵՑ  
ԻՐ ՀՈՏԸ:

Այնուհետև զումարեցին մեծամեծ իշխաններին, որ ցանկալի ներսեսին առնեն տաննն այնտեղ, որտեղ սովորաբար հայրապետներին օծում էին: Նաև Հայոց եպիսկոպոսների բազմութիւնը հավաքվեց թագավորի մոտ նույն հարցի առիթով: Բոլորը միաբան խորհուրդ անելով<sup>64</sup> որոշեցին, որ նա նստի գլխավորի աթոռը: Եվ բոլորի միաձայն հավանութեամբ — եպիսկոպոսների և թագավորի և աշխարհականների բազմութեան պատվիրակները ճանապարհ ընկան ու գնացին. մարդպետութեան մեծ իշխան Հայրը, ասպետութեան<sup>65</sup> մեծ իշխան Բագարատը, Մոփքի մեծ իշխան Գանիւրը, Մեհանդակ Ռշտունին, Սյունյաց Անդովկ իշխանը, Շիրակի և Արշարունյաց իշխան Արշավիրը, մյուս Մոփքի իշխան Նոյրը, Ամատունյաց տան իշխան Պարզակը: Սրանց բոլորին պատրաստեցին և ճանապարհ ձգեցին մեծամեծ նվերներով ու ընծաներով և հավաստի հրովարտակներով, որ գնան Գամիրքի երկիրը, Կեսարիա մայրաքաղաքը, կաթողիկոսների կաթողիկոս Եվսեբիոսի մոտ, որպեսզի այնտեղ սուրբ Ներսեսին ձեռնադրեն Մեծ Հայքի կաթողիկոս:

Նրանք ցնծութեամբ եկան հասան և տեսան այնտեղ կաթողիկոսների կաթողիկոսին՝ սուրբ մեծանուն, երանելի, հռչակապ և սքանչելի Եվսեբիոսին: Նրան հանձնեցին Արշակ թագավորի հրովարտակը և բերած նվերները ներկայացրին: Նա սիրով և մեծարանքներով նրանց ընդունեց. և համաձայն կանոնների, առաքելական օրենքների՝ հավաքեց սուրբ եպիսկոպոսների բազմութիւնը, որպեսզի սուրբ Ներսեսին ձեռնադրեն Մեծ Հայքի եպիսկոպոսապետ: Եվ մի մեծ հրաշք տեղի ունեցավ, որովհետև հենց որ մտան եկեղեցի, մի սպիտակ աղավաթ, բոլոր քահանաների ու բազմաթիվ ժողովրդի առաջ, եկավ նստեց սեղանի վրա: Երբ Եվսեբիոս արքեպիսկոպոսապետը և նրա հետ երեցները ներս մտան, որոնց մեջ էր նաև մի սուրբ երիցապետ՝ Բարսիլիոս անունով, աղավաթին

սեղանից թռավ ու եկավ նստեց նրա վրա և երկար ժամանակ մնաց, իսկ երբ հասավ այն ժամը, երբ կամեցան ներսեսին ձեռնադրել, աղավաթին սուրբ Բարսեղի վրայից թռավ ու եկավ նստեց Ներսեսի գլխին:

Երբ աստծուց այս հրաշքը նրա վրա եղավ, ամբողջ ժողովուրդը և Եվսեբիոս մեծ արքեպիսկոպոսը զարմացած մնացին: Բոլորը նրան դիմելով աղաղակում էին. «Դու հաճելի եղար ասպծուն, աստծու հոգին քո վրա իջավ, որովհետև դա նժանութեան էք ս. հոգուն, որ տիրոջ վրա երևաց»: Ապա նրան ձեռնադրեցին ու բարձրացրին նստեցրին եպիսկոպոսութեան աթոռը ու մեծարում էին, շատերն էլ նրան էնկոմիա<sup>66</sup> էին ասում, այն մտքով, թե ս. հոգին թառեց նրա վրա: Բայց նա ավելի ու ավելի անաթժան էր համարում իրեն տեղի ունեցածին: Այնուհետև մեծ փառավորութեամբ ճանապարհ գցեցին նրան և Հայոց մեծամեծ նախարարներին՝ սատրապներին:

Նրանք մեծ պարծանքով, հոգեպես փառավորված եկան հասան Հայաստան: Նրանց ընդառաջ գնաց Արշակ թագավորը մինչև Առյուծ կոչված լեռը: Այստեղ նրանք միմյանց հանդիպեցին մեծ խնդութեամբ, իրար ողջունեցին և օրհնութեամբ դարձան եկան աշխարհը: Եվ սուրբ Ներսեսը նստեց հայրապետութեան աթոռը: Նրա հովվութեան ժամանակ երկրում մեծ խաղաղութիւն տիրեց. որովհետև իր վարքի և ընթացքի մեջ նա նմանվեց իր հորը՝ Մեծ Գրիգորին, ամենաբարի հայրական վերաբերմունք ուներ, նույն հայրերի առաքելական շնորհները նորոգեց և նույնպես հոգս էր տանում՝ (իր հորը) անվնաս պահելու երևացող ու աներևույթ թշնամիներից:

Նա առավելապես նմանվեց առաջին ծառերին և վարդապետութեան նույնատեսակ ու նույնքան հասուն պտուղներ էր բերում և իր հովվութեան ու վերակացութեան ընթացքում բոլորին առատորեն մատակարարում էր օգտակարը՝ հոգևոր արտոով սնուցանելով: Նա այնպես լցվեց շնորհներով, որ մեծամեծ հրաշքներ էր գործում, հիվանդներ էր բժշկում, որտեղ որ պետք էր լինում. մուրվածներին (ուղիղ) ճանապարհի էր բերում: Այսպիսի հրաշքներ էլ էր կատարում՝ երբ մեկին տեսնում էր խիստ համառելիս, ահ ազդելով համոզում էր,

խակ հնազանդներին, որոնց սրտերի ականջները բաց էին, համոզում էր քարոզութեամբ:

Եինում էր ավերված եկեղեցիները, վերականգնում էր կործանված սեղանները. թերահավատների համար սահմանում էր ապաշխարութեան կատարում, որպեսզի աստծուն հավատան ու փրկվեն: Հավատացյալներին մխիթարում էր մշտնջենավոր բարի պարգևների հույսով: Թաղեոսի աթոռը նորից շենացրեց, իր հայրերի նման որդի եղավ: Զարախոսներին հարկադրելով լռեցնում էր: Անօրինութունները, անօրենների խոսքերն ու գործերը միանգամայն խափանում էր: Ծշմարտութեան համար կովում էր մինչև վերջ, արդար կողմը քաջալերում ու պաշտպանում էր և իր վարդապետութեան անձրևով սնուցում ու փարթամացնում էր շահավետ, արդար գործերն օրհնութեամբ, Մեծ Հայքի բոլոր սահմաններում, որտեղ նրա հայրերն առաջ սերմանել էին կենարար խոսքի քարոզությունը, ինքն էլ նույնը ոռոգեց իր անձրևով: Քույսը աճեցրեց հնձող մշակը, սերմանողներին գործակից դառնալով և առատ արդյունք ամբարեց արքայութեան շտեմարաններում: Նա իր նախորդ մշակ հայրերին փոխանորդ ու գործակից եղավ:

Նա իր մեջ կրում էր անպատմելի գործություններ. խիստ հոգ էր տանում ողորմածութեան կարգեր հաստատելու վրա: Նախ անձամբ ինքն էր բարիքներ գործում, հետո ուրիշներին բարեգործութեան օրինակ տալիս. վարդապետական խոսքով առհասարակ հորդորելով բոլորին, մտքերի փակված դռները դեպի բարին էր բացում: Ուսուցանում էր ամենաբարի սերը, հույսը, հավատը, սրբությունը, քաղցրությունը, հեզությունը, անոխակալությունը: Հորդորում էր խնամել աղքատներին, նրանց դարմանել, և հույս էր տալիս, որ (ողորմածները) հատուցում կստանան Քրիստոսի խոստացած (երկրորդ) գալստյան ժամանակ, երբ դատաստանի ատյան<sup>67</sup> կկազմվի անշեջ կրակով. սպառնում էր հավիտենական շարժարանքները հիշատակելով և Հիսուս Քրիստոսի՝ աստծու որդու, գալուստով: Եվ այնքան երկյուղ ազդեց, որ Հայաստանի սահմաններում բնակվող բոլոր մարդիկ հավատալով՝ բոլորն իրենց ունեցածները իրենց աղքատներին հավասարապես և

հոժարութեամբ մատակարարում էին, ու այս բանը անում էին ուրախութեամբ:

Նա զնաց հասավ Տարոն գավառի կողմերը և իր մոտ հավաքեց Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին: Հավաքվեցին Աշտիշատ գյուղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինված, որովհետև նա էր մայր եկեղեցին և նախնայաց եկեղեցական ժողովների ժողովատեղը: Բոլորը հոժարութեամբ ժողովի եկան և օգտակար խորհրդակցություն ունեցան՝ աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի ընդհանուր կանոններ սահմանելու (Այս ժողովում) կարգ առ կանոն սահմանեցին, կազմակերպեցին և Հայոց աշխարհի ամբողջ ժողովուրդը դարձրին իբրև վանականների մի ընդհանուր միաբանություն, բացի ամուսնությունից: Ներսես եպիսկոպոսապետը ամենքի վրա տարածում էր առաքյալներից սահմանված կանոնները, բոլորին խրատ էր տալիս, հորդորում էր, առաջնորդում էր դեպի բարեգործություն և նախանձախնդիր էր լինում. նախ ինքն էր անում, ապա ուրիշներին նույնը ուսուցանում: Նույնը հրամայում էր կատարել Հայոց ամբողջ աշխարհում, գավառներում, կողմերում, անկյուններում: Որոնում գտնում էին պատշաճ տեղեր, զատում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է հավաքեին ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավազարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ<sup>68</sup>, սահմանել նրանց սնունդ և դարման, իսկ աղքատների համար՝ պատասպարան<sup>69</sup>: Որովհետև ներսես մեծ եպիսկոպոսապետը այսպես հրամայեց, և սուրբ ժողովը հավանություն տվեց, որ այդպիսի մարդիկ նստած մնան իրենց կացարաններում, դուրս չգան տառապանքով մուրալու, և բոլորովին իրենց զրուներից ոտք դուրս չդնեն, այլ որ ամեն մարդ պարտական կլինի նրանց (խնամելու): Կարևոր է, ասում էին, որ աշխարհի կարգը չխանգարվի, այլ պետք է որ բոլորն անխափր ողորմած լինեն և զգուշութեամբ տանեն նրանց կերակուրը ու նրանց կարիքները հոգան: Այսպես էլ շինեց, կազմակերպեց և հաստատեց:

Ուրիշ շատ տեսակ ողորմածություններ էլ սովորեցրեց աշխարհին և շատ հայրենական կարգեր ու կանոններ հաս-

տատեց: Նա խրատ էր տալիս, որ միշտ պետք է նկատի ունենալ հարության հույսը, չկարծել, թե մարդու մահն անգառնալի է, թե նորից կենդանանալու հույս չկա. ուստի և պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լացողիո՞ծ անել, անչափ ու անկարգ սուգ անել, այլ հույսով նկատի ունենալ տիրոջ (երկրորդ) գալուստը և հարությամբ նորոգվելը, ուրեմն սպասել տիրոջ գալուստյանը, երբ ամեն մարդ հավիտենական հատուցում կստանա ըստ իր գործերի: Նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Եվ կանոն էր դնում՝ մեռած անասուն ու արջուն չուտել, ամսականի ժամանակ կնոջ չմերձենալ, որովհետև դրանք պիղծ են տիրոջ առաջ:

(Նա դատապարտում էր) նենգությունը, մատնությունը, ազահությունը, ուրիշին նախանձելը, ցանկասիրությունը, զրկողությունը, արվամուլությունը, իգանալը, բամբասանքը, մութ հարբեցողությունը, որկրամուլությունը, հափշտակությունը, պոռնկությունը, թշնամուց վրեժխնդրությունը, ստախոտությունը, թշնամությունը, անողորմածությունը, սուտ երգումը, արյունահեղ սպանությունը, պիղծ անասնամուլությունը, (երկրորդ) հարության հույս չունենալը, անհուսությամբ մեռելներին սգալը — այս բոլորը համարում էր միանման կորստյան խորխորատ: Եվ ամբողջ երկրին պատվիրում էր նա, հենց իրեն՝ թագավորին, մեծամեծներին և առհասարակ նրանց, որոնք ուրիշի վրա իշխանություն ունեին, որ գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների և աշակերտների վրա, սիրեն նրանց իբրև իրենց հարազատների, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղեն, հիշեցնելով, որ նրանց համար էլ աստված կա երկնքում: Այսպես էլ ծառաներին էլ պատվիրում էր հավատարիմ և հնազանդ լինել իրենց տերերին, հիշեցնելով նրանց\*, որ դրա համար վարձք կստանան տիրոջից:

\* Լրացված և թարգմանված է ըստ երկու ձեռագրերի:— Խմբ.:

Եվ բոլոր եկեղեցիները նրա օրերում խաղաղություն ու նորոգություն գտան. ամբողջ Մեծ Հայքում եպիսկոպոսների պատիվը մեծացավ, եկեղեցիների կարգերը ծաղկեցին, լիովին պայծառացան, ամենայն վայելչությամբ հաստատվեցին կաթողիկե եկեղեցիների կարգերը, սուրբ պաշտամունքի կարգերը աճեցին, պաշտոնյաներն ավելացան: Եկեղեցու կարգերը շատացրեց շին ու անշին տեղերում, նույնպես և կրոնավորների թիվը բազմացրեց:

Ձանազան տեղերում, Հայաստանի բոլոր գավառներում հիմնեց դպրոցներ՝ հունարեն և ասորերեն լեզուներով: Շատ ճեղվածների փրկում էր, գերության մեջ տառապողներին գերությունից ազատում էր՝ ոմանց քարոզելով Քրիստոսի ահը, և մյուսներին փրկանք տալով գնում ազատում էր ու իրենց տեղերը դարձնում: Այլիներին, որքերին, չթավորներին հանգիստ ու սնունդ էր ապահովում, աղքատները միշտ նրանով ժրախանում էին. իր սեղանատունն ու սեղանը միշտ բաց էին աղքատների, օտարականների և հյուրերի համար: Եվ այնքան մեծ էր նրա աղքատասիրությունը, որ թեպետ բոլոր գավառներում աղքատանոցներ շինեց ու նրանց համար դարձան նշանակեց, այնպես որ իրենց անկողիններից վեր կենալուց ավելի նեղություն չբաշեն, բայց և այնպես առանց նրանց սեղան չէր նստում, այլ կողերը, կույրերը, հաշմանդամները, վերքոտները, խուլները, տնանկները, կարոտյալները նրա հետ սեղան էին նստում ու կերակրվում: Եվ ինքը իր ձեռքերով բոլորին լվանում էր, օծում, (վերքերը) կապում, իր ձեռքով նրանց կերակուր էր բաժանում, իր բոլոր ունեցածը նրանց վրա էր ծախսում. բոլոր օտարականները նրա հովանու տակ դադար առած հանգստանում էին:

Եվ ինչ որ ինքն էր անում, նույնը սովորեցնում էր անել և ուրիշներին. ինքը մաքուր, զգաստ և արթուն մարդ էր ու բոլոր մարդկանց պատրաստում էր աստծու խոսքը ընդունելու: Մարգարեների և առաքյալների նմանությամբ սովորեցնում էր ողորմած լինել: «Ձեր մեղքերը, — ասում էր նա, — պետք է ողորմածությամբ քավեք և ձեր անօրեն գործերը՝ գթությամբ և աղքատներին ողորմություն տալով: Հիշեցնում էր առաքյալներին, որոնք աղքատների խնամար-

կության համար ընտրեցին մեծ նախավկա և նախասարկավագ Ստեփանոսին իր ընկերներով, նրան, որ երկիրքը բացեց և այս գործով արժանի դարձավ Որդուն տեսնելու Հոր աստծու աջ կողմը:

(Հիշեցնում էր) և Այծեմնիկին<sup>70</sup>, նրա ողորմածությունը, այրիների ողբը և թե ինչպե՛ս Պետրոս մեծ (առաքյալը) կյանքից հրաժարված ու մեռածին դարձյալ կենդանության էր բերում: «Պողոս մեծ (առաքյալն) էլ պատմում է,— ասում էր,— թե Հակոբոսը, Կեփասն ու Հովհաննեսը՝ բուն սյուները<sup>71</sup>, երբ տնսան ինձ տրված մեծ շնորհը, և որ ես անթլփատններին ավետարանը քարոզելու մեջ հաջողություն գտա, ինչպես նրանք՝ թլփատվածների մեջ, ինձ ավելի ևս համարձակություն տվին և համաձայնվեցին, որ ես և Բառնաբասը (քարոզենք) հեթանոսների մեջ, ինչպես իրենք՝ թլփատվածների մեջ: Միայն ինձ պատվիրեցին,— ասում է,— որ աղբատներին խնամք տանենք, ինչ որ հենց ես էլ,— ասում է,— աշխատում էի կատարել»:

Այսպես և ավելի ևս հիշեցնում էր Քրիստոսի (խոսքերը), որ նա ասաց մի մեծատան, որ բոլոր պատվիրանները կատարել էր. տերը նրան ասաց. «Բոլոր ունեցածներդ ծախի՛ր ու աղբատներին տուր, և դու գանձ կգտնես երկնքում». և սրանից հետո ասաց. «Հաստ պարանը ավելի հեշտ կմտնի սսեղի ծակով, քան ազահ մեծատունը՝ արքայություն». և դարձյալ, թե «ձեզ բարեկամներ ստեղծեցեք անիրավ մամոնայից», որոնք ձեզ ընդունեն իրենց հավիտենական հարկերի տակ: Կամ ինչպես ինքը՝ Պողոսը, բարի գործերի նախանձախնդիր լինելով, բոլորին ստիպում է, ասելով. «Միրո հետևեցեք, հոգևոր բաների նախանձախնդիր եղեք»: Նա պատմելով, թե ինչպե՛ս աբայեցիք հոժարամտությամբ ըստ պասարկում էին սրբերին Մակեդոնիայում՝ հորդորում, (լտողների) նախանձն էր շարժում, այլև նրանց քաջալերում էր անխափան բարի, առաքինական գործեր կատարելու, ասելով, թե «Լավ է միշտ նախանձախնդիր լինել դեպի բարին»: Դարձյալ նա ձգտում էր բոլորի հետ միասին Քրիստոսի հետքով գնալ. «Նայեցե՛ք,— ասում է,— հավատի գորակուխ և կատարող Հիսուսին». և դարձյալ, թե՛ «Հիշեցե՛ք

ձեր առաջնորդներին ու վերակացուներին տիրոջ համար, որոնք ձեզ կյանքի խոսքը քարոզեցին, նայեցե՛ք նրանց ընթացքին և նմանվեցե՛ք նրանց հավատին»: Եվ միաժամանակ ասում էր. «Այսպես թող մտածի ձեզանից ամեն մեկը, որ հավատում է Հիսուս Քրիստոսին»: Դարձյալ ասված է. «Հիսուսը սկսեց գործել և ուսուցանել»: Իսկ տիրոջ ցանկալի եղբայր Հակոբոսը իր թղթում օրինակ բերելով սրբերի բոլոր գնդերը և սրբասեր տիրոջը՝ ասում էր. «Եղբայրնե՛ր, օրինակ վերցրեք շարչարանքներին երկար դիմացող, տիրոջ անունով խոսող մարգարեներին, լսեցե՛ք Հորի համբերության պատմությունը, տիրոջ վախճանը տեսե՛ք»:

Այս և սրանց նման բաներ նա շարունակ խոսում էր գիշեր ու ցերեկ. չէր դադարում սովորեցնելուց և հանդիմանելուց: Եվ նրա մեջ բնակված սուրբ հոգու իմաստությամբ իր կյանքի ամբողջ ժամանակ, ամեն օր Հայոց երանելի ներսես եպիսկոպոսապետը ամենքին վարդապետում, խրատում էր, ինչպես մի բազմազութ հայր, ինչպես մի սիրող մայր, հոգևոր սիրով ոգևորում էր բոլորին՝ մեծամեծներին, պատվավորներին ու անարգներին, հարուստներին, աղբատներին, ազատներին ու շինականներին: Եվ աշխարհի վերակացությունը ամենայն հոգատարությամբ, առանց ծուլանալու և առանց հապաղելու կատարում էր մինչև իր կյանքի վերջը: Նրա նման ուրիշ մեկը երբեք չեղավ Հայոց աշխարհում:

## Գ Լ Ո Լ Խ Ե

ՀԱՅՈՑ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻՑ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՎԱՂԵՍ ԿԱՅՍԵՐ ՄՈՏ, ԵՎ ԹԵ ՀԱՎԱՏԻ ՈՐՔԱՆ ԾԱՏ ԲԱՆ ԽՈՍԵՑ ԿԱՅՍԵՐ ՈՐՈՒՅ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԵ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՊՎԵՑ ՈՒ ԱՔՍՈՐՎԵՑ, ԻՍԿ ՄՅՈՒՍ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ (ՎԱՂԵՍԸ) ԱՐՁԱԿԵՑ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՎ:

Ապա Հայոց աշխարհի և Հունաց կայսեր միջև կնքված խաղաղության ու միաբանության դաշինքի առիթով կարիք եղավ, որ Հայոց թագավորը Հայոց ներսես մեծ կաթողիկոսին և Հայոց մեծամեծներից տասր սատրապ նրա հետ մեծ պատրաստությամբ ուղարկեց, որ գնան և կայսեր ու իրենց միջև եղած համաձայնության ու խաղաղության դաշինքը



ներող են: Նրանք գնացին հասան Հունաց թագավորների կայսերական պալատը:

Այն ժամանակ Հունաց Վաղես մեծ թագավորը հավատի կողմից մուրոված՝ ընկած էր արիանոսների<sup>72</sup> հերետիկոսություն մեջ: Արդ՝ երբ թագավորը նրանց տեսավ, սկզբում մեծ փառքով ու շքեղությամբ նրանց մեծարեց: Կայսրը միամտոր մի որդի ունեւր, իր միակ զավակը, որ ծանր հիվանդությամբ պառկած էր: Ապա թագավորն ստիպեց Հայոց Ներսես սուրբ կաթողիկոսին, որ կրեխայի վրա աղոթք անի. իսկ նա մեղրեղ զալով սկսեց խոսել և ասաց. «Եթե հավատաւ, որ տեք Հիսուս Քրիստոսը աստծու միածին որդին ու ծնունդն է, նրա ինքնությունից և իսկությունից, հոր որովայնից ծնունդ է և ոչ թե արարած, հորից ծագած, էականի փառքի լույսը, նրա էության նկարագիրը, որ նա նրա բնությունից է, ծնունդն ու որդին, որովհետև ինչպես որ հայրն էր, այնպես էլ որդին նրա բնությունից, բոլոր ծամանակներից առաջ հորից ծնված, բոլոր արարածների լինելությունից առաջ. սկզբից ի վեր ամեն բանում իր հորը զործակից և արարչակից. որ ամեն ինչ երկնքում և երկրի վրա հորից իջավ նրա միջոցով. որ նա սկզբից ի վեր հոր հետ է եղել բոլոր արարածներին ստեղծելիս. ի բնե, սկզբից ի վեր նրա հետ էր և իր ծնողի տիպն ու կերպարանքը կրում էր. որ աշխարհի սկզբից ի վեր իր խոսքի զորությունը և իր բնական իշխանությամբ կառավարում է, ուղղություն է տալիս, առաջնորդում է բոլոր արարածներին. որ սկզբից ստեղծեց և երկրի հիմքը գցեց, երկինքը վրանի նման տարածեց (նրա վրա), որի ձեռքերն ստեղծեցին ու հաստատեցին երկրների ամբողջ տարածությունը, որ և մարդուն ստեղծեց հողից իբրև բանական, խոսուն, իմաստուն և ազատ կամքով: Եվ երբ մարդիկ իրենց ազատ կամքով շեղվեցին, արարչին ու նրա պատվիրանները մոռացան, ապա նրա որդին, որ սկզբից ի վեր նստում էր հոր աջ կողմը և իր ծնողի աթոռակիցն էր, երբ տեսավ, որ հայրը արհամարհված է մարդկանցից, շարժվեց, եկավ իջավ աջակողմի աթոռից, փոքրացավ, ամփոփվեց, կույսից մարմնացավ, մարդացավ, ինքն իրեն նվաստացրեց, մարդ դարձավ, իր կամքով վեր-

տեք կրեց, մեռավ և հարություն առավ, բոլորին առհասարակ կյանք պարգևեց, (երկինք) վերացավ և նստեց իր բուն աթոռը՝ իր ծնողի՝ հոր աջ կողմը:

Արդ՝ երբ դու այսպես հավատաս, թե Քրիստոսը աստծու ծնունդն ու որդին է, որի մեջ քեզ կարող ենք համոզել անթիվ վկայություններով և քեզ լվանալ ու մաքրել հերետիկոսական հավատի սուտ և պիղծ մկրտությունից: Ընդունի՛ր դու սուրբ հավատի մկրտությունը իբրև շնորհ արարիչ հոր անունով և խոստովանելով որդու ծնվելը հորից բոլոր ծամանակներից առաջ, ըստ իր բնական գոյացության, և մարմնանալը սուրբ կույսից վաղ ծամանակներում, որ եղավ մեր փրկության և կենդանության համար. նույն որդու՝ Հիսուս Քրիստոսի մահն ու թաղումը, խաղաղությունը և միաբանությունը ու սուրբ հոգու պարգևները. ապա մկրտվի՛ր դու կյանքի նորոգության, թողության այս սքանչելի խորհուրդներով, անունով, ապա թո երեխային էլ կարծանացնենք այս սուրբ երանության, լույսի և մեղսաքավիչ մկրտության, և կլանդրենք մեր տեք Քրիստոսից, որ ների ձեր հերձվածող անհավատության մեղքերն ու ողորմի, որոնց պատճառով էլ սկզբից ևեթ ցավերն եղել են ու լինում են: Եվ ես երաշխավոր եմ ողորմած տիրոջ կողմից, որ երեխայիդ ողջ ու անարատ կկանգնեցնեմ քո առաջ, եթե ուղղափառության գաս և մեզ հետ իբրև ուղղափառ դավանես<sup>73</sup>:

Իսկ եթե չդավանես աստծու միածին որդի Քրիստոսին, որին ամեն բանից առաջ հայրը ծնեց իր կարող հայրական էությունից, իբրև կատարյալ միածին ծնունդ, նույնանման զուգակից, անվանակից և արարչակից. նա նրա սիրո համար սիրեց և մեզ: Մեր նկատմամբ (տաժած) սիրո համար նա հորից ուղարկվեց սուրբ կույս Մարիամի մոտ և այն կնոջից երևան եկավ իբրև մարդ: Նա էությունը նման էր իր ծնողին և բնականորեն ունեւր իր հոր բուն կերպարանքը ու մարմնով մեզ համար իր կամքով ծառայի կերպարանքով հանդես եկավ: Եվ որովհետև մարդիկ ինքնակամ մտան ծառայության մեջ, ուստի ինքը ծառայի կերպարանքով տեք դարձավ, որպեսզի մեզ ծառայությունից ազատի: Երբ աստված սկզբում ստեղծում էր արարածներ, հետո ստեղծեց մար-

գուն՝ իր աներևույթ և երևացող զորութիւններով ի մի հա-  
վաքելով. և այսպես ամեն ինչ նույն ձևով հաստատելով  
համախմբեց արարածներին (և մարդուն), որին ստեղծեց իր  
պատկերի ու կերպարանքի համաձայն և նրան դարձրեց իր  
կամքի տերը: Սակայն սատանայի նախանձով, խաբեական  
խարդախ բանասրկութեամբ (մարդը) փշացավ: Իսկ տերը  
եկավ խղճալու կորչողին, ծնվեց կույսից մարդու կերպա-  
րանքով, որպեսզի երկնքում ու երկրում խաղաղութիւն  
հաստատի և իր ծնող հորը հաշտեցնի նրա մարդակերպ  
պատկերն ունեցող արարածների հետ, որպեսզի բոլոր մերժ-  
ված արարածները ներկայանան աներևույթ աստծուն, ուս-  
տի իրավացիորեն արարածներին նորոգելիս բոլորին կըր-  
կին նորոգում է, որպեսզի ով հավատա Քրիստոսին, նո-  
րոգված արարած լինի. ինչ հին էր, անցավ, իսկ այժմ ահա  
ամեն ինչ նորոգվեց, որովհետև (Քրիստոսը) մարդկանց  
կերպարանք առավ և իրենով դարձյալ ամեն բան նորոգեց,  
հաստատեց: Ինքն եղավ մեր կենդանութեան օրինակը, մեռ-  
նելով դարձավ բոլոր մեռելներից անդրանիկը և իր հարու-  
թեամբ առաջինը, որ իրենով ամեն ինչ հայտնի դարձնի,  
որպեսզի մեզ ստեղծի անփոփոխ հոգով ու անմահ մարմ-  
նով, որպեսզի մենք՝ մարդիկս, միմիայն հոգու անփոփոխու-  
թեամբ շապրենք, այլև՝ մարմնի անմահութեամբ, որ բոլոր  
աներևույթ ու բանական զորութիւնները մեզ հետ հույս  
ունենան այս անփոփոխութեանը. «Որովհետև բոլոր արա-  
րածները կազատվեն ապականութեան ենթարկվելուց՝ աստ-  
ծու որդու փառքի զգատութեան համար»: Նրա համար,—  
ասում են,— այն կույսից, որ մեզնից էր, աստված ծնվեց  
իբրև մարդ, որ մենք այս աշխարհի այժմյան կյանքից ա-  
զատվելով՝ ամենքս հանդերձալ կյանքի լավ բաներին հաս-  
նելով՝ սկզբից հուսալով նայում ենք արարչին՝ նոր արա-  
րածների առաջնորդին: Նա աներևույթ աստծու ծնունդն ու  
կերպարանքն է, հոր միածին ծնունդը և բոլոր արարածների  
արարիչը: Այստեղից էլ առաքյալը հանգամանքները վերար-  
տադրելով՝ միաժամանակ ասում է՝ «Նրանով հաստատվե-  
ցին այն բոլորը, ինչ որ երկնքում ու երկրում են. թե՛ երևա-  
ցողները, թե՛ աներևույթները, թե՛ տերութիւններն ու իշ-

խանութիւնները, թե՛ զորութիւնները»: Եվ քիչ հետո ավա-  
լի է պարզում ասածները. «Մեռելներից ինքը եղավ անդրա-  
նիկը, որ ամենքի մեջ ինքն առաջացած լինի, որովհետև  
նրան հաճելի եղավ ամենուրեք լրիվ բնակվելը և նրանով  
ամեն ինչ կատարելը, որ խաղաղութիւն հաստատի իր խա-  
չով ու արշունով. նրանով է այն, ինչ երկնքում և երկրում  
է»: Որովհետև աստծու միածին որդի տեր Քրիստոսի շար-  
շարանքներով երկնքում և երկրում եղած ամեն բան ի մի  
հավաքվեց, որովհետև աստծու մեծութիւնն ստեղծեց ամեն  
ինչ և մարդուն դարձրեց ամեն ինչի տերը. հրամայեց,  
և բազմացան: Ապա իշխաններ նշանակեց և առաջնորդներ  
կարգեց: Իսկ երբ մի անգամ պատվիրանազանց եղան, իշ-  
խանութիւնից զրկվեցին, որ ստացել և առաջուց ունեին  
ու երկրորդ անգամ միայն կարիքների համար թույլ տվեց  
ոմանց իշխել, ոմանց շիշխել, որպեսզի գոնե հետո իշխե-  
լով ճանաչենք շնորհը և շիշխելով ամենատիրոջ իշխանու-  
թիւնը գիտակցենք: Իսկ ո՞վ է, որ չի ձգտում մեծութեան,  
մարմնի առողջութեան և կամ կարիք չզգա կամակատարու-  
թեան, որ վայել է միայն աստծու միածին որդուն, իսկ բոլոր  
մարդկանց հավասարապես հատուկ չէ ո՛չ մեծութիւնը և  
ոչ էլ բուն աղքատութիւնը: Ոմանք ծնվում են, բայց չեն  
սնվում, չափահաս են դարձվում անարգվելով հայհոյանք-  
ներով: Ո՞վ է, որ սիրում է հիվանդութիւնը և ատում առող-  
ջութիւնը, ամեն բանի պակասութիւն ունի, բայց չի կա-  
րոտում: Մի մասը կոռուպտութեան ու սպանութեան մեջ, մի  
մասը պոռնկութեան ու բազմատեսակ շարիքների մեջ կաշ-  
կանդված, կպած են մնացել. ոմանք մոլորված, ցնորական  
մտքերով, խաբեութեամբ կաշկանդում են ամեն ինչ, թե՛  
բարին, թե՛ չարը:

Իսկ որոնց վրա արդար արեգակը սփռում է իր հավատի  
լույսը և ցրում խավարի, տգիտութեան սև մառախուղը,  
նրանք մշտապես անարգում են սուտն ու մոլորութիւ-  
նը՝ նախ իրենց գործերով ու բարի օրինակով և ապա ու-  
րիշներին նույնը սովորեցնելով, նախ շկասկածելով արար-  
չութեան զորութեան երրորդութեան հավատին, ապա սրբու-  
թեամբ, զգաստութեամբ և պարկեշտութեամբ իրենց աշխար-

հիկ բաներից զերծ պահելով, ապրում են լրիվ հանգստութ-  
յամբ մեր արարիչ աստծու որդի Քրիստոսի կամքով և ար-  
համարհում, ոտնատակ են տալիս բոլոր անցավոր բաները  
և սուրբ հոգու թևերով բարձրալաց թռչում են, անցնում  
խածամուծ խմբերի վրայով, որոնք այս աշխարհում, մեր  
օրերում խանգարիչներ են: Նրանք խորշելով մերժում են  
անհարկի բաները այն աստիճան, որ մինչև անգամ օրվա  
կերակուրը, ապրուստը արհամարհում են, ո՛ւր մնաց, թե  
միսը կամ գինին՝ ճաշակեն, որոնք որովայնը պարարում ու  
երիկամները ճարպով պատում են. դրանից բազմատեսակ  
սնօրինություններ են ծագում: Դրանք տրվում են այնպիսի-  
ներին, որոնք սիրում և վարվում են ըստ իրենց կամքի: Դրա  
փոխարեն մենք վայելենք շնորհները մարդասիրական բա-  
րերարության, որով բոլոր ժողովուրդներն ու ցեղերը հա-  
վատում են հորից ծնված տեր Հիսուս Քրիստոսին՝ ծնված  
և ոչ ստեղծված, որը էակից ու բնակից է իր հորը՝ ծնողին:  
Նա հոր փառքի լույսի սփռումն է, կերպարանքով նման իր  
ծնողին: Որոնք մտքի աչք ունեն և ճշմարիտ հավատից կու-  
րացած չեն, նրանց նայելու բաներ է ցույց տալիս, որոնք  
կան նրանց բոլոր կողմերում: Նրա լույսով են լցված երկին-  
քը, երկիրը և ամբողջ տիեզերքը: Թողորի համար լսելու բա-  
ներ է սահմանում, որ ամեն բանով լսվում են: Սրտերի և  
մտքերի բոլոր գաղտնիքները թափանցում են նրա ականջ-  
ները, և նա զննում է մարմնի ամբողջ շունչն ու հոգին: Նա  
կամովին հայտնվեց մարմնով, հասակով, կերպարանքով  
ու պատկերով: Իր գթություններն ստեղծեցին: Նրան սիրող-  
ների սրտում այդ սերը կերպարանում է՝ նրան: Նրանք  
երկրպագում են նրան՝ ճշմարիտ հոգով: մաքրելով իրենց  
սրտերն ու մարմինները՝ տաճար են շինում սուրբ հոգու  
համար և հավասարապես հաղորդակից են դառնում մեր  
երանությունը, որը տերը տվեց և ասաց. «Մերանի նրանց,  
որոնք հավատում են ճշմարտությանը», կամ՝ «նրան, ով տե-  
սավ ինձ և իմ հորը», կամ՝ «երանի նրանց, որոնք շտեպան  
ինձ, բայց հավատում են ինձ, որովհետև հորն են տեսնում»:  
Նվ՛ այն մտքերը, որոնք աստվածային հավատը չեն ճամաչում,

կերպարանքից դուրկ են, դատարկ, ինչպես ավերակ, իսկ  
հավատացյալները լուսավորված են սրտի աներևութ աշ-  
քերով, ինչպես ասում է մարգարեն՝ «Քեզ ասաց իմ սիր-  
տը, իսկ իմ դեմքը որոնեց թո՛ւ քեզը». կրկին ասում է՝  
«Պրեցի տիրոջն իմ առաջ ամեն ժամանակ, որ իմ աչքող-  
մում էր, որպեսզի շսասանվեմ». և կրկին ասում է՝ «Քո  
դեմքի ուրախությամբ ուրախ կլինեմ»: Որոնք այժմ հավա-  
տի աներևութ լույսով ըստ նրա կամքի տեսնում և նրան,  
մեռնելիս դեմ հանգիման կերևա, ինչպես երանելի Պողոս  
առաքյալն է ասում, թե այժմ տեսանելի օրինակով ենք  
տեսնում, հետագայում, երբ կգա, ինքը կբերի մեզ տալու  
իր փառքի անմահությունն ու անաղարտությունը: Սրբ ոչ  
ըստ օրինակների ու խոսքերի գա ու հայտնվի՝ հոր որդին,  
սուրբ հոգով, հրամայի, որ գան անմահությամբ աստծուն  
տեսնելու նրանք, որոնք բազմաթիվ արժանիքների ակնկա-  
լություն ունեն— կամենում է իր փառավոր գալուստը ցույց  
տալ, ինչպես երկար հաճախողներին, հուսալով սպասող-  
ներին, կգա և կհայտնվի հոր՝ աստծու ծնունդ Քրիստոսը:  
որը գալիս է պարզև տալու արդարներին՝ հավատի պատճա-  
ռով նահատակվելու համար: Իսկ որոնք որ դեռ չեն ընդունել  
հավատը, աստված բարվոք մտածեց, որ նրանք էլ առանց  
մեզ հետ լինելու շնորհեն: Քանի որ կլին մեկը առաջնա-  
սիրի սուրբ գրքերը ամբողջ աստվածաշունչ մատյաններում,  
այսպիսի շատ պատգամներ կգտնի. արդարների և հավա-  
տացյալների համար հավիտենապես պահվում են լուսա-  
տուններ ու արքայության թագեր, իսկ թերահավատների,  
մերժողների, անհնազանդների համար՝ դաժան պատիժ-  
ներ, նրանք ճարակ կլինեն հավիտենական դատաստանի  
անշեջ կրակին՝ հանուն տիրոջ, անսպառ, անսահման, ան-  
թիվ, անշափ ժամանակ (կենթարկվեն) քահանի տանջանք-  
ներին, խափար դատաստանին, որ գալու է:  
Իսկ ինչ վերաբերում է թո որդուն, այդ երբ դու ճշ-  
մարիտ և ուղիղ հավատի դառնաս, մենք որդուդ համար տի-  
րոջից կխնդրենք, մեր ձեռքը նրա վրա կգնենք ու կասենք. ձեր  
հավատի համաձայն բժշկում է սրան Քրիստոսը՝ աստծու  
ծնունդը, և նա ողջ ու առողջ վեր կկենա, կկանգնի թո առաջ,

ուրիշ շատ բարիքների էլ ձեզ կարժանացնի ու հավիտե-  
նական նորոգ կյանքի արթալուստյան կհասցնի:

Իսկ եթե շեռ հավատա, ինչպե՞ս կարող է թողութունն ու  
բժշկությունն լինել, և կամ մենք ինչպե՞ս կհամարձակվենք  
նրա առաջ դուրս գալ, խնդրել և աղոթք անել այնպիսիների  
համար, որոնք բնավ չեն ճանաչում տիրոջը, որովհետև տի-  
րոջ բարկությունը սպանում է նրանց, որոնք տիրոջը ուղիղ  
չեն խոստովանում: Դուք էլ չեք կարողանա խնդրել, քանի  
որ չեք հավատում և չեք ուզում գիտենալ նրա պատվիրան-  
ները, մտքում չեք պահում նրա օրենքները, «որովհետև տի-  
րոջ օրենքներն անբիծ են, հոգիները ետ են դարձնում. տի-  
րոջ խոստումը հաստատուն է և երեխաներին իմաստնաց-  
նում է: Տիրոջ արդարությունը սրտերն ուրախացնում է.  
տիրոջ պատվիրանները լույս են և աչքերին լույս են տա-  
լիս. տիրոջ երկյուղը սուրբ է և հավիտյան կմնա: Տիրոջ  
դատաստանը ճշմարիտ է և նույնով արդար. նա ավելի  
ցանկալի է, քան ոսկին և շատ թանկագին քարեր, ավելի  
քաղցր է, քան մեղրի խորիսխը»: Իսկ որոնք որ ապակա-  
նություն անձնատուր են լինում, նրանց (տերը) պահում է  
ինչպես կրակի նյութ: «Չկան բառեր ու խոսքեր, որոնց  
ձայնը չլսվի, իսկ նրանց ձայնը ամբողջ երկրում տարած-  
վեց, որոնց խոսքերը մինչև տիեզերքի ծայրերը հասան»: Իսկ  
որոնք որ չեն լսում և որոնք որ լսում են, նրանց համար  
տերը պահում է իր հատուցումը»:

Բոլոր այս խոսքերը և սրանց նման էլի ուրիշ խոսքեր  
խոսեց սուրբ ներսեսը կայսրի հետ. այն էլ ավելացրեց, թե  
«այս օրվանից հաշված մինչև տասնհինգ օր (տերը) իր  
ողորմածության ու բարեբարության պատճառով ներողա-  
մըտաբար կլսի, այսքան օր քեզ ժամանակ կտա, կհամբե-  
րի, որպեսզի ուղիղ հավատի գաս: Սա քեզ նշան լինի, որ  
եթե մինչև այն օրը հավատի մեզ չհաստատովես, ժամկետը  
լրանալուց հետո երեխան կմեռնի, որպեսզի համոզվես, որ  
ինչ որ քեզ մոտ խոսեցի, ճշմարիտ է»:

Մինչ նա այս բաները խոսում էր, թագավորը բոլորը  
լուռ լսում էր, ոտքը ոտքի վրա գցած, արմունկը ծնկանը,  
ձեռքը ծնոտին. այսպես նստած էր, մինչև նա բոլոր խոս-

քերն ասաց. և դրանք գրի էին առնում թագավորի արագագիր  
բարտուղարները, որ թագավորի առաջ կանգնած էին: Ապա  
թագավորը խիստ զայրացավ, հրաման տվեց երկաթե կա-  
պանքներով պինդ կապել Հայոց եպիսկոպոսապետ սուրբ  
Ներսեսին ու բանտը տանել, պահել և ուշադիր լինել երե-  
խային, արդյոք կապրի՞, թե ոչ, որից հետո կտեսնի, թե  
ի՞նչ պետք է անել: Տասնհինգ օրը լրանալիս մեռավ երե-  
խան՝ կայսեր որդին, որ նրա մեկ հատիկ ժառանգն էր: Սրբ  
(թագավորը) նրան ողբաց ու կոծեց, որքան պետք էր կո-  
ծել, ապա հրաման տվեց, և սուրբ Ներսեսին բերին նրա  
առաջ: Նրան մոտ կանչեց ու հարցրեց. «Ձեր՝ քրիստոնյա-  
ներիդ կողմից եղավ երեխայի մահը: Իսկ նա պատասխան  
տվեց. «Իմ խոսածներից հետո Քրիստոսը տասնհինգ օր հե-  
տաձգեց (մահը), գուցե դառնաք: Բայց դուք չդարձաք, մե-  
ռաք: Դեռ այժմ էլ, եթե հավատաս, Հիսուս Քրիստոսը՝  
աստծու որդին, կարող է նրան կենդանացնել, որդիդ և բո-  
լոր ընտանիքդ»:

Թագավորը այս խոսքերի վրա զայրանալով՝ կամեցավ  
նրան շարաշար մահով սպանել: Բայց թագավորի մոտ եկան  
պալատի ավագներն ու խորհրդականները և կայսերն ասա-  
ցին. «Դրանք օտար ու հեռավոր երկրից գործի համար  
ուղարկված են մի հզոր թագավորի կողմից. դրանք մեծ տի-  
րոջ պատգամավորներ են. մեր կողմից նրանց վնաս, չպի-  
տի հասնի, եթե ոչ, մեծ պատերազմ կծագի մեր և Հայոց  
մեծ թագավորի միջև, մեծ թշնամություն կընկնի. երեխայի  
ապրելը կամ մեռնելը դրա խոսքից չէր կախված»: Թեպետ  
շատ այսպիսի բաներ էին ասում, բայց չէին կարողանում  
թագավորի բարկությունն ու զայրույթը հանգցնել:

Բանը շատ դժվար տեղը հասավ. ամբողջ բազմությունը  
համառորեն պնդում էր, որ չսպանի մարդուն. վերջապես,  
հազիվհազ, զորքը կարողացավ թագավորին համոզել, այն-  
պես անել, որ գոնե նրան չսպանի: Բայց չկարողացան ա-  
զատել տալ, այսքան միայն հաջողեցրին, որ միայն աքսոր-  
վի: Որովհետև իմաստուն (խորհրդականներն) երկար մտա-  
ծելուց հետո այսպես գտան, որ աքսորի միջոցով առայժմ  
մահից կազատվի, իսկ ապագայում նա աքսորից կվերա-

դառնա, և այսպիսով երկու թագավորութունների միջև խռովությունն ու պատերազմն չի լինի: Նրանք ասում էին. «Այ մի տեղ եղած բան չէ, ո՛չ թշնամիների միջև և ոչ պատերազմի ժամանակ, որ թեկուզ մի հասարակ պատգամավոր կայանավորության, կապանքի և բանտի ենթարկվի, ո՛ր մնաց թե թահվան. հին ժամանակներից ի վեր երբեք և ոչ մի տեղ այսպիսի բան չի եղել, իսկ դա դեռ մեծ ու ավագ մարդ է և մի աշխարհի գլխավոր է. որովհետև, ինչպես ասում են, զրանց աշխարհում թագավորն ու դա մի հաշվի են, և ասում են, թե այն աշխարհում, որտեղից զրանք եկել են, այդ մարդուն սիրում են, որ նա այնտեղ երևելի մարդ է: Դրա հետ եկողները մեզ պատմեցին, թե դա թագավորին ազգական ու մեքեմավոր է, և դրանց աշխարհը այդ մարդուն սիրում է»:

Իսկ թագավորը նրանց պատասխանում է. «Դուք ճիշտ եք ասում, ո՛վ իմաստուն մարդիկ, այդ այդպես է: Եթե նրա տերը նրա միջոցով ինձ անարգանք ու նախատինք հասցնեք, չէր կարելի նրա բանքերին մեղադրել, պատժի կամ բանտի ենթարկել, բայց նա իբր սեփական կամքով ինձ անարգեց, իբր կամքով իմ որդու մահվան երաշխավոր եղավ, նա հենց ասաց, թե ես ինքս նրան սպանեցի: Իսկ երբ նրա թագավորը սիրո համար նրան մեզ մոտ ուղարկեց, բայց նա գալով մեզ կոտորեց, հենց իր թագավորի առաջ էլ հանցաբար է ու վնասակար: Բայց որովհետև նա ինքնազուլու բան արեց, պետք է պատասխանատու լինի. նա մահապարտ է, որովհետև գիտեմ, որ թագավորի կողմից չէ գրաարածը»:

Թագավորը այլևս նրանց չլսեց, այլ հրաման տվեց երանելի ներսեսին արքային, տանել զցել մեծ ծոփում մի կղզի, այնպիսի մի ամալի տեղ, ուր ո՛չ մարդ լինի, ո՛չ խոճուղաբ և ոչ կեթակուր, լուկ մի անապատ լինի, որպեսզի սովից մեռցնի նրան:

Ապա նա իր ամբողջ իշխանության քաղաքներից հավաքեց բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին ու սարկավազներին, որոնք ուղիղ հավատն էին դավանում: Եշխանության բոլոր տեղերից եկան, մեծ ժողով կազմեցին:

Թագավորը նրանց հետ խոսեց (և առաջարկեց), որ բոլորն էլ ընդունեն արիանոսական աղանդի սխալ դավանությունը, ապա դառնան իրենց վիճակները և իրենց ժողովուրդները դարձնեն արիանոսական հավատին: Երբ նրանցից ոչ մեկը սթան չհամաձայնվեց, ապա բոլորին արքայից ու քեց օտար աշխարհներ, որպեսզի նրանցից ոչ մեկը իր տեղը չգառնա, իսկ նրանց փոխարեն անօրեն գավանության հովիվներ էք նշանակում, արիանոս շեփակոպոսներ էք ուղարկում բոլոր քաղաքները: Եվ աշխարհի բոլոր եկեղեցիներում մեծ շարժում առաջ եկավ, խռովություններ ու աղանդներ ծագեցին: Եվ ամբողջ աշխարհում մեծամեծ նեղություններ, փորձություններ ու վտանգներ առաջ եկան, քան նախկին թագավորների ժամանակները, ավելի վատ, քան կուսպաշտ մեհենասեր թագավորների ժամանակ ծագած պատերազմներում: Բոլոր ճշմարիտ և ուղղափառ վարդապետները վտարվեցին իրենց ժողովուրդների մոտից, նրանց տեղերը զրավեցին աստանայի մշակները, Բրիստոսի բոլոր հավատացողները ենթարկվեցին տեսակ-տեսակ նեղությունների, բոլոր ժողովուրդները սգի ու տրամության մեջ ընկան: Որովհետև բոլոր եկեղեցիները զրավեցին աստանայի սպասավորները, հովիվները անշատվեցին իրենց հոտերից, և հոտերը ցրվեցին, որովհետև առաջնորդ չունեին, և հավատացյալ ժողովուրդի համար աղոթքի տեղեր չմնացին: Նրանք որպեսզի աստանայի սպասավորներին չհավատան, քաղաքներից ու գյուղերից զուրս, անշեն տեղերում, բաց երկրի տակ աղոթք էին անում և աղոթքների վերջում ուխտագրությանը խնդրում էին աստծուց, որ այդ շարժմանակը փոխի, վերացնի, ճշմարիտ առաջնորդներին զարձնի իրենց ժողովուրդների մոտ, դարձնի իրենց աշխատանքով շինված եկեղեցիները, որտեղից հալածվել էին: Թերևս նրանց էլ այստեղից վերադարձ լինի:

Իսկ այն իշխաններին, որոնք Հայոց աշխարհից սուրբ ներսեսի հետ գնացել էին, (Վազեսը) արձակեց՝ շատ գանձերով լիացնելով. մտածում էր բոլորին կաշառքներով կուրացնել և նրանց ձեռքով տակու, արծաթի ու թանկագին ակների մեծ գանձեր ուղարկել (Արշակ) թագավորին՝ նրա

սիրտը առնելու համար: Թիվ ու հաշիվ չկար այն գանձերին, որ ուղարկեց Հայոց թագավորին, և նրան ամբաստանության գիր էլ գրեց Ներսեսի մասին, իբր թե նա սպանեց իր որդուն: Նաև արձակեց Հայոց թագավորի Արշակունի պատանդներին, որ կալսերական պալատում էին գտնվում, Արշակ թագավորի եղբորորդիները, որոնցից մեկի անունն էր Գնել, մյուսինը՝ Տիրիթ: Սրանց հանձնեց Հայոց սատրապներին ու այսպես նրանց ճանապարհ գցեց:

## Գլուխ 2

ՔԵ ԻՆՉՊԵՍ ՍՈՒՐԲ ԵՆՐՍԵՍԸ ԱՔՍՈՐՎԵՑ ՈՒ ԳՑՎԵՑ  
ԱՄԱՅԻ ԿԳԶԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԵՐԱԿՐՎԵՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ  
ԱՍՏՄՈՒՑ ԼՐԱՇՔՆԵՐ ԵՂԱՆ ԻՆՉ ՏԱՐԻ:

Երբ վաղես թագավորը զայրանալով հալածանք հարուցեց բոլոր սուրբ եկեղեցիների դեմ իր իշխանության բոլոր կողմերում և բոլոր եպիսկոպոսներին հեռացնելով իրենց ժողովուրդներից օտարության մեջ գցեց, նա ավելի մեծ բարկությամբ գրգռված էր սուրբ Ներսեսի դեմ, որովհետև նրան էր համարում պատճառ իր մեկ հատիկ որդու մահվան, ուստի կամենում էր նրան շարաշար, դառն մահով մեռցնել: Թագավորի մեծամեծներն ու բոլոր խորհրդականները շահաձայնվեցին այս բանին և հազիվհազ կարողացան նրան մահից ազատել: Այն ժամանակ նա հրաման տվեց նրան գցել մեծ ահագին օվկիանոս ծովի մի կղզի, մի ամայի, անջուր տեղ, որտեղ ո՛չ դալար բույս կար, ո՛չ արմտիք և ոչ ուրիշ մի բան՝ մարդուն պիտանի, այլ միայն քար, ավազ, ապառաժ: Ճանապարհ էլ չկար դեպի այդ կողմը, և ոչ նավերի երթևեկություն:

Նրան տարան հասցրին հրամայված տեղը և նրա հետ յոթանասուն մարդ, որոնց մի մասը եպիսկոպոսներ էին ուրիշ քաղաքներից և մի մասը՝ հոգևորականներ ուրիշ եկեղեցիներից: Իսկ նա (Ներսեսը) ուրախ էր այս բանին, որ իրեն վիճակվեց շարաշարանքներ կրել Հիսուս Քրիստոսի՝ աստծու որդու անվան համար: Նրա հետ աքսորվածներից

երկուսը իր մարդիկ էին, մեկի անունը՝ Ռաստոմ սարկավազ, երկրորդինը՝ Տիրանամ. նրանց հետ եղած մյուս յոթանասունին էլ (ճանապարհին) այստեղից և այնտեղից նավը լցնելով տարան դեպի կղզին: Նավը, որ նրանց տանում էր, մեկնեց, հաջողակ քամով տասնհինգ օրում հասավ հրամայված տեղը: Նավը նրանց կղզին հանեց և ինքը ետ դարձավ:

Այն կղզում ո՛չ խմելու ջուր կար և ոչ շնչին արմտիք, որովհետև անբույս ավազ էր միայն. հենց այս պատճառով էլ նրանց այնտեղ էին տարել, որ սովամահ անեն՝ թագավորի խիստ հրամանի համաձայն: Երբ նրանք մի ամսաշափ ժամանակ այնտեղ մնացին, նրանց մեջ ավելի թուլյերն սկսեցին քաղցից ու ծարավից տանջվել, տառապել, թուլանալ, նվաղել:

Այն ժամանակ Ներսեսն սկսեց բուրբին քաջալերել ու մխիթարել՝ ասելով. «Հաստատ ու պինդ մնացեք, մի՛ վախենաք, որովհետև մեր տեր Հիսուս Քրիստոսն էր, որ սարեկա ծառին հրամայեց խոյ բերել իբրև պտուղ<sup>74</sup>, որ Իսահակին կենդանի զոհ քնդունեց, որ Հակոբին օրհնեց պանդխտության մեջ, որ Հովսեփին ստրկությունից փրկեց ու տեր դարձրեց, որ մորենուն հրամայեց՝ կրակով տերևակալել ու ծաղկել, որ օդին հրամայեց՝ վերևից քաղցր կերակուր ցողել<sup>75</sup>, և դառն ապստամբ ժողովրդին լորամարզի թռչուններ տվեց ուտելու, և ինքը՝ Քրիստոսը, վե՛մ դառնալով նրանց հետ շրջում էր անջրդի անապատում ու ծարաված ժողովրդին քաղցր ջուր մատակարարում, և իբրև ապագայում լինելիքի գուշակություն՝ Մովսեսի գավազանով ապառաժը ձեղքելով ջուր էր հոսեցնում նրանց համար ու այս օրինակով առաջին անգամ նրանց կյանքը պահպանում, ինքն էլ անապատում քիչ հացով ժողովուրդը կերակրեց, և նման այն ծառին, որ խոյ բերեց, ինքն էլ խաչին գամվեց ու կախվեց, և վերի օրինակի համաձայն ինքն էլ կողից խոցվեց ու այնտեղից մեզ համար հանեց փրկության ջուր, որպեսզի ապաշխարությամբ լվացվենք և մաքրվենք՝ մեր կյանքի համար. ինքը մեզ համար հաց եղավ, իր արյունը տվեց մեզ խմելու, որպեսզի մարմինը մարմնի հետ խառնի, արյունը՝

արյան հետ, աստվածութիւնը մեր հոգու հետ միացնի և մեզ՝ սուրբ հոգու հետ ու վերջում մեզ աստվածութեան հետ բնակակից դարձնի: Արդ՝ նա, որ այսքան երախտիք էր մեզ ցույց տալիս, մինչդեռ մենք նույնիսկ շնորհակալութեան խոսք չասացինք իրեն, ինչպե՞ս կարող եք կարծել, թե նա սովամահ կթողնի մեզ, որ թեկուզ մի փոքր շափով անարգանք կրեցինք նրա անվան համար: Ո՛չ, այդպես չէ, մենք հավատով խնդրենք, և մեզ կերակուր կտրվի: Ի՞նչ է, մենք հրա՛շք ենք խնդրում. ո՛չ, հրաշքը թերահավատների համար է պետք և շարերին ուղղութեան բերելու համար. իսկ մեր վերաբերութեամբ՝ տերը գիտե մեր կարիքներն ու օգտակարը և ըստ այնմ կատարաստի, ինչ որ մեզ պետք է: Մենք այնպես շնք, ինչպես ասաց՝ թե «Չար ազգը հրաշք է խնդրում», քով լիցի: Ինչ որ մեզ կարեւոր է, մարդկանց հասարակութիւնից դուրս չի կարող լինել: Տերը կարող է առանց կերակրի էլ մեզ կենդանի պահել, կարող է և կերակուր տալ, կարող է և արդարացնել, կարող է մեզ մահվան արժանացնել իր անվան համար՝ տալով մեզ սովորական բնական մահը, որից մարդ ազատում չունի<sup>76</sup> և իր անունը միայն աներևույթ մարմնի վրա պատճառ դարձնելով՝ մեզ իր արքայութեան մասնակից անել. կարող է մեզ խաղաղ մահով մեռցնել և արքայութեան արժանացնել:

Այս և սրանց համապատասխան ուրիշ բաներ ասելուց հետո նա ասաց. «Բոլորդ ծուր դրեք, որ արժանանանք Քրիստոսի մարդասիրութեանը»: Եվ երբ նրանք երեք անգամ ծունր դրին ու աղոթեցին, ծովում սաստիկ քամի բարձրացավ և սկսեց կղզին թափել մեծ քանակութեամբ ձուկ, այնպես որ ցամաք կղզու վրա կույտեր գոյացան, և սրա հետ միասին շատ-շատ փայտ: Երբ փայտը հանեցին, կույտ շինեցին, մտածեցին, թե կրակ է հարկավոր, որով փայտը վառեն: Հանկարծ փայտը ինքն իրեն կրակ առավ ու սկսեց վառվել: Նրանք աղոթելուց վեր կացան գոհութեամբ, ձուկը խորովեցին, բազմեցին և սկսեցին ուտել: Երբ կերան, կըշ-

\* Լրացնում ենք ըստ բնագրի՝ բաց թողնելով միայն մանէ բողբ, որի գործածութիւնն այստեղ անհասկանալի է մնում:— Խմբ.:

տացան, ու խմելու ջուր հարկավար եղավ, սաքի կանգնեց սուրբ ներսեսը, կղզու մեջ աճազը փորեց. բխեց անուշ ջրի աղբյուր, և այնտեղից շարունակ խմում էին կղզու վրա եզոզները:

Այս կղզու վրա այս կերպով նրանք կերակրվում էին ծովից. և սուրբ ներսեսը շարունակ նրանց մխիթարում էր ու ասում. «Այսպես հիշեցե՛ք և մտքներումդ պահեցե՛ք տիրոջ խոսքերը, որ ասաց. գուք աստծու արքայութեանն ու նրա արդարութիւնը փնտրեցե՛ք, և այդ բաւարը ձեզ կտրվի ու կավելանա: Տեսնո՞ւմ եք, եղբայրներ՛, որ աստված մեզ հետ վարվում է ինչպես որդիների հետ՝ մեզ խրատելու համար, որպեսզի մեզ պիտանի մարդիկ դարձնի, քաջութեան անուն մեզ ժառանգեցնի և մեծամեծ վարձերի արժանացնի: Իբրև հատուցում նա մեզանից մի փոքր առաքինութիւն է պահանջում — որ նրան սիրենք, որի փոխարեն նա անթիվ, անշափ, անհաշիվ, անհամեմատ բարիքներ, բարեբարութեաններ ու հրաշքներ է անում մեզ համար և իր մարդասիրութեամբ բարին հատուցում. որովհետև նա նույնիսկ իր անձը շինայից մեզ համար դնել, այլ մեզ համար կերակուր և ըմպելիք էլ դարձավ»:

Այս կերպով եղբայրները շարունակ գոհութեամբ օրհնում էին տեք Հիսուս Քրիստոսին, դիշեր-ցերեկ անդադար տիրոջ սպասավորութիւնն էին կատարում: Նրանք սպասում էին արեգակի մայր մտնելուն, ապա տիրոջ տված կերակրովն ուրախանում էին, որ ալիքները դուրս էին գցում՝ կերակուր պատրաստելու համար: Իսկ սուրբ ներսեսը յոթ օրվա կերակրի օրն էր միայն ճաշակում ու այս կերպով միշտ սրտապնդում էր նրանց ինը տարի<sup>77</sup>, որ այն կղզում մնացին:

### Գ Լ Ո Ւ Խ Է

ԱՍՏՅՈՒ ՀՐԱՇԷՐ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՎԱՆ ԿԵՐԵՍԻ ՅԻ ԲԱՐԱՍԻՍՏՈՒ  
ՎՐԱ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՎԵՐԵՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՆԵԱՆՉՁԱՏՈՒ  
ԷՐ ԲԱՐԱՍԻՍՏՈՒՆ:

Իսկ Կեսարիայի Եվսեբիոս եպիսկոպոսը երբ այն գարմանալիքը տեսավ, այսինքն որ երկնքից իջած ազավներն նախ նստեց Կեսարիայի երիցապետ սուրբ Բարսիլոսի վրա,

մտքում ատելութուն զգաց նրա դեմ և նրան համարում էր իբրև հակառակորդ<sup>78</sup> ու թշնամի, որովհետև ամբողջ երկրում հռչակվել էր, թե երբ ներսես սուրբ կաթողիկոսին ձեռնադրում էին, (ս. հոգին) աղավնու կերպարանքով իշավ ու կանգնեց նախ երիցապետ սուրբ Բարսիլիոսի վրա և հետո նրա վրայից բարձրանալով թռավ նստեց ներսես քահանայապետի վրա: Այս հռչակը նրանց մասին տարածվում էր մանավանդ Գամիրք աշխարհում: Մարդկանց մեծ բան էր թվում այս ամբողջ հրաշքը, և բոլորը պատվում էին սուրբ Բարսիլիոսին, մանավանդ որ նա մաքուր վարք ուներ, ճշմարիտ կարգերի էր հետևում, շատ խոնարհ էր, ջերմեռանդ աղոթում էր աստծուն, պարկեշտ էր պահում իրեն, սիրում էր աղքատներին և տառապյալներին ու միշտ կատարում էր (աստվածային) պատվիրանները: Բացի սրանից՝ նա մեծ գիտության տեր էր, իմաստության անպակաս աղբյուր էր և հավատարիմ ուսուցիչ ու վարդապետ, որովհետև նա իր փրկիստփայլական արվեստով միշտ փակում պապանձեցնում էր հերետիկոսների զուր բացած բերանները և ամենասուրբ երրորդության ճշմարիտ հավատը հաստատում էր ամենքի համար: Այս բոլորի պատճառով ամենքը նրա վրա նայում էին իբրև Քրիստոսի առաքյալի, ինչպես մի երկնավոր հրեշտակի, և բոլորն էլ վկայում էին, թե նա հիրավի արժանի էր աստծու հոգուն:

Իսկ նա իրեն շատ խոնարհ էր պահում և անարժան էր համարում, թեպետ ամեն մարդ ցանկանում էր նրա մոտ գալ նրա գիտության պատճառով. մանավանդ նրա մոտ հաճախում էին հեթանոս ճարտար փրկիստփաներ իրենց գիտության համար. նա (նրանցից) շատերին իրենց զանազան սխալ կարծիքներից դարձնում էր դեպի ճշմարիտ հավատը, անթիվ մարդկանց դարձնում էր Քրիստոսի երկրպագողներ: Բոլորն այնպես սկսեցին նայել նրա վրա, իբր թե նա հենց երկնքից իջած լինի—այն աստիճան, որ պատմել չի լինի: Բայց երբ նա նկատում էր իր եպիսկոպոսի խոժոռած երեսը իր դեմ, սուրբ Բարսիլիոսը տեղի էր տալիս, թողնում էր քաղաքը, գնում ապրում էր գյուղերից մեկում, որտեղ նրան պատշաճ էր մնալ:

Գ յ ու խ Ը

Թե Ինչո՞ւս ՎԱՂԵՍ ԿԱՅՈՐԸ ՀԱԱԾԵՑ ԲՈՂՈՐ ՈՒՂԱՓՈՒ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՄԵՑԱՎ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔԵԼ ԸՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՈՒ ԱՐԻԱՆՈՍՅԱՆ ՄՈՂՈՐ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՔԱՆՁԵԼԻ ՏԵՍԻԼՈՎ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԻԼԻՈՍԸ ՀՐԱՎԻՐՎԵՑ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՍՏՈՒ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՂՔԵՑ ԵՎՍԵՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՑՈՒԹՅԱՄԲ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՎՍԵՐԻՈՍԸ ՎԱՆՃԱՆՎԵՑ ԲԱՆՏՈՄ, ԻՍԿ ԲԱՐՍԵՂԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՑ:

Այն ժամանակները անօրեն վաղես կայսրը մեծ բարկությամբ կռվում էր ճշմարտության մշակների դեմ, այսինքն նրանց դեմ, որոնք Քրիստոսի հավատը արժանապես դավանում էին, թե նա իսկապես աստծու որդի է, հայր աստծու էությունից ծնված: Սրա պատճառով նա ընդհանուր հալածանք, տանջանքներ ու շարշարանքներ էր կամենում հարուցել, և (այս մտքով) խիստ հրաման գրեց ու տվեց ամենքին:

Ապա արիանոսների մոլի աղանդի ուսուցիչները մի տեղ հավաքվեցին ու ասացին թագավորին. «Թող դեմադեմ վիճաբանություն կազմակերպենք, թագավոր, և ո՞ր կողմը հաղթի, թող հայտնի դառնա, և այնպես շերևա, թե հաղթությունը բռնությունք ու խարհությունք ենք տարել»: Վաղես թագավորը այս լսելով ուրախացավ. նա իր կողմից ընտրեց ճարտար, վիճաբանության հմուտ մարդիկ, որոնք համարվում էին բանիբուն և ուսյալ՝ արիոսական աղանդի չեպիսկոպոսների մեջ: Կեսարիայի Եվսեբիոս եպիսկոպոսին էլ (մարդ) ուղարկեց, պահանջելով, որ նշանակեն ժամկետ նրանց դավանության քննության, որ նա գա, և իր ներկայությամբ քննություն կատարվի, որպեսզի հայտնի դառնա, թե ո՞րն է ճշմարիտը: Երբ այս ժամադրությունը նշանակվեց, Եվսեբիոս եպիսկոպոսը բոլոր հոգևորականներին հավաքեց, և մեծ տարակուսանքի մեջ էր ընկել, թե ինչպես պիտի կարողանա (հակառակորդների) խոսքերին պատասխանել<sup>79</sup>, որովհետև խոսելու մեջ էլ շատ շնորհք չունեի: Խորհրդակցության մեջ որոշեցին, որ մարդ ուղարկեն երանելի Բարսիլիոսի մոտ համոզելու, որ գա. որովհետև, ասում



էին, նա հզոր է խոսքով, նա մեծ շնորհք ունի սատանայի դավաճան նենգութիւնը խափանելու. որովհետև նա մտածում է (Քրիստոսի) եկեղեցու մասին, որը նա ստացաւ իր արյունով:

Եվսերիոս եպիսկոպոսը ազաշանքի թուղթ գրեց Բարսեղ քահանայապետին, որի մեջ հաճատի փառքին վերաբերող մեծ պաղատանքով խնդրում էր, որ առաջ պատահած գրծտութիւնը մտքից հանի, այլ փութա առանց դանդաղելու գա, որովհետև խոսքն ու քննութիւնը վերաբերելու են հավատին: Բոլոր հոգևորականներն էլ աղաչանքի թուղթ ստորագրեցին, որ չդանդաղի, անմիջապես գա. հավատարիմ պատվավոր մարդիկ էլ ուղարկեցին, որ շտապեցնեն նրա գալուտը:

Երբ այս մարդիկ, որ գնում էին նրան բերելու, ճանապարհ ընկան և ճանապարհին էին, սուրբ Բարսիլիոսը իր եղած տեղում տիրոջ սպասավորութիւնը կատարելիս՝ մի ծանր, խոր քնի մեջ ընկավ: Երազում տեսավ մի մեծ վայելուչ այգի, առատ պտուղներով լի. երեք խոզ ընկել էին այգին, մտել ու փշացնում, փորփորում էին այգին: Վագերի տակ շատ տեղ գետինը փորում էին, վագերն արմատախիլ անում, հողով հանդերձ դուրս էին հանում, քարուքանդ էին անում: Այգեպանները եկել աշխատում էին, բայց չէին կարողանում վնասարար խոզերը այգուց դուրս անել: Ապա նրանք ձայն էին տալիս Բարսիլիոսին ու ասում. «Եթե դու, Բարսիլիոս, չգաս, ուրիշ ոչ ոք չի կարողանա այս խոզերը այգուց դուրս հանել, և ավերմունքը չի դադարի. շտապի՛ր, ե՛կ, հասի՛ր, տե՛ս, թե ահա հենց հիմա ի՞նչ մեծ վնասներ են գործում»: Ապա ինքը՝ Բարսիլիոսը, ներս մտավ, վնասարար խոզերը դուրս հանեց այգուց և խախտված տեղերը նորից կարգի բերեց:

Քնից արթնացավ սքանչելի Բարսեղը, զարմանում էր այս տեսիլի վրա և մտածում էր, թե այդ ի՞նչ է նշանակում, և ահա եկան Կեսարիա քաղաքից ուղարկվածները ու Եվսերիոս եպիսկոպոսի թուղթը հանձնեցին: Կարդաց և ուրախ եղավ, որովհետև իմացավ, որ աստծուց էր թելադրված իրեն հրավիրել ճշմարտութիւնը պաշտպանելու և

պատասխան տալու: Ուտի իսկույն վեր կացավ, հրավիրողների հետ միասին գնաց Եվսերիոս եպիսկոպոսի մոտ: Հարկավոր բաների մասին խորհրդակցեցին, Բարսիլիոսը Եվսերիոս եպիսկոպոսին ասաց, որ կայսրից իրավունք խնդրի քահանաներից մեկին իր հետ տանելու: Եվսերիոսը գնաց կայսեր մոտ և խնդրեց, ասելով. «Ի՞նչ իմ դեմ երկու ախոյան ես հանում, թող ինձ հետ էլ գա իմ քահանաներից մեկը»: Կայսրը հարցրեց արիանոս եպիսկոպոսներին, նրանք համաձայնվեցին, որ Եվսերիոսը ատյան գալիս իր հետ բերի մի քանի ընկերներ:

Երբ ատյանի ժամը հասավ, կայսրը առավ Եվսերիոս եպիսկոպոսին ու նրա հետ երանելի Բարսիլիոս երիցապետին, իսկ հակառակորդներից, որոնք սատանայի կողմից էին, նրանց երկու ախոյաններին, արիանոս եպիսկոպոսներին, և քննութիւնն ու վիճարանութիւնն մեջ մտան Հիսուս Քրիստոսի՝ աստծու որդու մասին, արդյոք նա ծնունդ է և որդի հայր աստծու էութիւնից, թե՞ ոչ: Երանելի Բարսիլիոսը, որ կանգնած էր Եվսերիոս եպիսկոպոսի ետևը, սուրբ հոգով լցված՝ վկայութիւններ էր գրում Արարածոց գրքից, օրհնքներից, մարգարեներից, առաքյալներից, ամբողջ աստվածաշունչ Գրքից, բացատրում էր ու ապացուցում և սատանայի երկու կողմնակիցներին թագավորի հետ միասին պապանձեցնում էր և ամոթապարտ գարձնում:

Այս ժամանակ Վաղես թագավորը նայեց եպիսկոպոսին ու տեսավ, որ քրտնել է: Սկսեց խոսել ու ասաց. «Այդ ի՞նչ բան է, ինչո՞ւ ես այդքան քրտնել, ճշմարտութիւնը քննելու ժամանակ դու այդ վարձկան գրչի միջոցով հաղթեցիր»: Եպիսկոպոսը թագավորին պատասխանեց ու ասաց. «Երկու խոզ ու մի էլ այսքան երկար ճանապարհ քշեցի, և դու գեռ ասում ես, թե ինչո՞ւ ես քրտնել»: Թագավորը զղջաց, որ թույլ ավին Բարսիլիոսին էլ ներս մտնել Եվսերիոսին օգնական: Իսկ արիանոսները ամոթահար վեր կենալով ասացին թագավորին. «Ի՞նչ պետք են այս քննութիւններն ու նեղութիւնները. իբրև տեր հրամայի՛ր, որ քո կամքին չհնազանդվողները հալածանքի ենթարկվեն»: Սրա վրա ատյանը լուծվեց ու վերջացավ:

Եվ (Վաղես Թագավորը) հրամայեց բանտը դնել Եվսեբիոսին ու նրա հետ ուրիշ շատերին. և ուղղահասակատ-ուղղափառ քրիստոնյաներին նեղութիւն էր տալիս, բոլոր կեղեցիկների վրա հարկ դրեց շատ մեծ տուգանքով:

Եվսեբիոս եպիսկոպոսը բանտի մեջ մեռավ սաստիկ նեղութիւններից: Իսկ սուրբ Բարսեղի վերաբերմամբ Կեսարիայի ժողովուրդներն ասում էին. «Եթե դրան բանտից շարձակեք, ապա մենք ամբողջ քաղաքը կայրենք»: Երբ բոլորն սկսեցին այսպես աղաղակել, ապա Թագավորը նեղեց և հրամայեց երանելի Բարսիլիոսին ազատ արձակել:

### Գ լ ո լ խ Ժ

ԹԵ ԻՆՉՊԵՄ ԲԱՐՍԻԼԻՈՍԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸՆՏՐԵՑԻՆ, ԵՎ ԻՆՉՊԵՄ ԱՍՏՅՈՒՑ ԶՐԱՇՔ ԵՂԱՎ. ԿԱՄ ԻՆՉՊԵՄ ԶՐԱՄԱՅԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՎԱՏԱՑՈՂ ԺՈՂՈՎՐԻՒՆ: ԲՈՂՈՐ ԳԱՆՁԵՐԸ ԲԵՐՆԸ, ԵՎ ՆՐԱՆՔ ՈՒՐԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԵՐՈՒՄ ՏԱԼԻՍ ԷՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԵՆԱՐԱՐ ԸՆԾ ԱՍՏՅՈՒ ԶԱՄԱՐ, ԿԱՄ ԻՆՉՊԵՄ ՈՒՆԵՑ ՈՒ ԵՆԿՐՎԱԾՔՆԵՐ ԷՒՆ ԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԶԱՄԱՐ:

Ապա Կեսարիայի իշխանութիւնն ընտրեցին Կեսարիայի արքեպիսկոպոս: Երբ բոլոր եպիսկոպոսները միատեղ հավաքված էին սուրբ Բարսեղին ձեռնադրելու, երկնքից ազակնին իջավ ու թառեց նրա վրա՝ ինչպես առաջին անգամ, երբ ձեռնադրում էին Ներսես եպիսկոպոսապետին: Բոլորին մեծ զարմանք պատեց. սկսեցին գոհութիւն մատուցել մարդասեր Քրիստոսին, որ ինչպես իր վրա ցույց տվեց աստվածութիւնն նշանները, նույնը ցույց տվեց (իր) ծառաների և սրբերի վրա: Եվ Բարսեղը նստեց Կեսարիայի կաթողիկոսութիւնն աթոռը:

Իսկ Վաղես Թագավորը նեղում էր քրիստոնյա ժողովուրդներին. «Ով որ,— ասում էր նա,— իմ իշխանութիւնն մեջ քրիստոնյա անուն է կրում, ոսկի և արծաթ չպիտի ունենա, պարտավոր է պետութիւնը տալ»: Եվ սկսեցին զանազան քաղաքներից, գորգերից ու զորավարներից երդումով հավաքել, որպեսզի քրիստոնյա անուն կրողներին ոչ մեկի

մոտ ոչ մի դանակ<sup>80</sup> ոսկի կամ արծաթ չմնա, իսկ եթե գրտնրվի, այդպիսին մեռնի: Ապա ամեն ոք խնդութեամբ բերում հանձնում էր եկեղեցուն Քրիստոսի անվան համար՝ հոժարութեամբ հանձն առնելով այդ պատճառը: Այս կերպով Թագավորի գործակալներն ստիպեցին Կեսարիա քաղաքի ժողովրդին՝ ոսկին ու արծաթը հավաքել: Երանելի Բարսիլիոսն սկսեց քաջալերել ժողովրդին, որ ուրախ սրտով բերեն: Նրանց այսպես էր ասում. «Բերե՛ք, իմ ձեռքը հանձնեցե՛ք, և ես երաշխավոր եմ լինում, որ ինքը՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը՝ ասածու որդին, որի դեմ Թագավորը խրոխտացել կովում է, նրան կսպանի: Բայց դուք ձեր տիրոջ համար հանձն առեք ուրախութեամբ ձեր ստացվածքների հափշտակութիւնը, որովհետև երկնքում ձեզ համար պահվում է այն գանձը, որ չի կորչում. իսկ այստեղի գանձը ես կարճ ժամանակում անձամբ ձեր ձեռքը կհանձնեմ դարձյալ»: Ուստի Կեսարիա քաղաքի ամբողջ ժողովուրդը բերեց, մի տեղ հավաքեց որքան ոսկի կամ արծաթ չուրաքանչյուրի մոտ կար. բերին լցրին եկեղեցին, կանչեցին Թագավորի հավատարիմ իշխաններին և եկեղեցու դռները կնքեցին:

Սրանից հետո Վաղես Թագավորը հրամայեց նորից կապել Բարսեղ եպիսկոպոսապետին, բանտը գցել և նեղել, նույնպես և բոլոր քաղաքներում՝ բոլոր եպիսկոպոսներին: Բայց ամբողջ ժողովուրդը ուխտ ու խնդրվածքներ էր կատարում, որ այս վերահաս բարկութիւնը դադարի, և ճշմարիտ հովիվները դառնան գան իրենց տեղերը, իրենց ժողովուրդների մոտ:

### Գ լ ո լ խ Ժ

ԹԵ ԻՆՉՊԵՄ ՎԱՂԵՍ ԿԱՅՍՐԸ ՍՈՓԵՍՏԵՍԻՆ ԿԱՆՉԵՑ ԶԵՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄԱՔԱՌԵԼՈՒ. ԻՆՉՊԵՄ ՍՈՓԵՍՏԵՍԸ ՏԵՍԱՎ ԶՐԱՇՔԸ՝ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱՌՈՒՈՒՄ, ԿԱՄ ԻՆՉՊԵՄ ՎԱՂԵՍ ԿԱՅՍՐԸ ՍՊԱՆՎԵՑ ԱՍՏՅՈՒՑ ԵՂԱՍ ԶՐԱՇՔՆԵՐԹՎ, ԵՎ ԿԱՄ ԻՆՉՊԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԳՏԱՆ ԱՍՏՅՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ:

Այն ժամանակ Վաղես Թագավորը հրամայում է փնտրել գտնել մի ճարտար մարդ, որ կարող լինի գրով հակաձառել քրիստոնեական հավատի դեմ: Եվ նրան պատմեցին, թե

ինչ-որ քաղաքում կա մի ճարտար սփեանոս<sup>81</sup>: Կայսրը նրա մոտ մագիստրիանոսներ<sup>82</sup> ուղարկեց, որ շուտով գնան և նրան անհապաղ իր մոտ բերեն: Գնացին, իսկույն տարան:

Երկու օթևան անցնելով՝ նրանք եկան հասան մի ուրիշ քաղաք. քաղաքից դուրս կար մի վկայարան սրբուհի Քեկդիի: Երբ այստեղ հասան, սփեանոսը իջավ և իրեն կացարան ընտրեց վկայարանի ներսը, իսկ մագիստրիանոսներն իջևանեցին քաղաքում: Երբ սփեանոսը հաց կերավ և անկողին գցեց, մատուռի դռները փակեց, անկողնու վրա նստեց և ուզում էր պառկել: Եվ մինչդեռ արթուն էր, բաց աչքերով տեսավ, որ հանկարծ մատուռի դռները բացվեցին, և երևաց նահատակների մեծ բազմություն, մեծ փառքով: Նրանց առաջ դուրս եկավ սրբուհի տիկին Քեկդին փառավոր զարդարված, կարծես լույսի ճառագայթներ էին թափվում վրայից: Իրար ողջունեցին, տիկին Քեկդին ասում էր նրանց. «Բարով եկաք, Քրիստոսի սիրելիներ, բարեկամներ և վաստակավորներ»: Իրար ողջունելուց հետո աթոռներ դրին առ կարգով նստեցին: Հետո սրբերն սկսեցին խոսել և ասում էին. «Տիրոջ այն սրբերը, որոնք գեռ ապրում են աշխարհում, այստեղ նեղություն մեջ են, ոմանք կապանքներում, ոմանք բանտերում, ոմանք աքսորում, ուրիշները ենթարկված են բռնությունների, հարկերի ու խոշտանգումների: Մենք փութապես հավաքվեցինք, որպեսզի անուշադրության շմատներն, այլ նախանձախնդիր լինենք աստծուն հավատացողների համար: Մանավանդ որ տիրոջ շատ մշակներ անհետացած են, շատ արտեր անմշակ են մնացել, շատ այգիներ խոպանացել են. մենք պետք է մշակներին վերացնող Վաղեսին վերացնենք, որպեսզի ամեն մի մշակ իր գործին կանգնի: Բարսիլիոս քաջ մշակն էլ իր գործից խափանվել էր: Եկե՛ք, մեզանից երկուսին ուղարկենք, որ գնան շարա գործ Վաղեսին կյանքից զրկեն»: Ապա (ընտրում են) երկուսին, մեկի անունը Սարգիս, մյուսինը՝ Քեղոթոս, նրան ուղարկում են և ժամադիր են լինում ու ասում. «(Վաղը նույն այս ժամին եկեք, մենք էլ կգանք»: Հետո վեր կացան իրարից բաժանվեցին, գնացին:

Այս բոլորը լսեց սփեանոսը, որ մատուռում էր գտնվել

վում, բաց աչքերով տեսավ այս տեսիլը, մնաց զարմացած. մինչև լույս անջուն մնաց: Լույսը բացվելուն պես մագիստրիանոսները եկան և ասացին սփեանոսին. «Վե՛ր կաց, մեր ճանապարհը գնանք»: Նա պատճառ բերեց, թե տկարացել է, չի կարող տեղից շարժվել: Երբ նրանք սկսեցին նրան ստիպել, նա թալկացավ, ուշաթափվեց, հագիվ էր շունչ քաշում և մինչև երեկո չէր կարողանում նրանց պատասխան տալ: Ապա երբ երեկո եղավ, մագիստրիանոսները նրան թողին մատուռում, գնացին քաղաք, իրենց կացարանը: Իսկ սփեանոսը մատուռի դռները փակեց և իր տեղում ընկողմանեց: Նրան հանկարծ դարձյալ երևաց, որ մատուռի դռները բացվեցին, եկան, հավաքվեցին, և մատուռը լրգվեց նույն նահատակներով: Իրար առաջ էին դուրս գալիս մեծ ուրախությամբ, իրար ողջունում էին և աթոռներ գնելով՝ կարգով բոլորեցին, նստեցին: Հետո եկան սուրբ Սարգիսն<sup>83</sup> ու Քեղոթոսը այն գործից, որի համար ուղարկված էին, և մտան սրբերի ժողովը: Ապա հավաքված նահատակների բազմությունը հարցրեց. «Ինչպե՞ս վերջացրիք այն գործը, որի համար գնացել էիք»: Նրանք պատասխանեցին, ասելով. «Հենց որ երեկ ձեր մոտից գնացինք, ճամարության թշնամուն՝ Վաղեսին, սպանեցինք<sup>84</sup> և միևնույն այս ժամին դարձանք եկանք մեզ մոտ»: Հավաքված ամբողջ բազմությունը վեր կացավ, գոհացավ մեր տեր Հիսուս Քրիստոսից, հետո բաժանվեցին, ամեն մեկը գնաց իր տեղը: Սփեանոսը մեծ ահի մեջ մնաց մինչև առավոտ:

Ապա երբ լուսացավ, մագիստրիանոսները եկան և ասացին սփեանոսին. «Վե՛ր կաց, գնանք կայսեր մոտ»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Կայսրը մեռավ, այժմ մենք ո՛ւմ մոտ պիտի գնանք»: Այս մասին նրանց մեջ մեծ վեճ բացվեց, դրազ եկան այս առիթով մինչև երեք օր: «Եթե,— ասաց նա,— ապրանքները լքալանվեն, քաղաքները չկողոպտվեն, եթե կայսրը նույնը մնա, ապա թող ես գլխատվեմ, որ այսպիսի բան համարձակվեցի ասել»: Ապա նրան մագիստրիանոսները երեք օր ժամանակ տվին, երեք օրից հետո լուրը ստուգվեց, որ կայսրը մեռել է:

Սրանից հետո ազատ արձակվեցին բոլոր նրանք, որոնք

երբևէ պատիժներ չէին ենթարկված կամ աքսորված էին. և ումից ինչ որ երբևէ հափշտակված էր, վերադարձրին: Նույնպես կեսարացիների համար հրաման տվին՝ ամեն մեկի իրերը վերադարձնել: Սուրբ Բարսեղը կանչեց, որ ամեն մեկը իր բերած իրը վերցնի, բայց ոչ ոք չէր ուզում մոտենալ, թեպետև Բարսեղը նրանց ասում էր. «Ահա իմ երաշխավորած իրերն ազատվեցին, և ես ձեզ խոստացա, թե անձամբ ձեր ձեռքը կհանձնեմ ձեր ստացվածքները»: Բայց նրանք չէին ուզում նրան լսել, այլ ասում էին. «Այդ իրերը թող մտնեն տիրոջ գանձարանը, որ մեր դատաստանը տեսավ և իր եկեղեցու սուրբ ուխտի վրեժն առավ»: Այսպես կեսարացիներից ոչ ոք իր արծաթին չնայեց, բոլորը թողին եկեղեցու գանձարանին: Ապա արքեպիսկոպոսը նրանցից շինել տվեց մկրտության ավազաններ. և այս արծաթե ավազանները մինչև այժմ էլ հաստատ մնում են լուսարանի<sup>85</sup> տանը:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

ԻՇԵԱՆՆԵՐԻ՝ ՆՈՐԻՑ ԶԱՅՈՑ ԱՇԵԱՐԸՂ ՎԵՐԱԿԱՌՆԱԼԸ, ՈՐՈՒՔ ԳՆԱՑԵԼ ԷՆ ՎԱՂԵՍ ԿԱՅՍԵՐ ՄՈՏ ԵՎ ԷԻ ԳԱՐՁԱՆ ԻՆԵՆՑ ՏԻՐՈՋ՝ ԱՐՇԱԿԻ ՄՈՏ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ ԶԱՅՐԱՏԱՎ ԿԱՅՍԵՐ ՎՐԱ ՈՒ ՈՐՔԱՆ ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆՑ ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ:

Սրանք են այն իշխանները, որոնք Հայոց աշխարհիս Արշակ մեծ թագավորի կողմից գնացին Հունաց Վաղես կայսեր մոտ: Ինքը՝ Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսը, և Մամիկոնյան տոհմի մեծ նահապետը, որի անունն էր Վարդան, Հայոց մեծ ստրատելատ Վասակի եղբայրը, որոնք Արշակ թագավորի դայակներն ու սնուցանողներն էին: Նրանց հետ Ռշտունյաց Մեհհեն նահապետը և Անձևացյաց Մեհառ նահապետը, Խոռխոռունյաց Գարջույլ Մախազ նահապետը, Սահառունյաց Մուշկ նահապետը, Գնթունյաց Իմեհտ նահապետը, Բագենից Կիշկեն նահապետը, Հրսիձորի Սուրիկ նահապետը, Հաբուժենից Վրկեն նահապետը<sup>86</sup>: Սրանք դեսպանությանը գնացին Վաղես կայսեր մոտ սեր և միաբանություն

հաստատելու: Իսկ Վաղես թագավորը արգելեց ու աքսորեց Ներսես մեծ քահանայապետին և նրա փոխարեն արձակեց Արշակ թագավորի եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին. Արշակ թագավորի սիրտը առնելու համար անթիվ, անհամար գանձեր տվեց Վարդանի և նրա հետ եղողների ձեռքը ու ճանապարհ դրեց:

Դեսպանները կայսեր մոտից մեկնելով՝ եկան հասան Մեծ Հայքի թագավոր Արշակի մոտ, նրան հանձնեցին կայսեր հրովարտակը և դրա հետ դժգոհության ու մեղադրանքի գրություն: Որովհետև կայսրը Հայոց Արշակ թագավորին գրել էր սուրբ Ներսեսի մասին, թե նա սպանեց իր մեկ հատիկ որդուն, այս պատճառով այստեղ պահվեց: Մեզ շեղողներն. ընդունի՛ր մեր ազատ արձակած երկու պատանիներին՝ Արշակի եղբորորդիներին՝ Գնելին և Տիրիթին: (Դեսպանները) ներկայացրին թագավորին նաև անթիվ գանձեր ու կարասիներ:

Իսկ Արշակ թագավորը երբ լսեց ու տեսավ այս ամենը, դժգոհություն հայտնեց գանձերը տվողին էլ, բերողներին էլ: Սաստիկ զայրույթ արտահայտեց կայսեր դեմ, թե ինչպե՞ս նա համարձակվեց արգելանքի ենթարկել այնպիսի մեծ և պատվավոր մարդու, որ մի աշխարհի և թագավորության գլխավորը, ուսուցիչն ու առաջնորդն էր: (Այդ) «շատ քրեքը, — ասում է, — կայսեր և ձեր՝ բերողներիդ, գլխին թափվեն: Քարեր մենք էլ շատ ունենք՝ (դրանց) տվողի և ձեր՝ բերողներիդ, ատամները թափելու. ինչպե՞ս պետք է այս անպատվությանը դիմանամ: Ես այս երախտիքի փոխարենը կհատուցեմ»: Հրաման տվեց իր Վասակ զորավարին՝ զորք հավաքել, գնդեր կազմակերպել, գնալ, զարկել և ավար առնել Գամիրքի կողմերը: Զորավար Վասակ սպարապետը իսկույն կատարում է նրա հրամանը: Մի տեղ հավաքում է մոտ երկու հարյուր վաթսուն հազար զորք, գնում ջարդում, ավար է առնում Գամիրքի կողմերը մինչև Անկյուրիա քաղաքը: Վեց տարի<sup>87</sup> իրար ետևից ավերում է Հունաց սահմանների երկրները: Լիացան մեծ ավարով և տեպակ-տեպակ հարստություններով, մեծ թշնամությամբ և սաստիկ բռնությամբ (ասպատակելով) այդ կողմերը:

ԲԱԳՐԵՎԱՆՈՒ ԵՄ ԵԳԻՍԿՈՊՈՍԷ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ԼԵՐՍԵՍԸ ՁԵՌՆԱԳՐԵԼ  
 ԷՐ ՈՒ ԻՐԵՆ ՏԵՂԱԳԱԶ ԲՈՂԵԼ: ԵՎ ԹԵ ԻՆՉՊԻՍԷ՝ ՄԱՐԻ ԷՐ ՆԱ, ԿԱՄ ԻՆՉ  
 ՀՐԱՇԷՐՆԵՐ ԿԱՏԱՐԿԵՄԼ ՆՐԱ ՁԵՌՔՈՎ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍՆ ՉԱՍՏԱՏ ԷՐ ՄՆՈՒՄ  
 ՃԵՄԱՐՏԱՌԹՅԱՆ ՄԵՋ, ՉԷՐ ԱԿՆԱԾՈՒՄ ԱՐՇԱԿ ՄԻՄ ԲԱԳՎԱԿՈՐԻՑ,  
 ԱՅԼԵՎ ԸՆԴՈՒՄԱՆՈՒՄ ԷՐ ՆՐԱՆ ՆՐԱ ԱՆՈՐԵՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՏՃԱԹՈՎ,  
 ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԵՆԱՄՈՒՄ ԷՐ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ  
 ԼԵՐՍԵՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԱԳԵՏԻ ՆՄԱՆ:

Այս մարդը՝ Խազը, բուն Կարին գավառից էր, Մարագ  
 գյուղից. նա ներսնս եպիսկոպոսապետի ձեռնասունն էր,  
 մեծացել էր նրա մոտ: Նա ցույց տվեց ընդունակություններ,  
 հավատի մեջ առաջադեմ հանդիսացավ, բոլոր գործերում  
 հավատարիմ գտնվեց իր պաշտոնի մեջ, առավելապես սեր  
 ցույց տվեց դեպի աստծու եկեղեցիին: Ապա սուրբ Ներսեսը  
 նրան վստահեց աղքատների հոգաբարձության գործը. այս-  
 տեղ էլ նա առավելապես երևաց իբրև բարեխնամ տե-  
 սուչ:

Ուստի երբ Ներսես եպիսկոպոսապետը պատրաստվում  
 էր Հունաց աշխարհն ուղևորվելու, այս Խազին ձեռնադրեց  
 Բագրևանդի ու Արշարունյաց եպիսկոպոս և նրան թողեց  
 իրեն փոխանորդ ու տեղապահ և ինքը գնաց: Իսկ հայերեն  
 խոսող ամբողջ աշխարհը՝ բոլոր գավառներում, կողմերում,  
 տեղերում, մեծամեծ աշխարհակալները, գավառատերերը,  
 նշանավոր ցեղերի նահապետները և ամբողջ քահանայա-  
 կան ուխտը ժողովրդի բազմության հետ ընկղմված էին սգի  
 ու տրամոթյան մեջ, որովհետև հեռացավ իրենց գլխավոր  
 հոտապետը: Իսկ Խազ սուրբ եպիսկոպոսը ամբողջ երկրին  
 հրաման է տալիս պաս պահել, աղոթք անել, խնդրել, որ  
 սուրբ Ներսեսը ետ դառնա: Եվ այն ամբողջ ժամանակ, որ  
 նա արգելանքի տակ էր, ժողովուրդը պահեցողությամբ ա-  
 ղոթում էր նրա համար: Իսկ Խազը ամեն բանում նրանց  
 առաջնորդում էր, ոչ պակաս, քան բուն հովվապետ Ներսե-  
 սը, մինչև որ տերը կատարեց աշխարհի խնդրվածքը, և  
 սուրբ Ներսեսը ետ դարձավ իր տեղը:

Այն ժամանակները Հայոց Արշակ Թագավորը այնքան էլ  
 շատ աստծու ուղիքով չէր գնում: Որքան որ նա մանկության

հասակում աստվածային իմաստություններ էր շարժվում, այն-  
 քան, շտապահաս գառնալիս, Թագվեց լիտիություն<sup>88</sup>, մեղկու-  
 թյան մեջ, և Թեպետ Խազ սուրբ հովիվը հաճախակի հանդի-  
 մանում ու կշտամբում էր նրան, նա ուշադրություն չէր դարձ-  
 նում:

Այս ժամանակ Թագավորը իր համար մի դաստակերտ  
 շինեց Հովիտ կոչված կոթ գավառում և իր իշխանության  
 բոլոր գավառներին հրաման ուղարկեց. հրամայեց, որ ա-  
 մեն տեղ մունետիկները կանչեն հրապարակներում, բոլոր  
 գավառներում, բոլոր կողմերում հայտնեն Թագավորական հր-  
 րամանը, որ ճեթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին  
 մի բանով վնասել է, թող բոլորը գան այդ դաստակերտը և  
 ապահով կլինեն: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին  
 վնասել է, կինը տարել է, կամ պարտապան է, կամ մեկի  
 գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի, թող գա այն-  
 տեղ, նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին  
 մի բան պարտք է, և պարտատերը այդ տեղը գա (պահանջե-  
 լու), նրան առանց դատի ու արդարադատության բռնեն և  
 դուրս հանեն»:

Երբ Թագավորից այս հրամանը դուրս եկավ, ապա այդ-  
 տեղ հավաքվեցին բոլոր գողերը, ավազակները, արյունա-  
 պարտները, մարդասպանները, ստախոսները, խաբեբանե-  
 րը, վնասարարները, գանձագողերը, գրկողները, դատի մեջ  
 ստողները, զրպարտողները, կողոպտողները, հափշտակող-  
 ները, ժլատները<sup>89</sup>: Շատ հանցանքներ էին գործում և այն-  
 տեղ ապավինում: Շատ կանայք իրենց ամուսիններին թող-  
 նում էին ու այնտեղ ընկնում. շատ տղամարդիկ իրենց կա-  
 նանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ  
 էին ընկնում. շատ ծառաներ իրենց տերերի գանձերը հա-  
 փախտակելով փախչում այնտեղ էին ընկնում. շատ ավան-  
 դառուներ իրենց մոտ պահեստի զրված ավանդները վերց-  
 նում այնտեղ էին ընկնում. ամբողջ երկիրը թալանում, ա-  
 վերում էին: Թեպետև ամեն կողմից խիստ աղաղակ բարձ-  
 րացավ, բայց դատ չկար, ոչ ոքի իրավունքը արքունիքից  
 չէր պաշտպանվում: Այս պատճառով բոլոր մարդիկ վա՛յ  
 տալով հառաչում էին. բոլորի բերանում ընդհանուր խոսք

էր դարձել և միշտ ասում էին, թե «Իրավունքը մեռավ. եթե նա գոյութիւն ունենար, բայց կորած լիներ, կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»:

Իսկ այն տեղը ավան ու քաղաք դարձավ, մեծացավ, բազմամարդացավ, ամբողջ հովիտը բռնեց: Արշակ թագավորը հրամայեց այդ դաստակերտի անունը իր անունով դնել Արշակավան: Նրա մեջ նաև թագավորական ապարանք շինեցին: Այնուհետև այլևս տիրոջից ամենևին չէին վախենում, ամենքը զրկանքներ էին կրում այդ պատճառով տրտունջ, բողոք, աղաղակ երկիրքն էին բարձրացնում: Այս գործի համար սուրբ խաղ եպիսկոպոսը շատ անգամ ընդդիմանում էր նրան և հանդիմանում, մանավանդ երբ նրան ստիպում էին, թե ե՛կ, Արշակավան ավանի եկեղեցում սեղան կանգնեցրու: Իսկ նա նախատում ու հանդիմանում էր Արշակ թագավորին, բոլոր մեծամեծներին և իշխաններին: «Բայց ես,— ասում էր,— տեղապահ եմ, ես իրավունք չունեմ որևէ բան անելու առանց իմ հոր, որ ինձ թողեց (տեղապահ)»: Ապա Արշակ թագավորը կամեցավ խորամանկութամբ՝ պատիվների, ստացվածքների միջոցով խաբել սուրբ խաղ եպիսկոպոսին. տվեց նրան շատ ոսկի և արծաթ, արքունական ախոռից շատ նժույզներ՝ արքունական սարքերով, ոսկեթել կրծքակալներով ու փորակապերով. սրանցով կամենում էր նրան խաբել, համոզել, իր կողմը դարձնել: Իսկ նա թագավորի առաջ աղքատներին էր բաժանում այն ստացվածքը, որ թագավորը տալիս էր, բայց հանդիմանութիւնը չէր պակասեցնում, մինչև որ թագավորը հրամայեց այն բանակից (այդ) խաղ եպիսկոպոսին հեռացնել:

Եվ նա գնաց երկրում շրջելու, բարեկարգելու, խրատելու, ուսուցանելու, խնամելու աղքատներին, ինչպես իրեն պատվիրել էր սուրբ Ներսեսը գնալիս: Նրա ձեռքով կատարվում էին շատ հրաշքեր ու հիվանդների բժշկութիւններ. չափազանց շատ սքանչելի բաներ էր կատարում: Բայց երբ նա օգնում էր աղքատներին և դատարկում էր բոլոր կճուճներն ու ամանները, գինու մառանները, մառանների բոլոր կարասները աղքատներին բաժանելով՝ մյուս օրը գնում տեսնում էր, որ նրանք նորից լցվել են, կարծես անտժու հրա-

մանով. և նորից օրբստօրե մատակարարում էր աղքատներին, և նրանք շարունակ լցվում էին:

Այսպիսի մեծ հրաշալի բաներ էին կատարվում այս մարդու ձեռքով: Սա մի զարմանալի, անվանի և հռչակված անձ էր ամբողջ Հայաստանում. շրջում էր ամեն տեղ Հայոց եկեղեցիները, խրատում և ուսուցանում էր, ինչպես իր ուսուցիչ Ներսեսը: Բայց մի անգամ գողեր եկան, սուրբ խաղ եպիսկոպոսի եկեղեցու եզները գողացան տարան: Մյուս օրը այս գողերի աչքերը կուրացան, և նրանք առանց գիտակցելու, խարխափելով բոլոր եզները բերին սուրբ խաղի դուռը: Ինքը՝ սուրբ խաղը, դուրս եկավ, նրանց տեսավ և գոհացավ տիրոջից, որ այնքան ուշադիր ու հոգատար գտնվեց իր հավատացողների հանդեպ: Հետո խաղ եպիսկոպոսը աղոթքի կանգնեց, գողերի աչքերը բժշկեց, հրամայեց նրանց լողացնել, ապա նրանց առաջը ճաշ դրեց և շատ ուրախացրեց: Այնուհետև նրանց օրհնեց. տվեց այն եզները, որ նրանք գողացել էին, և ճանապարհ դրեց, և նրանք գնացին: Այսպես, բոլոր իր գործերում մեծ համբերութիւն էր ցույց տալիս և շատ սքանչելիքներ էր գործում: Նա երկու աղջիկ ուներ. նրանցից մեկը կնության տվեց մի ոմն Ասրուկի (կամ Ասրիկի), որ իր աներոջ՝ խաղի մահից հետո նրա աթոռը նստեց:

## Գ լ ո խ Ժ Գ

Թ ԵՆՁ ՊԱՏԱԶԵՑ, ԵՐԲ ՆԵՐՍԵՍ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԶՈՒՆԱՑ  
ԱՇԵԱՐԶԻՑ ՎԵՐԱԳԱՐՁԱՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆԱ ՆԱԽԱՏՈՒՄ ԷՐ ՔԱԳԱՎՈՐԻՆ,  
ԵՎ ԻՆՁ ԱՆՎՈՐ ԶՐԱՇԵՆԵՐ ԿԱՏԱՐՎՅՑԻՆ ԱՐՇԱԿԱՎԱՆ ԱՎԱՆՈՒՄ, ԵՎ  
ԻՆՉՊԵՍ ԶԱՆԿԱՐԾԱԿԻ ՄԻԱԶԱՄՈՒԹ ԿՈՏՈՐՎՅՑԻՆ ԱՅՆՏԵՂ  
ԵՎԱՍ ԲՈՒՐ ՄԱՐԿԻ:

Երբ կայսրը մեռավ, ետ դարձան բոլոր հովիվ եպիսկոպոսները, որոնք քարոզված էին, և ապրում էր յուրաքանչյուրն իր քաղաքում: Այն ժամանակ ետ դարձավ նաև սուրբ Ներսես կաթողիկոսը այն ամայի կղզուց, ուր նրանց աքսորել էին. նա նորից նվիրվեց իր երկրին, որ ամբողջովին նրա համար խնդրանքներ էր անում: Երբ նա եկավ Հայոց աշխարհը, կրան ընդառաջ գնացին զանազան գավառներից եպիսկո-

պոսներն իրենց ժողովուրդներով, բոլոր նախարարները, գա-  
վառների տերերը: Նրա առաջ էին բերում իրենց հիվանդ-  
ները, և նա բժշկում էր նրանց, որի համար գոհութիւն ու  
փառք էին տալիս աստծուն. բոլոր մարդիկ այնպես էին սի-  
րում հովվապետին, որ համարում էին, թե իրենք ևս նրա  
հետ գերութիւնից ետ են դարձել:

Անծ գնծութեամբ շատ ուրախութիւն էին անում. ամեն  
ոք կատարում էր իր ուխտն աստծուն, որպեսզի իրենց հո-  
գևոր գանձն ու հայրապետը, որ կարգվեց նրանց համար,  
ետ դառնա. և աւտված կատարեց նրանց խնդրանքները, նը-  
րանց ցավալի որբութիւնը, նրանց սրտերը մաշող վշտերը  
փառատեց և նորից իրենց հոգևոր գթասիրտ հոր վարդապե-  
տութեամբ բոլորին մխիթարեց. բոլորը զվարթացան, դժնդակ  
տրտմութիւնը ուրախութեան փոխվեց: Ինքը՝ Արշակ թագա-  
վորը, նրան ընդառաջ գնաց մինչև Բաքասերի<sup>90</sup> կողմերը, և  
այնտեղից մեծ զվարթութեամբ ետ եկան: Երկրի կյանքը,  
եկեղեցիների կարգերը նորոգվեցին ու պայծառացան:

Արդ՝ երբ ներսես հայրապետը Հայաստան վերադարձավ,  
վերահասու եղավ իր տեղապահի՝ սուրբ Խաղի գործերին և  
տեսավ, որ նա ճշմարտութեամբ և ուղղութեամբ էր գործել,  
գնացել էր տեր աստծու ճանապարհով, ո՛չ աչ էր շեղվել և  
ոչ ձախ, ուստի մեծ գոհութիւն էր մատուցում աստծուն, որ  
իր հոգևոր որդուն՝ Խաղին, տեսավ այնպես, ինչպես ինքն էր  
կամենում: Նրան ընդունեց սիրով ու կարոտով: Բայց երբ  
Խաղից լսում էր թագավորի բոլոր անօրինութիւնները, չար  
գործերը, ծուռ ընթացքը, տրտմում, լացուկոծ էր անում, ող-  
բում էր ծանր հեծեծանքով, մանավանդ Արշակավան քա-  
ղաքի պատճառով, որ շինվեց շատ մեղքերով, անօրինու-  
թեամբ, շարութեամբ և հափշտակութեամբ:

Ապա սուրբ ներսես հայրապետը մտավ թագավորի մոտ,  
խոսեց նրա հետ և ասաց. «Ինչո՞ւ դու մոռացար տիրոջը...  
ինչո՞ւ թողցիր նրա պատվիրանները, արարչին, որ ամեն  
ինչ ոչնչից ստեղծեց, որ որբերի հայրն է, այրիների դատա-  
վորը, որ մեզ համար աղքատութիւն կրեց. նա որ աղքատ-  
ներին անտես չի անում, այլ իր մարդասիրութեամբ նրանց  
խնամում է: Աստված արդար դատավոր է, հզոր և երկայնա-

միտ: Նա բոլոր տառապալներին լսում է՝ և ոչ ոքի արհա-  
մարհանքը իր վրա չի վերցնում: Դու ինչպե՞ս և ինչի՞ց  
գրդված արհամարհեցիր նրա պատվիրանները. չէ՞ որ քո  
հայրն էլ այսպիսի ամբարշտութեան պատճառով կորավ:  
Իսկ դու դեռ չհիշեցիր նրան, որ քո հոր մեղքերը չհիշեց և  
քեզ սվեց նրա տեղը, այսինքն՝ քո հոր թագն ու աթոռը: Դու  
քո տեր աստծու առաջ սկսեցիր անօրինութիւններ գործել,  
ամբարշտութիւն, անիրաւութիւններ բոլորովին սողմացի-  
նեթի՞ նման, և այս բաները դու հայտնապես պարծենալով  
պատմում ես: Ամբողջ երկիրը լալիս է, վա՛յ է կանչում այն  
զրկանքների և հափշտակութիւնների պատճառով, որոն-  
ցով դու կամեցար մեծանալ. դու չհագեցար քո ընդարձակ  
թագավորութեան հարստութիւններով, որ քեզ պարզեց  
բոլորիս տեր Քրիստոսը:

Արդ՝ լսի՛ր, ինչ որ քեզ ասում եմ, և կատարի՛ր, որպեսզի  
կարողանաս քեզ փրկել աստծու բարկութիւնից, և թշվառ  
Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի. որովհետեւ ես  
երբազ տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կո-  
րծաստ և կործանում է պատրաստվում գալ: Դու հրաման  
տուր, որ այն տեղը քանդեն, քո ժողոված մարդկանց ցրիր,  
որ գնան, տարածվեն, սփռվեն իրենց տեղերը, գնան և ամեն-  
քին վերադարձնեն ինչ որ պարտք են, որպեսզի բարկութեան  
ու չարիքների խորքերը չընկնես ու չկորչես: Իսկ քո գործած  
մեղքերի համար ամբողջ երկրին հրաման կտանք, որ քո փո-  
խարեն պաս պահեն, աղոթք անեն, և մենք էլ քեզ հետ  
միասին ապաշխարութեան մեջ մտնենք, գուցե տերը ների  
քո գործած անչափ մեղքերը: ԾՔն դու այն տեղին շատ ես  
փափագում, ես ինքս կշինեմ արդարութեամբ և շեն կպա-  
հեմ քեզ համար»:

Իսկ թագավորը ծաղրում է կաթողիկոսի խոսքերը, քթի  
տակից ծիծաղում է նրա ասածների վրա. իսկ նա բարկա-  
նալով նորից կրկնեց, ասելով. «Գիտցած լինես, ո՛վ թագա-  
վոր, որ այս ամենի մասին է գուշակել աստված մարգա-  
րեների բերանով, թե՛ ռվա՛յ նրան, ով իր տունը շինում է  
ո՛չ արդարութեամբ և վերնահարկ է կառուցում ո՛չ իրա-  
վունքով», և թե՛ «Իբրև առակ ողբեր պիտի ասեն. վա՛յ նը-

րան, որ ազահուժյամբ խլում է այն, որ իրենը չէ, որովհետև եթե գեղեցիկ ու մեծամեծ տներ լինեն, սակայն ավերակ կդառնան, քանի որ նրանց մեջ մարդ չի բնակվի. նրանք ոչխարների արոտատեղ կդառնան, գազանների, բորենիների որջեր, ճագարների ու աղվեսների ծերպեր, կոունկների և ազգավների բներ, ցանքերի արտեր, ուստի քո ձեռքերի շինածները կավերվեն ու էլ չեն շինվի, նրա մեջ բնակված բոլոր անօրենները միանգամայն կկոտորվեն. այնտեղ եզներ կպառկեն, ցիռեր կարածեն, աղվեսները նրա հարկերը ելումուտ կանեն. նրանք չեն շինվի, և նրանց մեջ հավիտյան մարդ չի բնակվի: Այս բոլորը խոսեց Ներսես հայրապետը և թագավորից հեռանալով՝ գնաց շրջելու Հայաստանի բոլոր գավառները՝ ուսուցանելու, եկեղեցիներում կարգեր հաստատելու:

Երանելի Ներսեսի բերանից ելած այս խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ աստված Արշակավան գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց: Մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ շարորակ պալարներ, որ ոմանք կոչում են ժանտ<sup>92</sup>: Այս հարվածը երեք օրից ավելի շտեկեց, որ (քաղաքը) անմարդացավ, մոտ քսան հազար ընտանիք կոտորվեց, մարդկանցից ոչ ոք կենդանի չմնաց, որովհետև բոլորը հանկարծակի կոտորվեցին, ոչնչացան. կոտորածն ընդհանուր էր:

Ապա ինքը՝ թագավորը, դուրս եկավ Ներսես հայրապետին փնտրելու. նրան գտավ և խնդրեց իր համար աղոթել, միգուցե ինքն էլ մեռնի, որովհետև ահաբեկ է եղել: Այն ժամանակ Ներսես եպիսկոպոսապետը խոսել սկսեց թագավորի հետ և ասաց. «Որովհետև այս աշխարհիս վրա արդարներն ու մեղավորները խառն են ապրում, ուստի արդարների պատճառով մեղավորներն էլ խնայվում են և ապրում են. արդարների պատճառով մեղավորների կյանքն էլ երկարում է այս աշխարհում: Ինչպես թշնամու ձեռքով մաքուր ցորենի մեջ ցանած որոմը, որ նրա հետ միասին բուսնում է, խնայվում է, մաքուր ցորենի հետ (աճում է) և կեղտոտ որոմը, միգուցե որոմը քաղհան անելիս ցորենն էլ պոկվի: Այս պատճառով որոմն էլ ցորենի պես առժամանակ դարման-

վում է ցողով, անձրևով, ոռոգումով, շերմությամբ և պայծառ արեգակի լույսով: Այս այսպես կշարունակվի մինչև հունձքի ժամանակը, երբ ցորենի բերքը հնձում ու հավաքում են արքայության շտեմարաններում, իսկ որոմը հավիտեանական կրակի մեջ են ածում ու այրում: Այս հունձքը ժամանակների վերջն է, երբ աստու ուրդին կգա և իր հետ իջած երկնավոր մշակներին կհրամայի հնձել գերեզմաններից դուրս եկած բոլոր ննջեցյալներին: Այն ժամանակ նա ընտրություն կանի, արդարներին ցորենի նման իր հետ արքայություն կտանի, իսկ մեղավորներին որոմի նման կհրամայի ածել հավիտեանական անշեջ կրակը:

Արդ՝ դեռ հնձի ժամանակը չհասած՝ դու որոմը քաղհան արիւր ցորենից և վաղաժամ մի տեղ հավաքեցիր առանց ցորենի. ուստի և կրակը վաղաժամ եկավ և ամբողջ որոմը, որ միատեղ հավաքված էր, միանգամից ոչնչացրեց. իսկ դու զգուշ եղիր քո մասին, միգուցե դու էլ կորչես, այս երկիրն էլ քո պատճառով: Իսկ թագավորը ծունկ չոքած մեծ աղաչանքով, պաղատանքով խնդրում էր (Ներսեսից) իր հետ հաշտվել, և ուխտեց, որ այնուհետև նրա խոսքից երբեք դուրս չի գա:

#### Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ

ՀԱՅՐ ՄԱՐԳՊԵՏԻ ՄԱՍԻ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԱՐՈՆ ԳԱՎԱՌԸ ԳԱՂՈՎ ՄՏԱՎ  
ԱԵՏԻՇԱՏԻ ԱՂՈՒԱՐԱՆԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅՆՏԵՂԻՑ ԳՆԱՑ՝ ԻՐ ԲԵՐԱՆԻ  
ԽՈՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՄԱՆԱՊԱՐՏ ԴԱՌՆԱՂՈՎ  
ՇԱՎԱՍՊ ԱՐՄՐՈՒՆՈՒՑ ՍՊԱՆՎԵՑ:

Եվ Հայր մարդպետը շար ու շարամիտ մարդ էր, ավելի անօրեն և անիրավ, քան նախկին հայր մարդպետները: Սա էր, որ Տիրանի թագավորության ժամանակ կատարեց բոլոր նախարարական ցեղերը և այսպես Արշակի թագավորության ժամանակ ավելի շատ շարիքներ էր գործում բոլոր մարդկանց նկատմամբ, քան առաջ: Արդ՝ սա դուրս էր եկել և շրջում էր իր մարդպետության մեջ. այա նա եկավ իջավ Տարոն գավառը՝ իր գլուղերը տեսնելու



Այս ժամանակները սուրբ Ներսեսը շրջում էր իր սեփական իշխանություն մեջ: Որովհետև տասնհինգ գավառ այդ ենթակա իշխանությունն ունեին ի բնե իբրև հատուկ իրենց սեփական, որոնց համար առանձին ամառանոց էր հասկացված: Այս գլխավոր գավառներն էին Այրարատ, Դարանադի, Եկեղյաց, Տարոն, Բզնունիք, Մոփք և նրանց մեջ ու նրանց շուրջն եղածները: Արդ՝ երբ Հայր մարդպետը եկել էր իր իշխանության մեջ շրջելու, սուրբ Ներսես կաթողիկոսն էլ եկել էր այնտեղ, ուր առաջին եկեղեցին էր շինված Գրիգորից և սուրբ վկաների վկայարանները, և այստեղ սրբերի հիշատակն էր կատարում: Հայր մարդպետը, դիպքի բերմամբ, այդ տեղերով անցավ, ցանկացավ Աշտիշատի սուրբ տեղերը բարձրանալ, որպեսզի աղոթի և Ներսես սուրբ եպիսկոպոսապետի ողջույնն ստանա: Աղոթք արին, իրար ողջունեցին, և սուրբ Ներսես հայրապետը հրամայեց եկողներին համար ճաշ պատրաստել: Մինչ նրանք զբաղված էին նրա համար արժանավոր ճոխ ճաշ պատրաստելով՝ նա եպիսկոպոսական կացարանից դուրս եկավ և ճեմում էր ապարանքից մինչև սրբերի վկայարանները՝ մեծ և գեղեցիկ հրապարակում: Երբ նա տեսավ այդ տեղերի գեղեցկությունը, տեղի բարձր, շքեղ դիրքը և ներքև բացված տեսարանը, որ շատ վայելուչ էր, նախանձով ու շկամությամբ լրջվեց:

Հետո ներքինին ներս մտավ, բազմեց, կերուխումն սկսվեց: Երբ նա լավ խմեց ու հարբեց, սկսեց հպարտ ու ամբարտավան խոսել: Հարբած դրությունը սկսեց նախատինք թափել Տրդատ թագավորի վրա, Հայոց Արշակունի թագավորների՝ կենդանիների և մեռածների վրա, նրանց ազգուսակի վրա: «Ինչպե՞ս, — ասում է նա, — այսպիսի տեղերը տվել են կանանց շորեր հագած հոգևորականներին և ոչ թե տղամարդկանց»: Քամահրելով ու արհամարհելով սուրբ տեղերը՝ ասում էր. «Մենք այս տեղերը կբանդենք. այստեղ պետք է աբբունի ապարանք շինել: Եթե ես՝ Հայր մարդպետս, կենդանի մնամ և թագավորի մոտ հասնեմ, ինչ որ այստեղ կա՝ քանդել կտամ, այստեղ եղողներին կհեռացնեմ և այստեղ թագավորի բնակության սենյակներ կշինեմ»:

Իսկ սուրբ եպիսկոպոսապետը երբ այս լսեց, ասաց. «Մեր տեր Հիսուս Քրիստոսը նախ այս տեղն ընտրեց, որ իր անունով կաշի, որի անունը ամեն տեղ փառավորվում է իր հոր և սուրբ հոգու հետ: Նա պատվիրեց ուրիշների ունեցածին աչք շինել ու չցանկալ: Իսկ ով որ ազահարար աչք է դնում և ցանկանում է նրան նվիրվածին՝ նա չի հասնի այն նպատակին, ինչ որ սպաննաց, այլ նրա գործած բազմաթիվ մեղքերը նրա մտադրությունը կխափանեն»:

Սրանից հետո Հայր մարդպետը սուրբ տեղերից հեռացավ և իջավ Եփրատ գետի ափը, խիտ անտառով ծածկված հովիտը, մամուլի ծառերի թավուտները, երկու գետերի խառնուրդի մոտ, որտեղ հնուց ի վեր մի քաղաք է շինված եղել Սանատրուկ թագավորից Մծուրք կոչված տեղում:

Երբ նա այստեղ հասավ, տիրոջ բարկության դատատանը շարժվեց անօրեն Հայրի, նրա գործերի և նրա խոսածների վրա: Նա մատնվեց մի մարդու ձեռքը, որ կոչվում է Շավասպ և Արծրունյաց ցեղի մնացորդն էր<sup>93</sup>, Երբ նա կառք նստած գնում էր ճանապարհով, Շավասպը նրա մոտ եկավ, սկսեց իր գլխից հեռարել և ասաց. «Մի արջ տեսա ձյունի նման սպիտակ»: Նա այնքան հրապուրեց մարդպետին, որ սա կառքից իջավ, ձի հեծավ, սկսեցին անտառում (արջին) հետևել: Երբ թավուտների մեջ ընկան, Շավասպը փոքր-ինչ ետ մնաց և Հայր ներքինուն ետևից մեջքին խփեց նետով, այնպես որ նետը նրա մարմնով անցավ: Նա գետին գլորվեց ու սպանվեց: Այսպես՝ աստծու մարդու ասածները անմիջապես կատարվեցին, որովհետև աստծու մարդու ոչ մի խոսքը գետին չէր ընկնում:

ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԻԹԻ ՉԱՐ  
ՄԱՏՆՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆԵՑ ԻՐ ԳՆԵԼ ԵՂՐՈՐԴՐՎՈՒՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ  
ՀԱՆԴԻՄԱՆԱԿԵՑ ԱՍՏՄՈՒ ՄԱՐԴՈՒՑ՝ ՆԵՐՍԻՍԻՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՍՊԱՆԵՑ  
ԻՐ ՄՅՈՒՆ ԵՂՐՈՐԴՐՎՈՒՆ՝ ՏԻՐԻԹԻՆ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆ ԿԻՆ ԱՌԱՎ  
ԳՆԵԼԻ ԿԵՂԸ, ԻՆՉՊԵՍ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ՈՂԻՄՊԻՆ ԻՐԵՆ ԿԻՆ ԲԵՐԵԼ ՏՎԵՑ,  
ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՄՐՉՑՈՒՆԻԿ ՔԱՀԱՆԱՆ ՓԱՌԱՆՁՅԵՄԻ ԽՈՐՀՐԴՈՎ ՆՐԱՆ  
ՍՊԱՆԵՑ՝ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱՀՎԱՆ ԳԵՂ ԽԱՌՆԵԼՈՎ:

Այն ժամանակները Սյունյաց նախարարներից մեկը՝  
Անդովկը, մի գեղեցիկ դուստր ուներ Փառանձեմ անունով,  
որ շատ հռչակված էր իր գեղեցկությանը ու պարկեշտու-  
թյամբ: Ապա Գնել պատանին՝ թագավորի եղբորորդին,  
նրան կին առավ: Այս աղջկա գեղեցկությունը շատ հռչակ-  
վեց ու տարածվեց և հնչեց զանազան վայրերում: Այս համ-  
բավից բորբոքված՝ Տիրիթը՝ Գնելի մյուս հորեղբորորդին,  
սիրահարվեց իր հարսին<sup>94</sup> և դրա համար մի հնարք էր որո-  
նում, որ կարողանա իր հարսին տեսնել: Երբ իր ցանկու-  
թյանը հասավ, հարսին տեսավ, այնուհետև սկսեց հնարք-  
ներ մտածել այդ կնոջ մարդուն կորցնելու, հուսալով, թե  
գուցե կարողանա հետո նրա կնոջը հափշտակել:

Տիրիթն սկսեց նենգավոր հնարքներ մտածել. վարձում  
էր շատ օգնականներ ու գործակիցներ, որոնցով կարողանա  
իր շարախոսությունը առաջ տանել: Եվ Գնելի մասին սուտ  
մատնություններ էր նենգորեն հաղորդում Արշակ թագա-  
վորին, թե Գնելը մտադրություն ունի թագավորի և քեզ  
օպանել: Բոլոր մեծամեծները, նախարարները և ազատները  
սիրում են Գնելին, մեր ամբողջ երկրի նախարարները գերա-  
դասում են նրա իշխանությունը իրենց վրա, քան քոնը:  
Ասում են. «արդ, արքա, իմացիր և տես, թե ինչ պիտի անես,  
ինչպես պիտի կարողանաս քեզ փրկել»: Այսպիսի խոսքերով  
զրգուում էին Արշակ թագավորին, մինչև որ նրան համոզե-  
ցին իրենց ասածների նկատմամբ:

Ուստի թագավորը Գնել պատանու նկատմամբ ոխով  
լցվելով հալածում էր նրան և երկար ժամանակ նենգավոր  
խորհուրդ էր մտածում նրա դեմ: Ապա նավասարդի (տոնե-

րին) մոտ Արշակ թագավորը մտածեց Գնել պատանուն իր  
մոտ հրավիրել և սպանել: Նրա մոտ է ուղարկում Մամիկոն-  
յան ցեղի նահապետ Վարդանին՝ սպարապետի եղբորը, որ  
նենգությամբ, մեծամեծ երդումներով կարողանա կանչել,  
որ այս խորհուրդը բոլորովին գաղտնի մնա, գուցե փախչի  
ազատվի, այլ խաբելով ու հրապուրելով բերի հասցնի մինչև  
մահվան տեղը: Թագավորի բանակը գտնվում էր Շահապի-  
վանում, Արշակունիների բուն բանակատեղում, պարսպա-  
պատ որսատեղի տակ, ձիարշավի հրապարակի վրա<sup>95</sup>:

Վարդան մեծ նահապետը Արշակ թագավորի կողմից  
եկավ, գտավ պատանի Գնելին մոտակա տեղում, այսինքն՝  
Առավյուտք կոչված գյուղում: Մեծ երդումներով ու վարպետ  
խաբեություններով համոզեց պատանի Գնելին՝ իր կնոջ և տանու  
մարդկանց հետ գնալ արքունի բանակը (հավատացնելով),  
թե Արշակ թագավորը նրան մեծարանքի համար է հրավի-  
րում: «Թագավորը (ասաց նա) շկամեցավ նավասարդի տո-  
ները առանց քեզ անցկացնել. նա այժմ բարեհաճ է դեպի  
քեզ, որովհետև իմացավ, որ քո մեջ չկա շարություն, ինչ-  
պես որ շարախոսներն էին ասում. նա համոզվեց, որ մինչև  
այժմ իդուր էր քեզ ասում, մինչդեռ դու նրա կողմից ար-  
ժանի ես սիրո»:

Գնելը իր ամբողջ կազմությունը ճանապարհ ընկավ. ամ-  
բողջ գիշերը մեծ աճապարանքով եկավ հասավ արքունի  
բանակը, որովհետև հաջորդ օրը, որ լուսանում էր, կիրակի  
էր: Այդ օրն էր հանդիպում Մեծ Հուհաննես (Մկրտչի) հի-  
շատակի տոնը, որ Գրիգորից և Տրդատից սահմանված էր  
Թագավան ավանում: Այդ տոնին եկել էր աշխարհական  
մարդկանց մեծ բազմություն, և զանազան գավառներից՝ շատ  
եպիսկոպոսներ: Ներսես մեծ եպիսկոպոսապետն էլ իր կող-  
մից ուղարկեց իր աթոռակից Խաղին և իր եպիսկոպոսական  
ավագ Մուրիկ անունով<sup>96</sup> սարկավագին, որ գնա այնտեղ և  
ինչ որ հարկավոր է կատարեն. իսկ ինքը մնաց արքունա-  
կան բանակում, որպեսզի հաղորդությունը այնտեղ էլ կա-  
տարեն: Եվ այդ գիշեր բանակում կաթողիկոսի ներկայու-  
թյամբ գիշերային մեծ պաշտամունք կատարվեց:

Լույսը բացվելու դեմ Գնելի խումբը հասավ արևունի

բանակը: Երբ Գնեյը բանակի մեջ մտավ, թագավորին իմաց տվին նրա գալուստը: Ապա արքունիքից հրաման տրվեց՝ բանակից գուրս պահել նրան և տանել սպանել: Եվ մինչ նա ձի հծած անցնում էր բանակի միջով և մոտենում էր արքունի հրապարակին, այդտեղ արքունիքից վրա են հասնում բազմաթիվ սպասավորներ՝ զինված սրերով, նիզակներով, սվիններով, վաղրերով ու սակրերով, և ասպարակիր հետևակ զորք: Նրանք հասան, բռնեցին Գնեյ պատանուն, ձիուց վեր գցեցին, ձեռքերը ետևը կապեցին և առան տարան գլխատելու տեղը: Նրա կինը նույն վաշտի մեջ էր իր ամուսնու հետ և եկել էր ժանվարով<sup>97</sup>: Երբ տեսավ, որ իր ամուսնուն բռնեցին ու կապեցին, իսկույն վազեց եկեղեցի, որտեղ բանակի մարդկանց համար աստվածային արարողություն էր կատարվում՝ առավոտյան աղոթքը, ուր գտնվում էր նաև Ներսես մեծ եպիսկոպոսապետը: Կինը հասնելով եպիսկոպոսապետի մոտ՝ գուժում էր իր անմեղ ամուսնու կորուստը: Ծիչ բարձրացրեց՝ ասելով. «Շտապի՛ր, հասի՛ր, ամուսնուս առանց մեղքի, առանց հանցանքի խողխողում են»: (Իսկ նա) արարողությունը ընդհատելով՝ վազում է թագավորի սենյակը, դռանը հասնելով՝ ներս է ընկնում թագավորի մոտ: Իսկ թագավորը, երբ տեսավ մեծ քահանայապետին, իմանալով, որ եկել է բարեխոսելու և համոզելու, որ (Գնեյը) չսպանվի, սամուրենին գլխին քաշած, շտապով իր երեսը ծածկում է՝ խումփացնելով՝ իբր թե քնած է<sup>98</sup>, որպես թե նրա խոսքերը չի լսում:

Իսկ սուրբ Ներսեսը մոտեցավ, բռնեց թագավորից, սկսեց խոսել նրա հետ և ասաց. «Հիշի՛ր, թագավոր, մեր տիրոջը, որ մեր սիրո համար իջավ իր բուն բարձրությունից, եղբայր դարձավ մեզ՝ անարժան ծառաներիս, ոչ ուրիշ նպատակով, այլ միայն որպեսզի սիրո վարդապետող լինի, որպեսզի մենք էլ մեր աստվածային վարդապետին նայելով՝ միմյանց խնայենք, միմյանց երկյուղածությամբ սիրենք, իրար վնասել չհամարձակվենք: Իսկ եթե գուժոք եզբորը, ծառայակցին, ընկերակցին ու հարազատին շանայես, մեր տերն էլ, որ կամավորապես մեզ եղբայրակից է դարձել, քեզ չի խնայի: Որովհետև նա մեզ այսպես ասաց. «Ով ձեզ լսում է, ինձ է

լսում. և ով ձեզ ընդունում է, ինձ է ընդունում, իսկ ով ձեզ անարգում է, ինձ է անարգում»: Լսի՛ր Քրիստոսին, որ ներկայումս քեզ հետ խոսում է մեր բերանով, որպեսզի շղորչես դու, գուցե թագավորությունից զրկվելով, մենակ ողջողջ շրջես, և ոչ ոք քեզ չօգնի: Լսի՛ր Քրիստոսին, ինքզ քեզ խնայիր. քո հարազատ եղբոր արյունը մի՛ թափիր, արդար մարդուն անմեղ տեղը անխնա մի՛ սպանիր»:

Իսկ թագավորը քար կտրածի պես ոչինչ չէր լսում, երեսը ծածկել էր շորով և բաց չէր անում, չէր կամենում նրա խոսքերին պատասխանել. այլ գահույքում կողքի ընկած փաթաթվել, ծածկվել էր, տեղից շարժվել անգամ չէր ուզում: Եվ մինչդեռ (սուրբ Ներսեսը) այսպիսի համոզիչ խոսքերով հորդորում էր թագավորին, Երազմակ դահճապետը դրսից եկավ, մտավ թագավորի սենյակը և սկսեց պատմել. «Արքունի բոլոր հրամանները. կատարեցի, — ասաց, — Գնեյին առա տարա մինչև որսատեղի պատի տակը, սպանեցի և նույն տեղում թաղեցի»:

Այն ժամանակ սուրբ Ներսեսը խոսել սկսեց և ասաց. «Ինչպես որ քարը օձը խցում է իր ականջները, որպեսզի ճարտար կախարդի ձայնը չլսի և դեղ չընդունի իմաստուն դեղատուից, այնպես էլ դու ականջներդ խցեցիր, լսողությունդ փակեցիր, որպեսզի աստվածային խոսքի խրատը չլսես, այլ գահանների քարք ստանալով՝ սկսեցիր մարդիկ ուտել: Ուստի ինչ որ գահանների մասին է ասված, քեզ վրա կկատարվի: Ասված է. «Աստված նրանց ատամները նրանց բերաններում կփշրի, և առյուծների ժանիքները տերը խորտակեց»: Որովհետև դու քո տեր Քրիստոսի հրամանին ընդդիմացար, ուստի անպիտան ու անարգ դառնաս, ինչպես թափված ջուրը, և տկարանաս, երբ սա աղեղը լարի: Եվ այն կործանումը, որ մարգարեի բերանով ասվեց, կհասնի ձեր վրա, որ դուք՝ Արշակունիները, կիսեք վերջին քաժակը, կիսեք, կհարքեր ու կկործանվեք և այլևս չեք կանգնի: Եվ տիրոջ (երկրորդ) գալստյան ժամանակ հավիտենական կրակի սպառնալիքը ձեր վրա կհասնի, կընկնեք խավարի մեջ և այլևս չեք տեսնի աստծու որդու փառքի արևը: Իսկ դու, Արշակ, որովհետև Կայենի գործը կատարեցիր, Կայենի

անեծքին գաս. ողջ-ողջ թագավորութունիցդ զրկվես և շար-  
շարանքներ կրես քո Տիրան հորից ավելի և դառն մահվամբ  
մեծ նեղության մեջ կյանքդ վերջացնես»: Ներսես մեծ քա-  
հանայապետը այս բոլորն ասաց թագավորին և նրա մտից  
գնաց ու այլևս այն բանակը չվերադարձավ:

Իսկ Գնել պատանուն առան տարան արքունի որսատեղի  
մոտ և գլխատեցին լեռան մի բլրի վրա, որին կին են ա-  
սում, որսերի արգելանոցի պատի մոտ, բանակատեղի դե-  
մուդեմ, մուրտաստանի աղբյուրների մոտ սարքված ար-  
քունի բազմոցների հանդեպ:

Ապա հրաման տրվեց թագավորից. բանակում եղող բո-  
լոր մարդիկ, մեծ ու փոքր, առհասարակ առանց բացառու-  
թյան, գնան կոծ անեն ու ողբան սպանված Արշակունի մեծ  
սեպուհ Գնելին. ոչ ոք չհամարձակվի շքնալ: Ինքը՝ թագա-  
վորն էլ գնալով լացողների մեջ՝ նստեց, ողբաց իր եղբորոր-  
դուն, որին ինքն սպանեց: Գնացել նստել էր դիակի մոտ,  
ինքը լալիս էր և հրամայում էր լաց ու կոծը սաստկացնել  
սպանվածի համար: Իսկ սպանվածի կինը՝ Փառանձեմը,  
զգեստները պատառոտած, վարսերը արձակած, կուրծքը  
բացած, կոծում էր սգատեղում, բարձր ճշում էր, աղիողորմ  
ողբով ու արտասուքով բոլորին լացացնում էր: Իսկ Արշակ  
թագավորը լացողների մեջ տեսնում է սպանվածի կնոջը, ցան-  
կանում է և աչք է դնում՝ իրեն կին առնելու նրան:

Իսկ նա, որ նենգությամբ այն մատնությունը արեց և  
դավով կատարել տվեց հարազատի սպանությունը, այսինքն  
Տիրիթը, սաստիկ սիրահարված էր այդ կնոջը, այդ պատ-  
ճառով էլ թագավորի ձեռքով նենգությամբ այդ սպանու-  
թյունը կատարեց: Արդ՝ երբ կոծը սաստկացած էր, Տիրիթն  
այլևս չէր կարողանում իր կրթերը զսպել: Մարդ է ուղար-  
կում մեռածի կնոջ մոտ և ասում. «Շատ էլ մի՛ շարշարվիր,  
ես նրանից լավ տղամարդ եմ. ես քեզ սիրեցի, այս պատ-  
ճառով էլ նրան մեռցնել տվի, որպեսզի քեզ կնություն առ-  
նեմ»: Արդ՝ մինչ բազմությունը դիակի շուրջը մոլեգնաբար  
կոծում էր, Տիրիթն այսպիսի պատգամ է ուղարկում: Կինը  
բողբ բարձրացրեց. «Լսեցե՛ք բոլորդ, իմ ամուսնու մահը իմ  
պատճառով եղավ. մեկը ինձ մոտ աչք դրեց և ամուսնուս իմ

պատճառով սպանել տվեց»: Մազերը փետում էր, ճշում էր  
կոծելիս:

Երբ այս կարևոր իրողությունը բացվեց, ամենքին հայտ-  
նի դարձավ, ձայնարկուններն ևս լսեցին, (Փառանձեմը) ող-  
բի մայր դարձավ, բոլոր ձայնարկունները<sup>99</sup> սկսեցին ողբա-  
ձայն խաղի նման երգել Տիրիթի սիրահարությունը, աչք  
տնկելը, մատնությունը, մահվան հնարք գտնելը, սպանու-  
թյունը: Սպանվածի վրա կոծ անելով՝ աղիողորմ ձայնով  
երգում էին այս բաները: Երբ նրանց ձայները դադարե-  
ցին<sup>100</sup>, իրողությունն արդեն տարածվել, հռչակվել էր: Ար-  
շակ թագավորը երբ այս լսեց և հանգամանքներին վերա-  
հասու եղավ, զարմացավ, ապշեց մնաց, զգաստացավ եղա-  
ծի վրա, ըմբռնեց իրողությունը: Ապա սկսեց նա խոսել  
ձեռքերը իրար խփելով, խիստ զղջաց արածի համար և ա-  
սաց. «Որովհետև Տիրիթը անարժան սիրով սիրահարվել է  
Գնելի կնոջը, այս պատճառով էլ այդ շարիքը հնարեց, մատ-  
նությամբ անմեղ մահվան պատճառ դարձավ, զուր ու անտեղի  
մեղ էլ իր պղծություն համար արդար արյունի մեջ շաղախեց,  
իր եղբորը կորցնել տվեց և մեզ ժառանգել տվեց սոսկալի շա-  
րիք ու անեծք, որոնք չեն անցնի»:

Երբ թագավորը հաստատապես իմացավ գործի հանգա-  
մանքները և ճշտեց իրողությունը, առժամանակ շսելու  
տվեց, լռեց, սպասեց: Իսկ երբ մեռելը թաղեցին նույն տե-  
ղում, որտեղ սպանվել էր, և այս անցքի վրա բավական ժա-  
մանակ անցավ, ապա Տիրիթը պատգամավոր ուղարկեց  
թագավորի մոտ. «Բարեհաճիր, արքա, և հրաման տուր, որ  
Գնելի կնոջը՝ Փառանձեմին, ինձ կին առնեմ»: Թագավորն  
այս լսելով ասաց. «Այժմ հաստատ գիտեմ, որ լսածս ճիշտ  
է: Գնելի մահը իր կնոջ պատճառով եղավ»: Թագավորն իս-  
կույն մտածեց Տիրիթին նույնպես սպանել Գնելի մահվան  
փոխարեն: Երբ Տիրիթն այս լսեց, թագավորից ահաբեկ-  
ված՝ գիշերով փախավ: Արշակ թագավորին իմաց տվին  
Տիրիթի փախուստը: Արշակ թագավորը հրաման տվեց ազատ-  
ների բանակին՝ հետամուտ լինեն Տիրիթին և որտեղ որ  
նրան հասնեն, նույն տեղում սպանեն: Շատ քաջեր փախու-  
տական Տիրիթին հետամուտ եղան, գնացին հասան մինչև

Բառեն գալատք և անատի մեջ, տեղնուտեղը սպանեցին Տիրիթին, որտեղ հանդիպեցին նրան: Սրանից հետո Արշակը իրեն կին առավ սպանված (Գնեխ) կնոջը՝ Փառանձեմին: Եվ որքան Արշակը սիրում էր կնոջը, այնքան էլ սատում էր Արշակ թագավորին, ասելով, թե մարմնով թավամազ է և զույնով թուխ: Վերջը, երբ կնոջ սիրտը նրան չկալավ, Արշակ արքան մարդ ուղարկեց Հունաց երկիրը և այնտեղից՝ կայսերական տոհմից, խնդրեց, բերել տվեց իրեն կին Ողոմպի անունով: Նրան ուժգին սիրով սիրեց և նրանով զրգոում էր առաջին կնոջ նախանձը: Փառանձեմը սրտում ոխ պահեց Ողոմպի դեմ և միջոց էր փնտրում նրան սպանելու: Բայց հետո Փառանձեմը թագավորին մի տղա ծնեց, որի անունը գրին Պապ. նրան մեծացրին, շափահաս դարձրին: Երբ նա առույգ պատանի դարձավ, նրան պատանդ ուղարկեցին կայսեր պալատը, Հունաց երկիրը:

Իսկ Փառանձեմը մեծ նախանձով ու ոխով լցված էր դեպի Ողոմպին և միջոց էր որոնում՝ դեղերով նրան սպանելու: Բայց չկարողացավ հնարք գտնել, որովհետև (Ողոմպին) շատ զգույշ էր իր անձին, մանավանդ կերակուրների և ըմպելիքների մեջ: Նա ուտում էր միայն իր նաժիշտների պատրաստած կերակուրները և խմում էր նրանց մեկնած գինին: Երբ ոչ մի հնարք չգտնվեց նրան մահացու դեղերով թունավորելու, ապա անօրեն Փառանձեմը իրեն դավակից դարձրեց Մրջունիկ անունով մեկին Տարոն գալատի Արշամունքից, որ այն ժամանակ արքունական պալատի երեց էր: Անարժան, երբեք չկատարված, անշնչելի, անմոռանալի շարագործություն, հավիտենական տանջանքի արժանի, շտեմբղված, լլաված անարժան գործ կատարեց՝ կյանքի դեղի մեջ մահվան դեղ խառնելով: Տերունական սուրբ և աստվածալին մարմնի, այսինքն՝ հաղորդության հացի հետ խառնեցին մահվան դեղը, և Մրջունիկ անունով երեցը եկեղեցում Ողոմպի տիկնոջը տվեց այն մահաբեր (հաղորդությունը) և սպանեց: Անօրեն Փառանձեմի ամենաշար կամքը նրա ուզածի պես կատարելով՝ այս շերեցը նրանից պարզև ստացավ Տարոնի գալատում Գամկունք կոչված գյուղը, որտեղից ինքն էր:

Իսկ սուրբ Ծերսես կաթողիկոսն այլևս Արշակ թագավորի երեսը շտեմալ մինչև նրա կորստյան օրը: Ուստի Ծերսեսի փոխարեն քրիստոնեության գլուխ նշանակեցին մի ոմն Չունակի, որ արքունի սարուկների մեջ ամենից սարուկն էր: Թագավորը հրամայեց հրավիրել Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին, որ գան Չունակին Հայոց կաթողիկոս ձեռնադրեն: Ոչ ոք չհամաձայնվեց գալ, բացի Աղձնիքի և Կորդուքի եպիսկոպոսներից, որոնք և Չունակին կաթողիկոս ձեռնադրեցին թագավորի հրամանով: Այս Չունակը մեղծ ահանդարտ մարդ էր, հանդիմանելու կամ խրատելու լեզու չունեց, այլ համակերպվում էր թագավորի արածներին, ինչ էլ նա կատարեր:

### Գ Լ Ե Խ Ժ Զ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԱՏՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ ՉՐԱՎԻՐՎԵՑ ՊԱՐՄԻՑ ՇԱՊՈՒՅ  
ԹԱԳԱՎՈՐԻՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆԻՑ ԴԵՍԱՄԵՍ ՊԱՏՎԵՆՈՎ  
ՄԵՍԱՐՎԵՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՉԱՏՈՑ ՍՊԱՐԱՊԵՑ ՎԱՍԿԱ ՄԱՄԻԿՈՆՏԱՆԵ  
ՍՊԱՆԵՑ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՆՈՒՊԱՑԵՆ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ  
ԹԱԳԱՎՈՐԸ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՆՐՈՒՄ ՏՎԵՑ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ ԵՎ  
ՉԵՏՈ ԵՐԴՄԱՆ ՌԵՍԸ ԱՍԵՆՈՎ ՓԱՆԱՎ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱ  
ՊԱՏՃԱՌՈՎ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԸ ՅՈՒՐԱՆԱՍՈՒՆ ՄԱՐԻ ԿՈՏՈՐԵՆ ՏՎԵՑ  
ԱՍՏՈՒՆ ԵՊԱՍՏՎՈՐՆԵՐԻՑ:

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը իր մոտ է հրավիրում Հայոց Արշակ թագավորին և նրան մեծարում է մեծ պատվով ու փառքով, ոսկու և արծաթի շատ գանձով ու թագավորական ամեն տեսակ մեծություններով: Նրան փայփայեց ինչպես իր եղբորը, ինչպես իր որդուն, նրան պարգևեց երկրորդական մեծ տունը<sup>101</sup> Ատրպատական աշխարհում. ուրախության ժամանակ նրանք մի տախտի վրա էին բազմում գահերում, միեկույն գուլի և միեկույն նշաններով ու զարդերով միատեսակ զգեստ էին հագնում. ամեն օր միատեսակ թագ էր պատրաստում Պարսից թագավորը իր համար և նրա համար. ինչպես երկու հարազատ եղբայրներ նրանք անբաժան իրար հետ էին լինում ուրախությունների ժամանակ և անպատմելի ուրախություններով լիանում էին: Օրերից մի օր դեպք եղավ, որ Հայոց Արշակ թագավորը

մտալ շրջելու Պարսից թագավորի ախոռներից մեկում. իսկ Պարսից թագավորի ախոռապետը նստած էր ներսը՝ ախոռում, երբ նա թագավորին տեսավ, լվի տեղ անգամ չդրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց, դեռ նրան ծաղրի և անարգանքի ենթարկեց՝ պարսկերեն լեզվով ասելով. «Հայոց այծերի թագավոր, եկ այս խոտի խրձի վրա նըստիր»: Երբ այս խոսքերը լսեց Հայոց մեծ զորավար և սպարապետ Վասակը՝ Մամիկոնյան տոհմից, սաստիկ բարկացավ ու զայրացավ, քաշեց իր սուրը, որ մեջքից կախած ունեւր, զարկեց, տեղնուտեղը գլխատեց Պարսից թագավորի ախոռապետին հենց ախոռի մեջ, որովհետեւ նա շկարողացավ լսել և տանել իր թագավորի անարգանքները: Նա ավելի լավ համարեց շատ անգամ մահը աչքի առաջ ունենալ, քան լսել իր տիրոջը հասցված վիրավորանքներն ու անարգանքը: Երբ նրանք Պարսից աշխարհումն էին, օտար երկրում, օտարների ներկայութեամբ, նա կարողացավ հանկարծ աներկյուղաբար այսպիսի բան անել: Իսկ Պարսից թագավորը երբ այս բանը լսեց, մեծ շնորհակալութիւն հայտնեց Վասակ զորավարին, զարմանալով նրա քաջասրտութեան և մեծ աներկյուղութեան վրա: Շատ պարզեցրեց ու պատիվներ տվեց նրան՝ գովելով նրա քաջութիւնն ու տիրասիրութիւնը: Այս պատճառով էլ շատ սիրում էր նրան, նրա արժանիքի համաձայն պատվում ու մեծարում էր նրան ամեն ժամանակ, քանի դեռ սրանց միջև հաշտութիւն ու խաղաղութիւն էր տիրում:

Արդ՝ մինչ Հայոց թագավորը Պարսից թագավորի մոտ էր, և երկուսի միջև մեծ սեր ու խաղաղութիւն կար, Պարսից Շապուհ թագավորը երկյուղ զգաց, միգուցե Հայոց Արշակ թագավորը իր սերը ստի, Հունաց կայսրի հետ միաբանվի կամ իրենից անջատվի, որովհետեւ չէր հավատում նրան, թե նա իր մտերմական սերը կպահի և իր հետ կապած միաբանութեան ուխտին հաստատ կմնա: Ուստի պահանջում էր, որ նա երդում տա և սաստիկ ստիպմունքով բռնադատում էր. «Համաձայնվիր, — ասում էր նա, — և քո հավատով երդվիր, որ ինձ չես խաբի, չես դավաճանի»: Երբ սաստիկ ստիպմունքից նեղն ընկավ ու շվարեց, ապա կանչեցին Տիգրոն քաղաքի նկեղեցու քահանաներին, որոնց գլխավորի անունն էր Մա-

րի. բերել տվին սուրբ ավետարանը, և Պարսից Շապուհ թագավորը երդում էր անել տալիս Հայոց Արշակ թագավորին աստվածային ավետարանի վրա, որ նրան չի խաբի, չի դավաճանի, այլ հաստատ կմնա իր ուխտին և նրա հետ դաշինքը անխախտ կպահպանի: Եվ որովհետեւ այս գործի մեջ միջնորդի դեր էր կատարում Վարդանը՝ Մամիկոնյան տոհմի տանուտերն ու նահապետը, Վասակ սպարապետի ավագ եղբայրը, ուստի Շապուհը նրան պատվում ու սիրում էր, իսկ Հայոց զորավար Վասակը նախանձ զգաց իր ավագ եղբոր՝ Վարդանի դեմ. կամեցավ խանգարել (դաշնը) Հայոց Արշակ թագավորի և<sup>102</sup>... փախչել, Բայց Շապուհն ասում է. «Եթե դուք երդումը անկեղծ տված լինեիք, ինչպե՞ս նա կըկարողանար երդման դեմ գնալ և կամ խախտել: Ես գիտեմ, — ասում էր, — որ դուք կախարդութեամբ ինձ խաբեցիք, դուք սիրեցիք նրան, որ ձեր կրոնին է պատկանում, նրա հետ նենգութեամբ խորհուրդներդ մեկ արիք և ինձանից փախցրիք: Դուք կամենում եք, որ Արշակունիները լինեն ձեր տերը և այս բանին հետամուտ եք»:

Եվ Շապուհ թագավորը երդվեց արեգակով, ջրով ու կրակով, թե «կենդանի չեմ թողնի ոչ մի մարդ, որ քրիստոնեական հավատն ունի» և հրամայում է բոլորին տանել սպանել: Եվ տարան նրանց գլխավորին՝ Մարի քահանային, և մյուս քահանաներին ու սարկավագներին, ավելի քան յոթանասուն մարդ, և մի փոսի մեջ մորթոտեցին բոլորին: Իսկ այն սուրբ ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց, կապել տվեց երկաթե լարերով և իր մատանիով կնքելով՝ հրամայեց զանձարանում զգուշութեամբ պահել:

## Գ Լ Ո Խ Ժ Է

Ք Ե ԻՆՉՊԵՍ ՊԱՐՍԻՑ ՇԱՊԱԻԶ ՔԱԳԱՎՈՐԸ ՉԱԼԱՍԱՆՔՆԵՐ  
ԲԱՐՁՐԱՏՐԵՑ ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՍ:

Նույն այն ժամանակ, երբ Մարի քահանան սպանվեց յոթանասունի հետ, Շապուհ թագավորը մեծ հալածանք բարձրացրեց քրիստոնեական հավատի դեմ. հարկերով,

տեսակ-տեսակ վշտերով ու հարվածներով նեղում էր քրիստոնյաներին: Հետո իր իշխանության բոլոր տեղերում հրաման արձակեց, թե՛ ձմեռը որ իմ իշխանության մեջ քրիստոնյա անունն է կրում, բոլորին պետք է սրի քաշել, որպեսզի իմ իշխանության մեջ չմնա քրիստոնյա անունը կրող ոչ մի մարդ: Այնուհետև բյուրերով ու հազարներով կոտորում էին, որովհետև թագավորից այնպես հրաման տրվեց, որ ոչ մի քրիստոնյա չմնա նրա իշխանության սահմաններում:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

ՎԱՐՂԱՆԻ ՄԱՀԸ ԱՐՇԱԿ ԲԱԳՎԱՊՐԻՑ ԻՐ ԵՂՐՈՅՐ ՎԱՍԿ  
ԱՊԱՐԱՊԵՏԻ ՆԵՆԳՈՒԹՅԱՄ:

Իսկ Վարդանը՝ Մամիկոնյան տոհմի տանուտերը, Պարսից թագավորի կողմից պատգամավոր է գալիս Հայոց Արշակ թագավորի մոտ և (Շապուհի) հրովարտակը մատուցում է նրան: Նրա կողմից նրա հետ խոսում է խաղաղության, հաշտության և երդումը հաստատ պահելու մասին: Հաղորդում է (Շապուհի) պատգամը, թե՛ ձինչ որ եղավ՝ եղավ, այդ հանցանքը մոռացության եմ տալիս. բայց դու այսուհետև հաստատ կաց ուխտիդ և մի՛ դուրս գա քո երդումից, որ ավիր քո հավատով: Ապա թե ոչ՝ դու գիտես և քո հավատը, որին ստում ես: Իսկ Արշակ թագավորը սիրով լսում, ընդունում է այս պատգամը, համաձայնվում նրա ասածներին: Հետո նա խաղաղությամբ արձակեց մեծ նահապետին, որ իր տունը գնա և հանգստանա երկայն ճանապարհի նեղությունից: Նա էլ գնաց:

Երբ Վարդան նահապետը Արշակի մոտ եկավ, նրա կրտսեր եղբայրը՝ Վասակը, պատահմամբ թագավորի մոտ չէր: Իսկ սրանից հետո, երբ Վասակն եկավ, սկսեց թագավորին գրգռել իր ավագ եղբոր դեմ՝ ասելով, թե՛ ձևյդ Վարդանն էր, որ քեզ մատնում էր Պարսից թագավորի ձեռքը և ուզում է քեզ կորցնել: Եթե դու չշտապես, նրան մեղտեղից չվերացնես, թե՛ դու կկորչես և թե՛ Հայոց աշխարհը: Թագավորի կինն էլ (Փառանձեմը) նույնպիսի խոսքերով գր-

գրում է թագավորին և հաստատում է Վասակ զորավարի ասածները: Որովհետև նա ոխ էր պահել այս Վարդանի դեմ, որովհետև այս Վարդանն էր, որ մեծ երդումով, նենգությամբ, դավաճանորեն հրավիրեց իր ամուսին Գնեկին, երբ Արշակ թագավորը որոշել էր նրան սպանել: Կինը այդ ոխը դեռ պահում էր նրա դեմ, ուստի ավելի ևս գրգռում է թագավորին՝ նրա դեմ, մինչև որ զորք գումարել տվին, որ գնան Վարդանին սպանեն. ինքը՝ Վասակն էլ գնաց իր եղբոր վրա:

Գնում գտնում են նրան Տայքում՝ իր գավառում, իր մուր բերդում, որ կոչվում էր Էրախանի: Երբ տեսան, որ գունդը Վասակի գունդն է, երկյուղի կամ կասկածի մեջ չընկան, չզգուշացան. մտածեցին, թե եղբոր զորքն է, եկել է խաղաղության համար: Այս կերպով հասան մինչև վրանի դուռը, որովհետև (Վարդանը) վրան էր զարկել բերդի տակ, ձորում: Վասակի զորքերը ծածուկ զինված էին և վրայից սովորական զգեստ հագած: Եվ մինչ նա մերկանդամ լվանում էր գլուխը, վրա են հարձակվում շատ մարդիկ սրերով, խոցոտում են նրան, մինչ նա կուացել էր, որ ջուր լցնեն իր վրա: Էլ միշտ շտվին գլուխը վեր բարձրացնելու, որովհետև կողից խփելով սպանեցին նրան:

Իսկ նրա կինը հղի էր, ծնելու օրերը մոտեցել էին: Մինչ նա վերք բերդում իր բազմոցի վրա նստած էր, հանկարծ սաստիկ ճիչ բարձրացավ. երբ նա սարսափի ճիչը լսեց, բազմոցից վար վազեց և վազելիս երեխային ծնեց: Երեխային իր հոր անունով Վարդան կոչեցին:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ԹՅ ԻՆՉՊԵՍ ՉԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԲԱԳՎԱՊՐԻՑ ԱՆՄՏՈՒԹՅԱՄ  
ԱՆՆԵԱ ԿՈՏՈՐՈՒՄ ԷՐ ԱՆԱՐԱՐՆԵՐՆ:

Իսկ այն ժամանակ, երբ ներսես սուրբ եպիսկոպոսապետը արքունական բանակից հեռացավ, և ոչ ոք չկար թագավորին դիմադրող, որ նրան խրատեր ու հանգիմաներ, այնուհետև նա սկսեց իր շար կամքին հետևել. նախարարնե-

րից շատերին կոտորեց, շատերին ազգովին բնաջնջեց և ժառանգ շթողեց և շատերի կալվածները արքունիք գրավեց: Բայց Կամսարականների տոհմերը, որոնք Շիրակի և Արշարունիքի տերերն էին, բնաջնջեց և այս գավառները Ոստանին<sup>101</sup> միացրեց:

Սակայն Հայոց զորավար և սպարապետ Վասակը նրանց ցեղից փախցնում ու փրկում է մի փոքրիկ մանուկի՝ Սպանգարատ անունով, որ հետո այդ գավառները ժառանգեց: Իսկ Արշակ Թագավորը հրամայեց Արշարունյաց գավառում ինք համար շինել մի ամուր բերդ Արտագերս անունով և այս գավառը հատկացրեց բերդին իբրև համբարանոց՝ ուտելիքի համար, որովհետև այդ բերդը շատ ամուր էր:

### Փ յ Ո Ւ Խ Ի

ՔԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԱՍԿԱՅԱԿ ՀՈՒՆԱՑ ԵՎ ՊԱՐՄԻՑ ՄԻՋԵՎ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ՔԱԳԱՎՈՐԸ ՕԳՆՈՒՄ Է ՊԱՐՄԻՑ ՔԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՍՐԱՄՈՒՄ ՀՈՒՆԱՑ ԶՈՐՔԵՐԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՆԿՈԿ ՍՅՈՒՆՈՒ ԴԱՎԱՃԱՆՈՒՔՅԱՄԲ ԱՐՇԱԿԸ ՓԱՆՈՒՍՑ ՏՎԵՑ ՊԱՐՄԻՑ ՔԱԳԱՎՈՐԻՑԻՑ:

Այն ժամանակ, երբ Արշակ Թագավորը փախավ Շապուհ Թագավորի մոտից և իր երդումից հետո նրան անարգեց, սկզբում Շապուհը այնքան էլ խստություն գործ չդրեց նրա դեմ, որովհետև դեռ խիստ պատերազմ էր մղվում նրա և Հունաց Թագավորի միջև: Երբ պատերազմը հետզհետե երկարեց, Արշակ Թագավորը սկզբում մեծամտելով՝ սպասում էր, թե նրանցից ո՞րը իրեն օգնության կկանչի այդ պատերազմում: Նա հույս ուներ և հոժարությամբ ուզում էր գնալ Հունաց կայսեր օգնության: Բայց սրանք նրան չհրավիրեցին և ոչ մի պատիվ կամ հարգանք ցույց չտվին: Իսկ Պարսից Շապուհ Թագավորը նրա մոտ է ուղարկում խաղաղության պատգամավորներ. հիշեցնում է նրա նախկին երդումը և ասում. «Բարեհաճի՛ր, եղբայր, այս պատերազմում ինձ օգնել. քո գնդով եկ ինձ օգնության. եթե դու մեր կողմը լինես, գիտեմ, որ հաղթությունը մերը կլինի»:

Հայոց Արշակ Թագավորը երբ այս լսեց, մեծ ուրախությամբ կամեցավ օգնության գնալ Պարսից Շապուհ Թագա-

վորին: Այս Արշակ Թագավորը հրամայեց իր Վասակ սպարապետին՝ գունդ գումարել, զորք պատրաստել: Եվ նա շատ շուտով կատարում է Թագավորի հրամանը. կազմակերպում է շորս հարյուր հազար մարդուց բաղկացած լավ սպառազինված զորք՝ ընտիր ուզմիկ մարդկանցից, արիասիրտ կովոզներ, որոնք զինված էին նիզակներով, սրերով, աղեղներով, վաղրերով, սակրերով, անսխալ խփող և ուժեղ նետաձիգներ, ախոյանների առաջ տեղի շտվող կովոզներ, ամբողջ հեծելազորքը պահպանակներով, զրահավորված սաղավարտներով պաշտպանված, իրենց դրոշներով, նշաններով և բազմաձայն պատերազմական փողերով:

Արշակ Թագավորը բազմաթիվ նախարարների հետ վեր կացավ գնաց, անցավ իր իշխանության միջով՝ Աղծնիքով, և ներս խուժեց Արվացաստանի<sup>106</sup> աշխարհը, Մծբին քաղաքի դիմաց, որ ճակատամարտի տեղն էր: Այս գնացին տեսան, որ երկու կողմերն այն տեղն էին նշանակել պատերազմելու համար, և Հունաց զորքերը հասել, խմբվել, բանակել էին այնտեղ բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին, իսկ Պարսից զորքերը դեռ չէին հասել պատերազմի համար նշանակված տեղը: Իսկ Հայոց Թագավորի զորքերը ճակատամարտի տեղն էին հասել պարսիկներից առաջ և կանգ առել, սպասում էին: Հայոց զորքերն սկսեցին նեղվել իրենց պարապ, անգործ նստելուց, չէին համաձայնվում սպասել Պարսից զորքերի գալուն, այլ կամենում էին հենց իրենք, առանց Պարսից զորքերի, մենակ հարձակվել Հունաց Թագավորի վրա, անձամբ պատերազմի գործը գլուխ բերել: Հայոց զորքերից ամեն մեկը ինքնակամ ու համարձակ ցույցեր էին անում, և բոլոր զորքերից ավելի նրանց Վասակ զորավարը շտապում էր, սանձերը կտրում, չէր կամենում սպասել Պարսից զորքի գալստյանը, այլ որ միայն իրենք պատերազմը վարեն ու վերջացնեն:

Այս ամբողջ զորքերն ընկնում էին Արշակ Թագավորի առաջ և խնդրում էին, որ իրենց չպահի մինչև Պարսից Շապուհ Թագավորի գալուստը, այլ թույլ տա կատարել այն, ինչ բանի համար եկել են — իրավունք տա հարձակվել (հույների վրա) հենց հիմա: Նրանք մաշվում էին օտար աշ-



խարհում պարապ նստելուց. լավ էին համարում մեռնել, քան օտար աշխարհում ժամանակ քարշ տալ: Այն ժամանակ Արշակ թագավորը թույլ տվեց և պատերազմի գործը նրանց առաջադրեց: Ապա Վասակը՝ Մեծ Հայքի զորավարն ու սպարապետը, կազմում պատրաստում է Հայոց ամբողջ զորքը: Նա սպառազինվեց և սահմանված ժամանակին բուլթը իր պատերազմական զորքով՝ այրարատյան բանակով հարձակվեց (Հունաց) բանակի վրա: Բուլթին առհասարակ սրի անցկացրին, կոտորեցին, մի մարդ նրանցից կենդանի չթողին: Եվ հունական զորքից այնքան ավար առան, որ շափ ու թիվ չկար. բուլթը լցվեցին ու լիացան գանձերով և անշափ իրերով:

Սրանից հետո Հայոց թագավորն իր զորքով այնտեղ մնաց սպասեց, մինչև որ եկավ հասավ Պարսից Շապուհ թագավորը անթիվ, անհամար զորքով: Երբ նա եկավ ու տեսավ հայկական զորքի քաջարի գործը, որ ճակատ էին կազմել, պատերազմը վարել, հաղթություն տարել և ամեն ինչ վերջացրել, շատ և շատ զարմացավ. Հայոց Արշակ թագավորին մեծապես պատվեց, ինչպես և բուլթը Հայոց մեծամեծներին ու Հայոց Վասակ սպարապետին:

Պարսից Շապուհ թագավորն սկսեց խոսել իր զորքի հետ, թե՛ «ինչպիսի՛ վայելուչ պարգևներ կամ ինչպիսի՛ փոխարինություն կարող ենք մենք հատուցել Հայոց այս Արշակ թագավորին, որ այսպիսի գործ կատարեց, այսպիսի քաջություն ցույց տվեց, այսպիսի թշնամու շարճեց, այսպիսի պատերազմ մղեց, այսպիսի ճակատամարտում հաղթեց, մեզ համար այսպիսի անուն վաստակեց: Որովհետև եթե մենք լինեինք ամբողջ Արշաց զորքերով, հազիվ թե կարողանայինք այսպիսի հաջողություն ձեռք բերել, այլ (Հայոց զորքի հետ) միասին այս գործը գլուխ կբերեինք»<sup>107</sup>: Իսկ Հայոց թագավորը իր զորքով մեր փոխարեն կովի դուրս գալով՝ այնպիսի քաջություն գործեց, որ ուրիշ ոչ ոք չէր կարող գործել: Արդ՝ ինչպիսի՛ բարիքներ պետք է մենք նրան հատուցենք»: Եվ ընկել էր այսպիսի մտածմունքի մեջ, թե արդյոք ի՛նչ բան պետք է նրան տա:

Պարսից նախարարները պատասխան տվին Շապուհ

թագավորին և ասացին. «Ինչ որ կամենաս, ինչով որ կամենաս կարող ես նրան գոհացում տալ: Ոսկիդ ու արծաթդ, կերպասներդ ու մարգարիտներդ շա՛տ, տուր ինչ որ սրտիցդ անցնում է»: Պարսից Շապուհ թագավորը իր իշխաններին պատասխանեց՝ ասելով. «Այդ, ինչ որ դուք եք ասում, սեր չէ. եկեք անիգեյի սեր հաստատենք Հայոց Արշակ թագավորի հետ, այնպես որ նա մինչև վերջ անբաժան մնա մեզանից: Ես Հայոց Արշակ թագավորին կնուխյան կտամ իմ դուստրը և այնպիսի մեծ կալվածք կտամ նրան, որ Հայաստանից մեզ մոտ գալիս՝ Հայաստանից մինչև Տիգրոս իր կալվածքում իջևանի, մինչև մեզ մոտ հասնի: Թագավորին այսպես անենք, իսկ Վասակ զորավարին կամ մյուս մեծամեծներին ու զորապետներին տանք ոսկի, արծաթ, կերպաս և մարգարիտ»: Պարսից թագավորի մեծամեծներն ու խորհրդակիցները հավանություն տվին նրա այս խորհրդին և հաստատեցին նրա խոսքերը, թե լավ է այդպես անել:

Եվ Պարսից Շապուհ թագավորն սկսեց ստիպել ու թախանձել Հայոց Արշակ թագավորին, ուզում էր նրան իր հետ տանել Ասորեստան<sup>108</sup>, որպեսզի այնտեղ մեծ փառքով նրան իրեն փեսայացնի: Իսկ Արշակ թագավորը և իր ամբողջ զորքը ձանձրալի էին համարում այդքան երկայն ճանապարհ գնալը, որովհետև ամեն մարդ, հայ մարդու բնական սովորությամբ, կարտեղ էր իր տուն ու տեղին: Իսկ երբ Անդոկը՝ Սյունյաց գավառի նահապետը, իմացավ, թե Պարսից Շապուհ թագավորն ուզում է իր աղջիկը կնուխյան տալ Հայոց Արշակ թագավորին, շատ վախեցավ, և միտքը կասկածի մեջ ընկավ: Նա հասկացավ, որ եթե Արշակը կին առնի Պարսից թագավորի դստերը, ապա իր դուստրը անարգություն կկրի, որովհետև այդ ժամանակ Փառանձեմը՝ Անդոկի դուստրը, որը Գնեյի կինն էր եղել, Հայոց Արշակ թագավորի կինն էր. ուստի (Անդոկը) կասկածում էր, որ եթե թագավորը ուրիշ կին առնի, իր աղջկան կանարգի:

Այնուհետև Անդոկը մտածմունքների մեջ ընկավ, մի հնարք էր փնտրում, որևէ միջոց, որով գուցե կարողանա խափանել սերը երկու թագավորների միջև: Նախ և առաջ նա շատ ոսկի տվեց Հայոց Վասակ զորավարին, նույնպես և

կաշառում էր բոլոր մեծամեծներին, որպեսզի հաշողեցնի երկու թագավորների միջև եղած մեծ սերը խզել: Բոլոր մեծամեծները համաձայնություն տվին, իրենց առած ոսկու կաշառքով կուրացան: Այնուհետև Անդոկը իր խորհրդին դավակից դարձրեց Պարսից թագավորի ավագներից մեկին, որ մի հնարքով, որևէ միջոցով նենգությամբ տարաձայնություն առաջացնի Պարսից Շապուհ թագավորի և Արշակի միջև: Անդոկը նրան անշափ ու անհամար ոսկի տվեց և նրան խրատ էր տալիս, որ գուշակի կերպարանքով Արշակ թագավորին ասել տա, թե՛ «Գլխիդ ճարը տես. Պարսից թագավորը հաստատ միտքը դրել է քեզ բռնել ու սպանել»: Երբ դու այս ասես,— ասում էր Անդոկը,— ապա առաջարկիր (թագավորին), որ մեզ խորհրդի կանչի, և բոլոր ավագները քո խոսքը կհաստատեն»:

Պարսից թագավորի խորհրդակիցը գալիս է Հայոց թագավորի մոտ և սկսում է ասել այն բաները, ինչ որ նրան խրատ էր տվել շարագործ Անդոկը. նա ասում է. «Արշակ թագավոր, գլխիդ ճարը տես, որովհետև Պարսից Շապուհ թագավորը միտքը դրել է քեզ բռնել ու սպանել»: Արշակ թագավորը ապշած մնաց այս խոսքերը լսելիս և ասաց. «Իմ այնքան մեծ ծառայության հատուցումն ա՛յս է ուրևմն սրանց կողմից»: Հրամայում է Արշակ թագավորը իր մոտ կանչել բոլոր իր մեծամեծներին, բոլոր խորհրդականներին, Վասակ սպարապետին, իր աներոջը՝ Անդոկին, և առհասարակ բոլոր եղած նախարարներին, և նրանց պատմեց այն ամենը, ինչ որ լսել էր պարսիկից: Եվ նրանք բոլորը միաբերան ասացին նրան. «Մենք այդ բանը վաղուց էինք լսել, սակայն չէինք համարձակվում քեզ ասել. բայց դա հաստատ բան է: Հիմա, թագավոր, այն նայիր, թե ինչպես պետք է քեզ և մեզ փրկես»: Այն ժամանակ Արշակ թագավորը ոսկու և արծաթի շատ գանձ պարգև է տալիս այն պարսիկին, որ այն խոսքերն իրեն ասել էր: Արշակ թագավորը մի միջոց մտածեց. կազմակերպվեցին, պատրաստվեցին, և մի գիշեր վեր կացան որբան մարդ որ կային Հայոց բանակում, ձիերը հեծան ու փախան: Տեղում թողին իրենց խորաններն<sup>109</sup> ու վրանները, իրենց կահավորությունն

ու սարքը, իրենց իրեղեններն ու բանակը, և գաղտուկ գնացին, այնպես որ Պարսից բանակից ոչ ոք այս բանը չիմացավ, մինչև լուսացավ:

Առավոտը, երբ ժամանակը հասավ Պարսից թագավորին բարիլույսի գնալու, և թագավորներն ու մեծամեծ իշխանները գնում էին Պարսից թագավորին բարիլույս մաղթելու, միայն Հայոց Արշակ թագավորն էր իր մեծամեծներով, որ ոչ մի տեղ չէր երևում: Ապա Պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս իր մարդկանց, որ գնան տեսնեն, թե ի՛նչ է պատահել Հայոց Արշակ թագավորի բանակում, որ նա այնքան ուշացավ Պարսից թագավորին բարիլույսի գալու: Գնում տեսնում են, որ բանակը դատարկ է, մեջը մարդ չկա, որովհետև (զորքերը) թողել էին իրենց խորաններն ու վրանները, հովանոցներն ու սրահակները, բազմոցներն ու անկողիները, կահկարասիքը և սարքերը, մինչև անգամ իրենց գանձերը, այլ միայն իրենց զենքերն էին վերցրել ու զնացել: (Հայոց) բանակը զնացողներն եկան և այս բոլորը պատմեցին Պարսից Շապուհ թագավորին: Երբ Պարսից Շապուհ թագավորը այս լսեց, որովհետև խելոք մարդ էր, իր խելքով բանի եղելությունը հասկացավ և իսկույն ասաց. «Հայոց թագավորի այդ փախուստը իմ մարդկանցից է եղել. մեզանից, մեր դուռն մարդկանցից են եղել այն մարդուն՝ Արշակին, փախցնողները»: Ապա իր ավագ մեծամեծներից շատերին ձիով պատվիրակ ուղարկեց Հայոց թագավորի ետևից՝ սիրո և միաբանության երդումով, որպեսզի ետ դառնա, միասին քննեն շարախոսություններն ու պատժեն: Բայց Հայոց թագավորը չկամեցավ լսել Պարսից Շապուհ թագավորի ուղարկած պատգամը և այլևս չդարձավ Պարսից աշխարհը: Ապա այդ օրից սկսած պատերազմ, կռիվներ ու ճակատամարտեր ծագեցին Հայոց Արշակ թագավորի և Պարսից Շապուհ թագավորի միջև, որոնք տևեցին ավելի քան երեսուն տարի:

## Գ յ ու խ ԻԱ

ՔԵ ԻՆՉՊԵՄ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱՋԻՐԸ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԿ ՊԱՐՍԻՑ  
ՇԱՊՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԻՋԵԿ,  
ԵՎ ԻՆՉՊԵՄ ՀԱՂԹԵՑ ՀԱՅՈՑ ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ:

Հայոց Արշակ թագավորի՝ Պարսից Շապուհ թագավորից փախչելուց գնալուց հետո Պարսից թագավորը ցլթ տարի լուռ մնաց, թշնամութիւն չէր անում, այլ շարունակ քաղցրութեամբ խոսում և աղաչում էր Հայոց Արշակ թագավորին՝ սիրով ու հաշտ ապրել իր հետ խաղաղութեան դաշինքով: Որովհետև Պարսից թագավորն այս ժամանակ մեծ վտանգի ու տազնապի մեջ էր, Հունաց թագավորների կողմից հաճախակի տեղի ունեցած անարգար պատերազմների պատճառով: Իսկ Հայոց Արշակ թագավորը ամենևին չկամեցավ նրան լսել, ո՛չ նրա մոտ գնալ, ո՛չ պատվիրակներ ուղարկել, ոչ մի նվեր կամ ընծա ուղարկել, բոլորովին չկամեցավ նրան մոտենալ, անունն անգամ չէր ուզում լսել: Իսկ Պարսից թագավորը նրան հաճախակի նվերներ, պատվիրակներ էր ուղարկում և ինքը եռանդով կոչում էր Հունաց թագավորներին հետ:

Երբ խաղաղութիւն հաստատուեց Հունաց թագավորների և Պարսից Շապուհ թագավորի միջև, Հունաց թագավորը դաշնագրի թուղթ գրեց ու կնքեց, տվեց Պարսից թագավորին, որի մեջ գրված էր այսպես. «Քեզ եմ տալիս Աբարիներ<sup>110</sup>, որ Արվաստանում է գտնվում, և Ասորոց Աբգար գետը. Հայաստանի նեքրին նահանգներից էլ ձեռք եմ օւշում. եթե կարող ես, նրանց հաղթի՛ր և քո իշխանութեան տակ նվաճի՛ր, ես նրանց օգնութեան չեմ գա»: Այսպես օւրեմն, Հունաց թագավորը նեղն է ընկնում ու ճարահատյալ այսպիսի դաշնագիր է կնքում և ուղարկում Պարսից թագավորին և այս կերպով ազատվում է նրանից:

Արդ՝ երբ խաղաղութիւն հաստատուեց Հունաց թագավորի և Պարսից թագավորի միջև, այնուհետև Պարսից Շապուհ թագավորը կազմակերպեց իր զորքերը և պատերազմով եկավ Հայոց Արշակ թագավորի վրա: Հայոց թագավորների սահմանապահները, որ նստած էին Ատրպատակա-

նի Գանձակում<sup>111</sup>, վաղորոք այս բանը իմաց տվին Արշակ թագավորին՝ դեռ (Շապուհը) Ատրպատական չհասած: Հայոց Արշակ թագավորն այս իմանալուն պես հրաման տվեց իր Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և հասնել, Պարսից Շապուհ թագավորին դիմադրելու: Վասակը արագ մի տեղ է հավաքում զորքը, Հայոց ամբողջ զորքին զորահանդես է կատարում: Դուրս է գալիս վաթսուն բյուր հեծյալ, լավ զինված նիզակավոր զինվոր, միասիրտ, միաբան, հավատարիմ մարդիկ: Նրանց հետ Հայոց Վասակ սպարապետը առաջ շարժվեց, հասավ ու ընդհարվեց Պարսից թագավորի հետ: (Նրա) բոլոր զորքերն առհասարակ կոտորեցին իրենց սրերով, և միայն Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախավ: Իսկ սրանք հասնում գերում են, ավերում ու այրում են առհասարակ Պարսից աշխարհը և պահպանում են ճակատամարտի տեղը, այսինքն Պարսկաստանի սահմանները:

## Գ յ ու խ ԻԲ

ՔԵ ԻՆՉՊԵՄ ՍՐԱՆԻՑ ՉԵՏՈ ԵՐԵՔ ՏԵՂ ՃԱԿԱՍԱՄԱՐՑ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԿ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹ ՊԱՐՍԻՑ ԶՈՐԵՐԻ ՉԵՏ, ԵՎ ԻՆՉՊԵՄ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՐՉՅԱԼ ՀԱՅԵՐԻՆ ԷՐ ՄԵՈՒՄ:

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը հավաքեց իր զորքերը անթիվ ու անհամար բազմութեամբ, ինչպես ավազը ծովի ափին, և բազմաթիվ փղեր, որոնց թիվ չկար: Նա իր զորքերը երեք գնդի բաժանեց, երկու գնդերին զորագլուխ նշանակեց Անդիկանին և Հազարավուխտին, իսկ մի գնդին զորագլուխ եղավ ինքը՝ թագավորը: Եվ զորքերին հրաման տվեց թագավորը երեք տեղից մտնել ու արշավել Հայոց աշխարհը: Այս բաներն էլ վաղորոք հայտնվեցին Հայոց Արշակ թագավորին և նրա Վասակ զորավարին: Սրանք էլ երկրից զորք հավաքեցին, որոնց բազմութեանը թիվ ու համար չկար. և թեպետ շատ աճապարեցին, բայց և այնպես Պարսից զորքերը Հայաստան մտան և երեք ուղղությամբ ասպատակեցին:

Ապա Արշակ թագավորն էլ իր զորքերը երեք մասի բա-

ժանեց. մի գունդը տվեց Վասակ սպարապետի ձեռքը, երկ-  
րորդ գունդը՝ նրա Բագոս եղբորը, որը քաջութեան և արիու-  
թյան մեջ նմանը չունեիր, բայց խելքի կողմից պակասա-  
վոր էր. իսկ մյուս գունդը վերցնում է ինքը՝ Արշակ թագա-  
վորը: Ապա հրաման է տալիս առաջ շարժվել, գնալ ճակատ  
առ ճակատ հանդիպել Պարսից զորքերին:

Վասակ սպարապետը գալիս է գտնում Պարսից զորքե-  
րի առաջին գունդը և Հազարավուխտին, որ հասել էին Վա-  
նանդ գավառը՝ այն տեղը, որ կոչվում է Երեկալ, և պա-  
տերազմով ընդհարվում է Պարսից զորքերի հետ, որոնք փա-  
խուստի դիմեցին ու ցրիվ եկան: Վասակ զորավարը հասնում  
կոտորում է Պարսից բոլոր փախստական զորքերը: Ոչ մե-  
կին կենդանի չի թողնում և խլում է շատ ավար ու փղերը:

Նույն ամսում, նույն շաբաթում, նույն օրը Բագոսը  
իրեն ենթակա զորքերի հետ գալիս հասնում գտնում է նախ  
Պարսից զորքերի երկրորդ գունդը և նրանց Անդիկան զո-  
րագլխին, որոնք եկել էին կուտակվել, բանակ էին դրել  
Առեստի ձկնորսարանում: Պարսից զորքերը շուտով իմա-  
ցան Բագոսի հասնելը, պատրաստվեցին Հայոց զորքերի  
դեմ պատերազմելու. Բագոսը իր ամբողջ զորով հասավ.  
հարձակվեցին Պարսից ճակատի վրա. Պարսից ամբողջ  
զորքն առհասարակ այնտեղ կոտորեցին, Անդիկանին էլ  
միասին սպանեցին: Ապա Բագոսը հանդիպում է փղերի  
գնդին, տեսնում է, որ փղերից մեկը շատ զարդարված է  
և կրում է արքունական նշաններ: Բագոսը կարծեց, թե այդ  
փղի վրա է (Շապուհ) թագավորը, ձիուց իջավ իր սուրը քա-  
շեց, փղի վրա հարձակվեց, զենքը բարձրացրեց, փղի տակ  
մտավ, փղին փորից զարկեց, փղին գցեց իր վրա և երկուսն  
էլ մեռան, որովհետև (Բագոսը) չհասցրեց փղի տակից  
դուրս գալ: Այդ կովի մեջ մեռավ միայն Բագոսը՝ Հայոց  
զորքի զորագլուխը: Իսկ Պարսից զորքերից ոչ մեկին կեն-  
դանի չթողին:

Նույն տարում, նույն շաբաթում, նույն օրը — որովհե-  
տև երեք ճակատամարտերն էլ միևնույն օրը պատահե-  
ցին — գալիս հասնում է Արշակ թագավորը իր զորքերի հետ  
և գտնում է իրեն՝ Շապուհ թագավորին, որ եկել կուտակվել,

բանակ էր դրել Բասյան գավառում՝ Ոսխա կոչված տեղե-  
րում: Ապա Արշակ թագավորը գիշերով հարձակվում է  
Պարսից բանակի վրա, բոլորին սրի է անցկացնում. հաղիվ  
Շապուհ թագավորը միայն մեկ ձիով մազապուրծ ձո-  
ղապրում է, փախչում Պարսից աշխարհն ընկնում: Այն ժա-  
մանակ (Հայոց) երեք գնդերից հաղթության ավետաբերնե-  
րը հանդիպում են միմյանց: Բացի Բագոսից, որ ճակատա-  
մարտերից մեկում մեռավ, ուրիշ ոչ ոք չէր կորել. աստծուց  
շնորհվել էր մեծ հաջողություն ու հաղթություն, իսկ (Հայոց  
զորքերն) ասպատակում են Պարսից աշխարհը, ավերում  
են մինչև Խարտիզան կոչված կողմերը: Լիացան բազմաթիվ  
գանձերով, զենքերով, զարդերով ու շատ ավարով և շա-  
փից դուրս հարստացան:

#### Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

ՄԵՐՈՒԹԱՆ ԱՐՄՐՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐ շԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ  
ԴԵՄ ԱՊՏԱՄԲԱՎԵԼՈՎ՝ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՉ ԹԱԳԱՎՈՐԻ ՄՈՏ ԳՆԱՑ ԵՎ  
ԱՎԵԼԻ ԵՎ ՊԳՐՈՒՄ ԷՐ ՊԱՏԵՐԱԶՄԵՆԵՐԸ, ԵՎ ԹԵ ԽՉՊԵ՛Ս ՆԱ  
ՈՒՐԱՅԱՎ ԱՍՏՄՈՒՆ ԵՎ ԱՆՆՈՒՉՅՏԵՎ շԱՅՈՑ ԱՇԽԱՐՉԻ ԽԱՆԳԱՐԻՉԵ  
ԵՂԱՎ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՁ:

Այն ժամանակ Հայոց թագավորի դեմ ապստամբվեց մեծ  
նախարարներից մեկը Արծրունյաց ցեղից՝ Մերուժան անու-  
նով: Նա գնաց ներկայացավ Պարսից Շապուհ թագավորին  
և երդումով ուխտ դրեց նրա հետ, որ առմիշտ նրա հպատա-  
կը կլինի: Նախ ուրացավ իր կյանքը, իր աստվածը, որով-  
հետև հրաժարվեց քրիստոնեությունից և իր մասին վկայեց,  
թե քրիստոնյա չէ, ընդունեց մազդեզանց՝ այսինքն մոգերի  
կրոնը, երկրպագեց արեգակին ու կրակին. խոստովանեց,  
թե աստվածները նրանք են, որոնց պաշտում է Պարսից  
թագավորը: Նա ուխտ դրեց Պարսից Շապուհ թագավորի  
հետ, թե ապագայում եթե Շապուհը կարողանա հաղթել և  
Հայոց աշխարհը նվաճել, և ես կարողանամ իմ աշխարհը և  
իմ տունը վերադառնալ. նախ ես, — ասում է, — կշինեմ իմ  
սեփական տանը ատրուշան՝ այսինքն կրակը պաշտելու  
տուն: Կյանքի և մահվան ուխտ է դնում նրանց հետ խոսքով

ու գործով: (Այնուհետև) պատրաստեցին առաջինից ավելի մեծ քանակությամբ Պարսից զորք՝ Հայոց աշխարհն ապատակելու. նրանց առաջնորդն եղավ շարագործ Մերուժանը: Մերուժանի առաջնորդությամբ Հայոց աշխարհը հանկարծակի կրակի ու ավերածի մատնեցին. ոմանց փղբորին ոտնակոխ էին անել տալիս, կանանց սայլերի ցցի վրա էին հանում, Հայոց աշխարհի վերին գավառներն տանում բոլոր բնակիչներին կոտորում էին:

Մինչդեռ Արշակ թագավորը ուտեստի՝ կերակրվելու համար<sup>112</sup> ստորին գավառների կողմերում էր՝ Անգեղ տանը, Պարսից զորքերը միջնաշխարհը քարուքանդ էին անում: Ապա Հայոց Վասակ զորավարը զորք է հավաքում. նա կարողացավ այն ժամանակ կազմակերպել ու սարքավորել տասը հազար ընտիր ու քաջ հեծելազոր, նրանցով առաջ շարժվեց, փութով հասավ Պարսից զորքի վրա: Երբ Պարսից թագավորի զորավարներն իմացան, թե Հայոց Վասակ սպարապետը զորք է հավաքել իրենց դեմ, երկրում մնացածներին կողոպտեցին, գերի վերցրին ու շտապ-շտապ փախան իրենց աշխարհը: Նրանց հետամուտ եղավ Վասակ Մամիկոնյանը և հասավ, երբ նրանք անցնում էին Ատրպատականով: Պարսից թագավորի զորքերը գերիները թողին ու փախան Մերուժանի հետ: (Հայոց) զորքերը գերութունից աղատեցին անշափ ու անթիվ բազմութունը և խաղաղությամբ դարձան Արշակ թագավորի մոտ:

### Գ Լ Ո Լ Խ Ի Պ

ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՊՏԱՄԲՎԵԼՈՎ ԳՐԳՈՒՄ ԷՐ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՊՏՆԵՐԱԶՄ ԷՐ ԱՆՈՒՄ. ԻՆՉՊԵՍ ԻՍ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՌՆԱԼՈՎ ԱՍՊԱՏԱԿ ՋՈՐԷ Է ԲԵՐՈՒՄ շԱՅՈՑ ԱՇԵՆԱՐԸ, ԻՆՉՊԵՍ ԳԵՐԻ Է ՏԱՆՈՒՄ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐԵՆԵՐԻ ՈՍԿՈՐԵՆԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՍԱԿ ՋՈՐԱՎԱՐԸ ԹՇԱՄԲԱՆԻ ՇԱՂԹԵՑ ՈՒ ԳԵՐԻՆԵՐԸ ՆՐԱՆՑԻՑ ԵՑ ԽԵՑ:

Սրանից հետո տխրահույս Արշակյանը Պարսից Շապուհ թագավորին գրգռելով սաստիկ բարկացրեց Արշակ թագավորի վրա: Ապա Պարսից Շապուհ թագավորը զորք է հա-

վաքում, լրտեսներ է ուղարկում՝ Հայոց Արշակ թագավորին գիտելու: Եվ մինչ Հայոց Արշակ թագավորը իր զորքով Ատրպատականի սահմանների մոտ էր գտնվում, այդ կողմերից զգուշանալով — որովհետև այդտեղ էր նա սպասում Պարսից զորքերին — սրանք Մերուժանին առաջնորդ բրունելով՝ ուրիշ կողմ շուտ տալով<sup>113</sup> սպապատակեցին Հայոց աշխարհը: Նրանք անցան Աղձնիքով, Մեծ Մոփքով, Անգեղ տանով, Անձիս գավառով, Շահունի Մոփքով, Մզուր գավառով, Դարանաղիով, Եկեղյաց գավառով: Պարսից Շապուհ թագավորը անթիվ զորքերով այս գավառները մտավ և ծավալվեց հեղեղի նման:

Կրակի ու ավերածի էին մատնում երկիրը, անթիվ մարդիկ էին կոտորում իրենց սրերով, կանանց ու երեխաներին սայլերի ցցերի վրա էին հանում, մի մասն էլ կամերի տակ էին գցում, կախել էին տալիս, տղամարդկանց բազմութունը գցում էին փղբորի ոտքերի տակ կոխան լինելու և անթիվ քանակությամբ մանր երեխաների գերի էին տանում: Շատ ամբողջներ քանդում էին, շատ ամուր բերդեր ավերում: Նրանք առան Տիգրանակերտ մեծ քաղաքը, որ Աղձնիք գավառում էր, բղեշխի իշխանության մեջ, և այնտեղից քառասուն հազար ընտանիք անմիջապես գերի բռնելով՝ իրենք արշավեցին Մեծ Մոփք գավառը: Այնտեղ էլ կային բերդեր, որոնց մի մասը գրավեցին, իսկ մի մասը շկարողացան առնել: Այնտեղից եկան պաշարեցին Անգեղ ամուր բերդը Անգեղ տան գավառում, որովհետև այնտեղ կային Հայոց շատ Արշակունի թագավորների գերեզմաններ և վաղուցվանից ի վեր այնտեղ ամրացված էին շատ գանձեր: Գնացին պաշարեցին բերդը և երբ, սեղի ամրության պատճառով, շկարողացան առնել, թողին ու գնացին: Շատ բերդեր էլ թողին անցան, որովհետև չէին կարողանում այն ամրոցների հետ կռվել: Նրանց ձեռքն անցավ միայն Անի բերդը Դարանաղի գավառում, որովհետև շարագործ Մերուժանը մի հնարք մեքենայեց այդ ամուր բերդի դեմ: Վեր էին բարձրանում, պարիսպները կործանում էին և բերդից առհամար գանձեր էին դուրս բերում: Բաց էին անում Հայոց նախկին թագավորների, քաջ Արշակունիների գերեզմաններ:

րը և թագավորների ոսկորները գերի էին տանում: Չկարողացան բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը՝ նրա հսկայակառույց, հսկայական պինդ ու ճարտար շինվածքի պատճառով: Այնտեղից հեռանալով ուրիշ կողմ ասպատակեցին, առաջ շարժվելով դեպի Բասենի կողմերը, մտադրվում էին թիկունքից հարձակվել Հայոց թագավորի զորքերի վրա:

Երբ այս ամենը կատարվում էր, դուժկան եկավ Արշակ թագավորի մոտ. նրան հայտնեցին, թե՛ «Դու այդտեղ Ատրպատականում նստած՝ թշնամուն սպասում ես դիմացից, իսկ թշնամիները քո թիկունքը անցնելով երկիրը կտուրեցին և հիմա գալիս են քեզ վրա»: Երբ այս լսեցին Հայոց Արշակ թագավորը և նրա Վասակ զորավարը, զորահանդես կազմեցին: Վասակ զորավարի ձեռքի տակ այդ ժամանակ պատրաստ գտնվեց պատերազմական գործի պիտանի մոտ վաթսուն հազար մարդ, ընտիր պատերազմողներ, որոնք միաբան, միասիրտ, հոժարակամ գնում էին պատերազմի, որպեսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը զոհեն երկրի համար, իրենց բնակած տեղերի համար, կռվեն իրենց եկեղեցիների համար, սուրբ եկեղեցիների սպասավորների համար, իրենց հավատի ու աստծու համար, իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար: Որովհետև նույնիսկ թագավորների ոսկորներն ու բազմաթիվ ժողովուրդ տեղահան արված՝ օտարութուն էին քշված:

Այս Վասակ սպարապետը իր վաթսուն հազարով առաջ շարժվեց. իր ետևը թողեց Արշակ թագավորին սպասավորների հետ Մարաց աշխարհում մի ամուր տեղում, իսկ ինքը եկավ հասավ Հայաստանի միջնաշխարհը՝ Այրարատյան գավառը. այնտեղ գտնում է Պարսից զորքերը, որոնք այնտեղ կուտակվել բանակ էին դրել մեծ բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին՝ բանակած Այրարատյան գավառում: Վասակն իր հետ եղած գնդով այնտեղ հասնելով՝ գիշերով անսպասելի կերպով գրոհ է տալիս Պարսից թագավորի բանակի վրա: Եվ տեղնուտեղը սրի են անցկացնում Պարսից բոլոր զորքերը. միայն թագավորը հազիվ ճողոպրում փախ-

չում է մի ձիով: Մնացածներին հալածելով փախցնում են իրենց սահմաններից դուրս և նրանցից անթիվ ու անհամար ավար են խլում, որ շափ ու հաշիվ չունեին: Նրանց բոլորին առհասարակ կոտորեցին իրենց սրերով, խլեցին նրանցից իրենց թագավորների ոսկորները, որ պարսիկները գերի էին տանում Պարսից աշխարհը: Որովհետև նրանք, ըստ իրենց հեթանոսական կրոնի՝ ասում էին. «Նրա համար ենք մենք Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»: Արդ՝ Վասակը խլում է նրանցից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրանցից Վասակը խլեց, տարան, թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում՝ Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում: Իսկ իրենք հոգ տարան աշխարհը խաղաղացնելու, բարեկարգելու, գերիները տեղավորելու, այրածն ու ավերածը նորոգելու: Բայց այս անգամ էլ շարագործ Մերուժանը Պարսից թագավորի հետ փախչում ազատվում է: Այնուհետև Արշակ թագավորը Վասակ զորավարի հետ պահպանում է երկիրը, սահմանագլխի երկու դռներն<sup>14</sup> զգուշությամբ պահելով՝ որքան ժամանակ որ կենդանի էին:

## Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐՆ ԱՐԵԱՎԵՑ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԸ,  
ՔԱՆԴԵՑ (ՆՐԿԻՐԸ) ԵՎ ԿՈՏՈՐԵՑ ԵԱՊՈՒՋ ԹԱԳԱՎՈՐԻ  
ԲԱՆԱԿԸ ԹԱՎՐԵՇՈՒՄ:

Այնուհետև Հայոց Արշակ թագավորը զորք է հավաքում, կուտակում է իր մոտ ավազի բազմությամբ զորք և վեր է կենում գնում է Պարսից աշխարհի վրա: Այս Վասակը վերջնում է Հայոց գունդը, օգնության է կանչում նաև հոներին

և ալաններին, որոնք գալիս են Հայոց թագավորին օգնութեան պարսիկներին դեմ: Նույն այդ ժամանակ Պարսից թագավորն էլ իր բոլոր զույգերով շարժվում գալիս է Հայաստան աշխարհի վրա՝ սրանց դեմ. սրանք էլ շտապով հասան Ատրպատական և Պարսից զորքը գտան բանակ դրած թավրեշում<sup>115</sup>:

Վասակ սպարապետը հասնում է քսան բյուրով, հարձակվում է Պարսից բանակի վրա: Թագավորը մի ձիով ճողպարած փախչում է. (հայերը) ավար են առնում պարսիկների ամբողջ կարավանը<sup>116</sup>, Պարսից բազմաթիվ զորքն ամբողջապես կոտորում են և բանակից վերցնում են շատ ավար, որ հաշիվ չունեն: Ասպատակում են ամբողջ Ատրպատական աշխարհը, քարուքանդ են անում երկիրը. հիմքից կործանում են և գերիներ են բերում այնտեղից աստղերի բազմութամբ. այդ երկրի բոլոր մարդկանց սրի են քաշում և իրենց երկրի սահմաններին պահապան կանգնելով՝ մեծ զգուշութամբ պահպանում կին:

### Գ Լ Ե Խ Ի Զ

ՎԻՆ ՊԱՐՍԻԿԻ ԵՎ ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՔ ԵՎԻՆ ԷՐՆ ՀԱՅՈՑ ՎՐԱ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՑԻՆ ՀԱՅՈՑ ԶՈՐԵՐԻՑ:

Ապա Պարսից Շապուհ թագավորը Վինին չորս հարյուր հազար զորքով հանեց Հայոց Արշակ թագավորի դեմ: Գալիս է Վինը և ասպատակում Հայոց աշխարհի բոլոր սահմանները: Երբ Հայոց Արշակ թագավորն այս իմացավ, վրա հասավ Պարսից զորքերին, ամբողջ նրանց զորքը կոտորեց, առհասարակ սրի քաշեց. մնացածներին քշեց մինչև Պարսկաստանի սահմանները: Նրանց կոտորեցին և իրենք էտ դառնալով՝ պահպանում էին ճակատի տեղը:

### Գ Լ Ե Խ Ի Է

ՊԱՐՍԻԿ ԵՆԴԻԿԱՆ ԶՈՐԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԳՅՈՒՑ Է ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԱՎԱՐ ԱՌՆԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ՎԱՍԿԱ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՆՐԱ ԴԵՄ Է ԵԼՆՈՒՄ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԲՅՈՒՐՈՎ ՈՒ ԶԱՐԿՈՒՄ Է ՆՐԱ ԶՈՐԵՐԸ:

Սրանից հետո Պարսից թագավորը Հայոց թագավորի վրա է ուղարկում լավ կազմակերպված զույգ, քառասուն բյուր ընտիր պատերազմող մարզիկ, որ գան Հայաստան աշխարհն առնեն, այրեն ու ավերեն: Նրանց զորագլուխն էր Անդիկանը, որ գալիս ասպատակում է Հայոց աշխարհը: Ապա նրա դեմ է դուրս գալիս Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը տասներկու բյուրով. ջարդում կոտորում է նրան և նրա զորքերը, խլում է նրանց զարգերը, ոչ մեկին կենդանի չի թողնում և ինքը քաջութամբ պահպանում է ճակատի տեղը:

### Գ Լ Ե Խ Ի Ը

ԶՅԶԱՐԱՎՈՒԵՑԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՍԻԿ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՑ ՄԵԿԵ ԷՐ, ՈՐՈՒՆ ՇԱՊՈՒՅ ԹԱԳԱՎՈՐԸ ՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ՈՒՎԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԱՎԵՐԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՍԱԿԸ ՆՐԱ ԴԵՄ ԵԼՄՎ ՏԱՍՆԵՐԿԱ ՀԱԶԱՐՈՎ, ԶԱՐԿԵՑ ՈՒ ԿՈՏՈՐԵՑ ՆՐԱՆ ՈՒ ՆՐԱ ԶՈՐԵՐԸ ԱՂՋՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ:

Հազարավուխտը եկավ հասավ Պարսից զորքերով, որպեսզի Հայոց աշխարհը այրի, ավերի, հիմնահատակ անի: Նա դիմեց Աղծնեթի վրա, կամենալով այնտեղից տարածվել Հայոց աշխարհի բոլոր սահմանները: Ապա նրա դեմ դուրս եկավ Վասակը տասնմեկ հազարով. ջարդեց, կոտորեց նրա զորքերը, մնացածներին փախուստի մատնեց Պարսից երկիրը, Հազարավուխտին էլ սպանեց:

Գ յ Ո Ւ խ Ի Թ

ԴՄԱՎՈՒՆԻ ՎՍԵՄԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՊԱՐՄԻՑ ԵԱՊՈՒՅ ՔԱԳԱՎՈՐԸ  
ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐ ՏԱՊԱՐԱՎՈՐԻ՝ ԶՈՐՔՈՎ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ  
ՔԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ, ԵՎ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ԶՈՐԱՎԱՐԸ (ՆՐԱ ԴԵՄ) ԴՈՒՐՈՒ  
ԵԿԱՎ, ԶԱՐԿԵՑ ՆՐԱՆ ՈՒ ՆՐԱ ԶՈՐՔՈՐԸ:

Ապա գալիս հասնում է ԴմաՎունդ Վսեմականը՝ կաՎո-  
սական տոհմից իննսուն բյուր զորքով, որոնց ուղարկել էր  
Պարսից Շապուհ թագավորը՝ Հայոց դեմ պատերազմելու:  
Այն ժամանակ Հայոց աշխարհի զորքերը և նրանց Վասակ  
զորավարը կազմակերպվեցին, պատրաստվեցին և դուրս  
եկան նրանց դեմ պատերազմելու: Պարսից զորքերը պար-  
տուխուն կրեցին նրանցից և փախուստի դիմեցին: Վասակը  
հասնում է, շարդում կոտորում է նրանց, ոչ մեկին կենդա-  
նի չի թողնում: Վսեմականին էլ սպանում է զորքերի մեջ:  
Իսկ սինլորներին հալածում է իրենց սահմաններից դուրս:

Գ յ Ո Ւ խ Լ

ՎԱՀՐԻՃԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԶՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ Է ԵՎ  
ՊԱՏԵՐԱԶՄ Է ՏԱԼԻՍ ԱՐՇԱԿ ՔԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ, ԵՎ ԹԵ ԻՆԶՊԵՍ ՆԱ  
ԱՄԲՈՂԶ ԶՈՐՔՈՎ ՄԱՏԵՎԵՑ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԶԵՌՔԸ:

Ապա գալիս հասնում է Վահրիճի (որդի) Վահրիճը չորս  
հարյուր բյուր Պարսկական զորքով, որոնց ուղարկել էր Շա-  
պուհ թագավորը Հայոց աշխարհի վրա՝ Հայոց թագավորու-  
թյան երկրներն ավար առնելու, զորքերը կոտորելու: Նրանք  
գալիս հասնում էին Մախագլան կաշված տեղը: Ապա Վա-  
սակ զորավարը նրանց դեմ է դուրս գալիս քառասուն հա-  
զարով. զարկում կոտորում է նրանց զորքերը, ոչ մեկին  
(կենդանի) չի թողնում. սպանում է նաև Վահրիճին և զգու-  
շությամբ պահպանում է երկրի սահմանները:

Գ յ Ո Ւ խ ԼԱ

ԳՈՒՐԱՆԻ ԵԱՊՈՒՅԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՍ ՊԱՐՄԱՆՔՈՎ ՊԱՐՄԵՑԵԼ ԷՐ  
ՊԱՐՄԻՑ ԵԱՊՈՒՅ ՔԱԳԱՎՈՐԻ ԱՌԱՋ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԵԿԱՎ  
ԻՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ԶՈՐՔՈՎ, ԵՎ ԹԵ ԻՆԶՊԵՍ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՎ  
ԶԱՐԱԶԱՐ ՀԱԼԱՄԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՑ:

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորի կողմից ու-  
ղարկված Գումանդ Շապուհը, որ պարծեցել էր թագավորի  
առաջ, գալիս է ինը հարյուր հազար զորքով: Նա գալիս  
հասնում է Հայոց աշխարհը, իր ձեռքի տակ առաջնորդ  
ունենալով շարագործ Մերուժանին, որ Հայոց աշխարհից  
էր, Արծրունյաց տոհմից: Եկավ հասավ Հայոց սահմանները  
պահպանող սահմանապահ (գունդը), գտավ անփույթ և  
անզույշ. ներս թափվեցին, սփռվեցին ամբողջ Հայաստան  
աշխարհում, ավարելու, քանդելու, ավերելու ամբողջ Հա-  
յաստանը: Ապա Հայոց Վասակ զորավարը կազմակերպ-  
վում, պատրաստվում է, հասնում հարձակվում է արթայա-  
կան գնդի վրա, նախ Գումանդ Շապուհին է սպանում: Ապա  
Հայկական զորքը Պարսից ցրված զորքերի վրա ասպատա-  
կելով բոլորին կոտորում է առանց մի մարդ կենդանի թող-  
նելու: Բայց միայն շարագործ Մերուժանը մի ձիով ճողոպ-  
րելով փախչում ընկնում է Պարսից աշխարհը:

Գ յ Ո Ւ խ ԼԲ

ԴԵԶԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՄԻՑ ԵԱՊՈՒՅ ՔԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՄԵՍ ԶՈՐՔՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ՔԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ, ԵՎ ՀԱՅՈՑ  
ՎԱՍԱԿ ԶՈՐԱՎԱՐԸ ՀԱՍԱՎ ԿՈՏՈՐԵՑ ՆՐԱՆ:

Այս բոլորից հետո Պարսից Շապուհ թագավորը զորք է  
ժողովում ու կուտակում անշափ և անհամար բազմությամբ,  
ինչպես ավազը ծովի ափին, չորս հարյուր բյուր լավ ըս-  
պառազինված մարդիկ, նիզակ գործածողներ: Եվ Դեհկան  
նահապետին, որ տոհմով ազգակից էր Հայոց թագավորնե-  
րին, այսինքն՝ Մամիկոնյաններին, (այս զորքով) ուղարկում  
է Հայոց աշխարհը, Հայոց Արշակ թագավորի դեմ:



Նա գալիս հասնում է Հայաստանի սահմանները, բայց ծուլացած կամ քնած չի գտնում հայերին. նրանք կազմ և պատրաստ էին պատերազմական գործին: Եվ Վասակ զորավարը նրանց դեմ է դուրս գալիս յոթանասուն հազարով. շարդում կոտորում է Պարսից բոլոր զորքերը, սպանում է իր ազգական Դեհկան նահապետին և մնացածներին իրենց առաջը գցելով ձի հեծած հալածում փախցնում է: Բայց Մերուծան Արծրունին, որ նրանց առաջնորդում էր, փախչելով փրկվում է:

### Գլուխ 14

ՍՈՒՐԵՆ ՊԱՆՈՒԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԼՈՒՅՆՊԵՏ ԵՆԱՎ ՄԵՑ  
ԶՈՐԲՈՎ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԵՑ:

Պարսից Շապուհ թագավորը նորից զորք է հավաքում, կազմակերպում և պատրաստում է բազմաթիվ զնդեր և անթիվ փղեր, ընտիր ու պատերազմող մարդիկ, Սուրեն Պանուկի (ձեռքի տակ), որ Հայոց Արշակ թագավորին ազգական էր, և Մերուծանի առաջնորդությամբ արձակում է նրանց վրա: Ապա Հայոց Վասակ զորավարն էլ վեր կացավ զնաց նրանց դեմ երեսուն հազարով: Սուրենի հետ ընդհարվեց, նրան սպանեց, զորքերը կոտորեց: Բայց պիղծ Մերուծանը փախչում է:

### Գլուխ 17

ԱՊԱԿԱՆ ՉՍԵՄԵՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԼՈՒՅՆՊԵՏ ԵՆԱՎ ԱՅՍ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ ԱՆՉԱՋՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՆԿԻՊԵՏ:

Սուրենից հետո եկավ Վսեմականը. սա գալիս հասնում է անթիվ զորքերի բազմությամբ. Մերուծանն էլ Պարսից Շապուհ թագավորի կողմից առաջնորդ էր նշանակված Հայոց աշխարհի դեմ պատերազմելու համար: Ապա Վասակ Հայոց սպարապետն ուղարկվեց նրանց ընդառաջ: Զարդում

է Պարսից զորքերը, մի մարդ կենդանի չթողնելով, սպանում է Ապական Վսեմականին իր զորքի հետ միասին: Միայն շարագործ Մերուծանն է փախչում:

### Գլուխ 16

ԶԻԿ ՊԱՏՎԻՐԱԿԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՇԱՊՈՒՀ ԹԱԿԱՎՈՐԻՑ ՄԵՑ ԶՈՐԲՈՎ  
ՈՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՈՑ ԴԵՄ ՊԱՏՆԲԱԶՄԻ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ  
ՆՄԱՆ ԿՈՏՈՐՎԵՑ:

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը իր Զիկ պատվիրակապետին արձակեց Հայաստան պատերազմի, և նրանց առաջնորդ նշանակեց Մերուծանին: Նրանց ձեռքի տակ գումարում է մեծ գունդ, ծովի ավազի բազմությամբ: Նրանք գալիս հասնում են Հայոց աշխարհը: Նրանց դեմ է դուրս գալիս Հայոց Վասակ զորավարը. Զիկ պատվիրակապետին սպանում է, զորքերի կեսը կոտորում է, մյուս կեսը առաջը գցելով փախուստի է մատնում: Բայց այս անգամ էլ չկարողացան բռնել Մերուծանին:

### Գլուխ 12

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍԻԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԶԻԿԻՑ ՀԵՏՈ ԼՈՒՅՆՊԵՏ ԵՆԱՎ  
ՊԱՏՆԲԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՎԱՍԱԿԻ ԶԵՌԲԸ ԱՆՏԵԼՈՎ ԶՈՐԲԵՐԻ  
ՀԵՑ ՄԻԱՍԻՆ ԿՈՏՈՐՎԵՑ:

Զիկի մահից հետո Սուրեն պարսիկը Պարսից Շապուհ թագավորի կողմից եկավ վաթսուն բյուրով Հայոց Արշակ թագավորի դեմ պատերազմելու, և առաջնորդ ունեւր Մերուծանին: Ապա Հայոց Վասակ սպարապետը հավաքեց նախարարների բոլոր զորքերը և գիշերով հետիտն հարձակվեց Պարսից ամրացած բանակի<sup>118</sup> վրա սրերով զինված տասը հազար ընտիր մարդկանցով: Ամբողջ Պարսից զորքն առհասարակ կոտորեցին, ոչնչացրին, ձերբակալեցին Սուրեն

պարսիկին և բերին Արշակ թագավորի մոտ, որ հրամայեց նրան բարկոծելով սպանել: Բայց Մերուծանը փախչելով ազատվեց:

### Գ լ ու խ ԼԵ

ՀՐԵՎՇՈՂՈՒՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐՎԵՑ  
ՀԱՅՈՑ ՎՐԱ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ, ԵՎ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷՆ  
ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԱՑ ՀԱՅԵՐԻՆ:

Հրեշտղուն էլ գալիս է պատերազմի Հայոց աշխարհի վրա: Սա էլ Հայոց թագավորին ազգական էր, նրա ցեղից լինելով, որ Շապուհ թագավորի հրամանով իննսուն բլուր զորքով գալիս հասնում է՝ հայերի հետ պատերազմելու: Ապա Հայոց Վասակ զորավարը կազմակերպում պատրաստում է զորքերի բոլոր գնդերը և պատերազմով դիմում է նրա վրա: Բոլորին իրենց առաջը գցելով փախուստի մատնեցին: Հրեշտղուն ու Մերուծանն էլ փախան:

### Գ լ ու խ ԼԸ

ԱԼԱՆԱՅՈՋԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՄԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆԻՍ  
ՀԱՍՆՈՒՄ Է ՉՈՐՄ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԵՄ  
ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՂՎԵՑ ՈՒ ՊԱՐՍՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԵՑ ՎԱՍՍԿԻՑ:

Իսկ Ալանայոջանը, որ Պահլավ էր, Արշակունիների տոհմից, խրոխտացել էր Պարսից Շապուհ թագավորի առաջ: Նա գալիս հասնում է Հայաստանի սահմանները: Այս բանը վաղորդը հայտնի է դառնում Հայոց Արշակ թագավորին. սա նույնպես իր զորքը կազմակերպեց իր Վասակ ըսպարապետի ձեռքով՝ նրա ձեռքի տակ գումարելով բոլոր հայ նախարարներին: Նա գալիս է Պարսից զորքի դեմ, բոլորին առհասարակ կոտորում է, մնացածներին փախուստի են մատնում Պարսից աշխարհը, և իրենք զգուշությամբ պահպանում են իրենց սահմանները:

### Գ լ ու խ ԼԹ

ՊԱՐՄԻՑ ԲՈՅԵԿԱՆ ՄԵՄ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԿԱՎ ՔԱՌԱՍՈՒՆ  
ԲՅՈՒՐՈՎ, ՈՐՈՆՑ ԿՈՏՈՐՈՒՄ ՈԶՆՉԱՅՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ  
ՍՊԱՐԱՊԵՏԸ:

Սրանից հետո Պարսից Բոյեկան մեծ նախարարը բառասուն բլուրով գալիս հասնում է Ատրպատական՝ կամենալով Հայոց աշխարհն ասպատակել: Նրա առաջն է դուրս գալիս Վասակը իր Հայկական գնդով, կոտորում է Պարսից ամբողջ զորքը, Բոյեկանին էլ սպանում է Թավրեշում: Այնտեղ նա այրում է Պարսից թագավորի ապարանքը և գտնելով թագավորի պատկերը՝ նետածգությամբ այն ծակըրտում է: Բայց միայն Մերուծանը, որ նրանց հետ եկել էր, փախչում է:

### Գ լ ու խ Խ

ՎԱԶԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ. ԵԿԱՎ ՏԱՍՆՈՒԹ ԲՅՈՒՐՈՎ  
ԵՎ ԿԱՄԵՆՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՎԱՃԵԼ. ԵՎ ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԸ  
ՎԱՆԵՑ ՆՐԱՆ ՈՒ ՆՐԱ ԶՈՐՔԵՐԻՆ:

Պարսից նախարարներից Վաչական անունով մեկը տասնութ բլուրով արշավում է Հայոց աշխարհի վրա: Ապա Հայոց զորավար Վասակը հավաքում է Հայոց բոլոր զորքերը, Արշակ թագավորին թողնում է Դարյունքի ամուր քերքում և ինքը, Հայոց Վասակ զորավարը, Հայոց զորքերով հարձակվում է Վաչականի բանակի վրա: Սպանում է Վաչականին, կոտորում է Պարսից բանակները. միայն Մերուծանը՝ նրանց առաջնորդը, քիչ մարդկանցով փախչում ազատվում է:

### Գ լ ու խ ԽԱ

ՄՇԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՍՈՒՆԷՒՆԳ ԲՅՈՒՐՈՎ ԱՐՇԱՎԵՑ ՀԱՅՈՑ  
ԱՇԵԱՐԸ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԿՈՏՈՐՎԵՑ ՎԱՍԱԿԻՑ ԵՎ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԻՑ:

Պարսից նախարարներից Մշկան անունով մեկը նույնպես գալիս ճակատում է Արշակ թագավորի դեմ: Ապա Հայոց զորավարը՝ Վասակը, Հայոց զորքը ճակատամարտի

է հանում նրանց դեմ, և մեծ սաստկությամբ հարձակվում են միմյանց վրա: Հայկական գունդը հաղթում է Պարսից զորքերին, նրանց կոտորում են, ոչ մեկին կենդանի չեն թողնում. հականե հանվանե սպանում են Մշկանին, իսկ Մերուժանը փախչում է:

### Գ յ ու խ ԽԲ

ՄԱՐՈՒՃՅՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՔՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ԱՐՇԱԿ  
ԲԱԳՅԱՎՈՐԻ ՎՐԱ, ԵՎ ՔԵ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՑ ԿՈՏՈՐՈՒՄ  
ՈՉԼՁԱՅՆՈՒՄ Է ՎԱՍԱԿ ԹՊԱՐԱՊԵՏԸ:

Մի մեծ նախարար՝ Մարուճան<sup>119</sup> անունով, գալիս է Հայոց աշխարհի հետ պատերազմելու: Նա վաթսուն բյուրով գալիս մտնում է Հայոց աշխարհը՝ իր ձեռքի տակ առաջնորդ ունենալով Մերուժան Արծրունուն: Ապա Վասակը Հայոց բոլոր զորքերով պատերազմով քնդհարվում է նրա հետ, ջարդում, կոտորում, ոչնչացնում է Պարսից զորքերը, Մարուճանին էլ սպանում է: Բայց միայն Մերուժանը փախչում է:

### Գ յ ու խ ԽԳ

ՋԻՆՊԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ՀԱՅՈՑ  
ԲԱԳՅԱՎՈՐԻ ՎՐԱ, ԱՊԱ ՎՅՍԱԿ ԶՈՐԱՎԱՐԸ ՀԱՍՆՈՒՄ ԿՈՏՈՐՈՒՄ  
Է ՊԱՐՍԻՑ ԶՈՐԵՐԸ ՄԵՍ ՀԱՐՎԱՍՏԸ:

Մի ոմն Ջինդկապետ<sup>120</sup> Պարսից թագավորի զորքերի զորագլուխը, իննսուն բյուրով գալիս հասնում է Ատրպատականի սահմանները: Հայոց Վասակ զորավարը աճապարում, դուրս է գալիս նրանց առաջ. գիշերով հարձակվում է Պարսից ամրացած բանակի վրա, բոլորին սրի է քաշում, զորապետին էլ սպանում է բանակի մեջ: Միայն շարագործ Մերուժանը ճողոպրում, ազատվում է:

### Գ յ ու խ ԽԴ<sup>121</sup>

ՊԱՊ ԱՐՔԱՅՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ, ՔԵ ԻՆՉՊԵՍ ԴԵՎԵՐԸ ՀԱՅՏԻՆ  
ԵՐԵՎԱՆԻՒՄ ԷՆ ՆՐԱ ՎՐԱ, ԵՎ ՆՐԱՆՑ ՉԵՑ ՊՂՍՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԳՈՐՍՈՒՄ:

Արշակի որդի Պապը ծնվեց սյունի Փառանձեմից, որ Գնելի կինն էր եղել, որին սպանեց Արշակ թագավորը և նրա կնոջը՝ Փառանձեմին, իրեն կին առավ և նրանից ունեցավ որդի, որ կոչվեց Պապ: Երբ մայրը նրան ծնեց, որովհետև անօրեն մարդ էր և աստուց բոլորովին երկյուղ չուներ, նրան դեերին նվիրեց, և բազմաթիվ դեեր մանուկի մեջ բնակվեցին ու նրան վարում էին ըստ իրենց կամքի: Նա սնվեց, մեծացավ և մեղքեր էր գործում — պոռնկություն, պիղծ արվամոլություն, անասնամոլություն և զազրելի, գարշելի գործեր, բայց մանավանդ արվամոլություն: Բացի սրանից, ինքն էլ իգանում էր ուրիշներին. այսպես ընկած էր:

Մի անգամ երբ մայրը իմացավ, թե նա արվամոլությամբ է պարապում, չկարողանալով այդ վատանուն խայտառակության դիմանալ՝ իր որդու սենեկապանին ասաց, թե «երբ նա պղծության համար կպահանջի այն մարդկանց, որոնց հետ պղծությունը կատարում է, դուք ինձ ներս կանչեցեք»: Երբ պատանի Պապը անկողին մտնելով պահանջեց այդ մարդկանց պղծության համար, մայրը ներս մտավ և որդու առաջ նստեց: Ապա պատանին սկսեց ճշալ, բղավել և ասաց մորը. «Վեր կաց գնա՝ այստեղից, որովհետև մեռնում, խորովվում եմ, կայրվեմ, կպայթեմ, եթե այստեղից չգնաս»: Իսկ մայրն ասաց. «Ես այստեղից դուրս չեմ գա, չեմ գնա»: Իսկ նա ավելի ու ավելի սաստկացնում էր ճշալն ու վայելը: Իսկ մայրը նայեց ու տեսավ իր աչքերով, որ սպիտակ օձերը պատել էին բազմոցի ոտքերը և փաթաթվում էին պատանի Պապին, մինչ նա պառկած անկողնում՝ բղավում էր, պահանջում էր այն պատանիներին, որոնց հետ խառնակվում էր: Մայրը այս տեսնելով՝ հիշեց, թե ո՛ւմ էր նվիրել ինքը իր որդուն ծնած ժամանակ: Հասկացավ, թե այն (դեերն) են, որ օձերի կերպարանքով փաթաթվում են որդուն: Արտասովելով ասաց. «Վա՛յ ինձ, իմ

որդյակ, ես չգիտեի, որ դու տանջվում ես: Վեր կացավ, այնտեղից հեռացավ, որպեսզի (Պապը) ցանկութունը կատարի: Եվ այսպես դեերից առաջնորդվելով՝ այսպիսի գործերի անձնատուր էր եղել Արշակի որդի Պապը իր կյանքի ամբողջ ընթացքում, մինչև թագավորութան հասնելը, մինչև իր մահը:

### Գ լ ու խ ԽԵ

ՍԱԿՍԱՆ ԱՆԿԵՐԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՊԱՐՄԻՑ ՇԱՊՈՒՂ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՆ ՆՈՒՅՆՊԵՍ ՓԱԵՅՐԵՑ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ԶՈՐԱՎԱՐԸ:

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը գումարեց իր զորքերը, շորս հարյուր հազար մարդ, և նրանց զորագլուխ նշանակեց Սակստան անդերձապետին<sup>122</sup>: Նրանք շարժվեցին եկան Հայոց կողմերը, ծավալվեցին և պատերազմի բռնվեցին Հայոց Արշակ թագավորի հետ: Ապա Հայոց բոլոր մեծամեծ նախարարները մի տեղ հավաքվելով խորհուրդ արին. նրանք ոչ մի կերպ չէին համաձայնվում, որ Արշակ թագավորն էլ իրենց հետ պատերազմի դուրս գա: Այնուհետև Վասակ զորավարը Մեծ Հայքի բոլոր մեծամեծների և նախարարների հետ շարդում, կոտորում է Պարսից բոլոր զորքերը. սպանում է նաև Սակստան անդերձապետին, բայց միայն Մերուժան Արծրունին փախչելով ազատվում է:

### Գ լ ու խ ԽԶ

ՇԱՊՍԱՆ ՏԱԿԱՌԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՇԻՆԿ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ, ՆՐԱՆՑ ԷՆ ԵՆ ԿՈՏՈՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԵՐԸ:

Շապստան տակառապետը<sup>123</sup> հինգ հարյուր բյուրով գալիս հասնում է Հայոց աշխարհի վրա, ուզում է ներս խուժել Հայոց աշխարհը: Ապա Հայոց թագավորի կազմակերպված ու պատրաստ գունդը և Հայոց Վասակ զորավարը դուրս են գալիս Պարսից զորքի դեմ ու ընդհարվում են նրանց հետ:

շարդում, կոտորում են Պարսից զորքերը, սպանում են նաև Պարսից Շապստան տակառապետին: Բայց միայն Մերուժանը փախչելով ազատվում է:

### Գ լ ու խ ԽԷ

ՄՈԳԱՑ ՀԱՆԳԵՐԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԱՍՆՈՒԹ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՉԵՑ ԵՎ ԿՈՐՄԱՆՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ:

Այնուհետև Մոգաց հանդերձապետն է գալիս տասնութ բյուրով՝ Հայոց Արշակ թագավորի դեմ պատերազմելու: Ապա մի տեղ են գալիս հավաքվում Հայաստան աշխարհի բոլոր զորքերը և Վասակ զորավար-սպարապետը, որ Հայոց Արշակ թագավորի դայակն էր: Որքան էլ շատ աճապարեցին, հազիվ Մաղխագանում կարողացան նրանց հասնել: Երբ երկու զնդերն իրար ընդհարվեցին, Պարսից զորքերը պարտութուն կրեցին և փախուստ տվին Վասակ զորավարի ու Հայոց բոլոր զորքերի առջևից: Այնտեղ սպանեցին Մոգաց հանդերձապետին, զորքերը մինչև վերջին մարդը կոտորեցին: Միայն Մերուժանը արաբական ձի հեծած փախչում է:

### Գ լ ու խ ԽԸ

ՀԱՄԲԱՐԱԿԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼՈՎ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՉԵՑ ԵՎ ՍԱՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՏՈՐՎԵՑ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԵՐԻՑ ԵՎ ՎԱՍԱԿ ԶՈՐԱՎԱՐԻՑ:

Ապա Պարսից թագավորի համբարակապետը<sup>124</sup> իննսուն բյուրով գալիս հասնում է Կորճայքի գավառը՝ Սաղամաս, և մի ամուր տեղում բանակ դնելով կամենում է կռվել Հայոց Արշակ թագավորի դեմ: Ապա գալիս է Հայոց զորավարը տասը հազար ընտիր զորքով, դարանամուտ է լինում բանակի մի բանի կողմերում և գիշերով հարձակվում է զորքի վրա: Բռն

լորին առհասարակ սրի են քաշում, ոչ ոքի կենդանի չեն  
թողնում, միայն Մերութանը գնդից դուրս լինելով փախ-  
չում է:

### Գ յ ու խ ԽԹ

ՄԱՅՎԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՔԱԳԱՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ շԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ  
ՇԵՏ ԿՈՎԵՆՈՒ ԵՎ ԿՅՈՐԿՆԵՑ ՎՅԱԿՆԻՑ ՈՒ շԱՅՈՑ ԶՈՐՔԵՐԻՑ:

Ապա մի ոմն Մոսկան՝ Պարսից մեծ զորագլուխ, քառ-  
սուն բյուրով գալիս հասնում է Հայոց Արշակ թագավորի  
հետ պատերազմելու: Ապա և Հայոց զորքը վասակ զորա-  
վարի հետ խրոխտանալով ուժգնորեն, ալուծաբար հարձակ-  
վեց նրանց վրա, Պարսից զորքերը կոտորեց և Մոսկանին էլ  
սպանեց: Բայց Մերութանը այս անգամ էլ փախավ:

### Գ յ ու խ Մ

ՔԵ ԽԵՉՊԵՍ շԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԿՆԵՑ ՈՒ ՔԱՏՔԱՆՎԵՑ,  
ԵՎ ԽԵՉՊԵՍ շԱՅՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ ԱՊՍՏՄԲՐՎԵՅԻՆ ՈՒ ՁԵՌՔ  
ՄԵԿԵՆՅԻՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՋ ԹԱԳԱՎՈՐԻՆ, ԵՎ ԽԵՉՊԵՍ ՇՈՒՏՈՎ ԱՅՍ  
ՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ ՑՐՎԵՑԻՆ, ԵՎ շԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԹՈՒԱՅԱՎ:

Երեսունչորս տարի մեր Հայոց աշխարհը պատերազմ  
մղեց Պարսից թագավորի դեմ, որից հետո երկու կողմերն էլ  
ձանձրացան, հոգնեցին, պարտութուն կրեցին, լքվեցին:  
Եվ սկսեցին Հայոց թագավորի բանակից փախչել ու հեռա-  
նալ, թողին իրենց Արշակ թագավորին. և այս բայթայումն  
սկսում էին մեծամեծ ավազները: Նախ Աղձնիքի բզեշխը և  
Նոշիրական բզեշխը և Մահկերտունը և Երհորականը և  
Դասարնտրեին<sup>125</sup>. և Աղձնիքի ամբողջ նախարարությունը, նը-  
րանց զորքն ու Աղձնիքի տոհմը ապստամբվեցին Հայոց Ար-  
շակ թագավորի դեմ, գնացին Պարսից Շապուհ թագավորի  
առաջ կանգնեցին, պարբիսպ քաշեցին Հայաստանի կողմից

Ձորա կոչված տեղում, դաներ դրին և էրենց երկիրը Հա-  
յաստանից զատեցին:

Սրանից հետո Գուգարքի բզեշխը, իսկ դրանից հետո  
Ձորա գավառի տերը, Կողբի գավառի տերը, նրանց հետ նաև  
Գարդմանաձորի տերը և բոլոր նրանք, որ այդ կողմերն էին  
գտնվում, նրանց մոտ և շուրջն էին, միասին ապստամբվե-  
ցին Արշակ թագավորի դեմ և գնացին Պարսից Շապուհ  
թագավորի առաջ կանգնեցին: Հայոց Արշակ թագավորի դեմ  
ապստամբվեցին նաև Արձախի ամուր գավառը, Տմորիքի  
ամուր գավառը և Կորդիքի ամուր աշխարհը, հետո նաև  
Կորդիք գավառի տերը գնաց կանգնեց Պարսից Շապուհ թա-  
գավորի առաջ:

Սրանից հետո Հայոց թագավորի դեմ ապստամբվեց Հա-  
յոց թագավորական տան սեփական իշխանությունը Ատրը-  
պատական աշխարհում, Հայոց թագավորից հեռացավ նաև  
Կազրից աշխարհը. Հայոց թագավորին թողեց ու հեռացավ  
Անձիտի տեր Սաղամուտը և նրա հետ Մեծ Մոլքի իշխանը,  
նրանք գնացին Հունաց թագավորի մոտ: Միջնաշխարհում  
մնացածները երկմտեցին թագավորից և չէին կամենում նը-  
րան լսել ու ոչ մի բան անել, ինչ որ նա կամենում էր: Եվ  
թագավորությունը մեծապես քայքայվեց:

Եվ Վահանը՝ Մամիկոնյան տոհմից, վասակ սպարա-  
պետի եղբայրը, հրապուրվեց Մերութան Արծրունու խոսքե-  
րից, որ իր քրոջ որդին էր: Նա էլ ապստամբվեց Հայոց Ար-  
շակ թագավորի դեմ և գնաց կանգնեց Պարսից Շապուհ  
թագավորի առաջ: Նրա սիրտը գրավեց, ուրացավ իր քրիս-  
տոնեական կրոնը և հանձն առավ ծառայել մոզուլթյան կրո-  
նին. այսինքն՝ երկրպագել կրակին, ջրին և արեգակին, ուրա-  
նալով քրիստոնեական հավատը, որի մեջ ծնվել էր: Եվ  
նա հաճելի դարձավ Պարսից թագավորին ու ամբաստանու-  
թյուններով զբաղում էր Հայոց Արշակ թագավորի և իր տի-  
րոջ՝ Վասակի դեմ. հիշեցնում էր նաև Վարդանի մահը, թե  
քո պատճառով մեռավ: Այնուհետև նա սիրելի դարձավ Շա-  
պուհ թագավորին, և նա Վահանին կնության տվեց իր Ու-  
միզդուխտ քրոջը, շնորհեց նրան այն բարձն ու պատիվը, որ  
սկզբում ունեին, իր մտերիմ փեսան դարձրեց, իր զորքերի

մեջ շքեղացրեց և խոստացավ նրան մեծամեծ կալվածքներ: Իսկ Հայոց թիվը այդ ժամանակից սկսեց պակասել ու պակասել:

### Գ լ ո խ Ծ Ս

ՔԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԿՐՈՒՄ ՄԵԱՅԱՍԵՆԵՐԸ ԲՈՒՈՐԸ ՄԻԱՍԻՆ, ՄԻԱԲԱՆ  
ՀԱՎԱՔՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՆԵՐՍԵՍ ԿԱՔՈՂԿՈՍԻ ՄՈՏ, ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ  
ԻՐԵՆՅ ԱՐՇԱԿ ՔԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՁԵՌՔ ԵՆ ՔԱՇՈՒՄ,  
ՔՈՂՆՈՒՄ ԵՆ:

Ապա Հայոց աշխարհի թագավորութեան բոլոր մարդիկ հավաքվեցին եկան Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ, — մեծամեծներ, նախարարներ, կուսակալներ, կողմնակալներ, գավառատերեր, գործակալներ, գյուղերի համփաներ<sup>126</sup>. սրանք բոլորը մի տեղ հավաքվելով սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին. «Տե՛ր, դու ինքդ գիտես, որ ահա երեսուն տարի է մեր Արշակ թագավորի (ժամանակ), որ մենք ոչ մի տարի պատերազմից հանգիստ չենք ունեցել, շարունակ մեր երեսները քրտինքը սրբել ենք սրբուով, սլաքներով, նիզակների տեղերով: Մենք այլևս չենք կարող դիմանալ, ոչ էլ դուրս գալ պատերազմի. ավելի լավ է, որ մենք էլ հպատակվենք Պարսից թագավորին, ինչպես արին մեր ընկերները, որոնք նրան թողին ու գնացին Պարսից թագավորի մոտ. մենք էլ նրանց պես պիտի անենք, որովհետև այլևս չենք կարող կովել: Եթե Արշակ թագավորը կամք ունի Շապուհի հետ կովելու, թող Վասակի և իր աներոջ՝ Անդոկի միջոցով պատերազմի, այլ այս Հայոց աշխարհից ոչ ոք, ոչ մի մարդ նրան չի գնա օգնության: Նա ուզում է՝ թող պատերազմի, չի ուզում՝ չպատերազմի, մեր պետքը չէ, մենք նրան թողել ենք»:

Իսկ սուրբ Ներսեսը խոսում է նրանց հետ ինչպես հարկն է. «Լավ մտածեցեք, — ասում է նա, — հիշեցե՛ք տիրոջ պատվիրանը միաբանության մասին, որ ծառաները հնազանդ լինեն իրենց տերերին: Դուք ահա բոլորդ կաք ու վկա եք, որ բոլորդ Արշակունյաց տոհմից եք ձեռք բերել ձեր

դիրքը. ձեզանից ոմանք նրանից են նշանակվել գավառների տերեր, ոմանք՝ աշխարհների մեծամեծներ, ոմանք՝ խոշոր ավանների և գյուղերի, ոմանք՝ գանձերի և զանազան դաստակերտների: Որովհետև Արշակունյաց պիղծ տոհմը թեպետև հանցավոր է արարիչ աստծու առաջ, բայց ձեզ բոլորիդ աղբից բարձրացրել և ապրեցրել է, մեկին գործ տալով, մյուսին՝ պատիվ, մեկին՝ իշխանություն, մյուսին՝ գործակալություն: Որովհետև թեպետ Արշակ թագավորը մեղավոր է աստծու առաջ և իր արարչին պարտական է տոկոսը հատուցել<sup>127</sup>, վրեժը կրել, բայց աստված՝ իր մեծ և անշափ մարդասիրությամբ խնայեց նրան և նրա պատճառով՝ ձեզ:

Իսկ դուք ահա կամենում եք հեթանոսների ծառայության տակ ընկնել, կորցնել ձեր կյանքն աստուծով, մերժել ձեր բնիկ տերերին, որոնք տրված են ձեզ աստուծուց, ծառայել օտար տերերի և նրանց անաստված կրոնին ցանկալ: Աստված շանի<sup>128</sup>, որ դուք այդ (կրոնը) սիրեք, հավանք ու հանձն առնեք, հեռանալով ձեր աստվածապաշտ թագավորից: Որովհետև Արշակը թեկուզ բյուր անգամ էլ շար լինի, սակայն աստվածապաշտ է, որքան էլ մեղավոր լինի, սակայն ձեր թագավորն է: Դուք ինքներդ իմ առաջ ասացիք, թե այսքան տարի է, որ կովում եք ձեր անձերի և հոգիների համար, աշխարհի համար, ձեր կանանց ու որդիների համար, և որ ամենից գլխավորն է՝ ձեր եկեղեցիների, ձեր հավատի ուխտի համար, որ ունեք Հիսուս Քրիստոսի անունով, և տերը միշտ ձեզ է շնորհել հաղթություն իր անվան համար: Հիմա դուք ձեր արարիչ Քրիստոսի փոխարեն ուզում եք ծառայել անօրենների անաստված մոգական կրոնին և նրա սպասավորներին, թողնելով մեր արարչին ու նրա պատվիրանները, թե պետք է հավատարիմ մնալ մարմնավոր տերերին, որոնց նա է ստեղծել: Գուցե տեր աստվածն էլ ձեզ վրա բարկանա, ձեզ արմատախիլ անի, ձեզ մատնի հեթանոսների ձեռքը՝ հավիտյան ստրկաբար նրանց ծառայելու, և ծառայության լուծը երբեք ձեր վրայից չվերանա: Եվ եթե դուք բողոքով դիմեք տիրոջը, նա ձեզ չի լսի, որովհետև դուք ինքներդ եք մտնում հեթանոս տերերի և անաստված անգետ մարդկանց ծառայության տակ, (հանձ-

նրվում եք) հեթանոս մարդկանց և խստասիրտ տերերի շատ և շատ շարիքներ դուրս կգան ձեր առաջ, որոնցից չեք կարողանա ճողոպրել:

Իսկ նրանք, որոնք միատեղ հավաքված էին, աղաղակ բարձրացրին, իրար ձայն տվին՝ շփոթութուն և աղմուկ հարուցելով. «Վեր կենանք, գնանք, — ասում էին նրանք, — քաշվենք գնանք մեր տեղերը. այդ խոսքերը շենք կամենում ընդունել»: Սփռվեցին գնացին ամեն մեկը իր տունը:

**Գ Լ Ե Խ Ծ Բ**

**ՇԱԳՈՒՋ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ԳԱԳԱՐԵՑՐԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅՈՑ ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՅՄ ԵՎ ԵՆԿՈՒԹՅԱՄ ԻՐ ՄՈՏ ԿԱՆՉԵՑ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:**

Ապա Պարսից Շապուհ թագավորը մեծ աղաշանքներով, ընծաներով ու հրովարտակներով Արշակ թագավորին սիրով իր մոտ կանչեց, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղութուն ու մեծ բարեկամութուն հաստատեն: Իսկ Արշակ թագավորը թեպետև ուզում էր պատերազմ տալ, բայց Հայոց աշխարհի ամբողջ զորքը այս բանին չէր համաձայնվում: Ուստի նա կամա-ակամա սիրտ արեց խոնարհությամբ հրովարտակ ուղարկել Պարսից Շապուհ թագավորին, ինչպես հպատակն իր տիրոջը: Իր կողմից էլ նրան հաշտության ընծաներ ուղարկեց:

**Գ Լ Ե Խ Ծ Գ**

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԱԳՈՒՋ ԹԱԳԱՎՈՐԸ ԿԻԿԵ ԱՆԳԱՄ ՀԱՅՈՑ ԱՐԵԱԿ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԿԱՆՉԵՑ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԳՆԱՑ ՈՒ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԿՈՐԱՎ:**

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը դարձյալ (պատգամ) ուղարկեց Հայոց Արշակ թագավորին և ասաց. «Եթե ես և դու իրար հետ հաշտ ենք, ապա եկ, միմյանց հետ տեսակցենք և այնուհետև իբրև հայր և որդի լինենք միմյանց, իսկ եթե չես ուզում ինձ տեսնել, ուրեմն պատե-

րազմ ես ուզում մեր երկուսի միջև: Արշակը նրանից խնդրեց ավտտի հավատարիմ երզում, որ անկասկած լինելով գնա: (Շապուհը) Պարսից թագավորության հավատարիմ երզման օրինակով բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով<sup>129</sup> և ուղարկեց (Արշակին, ասելով), որ եթե այդ երզումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի ուստերազմի:

Երբ Հայոց աշխարհի բոլոր մարզիկ այս տեսան ու լսեցին, ապա ստիպեցին, բռնադատեցին, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա, ներկայանա Պարսից Շապուհ թագավորին: Այնուհետև Հայոց Արշակ թագավորը կամա-ակամա վեր կացավ վերցրեց իր հետ Հայոց զորավար սպարապետ (Վասակին) իր դայակին, ճանապարհ ընկավ Հայոց աշխարհից Պարսից աշխարհը, Պարսից Շապուհ թագավորի մոտ. գնաց, ներկայացավ Պարսից Շապուհ թագավորին: Երբ նրանց տեսան, երկուսին էլ<sup>130</sup> Արշակ թագավորին և Վասակ սպարապետին բռնեցին և ազատ պահում էին ազնվական թիկնապահ զորքերի մեջ: Եվ Շապուհ թագավորը կանչեց Արշակ թագավորին ու խիստ նախատեց նրան իբրև իր ծառայի, իսկ նա նրա առաջ իրեն հանցավոր ու մահապարտ ճանաչեց: Դրանից հետո նրան դարձյալ թիկնապահների գնդին հանձնեցին, որ պահեն:

**Գ Լ Ե Խ Ծ Դ**

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԱԳՈՒՋԸ ՎՆՈՒԿՆԵՐԻՆ ՈՒ ԲԱՎԳՅԱՆԵՐԻՆ ՀԱՐՅՆԵԼՈՎ՝ ՓՈՐՁՈՒՄ ԷՐ ԱՐԵԱԿԻ ՄԻՏՔԸ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՈՒՄ ՆՐԱՆ ԱՆՇՈՒՇ ԲԵՐԴՈՒՄ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀԲԱՄԱՅՈՒՄ Լ ՉԱՐԱԶԱՐ ՄԱՆՈՎ ՍՊԱՆԵԼ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ:**

Ապա Պարսից Շապուհ թագավորը կանչում է զհուկնե-րին, աստղահամներին ու բավդյաններին<sup>131</sup>, նրանց հետ խոսում է ու ասում. «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ խաղաղության դաշն կապեցի, և նա երգվեց բրիտանեական կրոնի գլխավոր (սրբության) վրա, որին ավե-

տարան են ասում. նախ այն երգումը դրժեց: Ես բլուր բա-  
բիքներ կամեցա նրան անել, ինչպես հայրը որդուն, իսկ  
նա բարիքի դեմ շարիք հատուցեց ինձ: Ես Տիգրան քաղաքի  
եկեղեցու քահանաներին կանչեցի, կարծելով, թե նրանք  
եննգությամբ նրան երդվեցրին և ինձ ստել տվին: Երբ ես  
նրանց նախատում էի, ինչպես մահապարտների, ինձ ա-  
սաց նրանց գլխավորը՝ Մարի քահանան: Ասում էին. «Մենք  
նրան արդարությամբ երդվեցրինք, իսկ եթե նա իր երդու-  
մը դրժեց, ապա նույն ավետարանը նրան էլի ձեռք ոտքը կը-  
բերի»: Են նրանց շլտեցի և հրամայեցի նրանց — յոթանա-  
սունին մի փոսի մեջ մորթոտել, իսկ նրանց հավատակից-  
ներին հրամայեցի սրի քաշել: Այն ավետարանը, որի վրա  
Արշակ թագավորը երդվեց, որ և նրանց քրիստոնեական  
կրոնի գլխավոր (գիրքն) է, շղթաներով կապեցի, և գլու-  
նը վում է իմ գանձարանում: Բայց միտքս եկան Մարի քահա-  
նայի խոսքերը. և հիշեցի, որ նա ասում էր. «Մեզ մի՛ սպա-  
նիր. ես գիտեմ, որ նույն ավետարանը Արշակ թագավորին  
կբերի քո ոտքը»: Ահա նրա ասած խոսքերն իսկությամբ  
կատարվեցին: Որովհետև Հայոց Արշակ թագավորը ահա  
երեսուն տարի է, որ Արյաց հետ պատերազմ է մղում, և ոչ  
մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ինքն իր  
ոտքով ելել եկել է ինձ մոտ: Բայց եթե գիտենայի, թե այ-  
սուհետև նա կմնա իմ պայմանին և հնազանդության ան-  
կեղծ ուխտով, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղու-  
թյամբ կուղարկեի իր աշխարհը»:

Քավոյաները նրան պատասխան տվին և ասացին. «Այս-  
օր մեզ ժամանակ տուր, վաղը քեզ կպատասխանենք»: Հա-  
ջորդ օրը բոլոր քավոյաներն ու աստղահամները հավաք-  
վեցին եկան և ասացին թագավորին. «Հիմա որ Հայոց Ար-  
շակ թագավորը եկել է քեզ մոտ, ինչպե՞ս է քեզ հետ խո-  
սում, ի՞նչ լեզու է բանեցնում, կամ ինչպե՞ս է իրեն պա-  
հում»: Թագավորն ասաց. «Նա իրեն համարում է ինչպես  
մեկը իմ ծառաներից. ուզում է իմ ոտքի հողը դառնալ»: Նրանք  
ասացին թագավորին. «Իե՛, արա ինչ որ քեզ ասում  
ենք. նրանց այստեղ պահիր, մարդիկ ուղարկիր Հայոց աշ-  
խարհը, բերել տուր այնտեղից՝ Հայաստանի սահմաններից

մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր,  
որ քո սենյակի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից  
բերած հողը. ապա դու ինքդ Հայոց Արշակ թագավորի ձեռ-  
քից կբռնես, նախ կտանես սենյակի այն տեղը, որտեղ բնա-  
կան գետինն է, և նրան հարցուփորձ կանես: Հետո նրա ձեռ-  
քը բռնած, հայկական հող շաղ տված տեղը կտանես և  
կլսես, թե ինչ է խոսում. և այն ժամանակ կիմանաս, թե  
երբ նրան արձակելու լինես Հայաստան, քո ուխտն ու դա-  
շինքը կպահի՞, թե՞ ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա  
խիստ լեզվով խոսի, իմացի՛ր, որ Հայոց աշխարհը հասնե-  
լուն պես հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնի, նույն պա-  
տերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն  
թշնամությունը կշարունակի»:

Պարսից թագավորը քավոյաներից այս լսելով՝ մարդիկ  
ուղարկեց Հայաստան արագավազ ուղտերով հողի և ջրի, որ  
գան և նրա համար պարզեն հմայքը: Քիչ օրերից հետո եկան  
ու բերին այն, ինչի որ նա նրանց ուղարկել էր: Ապա Շա-  
պուհ թագավորը հրաման է տալիս իր սենյակի հատակի  
կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուր  
ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնիկ երկրի նույն հողը: Եվ  
Հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ ու հրամա-  
յեց մյուս մարդկանց հեռացնել և նրա ձեռքից բռնած ճե-  
մելով շրջում էր: Սենյակում երթևեկելիս, երբ ճեմում էին  
պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր  
Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման  
սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ, և քեզ ինձ  
որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքնակամ, հա-  
կառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար, և ահա ամբողջ  
երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցիր»:

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր  
եմ քո առաջ. որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթե-  
ցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև  
ստանալու. բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից  
վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվե-  
ցի, ինձ քո առաջը բերեց, ու ահա եկա քո առաջ, և ահա ես՝  
քո ծառան, քո ձեռքում եմ. ինչպես ուզում ես վարվիր ինձ.



հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես՝ թո՛ ծառան, շատ հանցավոր եմ թո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով. անմեղ ձևանալով նրան բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) այն տեղն էր հասնում, հայկական հողի վրա ոտք էր դնում, սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով խոսքը փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, շարագործ՝ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու թո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը»<sup>132</sup>: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի, բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»:

(Շապուհը) դարձյալ նրա ձեռքից բռնած տանում էր պարսկական հողի վրա. այն ժամանակ (Արշակը) զղջում էր ասածների համար, խոնարհվում էր, նրա ոտքերն էր ընկնում. սաստիկ ափսոսում, զղջում էր ասած խոսքերի համար: Իսկ երբ ձեռքից բռնած տանում էր հայկական հողի վրա, առաջվանից ավելի խիստ էր խոսում: Նորից հեռացնում էր այդ հողի վրայից, սկսում էր խոսքերով ապաշխարել: Առավոտից մինչև երեկո շատ անգամ փոթձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում, խստանում, ամբարտավանանում էր, իսկ հենց որ կանգնում էր հատակի բուն գետնի վրա, զղջում էր:

Երբ եղա՛վ երեկո՛ Պարսից թագավորի ընթրիքի ժամը, սովորութունն այնպես էր, որ Հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում այնտեղ՝ նրա հետ, նրա մոտ, նրա տախտի վրա. օրենք էր, որ Պարսից թագավորն ու Հայոց թագավորը մի տախտի վրա էին բազմում, մի գահի վրա, իսկ այն օրը նախ պատրաստեցին բոլոր այնտեղ գտնված թագավորների բազմոցների շարքը, և ամենից վերջը, բոլորից ներքև, Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակում հայկական հող էին շաղ տվել: Ետև երբ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, հետո բերին բազմեցրին Արշակ արքային. նա մի պահ այդ-

պես մնաց նստած ուռած-փքված, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհ թագավորին. «Իմն է այդ տեղը, օրտեղ գաբազմել ես, վե՛ր կաց այդ տեղից, որ ես այգտեղ բազմեմ, որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ, իսկ եթե իմ երկիրը հասնեմ, քեզանից խիստ վրեժխնդիր կլինեմ»:

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս բերել շղթաներ և պղծ Արշակի պարանոցը, իսկ ոտքերին ու ձեռքերին գնել կապանքներ և տանել նրան Անդաբջն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ մինչև մեռնի:

Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առաջը բերել Վասակ Մամիկոնյանին՝ Մեծ Հայքի զորավար-սպարապետին: Սկսեց նրան անարգել. որովհետև Վասակը փոքր էր մարմնով, Պարսից Շապուհ թագավորը ասաց նրան. «Աղվե՛ս, այդ դո՛ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ շարշարեցիր, դո՛ւ էիր, որ այսքան տարի կտորում էիր արիներին. հիմա ինչպե՛ս ես, որ քեզ աղվեթի մահով սպանեմ»: Վասակը պատասխան տալով ասաց. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, ի՞մ մեծության շափը չզգացի՞ր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՛ս: Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա. երբ աչ ոտքիս վրա էի հենվում, աչ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»: Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Դե ասա, իմանանք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը. քանի որ աստված հաշտ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին տանում, Հունաց թագավորին էլ, քանի որ մեր հոր՝ Ներսեսի օրհնութունը մեզ վրա էր, և աստված մեզ ձեռքից չէր թողել: Քանի որ մենք նրա խոսքը լսում էինք և նրա խրատով էինք շարժվում, կարողացանք քեզ խրատ տալ, մինչև որ մենք ինքներս բաց աչքերով խորխորատի մեջ ընկանք: Հիմա ինչ ուզում ես արա՞: Ապա Պարսից թագավորը հրամայեց՝ Հայոց Վասակ

զորավարի մորթը հանել, խոտով լցնել և տանել նույն Անդամըն բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ բանտարկեցին և Արշակ թագավորին:

### Գ յ ու խ Ծ Ե

ՀԱՅՈՑ ԱՇԵԱՐԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐՎԱՏՆԵՐԸ ԵՎ ԱՎԵՐՄՈՒՆՔԸ.  
ՓԱՌԱՆՁԵՄ ՏԻԿՆՈՋ ԳԵՐԻ ՏԱՐՎԵԼԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՎ ՉԱՐԱՉԱՐ  
ՄԱՆԸ: ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՎԵՐՄՈՒՆՔԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՀԻՄՆՈՎՈՒ  
ԿՈՐՄԱՆՎԵԼԸ:

Այնուհետև Պարսից Շապուհ թագավորը Հայոց աշխարհի վրա ուղարկեց իր իշխաններից Երկուսին, մեկի անունը Զիկ, մյուսինը՝ Կարեն, հինգ հարյուր բյուր զորքով, որ գան Հայոց աշխարհը քարուքանդ անեն: Նրանք եկան Հայոց աշխարհի վրա: Երբ Հայոց աշխարհի տիկինը՝ Հայոց Արշակ թագավորի Փառանձեմ կինը, տեսավ, որ Պարսից թագավորի զորքերը լցվեցին Հայոց աշխարհը, առավ իր հետ մոտ տասնմեկ հազար ընտիր սպառազինված պատերազմող մարդիկ ազատներից և Պարսից զորքերից խույս տալով դիմեց գնաց Արտագերս բերդը<sup>133</sup> Արշարունյաց գավառում: Հետո Պարսից բոլոր զորքերը հասան, բերդի շուրջը նստեցին, պատեցին, պաշարեցին: Իսկ նրանք ներսը ամրացան՝ հույս դնելով տեղի ամրության վրա, իսկ սրանք բանակ զարկելով նստեցին դուրսը, ձորերի շուրջը: Այսպես տասներեք ամիս բերդի շուրջը նստեցին և շկարողացան բերդն առնել, որովհետև տեղը շատ ամուր էր: Ամբողջ երկիրը քանդեցին, ավերեցին, դուրս էին գալիս շրջակա գավառները և երկրները ավարի էին առնում, մարդիկ և անասուններ գերելով բերում էին իրենց բանակը, ուրիշ տեղերից կենսամթերք էին բերում և ուտում՝ բերդը պաշարման մեջ պահելով:

Իսկ Պապը՝ Արշակի որդին, այդ ժամանակ Հայոց աշխարհում չէր. նա Հունաց թագավորի մոտ էր<sup>134</sup>, իսկ ազատների տոհմերից բազկացած ամբողջ բանակը այս բաները լսելով՝ գնաց իրենց համար օգնություն խնդրե-

լու. նրանց զորագույն էր Մուշեղը՝ Վասակ սպարապետի որդին: Նրանք գնացին իրենց արքայորդու մոտ և բանակցում էին Հունաց թագավորի հետ, նրան համոզում էին իրենց թիկունք լինել: Իսկ Հայոց աշխարհը նրանք հաճախ սուրհանդակներ էին ուղարկում երկրի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ, որ տեղա, բերդը պաշտպանի, Պարսից ձեռքը չհանձնըվի: Նրա որդուց՝ Պապի կողմից էլ հաճախակի պատվիրակներ էին գալիս շաբաթ շաբաթի վրա, գաղտնի դռնով մի հնարով բերդն էին մտնում, սիրտ էին տալիս տիկնոջը, այսպես բերդի պաշարումը տևեց տասներեք ամիս: Իսկ պատվիրակները շարունակ գնում գալիս էին՝ ասելով, թե՛ «Պի՛նդ կաց, Պապ որդիդ գալիս է և կայսերական գունդ է բերում օգնություն»: Այս քաջալերությունը երկար ձգվեց՝ վում էր, որովհետև ասում էին. «Մի քիչ էլ, մի փոքր ժամանակ էլ համբերի՛ր, օգնությունը հասել է»:

Տասնչորսերորդ ամսից հետո աստուծուց հարված հասավ բերդում ապաստանած զաղթականների վրա. բերդում եղողների մեջ մահ ընկավ, անտվածային պատուհաս: Փառանձեմ տիկնոջ առաջ սեղանատանը նստած ուտում խմում ուրախանում էին, և հանկարծ մի ժամում հարյուր մարդ, մյուսում երկու հարյուր, պատահում էր, որ մինչև հինգ հարյուր մարդ մեռնում էին, մինչ սեղան էին բազմած լինում: Եվ այսպես օրեցօր կոտորվում էին: Մահը սկսվելու օրից մի ամիս էլ չտևեց, որ բոլորը կոտորվեցին, մոտ տասնմեկ հազար տղամարդ և մոտ վեց հազար կին. մի ամիս շանցավ, որ բերդում եղածները բոլորը կոտորվեցին. բերդում մնաց միայն տիկին Փառանձեմը երկու նաժիշտով:

Ապա գաղտնի կերպով բերդը մտավ ներքինի Հայր մարդպետը և տիկնոջը սաստիկ նախատեց ինչպես մի բողի Սկսեց նախատինքներ թափել Արշակունյաց տոհմի վրա, թե վատախորհուրդ, վատանշան են, Հայոց աշխարհն էլ կորցրին. «տեղն է՝ ինչ որ ձեզ պատահեց, և ինչ որ էլի պիտի պատահի»: Գաղտնի դուրս եկավ ու փախավ: Իսկ տիկին Փառանձեմը տեսնելով, որ մեռնակ մնաց, բերդի դուռը բացեց և Պարսից զորքը թողեց բերդից ներս: Եկան

տիկնոջը բռնեցին և բերդից իջեցրին: Հետո Պարսից զորավարները<sup>135</sup> բերդը բարձրացան, ավար առան Հայոց թագավորի գանձերը, որ բերդում պահվում էին. բոլոր վար իջեցրին: Ինք օր, ինը գիշեր շարունակ իջեցնում էին ինչ որ դասն Արտազերս բերդում, և տիկնոջ հետ միասին գերի բռնեցին:

Այնուհետև եկան Արտաշատ մեծ քաղաքը, գրավեցին, նրա պարիսպները կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան և ամբողջ քաղաքը գերի վարեցին: Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեա, որոնց Արշակունի Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինից և բառասուն հազար տուն հայ: (Այսբան մարդ) Արտաշատ քաղաքից տարան: Քաղաքի շինություններից փայտաշենները կրակ տվին այրեցին, քարաշենները քանդեցին, նույնպես և պարիսպը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողին, քաղաքը բնակիչներից թափուր, անամարդի, ավերակ դարձրին:

Երբ քաղաքի բոլոր գերիները մի տեղ հավաքեցին, անցկացրին Տափեր կամուրջով. գերիներին հաշվեցին և տապարավոր զորքերով շրջապատեցին, ապա Պարսից զորագլուխներն առաջին Արտաշատ քաղաքի Զվիթ քահանային՝ Թերիսների միջից դուրս եկ ու գնա ուր ուզում ես: Զվիթը այս բանը հանձն շտապ ու ասաց. «Ուր որ այդ հոտը տանում եք, հովվին էլ նրա հետ տարեք. չի կարելի, որ հովիվը իր հոտը թողնի, այլ պետք է իր կյանքը զոհի իր ոչխարների համար»<sup>136</sup>: Այս տեսչով նա մտավ գերիների մեջ և գերի գնաց Պարսից աշխարհը իր ժողովրդի հետ:

Գրավեցին Վազարշապատ քաղաքն էլ. քանդում, բրտում հիմքից կործանում էին. այս քաղաքից էլ գերի տարան տասնինը հազար տուն: Ամբողջ քաղաքում շենք չթողին, բոլորը քարուքանդ արին, կործանեցին: Ասպատակներ ու դարկելով՝ բոլոր շափահաս մարդկանց կոտորում էին, կանանց, երեխաներին գերի էին վերցնում: Հայոց թագավորության բոլոր բերդերն առան, մեծ քանակությամբ պաշարեղեն հավաքեցին նրանց՝ մեջ և բերդապահներ թողին:

Առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ. այնտեղից դուրս բերին քսան հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ քաղաքը հիմնահատակ կործանեցին: Հետո առան թագրևանդի Զարեհավան քաղաքը. այնտեղից էլ գերի վերցրին հինգ հազար տուն հայ և ութ հազար տուն հրեա և քաղաքը հիմնիվեր կործանեցին: Առան նաև Զարեշատ մեծ քաղաքը Աղիհովիտ գավառում, (գերի վերցրին) տասնչորս հազար տուն հրեա և տասը հազար տուն հայ և այն էլ հիմնահատակ կործանեցին: Առան նաև Վան ամուր քաղաքը Տոզը<sup>137</sup> գավառում, կրակ տվին այրեցին, հիմքերը քանդեցին. այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ և տասնութ հազար տուն հրեա:

Հրեաների այս ամբողջ բազմությունը, որ Հայոց աշխարհից գերի տարան, Հայոց Տիգրան մեծ թագավորը բերել էր Պաղեստինից հին ժամանակ, երբ նա գերեց և Հայաստան բերեց հրեաների Հյուրիանոս քահանայապետին: Տիգրան մեծ թագավորը այս բոլոր հրեությունը իր զարում բերեց բնակեցրեց Հայաստանի քաղաքներում: Իսկ այս ժամանակ (պարսիկները) ավերեցին այդ քաղաքները, ներքանց բնակիչներին գերեցին, նրանց հետ միասին Հայոց ամբողջ աշխարհն ու գավառները: Դուրս բերին գերիներ գանազան գավառներից, կողմերից, ձորագավառներից, աշխարհներից, հավաքեցին բերին Նախճավան քաղաքը, որ իրենց զորքերի բանակատեղն էր: Այս քաղաքն էլ առան, քանդեցին, այնտեղից էլ հանեցին երկու հազար տուն հայ և տասնվեց հազար տուն հրեա ու մյուս գերիների հետ տարան: Հայոց աշխարհում թողին ուստիկաններ<sup>138</sup> ու վերակացուններ՝ երկրի մնացորդ ժողովուրդը հպատակեցնելու, իսկ իրենք տիկին Փառանձեմին առնելով գանձերով ու բազմաթիվ գերիներով տարան Պարսից աշխարհը. եկան, բերին հասցրին Պարսից աշխարհը. նապաս թագավորի մտա

Երբ Փառանձեմ տիկնոջը բերին հասցրին Պարսից աշխարհը և Հայաստանի բոլոր գերությունն ու գանձերը և Փառանձեմ տիկնոջը թագավորի առաջը հանեցին, Պարսից թագավորը մեծ շնորհակալություն հայտնեց իր զորավար-

ներին: Պարսից Շապուհ թագավորը կամեցավ նախատինք հասցնել (Արշակունյաց) տոհմին, Հայոց աշխարհին և թագավորութանը: Հրամայեց կանչել իր բոլոր զորքերին, իր մեծամեծներին, ստորին պաշտոնյաներին և իր տիրած աշխարհի բոլոր մարդկանց, և այս բազմութիւն մեջ բերել Հայաստանի տիկնոջը՝ Փառանձեմին: Եվ հրամայեց հրապարակում շինել ինչ-որ սարք, որի վրա գցել տվեց տիկնոջը և արձակել նրա վրա՝ անասնական պիղծ խառնակութեան համար<sup>139</sup>, Այս կերպ սպանեցին տիկին Փառանձեմին: Իսկ գերիներէ՝ ամբողջ բազմութիւնը տարան բնակեցրին մի մասը Ասորեստանում, մյուս մասը՝ Խուժաստան երկրում:

### Գ Լ Ո Ւ Խ Մ Ձ

#### ԶՎԻԹ ԲԱՀԱՆԱՅԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԱՇԱՊԱՐՏԻ:

Երբ Հայաստանի բոլոր գերիներին տարան հասցրին Պարսից աշխարհը, Արտաշատ քաղաքի Զվիթ քահանային էլ Պարսից Շապուհ թագավորի առջև բերին: Պարսից Շապուհ թագավորը նայում տեսնում է Զվիթ քահանային, որ բարձրահասակ, բարեկազմ մարդ էր, հասակով երիտասարդ, բայց գլխի մազերն արդեն այլերկուց էին, իսկ մորուքը դեռ սև էր: Ապա առաջին անգամ խոսելիս ասաց. «Տեսնո՞ւմ եք այդ մարդու շարութիւնը. հենց մազերից երևում է, որ դա կախարդ է, որովհետև մազերն սպիտակ են, մորուքը՝ սև»: Իսկ քահանան պատասխան տվեց ու ասաց. «Եթե խոսել ես ուզում, խոսիր ինչ որ կամենում ես, բայց մազերիս մասին իմացիր, որ դրանք իրավացի են սպիտակել, որովհետև շատ ավելի մեծ են տարիքով, զոնե տասնհինգ տարի վաղ են բուսել, քան մորուքս»: Թագավորը հրամայում է պահել նրան մինչև հաջորդ առավոտը: Մյուս օրը հրամայեց շղթաներով նրան հրապարակը բերել: Եկան արքունական ոստիկաններն ու հարցրին, թե հանձն կառնի՞ մոգութեան կրօնը պաշտել, այն դեպքում չի մեռնի: Նա չհամաձայնվեց, այլ ուրախութեամբ կամեցավ մեռնել աստծու համար: Իր մահվան վերակացուններից խնդրեց թույլ տալ, որ մի քիչ ազոթի: Եվ առաջ անցնելով ծունկ շոքեց և ասաց.

### Գ Լ Ո Ւ Խ Մ Է

#### ԶՎԻԹԻ ԱՂՈՔԸ ՄԱՀՎԱՆ ԺԱՄԻՆ

Ո՞վ մեր արարիչ, որ ոչնչից ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ծովը, որ մեզ հողից ստեղծեցիր, և հողեղեններն այսպես իմաստուն, բանական և կենդանի հորինեցիր: Դու մեզ շնորհեցիր քո գիտութիւնը, որ մարդկային ազգերին հայտնեցիր սուրբ մարգարեներին՝ քո կարապետների ձեռքով. հետո ինքդ եկար (երկնքից) իջար, մարդ դարձար, երկրի վրա երևացիր և մարդկանց հետ շրջեցիր, և քո կատարյալ իմաստութիւնը շնորհեցիր քո արարածներին, որ քո առաքյալների ձեռով քարոզեցիր աշխարհում քեզ հետեւողներին, և սուրբ վարդապետների միջոցով, որոնց իբրև լուսատուներ հաստատեցիր քո եկեղեցում, բոլորին իմաստնացրիր: Ինձ էլ՝ անարժանիս, արժանավոր դարձրիր քեզ սպասավորելու, տառապալիս միջոց տվիր սնվելու և ուսանելու քո սպասավորի՝ քո սուրբ և մեծ ներսես քահանայապետի ձեռքի տակ ու նրա ձեռքով քահանա ձեռնադրվելու և նրանից նվիրվելու քո քահանայութեան, և այս աստիճանում ինձ պատրաստեցիր՝ փրկութեան բաժակը խմել նահատակութեամբ, որը ես կխմեմ՝ աստծու անունը կանչելով և իմ աղոթքը կուղղեմ տիրոջը նրա ամբողջ ժողովրդի առաջ: Քեզ փառք և զորութիւն և իշխանութիւն և քո սիրելի որդի Հիսուս Քրիստոսին և քո կենդանարար մշտնջենական սուրբ հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Երբ այս բոլորն ասաց, հավաքված բազմամարդ ամբոխը կրկնեց. «ամեն»: Ապա սպանութեան վերակացունները զայրացան, թե ինչո՞ւ թողին նրան այնքան երկար խոսելու, ուստի շտապեցնելով մահվան տեղը հասցրին: Իսկ նա մեծ ուրախութեամբ պարանոցը մեկնելով՝ սրի հարվածով վախճանվեց:

ՊԱՐՄԻՅ ՇԱՊՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԱԼԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՄՆԱՑԱՍ  
ՄԱՐԻԿԱՆՑ ԿՈՏՈՐՆԸ ՈՒ ՆՐԱՆՑ ԿՐԱՍ ԲՅՈՒՐԱՎՈՐ ՉԱՐԻՔՆԵՐԸ:

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը իր իշխանու-  
թյան բոլոր զորքերով վեր կացավ եկավ հասավ Հայոց աշ-  
խարհը: Նա իրեն առաջնորդ ուներ Վահանին՝ Մամիկոնյան  
տոհմից, և Մերուժանին՝ Արծրունյաց տոհմից: Գալիս հաս-  
նում, ասպատակում են Հայոց երկիրը, բոլորին գերի են  
վերցնում ու մի տեղ հավաքում: Եվ Հայոց նախարարներից  
շատերը թողնում են իրենց ընտանիքները, կին, որդի, փախ-  
չում, ցրվում են այս ու այն կողմը: Եվ ասպատակողները  
հավաքում են փախած հայ նախարարների բոլոր կանանց  
ու բերում Պարսից Շապուհ թագավորի մոտ:

Պարսից Շապուհ թագավորի բանակը գտնվում էր Բագ-  
բևանդ գավառում, Զարեհավան քաղաքի ավերակներում,  
որը ավերել էին նախօրոք եկած զորքերը: Այստեղ բերին  
հավաքեցին Պարսից թագավորի առաջ Հայոց աշխարհի մը-  
նացորդների ամբողջ գերությունը: Ապա հրաման տվեց  
Պարսից Շապուհ թագավորը՝ բոլոր շափահաս տղամարդ-  
կանց փղերին ոտնակոխ անել տալ, իսկ բոլոր կանանց ու  
երեխաներին սայլերի ցցերի վրա հանել: Հազարներով ու  
բյուրերով սպանեցին: Թիվ ու հաշիվ չկար սպանվածնե-  
րին: Իսկ փախած նախարարների և ազատների կանանց  
հրամայեց բերել Զարեհավան քաղաքի ձիարշավի հրապա-  
րակը: Եվ հրամայեց այն ազնվական կանանց մերկացնել  
ու հրապարակի երկու կողմերում նստեցնել, իսկ ինքը՝ Շա-  
պուհը, ձի հեծած, արշավելով անցնում էր կանանց միջով,  
և որոնք որ աչքին դուր էին գալիս, մեկ-մեկ տանում էր իր  
մոտ պիղծ խառնակության. որովհետև նրա վրանը խփված  
էր հրապարակի մոտ, այնտեղ էր մտնում անօրեն գործ կա-  
տարելու: Այսպես վարվում էր այդ կանանց հետ շատ օրեր:  
Եվ Սյունյաց տոհմի բոլոր շափահաս տղամարդկանց կո-  
տորեցին, կանանց սպանեցին և բոլոր մանր տղաներին  
հրամայեց ներքինացնել ու Պարսից աշխարհը տանել: Այժ

բոլորը նա անում էր վրեժ առնելու համար Անգոկից, երբ  
պատերազմ եղավ Պարսից Ներսես թագավորի հետ<sup>140</sup>:

Եվ Շապուհ թագավորը հրաման տվեց՝ Հայաստանի ա-  
մուր-ամուր տեղերում բերդեր շինել և բերդակալներ նշա-  
նակելով՝ ազնվական կանանց մաս-մաս տեղավորում էր  
այդ բերդերում պահելու, հրամայելով, որ եթե նրանց ամու-  
սինները չգան իրեն ծառայության, ապա բերդակալները  
սպանեն այն կանանց, որ նա թողել էր նրանց մոտ: Եվ Հա-  
յոց աշխարհում նրանց վրա իշխան թողեց Զիկին ու Կարե-  
նին թագմաթիվ զորքով. մնացորդների վրա իշխանությունը  
հանձնեց Վահանին ու Մերուժանին, և ինքը գնաց Ատրա-  
պատական:

ՎԱՀԱՆԻ ԵՎ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԵՐԿ ԶԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ  
ՄՆԱՑԻՆ, ՈՐՔԱՆ ՇԱՑ ՉԱՐԻՔՆԵՐ ԳՈՐԾԵՑԻՆ ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՒՄ,  
ԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՀԱՆՆ ՈՒ ԻՐ ԿԻՆԸ ՍՊԱՆՎԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՈՐԳՈՒ  
ՉԵՌՔՈՎ:

Այնուհետև Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրու-  
նին,— այս երկու պիղծ, անօրեն, դժնյա մարդիկ, որոնք ետ  
էին կացել աստվածապաշտության ուխտից և ուրացությամբ  
հանձն էին առել ու պաշտում էին Մազդեզական անասու-  
ված կրոնը<sup>141</sup>, սկսեցին Հայոց աշխարհում, բոլոր գավառ-  
ներում, ամեն տեղ ավերել եկեղեցիները, քրիստոնյաների  
աղոթքի տեղերը: Եվ շատ մարդկանց, որոնք նրանց ձեռքն  
էին ընկնում, ստիպում էին աստվածապաշտությունը թող-  
նել, Մազդեզական պաշտամունքն ընդունել: Սրանից հետո  
Վահանն ու Մերուժանը հրամայում էին բերդերին, որ այն  
կանանց, որոնց ամուսին-նախարարները թողել ու փախել  
էին, ստիպել, որ դառնան Մազդեզական կրոնին, իսկ եթե  
չհամաձայնվեն, բոլորին շարաշար մահով սպանել: Բերդա-  
պահներն այս հրամանն ստանալով՝ ամեն մեկը իր մոտ եղա-  
ծին նեղում, ստիպում էր, ինչպես հրամայված էր: Եվ երբ  
նրանցից ոչ մեկը հանձն չառավ քրիստոնեությունը ուրանալ,

բուրին շարաշար մահով սպանեցին բուր բերդերում, որտեղ նրանց բանտարկել էին:

Վահանը մի ազգականուհի<sup>142</sup> ուներ Մամիկոնյան տոհմից, Վարդանի քույրը, Համազասպուհի անունով, որ Ռըշտունյաց գավառի տիրոջ՝ Գարեգինի կինն էր: Նրա ամուսինը՝ Գարեգինը, նրան թողել փախել էր այն ժամանակ, երբ Պարսից Շապուհ թագավորը եկել էր Հայոց աշխարհը, իսկ Ռշտունյաց տիկինը պահվում էր Վան քաղաքի միջնաբերդում, Տոսք գավառում: Իսկ անօրեն Վահանն ու Մերուժանը բերդապահին հրամայում են, որ տիկնոջը նեղի, իսկ եթե նա հանձն չառնի Մազդեզական կրոնը, այդ դեպքում բարձր աշտարակից կախի և սպանի: Երբ Համազասպուհին հանձն չառավ Մազդեզական կրոնը, նրան հանեցին բարձր աշտարակը, որ գտնվում էր ժայռի բարձր գագաթին, դեպի ծովակի կողմը դարձած ետևի կողմից. նրան մերկացրին, ինչպես մորից մերկ և ոտքերին կապ գցելով՝ գլխիվայր կախեցին նրան այն բարձր կողմից, և այսպես մեռավ կախաղանի վրա: Նրա մարմինը սպիտակ էր, պայծառ տեսքով, կախված մնում էր իբրև հրաշալի տեսարան: Նրա մարմինը բարձրում փայլում էր ձյունի սպիտակությամբ, և շատ մարդիկ օրեցօր գալիս էին նրան նայելու՝ իբրև մի սքանչելի երևույթի: Համազասպուհու այս տեսարանը նկատելով՝ մի կին՝ նրա դայակը, մի կարճ պարեգոտ հագավ, որին ասում են անակյուղոս<sup>143</sup>, մեջքը գոտի կապեց, և մնում սպասում էր բարձր աշտարակի ներքև, ժայռի բարձր գագաթի տակ, որտեղից կախված էր իր սանը, մինչև որ քայքայվեց նրա ամբողջ մարմինը: Եվ որքան որ ներքև էին թափվում նրա ոսկորները, նա հավաքում էր, իր ծոցը դնում և այսպես իր սանիկի բուր ոսկորները հավաքեց, տարավ նրա ազգականների մոտ:

Եվ այնչափ շար էին այն երկու մարդիկ, որ մինչև անգամ իրենց մերձավորներին չէին խնայում, այլ անողորմաբար շարշարում էին թե՛ օտարներին և թե՛ իրենց հարազատներին: Շատ տեղերում ատրուշաններ էին շինում, մարդկանց բռնի հնազանդեցնում էին Մազդեզական կրոնին, իրենց սեփական կալվածքներում էլ շինում էին շատ

ատրուշաններ և իրենց ազգականներին տալիս էին Մազդեզական կրոն սովորելու: Ապա Վահանի մի որդին՝ Սամուել անունով, զարկեց սպանեց իր հայր Վահանին և իր մայր Որմզդուխտին՝ Պարսից Շապուհ թագավորի քույրը, և ինքը փախավ գնաց Խաղտյաց երկիրը:

ԲՈՒՉԱՆԴԻ  
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Ց Ա Ն Կ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Դ Պ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Ինչ որ ասելու եմ, պատմական մատյանների գլուխներ:

Ա. Պապի թագավորելը, որ գտնվում էր Հունաց երկրում, Հայաստան գալը, երկրին տիրելը և կամ թե ինչի որ ձեռնարկում էր, հաջողվում էր նրան:

Բ. Հայոց Մուշեղ զորավարի մասին, թե ինչպե՛ս հարձակվեց Պարսից Շապուհ թագավորի բանակի վրա և սոսկալի շարժ տվեց նրանց, այնպես որ Շապուհը մի ձիով ճողոպրեց:

Գ. Հայր մարդպետի մասին. թե ինչպե՛ս Պապը հրամայեց սպանել:

Դ. Երկրորդ պատերազմի մասին, որ տեղի ունեցավ Թագրավանդ զավառի Բագրավան ավանում Հայոց Պապ թագավորի և Պարսից զորքերի միջև:

Ե. Մյուս պատերազմի մասին հայերի և պարսիկների միջև Ատրպատականի Գանձակ քաղաքում. նաև Ուռնայի գուշակության մասին, որ այդ պատերազմում էլ հայերը կհաղթեն:

Զ. Դղակ մարդպետի մասին, որին սահմանապահ նշանակեցին, թե ինչպե՛ս նա խորհրդակից եղավ Պարսից թագավորին, և թե ինչպե՛ս խոստացավ մատնել Հայոց արքային, և Պապ արքայի կողմից Դղակի սպանվելու մասին:

Է. Հայոց Արշակ թագավորի մահվան մասին, թե ինչպե՛ս մեռավ Խուժաստան երկրում, Անհուշ բերդում, ինքն իր ձեռքով, և Դրաստամատը եղավ նրա մահվան պատճառը:

Ը. Թե ինչպե՛ս գաղարեց պատերազմը պարսիկների կողմից, որից հետո Մուշեղ սպարապետը սկսեց կռվել նրանց հետ, որոնք ապստամբվել էին Հայոց թագավորի դեմ, և մեծամեծ պատերազմներով շատ ազդեց

իվանեց: Նախ և առաջ Հայոց թագավորի՝ Ատրպատականում եղած կողմերի մասին:

Թ. Նոշիրականի մասին:

Ժ. Կորդուքի, Կորդիթի և Տմորիթի մասին:

ժԱ. Մարբրի մասին:

ժԲ. Արցախի մասին:

ժԳ. Աղվանքի մասին:

ժԴ. Կասպից մասին:

ժԵ. Վրաց մասին:

ժԶ. Աղձնիք զավառի մասին:

ժԷ. Մեծ Մոփքի մասին:

ժԸ. Անգեղտան մասին:

ժԹ. Անձիտ զավառի մասին:

Ի. Հայոց Մուշեղ սպարապետի մասին:

ԻԱ. Հայոց Ներսես եպիսկոպոսապետի մասին, թե ինչպիսի՛ մարդ էր և որբա՛ն շատ հրաշքներ գործեց:

ԻԲ. Պապ թագավորի մասին, թե ինչպե՛ս դևերից բռնված ու անօրեն մարդ էր:

ԻԳ. Սուրբ Ներսեսի հանգիմանություն մասին, որը միշտ թշնամի էր Պապ թագավորին՝ մեղքերի պատճառով:

ԻԴ. Պապ թագավորի կողմից մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի սպանվելու մասին, և թե դա ինչպե՛ս կատարվեց նրա կողմից:

ԻԵ. Տեսիլքի մասին, որ երևաց սուրբ աշրեր Շաղիտային և Եպիփանին, մինչ նստած էին լեռան վրա:

ԻԶ. Սուրբ Շաղիտայի մասին:

ԻԷ. Սուրբ Եպիփանի մասին:

ԻԸ. Մեծամեծ հրաշքների մասին, որոնք Մամբրեում երևացին աստուծոց՝ Եպիփանի այնտեղից մեկնելուց հետո:

ԻԹ. Հուսիկի մասին, որ Ազրիանոս եպիսկոպոսի սոճմից էր, և որին Պապ թագավորը Ներսեսի փոխարեն նշանակեց իր կամքով, առանց Կեսարիայի մեծ եպիսկոպոսապետին, և այս պատճառով այնուհետև Հայոց կաթողիկոսների՝ եպիսկոպոս ձեռնադրելու իշխանությունը դադարեց:

Լ. Թե ինչպե՛ս սգում էին Ներսես հայրապետին և նրա կարոտը քաշում:

ԼԱ. Թե ինչպե՛ս Ներսես հայրապետի մեռնելուց հետո Պապ թագավորը, նախանձից շարժված, տապալեց այն բոլոր կարգ ու կանոնը, որ սահմանել էր Ներսեսը իր կենդանության ժամանակ:

ԼԲ. Պապ թագավորի մասին, թե ինչպե՛ս երես դարձրեց Հունաց թագավորից և սպանվեց Հունաց զորագլուխներից:

ԼԳ. Թե ինչպե՛ս խորհուրդ արին Հայոց իշխանները և ինչպե՛ս լուսկացին մնացին:

ԼԴ. Պապից հետո Վարազդատի թագավորելը Հայոց աշխարհի վրա:

ԼԵ. Թե ինչպե՛ս Վարազդատ թագավորը շարժիտ և անձիտ մարդկանց խոսքերին լսելով սպանում է Հայոց զորավար Մուշեղին:

**ՐՈՒՋԱՆԳԱՐԱՆ ԳՍՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԻՆԿԵՐՈՒԿ ԳՊՐՈՒԹՅՈՒՆ  
ԹՈՒԿՈՄԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՏԱՆ՝ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ<sup>144</sup>  
ԳԱՏՄԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԳԼՈՒԽՆԵՐ**

**Գ լ ու խ Ա**

**ԳԱԳԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ.** ՈՐ ԳՏՆՎՈՒՄ ԷՐ ՀՈՒՆԱՑ ԵՐԿՐՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԸ, ԻՐ ՀԱՅՐ ԱՐՇԱԿԻ ԵՐԿՐՈՆ ՏԻՐԵԼԸ, ԵՎ ԿԱՄ ԹԵ ԻՆՁԻ ՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԷՐ, ՆՐԱՆ ՀԱՋՈՂՎՈՒՄ ԷՐ՝:

**Ա**յս բոլորից հետո Մուշեղը՝ Վասակի որդին, համարքեց լքողը մարդկանց ազնվական գնդերից, որքան որ մնացել էին, և նրանց հետ միասին գնաց Հունաց թագավորի մոտ, Հայոց աշխարհի աղաչական խնդիրը ներկայացրեց, պատմեց բոլոր տառապանքները, որ անցել էին նրանց գրւխով, և կայսրից խնդրեց՝ Պապին՝ Արշակի որդուն, թագավոր դնել Հայոց աշխարհի վրա: Հունաց մեծ թագավորը Պապին՝ Արշակի որդուն, թագավորեցրեց Հայոց աշխարհի վրա, ինչպես նա նրանից խնդրեց, և մեծ օգնություն ցույց տվեց Հունաց թագավորը, Պապ թագավորի հետ Հայոց աշխարհն ուղարկելով Տերենտ անունով ստրատեյատին և Աղե կոմսին վեց հարյուր բյուր զորքով:

Եկան հասան Հայոց աշխարհը. Մուշեղը դառնում է Հայոց զորավար-սպարապետ իր հոր՝ Վասակի փոխանակ: Եվ Հայոց աշխարհի բոլոր այն մարդիկ, որոնք ցրվել, փախել, թաք էին կացել, գալիս, մի տեղ էին հավաքվում: Եվ թագավորն ու

\* Ուղղում և թարգմանում ենք ըստ Երևանի մատենադարանի № 3079 ձեռագրի:—Խմբ.:

ԼԶ. Մուշեղի ցնտանիքի և այլ մարդկանց՝ անմիտ-կարծիքի-մասին-  
ԼԷ. Մանուկի դարձը պարսկական, գերովկունից, Մուշեղի վրեժը պահանջելը և Վարազդատ թագավորին Հայաստանից հեռացնելը:

ԼԸ. Թե ինչպե՛ս Հայոց Մանուկ սպարապետը ամբողջ երկրի հետ ձեռք մեկնեց Պարսից թագավորին, և սկզբում Հայոց աշխարհի մարդպան և կառավարիչ բերեց Պարսից թագավորի կողմից Սուրենին ու մեծ պարգևներ ստացավ Շապուհից, և թե ինչպե՛ս Մերուժան Արծրունու խորամանկությամբ ապստամբություն ծագեց, և պատերազմներ առաջ եկան:

ԼԹ. Գումանդ Շապուհի մասին, որ Պարսից թագավորի կողմից ուղարկվեց՝ հայերի հետ պատերազմելու, և իր զորքերով հանդերձ սպանվեց Մանուկից:

Խ. Վարազի մասին, թե ինչպե՛ս ուղարկվեց Պարսից թագավորից և Մանուկից սպանվեց առաջինի նման:

ԽԱ. Մուկանի մասին, որին Պարսից թագավորը դարձյալ ուղարկեց մեծ զորքով Հայոց աշխարհի և Մանուկի վրա ու Մանուկից սպանվեց առաջինների նման:

ԽԲ. Հայաստանի յոթ տարի տևող խաղաղության մասին:

ԽԳ. Մերուժան Արծրունու մասին, որ Պարսից զորքով եկավ Մանուկի վրա և նրանից սպանվեց:

ԽԴ. Թե ինչպե՛ս Մանուկ մեծ սպարապետը թագավորեցրեց մանուկ Արշակին, հետո ինքն էլ մեռավ:



աշխարհի բոլոր մարդիկ, մեծ ու փոքր գաղափարների տերերը  
փնտրում էին ներսես մեծ հայրապետին: Նրանք հավաքվելով  
փնտրում էին ներսես մեծ կաթողիկոսին, որովհետև գիտեին,  
որ նա կարող է աղոթք անել և աստծուց խնդրել Հայոց ամբողջ  
աշխարհին շենություն ու փրկություն թշնամիներից, որովհետև  
ինչ որ նա աստծուց խնդրեր, աստված նրան տալիս էր. բացի  
սրանից, նա իր իմաստությամբ կարող էր իրենց օգտակար  
խրատներ տալ: Ուստի կարևոր էին համարում փնտրել գտնել  
այն մարդուն, որ կարող էր նրանց օգտակար, իմաստուն  
խրատներ շնորհել և ըստ ժամանակի հանգամանքների օգ-  
տակար խորհուրդներ տալ, որոնցով կարողանային իրենց  
առջև եղած ճանապարհով ընթանալ:

Ապա ինքը՝ Պապ թագավորը, գնում փնտրում գտնում է  
Ներսես եպիսկոպոսապետին Հայոց ավագանու հետ, աղաչում  
է նրան, որ հայր լինի բոլոր հայերին, օգտակար խրատներով  
առաջնորդի և իրենց համար աստծուն խնդրվածք անի: Մեծ  
ջանքերով հաղիվհազ նրան համոզեցին, որ նրանց հետ ար-  
քունական բանակը գնա, որովհետև դեռ Գնեիկ մահվան ժա-  
մանակից մինչև Պապի թագավորության այդ ժամանակը նա  
արքունական բանակը չէր գնացել: Իսկ այդ ժամանակ մեծ  
աղաչանքներով նրան իրենց հետ տարան արքունական բա-  
նակը: Եվ նա նրանց վերակացու և խրատատու եղավ, կար-  
գադրող ու առաջնորդ, և նրանց համար միշտ աստծուն խն-  
դրվածք էր անում. առաջնորդում էր իմաստությամբ, միշտ  
մասնակից էր նրանց հոգսերին, վշտերն ամոքում էր աղոթք-  
ներով և ամենքի համար ամեն բանով իբրև հայր էր երևում:

Այնուհետև Մուշեղ սպարապետը կարգի է բերում, կազ-  
մակերպում է Հայոց զորքերի բոլոր գնդերը և զորահանդես է  
կատարում բոլոր զորքերին, որ նրա ձեռքի տակ հավաքվեցին,  
թվով տասը հազար: Եվ կազմակերպված՝ պատերազմի հա-  
մար սպառազինված գնդերի զորահանդեսը՝ ծածանվող դրո-  
շակներով, բացած նշաններով, բերում հանդիսավոր կեր-  
պով ցույց է տալիս իրենց Պապ թագավորին, ներսես մեծ  
բահանայապետին և Տերենտ ու Ադե Հունաց զորագլուխներին:  
Եվ Հայոց Պապ թագավորը մեծ շնորհակալություն է հայտ-  
նում Մուշեղ զորավարին ու մեծամեծ պարզենք շնորհում:

Նույնպես նրանից շնորհակալ են լինում Հոռոմոց զորա-  
գլուխները: Ներսես եպիսկոպոսապետն ևս օրհնում է Մուշեղ  
զորավարին և ասում է. «Տեր Քրիստոսը քեզ օրհնի, քեզ  
հաջողություն տա, քեզ հաղթություն շնորհի քո ամբողջ կյան-  
քում, քո ձեռքով, քո տոհմի ձեռքով նա փրկի Հայոց աշխար-  
հը մինչև հավիտյան»:

Ապա Հայոց Մուշեղ զորավարը գունդը կազմակերպեց,  
պատրաստեց և այս Հայոց գնդով իբրև առաջապահ գնաց  
Պապ թագավորից ու Հունաց կայսերական գնդից առաջ: Ապա  
Դարանաղյաց գավառում Մուշեղը հարձակում<sup>145</sup> է գործում  
երբ իբրև առաջապահ գալիս հասնում է Հայաստանի միջնաշ-  
խարհը. այստեղ Մուշեղն սպանում է Պարսից Ջիկ և Կարեն  
զորագլուխներին, բոլոր զորքերը սրի բերան է տալիս, կեն-  
դանի չի թողնում ոչ ոքի, և մինչև բուն սահմանը՝ Ատրպա-  
տականի Գանձակ քաղաքը, ամբողջ երկիրը գրավելով պա-  
հում է:

Եվ Հայոց Պապ թագավորը եկավ մտավ Հայոց աշխարհը  
ու թագավորեց նրա վրա. նա առավ բոլոր այն ամուր բեր-  
դերը, որ գրավել էին պարսիկները, տիրադավ և Դարսնք բեր-  
դին Կոզի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների  
գանձերը շատ մեծ բանակով: Պապ թագավորը համարում էր  
հավատարիմ մարդիկ էին: Բանի որ թեպետ այն ժամա-  
նակից ի վեր, երբ Հայոց Արշակ թագավորին Պարսկաստան  
տարան, շարունակ պարսիկները կովեցին այդ բերդի դեմ,  
սակայն չկարողացան առնել, մինչև որ Պապ թագավորը եկավ  
Հայոց աշխարհը, և գանձն ամբողջապես հասավ Պապ թագա-  
վորին: Իսկ Հունաց զորքերը (տեղավորվում էին) Նուանդում և  
Բախիշում և բաշխում էին Հայոց աշխարհի բոլոր գավառնե-  
րում<sup>146</sup>. բայց միայն շարագործ Մերուծանը փախչում է մի  
ծրով:

Եվ Հայոց Մուշեղ զորավարը շքջում է երկրում. ավերում  
է Մազզեզական ատրուշանները, և մազզեզականներին, որոնց  
որ բռնում էին, Մուշեղ սպարապետը հրամայում է բերել  
կրակով խորովել: Եվ բերդերի շատ բերդապահների շարաշար  
մահով սպանում էին, և շատ պատվավոր ազնվականներին, ո-  
րոնք Պարսից թագավորից պատիվ էին վայելում, ձեռքակա-

լում էր Մուշեղը, մորթերը հանել էր տալիս, խոտով լցնել և պարիսպների վրա կանգնեցնել էր տալիս: Շատ տեղերում այսպես էր նա անում՝ իր հոր՝ Վասակի վրեժն առնելու համար:

Շինում էին թշնամիներից ավերված բոլոր տեղերը, եկեղեցիները նորոգում, և թագավորությունը հետզհետե նորոգվում էր, և գործերը կամաց-կամաց կարգի էին ընկնում, հաջողվում էին: Իսկ սուրբ Ներսեսը՝ իմաստուն հայրապետը, առաջնորդում, լուսավորում էր, խրատում ու կարգավորում, շինում էր աղքատների համար ապաստարան, ինչպես ի բնասովոր էր. կարգավորում էր և թագավորության վիճակը ամենաբարի կարգերով, ինչպես տեսել էր հին թագավորների ժամանակ: Մանավանդ նա բարեկարգեց եկեղեցական պաշտամունքի, եպիսկոպոսների, քահանաների ու սարկավազների կարգը. եկեղեցիների և վկայանոցների շենքերը ամբողջապես նորոգեց ու բարեկարգեց:

Հայոց Մուշեղ զորավարը իր թագավորի՝ Պապի հրամանով կազմում է իր գունդը, գնում է երկրի սահմանագլուխը և այնտեղ մնում է՝ զգուշութամբ սահմանները պահելու, երկիրը պահպանելու համար:

## Գ լ ու խ Բ

ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶԱՐԶԱԿՎԵՑ ՊԱՐՍԻՑ ԵՎ ՊԱՊԱՎՈՐԻ ՎՐԱ ԵՎ ՅՈՍԿԱԼԻ ԶԱՐԿԱՍՆԵՐՈՎ ԶԱՐԳ ՏՎԵՑ ԵՎ ՆՐԱՆ, ԱՅՆՊԵՍ ՈՐ ԵՎ ՊԱՊԱՎՈՐԻ ՄԻ ԶԻՈՎ ԶՈՂՊՈՐԵՑ:

Ապա Վասակի որդի Մուշեղը՝ Մեծ Հայքի սպարապետը, ընտրեց բառասուն հազար ընտիր և հավատարիմ մարդիկ ազնվականներից ու ազգականներից, միաբան և միակամ, պատրաստեց նրանց համար ձի, զենք, ուտեստ, և իր հետ առնելով գնաց Ատրպատականի սահմանում նստեց՝ Հայոց աշխարհը պահպանելու համար: Նույն ժամանակ Պարսից Շապուհ թագավորն էլ իր զորքով ամենայն պատրաստությամբ եկավ Ատրպատական աշխարհը. և նրա բանակի մի

գնդի առաջնորդն էր Մերուժանը, իսկ թագավորի բուն գունդը մնաց թավրեղում:

Եվ Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր բառասուն հազարով գալիս հարձակվում է (Շապուհի) բանակի վրա ու կոտորում է բոլորին: Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողպարում է, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի է անցկացնում Մուշեղը Հայոց զորքով: Շատերին կոտորեցին, Պարսից ավագներից շատերին ձեռքակալեցին, ավար առան Պարսից թագավորի գանձերը, բռնեցին նաև տիկնանց տիկնոջը՝ մյուս կանանց հետ միասին: Մուշեղ սպարապետը ձեռք գցեց նաև ամբողջ մաշկավարզանը\*, իսկ մոտ վեց հարյուր ավագների Հայոց Մուշեղ զորավարը հրամայեց մորթագերծ անել, մորթերը հանել ու խոտով լցնել, և ապա բերել տվեց Հայոց Պապ թագավորի մոտ: Այսպես էր նա անում իր հոր՝ Վասակի վրեժն առնելու համար:

Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չտվեց Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայեց բոլորի համար ժանվարներ պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից: Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ, իսկ Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարություն, քաջության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ: Այդ ժամանակները Մուշեղը մի ճերմակ ձի ուներ. իսկ Պարսից Շապուհ թագավորը երբ գինու (գավաթը) ձեռքն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորքին հյուրասիրում էր, ասում էր. «ճերմակաձին թող գինի խմի»: Եվ մի գավաթի վրա նկարել տվեց Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձին հեծած, և ուրախությունների ժամանակ այդ գավաթը դնում էր իր առաջ ու շարունակ նույն բանն էր կրկնում՝ «ճերմակաձին թող գինի խմի»:

Իսկ Մուշեղը և Հայոց բոլոր զորքերը Պարսից բանակի ավարն առան ու լիացան գանձերով և ստացվածքներով. ավարից մեծ բաժին պահեցին իրենց Պապ թագավորի համար,

\* Պարսից արքայական կանանց վրանը (ճիշտ ձևը պետք է լիներ մաշկապարճէն)։— Խմբ.:

հուլիսի 1-ի, Հոկտեմբերի 2-ին զորքերի համար, որ մնացել էին Պապ թագաւորի մոտ: Ավարից մաս հանեցին նաև Հունաց զորա-վարների համար, որոնք Պապ թագաւորի մոտ էին, այնպես էլ բոլոր զորքերին բաժին<sup>147</sup> էին հանում բերած ավարներից:

Բայց երբ Հայոց զորքերն իրենց երկիրը դարձան, Հայոց զորքերից շատերը Պապ թագաւորի առաջ ամբաստանեցին Մուշեղ սպարապետին, թե ինչո՞ւ նա ազատ արձակեց Պարսից թագաւորի կանանց, որ մեր թշնամին է. և Հայոց Պապ թագաւորը այս բանի պատճառով երկար ժամանակ ոչ թիշ թշնամութեամբ էր վարվում Մուշեղի հետ:

#### Գլուխ Գ

### ՀԱՅՐ ՄԱՐԳԱԿԵՏԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԸ ՀՐԱՄԱՏԵՑ ՆՐԱՆ ՍՊԱՆԵԼ:

Ապա Պապ թագաւորին պատմեցին այն վիրավորանքնե-րի մասին, որ Հայր մարդպետը հասցրել էր Պապ թագաւորի մոտը՝ Փառանձեմ տիկնոջը, այն անարգանքների, որ նա հասցրել էր Փառանձեմին բերդում պաշարված ժամանակ. որովհետև այդ ժամանակ նա բերդը մտավ գաղտնի, ինչպես մի բողի անարգեց տիկնոջը և դուրս եկավ ու փախավ: Այս բոլորը պատմեցին թագաւորին: Արդ՝ երբ Հայր մարդպետը շրջում էր իր իշխանութեան մեջ Տարոն գաւառում, և Մուշեղն էլ նույն գաւառումն էր, եր Ողական կոչված ամրոցում, Եփրատ գետի վրա, Պապ թագաւորից դեսպան եկավ Հայոց Մուշեղ զորավարի մոտ և բերեց նրան մի հրովարտակ: Հրովարտակում հրամայված էր Մուշեղին, որ շարաշար մահով սայանի Հայր մարդպետին: Այս հրամանն ստանալով՝ (Մուշեղը) նենգութեամբ մարդ է ուղարկում Հայր մարդպետի մոտ և հրավիրում է նրան իր մոտ Ողական ամրոցը՝ մեծարանքի համար: Չմեռվա ցուրտ օրեր էին, և Եփրատ գետը սառել էր: Հայր մարդպետը, մեծարանքի հրավիրվելով՝ եկավ մտավ Ողական բերդը: Եվ Մուշեղ զորավարը զորքին հրաման տվեց՝ նրան բռնել, մորեմերկ անել, ձեռքերը ծնկների ներքև կապել, գետն իջեցնել և դնել գետի սառույցի վրա: Այնտեղ էլ սատկեց: Մյուս օրը գնացին տեսան, որ ցրտից գլխի ուղեղը

քից դուրս է թափվել: Նրա փոխարեն Հայր մարդպետի պաշտոնին (նշանակեցին) Իգդակ անունով մեկին, որ մի անգամ արդեն Արշակ թագաւորի կամ նրա հոր՝ Տիրանի մասնակ վարել էր նույն մարդպետութեան պաշտոնը:

#### Գլուխ Դ

### ԵՐԿՐՈՐԴ ԳԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՂԻ ԲԻՆԵՑԱԿ ԲԱԳՐԱՎԱՅԵՐ ԳԱՎԱՌԻ ԲԱԳՅԱՆ ԵՎԱՆՈՒՄ ՀԱՏՏՑ ԳԱԳ ԲԱԳՅԱՎՈՐԻ ԵՎ ԳԱՐՍԻԿԵՐԻ ՄԻՋԵՎ:

Սրանից հետո Պարսից թագաւորը նորից զորահավաք է կատարում և իր ամբողջ ուժով ու զորութեամբ և բոլոր զորքերով շարժվում գալիս հասնում է Ատրպատական աշխարհը: Ինքը թիշ զորքերով մնում է այնտեղ, իսկ զորքերի ամբողջ բազմութունը պատերազմի է ուղարկում Պապ թագաւորի դեմ: Պարսից զորքը գալով ասպատակում է և հասնում մինչև Հայաստանի միջնաշխարհը: Այն ժամանակ Հայոց Պապ թագաւորն էլ հրամայում է զորաժողով անել թագաւանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Ծոանդում ու Բախիշում, եկավ, միասին հավաքվեցին Պապ թագաւորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կտրեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու. կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի:

Ահա Հայոց զորավար Մուշեղ սպարապետը հավաքում է Հայկական ամբողջ զորքը. ավելի քան իննսուն հազար մարդ կազմակերպվեցին, պատրաստվեցին: Իսկ երբ Պարսից Շապուհը իր զորքերը դասավորում է Հայոց աշխարհի և Հունաց զորքերի դեմ, այնտեղ՝ Պարսից թագաւորի մոտ է լինում Աղվանից Ուռնայր թագաւորը: Արդ՝ Ուռնայրը առաջ է գալիս և Պարսից Շապուհ թագաւորից պարզ է խնդրում՝ ասելով. «Այրերի մեջ քաշ, եթե կամենում ես, ինձ իբրև պարզև հրաման տուր, որ Պապ թագաւորի հայկական զորքի դեմ ես ինքս դուրս գամ իբրև առաջապահ կովոդ իմ գնդով, որովհետև Արշաց գնդին պատշաճ է Հունաց զորքերի դեմ դուրս գալ, իսկ ես իմ գնդով Հայոց իշխանների դեմ դուրս կգամ»: Եվ Շապուհ թագաւորը հավանութուն տվեց, շնորհակալու-

թյուն հայտնեց ու հրաման տվեց: Բայց Մերուժան Արծրունին պատասխան տվեց ու ասաց Ուոնայրին. «Դու գազ գրկեցիր, շատ զարմանալի կլինի, եթե հավաքել կարողանաս»: Եվ Մերուժանը մի մարդու միջոցով գաղտնապես լուր ուղարկեց Հայոց Մուշեղ գորավարին. «Գիտցի՛ր և պատրաստվի՛ր, Մուշեղ, որ Աղվանից Ուոնայր թագավորը մեծ պարծանքով քեզ պարգև է խնդրել: Նայի՛ր, թե ինչ պիտի անես»:

Բայց մինչ Պարսից զորքերը չվում գալիս էին<sup>148</sup> Հայոց վրա, նրանց հետ էր և Աղվանից Ուոնայր թագավորն իր գնդով: Աղվանից թագավորը խոսում է իր մոտ եղողների հետ և ասում. «Ձեզ այժմվանից հիշեցնում եմ, որ մտքներում պահեք, երբ մենք Հունաց զորքերը ձերբակալենք, նրանցից շատերին կենդանի թողեք, որպեսզի կապենք ու տանենք Աղվանը<sup>149</sup> և իրրև կավագործ, գալատոս և որմնադիր աշխատեցնենք մեր քաղաքների, ապարանքների և ուրիշ պիտույքների համար»:

Երբ Պարսից և Հունաց երկու գնդերը եկան իրար մոտեցան և պատրաստվում էին կռվի, Հայոց Պապ թագավորն էլ գինվեց ու պատրաստվեց ճակատամարտի մեջ մտնելու: Բայց Տերենտը՝ Հունաց զորավարը, թույլ չտվեց, որ Պապ թագավորը կռվի մեջ մտնի: Նա ասաց. «Հունաց թագավորը մեզ ուղարկեց քեզ համար, թե գնացե՛ք նրան պահպանեցե՛ք: Արդ՝ եթե քեզ մի բան պատահի, մենք ի՞նչ երեսով պետք է տեսնենք մեր թագավորին կամ ի՞նչ պիտի պատասխանենք: Եթե մենք այստեղ առանց քեզ կենդանի մնանք ու մեր թագավորի մոտ հասնենք, մենք գլխապարտ կմնանք մեր թագավորի առաջ: Դու, արքա, արա՛, ինչ որ ասում ենք քեզ ա՛ն ներսես եպիսկոպոսապետին, գնա՛ Նպատ լեռը, մի ամուլ անվտանգ տեղ նստի՛ր, և թող սուրբ ներսես եպիսկոպոսապետը աղոթք անի և խնդրի աստծուց, որ մեզ հաղթություն տա: Այնտեղից բարձրից կնայես և կտեսնես մեր ջանքերն ու աշխատանքը պատերազմի ընթացքում, ամեն մեկի քաջությունն ու երկշոտությունը, որ քո առաջ կկատարվեն»:

Պապ թագավորը համաձայնվեց այս խոսքերին, իր հետ վերցրեց ներսես քահանայապետին և ելավ նստեց Նպատ լեռան վրա, իսկ Հունաց ու Հայոց զորքերն իշան պատերազմի

տեղը: Ապա եկավ նաև Հայոց զորավար-սպարապետ Մուշեղը, բերեց եպիսկոպոսապետ ներսեսի մոտ իր դրոշակներն ու զենքը, որ օրհնի, և ինքը այնուհետև իշնի պատերազմի: Այս ժամանակ Պապ թագավորը հիշեց հին զուլյցներն ու ասաց. «Ես հիշեցի, որ Մուշեղը բարեկամ է Պարսից Շապուհ թագավորին: Դա այն Մուշեղը չէ՞, որ Պարսից Շապուհ թագավորի կանանց ազատ արձակեց ժանվարներով ու պահապան վաշտով: Այն էլ եմ լսել, որ պարսիկների հետ բանակցություններ ունի: Թող նա պատերազմ չմտնի»:

Այդ ժամանակ Հայոց զորավար Մուշեղը մեծ քահանայապետ ներսեսին Պապ թագավորի մոտ բարեխոս է դարձնում: Իսկ Պապ թագավորն ասում է ներսես քահանայապետին. «Դու մի՛ բարեխոսիր, որովհետև հենց որ իշնի, Պարսից զորքերին կմիանա»: Բայց (ներսեսը) ավելի ու ավելի է բարեխոսում: Եվ որովհետև այդ ժամանակ թագավորը նրա ոչ մի խոսքից չէր անցնում, ասաց ներսեսին. «Թող քո կամքը կատարվի. բայց նախ պահանջի՛ր քո աջի վրա երդվել, որ մեզ չի դավաճանի, հետո արձակի՛ր, որ գնա պատերազմի»: Հետո Մուշեղին կանչեցին թագավորի առաջ. նա եկավ երկրպագեց թագավորին, հետո ներսես եպիսկոպոսապետի աջը բռնելով երդվեց: Նույնպես բռնեց Պապ թագավորի ձեռքը և երդվեց՝ ասելով. «Ես կապրեմ ու կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները քո նախնիների համար, ինչպես իմ հայրը քո հոր՝ Արշակի համար. ես էլ նույնպես (կմեռնեմ) քեզ համար, միայն թե շարախոս մարդկանց չլսես»:

Այնուհետև Հայոց ներսես քահանայապետը նրան օրհնեց մեծ օրհնությամբ, իսկ Հայոց Պապ թագավորը հրամայեց իր ձին ու նիզակը մատուցել Մուշեղ քաջ զորավարին: Բայց նա շառավ. «Ես, արքա՛,— ասաց նա,— իմ ունեցածով կգործեմ, իսկ հետո ինչ էլ որ տալու լինես, քո հրամանի տակ եմ»: Բերեց իր դրոշակն ու զենքը ներսեսի մոտ, որ օրհնի: Այնուհետև նա ձի հեծավ, իր գնդով Հայոց զորքի ճակատը հարդարեց Հունաց զորքի աջ կողմում և աջ թևում առաջ շարժվեց:

Իսկ Պապ թագավորն ու ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ ներսեսը իր մշտաուարած ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում էր տիրոջից,

որ խնայի իր (հավատացյալների) ուխտին և իր սուրբ եկեղեցիներին, որ սատցել էր իր պատվական արյունով. իր ժողովուրդը շատոնի անաստված հեթանոսների ձեռքը, երբեք հեթանոսները չասեն, թե ո՞ր է նրանց աստվածը:

Մինչդեռ նա աղոթում էր աստծուն, Հայոց ամբողջ զորքերի ճակատը կրակի նման գնում էր Պարսից զորքերի դեմ, իսկ Մուշեղի գունդը բոլոր մյուս գնդերից առաջ անցնելով՝ շտապ-շտապ գնում էր. այնպես որ մինչև թագավորը նայում էր, այլևս նրա աչքից թաքնվեց, և Մուշեղի դրոշակներն այլևս չէին երևում թագավորին: Երբ նրա դրոշակները դադարեցին երևալ, Պապ թագավորը դարձավ ներսեսիմ՝ աղաղակելով. «Դու ինձ արմատախիլ արիր»<sup>150</sup>, ինձ այրեցիր. ես ստում էի, թե այդ մարդուն պատերազմի մի՛ ուղարկիր. ահա նա գնաց, Պարսից զորքերի հետ միացավ և մեզ մեծ վնաս կհասցնի»: Ներսես եպիսկոպոսապետն ասաց. «Այդպիսի բան մի՛ մտածիր, թագավոր, նա մեզ չի դավաճանի. դու ինքդ կտեսնես այն քաջությունը, որ ծառագ կգործի քո առաջ»:

Իսկ Պապ թագավորը շատ թախանձում էր ներսես եպիսկոպոսապետին՝ ասելով. «Շատ աղոթք արա, աստծուն աղաչի՛ր, քանի դեռ կոխվը շարունակվում է»: Երբ շատ ձանձրացրեց, ներսես եպիսկոպոսապետն ասաց Պապ թագավորին. «Եթե քո սիրտը դարձնես դեպի տերը, նա կզթա քեզ վրա և մեր երկրի վրա. եթե քեզ մաքրես քո պիղծ գործերից, քեզ նա կընդունի, ձեռքից քեզ բաց չի թողնի և քեզ թշնամիներիդ ձեռքը չի մատնի. իսկ ես ո՞վ եմ, որ դու ինձ աղաչում ես, իբրև թե ես, մի ողորմելի մարդ, կարող եմ աստծուն աղոթք անել, որ նա իր կամքից ետ կենա, իր կամեցածին հակառակ վարվի: Որովհետև նա է, որ ամեն ինչ ոչնչից ստեղծեց, որ ամբողջ տիեզերքը իր բնակիչներով իր ձեռքում պահում է ինչպես մարախ: Նա երկիրը թզով շափեց և ամբողջ երկիրը իր քիլով»<sup>151</sup>, լեռները կշեռքի առավ, դաշտերը կշեռքի մեջ դրեց: Նա իմացավ իր հոր իմաստությունը և նրան խորհրդակից եղավ, որ և հոր հետ վճռում է բոլոր դատաստանները: Դեռ այժմ էլ արևելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը դրել է կշեռքի մեջ և դեռ կշեռքը վեր բռնած ունի, և նույն ժամ թե մեղքերի կշեռքը որ կողմը կհակվի ամեն մի մեղ-

քի ծանրությամբ, ըստ այնմ էլ կդատի իր արարածներին: Որովհետև նա գիտի իր արարածների գործերի չափը և ամենքին կհատուցի իրենց գործերին համապատասխան, որովհետև ներկայումս ժամանակն է նախատելու, հանդիմանելու և դատելու, որովհետև ներկայումս ոչ թե մարդիկ են դուրս եկել միմյանց դեմ ճակատելու և պատերազմելու, այլ դատավորների դատավորն է վեր կացել երկիրը դատելու: Ուրեմն այս ժամը դատաստանի ժամանակն է: Ո՞վ կհամարձակվի այս ժամին իր բերանը բանալ նրա առաջ, կամ ո՞վ է, որ տիրոջ միտքը գիտե և դեռ խրատ էլ կտա նրան. որովհետև ամեն ինչ նրանից է և նրանով է, և նրան փառք հավիտյանս: Որովհետև եթե տերը մեզ հատուցում է համաձայն մեր գործերի, մենք չենք կարող նրա կամքին դեմ գնալ և նրանից որևէ բան խնդրել, այլ պետք է ասենք. «Իրավացի կերպով այս բոլորը մեզ վրա բերիր. արդար ես դու, տե՛ր, և բոլոր քո գործերը ճշմարիտ են»<sup>152</sup>: Քո ճանապարհներն ու բոլոր դատաստաններն ուզիդ են, որովհետև մեր նկատմամբ արդար դատաստան արեցիր ըստ ամենայնի, արդարությամբ և իրավացիորեն կատարեցիր մեր մեղքերի համար: Որովհետև մենք անիրավությունն ու հանցանք գործեցինք և ապստամբվեցինք քո դեմ, ամեն ինչում մեզք գործեցինք և քո պատվիրաններին չենք արկվեցինք: Պաս չպահեցինք և արարողություններ չկատարեցինք, ինչպես պատվիրեցիր մեզ, որ մենք քեզանից բարիք գտնենք: Արդ՝ այն ամենը, ինչ որ կատարեցիր և ինչ որ մեզ վրա բերեցիր, արդար դատաստանով կատարեցիր, որովհետև քո դատաստանները հաճելի են: Արդ՝ մեզ մի՛ լքիր իսպառ, քո անվան համար, փրկի՛ր մեզ քո հրաշքների համար և փառավոր արա քո անունը, տե՛ր, որպեսզի շամաչեն նրանք, ովքեր քեզ հետ հույս են կապել. նրանց բռնությունները թող նվաստանան, նրանց ամբողջ գորությունը թող խորտակվի, ոչնչանա, որովհետև միայն դու ես տեր աստվածը, որ փառավորված ես ամբողջ տիեզերքի վրա: Եվ ամեն բանում ամբողջովին միայն քո ամենագոր կամքը կկատարվի, որ հզոր ես, կարող և ամեն ինչում արդար. և սիրում ես ողորմալ նեղյալներին ու տազնապալներին: Դու ես իմանում մեր օգուտը, տե՛ր, և պատրաստում ես

մեզ համար, ինչպես որ քեզ հաճելի է: Եթե նեղութիւնները մեզ օգտակար են, հաճախակի դարձրու, և եթե հաճելի է քեզ ողորմութիւնը, շնորհիր մեզ:

Ինչպես որ տիրոջ կամքը երկնքում է, այնպես էլ թող կատարի: Եվ ինչ գավազանով էլ կամենաս մեզ խրատել, միշտ քո ձեռքում ենք: Քավիր, տե՛ր, քո ծառաների այս անօրինութիւնները, մեղքերն ու հանցանքները: Որովհետև ո՛վ է այն մարդը, որ քո հանդեպ հանցանք կամ մեղք չի գործում. ոչ ոք երկրի վրա արդար չէ, ո՛չ մեկը: Դու ես միայն, որ առանց մեղքերի ես, և արդարութիւնը միայն քոնն է, դու մեզ ոչնչից ստեղծեցիր ու մեզ այս կենդանութիւնը արժանացրիր և մեզ ցույց տվիր կյանքի ու փրկութեան ճանապարհները և հողեղեններին այսպես իմաստուն ու խոսուն ստեղծեցիր: Եվ դարձար մեր փրկանքը, որպեսզի անմահութեան վիճակին հասցնես մեզ: Հիշի՛ր քո եկեղեցին, որ քո սուրբ արյունով ստացար, և քեզ նվիրվածները շնորհի ձեռքը մի՛ մատնիր. ամեն ժամանակ դու ողորմած ես, քո սրտմտութիւնն ու բարկութիւնը քո ուխտից հեռացրո՛ւ և փրկի՛ր քո եկեղեցին, տե՛ր աստված մեր»:

Այսպես, լեռան վրա կանգնած, այս և սրանց նման և էլ ավելի բաներ խոսեց (Ներսէսը), մինչ թագաւորի հետ կանգնած էր լեռան վրա. բազմաթիվ ու տեսակ-տեսակ աղոթքներ էր անում մինչև երեկո՝ արեգակի մայր մտնելը, մինչև կոիվը վերջացավ:

Իսկ պատերազմի մեջ աստծու օգնութիւնը հասնում է հույներին, և հաղթութիւն է շնորհվում Հայկական գնդին: Պարսից գնդերը պարտութիւն կրեցին, փախուստի դիմեցին և ցրվեցին, սփռվեցին դաշտերում, լեռների կատարներին, խորերում և ձորերում: Նրանց հետամուտ էին լինում Հունաց և Հայոց զորքերը, հասնում կոտորում էին մեծ և փոքր առհասարակ. շատերից քշերը, որոնք լավ ձիեր ունեին, կարողացան փախչել: Փախստականների ետևից էին ընկնում Հայոց զորքերը և շատերին կոտորում էին ճանապարհին, և այսպիսով Պարսից զորքերին հալածում էին մինչև Ատրպատական, Հայաստանի սահմանները:

Իսկ Մուշեղ Հայոց սպարապետը շարաչար կոտորում է

Պարսից զորքերը և աչք պահելով հանդիպում է Աղվանից գնդին ու բոլոր զորքերը ջարդում է. հասնում է Աղվանից Ունայր թագաւորին, մինչդեռ նա փախչում էր: Մոտենալով՝ իր նիզակի կոթով երկար ծեծում է նրա գագաթը՝ ասելով՝ «Շնորհակալ եղիր, որ թագաւոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագաւոր մարդու շեմ սպանի, մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»: Եվ թույլ տվեց նրան ձիավորների հետ փախչել գնալ Աղվանից աշխարհը:

Իսկ երբ Հայոց բոլոր զորքերը ետ դարձան, թիվ չկար ախոյանների այն գլուխներին<sup>153</sup>, որ Հայոց Մուշեղ քաջ զորավարը բերել էր Հայոց Պապ թագաւորի առաջ: Այնպես էլ բոլոր նախարարներն ու մեծամեծները և ամբողջ զորքը, ամեն մեկն իր շափին: Եվ մեծ հաղթութիւն եղավ Հայոց աշխարհի ու Հունաց զորքի համար: Նրանք լիացան մեծ ավարով՝ գանձերով, զենքերով, զարդերով, ոսկով ու արծաթով, շատ կարասիներով, ձիերով, ջորիներով և ուղտերով, որ խլեցին (պարսիկներից): Ավարը շատ շատ էր. նրան թիվ ու չափ չկար:

Բայց Մուշեղ զորավարին մատնութեամբ ամբաստանում էին Պապ մեծ թագաւորի առաջ՝ ասելով. «Իմացի՛ր, արքա, որ խիստ նենգութեամբ է վարվում (Մուշեղը) քեզ հետ և քո մահվանն է սպասում, որովհետև նա քո թշնամիներին շարունակ ազատ է արձակում. շատ անգամ իր ձեռքն է գցել թշնամիներին, բայց էլի ըստ սովորութեան արձակել է. որովհետև նա Ունայր թագաւորին արձակեց և կյանք բաշխեց քո հակառակորդին, որ իր ձեռքումն էր»: Այս պատճառով զորավարի միջև և շատ անգամ այս պատճառով (Պապը) հանդիմանում էր նրան: Իսկ Մուշեղ զորավարը պատասխան է տալիս Պապ թագաւորին և ասում է. «Ես իմ ընկերներին՝ բոլորին կոտորեցի, իսկ նրանք, որ թագ էին կրում, իմ ընկերները չէին, այլ քո. ե՛կ, ինչպես ես իմ ընկերներին սպանեցի, այնպես էլ դու քոնոնց, բայց ես թագաւոր մարդու վրա, որ գլխին թագ է կրում, ո՛չ ձեռք եմ մեկնել, ոչ մեկնում եմ, և ոչ էլ կմեկնեմ: Եթե ուզում ես ինձ սպանել, սպանի՛ր, բայց ես, եթե երբևէ քեզ մի թագաւոր մարդ ձեռքս անցնի,

ինչպես շատ անգամ պատահել է, ես չեմ սպանի թագավոր մարդու, որ թագ է կրում, թեկուզ ինձ էլ սպանեն»:

Պապ թագավորը երբ այս խոսքերը լսեց, արտասվեց, գահույթից վեր կացավ, բռնեց Մուշեղին, փաթաթեց նրան և լաց եղավ Մուշեղի վզին փաթաթված, ու ասաց. «Մահապարտ են այն մարդիկ, որոնք հանդգնում են շար բերան բանալ Մուշեղի՝ այս քաջ և պատվական մարդու մասին: Նա մի մարդ է, որ ծագումով մեզ չափ պատվական է, և սրա նախնիները մեր նախնիների նման էին. սրա նախնիները թողել են ձեռնաց աշխարհի թագավորությունն ու եկել են մեզ մոտ և ապրել ու մեռել են մեր նախնիների համար. սրա հայրը իմ հոր համար մեռավ, և սա հավատարմությունը ծառայել է մեզ. և շատ անգամ աստված, մեր հոր՝ սքանչելի Ներսեսի աղոթքներով ու խնդրվածքներով, մեզ հաղթություն շնորհեց սրա ձեռքով և խաղաղություն մեզ տվեց: Ինչպե՞ս են կարողանում ինձ ասել, թե Մուշեղը քո մահվանն է սպասում. սա արդարամիտ մարդ է. եթե սա օտար թագավորներին խնայեց իր ազնվականությամբ, ինչպե՞ս կարող է ձեռք բարձրացնել իր բնիկ տերերի վրա»: Եվ ապա Պապ թագավորը մեծ պարգևներ ու պատիվներ և շատ գյուղեր է պարգևում Մուշեղ զորավարին:

## Գ Լ Ո Ւ Խ Ե

ՄՅՈՒՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԳԱՆՁԱԿ ԲԱՂԱՔՈՒՄ. ՆԱԵՎ ՈՒՌԱՏՅՐԻ ԼՈՒՐ ՀԱՂՈՐԴԵԼԸ. ՀԱՅՈՑ ԳՆԻՒ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷՆ ՀԱՂՔԱԹՅՈՒՆ ՏԱՆԵԼԸ:

Այս Ազգանից Ունայր թագավորը գաղտնի լուր է ուղարկում Մուշեղին. նրա մոտ մարդ է ուղարկում և տեղեկություն է հաղորդում՝ ասելով. «Շատ շնորհակալ եմ քեզանից, որ ինձ չսպանեցիր. աստված ինձ քո ձեռքը տվեց, բայց դու ինձ խնայեցիր, այս քո լավությունը չեմ մոռանա, քանի կենդանի եմ: Բայց իմաց եմ տալիս քեզ, որ Պապից Շապուհ թագավորը պատրաստվում է բոլոր իր զորքերով անսպասելի կերպով հարձակվել քո վրա»: Այն ժա-

մանակ Հունաց ստրատեյատր կազմակերպեց իր ձեռքի տակ եղած զորքերը և շարժեց տարավ Ատրպատական աշխարհից՝ Գանձակի կողմից դեպի Հայաստանի սահմանները: Այնպես էլ Հայոց Մուշեղ զորավարը մի տեղ հավաքեց Հայոց բոլոր զորքերը, որոնք ինսուսն հազար ընտիր մարդիկ էին, լավ զինված, նիզակները ձեռքներին, շհաշված ասպարակիրներին: Սրանք էլ, ստացված տեղեկություն համաձայն, շտապով վաղորդե հասան իրենց սահմանները. միայն թագավորը մնաց Հայոց աշխարհում: Ներսես եպիսկոպոսապետն ևս մնաց երկրում և հրամայեց ամբողջ երկրում աղոթք անել այն զորքերի համար, որ գնացել էին պատերազմի:

Իսկ Պարսից Շապուհ թագավորը իր ամբողջ զորքերով գալիս հասնում է պատերազմի տեղը և տեսնում է, որ Հունաց զորքերը և Հայոց գունդը արդեն կազմ ու պատրաստ են պատերազմի: Երկու ճակատները խառնվում են իրար, և Պարսից զորքը պարտություն է կրում: Մանավանդ նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվելով՝ իրենց ձեռքի վրայից հարվածելով՝ քաջությամբ գետին էին գլորում իրենց ախոյաններին Պարսից Շապուհ թագավորի դեմուղեմ: Երբ գետին էին գլորում, Հայոց բոլոր զորքերը քաջալերական ձայնով աղաղակում էին. «Ա՛ն, քաջ Արշակ»: Ամեն անգամ, որ այդ պատերազմում մի ախոյան էին սպանում, նրան էին նվիրում իրենց նախկին թագավոր Արշակին՝ ասելով. «Մեր Արշակ թագավորին մատաղ եղիր»: Երբ Հայոց ազատների նիզակավոր ախոյանները խմբովին հարձակվում էին Պարսից նիզակավորների վրա ու վեր էին գլորում, քաջալերությամբ ասում էին. «Ա՛ն, քաջ Արշակ»: Իսկ երբ այս ախոյաններին մորթում, զլխատում էին, ասում էին. «Արշակ թագավորին մատաղ եղիր»:

Իսկ լեգեոնների <sup>154</sup> զորքի բազմությունը, այսինքն Հունաց ասպարակիր զորքը, նույնպես և Հայոց ասպարակիրները պահպանում էին Հայոց զորքի թիկունքը, վահաններով պաշտպանված լինելով, ինչպես մի ամուր քաղաք (կովոդների) թիկունքում: Երբ Պարսից զորքերը փոքր-ինչ վանում էին Հունաց զորքերին կամ Հայոց նիզակավոր գնդերը, սրանք Հունաց վահանավոր լեգեոնների կամ Հայոց ասպարակիրների

մեջ էին մտնում՝ ինչպես բերդերի մեջ և հանգստանում էին: Իսկ երբ մի փոքր շունչ էին քաշում, ապա այնտեղից դուրս գալով հարձակվում էին և պարսիկներից անթիվ մարդիկ իրենց ոտքերի տակ էին գլորում և սպանում ու զլխատում էին՝ նույն քաջալերական խոսքերն ասելով իրենց Արշակ թագավորի համար: Այսպիսով նրանք անշափ և անթիվ զորքեր կոտորեցին պարսիկներից: Հետո երբ պարսիկները փոքր-ինչ նրանց հաղթում էին, նրանք դարձյալ իբրև մի բերդ ապաստանում էին լեզեոնի վահանավոր զորքերի մեջ, որոնք իրենց վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում ու փակում: Այդ օրը Հունաց զորքն ու նրանց Տերենտ ստրատելատը և Հայոց գնդերն ու նրանց Մուշեղ սպարապետը Պարսից զորքերը շարձեցին, ոչնչացրին: Պարսից Շապուհ թագավորը քիչ մարդկանցով փախչում է այդ պատերազմից: Իսկ սրանք սահմանապահներ են դնում և իրենք դառնում են իրենց Պապ թագավորի մոտ բարի անունով, մեծ ավարով և շքեղությամբ:

Իսկ Շապուհ թագավորը երբ հասնում է իր իշխանության երկիրը, զարմանք է հայտնում կովող գնդի քաջության վրա, ինչ որ ինքը տեսավ: «Ջարմացել եմ ես, — ասում է նա, — իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կովի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կովի, բայց չեմ կռիվը այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ. իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հողմների լեզեոնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում, ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ: Եվ այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ Արյաց զորքերին ամբողջովին ոչնչացրին: Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած՝ Հայկական գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ: Երբ իրենց ախոյաններին գլորում էին,

միշտ ասում էին. «Արշակ, ա՛ռ», իսկ նա նրանց մեջ չէր, բայց նրանք իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ, ամեն մի ախոյանի, որին սպանում էին, նրան էին նվիրում: Կամ Մուշեղի այն մուշեղնաժ գունդը. ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և դրոշակներն այնպես էին գնդի մեջ, կարծես հրդեհի բոց է անցնում եղեգների միջով: Այսքան ժամանակ է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, գտնվում է Անդամըն բերդում, Խուժաստան երկրում, բայց նրանք իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատերազմին գլուխ կանգնած, և իրենք նրա առաջ նրան են ծառայում: Այո՛, — ասում էր նա, — երանի՛ նրան, որ Հայոց գնդի տերն է, այնպիսի՛ տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»:

## Գ Լ Ո Ւ Խ Զ

ԴՂԱԿ ՄԱՐԳՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՍԵՀՄԱՆԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵՏԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԵՈՐՀՐԴԱԿԻՑ ԵՂԱՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՍՏԱՑԱՎ ՄԱՏՆԵՎ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻՆ, ԵՎ ՊԱՊ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԵՑ ԴՂԱԿԻ ՍՊԱՆՎԵՆՈՒ ՄԱՍԻՆ:

Ապա Հունաց Տերենտ զորավարը և Հայոց զորքերի գլխավոր Մուշեղը Դղակ մարդպետին, որ ըստ իր պաշտոնի կոչվում էր թագավորի Հայր, սահմանապահ թողին Գանձակում, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի միջև: Նրա մոտ թողին երեսուն հազար ընտիր զորք՝ լավ սպառազինված նիզակավորներ, պահպանակներով, զրահներով պաշտպանված, կազմ և պատրաստ: Տերենտն ու Մուշեղը իրենց հետ եղած բոլոր զորքերով գնացին (Հայաստան) Պապ թագավորի մոտ: Իսկ Դղակ մարդպետը գաղտնի կերպով պատգամավոր ուղարկեց Պարսից Շապուհ թագավորի մոտ և խոստացավ նրա ձեռքը մատնել Հայոց Պապ թագավորին, Հունաց Տերենտ զորավարին ու Հայոց Մուշեղ զորավարին, և (սրբա համար) նրանից պարզև ստացավ մեծաբանակ գանձ: Բայց



մյուս մեծամեծ նախարարները, որ նրա մոտ էին, Գնելը և Անձևացյաց գավառի տերը և ուրիշներ, որ մնացել էին այստեղ, գաղտնապես իմաց տվին Պապ թագավորին:

Ապա Պապ թագավորը դեսպաններ ուղարկեց Դղակ մարդպետի մոտ, թե՛ «Քո ձեռքի տակ եղած զորքերը հավաքի՛ր և հանձնի՛ր Անձևացի Գնելին, իսկ ինքզ շտապ ե՛կ, որովհետև քեզ պետք է ուղարկեմ Պարսից Շապուհ թագավորի մոտ, որ նրա հպատակութան տակ մտնեմ»: Երբ այս լսում է Դղակ մարդպետը, իր մտքում շատ ուրախանում է, թե՛ «Հիմա ինձ հեշտ կլինի իմ մտերմությունը կատարել, ինչպես խոստացել էի Պարսից Շապուհ թագավորին: Այժմ ես ճանապարհը գտա, որ խոսքերով քնեցնեմ Պապին, որ անհոգ ու միամիտ լինի, և հանկարծակի՝ անսպասելի կերպով՝ նրա գլխի վերև կանգնեցնեմ Պարսից թագավորին»: Ինքն իր մեջ զվարճանալով՝ պատգամախոս է դառնում երկու թաղավորների միջև: Շտապ ձիավոր դեսպան է ուղարկում Այրարատյան գավառը՝ Արդյանք կոչված մեծ գյուղը, արբունական կալվածքում, Հայոց Պապ թագավորի մոտ, և ինքն էլ զալիս ներկայանում է նրան ու մեծապես մեծարվում: Ընթրիքի ժամանակ Պապ թագավորը հրաման տվեց Դղակ մարդպետին փառավոր զգեստ հագցնել. նրան հագցրին դրաստ<sup>156</sup> և վարտիք: Զգեստը շափից դուրս մեծ էր, որ ծալ-ծալ իջնում էր ներքև, այնպես որ շէր կարողանում կարգին հագնվել, որովհետև մեծ զգեստը փաթաթվում էր վրան: Այս մեծ պատմուճանը հագնելով՝ մեջքին կապեց գոտին, որից թուրը կախված էր, և սուրը մեջքին կապեց. իսկ զգեստի գոտուց ծալքը իջնելով ծածկում էր թուրքն ու սուրը: Վարտիքը և մուկը հագնելուց հետո նրանը<sup>156</sup> ազդրին կապեց. բայց վարտիքից ծալքը իջնում էր նրանի վրա և ծածկում էր մինչև սրունքը. և Դղակը գլխի շնկավ, թե զգեստի այդ մեծությունը նրա գլխի փորձանքն է: Երեկոյան ժամը իննին Դղակին կանչեցին և ասացին. «Քեզ ներսը արբունիք են հրավիրում ընթրիքի»: Երբ նրան մտցրին թագավորի տան նրբանցքը—նրբանցքը երկայն էր և լույսի համար շատ երդկիններ ունեւր—և նրբանցքով տանում էին, շուրջը կանգնած էին ասպարներով պատսպարված սակրավորները, երդկիններն էլ ծածկել էին: Ապա ասպարակիրները նրա

շրջապատելով թաշքշում էին. իսկ նա թեպետ ձեռքը տանում էր զենքերին, բայց ոչ մի զենք չկարողացավ գտնել, որովհետև զգեստի ծալքերի մեջ թաքնված էին:

Ինքը՝ Դղակը, խոշոր, թիկնավետ մարդ էր՝ պինդ ու խոշոր ոսկորներով, բայց սակրավոր մարդիկ նրան շրջապատեցին, վեր բարձրացրին և այսպես տարան մինչև թագավորի սեղանատան դուռը: Երբ թագավորը տեսավ, որ այնտեղ էին տանում, ասաց. «Ո՛չ այստեղ, ո՛չ այստեղ, այլ տարեք դրան հանդերձատունը»: Ապա ասպարակիր գինվորները նրան, ձեռները ետևը կապելով, նրբանցքով տարան հանդերձատունը, այսինքն այնտեղ, որտեղ թագավորները թագ էին դնում: Այնտեղ Դղակը խոսել սկսեց ու ասաց. «Թագավորին այսպես ասացեք. «Ես այս մահին արժան էի, բայց քեզ վայել էր ինձ հրապարակով սպանել և ոչ թե թագադրության սենյակում և քո թագը արյունով շաղախել»: Այսքան միայն կարողացավ ասել. իսկույն հանդերձատանը նրան մորթեցին, գլուխը կտրեցին, նիզակի վրա զարկեցին ու արբունական հրապարակում կանգնեցրին:

## Գ Լ Ո Ւ Խ Է

ՀԱՅՈՑ ԱՐԵԱԿ ԹԱԿԱՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ, ԻՅ ԻՆՉՊԵՍ ՄԵՌԱՎ ԽԱԹԱՍՏԱՆ ԵՐԿՐՈՒՄ, ԱՆԿՄԱՐԵՆ ԲԵՐԿՈՒՄ ԻՆՔՆ ԻՐ ՁԵՌՔՈՎ, ԵՎ ԳՐԱՍԱՄԱՐԱԿ ԵՂԱՎ ԵՐԱ ՄԱՀՎԱՆ ՊԱՏԱՐԸ:

Այն ժամանակները դեռևս կենդանի էր Հայոց Արշակ թագավորը Պարսից թագավորութան իշխանութան երկրում, Խուժաստանի կողմերում, Անդամըշ բերդում, որին ասում են Անհուշ բերդ: Այս ժամանակ պարսիկները դադարեցրին պատերազմները հայերի հետ, որովհետև Քուշանաց Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ<sup>157</sup> քաղաքում, պատերազմ սկսեց Պարսից Շապուհ թագավորի դեմ, որ Սասանի տոհմից էր: Եվ Շապուհ թագավորը Պարսից բոլոր զորքերը զուամրեց ու տարավ նրա դեմ պատերազմելու, նույնպես և Հայոց աշխարհից տարած գերությունից բոլոր հեծելազորքը իր հետ պատերազմի տարավ. մինչև անգամ Հայոց Արշակ

Թագավորի ներքինուն: Հայոց Արշակ Թագավորի այդ ներքինին հավատարիմ պաշտոնյա էր, մեծ իշխանութեան տեր, շատ սիրված ու պատիվների արժանացած. նրա անունն էր Դրաստամատ:

Երբ Քուշանաց Թագավորի և Պարսից Թագավորի միջև պատերազմ սկսվեց, քուշանների զորքերը շատ նեղեցին Պարսից զորքերին, շատերին կոտորեցին Պարսից զորքերից, շատերին ձերբակալեցին և մյուսներին հալածեցին, փախուստի մատնեցին: Իսկ Դրաստամատ ներքինին, որ Հայոց Տիրան Թագավորի և նրա որդու՝ Հայոց Արշակ Թագավորի տարիներին իշխում էր Անգեղտան<sup>158</sup> գավառի վրա, հավատարմութեամբ պահում էր Անգեղ բերդի գանձերը, նույնպես և բոլոր արքունական բերդերը, որ գտնվում էին այն կողմերում: Նույնպես և Մոփաց աշխարհում Բնաբեղ բերդում եղած գանձերը նրա տեսչության տակ էին և նրա բարձր<sup>159</sup> բոլոր նախարարների բարձրից վեր էր: Եվ որովհետև այս պաշտոնը և Հայր կոչված մարդպետությունը ներքինիներին էին հանձնվում Արշակունյաց Թագավորության ամենահին ժամանակներից ի վեր, ուստի այս ներքինի Դրաստամատին Անգեղտան իշխանին էլ գերի էին տարել Պարսկաստան այն ժամանակ, երբ Հայոց Արշակ Թագավորին բռնեցին:

Այս Դրաստամատը պատահեց այն ճակատամարտում, որի մեջ քուշանները հաղթեցին Պարսից Շապուհ Թագավորին: Դրաստամատն այնտեղ անպատմելի քաջություններ գործեց, Շապուհ Թագավորի համար այնչափ կովեց, որ կարողացավ նրան մահից ազատել և քուշաններից շատերին կոտորեց և շատ ախոյանների գլուխներ բերեց նրա առջև: Պարսից Շապուհ Թագավորին էլ փրկեց, երբ նրան պատերազմի խառնուրդի մեջ թշնամիները շրջապատել ու նեղն էին գցել: Իսկ երբ Պարսից Շապուհ Թագավորը դարձավ, եկավ Ասորեստան, մեծ շնորհակալություն հայտնեց ներքինի Դրաստամատին նրա ծառայությունների համար. և ասաց նրան Պարսից Շապուհ Թագավորը. «Ենդրի՛ր դու ինձանից, ինչ որ ուզում ես, քո խնդրածը կտամ, չեմ մերժի»: Դրաստամատն ասաց Թագավորին. «Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, բացի միայն նրանից, որ հրաման տաս ինձ՝ գնամ իմ

իսկական տիրոջը՝ Հայոց Արշակ Թագավորին, տեսնեմ: Եվ միայն մի օրվա համար, երբ ես նրա մոտ գնամ, հրաման տուր նրան կապանքներից արձակել, և ես իրավունք ունենամ լվանալ նրա գլուխը, օծել, ազնիվ զգեստ հագցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ դնել, գինի տալ և ուրախացնել նվազարաններով. ճիշտ մի օր»: Շապուհ Թագավորն ասաց. «Թժվար բան խնդրեցիր, որովհետև այն ժամանակից ի վեր, որ Պարսից Թագավորությունը կանգուն է, և այն բերդը կոչվել է Անհուշ, չի եղել որևէ մարդ, որ համարձակված լինի Թագավորներին հիշեցնել, թե Թագավորները որևէ մեկին այնտեղ բանտարկել են, չի հիշատակվել որևէ մարդ, որին բանտարկել են այն բերդում, ուր մնաց Թագավոր մարդը և իմ հավասարը՝ հակառակորդը, որ կապված է այն բերդում: Այնինչ դու անհանգստացրիր մեզ<sup>160</sup>: Դու ահա մահդ աչքդ առար և հիշեցրիր Անհուշը՝ անհիշելին, որ Արյաց Թագավորության մեջ սկզբից ի վեր չի պատահել այսպիսի բան: Բայց որովհետև մեծ է քո՝ ինձ ցույց տված ծառայությունը, թող կատարվի խնդիրդ. գնա, ինչ որ խնդրեցիր, տալիս եմ: Բայց դու պետք է քո սեփական օգուտը մտածեիր, երկրներ, գավառներ կամ գանձեր խնդրիր: Բայց երբ դու այդ խնդրեցիր, թող այդ բացառություն լինի Արյաց Թագավորության օրենքից: Գնա՛, քեզ տվի, ինչ որ դու ինձանից խնդրեցիր քո ծառայության փոխարեն»:

Եվ նրան տվեց մի հավատարիմ թիկնապահ ու հրովարտակ՝ արքունական մատանիով կնքված, որ ելնի գնա Անդամըն բերդը և ինչպես որ կամենա, ինչպես որ խնդրեց, այնպես էլ վարվի կապյալ Արշակի հետ, որ Հայաստանի Թագավոր էր եղել մի ժամանակ: Եվ Դրաստամատը արքունական հրովարտակով թիկնապահի հետ գնաց Անուշ բերդը, տեսավ իր իսկական տեր Արշակին, արձակեց երկաթե կապանքներից, ձեռնակապերից ու ոտնակապերից և անուրներից, նրա գլուխը լվաց, նրան լողացրեց. նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան բազմեցրեց, նրա առաջ Թագավորավայել ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես Թագավորների կարգն է, նրան զվարթացրեց, մխիթարեց և նվազարաններով ուրախացրեց:

Երբ աղանդների հերթը հասավ, նրա առաջ գրին միրգ, ինձոր, վարունգ ու ամթն<sup>161</sup> և դանակ ավին, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենում է: Դրաստամատն էլ ոտքի կանգ- ծած՝ նրան շատ ուրախացնում էր և մխիթարում: Երբ նա խմեց, գիճիճ գլուխն ընկավ, նա հարբեց ու հպարտացավ և ասաց. «Վա՛յ ինձ, Արշակիս. սբտեղի՛ց ուր ընկա և ի՛նչ օրի հասա»: Այս ասելով՝ դանակը, որ ձեռքին բռնած ունեւր, օրով միրգը կամ ամիճը պիտի կտրեր, խրեց իր սիրտը և խկույն մեռավ հենց նստած անգում: Դրաստամատը երբ այս ան- օավ, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց նրա մարմնից և խրեց իր կողը: Նա էլ նույնպես նույն ժամին մեռավ:

### Գլուխ Ը

ՔՆ ԻՆՉՊԵՍ ԿՐԿՐԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ՄՈՒՇԵՂ ՄՊԱՐԱՊԵՏԸ ՍԿՍԵՑ ԿՈՎԵԼ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՐՈՆԵ ԱՊՍՏՈՄՐԵՎԵԼ ԷՆ ՀԱՅՈՑ ՔԱԳԱՎՈՐԻ ԳԵՄ ԵՎ ՄԵՄԱՄԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԵՐՈՎ ՇԱՏ ՏԵՂԵՐ ԵՎԱՃԵՑ: ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ ՀԱՅՈՑ ՔԱԳԱՎՈՐԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ ԵՂԱՍ ԿԱԼՎԱՄԵՆ ՄԱՍԻՆ:

Ապա, երբ պատերազմը Պարսից կողմերից դադարեց և (հայերն) այդ կողմից ապահովվեցին, այնուհետև Հայոց Մուշեղ սպարապետն սկսում է ջարդել նրանց, որոնք ապրս- տամբվել էին Արշակունյաց թագավորության դեմ: Նախ նվա- ճում է Հայոց թագավորի կալվածքը, որը գտնվում էր Ատոր- պատականում: Ատորպատճանցոց<sup>162</sup> բոլոր գավառներն ավե- րում է, մեծ քանակությամբ գերիներ է վերցնում նրանցից, մնացածներին նվաճում է և հարկատու դարձնում, վերցնում է նրանցից նաև շատ պատանդներ:

### Գլուխ Թ

ՆՈՇԵՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ:

Մուշեղը ջարդում է նաև Նոշիրական աշխարհի ապրս- տամբներին, որոնք ապստամբվել էին Հայոց թագավորի դեմ: Երկիրը գրավում, ավերում և գերում է. մնացածներից պա- տանդներ է վերցնում և երկրի բնակիչներին հպատակ ու հարկատու է դարձնում:

### Գլուխ Ժ

ԿՈՂՄԻՑԻ, ԿՈՂՄԻՑԻ ԵՎ ՏՄՈՐԻՑԻ ՄԱՍԻՆ:

Մուշեղ սպարապետը նվաճում է նաև այս գավառները, որոնք ապստամբվել էին Հայոց թագավորի դեմ, այսինքն՝ Կորդուքը, Կորդիքը և Տմորիքը. գերիներ է վերցնում, ավե- րում է, մնացածներին հարկատու է դարձնում և նրանցից պատանդներ առնում:

### Գլուխ ԺԱ

ՄԱՐԱՑ ՄԱՍԻՆ:

Մարաց կողմերն էլ նա սաստիկ հարվածներով նվաճում է, արժհետև նրանք էլ ապստամբվել էին Հայոց թագավորի դեմ. նրանցից շատերին գերում է, մնացորդներին հպատա- կեցնում է և նրանցից պատանդներ վերցնում:

### Գլուխ ԺԲ

ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ:

Արցախի երկիրն էլ նվաճում է մեծ պատերազմով, նրան- ցից շատերին գերում է: Մնացածներից պատանդներ է առ- նում և նրանց հպատակեցնում:

### Գլուխ ԺԳ

ԱՂՎԱՆԻՑ ՄԱՍԻՆ:

Պատերազմում է նաև Աղվանից երկրի դեմ և նրանց սոս- կալի ջարդ է տալիս: նրանցից ետ է խլում շատ գավառներ, որ նրանք գրավել էին՝ Ուտին, Շակաշենը, Գարգամանյաձորը, Կողթը և սրանց շուրջը եղած սահմանակից շատ գավառներ: Կուր գետը սահման դարձրեց (մեր) աշխարհի և Աղվանքի

միջև, ինչպես որ առաջ էր: Գլխավորներին շատերին սպանեցին, մնացածներին հպատակեցրին և նրանցից պատանդներ վերցրին:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Գ

ԿԱՍՊԻՑ ՄԱՍԻՆ:

Ապա Մուշեղ սպարապետը սաստկապես վրեժ է առնում Կասպից<sup>163</sup> երկրից, Փայտակարան քաղաքից, որովհետև նրանք էլ ըմբոստացել ու դավաճանել էին Հայոց թագավորին: Մուշեղ զորավարն այնտեղ հասնելով՝ նրանցից շատերին պատժելով գլխատում է, շատերին գերի վերցնում, մնացածներին էլ հպատակեցնելով, նրանցից պատանդներ է վերցնում և այնտեղ վերակացու պաշտոնյաներ է թողնում:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Ե

ՎՐԱՑ ՄԱՍԻՆ:

Ապա Մուշեղ սպարապետը գնում է Վրաց աշխարհի վրա. նրան սաստիկ նեղում, ջարդում է. ամբողջ Վրաց աշխարհը նվաճում է, սրի է քաշում բոլոր ազնվականներին և բոլոր նախարարական տոհմերը, որոնց որ գտնում է: Մուշեղ սպարապետը հրամայում է Փռավազյաններին խաշ հանել Վրաց աշխարհում, իսկ Գուգարաց բղեշխին, որ առաջ ծառայում էր Հայոց թագավորին և վերջը ապստամբվել էր, բռնելով գլխատեց ու նրա ցեղի արունները կոտորեց, իսկ կանանց ու աղջիկներին գերի վերցրին: Եվ առհասարակ բոլոր այն կողմի նախարարներին, որոնք Հայոց թագավորից ապստամբվել էին, գլխատում է, ամբողջ գավառը նորից նվաճում է և պատանդներ առնում. մնացածներին էլ հպատակեցնում է: Եվ գրավելով մինչև հին սահմանը, որ առաջուց գոյություն ուներ Հայաստանի ու Վրաստանի միջև, այսինքն՝ Կուր մեծ գետը, այնտեղից ետ է դառնում:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Զ

ԱՂՁՆԻՔ ԳԱՎԱՌԻՄ ՄԱՍԻՆ:

Այնուհետև Մուշեղ զորավարը դառնում է Աղձնյաց երկրի վրա և մեծամեծ հարվածներ է հասցնում այդ երկրին, որովհետև սրանք էլ ապստամբվել էին Հայոց թագավորի դեմ: Աղձնիքի բղեշխին ձերբակալեցին, նրա առաջ սպանեցին կանանց, իսկ նրանց որդիներին գերի վերցրին: Մնացածներին հպատակեցրին և Աղձնիքում էլ թողեցին վերակացուներ, ու պաշտոնյաներ:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Է

ՄԵՍ ԾՈՓՔԻ ՄԱՍԻՆ:

Այնտեղից արշավեցին Մեծ Ծոփք, որ նույնպես ապստամբվել էր: Մուշեղը նվաճեց Մեծ Ծոփքը, ազնվական տոհմերը սրի քաշեց, պատանդներ վերցրեց և բնակիչներին հպատակեցրեց:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Ը

ԱՆԳԵՂՏԱՆ ՄԱՍԻՆ:

Անգեղտանն էլ շատերին ջարդեց և սրի քաշեց: Բայց որովհետև երկիրը վաղուց ի վեր արթունի կալվածք էր, ուստի բնակիչները հարկատու հպատակ էին մնացել:

### Գ Լ Ո Լ Խ Ժ Թ

ԱՆՁԻՑ ԳԱՎԱՌԻ ՄԱՍԻՆ:

Ապա Մուշեղն արշավում է Անձիտ գավառը և նվաճում շրջակա գավառների հետ միասին, որովհետև նրանք էլ ապստամբվել էին Արշակունյաց թագավորութան դեմ: Գավառ...

ոի տերերին սրի է քաշում, պատանդներ է առնում, նվաճում է և բոլորին առհասարակ հարկատու և հպատակ է դարձնում Հայոց Պապ թագավորին:

**Գ յ ու խ Ի**

**ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ:**

Հայոց քաջ զորավար և սպարապետ (Մուշեղը) ամբողջ իր կյանքում լի էր նախանձախնդրությամբ. նա հավատարմությամբ և արդար աշխատանքով, միշտ ջանասիրությամբ աշխատում էր Հայոց աշխարհի և թագավորության համար: Գիշեր ու ցերեկ նա շարշարանքի մեջ էր. նա ճիգ էր թափում, պատերազմներ էր մղում, թույլ չէր տալիս, որ թեկուզ մի կորու շափ գետին Հայոց աշխարհի սահմաններից խլվի: Նա կյանքը դրել էր երկրի վրա: Եվ կմեռներ քաջ անվան, իր իսկական տերերի, երկրի բնակիչների, քրիստոնեական հավատի, աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի, եկեղեցիների, նրանց նվիրված սպասների, Քրիստոսի վկայարանների, աստծու ուխտի բույրերի և եղբայրների, մերձավոր տոհմակիցների, մտերիմ բարեկամների համար: Զորավար Մուշեղը հերոսական պատերազմով իր կյանքը դրել էր երկրի համար, իր կյանքը չէր խնայում, իր կյանքի բոլոր օրերում նա աշխատում էր իր իսկական Արշակունի տերերի համար:

**Գ ՚ ու խ ԻԱ**

**ՆԵՐՍԵՍ ՆՊՈՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՔԵ ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐՅ ԷՐ ԵՎ ԻՆՉ ԷՐ ԱՆՈՒՄ:**

Իսկ Հայոց Ներսես եպիսկոպոսապետը շինում էր Հայոց աշխարհի բոլոր ավերված տեղերը, խնամում<sup>165</sup> ու մխիթարում էր, դարմանում ու պահպանում էր բոլոր աղքատներին. բորոտների և աղքատների համար ապաստարաններ էր պատրաստում: Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերվածները

նորոգում, բոլոր խանգարված կարգերը վերականգնում էր և ուղղում: Շինում էր և հաստատում, խրատում էր և հանդիմանում, շատ հրաշքներ ու մեծամեծ սքանչելիքներ էր անում և շատ հիանալի բժշկություններ էր կատարում. օրհնքներով խստությամբ սաստում էր<sup>166</sup>. ում օրհնում էր, նա օրհնվում էր. ում անիծում էր, նա անիծվում էր: Հայոց իշխանության բոլոր սահմաններում նա շատացրեց (եկեղեցու) պաշտոնյաների թիվը, ամեն տեղ տեսուչ-եպիսկոպոսներ դրեց և միշտ ուշագիր հետևում էր իր տեսուչության ու իշխանության գործերին, քանի դեռ ապրում էր:

**Գ յ ու խ ԻԲ**

**ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ՔԵ ԻՆՉՊԵՄ ԼՅՎԱՍ ԷՐ ԴԵՎԵՐՈՎ ԵՎ ՔԵ ԻՆՉՊԵՄ ԷՐ ՎԱՐՎՈՒՄ:**

Իսկ Պապ թագավորը, երբ դեռ նոր ծնված երեխա էր, նրա անօրին Փառանձեմ մայրը նրան դեռին նվիրեց, ուստի և նա տղայությունից ի վեր լի էր դեկերով: Որովհետև նա միշտ դեկերի կամքն էր կատարում, ուստի և չէր կամենում բժշկվել, այլ միշտ իր անձը վարժեցնում էր դեկերով, և դեկերը կախարհությամբ երևում էին նրա վրա. և ամեն մարդ բաց աչքով տեսնում էր նրա վրա դեկերը: Որովհետև երբ մարդիկ ամեն օր գալիս էին թագավորին բարի լույս տալու, տեսնում էին, որ (դեկերը) օձերի կերպարանքով գուրս են գալիս Պապ թագավորի ծոցից և փաթաթվում նրա ուսերին: Բոլոր տեսնողները վախենում էին մոտ գալ, իսկ նա այդ մարդկանց պատասխանում էր և ասում, թե՛ «Մի՛ վախենաք, սրանք իմն են». և ամեն մարդ ամեն ժամանակ այսպիսի կերպարանքներ էր տեսնում նրա վրա:

Նրա մեջ բույն էին դրել մեծ քանակությամբ դեկեր ու միշտ երևում էին այն մարդկանց, որոնք գալիս էին թագավորին տեսնելու. բայց երբ Ներսես հայրապետը կամ Խաղ սուրբ եպիսկոպոսը մտնում էին թագավորի մոտ, դեկերը չքանում էին, աներևութանում: Եվ Պապ թագավորը շաղախված էր պզծությամբ. երբեմն ինքն էր էգ դառնում և իրեն հանձնում:

էր խառնակության, երբեմն ուրիշ արունների էգ դարձնելով, խառնակվում էր նրանց հետ, երբեմն էլ անասունների հետ էր խառնակվում: Եվ այսպես իր կյանքի բոլոր օրերում նա ենթարկված էր դևերին:

### Գ լ ու խ Ի Գ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՆԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐԸ ՄԻՇՏ ԹՇՆԱՄԻ ԷՐ  
ՊԱՊ ԲԱԳԱՎՈՐԻՆ՝ ՄԵՂՔԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ:

Իսկ Հայոց Ներսես եպիսկոպոսապետը միշտ դիմադրում էր Պապ թագավորին, նրան նախատում էր և հանդիմանում ծանր փաստացի հանդիմանություններով. նրա բազմաթիվ շար գործերի պատճառով թույլ չէր տալիս եկեղեցու շեմքը ոտք դնել և ոչ ներս մտնել: Միշտ նրան նախատում, հանդիմանում, խրատում էր, որ կորստաբեր գործերից հրաժարվի, ուղղվի. շարունակ նրա հետ խոսում էր, որ ապաշխարության գա: Նրա առաջն էր դնում ս. Գրքից վկայություններ վերջին դատաստանի հավիտենական պատիժներով, ահաբեկում էր նրան, որպեսզի զգաստանա և ուղղվի ու արդարության կարգերի և մաքուր գործերի հետևի:

Իսկ Պապ թագավորը ամենևին նրան չէր լսում, այլ դեռ հակառակվում էր նրան և հետը թշնամանում, նրա մահվանն էր սպասում ու ցանկանում էր նրան սպանել, բայց Հունաց թագավորի անհից նա չէր համարձակվում նույնիսկ նրան հայտնապես խոսքով անարգել կամ նրա դեմ խստություն բանեցնել, ուր մնաց սպանել: Հինց (Հայոց) աշխարհի ժողովուրդն էլ, գործերն էլ թույլ չէին տա այսպիսի բան անել մի մարդու, որից կախված էին Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, նրա արդար գործերի, մաքուր վարքի, խաղաղ առաջնորդության պատճառով, և նրա գործած հայտնի սքանչելի հրաշքների համար բոլորը նրա վրա նայում էին ինչպես երկնավոր հրեշտակի վրա: Եվ թագավորը ռխ էր պահում նրա դեմ, միջոց էր փնտրում նրան սպանելու, և հայտնապես այս բանն ասել անգամ չէր համարձակվում, այլապես գործերը իրեն կսպանեին: Որովհետև բոլոր մարդիկ ապավինել էին նրա

աղոթքին և նրան առհասարակ բոլորը սիրում էին՝ մեծերն ու փոքրերը, պատվականներն ու հասարակ մարդիկ, ազնվականներն ու շինականները:

### Գ լ ու խ Ի Դ

ՊԱՊ ԲԱԳԱՎՈՐԻ ԿՈՎՄԻՑ ՆԵՐՍԵՍ ՄԵՍ ՔԱՀԱՆԱՑԱՊԵՏԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԴԱ ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐՎԵՑ:

Իսկ Պապ թագավորը շարունակ թշնամի էր մեծ քահանայապետին՝ իր շար գործերի և մեղքերի հանդիմանության պատճառով, որովհետև ներսեսը՝ աստծու մարդը, միշտ նրան հանդիմանում էր: Նա չէր կամենում զգաստանալ, ուղղվել, չէր էլ կարող դիմանալ հանդիմանողի մշտական նախատինքներին, ուստի մտադրվեց աստծու մեծ քահանայապետ ներսեսին սպանել: Բայց որովհետև այս բանը հայտնապես անել անկարելի էր, ուստի կեղծավորաբար այնպես ձևացրեց, իբր թե ուղղվել է, և աղաչում էր աստծու քահանայապետին, որ իրեն ապաշխարեցնի: Նրան հրավիրեց իր ապարանքը՝ Եկեղյաց գավառի Խախ ավանդում, նրա համար ընթրիք պատրաստեց, աստծու մարդուն աղաչեց, որ արքունական զահուլքին բազմի, իբր թե սրանով նա իր շար գործերից կմաքրվի և այնուհետև կսկսի ապաշխարել:

Երբ նրան առաջին տեղում բազմեցրեց, ինքը՝ թագավորը, վրայի պատմուճանը հանած, մեջտեղում ոտքի կանգնած, ընթրիքի ժամանակ անապակ (գինի) էր մատուցում աստծո մարդուն՝ ներսեսին, և ըմպելիքի մեջ<sup>67</sup> մահվան դեղ խառնելով՝ նրան մատուցեց: Երբ (ս. ներսեսը) այդ բաժակը խմեց, իսկույն հասկացավ, խոսել սկսեց ու ասաց. «Օրհնյալ է մեր տեր աստվածը, որ ինձ արժանացրեց այս բաժակը խմելու և տիրոջ համար այս մահին հասնելու, որին ցանկանում էի մանկությունից ի վեր: Արգ՝ այս փրկության բաժակը կընդունեմ և տիրոջ անունը կկանչեմ, որպեսզի ես էլ արժանանամ հասնել և մասն ստանալ սրբերի ժառանգությունից լույսի մեջ: Բայց թեզ, ո՛վ թագավոր, վայել էր իբրև թագավորի բացահայտ հրաման տալ ինձ սպանելու. ո՛վ պետք է

քեզ արգելել, կամ ո՞վ պետք է ձեռքդ բռներ ու ետ կանգնեց-  
ներ այդ գործից, որ դու կամենում էիր գործել: Բայց դու,  
տե՛ր, ներիր սրանց այս գործը, որ իմ դեմ գործեցին, և ըն-  
դունիր ծառայիդ հոգին, որ դու հանգիստ ես պարգևում հոգ-  
նած աշխատածներին և կատարում ես ամեն բարութունս»:

Այս և սրա նման ուրիշ բաներ էլ խոսելով՝ վեր կացավ  
գնաց իր կացարանը: Նրա հետ արքունական սենյակից դուրս  
եկան և գնացին Հայոց բոլոր մեծամեծ նախարարները ու Հա-  
յոց Մուշեղ սպարապետը և Հայր մարդպետը ու առհասարակ  
այն բոլորը, որոնք այնտեղ էին, նրա հետ նրա կացարա-  
նը մտան: Երբ իր կացարանը հասավ, պարեգտը բացեց  
և ցույց տվեց սրտի վրա մի տեղ, որ կապտել էր մի բլիթի  
մեծությամբ: Մեծամեծ նախարարները նրան թյուրակե՛ն<sup>168</sup> և  
գեղթափներ են ծառուցում՝ նրան փրկելու համար. բայց նա  
չընդունեց, մերժեց ու ասաց. «Ինձ համար մեծ բարիք եղավ  
այս, որ ինձ վիճակվեց մեռնել Քրիստոսի պատվիրաններին  
հավատարիմ մնալու համար: Դուք ինքներդ գիտեք, որ ինչ  
ձեզ հետ խոսում էի, հրապարակով էի խոսում. պետք է  
որ ես էլ ձեր ձեռքով հրապարակով մեռնեի, որին տենչում  
էի: Բայց ինձ հաջող վիճակ դուրս եկավ (աստծու) ընտրյալ-  
ների հետ, և իմ ժառանգութունը հաճելի է ինձ: Օրհնում եմ  
իմ տիրոջը, որ ինձ հասցրեց ժառանգության այս վիճակին  
և մեծապես ուրախ եմ, որ շուտով կբաժանվեմ ու կհեռանամ  
այս անօրեն և ամբարիշտ աշխարհից»:

Ուրիշ շատ բան էլ  
խոսեց նրանց հետ, զգուշացրեց նրանց, բոլորին աղաչեց՝  
զգուշ լինել իրենց անձերի նկատմամբ և տիրոջ պատվի-  
րանները պահել:

Այնուհետև արյունն սկսեց գունդ-գունդ դուրս գալ և բե-  
րանից հոսել մոտ երկու ժամ: Սրանից հետո նա վեր կացավ,  
ծունկ չոքեց և խնդրում էր թողութուն շնորհել իրեն սպանո-  
ղին: Սրանից հետո աղոթքում հիշում էր բոլոր մարդկանց,  
մերձավորներին և հեռավորներին, անարգանքներն ու պատվա-  
վորներին, անգամ նրանց, որոնց բոլորովին չէր ճանաչում  
Աղոթքը վերջացնելուց հետո ձեռքերն ու աչքերը երկինք  
բարձրացնելով ասաց. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին»:  
Այս ասելով հոգին ավանդեց:

Եվ աստժու մարդու՝ սուրբ ներսեսի, մարմինը վերցրին  
եկեղեցու սպասավորները և Փալատոս եպիսկոպոսը, պաշ-  
տոնյանների գլխավոր Տրդատը<sup>169</sup> և Հայոց Մուշեղ սպարա-  
պետը ու Հայր մարդպետը և արքունական բանակի ամբողջ  
ազնվականների գունդը: Մարմինը վերցրին Խախ ավանից,  
որտեղ սպանութունը կատարվեց, և տարան իր գյուղը՝  
Թիլ ավանը: Սրբին հուղարկավորեցին սաղմոսներով, օրհնու-  
թյուններով, վառված կանթեղներով, հանդիսավոր պաշտա-  
մունքով և շատ հիշատակութուններով: Բայց մինչ սրբի  
մարմինը դեռ չէր թաղված, ինքը՝ Պապ թագավորը, եկավ,  
մարմինը պատեց և մարտիրոսական դամբարանում թաղեց:  
Նա անմեղ և անգետ էր ձևանում, իբր թե ինքը չի գործել այդ  
գործը:

### Գ յ ու խ Ի Ե

ԱՅՆ ՏԵՍԻԼԵԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՎԱՑ ԵԱՂԻՏԱ ԵՎ ԵՊԻՓԱՆ ՍՈՒՐԲ  
ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ, ՄԻՆՉ ՆՐԱՆՔ ՆՍՏԱՍ ԷԻՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ:

Երկու անապատական կրոնավորներ կային, որոնք նըս-  
տում էին լեռներում, մեկի անունը Շաղիտա էր, որ ազգով  
ասորի էր և նստում էր Առյուծ լեռան վրա, մյուսի անունը  
Եպիփան էր, որ ազգով հույն էր և նստում էր Մեծ լեռան  
վրա, աստվածների (մեհայանների) տեղում, որ կոչվում է  
Անահիտի<sup>170</sup> աթոռ: Սրանք երկուսն էլ աշակերտ էին եղել  
սուրբ Մեծ Դանիելին, որին վերջ հիշեցինք: Արդ՝ երբ սրանք  
երկուսը նստած էին այն ժամին, երբ սուրբ ներսեսը մե-  
ռավ, նրանցից յուրաքանչյուրն իր լեռից բաց աչքով ցերեկ  
ժամանակ տեսնում է, որ սուրբ ներսեսը կարծես հափըշ-  
տակվում է ամպերի մեջ. որովհետև հրեշտակները նրան վեր  
էին տանում և գունդ-գունդ գնում էին նրա առաջ: Անապա-  
տականները երբ այս տեսիլը տեսան, զարմացան այս տե-  
սիլքի վրա: Բայց Շաղիտան, որ Առյուծ լեռան վրա էր նըս-  
տում, հմուտ մարդ լինելով հասկացավ, թե սուրբ ներսեսը  
վախճանվել է, և ինքը տեսնում է նրա հոգին: Իսկ Եպիփանը  
այնպես հասկացավ, թե սուրբ ներսեսը հենց մարմնով հա-  
փըշտակվել է երկինք: Ապա այս երկուսը իրենց լեռներից իջ-

նելով փութով ու արագ հասան մինչև Եկեղյաց գավառը, հարցուփորձ արին, իմացան, թե սուրբ Ներսես հայրապետը վախճանվել է, և եկան մինչև Քիլ գյուղը ու տեսան այն տեղը, ուր դրված էր նա: Այստեղ այս հավատարիմ մարդիկ իրար հանդիպելով՝ ժողովրդի ներկայությամբ պատմում էին իրենց տեսածները: Բայց այն մարդիկ հրեշտակային վարք ունեին, սնվել ու ապրել էին անապատում, կարող էին նաև մեծամեծ հրաշքներ գործել, և ամենքին հայտնի ու ծանոթ էին նրանց գործերը:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Զ

ՍՈՒՐԲ ԵՎԻՍԱՅԻ ՄԱՍԻՆ:

Այս Շաղիտան սուրբ մարդ էր. աշակերտել էր Մեծ Գանիելին. մանկությունից ի վեր անապատում էր սնվել և անապատականների հետ խոտաճարակ էր եղել: Սուրբ Ներսեսի վախճանվելուց հետո գնաց Կորդուք գավառը, հրաշքներ ու սքանչելիքներ էր կատարում, բնակվում էր առյուծների մեջ, և ավելի քան քսան առյուծ շարունակ շրջում էին նրա հետ: Պատահում էր, որ երբ գազանների մի տեղը ցավում էր, գալիս շրջապատում էին նրան, քաշքշում էին նրան և նշաններով հասկացնում էին, որ բժշկի: Մի անգամ մի մեծ առյուծի թաթը եղեգ էր խրվել. առյուծը եկավ սուրբ Շաղիտայի մոտ, նրա նստած լեռը, և մարդու նման թաթը բարձրացնելով՝ ցույց տվեց վերքը ու նշանացի խնդրում էր իրեն բժշկել: Իսկ սուրբ Շաղիտան եղեգը քաշում հանում է, որ խրվել էր վերքի մեջ. թքում է վերքի վրա և իր գլխի թաշկինակով փաթաթում է առյուծի թաթն ու բժշկում է<sup>17</sup>:

Այսպես նա հազարավոր տեսակ-տեսակ հրաշքներ է անում, և գազաններն էին նրա կյանքի ընկերները, մինչ նա շրջում էր անապատում իր կյանքի ամբողջ ընթացքում: Երբ նա մի գետի էր մոտենում, կոշիկներով անցնում էր գետի ջրերի վրայով, և կոշիկները շէին թրջվում: Երբ նա մի գյուղ էր գալիս, իր հրաշքներով ու սքանչելիքներով շատ մոլորյալներ դարձի էր բերում, հիվանդներ էր բժշկում:

Նա հասակով ավելի ծեր էր, ամեն մարդ սպասում էր նրա մահվան, որպեսզի կարողանա մարմինը ձեռք բերել: Սուրբ Շաղիտան իմանալով, թե շատ մարդիկ սպասում են, որ իր մարմինը ձեռք բերեն, աստժուց խնդրեց, որ իր մարմինը ոչ ոքի ձեռքը չանցնի: Եվ օրերից մի օր, երբ նա ըստ սովորության անցնում է Կորդուքի գետով, մինչ ջրի մեջ կանգնած էր, հանկարծ ջրի տակ գնաց և ծածկվեց սուրբ Շաղիտան համաձայն իր խնդրանքի, ինչպես որ խնդրել էր: Գավառում մեծ գույժ ընկավ. մարդկանց մեծ բազմություն եկավ, մի տեղ կուտակվեց. գետի շուրջ կտրեցին, ուրիշ կողմ դարձրին և և փնտրում էին սուրբ Շաղիտայի մարմինը, բայց ոչ մի տեղում չկարողացան գտնել, որովհետև նա առաջուց այդպես էր խնդրել աստժուց, և իր խնդիրքը կատարվեց:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Է

ՍՈՒՐԲ ԵՎԻՍԱՅԻ ՄԱՍԻՆ:

Երանելի սուրբ Եպիփանը սուրբ Շաղիտայի ընկերն էր եղել և Մեծ Գանիելի աշակերտը. սա էլ մանկությունից ի վեր սնվել էր անապատում: Ներսես մեծ քահանայապետի մահից հետո եկավ բնակվեց Մեծ Մոփբում, Մամբրե կոչված տեղի անապատում, Մամուշեղ անունով գետի վրա: Նա բնակվում էր քարանձավներում և շարունակ լինում էր անապատի գազանների հետ. նրա մոտ հավաքվում էին արջեր և ինձեր: Նա միշտ լինում էր անապատում, մեծամեծ հրաշքներ և սքանչելիքներ էր գործում, շատ մոլորյալներ հեթանոսությունից բրիստոնեություն էր դարձնում, Մոփք երկիրը լցնում էր վանքերով, ուսուցիչներ էր նշանակում Մոփքի ամբողջ երկրում. սուրբ Եպիփանը Մոփքի երկրի համար լույս էր դառնում, մեծապես լուսավորում էր ժողովուրդը:

Անցնում է նաև Աղձնյաց երկիրը, նրանց էլ լուսավորում է. Աղձնյաց երկիրը լցնում է վանքերով և մի վկայարան է շինում Տիգրանակերտ քաղաքում, և սրբերի հիշատակն էին այնտեղ կատարում, որ նրանց բարեխոսությամբ աշխարհք Փրկվի, ինքն էլ հրաշքներ է կատարում և վերադառնում



գնում է իր կացարանը: Եվ Մամուշեղ գետի մոտ մի աղբյուր կար, որի ափունքից շատ ձուկ էր դուրս գալիս, և շատ մարգրիկ այդ ձկները բռնում, օգտվում էին: Մի անգամ երկու եղբայր ձկան պատճառով իրար հետ կովեցին, և մեկը մյուսին սպանեց: Երբ Եպիփանը այս բանը լսեց, ասաց. «Այսուհետև ոչ ոք այդ տեղից ձուկ չուտի»: Եվ իսկույն այդ տեղի ձուկը դառնացավ, լեղիի նման դառնացավ մինչև այսօր, և ոչ ոք մինչև օրս այդ տեղից ձուկ չի որսում: Ուրիշ անթիվ հրաշագործություններ էր կատարում:

Այդ գավառներում սուրբ Եպիփանը շատ ճշմարիտ կարգեր հաստատեց: Հետո նա առավ իր աշակերտներին՝ լեռնաբնակ անապատական մենակյաց մարդկանց, հինգ հարյուր հոգի, և ճանապարհ ընկավ Հունաց աշխարհը գնալուս Երբ գնում էին, ճանապարհին նրանց մի կին հանդիպեց: Երբ այդ կնոջ մոտով անցան, Եպիփանը սկսեց փորձել աշակերտներին և ասաց. «Վա՛հ, ի՛նչ գեղեցիկ ու վայելուչ կին է»: Նրա աշակերտներից մանկահասակ մեկն ասաց. «Քո գոված կնոջ մի աչքը կույր է»: Սուրբ Եպիփանն ասաց. «Իսկ դու ինչու՞ նրա վրա նայեցիր, որ երեսը տեսնես, քո մեջ ուրեմն շար խորհուրդներ կան»: Անմիջապես այդ մանուկին իրենից հեռացրեց: Ինքը եկավ մեծ ծովի մոտ, նավերով անցան հասան մի անապատ կղզի: Այդ կղզին լիքն էր օձերով, իժներ և բարբեր էին բնակվում շոյ կղզում, այլև բազմաթիվ կատաղի ու թունավոր գազաններ: Իսկ երբ սուրբ Եպիփանը եկավ հասավ այդ կղզին, գազանները այնտեղից քաշվեցին, կղզին թողին ու գնացին: Այնուհետև այն կղզում նրանց ոչ մի վնաս չպատահեց, խաղաղ ապրեցին այնտեղ: Այստեղ էլ ապրեց սուրբ Եպիփանը և նույն կղզում վախճանվեց:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

ՄԵՍԱՄԵՍ ՀՐԱՇԱԿՈՐԾՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՔ ԱՍՏՈՒՅ  
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄԱՐԵՆՈՍ ԵՊԻՓԱՆԻ ԳՆԱՎՈՒՅ ՉԵՏՈ:

Երբ սուրբ Եպիփանը հեռացավ Մոփաց գավառից, իր միայնանոցից, որ Մամրոն էր կոչվում, այնտեղ թողեց շատ եղբայրներ-միաբաններ, միահավան հավատացյալ քրիստոն-

յա կրոնավորներ, լեռնաբնակ միանձն ճգնավորներ և մի քահանայի նրանց վրա գլխավոր նշանակեց: Նրանց մեջ կալին ոմանք, որ մանկությունից ի վեր բնավ ուրիշ կերակուր չէին կերել, բացի լոկ բանջարեղենից և ջրից. գինու համն էլ չէին առել, թե ինչպես է:

Նրանց մեջ կար մի խստակրոն եղբայր, որ մութ կյանք էր վարում և բոլորովին հրաժարվում էր ճաշակել հարուստի հույսի կենարար բաժակից, այսինքն՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի արյունից: Որովհետև նա չէր կարող հավատալ, թե երբ ալք (գինին) սուրբ սեղան է բերվում և քահանայի ձեռքով քաշխվում, իսկապես աստուծու որդու արյունն է դառնում. այլ կարծում էր, թե լոկ գինի է մնում, այս պատճառով էլ հաճախ վիճում էր շատերի հետ: Օրերից մի օր, երբ գոհության պատարագի խորհուրդն էին կատարում այն վկայարանում, որ շինել էր սուրբ Եպիփանը, և սուրբ հացն ու գինին բերին, պատարագի սեղանի վրա դրին, որպեսզի արյուն դառնա, այդ անհավատ եղբայրն էլ այնտեղ էր գտնվում, վկայարանում. քահանան ելել կանգնել էր սեղանի առաջ և նախքան պատարագ մատուցելը՝ ձեռքերը բարձրացնում է սեղանի վրա և ասում.

«Զորությունների տեր աստված, որ բոլոր արարածները ոչնչից ստեղծեցիր, մարդուն հողից ստեղծեցիր կենդանի և անապական. մարդիկ քո պատվիրանը զանց արին և իրենց պատվիրանազանցության պատճառով մահվան դատապարտվեցին, և դու արդար դատաստանով նրանց դուրս արիր փափուկ դրախտից այս աշխարհը, որտեղից ստեղծել էիր, և նրանք դատապարտվեցին մահով մեռնելու: Բայց դու, բարերար աստված, նրանց ձեռքից շրջիր, այլ քո միածնի խնամքով ու շնորհով քո ստեղծածները երկրորդ ծնունդով նորոգեցիր և շատ կերպարանքներով այցելու եղար քո արարածներին: Մարգարեներ ուղարկեցիր, տեսակ-տեսակ գործություններ ու հրաշքներ գործեցիր քո սրբերի ձեռքով, որոնք քեզ հաճելի եղան, օրենքներ տվիր օգնության համար, հրեշտակներ ուղարկեցիր վերակացության համար: Իսկ երբ ժամանակների վերջը հասավ, մեզ հետ խոսեցիր քո միածին որդու միջոցով, որի հետ աշխարհն ստեղծեցիր, որ պատակեր է

քո փառքի, կերպարանք է քո էության, որ կրում է ամեն ինչ՝  
զորավոր խոսքով, որ ոչինչ չհափշտակեց հոր էական բնու-  
թյունից իր անձի պատվի համար, այլ հավիտենական աստ-  
ված երկրի վրա երևաց, մարդկանց հետ շրջեց, սուրբ կույսից  
մարմնացավ, ծառայի կերպարանք առավ և մեր տկարության  
նմանվեց, որպեսզի մեզ նմանակից դարձնի իր փառքին: Դու  
մեզ փրկեցիր ամեն տեսակ գայթակղությունից և մոլորությու-  
նից, աշխարհից վերացրիր որևէ անհույս թերահավատու-  
թյուն և քո բոլոր արարածներին շնորհեցիր հարության հույս  
ու հավատ և նմանություն քո պատկերին ու կերպարանքին, և  
բոլորին անհասարակ կյանք շնորհեցիր այն հավատով, որը  
զորացրիր մարդկանց մեջ: (Այս բոլորն արիր) ոչ թե մեր որևէ  
արդարության համար, որովհետև մենք աշխարհիս վրա ոչ մի  
բարիք չենք գործել, այլ քո ողորմության և գթության շնոր-  
հիվ, որ մեր վրա սփռեցիր, համարձակվում ենք խնդրել սըր-  
տագետիցդ, որ բննում ես մարդկանց սրտերն ու երիկամուն-  
քը, դու, տեր, որ բոլորի սրտերը գիտես, դու ճանաչում ես այս  
մարդու ճշմարիտ ճգնությունները, որ խստակյաց կյանք է  
վարում իր ճգնողական կյանքում, սակայն սրա մեջ պակա-  
սում է հավատը. արդ՝ տուր սրան հավատ մի մանանխի  
հատիկի շափ<sup>172</sup>, որպեսզի շկորչի: Ո՛վ քաջ հովիվ, որ դուրս  
եկար կորած ոչխարը փնտրելու, որ քո անձը դրիր քո խաշ-  
ների վրա, սրան ևս փրկի՛ր թերահավատությունից, որով  
բռնված է, որպեսզի թշնամին սրան չհափշտակի և այս քո  
ստեղծածը, որ քո կերպարանքի նմանությունն է կրում, հա-  
վիտենական կորստի չմատնվի»:

Այս աղոթքն արեց քահանան պատարագը մատուցելուց  
առաջ, հետո սկսեց պատարագը և ամբողջ պատարագամա-  
տույցը վերջացրեց: Երբ նա ասաց. «Հայր մեր, որ յերկինս  
ես», ծունկ չոքեց և երկար աղոթք արեց: Եվ մինչ նա ծունկ  
չոքած աղոթք էր անում, թերահավատ եղբայրը ոտքի կանգ-  
նած՝ ներքևից՝ բեմից նայում էր դեպի սեղանը և բաց աչքե-  
րով մեծամեծ հրաշքներ սկսեց տեսնել: Նա տեսնում էր Քրիս-  
տոսին, որ իջել էր սեղանի վրա, բացել էր կողքի վերքը, որ  
գեղարդով խոցելուց էր գոյացել, և կողքի վերքից արյունը  
կաթկթելով հոսում էր պատարագի բաժակի մեջ, որ դրված

էր սեղանի վրա: Թերահավատ կրոնավոր եղբայրը այս որ  
տեսավ, զարհուրեց ու դողաց. հուզված, շփոթված գետնին  
կործանվեց, բերանը կարկամած, ուժասպառ, շնչասպառ ու-  
շաթափ եղավ:

Իսկ քահանան վեր կենալով՝ սուրբ պատարագի խորհուր-  
դը վերջացրեց և երբ սուրբ օրենքը բեմից իջեցնում էր, տե-  
սավ այն եղբորը, որ ուշաթափ ընկած էր գետնին: Երբ սըր-  
բությունը տվեց ում որ պետք էր, ապա մնացորդը դարձյալ  
տարավ, սեղանի վրա դրեց և ներքև իջնելով բռնեց եղբորից,  
տեսավ, որ ուշագնաց ընկած է գետնի վրա: Զուր բերեց, բե-  
րանին սրսկեց. երբ նա վերջապես շունչ քաշեց և ուշքի եկավ,  
վեր կացավ ու պատմեց իր տեսած հրաշքները: Ապա քահա-  
նան կամեցավ սուրբ օրենքով նրան ճաշակել տալ, բայց նա  
հանձն չառավ, չհամաձայնվեց, որովհետև իրեն անարժան էր  
համարում: Այլ նա իր համար մի հոր փորեց և մեջը մըտ-  
նելով յոթ տարի ապաշխարեց իր թերահավատության մեղքը,  
և յոթ տարուց հետո համարեց, որ իր ապաշխարությունն  
արժանացել է (թողության), դուրս եկավ ուրիշների հետ  
միասին հաղորդվելու: Բայց էլի նույն հորն է իջնում բոլոր իր  
կյանքի օրերում և նույն հորումն էլ այդ եղբայրը վախճան-  
վեց: Ապա քահանան էլ վախճանվեց, և երկուսը միասին  
այն վկայարանի ներսը դրվեցին, Եպիփանի եղբայրանոցում,  
որտեղ այս հրաշքը երևաց:

## Գ Լ Ո Լ Խ Ի Թ

ՀՈՒՍԻԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՂԲԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏՈՂՄԻՑ ԷՐ, ԵՎ ՈՐԻՆ  
ՊԱՊ ՔԱԳԱՎՈՐԸ ՆԵՐՍԵՍԻ ՓՈԽԱՐԵՆ ՆՇԱՆԱԿԵՑ ԻՐ ԿԱՄՔՈՎ, ԱՌԱՆՑ  
ԿԵՍԱՐԻԱՏԻ ՄԵՇ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ, ԵՎ ԱՅՍ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅՆՈՒՂԵՑԵՎ  
ՀԱՅՈՑ ԿԱՓՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՌՆԱԳՐԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱԴԱՐԵՑ:

Ներսես հայրապետի մահից հետո Պապ թագավորը Հու-  
սիկ եպիսկոպոսին նշանակեց, որ Մանազկերտի Աղբիանոս  
եպիսկոպոսի տոհմից էր, և նրան հրամայեց հայրապետների  
տեղը բռնել ու իշխել իր սպանածի (Ներսեսի) փոխարեն, և  
նա փոխարինեց Ներսեսին:

Բայց Կեսարիայի եպիսկոպոսապետը լսեց, թե մեծ ներսեւ հայրապետին սպանեցին և նրա փոխարեն նշանակեցին Հուսիկին առանց իր հրամանի, հակառակ նախկին սովորության, որ Կեսարիայի հայրապետի մոտ էին տանում ձեռնադրության համար: Այս բանի պատճառով Կեսարիայի հայրապետը շատ զայրացավ: Կեսարիայի նահանգի եպիսկոպոսների սյունհորոսական<sup>173</sup> ժողով գումարվեց, որ ցատումնայից թուզթ գրեց (Հուսիկ) հայրապետին<sup>174</sup>: Նույնպես թուզթ գրեցին Պապ թագավորին և (Հայոց) կաթողիկոսների իշխանությունը լուծեցին (սահմանելով), որ ով որ Հայոց հայրապետ լինի, նա իրավունք ունենա թագավորի սեղանի հացը օրհնել, բայց իրավունք չունենա Հայաստանի համար եպիսկոպոսներ ձեռնադրել, ինչպես ի բն սովորություն էր: Այդ ժամանակից վերացավ Հայոց (կաթողիկոսների) իրավունքը եպիսկոպոսներ ձեռնադրելու, և այնուհետև Հայաստանի բոլոր գավառներից ու կողմերից, որոնք որ եպիսկոպոս էին լինելու, գնում էին Կեսարիա քաղաքը ու այնտեղ ձեռնադրվում էին եպիսկոպոս, որովհետև այդ ժամանակից Հայոց աշխարհից վերացավ այդ իրավունքը, և այնուհետև չէին համարձակվում եպիսկոպոսներ ձեռնադրել. բայց նա, որ եպիսկոպոսների մեջ ավագն էր, միայն վերև էր նստում և թագավորների սեղանն էր օրհնում: Իսկ սա (Հուսիկը) քրիստոնյա մարդ էր, բայց չէր համարձակվում հանդիմանել որևէ մեկին, որովհետև երկչու էր և համակերպվող, որովհետև միայն թագավորի կամքով ուներ իր պատիվը. և լուռ ու հանդարտ էր մնում իր կյանքի բոլոր օրերում:

**Գլուխ Լ**

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԿՈՒՄ ԷՆ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՆՐԱ ԿԱՐՈՅՔ ՔԱՇՈՒՄ:

Երբ Պապը սուրբ Ներսես հայրապետին սպանեց, այնուհետև ամեն մարդ խոր տրտմության մեջ բնկավ. Հայոց աշխարհի բոլոր մարդիկ միաբան խոսում էին և ասում. «Հայոց փառքը կորավ, աստծու արդարը մեր աշխարհից վերա-

ցավ»: Իշխաններն ու նախարարներն էլ ասում էին. «Այժմ գիտենք, որ մեր աշխարհը կորավ, որովհետև անմեղ տեղը արդար արյուն թափվեց, մանավանդ որ նա աստծու համար մեռավ»: Մուշեղ Հայոց սպարապետն էլ ասում է. «Աստծու սրբի արյունը անմեղ տեղը թափվեց. այսուհետև ես չեմ կարող թշնամու դեմ գնալ կամ մեկի դեմ նիզակ բանեցնել: Որովհետև գիտեմ, որ աստված մեզ ձեռքից թողեց, մենք լքված ենք և շնք կարողանա գլուխներս վեր բարձրացնել. ես գիտեմ, որ այսուհետև հաջողություն էլ չի լինելու Հայոց աշխարհի թշնամիների դեմ, որովհետև մեր հաղթությունը նրա աղոթքից էր, որ մեռավ, և նրա տոհմի»: Եվ Հայաստանի բոլոր սահմաններում ծայրեծայր սգում էին նրան ազնվականներն ու շինականները, թորգոմի տան բոլոր բնակիչները, առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ:

**Գլուխ ԼԱ**

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵՌՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՉԱՊ ՔԱՆՎՈՐԸ ՆԱԽԱՆՁԻՑ ՇԱՐՎԱՄ, ՏԱՉԱԼԵՑ ԱՅՆ ԲՈՒՐ ԿԱՐԿ ՈՒ ԿԱՆՈՒՐ, ՈՐ ՍԱՀՄԱՆԵԼ ԷՐ ՆԵՐՍԵՍԸ Խ ԿԵՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Իսկ Հայոց Պապ թագավորը թեպետև սպանեց Հայոց աշխարհի Ներսես հայրապետին, բայց նրա ժահով չգոհացավ, այլ ջանք էր անում խանգարել ու ոչնչացնել այն բոլոր ճշմարիտ կարգերը, որ Ներսեսը սահմանել էր եկեղեցում: Եվ սկսեց նախանձով վարվել նրա առաջուց դրած կանոնների հետ: Հայտնապես սկսեց հրաման տալ աշխարհին՝ ավերել որբանոցներն ու այրիների ապաստարանները, որ շինել էր Ներսեսը զանազան գավառներում. ավերել կուսանոցները զանազան գավառներում ու ավաններում, որ նույն Ներսեսն էր շինել ու պարիսպներով ամրացրել՝ առևանգումից<sup>175</sup> զգուշ պահպանության համար: Որովհետև երանելի Ներսեսը իր կենդանության ժամանակ շինել էր այս կուսանոցները բոլոր գավառներում, որպեսզի բոլոր հավատավոր կույսերն<sup>176</sup> այնտեղ հավաքվեն, պահեցողությամբ և աղոթքով զբաղվեն, իսկ նրանց ապրուստ տան երկիրը և նրանց ընտանիքները:

Պապ թագավորը հրամայում է այս կուսանոցներն ավերել և հրամայում է պիղծ խառնակութեան մատնել հավատավոր կույսերին:

Գարձյալ նույն ներսեսը հիվանդանոցներ էր հիմնել բոլոր կողմերում, սահմանել էր նրանց համար ուսեստ ու դարման, և հավատարիմ մարդիկ էր նշանակել հիվանդանոցներին ու աղքատներին տեսուչ, հանձնել էր այնպիսի մարդկանց, որոնք աստուծու երկյուղն ունեին և Քրիստոսի գալըստյան ու հավիտենական դատաստանին էին սպասում: Թագավորն այս վերակացուներին դուրս է անում իրենց պաշտոններից և հրամայում է հիմնարկությունները ավերել, ոչնչացնել: Նա չքավորների ու աղքատների վրա նշանակված տեսուչ-վերակացուներին հալածում է և իր իշխանության տակ եղած ամբողջ երկրին հրաման է տալիս. «Աղքատները թող դուրս գան մուրան, ոչ ոք չհամարձակվի նրանց այնտեղ որևէ բան տանել. թող նրանք շրջեն, խնդրեն, աղաչեն, ապա թե մի ողորմություն ստանան»: Պտղիի և տանորդների կարգն<sup>177</sup> էլ, որ վաղուց ի վեր սովորություն էր դարձած եկեղեցուն տալ, դրա վերաբերմամբ էլ ամբողջ երկրում հրաման հանեց, որ ոչ ոք չտա:

Ներսես հայրապետի օրերում նրա ահից ոչ ոք չէր համարձակվում Հայոց աշխարհում մեկի կինը խել և թողնել իր կին ամուսինը, որ առել էր քողով և հարսանիքի պսակով ու օրհնություն, և ուրիշ կին առնել չէր համարձակվում: Եթե հանկարծ մեկը մեռնում էր, ոչ ոք չէր համարձակվում եկեղեցու կանոնից դուրս անհուսություն մեռելի վրա լալ, կոծ ու սուգ անել, ողբեր ասել մեռելի վրա, այլ լոկ արտասուքով, պատշաճ սաղմոսներով և օրհնություններով, կանթեղներով ու վառած մոմերով հուղարկավորում էին մեռելը: Իսկ նրա մահից հետո ամեն մարդ թագավորից հրաման ստացավ համարձակորեն թողնել իր ամուսին կնոջը. կար մարդ, որ տասը կին էր փոխում, և առհասարակ բոլորն անօրինություն մեջ ընկան: Գարձյալ՝ ներսեսի մահից հետո, երբ մեռելներին ողբում էին, փողերով, փանդիռներով ու վիններով<sup>178</sup> կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառտած, կին և տղամարդ դեմառդեմ ճիվղալկան պարեր

խաղալով, ծափ զարկելով հուղարկավորում էին մեռելներին, իսկ ներսեսի տարիներին Հայաստանի բոլոր սահմաններում չէր կարելի տեսնել աղքատներին մուրալիս. այլ այն ժամանակ նրանց հանգստի տեղերը, այսինքն՝ ուրկանոցները բոլոր մարդիկ նրանց համար տանում էին այն ամենը, ինչ որ պետք էր նրանց: Հենց այնտեղ նրանք առանց կարիքի ու լիացած էին: Իսկ քահանայապետի մահից հետո եթե որևէ մեկը աղքատներին հանգիստ էր տալիս, թագավորից մեծ պատիժներ էր կրում:

Ներսեսի օրերում Հայոց աշխարհում մեծապես պայծառացած էին եկեղեցիներում պաշտամունքի կարգերը. կային կարգ ու կանոնի ենթարկված բազմաթիվ սուրբ սպասավորներ: Նրա ժամանակ սուրբ վկաների հիշատակները Հայաստանի բոլոր տեղերում միշտ կատարվում էին պայծառությամբ, ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ: Հայր եպիսկոպոսների պատիվը Հայաստանի բոլոր գավառներում բարձր էր ըստ նրանց արժանավորության: Վանականների կարգերը շեն ու անշեն տեղերում առհասարակ ծաղկած էին: Այս բոլորը նրա մահից հետո ոչնչացան ու փչացան:

Ներսեսի քահանայապետության ժամանակ Հայաստանի բոլոր գավառներում, շեներում և գյուղերում առհասարակ քահանայապետի հրամանով շինված էին օտարանոցներ ու հիվանդանոցներ. և Հայոց աշխարհի բոլոր մարդիկ ողորմածությամբ սնունդ էին մատակարարում՝ հիշելով աղքատներին, նեղված-տառապածներին, օտարներին, հարստահարվածներին, օտար երկրում և օտարի տան ապրողներին, անցորդ հյուրերին: Նրանց վրա սուրբ ներսեսը վերակացուներ էր նշանակել և ուսեստ որոշել զանազան տեղերից: Իսկ նրա մահից հետո Պապ թագավորն այս ամենն ավերեց, եկեղեցու պատիվն անարգեց, ներսես հայրապետի սահմանած շատ կարգերն ու բարեկարգությունները տապալեց ու մոռացության մատնեց: Նրա այս աշխարհից գնալուց հետո շատ մարդիկ դարձան նախկին կռապաշտության. Հայաստանի շատ տեղերում կուռքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից քաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում,

էր ինչ որ կամենում էր. շատ արձաններ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին:

Բացի սրանցից, Պապ թագավորը եկեղեցուց կտրեց այն հողը, որ Գրիգոր մեծ քահանայապետի ժամանակ տվել էր Տրդատ թագավորը Հայոց ամբողջ աշխարհում եկեղեցու սպասավորութեան ու պաշտամունքի համար, որովհետև յոթ հողից հինգը կտրում էր հօգուտ արքունիքի և միայն երկու հողն էր թողնում<sup>179</sup>: Եվ հողերի հաշվով ամեն մի գյուղում երկու-երկու սպասավոր էր թողնում, մի քահանա և մի սարկավազ, իսկ մյուսներին, այսինքն քահանաների ու սարկավազների եղբայրներին ու որդիներին իր հպատակութեան էր ենթարկում: Նրան այնպես էր թվում, թե այսպես վարվում է ներսեմք կամքի հակառակ, ի հեճուկս նրա՝ նրա դեմ տածած իր թշնամութեան պատճառով. նա չէր մտածում, թե դրանով ինքն իրեն է կորցնում:

Եվ այս ժամանակ ամբողջ Հայաստան աշխարհում նվազում էին եկեղեցու պաշտամունքի և սպասավորութեան կարգերը:

### Պ Ի Ո Ւ Խ Լ Բ

ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԵՍ ԳԱՐՁՐԵՑ ՀՈՒՆԱՑ  
ԹԱԳԱՎՈՐԻՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՊԱՆՎԵՑ ՀՈՒՆԱՑ ՉՈՐՔԵՐԻՑ:

Եվ Պապ թագավորը իր միտքը ծոց ու սիրտը շուռ տվեց Հունաց թագավորից և կամեցավ սեր ու միաբանութիւն հաստատել Պարսից թագավորի հետ. սկսեց իրեն թիկունք դարձնել Պարսից թագավորին, նրա մոտ պատգամավորներ ուղարկեց միաբանութիւն հաստատելու համար: Հետո պատգամավորներ էր ուղարկում Հունաց թագավորի մոտ, թե ԵԿԵՍԱՐԻՅԱ հետ ուրիշ տասը քաղաքները մերն են եղել, ետ տուր. Ուղհա քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի եթե չես ուզում, որ խոռվութիւն ծագի, ետ տուր, հակառակ դեպքում մեծ պատերազմով կկռվենք: Թեպետ Մուշեղը և Հայոց բոլոր իշխանները շատ հորդորեցին թագավորին, որ Հունաց թագավորութեան հետ իր ուխտը չխզի, նրանց շլտեց և

հայտնի կերպով ցույց տվեց իր թշնամութիւնը Հունաց թագավորի դեմ:

Իսկ Հունաց իշխաններն ու զորքերը դեռ Հայոց աշխարհումն էին: Իշխաններից մեկի անունը Տերենտ էր, մյուսինը՝ Ադե: Եվ Հունաց թագավորը գաղտնի մի դեսպան ուղարկեց Հայաստանում եղած իր զորքերի իշխանների մոտ և հրաման տվեց Հայոց Պապ թագավորին սպանել: Երբ Հունաց իշխանները Հայաստանում այս հրամանն ստացան իրենց թագավորից, հարմար դեպքի էին սպասում, որ Հայոց Պապ թագավորին սպանեն: Պատահեց մի հարմար ժամանակ, երբ Հունաց զորավարները՝ Տերենտն ու Ադեն, իմացան, թե Հայոց Պապ թագավորը մենակ է, երբ Հայոց մեծամեծներն ու զորքը այնտեղ չէին, և Պապ թագավորի բանակը գտնվում էր Բագրևանդ գավառում՝ ինչ կողմած տեղում մի դաշտում, իսկ Հունաց զորքերի բանակը գտնվում էր Հայոց թագավորի բանակին մոտ, ապա Հունաց զորավարները փառավոր հացկերույթ սարքեցին և Հայոց մեծ թագավոր Պապին ընթրիքի հրավիրեցին մեծ պատովով՝ համաձայն նրա արժանավորութեան, ինչպես թագավոր մարդու հրավիրում են փառավոր հացկերույթի. ամեն բան կազմել պատրաստել էին:

Պապ թագավորը ընթրիքի գալով՝ մտավ ու բազմեց կերուխումի: Եվ երբ թագավորը մտնում է Հունաց Տերենտ զորավարի սենյակը, լեզունի ասպարակիր զինվորները, ձեռներին վահան, գոտիներում սակր, ներսը, սենյակի պատերի մոտ, շրջապատելով պահպանում էին. նույնպես և (սենյակից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զգեստ հագած (զինվորներ): Իսկ Պապ թագավորն իր խելքով այնպես էր կարծում, թե իրեն պատվելու համար են այդպես անում: Եվ մինչ ընթրիքի ժամանակ նա ուտում էր, սակրավոր զինվորները նրա ետևը կանգնած նրան ամեն կողմից պատում<sup>180</sup> էին: Երբ սկսեցին խմել, ուրախութեան առաջին բաժակը մատուցեցին Պապ թագավորին, և իսկույն հնչեցին թմբուկներն ու սրինգները, ընարներն ու փողերը իրենց ներդաշնակ ձայներով: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախութեան զինին բռնած էր մատներով ու նայում էր գուսանների

խմբին, մինչ ձախ ձեռքը արմունկին հենած՝ մատներում բռնած ունեք ոսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին, որ կապած ունեք աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմեր, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների զանազան խմբերին, Հունաց գործերին աչքի ակնարկով նշան է տրվում. և երկու սակրավոր զինվորներ, որ ետևից կանգնած էին սպասավորութան ոսկեպորտ վահաններով, հանկարծորեն միասին սակրերը բարձրացնելով զարկում են Պապ թագավորին, մեկը ուղիղ վիզն է կտրում, մյուս սակրավորը զարկում է աջ ձեռքի թաթին, որ դրված էր նրանի կոթի վրա, կտրում և դեն է նետում: Պապ թագավորը տեղնուտեղը ընկնում է բերանքսիվայր. թասով գինին, պարանոցից հոսող արյունը և նրա մարմինը միասին ընկնում են սեղանի վրա: Պապ թագավորն անմիջապես մեռնում է: Երբ սեղանատանը աղմուկ և շփոթություն ընկավ, Անձևացյաց գավառի տեր Գնեղը բազմած տեղից վեր կացավ, սուրը քաշեց և սպանեց զինվորներից մեկին, որը խփել էր թագավորին: Այն ժամանակ Հունաց Տերենտ զորավարը իր սուրը հանելով խփում է և Գնեղի գլխից սկավառակը կտրելով աչքերի վրա է շուռ տալիս: Եվ ուրիշ ոչ ոք ոչինչ չհանդգնեց ասել նրանց և ոչ մի խոսք:

#### Գ Լ Ո Ւ Խ Լ Գ

ՔԵ ԻՆՉ ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԻՆ ԶԵՏՈՑ ԶԱՅՈՑ ԻՇԽԱՆՆԵՐԸ  
ԵՎ ԻՆՉՊԵՍ ԼՈՒՌ ԿԱՑԻՆ ՄՆԱՑԻՆ:

Եվ Հայոց բոլոր մեծամեծ իշխանները հավաքվեցին միասին, և՛ Մուշեղ սպարապետը, և՛ Հայր մարդպետը, և՛ բոլոր իշխանները. «Ի՞նչ անենք, ի՞նչ գործենք,—ասում էին նրանք,—մեր թագավորի վրեժը պահանջե՞նք, թե ոչ»: Վերջը խորհրդի մեջ այս միտքն ընդունվեց. «Մենք չենք կարող հեթանոս պարսիկների ծառայության տակ մտնել և Հունաց թագավորին թշնամացնել, ոչ էլ երկուսին ևս թշնամացնել, որովհետև առանց որևէ մեկի թիկունքի չենք կարող ապրել»: Ապա խորհրդում այսպես որոշվեց. «Ինչ որ եղավ՝ եղավ, թող էլի Հունաց թագավորին ծառայենք, Հունաց թագավորի

իշխանությանը հնազանդվենք, թող Հունաց թագավորները մեզ հետ վարվեն, ինչպես ուզում են»: Այլևս շմտածեցին վրեժ լուծել կամ ուրիշ մի բան անել, այլ տեղներում լուռ նստեցին:

#### Գ Լ Ո Ւ Խ Լ Գ

ՊԱՊԻՑ ԶԵՏՈՑ ՎԱՐԱՋՂԱՏԻ ՔԱԳԱՎՈՐԵԼԸ ԶԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ:

Հայոց Պապ թագավորի մահից հետո Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավորեցրեց մի ոմն Վարազդատի, որ նույն Արշակունի տոհմից էր: Նա մեծ շքեղությամբ եկավ Հայոց աշխարհը և թագավորեց Հայոց աշխարհում: Նա տարիքով մանուկ էր, արիասիրտ, հզոր ձեռքերով, քաջ սրտով, բայց թեթևամիտ, երեսխալի նման խելքը պակաս, մանկամիտ: Բայց երբ նրան տեսան, Հայոց մեծամեծների ու նախարարների բոլոր տոհմերը նրա մոտ հավաքվեցին՝ ուրախանալով, որ նա իրենց վրա թագավորեց:

Իսկ Հայոց Մուշեղ սպարապետը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես սովոր էր երկիրը բարեկարգ պահել, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին: Եվ միշտ հոգս էր քաշում Հայոց աշխարհի թագավորության համար, թե ինչպես շեն պահի, և միշտ բարեմտությամբ աշխատում էր, որ թագավորությունը հաստատ մնա. նա խորհրդողակցում էր Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով՝ կայսեր հետ, թե հարկավոր է Հայոց աշխարհում քաղաքներ շինել ամեն մի գավառում, որտեղ մի-մի քաղաք<sup>181</sup>, որտեղ երկու-երկու, ամուր պարիսպներով շրջապատած, որպեսզի զորանիստ տեղեր դառնան ամբողջ Հայոց աշխարհում, մինչև Գանձակ սահմանագլուխը, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի միջև: (Նույնպես խորհուրդ էին անում) Հայոց բոլոր ազնվականներին զինավորել կայսերական ծախսով, այնպես էլ Հայոց աշխարհի գործերը, որպեսզի այս կերպով ամեն զգուշություն ձեռք առնեն իրենց թշնամիների՝ Պարսից գործերի դեմ: Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ

հանձն առավ այս բաները կատարել, որպեսզի այս բոլոր միջոցներով երկիրը հաստատ ու անշարժ կապվի իր հետ, և Պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհը գրավել:

### Գ յ ու խ Լ Է

ՔՆ ԽՉՊԵՍ ՎԱՐԱՉՊԱՏ ԹԱԿԱՎՈՐԸ ԶԱՐԱՄԻՏ ԵՎ ԱՆՄԻՏ ՄԱՐԿԱՆՑ  
ԽՈՍՔԵՐՈՒ ԼՍԵՆՈՎ՝ ՍՊԱՆՈՒՄ Է ՉԱՅՈՑ ՄԱՐԵՆՂ ԶՈՐԱՎԱՐԻՆ:

Բայց երբ Հայոց մեծ նախարարները տեսնում են, թե Հայոց Վարազդատ թագավորը դյուրահավատ մանուկ է, շարը բարուց զանազանել չգիտե, սկսեցին այնուհետև թագավորին թաղացնել իրենց ուզածի պես. իրենց խոսքերով էին նրան կառավարում, ինչպես իրենք կամենում էին: Նա ավելի լսում էր մանուկներին, որոնք տարիքով իրեն հասակակից էին, քան իմաստուն ծերերին, որոնք կարող էին նրան օգտակար խրատներ տալ:

Իսկ Բատը, որ Սահառունյաց տոհմի նահապետն էր, Վարազդատ թագավորի դայակն ու ուսուցիչը, միտք դրեց Մուշեղից հափշտակել զորավարության՝ սպարապետության գործը: Այս պատճառով նա սկսեց մատնություններ անել նրա մասին իր սանիկին՝ Վարազդատ թագավորին, ասելով, թե «Հնուց հետե, նախնյաց ժամանակներից ի վեր, Մամիկոնյաններն են կորստի մատնել ձեր Արշակունյաց տոհմը, որովհետև ի բնե ձեր հակառակորդներն են եղել. դրանք են միշտ կերել Հայոց աշխարհը, մանավանդ Մուշեղը, որ շար ու նենգավոր մարդ է: Որովհետև նա սիրել է ձեր թշնամիներին և ատել է ձեր սիրելիներին ու միշտ ձեզ հետ վարվել է նենգությամբ, երկդիմությամբ ու շարամտությամբ: Մի՞թե դա այն Մուշեղը չէ, որ Պապի թագավորության ժամանակ պարսիկների հետ պատերազմելիս մի քանի անգամ հնարավորություն ունեցավ Պարսից Շապուհ թագավորին սպանելու, բայց չսպանեց, այլ թշնամուն ազատ արձակեց. մի անգամ էլ ձեռք գցեց Շապուհ թագավորի կանանց և խնամքով ու հոգատարությամբ ժամվարներով ուղարկեց Շապուհի ետևից: Դա այն Մուշեղը չէ՞, որ Աղվանից Ուռնայր թագավորին ձեռք

գցեց, բայց սպանել չկամեցավ, այլ թշնամուն ազատ արձակեց: Դա այն Մուշեղը չէ՞, որի հրամանով և որի խորհրդով Հունաց զորավարները Պապ թագավորին սպանեցին, որովհետև դա էր, որ Հունաց թագավորին թշնամացրեց ու գրգռեց Պապ թագավորի դեմ, մինչև որ սպանել տվեց: Արդ՝ պետք է որ նա քո ձեռքից մեռնի, նա չպետք է ապրի: Եվ եթե դու չըշտապես, արքա, նա մտածել է այժմ Հայոց աշխարհը լցնել թաղաքներով, զորանիստներ դարձնել՝ Հունաց զորքերն այնտեղ բնակեցնելու համար: Եվ այնուհետև կամ Հունաց թագավորը քեզանից կխլի Հայոց թագավորությունը, կամ հենց այս Մուշեղը (քեզ) կսպանի և ինքը կթագավորի»: Եվ այսպիսի խոսքերով շարունակ գաղտնի գրգռում էին թագավորին, մինչև որ համաձայնվեց Հայոց զորավար-սպարապետին սպանել ըստ նրանց ցանկության:

Հետո խորհուրդ արին, թե ինչպե՞ս կարողանան նրան բռնել, որովհետև նրանից շատ էին վախենում: «Եթե գլխի ընկնի,— ասում էին,— մեծ պատերազմ կհարուցի, և ոչ ոք չի կարողանա նրա քաջությանը դեմ դնել. պետք է մի հնարք, խորամանկություն բանեցնել»: Եվ այսպես սպասում էին: Ապա մի օր Հայոց Վարազդատ թագավորը հրաման տվեց մեծ ընթրիք սարքել մեծ պատրաստությունք և հրամայեց ընթրիքին հրավիրել բոլոր ավագ, պատվավոր մարդկանց, մեծամեծներին և Մուշեղ զորավարին: Վարազդատը պատրաստեց ընտիր, ուժեղ, հզոր մարդիկ, որ պատրաստ լինեն գործին՝ հանկարծակի, հանպատրաստից, անսպասելի ժամին Մուշեղի վրա հարձակվելու: Հյուրերին շատ ուրախացնում է, շատ գինի է խմել տալիս և շատ զվարճացնում է: Վարազդատ թագավորը նախապես նշան էր տվել իր պատրաստած սպանողներին, թե՛ «Երբ կտեսնեք, որ Մուշեղ սպարապետը լավ հարբել է և հարբեցությունից խելքը կորցրել է, ես վեր կկենամ, իբր թե արտաքնոց գնալու համար, դուք այդ ժամանակ նրան շրջապատեցեք»: Բոլորը շափից դուրս խմեցին, գինուցան, բայց Վարազդատը գինի խմելուց զուշանում էր: Երբ նա նկատեց, թե հարբեցությունից խելքները կորցրել են, վեր կացավ, իբր թե ջուր թափելու գնալու համար, և սեղան բազմած բոլոր ավագները ոտքի կանգնեցին՝

նրան պատվելու համար: Եվ հանկարծ այն մարդիկ, որոնց հրաման էր տվել, տասներկու մարդ մի անգամից միասին ետևի կողմից Մուշեղին բռնեցին, վեց մարդ մի ձեռքից և վեց մարդ մյուս ձեռքից: Երբ թագավորը ոտքի կանգնեց, (Մուշեղը) նրան նայեց (հարցական կերպով), թե ինչի՞ց է այս, և թագավորը պատասխանեց ու ասաց. «Գնա՛ Պապ թագավորի մոտ, հարցրո՛ւ և կիմանաս, թե ինչի՞ց է»: Այս ասելով՝ թագավորը դեպի դուռն ուղղվեց ու դուրս եկավ: Եվ Մուշեղն ասաց. «Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու, ջրտինքս սլաքներով սրբելու վարձատրությունն ա՞յս եղավ: Բայց, այս մահը երանի թե ձիու վրա ինձ հասնեք... Այսքան միայն կարողացավ ասել, ավելի ոչինչ: Իսկույն Բատ Սահառունին՝ Վարազդատ թագավորի դայակը, ազդրից կախած նրանը հանելով՝ խրեց Մուշեղ զորավարի շնչափողը և իսկույն գլուխը կտրեց: Նրա մարմինը վերցրին ու տարան իր գյուղը:

## Գ Լ Ո Լ Խ Լ Զ

**ՄՈՒՇԵՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԿԱՆՆՑ ԱՆՄԻՑ ԿԱՐՄԻՔԻ ՄԱՍԻՆ:**

Երբ Մուշեղ սպարապետի մարմինը իր տունը, իր ընտանիքի մոտ տարան, տնեցիները նրա մահվանը չհավատացին, թեպետև տեսնում էին գլուխը մարմնից զատված: Նրանք ասում էին. «Դա անթիվ անգամ կոռիվների մեջ էր մտել, ոչ մի վերք չէր ստացել, ոչ մի նետ դրան չէր դիպել, և ոչ մի ուրիշ զենքով դա չէր խոցվել»: Իսկ ոմանք էլ հույս ունեին, թե նա կկենդանանա. ուստի գլուխը կարելով կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի տանիքը դրին՝ ասելով. «Որովհետև քաջ մարդ էր, առեղծները<sup>162</sup> կիջնեն ու սրան կկենդանացնեն»: Պահապան դրին և սպասում էին նրա հարությունը, մինչև որ մարմինը սկսեց նեխվել: Ապա աշտարակից վար իջեցրին, լացին ու թաղեցին, ինչպես կարգն էր:

## Գ Լ Ո Լ Խ Լ Է

**ՄԱՆՈՒՆԵԻ ԴԱՐՁԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՄՈՒՇԵՂԻ ՎԵՅԸ ՊԱՀԱՆՋԵԼԸ, ՎԱՐԱՋԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԶԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՑ ՀՆՈՒՑՆԵԼԸ ԵՎ ԶԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԻՐ ԶԵՌՔԸ ԳՐԱՎԵԼԸ:**

Իսկ Վարազդատ թագավորը զորավարության ու սպարապետության գործը հանձնեց Բատին՝ Սահառունյաց տոհմի նահապետին, որ իր դայակն էր և Մուշեղի քուռ բանսարկուն ու սպանողը: Նա Մուշեղի փոխարեն դարձավ ամբողջ Հայաստանի զորավար-սպարապետը: Իսկ Մամիկոնյան տոհմին նահապետ ու տանուտեր նշանակեց թագավորը Վաչեին՝ նույն Մամիկոնյան տոհմից:

Այս ժամանակ Պարսկաստանի գերությունից վերագարձան Մամիկոնյան տոհմից երկու եղբայր, որոնց գերի էր տարել Շապուհ թագավորը, մեկի անունը Մանուել, մյուսինը՝ Կոմս: Որովհետև այդ ժամանակները Պարսից թագավորը, որ Սասանյան ցեղից էր, պատերազմ էր ունեցել Քուշանաց մեծ թագավորի հետ, որ Արշակունի էր և նստում էր Բահլ քաղաքում: Եվ երբ Պարսից զորքերը գնում էին քուշաններին<sup>163</sup> դեմ պատերազմի, ապա Պարսից թագավորն իր զորքերի հետ ուղարկում է և այն մարդկանց, որոնց գերի էր բերել Հայաստանից. նրանց հետ գնում էր և այս Մանուելը իր Կոմս եղբոր հետ: Երբ կովի մեջ երկու կողմի գնդերն իրար խառնվեցին, Պարսից զորքը պարտություն կրեց Քուշանաց զորքից և շարաշար հարվածներ կրելով՝ փախուստի դիմեց: (Քուշանները) պարսիկներին հասնելով՝ նրանցից ոչ մեկին կենդանի չթողին, մինչև անգամ մի մարդ կենդանի չմնաց՝ լուր բերող. բայց Մանուելը՝ Արտաշեսի որդին, Մամիկոնյան տոհմից, և իր Կոմս եղբայրը մեծամեծ քաջություններ գործեցին՝ նույն ճակատամարտում կյանքներն ազատեցին, և Պարսից բոլոր զորքերից միայն այս երկուսը հետիոտն գալիս հասնում են Պարսից թագավորի մոտ՝ ողջ-առողջ, շատ քաջություններ կատարած:

Բայց Պարսից թագավորը շատ տրտմած էր իր զորքերի կոտորածի պատճառով. նա ավելի ևս շարացավ ու կատարեց, երբ տեսավ, որ իր բոլոր զորքերից միայն նրանք են ողջ



մնացել ու եկել: Նրանց վրա բարկանալով՝ անարգելով հա-  
լածեց իր երկրի սահմաններից, որ գնան իրենց երկիրը: Եվ  
նրանք ճանապարհ ընկան, երեսները դեպի իրենց աշխարհն  
ուղղած: Երկու եղբայրն էլ հետևակ էին, երկուսն էլ վիթխա-  
րի մեծությամբ, հաղթանդամ, հսկաների նման: Մինչ գալիս  
էին ճանապարհով, Մանուելը շէր կարողանում քայլել, որով-  
հետև ոտքերում ցավ ուներ: Ապա նրա Կոմս եղբայրը նրան  
շալակում է և (օրական) տասը փարսախս<sup>84</sup> շալակած բերում է  
այն ահագին, վիթխարի մարդուն, մինչև որ հասցնում է Հա-  
յոց աշխարհը: Երբ Մանուելը իր Կոմս եղբոր հետ եկավ հա-  
սավ Հայոց աշխարհը, և երբ նրանց տեսավ Վաչեն, որ նրա  
գալուց առաջ (Մամիկոնյանների) նահապետն էր, նրան  
հանձնեց իր իշխանական պատիվը, որ ստացել էր Վարազ-  
դատ թագավորից, որովհետև տոհմի մեջ ավագագույնը նա  
էր: Այսպիսով Մանուելն ստացավ իրենց տոհմի տանուտե-  
րության և նահապետության պատիվը, իսկ Վաչեն դարձավ  
նրա երկրորդը:

Իր տերության պատվին ու փառքին հասնելուց հետո  
Մանուելը նախ և առաջ, առանց Վարազդատ թագավորի  
հրամանի, հափշտակեց զորավարությունն ու սպարապետու-  
թյունը: Ինչ որ նրա նախնիները բուն սկզբից ունեին, և ինչ որ  
Վարազդատ թագավորը շնորհել էր իր դայակ Քատին, այդ  
իշխանությունը Մանուելը ետ խլեց իր համար: Իսկ այնու-  
հետև Հայոց Մանուել սպարապետը պատգամ է ուղարկում  
Վարազդատ թագավորին և ասում է. «Մենք ամբողջ տոհմով  
հին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք  
ձեզ՝ Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար,  
ապրել ու մեռել ենք ձեզ համար: Մեր բոլոր հին նախնիները  
պատերազմների մեջ ընկան ձեզ համար. Վասակը՝ Մուշեղի  
հայրը, կորավ Արշակ թագավորի համար, և մենք միշտ աշ-  
խատել ենք, շարշարվել ենք ձեր ցեղի թագավորության հա-  
մար: Արդ՝ փոխանակ մեզ վարձատրելու մեր ծառայություն-  
ների համար, դուք՝ Արշակունիներիդ, կոտորեցիք նրանց,  
որոնք թշնամիներից շնորհն ու կենդանի մնացին: Ահա իմ  
քաջ եղբայրը՝ Մուշեղը, որ մանկությունից ի վեր կյանքը  
ձեզ համար մաշեց, ձեր թշնամիներին կոտորեց ու վանեց, և

որին թշնամիները չկարողացան սպանել, դու բռնեցիր և սե-  
ղանին նստած տեղում խեղդեցիր: Բացի սրանից՝ դու Արշա-  
կունի էլ չես, այլ պոռնկորդի ես, այդ պատճառով էլ Արշա-  
կունիների աշխատավորներին շճանաչեցիր: Մենք մինչև ան-  
գամ ձեր ծառաները չենք, այլ ձեր ընկերներն ենք և ձեզանից  
ավելի բարձր, որովհետև մեր նախնիները ձենաց աշխարհի  
թագավորներ են եղել. և եղբայրների մեջ տեղի ունեցած տա-  
րածայնության պատճառով, որպեսզի մեծ արյունահեղու-  
թյուն չլինի, այնտեղից հեռացել ենք և խաղաղ հանգստու-  
թյուն գտնելու համար եկել դադարել ենք (այստեղ)<sup>85</sup>: Առա-  
ջին Արշակունի թագավորները գիտեին, թե ովքե՛ր ենք մենք  
և ո՛րտեղացի ենք. բայց դու, որովհետև Արշակունի չես, հե-  
ռացի՛ր այս աշխարհից և իմ ձեռքից մի՛ մեռնիր»:

Իսկ Վարազդատ թագավորը պատասխան-պատգամ է ու-  
ղարկում Մանուել զորավարին և ասում է. «Ես իսկական Ար-  
շակունի եմ<sup>86</sup>, որ իմ Արշակունի նախնիների թագը դրի և իմ  
նախորդների աշխարհին տիրեցի, և իմ հորեղբոր՝ Պապի  
վրեժն առա ջո շարագործ եղբորից՝ Մուշեղից: Բայց որ դու  
այս աշխարհից չես, այդ դու ինքդ ասացիր, թե մենք ձենաց  
աշխարհից ենք, այնտեղ ծագումով թագավոր ենք եղել և  
այստեղ եկել ենք իբրև պանդուխտներ: Ուրեմն մի՛ մեռնիր  
ջո եղբոր նման: Ես իմ բարերարությամբ քեզ արձակում եմ.  
Ե՛լ ու գնա՝ ձենաց աշխարհը, այնտեղ, ջո երկրում ապրի՛ր  
ու թագավորի՛ր: Իսկ եթե չես կամենա գնալ, իմ ձեռքից  
կմեռնես, ինչպես Մուշեղը մեռավ»:

Երբ շատ անգամ պատգամավորները գնացին եկան, և  
ավելի ու ավելի խիստ և վիրավորական խոսքեր իրար  
ուղարկեցին, դրանից հետո ժամ նշանակեցին պատերազմով  
իրար հանդիպելու: Նշանակված ժամին եկան հասան ու պա-  
տերազմ սկսեցին իրար հետ: Վարազդատ թագավորն առնում  
է իր զորքի բանակն ու գալիս հասնում է ճակատամարտի  
տեղը, լավ սպառազինված ու պատերազմի պատրաստ: Եվ  
Մանուել սպարապետը, ավելի մեծ պատրաստությամբ, իր  
գնդով նույն տեղն է հասնում, և Կարինի դաշտում երկու կող-  
մերի գնդերն ընդհարվում են:

Վարազդատ թագավորը և Մանուել սպարապետը, նիզակ-

ները ձեռքներին, դուրս են գալիս իրար դեմ ախոյաններ: Երբ վարագողատ թագավորը գալու ժամանակ աչքերը վեր բարձրացրեց և Մանուել սպարապետին տեսավ ու նկատեց նրա հասակի մեծութունը, անձի շքեղութունը, նրա ոտքից մինչև գլուխ երկաթապատ ամրակուռ և անխոցելի զինվածութունը, պինդ կազմվածքը, ուժեղ երիվարը, երիվարի անզրդվելի սպառազինութունը, իր մտքում նրան համեմատեց մի բարձր անմատույց լեռան հետ: Բայց մահը աչքն առնելով՝ հարձակվեց, որովհետև փրկության ուրիշ հույս չուներ: Բայց որովհետև վարագողատ թագավորը մանուկ մարդ էր և կռիվ շատ տեղյակ չէր, նրան այնպես տեսնելով, կարծեց, թե նրա զրահներին նիզակը չի կարող ազդել, ուստի իր ձեռքի ասքողը ուժով նիզակով Մանուել զորավարի բերանին խփեց: Իսկ Մանուելը բռնեց նիզակից, նրանից տեղը պոկելով իր թշուղն անցկացրեց, որի ժամանակ շատ ատամներ կորցրեց և նիզակը թագավորի ձեռքից խլեց:

Եվ վարագողատ թագավորը փախուստի դիմեց Մանուել զորավարի առաջ, իսկ Մանուելը նրան հասնելով նիզակի տեղը ձեռքին բռնած՝ նիզակի կոթով ծեծում է վարագողատ թագավորի կառափը և այսպես թշուղն է չորս ասպարեզ<sup>187</sup>:

Մանուելի որդիները՝ Հմայակն ու Արտաշեսը, իսկույն վրա հասան, նիզակները ձեռքներին, որ թագավորին սպանեն: Իսկ ինքը՝ Մանուելը, որդիների ետևից աղաղակում է. «Էհ՜, տիրասպան մի՛ լինեք»: Նրանք էլ իրենց հոր ձայնը լսելով, իսկույն արագ հեռացան թագավորից:

Այդ օրն արքայական գունդը պարտութուն կրեց Մանուելի գնդից: Ոչ սակավ սպանվածներ ընկած էին դաշտի վրա, շատերը խոցված, հաշմացած, վիրավորված, շատ նախարարներ կտորվեցին և շատերն էլ հալածվելով փախուստի դիմեցին:

Մինչ Մանուելի գունդը փախստականների ետևիցն էր ընկել, Մամիկոնյան տոհմից մի սեպուհ՝ Համազասպյան անունով, գալիս անցնում է ընկած դիակների և խոցված վիրավորների մոտով: Սրանց մեջ էր գտնվում և Գարեգինը՝ Ռոշտունյաց գավառի տերը, որ ընկած էր գետնին, բայց ողջ էր:

ն՛ խոցված և ոչ վնասված: Այս Գարեգինը առաջ Համազասպյանի փեսան էր, կին էր առել նրա Համազասպուհի բրոջը. երբ Պարսից Շապուհ թագավորը եկել էր Հայոց աշխարհը, նա թողել էր իր կինն ու փախել: Հետո Համազասպուհուն տարան Տոսպ գավառը, Վան քաղաքը, և այնտեղ պարսիկները նրան կախեցին բարձր աշտարակից, որ ժայռի վրա էր շինված. և այսպես կախած սպանեցին:

Նույն օրը, մինչ Գարեգինն ընկած էր մյուս ընկածների մեջ, նրա աներ Համազասպյանն<sup>188</sup> եկավ նրանց մոտով անցնելու: Գարեգինը ձայն տվեց, ասաց. «Տե՛ր Համազասպյան, ինձ էլ օգնիր, հրաման տուր ձի բերել ինձ, որ հեծնեմ»: Համազասպյանը հարցրեց. «Ո՞վ ես դու»: Նա ասաց. «Ես Գարեգին Ռշտունին եմ»: Համազասպյանը հրամայեց իր հետ եղած վահանավորներին, թե՛ «Իջե՛ք, վահաններդ վրան դրեք ու պահպանեցեք»: Ինքը գնաց, իսկ վահանավորները ձիերից իջան, վահանները նրա վրա դրին և կանգնել պահպանում էին, ինչպես հրամայվեց: Այս ժամանակ գալիս է Դանուն անունով մեկը, որ Մանուելի զորքի ասպարակիրների գնդի խմբապետն էր<sup>189</sup>, տեսավ, որ վահանավորներն իջել պահպանում էին Գարեգինին: «Ո՞վ է դա, և ինչո՞ւ դուք իջել կանգնել եք այդտեղ»,— հարցրեց նրանց: Նրանք ասացին. «Սա Գարեգինն է՝ Ռշտունյաց տերը, և մեզ Համազասպյանը հրամայեց իջնել ու սրան պահպանել»: Դանունը սաստիկ բարկացավ, զայրույթից կատաղած ասաց. «Համազասպյանը գուցե ուզում է նորից դրան իր փեսան դարձնել և իր Համազասպուհի բույրը դրան կնության տալ, սրա համար դրան խնայեց, հրամայեց պահպանել»: Եվ իսկույն ոտք նետեց, ձիուց իջավ, թուրը հանեց, մոտեցավ նրան, կտոր-կտոր կտրատեց, ցրեց, ըսպանեց:

Իսկ մյուս զորքերը դեռ գալիս էին կոտորածից. ձեռքակալած բռնած բերում էին շատերին. վարագողատ թագավորի մատնիչ Բատին՝ Մուշեղի սպանողին, իր որդու հետ բռնած բերին Մանուել սպարապետի մոտ. նույնպես և բոլոր նրանց, որոնք (Մուշեղի սպանության) զործին նպաստել էին, բռնեցին, նրա մոտ բերին: Եվ Մանուել սպարապետը շատ խիստ դատաստանով դատեց անօրեն Բատին: Բայց նախ

հրամայեց՝ նրա աշքի առաջ մորթել նրա որդուն, ամա և նրան գլխատել. մյուսներին էլ նույն կերպ կոտորեց: Իսկ վարագրատ թագավորին՝ հալածեցին Հայոց աշխարհի սահմաններից դուրս: Նա գնաց Հունաց աշխարհը, այնտեղ էլ ապրեց, այնտեղ էլ մեռավ:

Իսկ Հայոց զորավար-սպարապետ Մանուելը երկիրը նվաճեց, Հայոց բոլոր մեծամեծներին ու նախարարներին իր մոտ հավաքեց, ինքը նրանց առաջնորդ ու գլուխ եղավ և վարում էր իր իշխանությունը: Երկրին հրամաններ էր արձակում թագավորի փոխարեն և երկիրը շեն էր պահում: Եվ Պապ թագավորի կնոջը՝ Զարմանդուխտ տիկնոջը, ու նրա Արշակունի որդիներին իբրև թագավոր էր պահում և շրջեցնում էր պատերազմում: Մեծ իմաստությամբ և մեծ հաջողությամբ, խելացի կերպով առաջնորդում էր Հայոց աշխարհին, որքան ժամանակ որ ապրում էր: Արշակունի պատանիների անուններն էին՝ մեծինը՝ Արշակ, փոքրինը՝ Վաղարշակ: Մանուել սպարապետը նրանց սնուցում էր իբրև սաներ, իսկ նրանց Զարմանդուխտ մորը մեծապես պատվում էր իբրև տիկնոջ:

Քայց Մանուելը երբ տեսնում է, թե իր արածը հակառակ է Հունաց թագավորի հրամաններին, մտածում է, թե պետք է որևէ մեկին իրենց թիկունք ունենալ: ուստի տիկնոջ հետ խորհուրդ անելով որոշեցին իրենց թիկունք անել Պարսից՝ թագավորին:

### Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԱՅՈՑ ՄԱՆՈՒԵԼ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՉԱՅՈՑ ԱՄՐՈՂՁ ԵՐԿՐԻ ՉԻՑ ՉԵՌԸ ՄԵՆՆԵՑ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՍԿՋՔՈՒՄ ՉԱՅՈՑ ԱՇԽՈՐՀԻ ՄԱՐԶՊԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԲԵՐԵՑ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԻԲԵՆԻՆ ԵՎ ՄԵՍԱՄԵՑ ՊԱՐԳԵՎՆԵՐՈՎ ՄԵՍԱՐՎԵՑ ՆՐԱՆԻՑ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԵՑՈ ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՄԵՐՈՒՆՈՒ ԽՈՐԱՄԱՆԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՊՍԱՄՔՐՈՒԹՅՈՒՆ ՅԱԳԵՑ, ՈՒ ՊԱՏԵՐԱՋՐՆԵՐ ԱՌԱՋ ԵՎԱՆ:

Սրանից հետո Հայոց Զարմանդուխտ տիկինը և Մանուել սպարապետը Պարսից թագավորի մոտ ուղարկեցին Գարշույլ Մաղխազին շատ հայ նախարարների հետ, հրովարտականերով, քննախնդրով ու նվիրներով, (խոստանալով) նրան ձեռք

մեկնել, նրան հպատակվել և հավատարմությամբ նրան ծառայել ու Հայոց աշխարհը նրան տալ: Գարշույլը և նրա հետ եղողները հասան Պարսից թագավորի դուռը, մատուցեցին նրան տիկնոջ ու Հայոց սպարապետի հրովարտակաները և հաղորդեցին հնազանդությանը վերաբերող պատգամը: Պարսից թագավորը երբ նրանց տեսավ, մեծ ուրախությամբ նրանց ընդունեց, մեծ հարգանքով պատվեց և մեծ պարգևներ շնորհեց Գարշույլին:

Նրա հետ Հայոց աշխարհն է ուղարկում պարսիկ Սուրենին՝ իր նախարարներից մի երևելիի, և նրա հետ տասը հազար լավ սպառազինված ձիավոր զորք, որ Սուրենը Հայոց աշխարհը գա իբրև թիկունք Մանուել սպարապետին՝ Զարմանդուխտ տիկնոջը թշնամիներից պաշտպանելու համար: Եվ Պարսից թագավորը Սուրենի ձեռքով Զարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ ու պատմունճան և թագավորական վառ<sup>191</sup>, և երկու մանուկների՝ Արշակի ու Վաղարշակի համար թագեր: Նույնպես Մանուել սպարապետի համար ուղարկեց թագավորական պատմունճան, մի սամույր և գլխանոց՝ ոսկուց ու արծաթից շինված գարգամանակ, և գլխանոցի վրա գազաթում, արծիվի ետևից՝ թագի կապը՝ աշխարավանդ հանգույցը ու կրծքին պատվանշան, ինչպիսին կրում են թագավորները, նաև շիկակարմիր վրան, վրանի վրա արծիվի նշան, և մեծամեծ սրահակներ ու կապուտակ երկնազույն հովանոցներ: Նաև սեղանի ոսկի սպաս է ուղարկում Մանուել սպարապետին և անձնապես իր կողմից մեծ իրավունք է տալիս նրան Հայոց աշխարհի վրա:

Եվ Գարշույլ խորխոռունին եկավ Հայոց աշխարհը, հետք բերելով Սուրենին տասը հազար զորքով: Բերին պարգևները տիկնոջ և նրա երեխաների համար, ինչպես և Մանուել սպարապետի համար: Այսպես նաև բերել էին պարգևներ Հայոց ամեն մի ավազի, բոլոր տանուտերերի և մեծամեծների համար: Եվ երբ Զարմանդուխտ տիկինը ու Հայոց զորավար-սպարապետ Մանուելը տեսնում են Պարսից թագավորի ցույց տված այս սերն ու մեծարանքները, մեծ ուրախությամբ պատվում են Սուրենին: Հայոց աշխարհը հանձնեցին Սուրենի ձեռքը և հնազանդվում էին Պարսից թագավորի հրամաններ:

րին: Որոշում են Հայոց աշխարհից Պարսից թագավորին հարկ տալ, ընծաներ ու նվերներ<sup>192</sup>, նույնպես և Սուրեն մարզպանին նշանակեցին հասույթներ, ոռճիկ<sup>193</sup> և ապրուստի մթերքներ, այսպես և տասը հազարին ուտեստ, որքան պետք էր: Եվ սրտանց նրանք իրենց թիկունք ու տեր դարձրին Պարսից թագավորին ու նրա ծառայութան մեջ էին գտնվում: Պարսից թագավորի ղեսպանները հաճախակի գնում-գալիս էին Հայոց աշխարհը. սրանք էլ ցույց էին տալիս թագավորին իրենց մտերմութունն ու հավատարմությունը, և հաճախ թագավորը պարգևներ էր ուղարկում Զարմանդուխտ տիկնոջը ու Հայոց Մանուել զորավարին, և Մանուելը շատ մտերիմ ու սիրելի դարձավ Պարսից թագավորին, որ նրան շատ փառավորեց և բարձրացրեց:

Իսկ Մերութան Արծրունին երբ տեսնում է այս բոլոր փառքն ու պատիվները, որով Պարսից թագավորը Մանուելին շքեղացրեց, որովհետև եղբոր նման, որդու նման նրան պատվեց,— շատ նախանձեց Մանուելի փառքին, և մի հնարք էր փնտրում՝ նրան Պարսից թագավորի աչքից գցելու, որպեսզի նրա փոխարեն ինքը դառնա սիրելի: Եվ երբ նա ոչ մի հնարք չգտավ, նենգութան ոչ մի դուռ չգտավ պարսիկների մատնելու, ապա նա իր մտքում նենգութան շար միջոց մտածեց, իր մտադրությունը հաջողեցրեց կեղծավորության միջոցով: Նա հույս դրեց Մանուել զորավարի միամտության վրա, ուստի նախ սկսեց անձնվիրություն մար համակրանքը շահել, մտերմությամբ նրա խելքը առավ: Ապա իրեն հոգացող և խնամատար էր ցույց տալիս նրան: Հետո գալով՝ իր գլխից հնարած սուտ լուր է հաղորդում ու ասում. «Գիտցած եղիր, ո՛վ Մանուել, Պարսից թագավորից ղեսպան է եկել, քո վերաբերյալ հրաման են բերել Սուրենին, որ քեզ բռնեն ու կապեն, կա՛մ այստեղ սպանեն, կա՛մ ձեռք, ոտք ու պարանոց կապած մեծ զգուշությամբ տանեն Պարսից թագավորի մոտ: Հիմա դու գիտես. մտածի՛ր, թե ի՛նչ պիտի անես»: Մանուելը երբ այս լսեց, ապշած, զարմացած մնաց իր մտքում և ասաց. «Ես պարսիկների դեմ ոչ մի հանցանք չեմ գործել, ուրեմն ինչո՞ւ նա այդպիսի բան պետք է մեզ անի»: Իսկ Մերութանն ասում է Մանուելին. «Ես ճշգրտեցի ու հաստատեցի

որ այդ բանը ճիշտ է, քեզ շատ սիրելուց ու վրադ հոգալուց այս լուրը քեզ գաղտնի հաղորդեցի»: Երբ Մանուելը Մերութանի խոսքին հավատաց և համոզվեց, թե իր լսած բաներն ստույգ են, ապա շատ զորք կուտակեց իր մոտ. Հայոց Մանուել զորավարը գունդ կազմակերպեց, և մինչդեռ Սուրենը իր բանակով խաղաղ բնակվել էր, միամիտ, անկասկած, անհոգ, աննենգ խաղաղությամբ, մինչդեռ շվար ոչ մի նենգութուն ու դավաճանություն, ինչպես սուտ լուր էր տարածել շարագործ Մերութանը, Հայոց Մանուել զորավարը հանկարծակի անսպասելի կերպով հասնում հարձակվում է Սուրենի բանակի վրա և տասը հազար պարսիկներին ամբողջապես կոտորում է: Բայց Սուրեն մարզպանին մի ձիով բաց է թողնում, որ գնա. նրա արևը նրան պարգև է շնորհում: Սուրենը զարմացավ այս բանի վրա, թե ինչո՞ւ նա այդ արեց, և Մանուելը ասաց Սուրենին. «Քեզ իբրև բարեկամի սիրելով ազատում եմ, ողջ-առողջ գնա քո ճանապարհը, բայց ես այլևս պարսիկների թակարդի մեջ չեմ ընկնի»: Ինքը՝ Մանուելը, պատրաստում է զորքերը, գնդեր է կազմակերպում, որովհետև գիտեր, որ մեծ թշնամություն ու գրգռմունք առաջացրեց Պարսից թագավորի հետ: Այնուհետև Հայոց Մանուել զորավարը բոլոր գնդերով իբրև թագավոր շրջեցնում էր տիկին Զարմանդուխտին՝ Պապ թագավորի կնոջը՝ իբրև պետ, և ինքը երկրի շենություն համար պատերազմներ էր մղում ամեն կողմից թշնամիների ու իրենց շրջակա սահմանակիցների, մանավանդ Պարսից զորքերի դեմ իր կյանքի բոլոր օրերում: Իսկ Մերութանը նորից գնում է Պարսից թագավորի մոտ՝ Մանուելին ամբաստանելու համար:

## Գ Լ Ո Ւ Խ Լ Թ

ԳՈՒՄԱՆԻ ԵԱՊՈՒՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՈՒՂԱՐԿՎԵՑ ԷԱՅՆՈՐ ԷՅՑ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՈՐ ԶՈՐՔԵՐՈՎ ԷԱՆԳԵՐՁ  
ՍՊԱՆՎԵՑ ՄԱՆՈՒԵԼԻՑ:

Ապա Պարսից թագավորը Հայաստանի վրա ուղարկեց Գումանդ Եպուհին քառասունութ հազար զորքով, որպեսզի գա, երկիրն ավերի: Նրանք եկան հասան մինչև Հայաստանի

սահմանները Ատրպատականի կողմից: Երբ այս լսեց Հայոց Մանուել զորավարը, գումարեց իր զորքը, որքան կարողացավ ձեռք բերել այդ խռովահույզ ժամանակում, քսան հազար մարդ, և շտապեց զորքի դեմ: Պարսից բոլոր զորքերը կտտորում է սրով, Գումանդ Շապուհին էլ սպանում է և մեծ հաղթությամբ ետ է դառնում:

### Գ լ ու խ և

ՎԱՐԱՋԻ ՄԱՍԻՆ, ՔԵ ԻՆՉՊԵՍ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՊԱՐՍԻՑ ՔԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԱՆՈՒԵԼԻՑ ՍՊԱՆՎԵՑ ԱՌԱՋԻՆԻ ՆՄԱՆ:

Սրանից հետո Պարսից թագավորի ոմն Վարազ զորավարը Հայոց աշխարհն է գալիս տասնութ բյուրով՝ Մանուել սպարապետի և Հայոց բոլոր զեդերի հետ պատերազմելու համար: Այս Հայոց զորավար-սպարապետ Մանուելը կազմակերպում, պատրաստում է տասը հազար լավ սպառազինված հեծելազորք և գալիս, պատերազմում է Վարազի հետ: Զարդում, կտտորում է, բնաջինջ է անում նրանց, Վարազին է նույնպես սպանում է: մեծ կողոպուտ է վերցնում—զորքերի զենքերն ու զարդերը—և մեծ խաղաղությամբ ետ է դառնում:

### Գ լ ու խ ԽԱ

ՄԻՎԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ՔԱԳԱՎՈՐԸ ԴԱՐՁՅԱԼ ՈՒՂԱՐԿԵՑ ՄԵՑ ՋՈՐՔՈՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ՄԱՆՈՒԵԼԻ ՎՐԱ, ԵՎ ՄԱՆՈՒԵԼԻՑ ՍՊԱՆՎԵՑ ԱՌԱՋԻՆԵՐԻ ՆՄԱՆ:

Այս բոլորից հետո Պարսից թագավորը Հայոց աշխարհի վրա ուղարկեց Մոկանին բառասուն բյուրով: Նա իր զորքերի ամբողջ բազմությամբ եկավ հասավ Հայոց աշխարհը և գրավելով երկրի մի կողմը՝ բանակ դրեց Արտանդան<sup>194</sup> դաշտում: Մանուելը գիշերով հարձակվեց նրա բանակի վրա և հենց բանակատեղում բոլորին առհասարակ սրի քաշեց, Մոկանին էլ սպանեց: Շատ ավար խլեց և նրանցից ոչ մեկին կենդանի չթողեց:

### Գ լ ու խ ԽԲ

ՅՈՒՑԱՐԻ ՏԵՎՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Սրանից հետո յոթ տարի պարսիկներն այլևս չշարունակեցին Հայաստանի սահմանները մտնել, և երկիրը խաղաղվեց: Մանուել զորավարի մոտ հավաքվեցին երկրում ցրվածները, եկան մեկտեղացան ու անհոգ ապրում էին, և Հայոց Մանուել զորավարը նրանց առաջնորդում էր: Հետո եկան Մանուել զորավարի մոտ նաև Սյունյաց տոհմից մնացածները՝ երեք պատանի, որոնք պարսկական կտտորածից ազատվել էին, որոնցից մեկի անունն էր Բաբիկ, մյուսինը՝ Սամ, երրորդինը՝ Վաղինակ: Հայոց Մանուել զորավարը նրանց ընդունեց, հովանավոր դարձավ, նրանց իրենց երկիրն ուղարկեց. Բաբիկին նշանակեց այդ երկրի տեր, մյուս երկուսին էլ՝ յուրաքանչյուրին իր շափով, և Բաբիկը նրա նիզակակիցը դարձավ նրա ամբողջ կյանքի ընթացքում: Մուլնայծս բոլոր գավառներում Հայոց Մանուել սպարապետը նշանակում է նահապետներ և գավառների տերեր ու խաղաղությամբ կառավարում է բոլորին: Եվ ամբողջ Հայոց աշխարհը ապրում է խաղաղության մեջ Մանուելի հովանու տակ, որքան ժամանակ կենդանի էր նա: Բոլոր մարդիկ վայելքի մեջ էին. ուտում, խմում, ուրախանում էին Մանուելի տերության այն յոթ տարիներում, մինչև Հայոց աշխարհի բաժանումը և թագավորության պառակտումը:

### Գ լ ու խ ԽԳ

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՄԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՋՈՐՔԵՐՈՎ ԵԿԱՎ ՄԱՆՈՒԵԼԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՍՊԱՆՎԵՑ:

Իսկ Մերուժան Արթուրունին վաղուց ի վեր, գեռ Արշակ թագավորի ժամանակ, ապստամբվել էր Հայոց թագավորի դեմ, ինքնակամ ձեռք էր մեկնել Պարսից թագավորին, ընդունել էր մազդեզական կրոնը և ուրացել քրիստոնեական հավատը: Նա շատ անգամ առաջնորդ էր դարձել Պարսից զորքերին, մեծամեծ շարիքներ էր հասցրել Հայոց աշխարհին, և գեռ Պարսից

Թագավորի մոտ էր գտնվում: Ահա այս Մերուժանը Պարսից Թագավորին գրգռեց և նրանից շատ զորք առնելով եկավ հասավ Հայոց աշխարհը: Նա մեծապես պարծեցել էր Պարսից Թագավորի առաջ, որ կա՛մ Մանուելին բռնելով կապած կտանի Պարսից Թագավորի մոտ և կամ գլուխը կտրելով նրան կնեղկայացնի:

Նա Պարսից զորքի ամբողջ բազմությամբ գալիս հասնում է Հայոց աշխարհը, Պարսից զորքի բանակը թողնում է Կորճայք գավառում, իսկ ինքը իր սեփական գնդով, հավաքած հրոսակներով, անշատովում է Արյաց գնդից: Նա մտքում դրել էր՝ գաղտնի, անսպասելի կերպով հարձակվել Մանուելի վրա, իրեն անուն վաստակել: ջանք էր անում ինքը մենակ կատարել գործը, պատերազմի գործը անձամբ գլուխ բերել, որ իրեն պարծանք լինի: Այդ նպատակով նա այսպես խոսեց Արյաց գնդի զորավարների հետ. «Ծն նախ կգնամ, կլրտեսեմ, — ասաց, — հետո ձեզ կտանեմ նրանց վրա. այսպիսով հեշտ կլինի նրանց մեր բուռը գցել, բռնել»: Ինքն իր գունդը առնելով շարժվում, գալիս հասնում է Կոզ գավառը և ինքը այնտեղ կանգ առնելով՝ լրտեսներ է ուղարկում Մանուելի բանակը:

Լրտեսները գալիս, դիտում են Մանուելին, որի բանակը գտնվում էր Բագրևանդ գավառում, Բագավան ավանում, Զարեհավանդ քաղաքի ավերակների մոտ: Լրտեսները եկան, դիտեցին Մանուելի բանակը, իմացան՝ որտեղ է գտնվում բանակի ձիերի երամակը, և գնացին լուր տարան նրան: Նա մտքում դրեց բանակի երամակը խլել: Այս մտքով տարվելով նա ուրախ-ուրախ ու պարծենալով՝ ասում է իր զորքին. «Վաղը այս ժամին ես Մանուելին բռնած կապած ու տապալած կլինեմ և նրա աչքի առաջ նրա Վարդանուշ կնոջը խայտառակած»: Եվ չվեց գնաց, որ փութով կատարի, ինչ որ մտքում դրել էր:

Այդ տեղերում, որտեղով որ գնդի ճանապարհն էր ընկնում, կային լեռներ, որոնց տեղացիներն ասում էին Եղջուրներ: Մինչ Մերուժանն իր գնդով գալիս էր այդ ճանապարհով, նրան ուղևորներ պատահեցին: Մերուժանը նրանց հարցրեց. «Ո՞ր տեղով է ճանապարհը գնում դեպի Բագրևանդ»: Ուղևորները պատասխանեցին ու ասացին. «Եղջուրներով»: Մե-

րուժանը շատ շփոթվեց այս խոսքից ու տրտմեց, սակայն հրաման տվեց՝ ուղևորներին սաստիկ քաշել ծեծել<sup>195</sup>: Ինքն այդ ճանապարհն անցնելով՝ սկսեց հմայություններ անել, բախտիորձումի գարեր գցել, բայց այս կախարհություններից ոչ մեկը հաջող նշան ցույց չտվեց, որի վրա հույս էր դրել:

Ուստի սաստիկ նեղացած, լրտեսներն առաջ գցած, արշավում է երամակի գտնված տեղը, որպեսզի կարողանա ձիերը բռնել: Բայց երբ այդ տեղը հասան, ձիերի երամակ չգտան, որովհետև աստված այնպիսի հաջողութուն տվեց Հայոց գնդին, որ Մանուել սպարապետը Հայոց ամբողջ գնդին ժամ էր նշանակել որսի գնալու, այս պատճառով էլ ձիերի երամակը շենն էին բերել, և այն է պատրաստվում էին որսի ձի հեծնել, երբ գուժկան հասավ Հայոց Մանուել զորավարին, թե «Ճարդ տես, Մերուժան Արծրունին մեծ գնդով եկել հասել է քեզ վրա»:

Այս տեղեկություն համաձայն, Հայոց գնդի բոլոր զորքերը և Մանուել սպարապետը պատրաստվեցին, ուխտի գնացին Հովհաննեսի (Մկրտչի) սուրբ ոսկորներին, որ այն գյուղում էին, ուխտ դրին, ասածուն խնդրում էին, արդար դատավորին օգնության էին կանչում, որ իրենց այցելու և օգնական լինի սրբի բարեխոսությամբ: Այնտեղից դուրս գալով Արշակունի տիկնոջ, նրա երկու որդիների՝ Արշակի և Վաղարշակի հետ, նրանց հետ նաև իրենց կանանց՝ ապահովության համար ուղարկեցին Վարազ կոչված մեծ լեռը: Մանուելը հրաման է տալիս մանուկ Արտավազդին՝ Վաչեի որդուն, որ նա ևս կանանց հետ գնա, իսկ նա հակառակվում է, չի համաձայնվում: Նա դեռ մանկահասակ էր և, ըստ հայկական սովորության, ինչպես անում էին երեխաներին, սափրել էին մանուկ Արտավազդի գլուխը, թողնելով խոպոպիք և ծամ: Երբ նա շհամաձայնվեց կանանց հետ գնալ, Մանուելը մտրակը քաշեց, Արտավազդի մերկ գլուխն սկսեց ծեծել՝ սաստելով, որ պատերազմի չգնա մանկահասակ լինելու պատճառով: Նա առերես նրանց հետ գնաց, բայց հետո զինվեց, պատրաստվեց ու գնաց պատերազմի:

Երբ տիկնոջը ամբողջ տուն ու տեղով ամուր տեղ ուղարկեցին, ապա իրենք էլ սպառազինվեցին, կազմակերպվեցին,

պատերազմի համար մի տեղ խմբվեցին: (Մանուելը) նշանները բացած, ծածանվող դրոշակներով, դուրս է գալիս Ավան գյուղից դեպի արևմուտք, և հենց այդտեղ նրա առաջն է կենում Մերութանն իր գնդով, որ եկել էր նրանց վրա: Զարագործ, մեղավոր Մերութանը իր գնդն ու զարդը և իր սաղավարտի նշանը շատերին էր տվել, շատերին իր գնդում իր տեսքն էր տվել, իսկ ինքը իր նշանները չէր կրում: Մանուելը նրանց գունդը տեսնելով՝ իր գնդով առյուծի՝ վարագրի պես վրա է հարձակվում, խառնվում է նրանց գնդին, ուշադրութուն դարձնելով նրանց վրա, որոնք Մերութանի նշաններն էին կրում: Շատ ախոյանների գլուխներ կտրեցին, որոնք կրում էին Մերութանի նշանները, կարծելով, թե Մերութանին սպանեցին, բայց տեսնում էին, որ նա չէ:

Այն ժամանակ սպարապետ Մանուելը խոսեց իր նիզակակից Բաբիկի հետ և ասաց. «Տեսնո՞ւմ ես որքա՞ն մեզ խաբում է այդ կախարդ Մերութանը: Բայց առաջ, հաշտության ժամանակ, ես շատ անգամ նրա հետ միասին եմ եղել, ես նրա մի նշանը գիտեմ. երբ նա ձի է հեծնում, նրա ազդրը մինչև ծնկները հուպ չի գալիս, այլ ձիուց զատ է մնում: Ե՛կ, երկուսով այս նշանին ուշադիր լինենք, գուցե կարողանանք ճանաչել այն ետ եկած կախարդին»: Ապա երկուսով դիտելով տեսան ու ճանաչեցին Մերութանին այդ նշանով. նա իրեն կերպարանափոխել էր և իր նշանները չէր կրում: Այն ժամանակ Մանուելը ձայն տվեց, առաջ կանչեց Մերութանին ու ասաց. «Ա՛յ կախարդ, մինչև ե՞րբ պիտի խաբես մեզ և պատճառով ուրիշներին ջարդել տաս: Քեզ մենք վերջացես ճանաչեցինք, որ այդտեղ կանգնած ես, և մեր ձեռքից բեզ այսօր փրկութուն չկա, որովհետև աստված այսօր քո կատարած շարիքները քո գլխի վրա ածեց և բեզ մեր ձեռքը մատնեց»: Իսկ Մերութանը երբ այս լսեց, իսկույն նիզակը ձեռքին առաջ անցավ, Մանուելին ախոյան դուրս եկավ: Բայց որովհետև երկուսն էլ հաղթահասակ մարդիկ էին, նիզակներով իրար հարվածելիս երկուսն էլ ձիերից վայր ընկան: Անմիջապես Մանուելի նիզակակից Բաբիկը՝ Սյունյաց գավառի տերը, վրա է հասնում, նիզակով կողից վերից վար խփելով (Մերութանին) կարում է գետնին, և նա այլևս չի կարողա-

նում վեր կենալ: Իսկ Մանուել սպարապետին նրա ձիապան սպասավորները ձի են հեծցնում: Եվ Մերութանի գլուխը կտրեցին, ու բոլոր զորքերը երբ տեսան, թե Մերութանը մեռավ, փախուստի դիմեցին: Իսկ այս կողմից Մանուելի գունդը խրախուսվելով՝ հարձակվեց Մերութանի գնդի վրա, շարճեցին, կոտորեցին, կենդանի մարդ չթողին:

Բայց մանուկ Արտավազը Մանուելից գաղտնի գնացել էր պատերազմի. նա սպառազինված, Մանուելի գնդից ծածուկ, գնաց Եփրատ գետի ափը, այնտեղ Մերութանի գնդից անթիվ սպառազինված մարդ կոտորեց: Իսկ մեկը, որ Մերութանի նշանն էր կրում, երբ Արտավազին տեսավ, նրան արհամարհեց<sup>96</sup>, տեսնելով, որ մի կայտառ անմորուք պատանի է, գեղեցիկ դեմքով: Ապա նշանը նիզակին փաթաթելով՝ հարձակվեց նրա վրա: Իսկ նա ուժերը լարելով՝ նետով զարկեց նրան, և նետը մարմինը թափանցելով գետին ընկավ: Ապա նիզակն առնելով հարձակվեց փախստականների ետևից և սրի քաշեց Մերութանի զորքերը: Այդ օրը բոլորից ավելի Վաչեի որդի մանուկ Արտավազը կոտորած արեց ու ինքը (ետ դարձավ) մեծ անունով և լավ ավարով, որ թշնամու զորքերից կողոպուտ մնաց:

Բայց այդ օրը մեծ, անփոխարինելի վնաս է պատահում, որովհետև Վաչեի ձին, գլխի վրա դալով, նրան սպանում է: Նույնպես և Գարջույլ Մախաղին ձին փախցրեց ու սպանեց, որովհետև երկուսն էլ անվարժ ձիեր էին հեծել:

Իսկ Մանուելը գնում հասնում է տիկնոջ բանակը. իրենց հետ տանում են նաև Մերութանի գլուխը: Բայց Սամուելը՝ Վահանի որդին, Մանուելի հետ չպատահեց, որովհետև նա բանակն էր դարձել: Մանուելի բանակում եղած կանայք երբ Մերութանի գլուխը տեսան, մեծ ճիչ ու աղաղակ բարձրացրին, որովհետև կարծեցին, թե այն գլուխը Վահանի որդի Սամուելինն է, որովհետև այն երկուսը՝ Մերութանն ու Սամուելը, իրար նման էին: Բայց հետո տեսան Մերութանի գլուխը, որից ծամը կախված էր, իմացան, որ Սամուելինը չէ, այլ Մերութան Արծրունունը, բայց ասացին. «Այնուամենայնիվ, դա էլ մեր եղբայրն էր»<sup>97</sup>: Ապա բանակը բերին Արտավազի հոր՝ Վաչեի մարմինը, նույնպես և Գարջույլ Մախաղի մարմինը.

մեծ սուգ արին ու լացին նրանց վրա: Բերին նաև Մերութանի նշանը կրող մարդուն, որին Արտավազդն սպանել էր նետով: Բոլորը զարմանում էին նայելով, որովհետև նետն ամբողջ մարմնով թափանցել էր: Այս որ տեսան, (Արտավազդը) մահից փրկվեց<sup>198</sup>: Իսկ Պարսից այն զորքերը, որոնց Մերութանը թողել էր Կորճայք գավառում, երբ լսեցին, թե Մերութանն սպանվել է, և նրա հետ եղած գունդը ոչնչացել է, իրենք էլ փախան գնացին Պարսից աշխարհը, և Հայոց աշխարհում ընդհանուր խաղաղություն տիրեց:

### Փ Ղ Ո Ւ Խ Խ Կ

Թ Ե ԽՉՊԵՍ ՄԱՆՈՒԵԼ ՍՊԱՐԱՊԵՏԸ ԹԱԳԱՎՈՐԵՅՐԵՑ ՄԱՆՈՒԿ ԱՐՇԱԿԻՆ  
ԵՎ ՀԵՏՈ ԽՔՆ ԷԼ ԿԵՌԱՎ:

Այս բոլոր գործերը կատարելուց հետո Մանուել զորավար-սպարապետը Արշակունի տիկնոջ և երկու մանուկների՝ Արշակի ու Վաղարշակի հետ Հայոց ամբողջ բանակով, մեծամեծ ավագներով և նախարարներով գնում հասնում է Կարին գավառ: Բոլոր տանուտերերն էլ նրա հետ էին: Եվ Մանուել սպարապետը իր վարդանդուխտ դուստրը կնության տվեց Արշակունի մանուկ Արշակին ու իրեն փեսայացրեց. նաև հարսանիք է անում նրա եղբոր՝ Վաղարշակի համար և նրան կին է տալիս Բագրատունի ասպետի դուստրը Սպեր գավառից, որոնք (Բագրատունիները) ի բնե Արշակունյաց տոհմի թագավորների թագակապներն ու թագադիրներն էին եղել: Շատ փառավոր հարսանիք արին, որ մեծ ցնծություն և ուրախություն պատճառեց ամբողջ Հայոց աշխարհին: Այնուհետև դարձյալ մի տեղ հավաքելով Հայոց աշխարհին: Այնուհետև կանց՝ մանուկ Արշակին թագավորեցրեց Հայոց աշխարհի վրա և Վաղարշակին նրան երկրորդ նշանակեց: Սրանով էլ մեծ ուրախություն ու ցնծություն եղավ ամբողջ Հայոց աշխարհում:

Սրանից հետո Հայոց զորավար-սպարապետ Մանուելը հիվանդացավ մահառիթ հիվանդությամբ: Նա կանչեց իր Արտաշիր որդուն, նրան հանձնեց իր տանուտիրական եշխանությունն ու իր զորավար սպարապետությունը: Նրան պատվի-

րեց հնազանդ ու հպատակ լինել Արշակ թագավորին, հավատարիմ լինել, ջանալ և աշխատել, Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահ երկրի համար, ինչպես և թո քաջ նախնիները, որովհետև,— ասաց,— դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք, աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք: Մահից ամենևին մի՛ վախենաք, այլ հույս դրեք նրա վրա, որ ամեն ինչ ստեղծեց ու հաստատեց: Ձեզ հեռու պահեցեք նենգությունից, պղծությունից և շարությունից ու տեր աստծուն ծառայեցե՛ք մաքուր սրտով և հավատարմությամբ: Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն աստծու համար է, նրա եկեղեցիների և եկեղեցական ուխտի, այս աշխարհի բնիկ տերերի՝ Արշակունիների համար»: Սրանից հետո նա հրովարտակ գրեց Հունաց թագավորին և նրան հանձնեց Հայոց աշխարհն ու Արշակ թագավորին:

Սրանից հետո, երբ նա հիվանդ պառկած էր անկողնում, և բոլորը հավաքված էին նրա շուրջը, այնտեղ էին և՛ Արշակ թագավորը, և՛ Վարդանդուխտը՝ թագավորի կինը, և՛ Հայոց բոլոր ավագները, մեծամեծներն ու նախարարները, առհասարակ բոլոր երևելի մարդիկ, տղամարդ թե կին, ապա Մանուելը այս բոլորի առաջ բացեց իր բոլոր անդամները, մերկացավ և ցույց տվեց, որ նրա մարմնի վրա մի դրամի մեծության շափ ողջ տեղ չէր մնացել, այլ խոցված էր պատերազմների մեջ, հենց նրա առնի անդամի վրա ավելի քան հիսուն սպի<sup>199</sup> կար վերքերից. մինչև անգամ այս բանալով ցույց է տալիս ամենքին: Սկսեց լալ և ասել. «Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ, և ինչու՞ ես բախտ չունեցեմ պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի նման մեռնեի: Որքա՞ն լավ կլինեի, եթե պատերազմի մեջ մեռնեի երկրի համար, որպեսզի եկեղեցիները և աստու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին: Ո՛ւր է թե ինձ վիճակվեի մեռնել մեր երկրի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդիների համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես



շատ հանդուգն էի ինձ պահում, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»:

Այս և սրանից էլ ավելի շատ բաներ խոսեց Արշակ Թագավորի ու բոլորի առաջ: Նաև աղաչեց Արշակ Թագավորին ու սասաց. «Ծա ապրել եմ աստօժով իբրև շերմեռանդ քրիստոնյա, ինձ վրա անհուսովյամբ լաց ու կոծ չարքեք անկարգարար, հեթանոսների նման: Որովհետև շպետք է լաց լինել նրանց համար, որոնք հույս ունեն մյուս անգամ հարություն առնելու և կենդանանալու Քրիստոսի գալուստի ժամանակ, իսկ ես մինչև այժմ ապրել եմ հույսով և երկյուղածությամբ: Բայց դուք աստվածային պատվիրաններից մի՛ շեղվեք, արդարության հոգ տարեք և ավելի շատ ողորմության: Որովհետև ներսես մեծ հայրապետը մեզ շարունակ այս էր պատվիրում և ինքն էլ իբր կենդանության ժամանակ նույնն էր անում. ինչ որ ինքը գործում էր, նույնն անել սովորեցնում էր ուրիշներին. նա ողորմում էր աղքատներին, տնանկներին, գերիներին, անտիրականներին, օտարականներին, պանդուխտներին, և նա ասում էր. «Աստծու առաջ ավելի պատվական բան չկա, քան ողորմություն անելը կամ (աղքատներին) տուրք տալը»: Եվ մեռելների վրա լաց ու կոծ անելը ծանր մեղք էր համարում և իր ապրած ժամանակ այս բանը վերացրեց Հայոց աշխարհից. որովհետև նրա օրերով ոչ ոք չէր համարձակվում լաց ու կոծ անել, բայց նրա մահից հետո անմիտ մարդիկ համարձակվեցին այդ բանն անել: Բայց ինձ համար թող ոչ ոք կոծ չանի. մեղապարտ լինի, ով որ անի: Բայց ես իրավունք չունեմ իմ մահից հետո մեկին սաստել, որ չանի, ինչ որ ես չեմ կամենում, այլ ով որ ինձ սիրում է, իմ հիշատակի համար թող այսպես անի: Պատերազմի մեջ մահից մի՛ վախենաք, որի մեջ ես չմեռա, որովհետև առանց աստծու ոչինչ չի լինում»:

Եվ էլի այսպիսի շատ բաներ խոսեց. իր ձեռքով անչափ շատ գանձեր բաժանեց աղքատներին ու կարոտյալներին. իր ստացվածքից շատ մասեր տվեց եկեղեցիներին ու վկայարաններին, շատ գանձ էլ տվեց քահանայապետներին, քահանաներին ու պաշտոնյաներին և հետո ինքն էլ մեռավ:

Բայց երբ մեծ Մանուել սպարապետը մեռավ, ոչ ոք ուշա-

դրություն չդարձրեց նրա հրամանին կոծի նկատմամբ, այլ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ՝ ազնվականներ ու շինականներ առհասարակ կոծում, լալիս, ողբում էին դառնապես: Որովհետև ամեն մարդ նրան սգում էր ինչպես իր հորը՝ նրա քաղցրության, մարդասիրության, հեզության, հանդարտության, խնամատար բարերարության համար, ողբում էին բորենշան և աշխարհաշեն Մանուելին: Բոլորը բերանները բացած հառաչում էին նրա համար, կարոտագին մղկտում էին իրենց քաջ զորավարի, իրենց փրկչի, իրենց հաղթական, անվանի և բազմարդյուն (սպարապետի համար), որ հեռացավ ու գնաց, բաժանվեց իրենցից:

- ԺԻ. Վանանդ գավառի Զորթվաղ եպիսկոպոսի մասին:
- ԺԳ. Բասեն գավառի Տիրիկ և Մովսես եպիսկոպոսների մասին:
- ԺԴ. Ահարոն<sup>201</sup> եպիսկոպոսի մասին:
- ԺԵ. Ասպուրակի մասին, որ եպիսկոպոսների գլխավորն էր:
- ԺԶ. Սուրբ և առաքինի Գինդի մասին, որ այն ժամանակ Հայոց վանքերի արքաների ու միանակյաց անապատականների գլխավորն էր:

Վերջ բոլոր պատմությունների: Այս գիրքը կարգազգեցնելից նամառ առաք նամարված տուն տեղեկություն իմ մասին:

**ԲՈՒՉԱՆԴԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ**

**Ց Ա Ն Կ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Դ Պ Ր ՈՒ Թ Յ Ա Ն  
Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Մ Ա Տ Ց Ա Ն Ն Ե Ր Ի**

Ա. Հայոց աշխարհի՝ երկու մասի բաժանվելը, երբ Հայոց ազգի կեսի վրա թագավորեց Արշակը՝ Հունաց թագավորի հրամանով, և կեսի վրա թագավորեց Խոսրովը՝ Պարսից թագավորի հրամանով, թե ինչպե՛ս Հայոց աշխարհը երկու մասի բաժանելով՝ իրենց միջև սահման դրին, և ինչպե՛ս մյուս երկրներն ու գավառները բաժան-բաժան եղան և երկու կողմի սահմաններն էլ բոլոր կողմերից կրճատվեցին:

Բ. Այն եպիսկոպոսների մասին, որոնք այն ժամանակ երեւել էին երկրի այն մասում, որ բաժին ընկավ Խոսրովին: Նախ՝ Զավենի վարքի մասին:

Գ. Կրճեհացի Եահակի մասին, որ Զավենից հետո եպիսկոպոսների գլխավոր դարձավ:

Դ. Մանազկերտացի Ասպուրակեսի մասին, որ եպիսկոպոսների գլխավոր դարձավ Եահակից հետո:

Ե. Փավստոս և Զորթ եպիսկոպոսների մասին:

Զ. Փավստոս եպիսկոպոսի եղբոր՝ Առոստոմի մասին:

Է. Բասենացի Արտիթ եպիսկոպոսի մասին:

Ը. Հոհան եպիսկոպոսի, նրա վարքի, ազահության, անմտության, խենեշ խոսքերի, գործերի և այն հրաշքների մասին, որ աստծուց նրա նկատմամբ եղան մի անգամ, և թե ինչպե՛ս մեզավոր խնդրանք է անում ու իր ազահությունը (լիացնում է) թագավորներից ստանալով <sup>200</sup>:

Թ. Նույն Հոհանի մասին:

Ժ. Նույն Հոհանի մասին:

ԺԱ. Կիրակոս եպիսկոպոսի մասին:

# ԲՈՒՋԱՆԳԱՐԱՆ ԳՆՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՎԵՑԵՐՈՐԴ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Վ Ե Ր Չ

Առաջաբանության ավարտ. պատմության մեացորդներ  
սկզբից<sup>202</sup>

### Գ լ ու խ Ա

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԿԵԼ (ՀԱՅՈՑ ԱՋԳԻ ԿԵՍԻ ՎՐԱ)<sup>203</sup>  
ԱՐՇԱԿԻ ԲԱԳԱՎՈՐԵԼ՝ ՀՈՒՆԱՑ ԲԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԵՎ ԿԵՍԻ ՎՐԱ  
ԽՈՍՐՈՎԻ ԲԱԳԱՎՈՐԵԼ՝ ՊԱՐՍԻՑ ԲԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ, ԵՎ ՔԵ  
ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԵ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԿԵԼՈՎ՝ ԻՐԵՆՑ ՄԻՋԵՎ  
ՍԱՀՄԱՆ ԳՐԻՆ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՐԿՐԻ (ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐ) ԿՐՃԱՏՎԵՑԻՆ  
ԵՐԿՈՒՍԻ ԿՈՂՄԵՑ ԷԼ:

**Բ**այց Հայոց Մանուել զորավարի մահից հետո Արշակի  
Թագավորությունը՝ ի վիճակի չեղավ կարգավորվել  
երկրում, այլ Հայոց նախարարներից շատերը զատվեցին,  
գնացին Պարսից Թագավորի մոտ. Հայոց աշխարհը նրա ձեռ-  
քը մատնեցին և նրանից խնդրեցին Արշակունի Թագավոր: Նա  
մեծ ուրախությամբ հանձն առավ՝ իր կողմից իր խոսքով  
(Թագավոր նշանակել) Հայոց նույն Արշակունի Թագավորների  
տոհմից ու նրա միջոցով Հայոց աշխարհը իրեն գրավել: Այս  
նա գտավ նույն տոհմից մի մանուկ՝ Խոսրով անունով՝ նրա  
գլխին թագ կապեց և նրան կին տվեց իր Զրվանդուխտ քրոջը,  
իր բոլոր զորքերը նրա հետ դրեց ու Զիվ նվիրակին դաստիա-  
րակ նշանակեց Խոսրով Թագավորի համար: Այսպես նրանք  
ելան եկան Հայոց աշխարհը: Արշակ Թագավորը երբ նրանց  
տեսավ, տեղի տվեց, բաշվեց զնաց Հունաց սահմանները: Եվ  
թիկունք եղան Արշակ Թագավորին Հունաց Թագավորը, իսկ  
Խոսրովին՝ Պարսից Թագավորը<sup>204</sup>:

Այս Հունաց զորքերը եկան (Արշակ Թագավորին) օգնու-

Բայն, որ Եկեղյաց գավառում էր, իսկ Պարսից զորքը և  
Խոսրով Թագավորը Այրարատ գավառում էին: Այսպես Հունաց  
և Պարսից Թագավորների դեսպաններն ու պատգամավորները  
իրենց մեջ երթևեկություն ունեցան, և երկու Թագավորները՝  
Հունաց ու Պարսից, իրար հետ խորհուրդ արին և համաձայ-  
նություն եկան: Նրանք հարմար համարեցին նախ Հայոց աշ-  
խարհը երկու բաժին անել իրենց մեջ: Նրանք առում էին.  
«Մեր երկուսի միջև ընկած է այս հզոր և հարուստ Թագավո-  
րությունը. լավ կլինի, որ այս միջոցով թուլացնենք ու խան-  
գարենք այս Թագավորությունը. նախ երկու մասի բաժանենք  
այս երկու Արշակունի Թագավորներով, որոնց նշանակեցինք,  
հետո կաշխատենք նրանց էլ թուլացնել, աղքատացնել և մեր  
ժառանգության ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ  
բարձրացնելը:

Այսպես մտածելով՝ նրանք երկու մասի բաժանեցին եր-  
կիրը. Պարսից կողմի բաժինը մնաց Խոսրով Թագավորին,  
իսկ Հունաց կողմի բաժինը՝ Արշակ Թագավորին: Բայց նրան-  
ցից էլ շատ գավառներ այս ու այնտեղ խուզվեցին, կտրվե-  
ցին, և երկուսի երկրներից մի փոքր մասը մնաց երկու Թա-  
գավորներին: Բայց Հայոց Թագավորության հիմնական գա-  
վառները<sup>205</sup> երկու բաժիններում Հայոց երկու Արշակունի  
Թագավորները՝ Արշակն ու Խոսրովը, սահմաններով խաղաղու-  
թյամբ բաժանեցին, և Հայոց աշխարհի երկու մասերը հնա-  
զանգվում էին ամեն մեկը իր Թագավորին. բայց Խոսրովի  
բաժինը ավելի մեծ էր, քան Արշակինը: Եվ երկուսից էլ շատ  
գավառներ կտրվեցին. և այն ժամանակ ու այնուհետև Հայոց  
Թագավորությունը բաժանվեց, ցրվեց, նվազեց, իր նախկին  
մեծությունից ընկավ<sup>206</sup>:

### Գ լ ու խ Բ

ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՔ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԱՆԻ ԷՐ:  
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽՈՍՐՈՎԻ ՄԱՍՈՒՄ, ՈՐ ՊԱՐՍԻՑ ԶԵՌՔՈՒՄ ԷՐ:  
ՆԱՆ ԶԱՎՆԻ ՄԱՍԻՆ:

Այս Զավենը անվանի Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից  
էր. Մանազկերտ գյուղից: Զարագործ, խիստ և նախանձոք  
բարբի տեր էր: Բայց նա մի սովորություն մտցրեց իր ժամա-

նակ՝ բոլոր քահանաներին սովորեցրեց զինվորականի զգեստ հագնել: Նրանք թողին առաքելական եկեղեցիների սովորութիւնը և սկսեցին վարվել՝ ինչպես իրենց խելքը կտրում էր: որովհետև քահանաներն այլևս չէին հագնում պճղնավորներ, ինչպես ի բնե սովորութիւնն էր, այլ սկսեցին խոտոր կտորներ գործածել մինչև ծնկները<sup>207</sup>: իրենց զգեստները զարդարում էին տեսակ-տեսակ նարոտներով, փքովում, սիգանում էին անվայել կերպով, և քահանաներն անխտիր գործ էին անում գազանների մորթիներ, որ նույնպես վայել չէր: Ինքը՝ Զավենը, հագնում էր պճնված, զարդարուն զգեստներ<sup>208</sup> նարոտներով ժապավինված, սամուլրի, կնգումի (սպիտակ աքիսի), գալլի մորթիներ, աղվեսի մորթի էր վրան գցում. և այսպես բացեիրաց բեմ դուրս գալիս նստում: Որկրամուլ, ազահ, անառակ կյանք էր վարում Զավենը իր բոլոր օրերում: Նա երեք տարի աթոռը գրավեց մինչև իր մահը:

#### Գ Լ Ո Ւ Խ Գ

ԿՈՐՃԵԱՏԻ ՇԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԶԱՎԵՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ ԵԳԻՍԿՈՂՈՍՆԵՐԻ ԳԼԵԱՎՈՐԸ ԴԱՐՁԱՎ:

Ապա Զավենի մահից հետո նրա փոխարեն եպիսկոպոսների գլխավոր դարձավ Շահակ Կորճեացին երկու տարի: Սա բրիստոնյա մարդ էր, բայց չհակառակվեց այն կարգերին, որ Զավենն էր դրել, ու չվերացրեց: Երկու տարի առաջնորդեց և այս աշխարհից փոխվեց:

#### Գ Լ Ո Ւ Խ Դ

ՄԱՆԱԶԿԵՐՏԱՏԻ ԱՍՊՈՒՐԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԳԻՍԿՈՂՈՍՆԵՐԻ ԳԼԵԱՎՈՐՆ ԵՂԱՎ ՇԱՀԱԿԻՑ ԼԵՑՈ:

Իսկ Շահակ եպիսկոպոսից հետո եպիսկոպոսների գլխավորն եղավ մի ոմն Ասպուրակ՝ Աղբիանոս եպիսկոպոսի սերունդից: Սա մի բրիստոնեամիտ, աստվածապաշտ և արդար

մարդ էր, որ Խոսրովի արքունիքում առաջնորդում էր, բայց զգեստի վերաբերմամբ սա էլ հետևեց Զավենի հաստատած կարգին:

#### Գ Լ Ո Ւ Խ Ե

ՓԱՎՍՏՈՍ ԵՎ ԶՈՐԹ ԵԳԻՍԿՈՂՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Այս ժամանակներում ապրում էր Փավստոս եպիսկոպոսը, որ Ներսես եպիսկոպոսապետի ժամանակ նրա պալատում էր լինում իբրև գործակալ: Նրա հետ ներքին խորհրդակալան<sup>209</sup> էր և Զորթը, որովհետև հայրապետի ձեռքի տակ, նրա ներքին խորհրդարանում, տասներկու եպիսկոպոս կային նրան աթոռակից, գործակից և խորհրդակից, բացի գավառների բոլոր եպիսկոպոսներից, որոնք նրան ենթարկված էին. բայց այս երկուսը այն տասներկու եպիսկոպոսներից էին: Սրանց էր հանձնված աղքատանոցների տեսչությունը, և նրանք ամեն բանում հավատարիմ էին նրա ժամանակ, և երկու բաժանված թագավորների՝ Խոսրովի ու Արշակի տարիներում էլ նրանք զեռ կենդանի էին:

#### Գ Լ Ո Ւ Խ Զ

ՓԱՎՍՏՈՍ ԵԳԻՍԿՈՂՈՍԻ ԵՂՐՈՐԻ ԱՌՈՍՈՒՄԻ ՄԱՍԻՆ:

Փավստոս եպիսկոպոսը մի եղբայր ուներ՝ մի սքանչելի կրոնասեր մարդ, որ լեռներում ու անապատներում միայնակյացի կյանք էր վարում: Սրանք երկուսը ազգով հոռոմ<sup>210</sup> էին, բայց սա նշանավոր էր իր վարքով իր կյանքի բոլոր օրերում: Նա բնակվում էր Այրարատյան գավառում, առաջնորդվում էր սուրբ հոգով, շրջում էր լեռներում և անապատներում մաշկեղեն հագած, բանջարեղենով կերակրվելով մինչև իր մահվան օրը: Երբ նա վախճանվեց, նրա մարմինը անապատից բերին ու թաղեցին Ներսես հայրապետի բուն գյուղում, որ Ամոք է կոչվում, և տարեցտարի կատարում էին նրա հիշատակը:

Գ լ ու խ Է

ԲԱՄՆԻ ԱՐՏԻԹ ԵՐԾՎՈՂՈՍԻ ՄԱՍԻՆ:

Այդ ժամանակ ապրող եպիսկոպոսների մեջ երևելի էր Բասնի Արտիթ եպիսկոպոսը, որ մի պատվական ու պիտանի ծերունի էր: Մաքուր ու ճշմարիտ կյանք էր վարում նա, արժանացել էր սուրբ հոգու շնորհին և մեծ գորուծյամբ շքրջում էր ու մեծամեծ հրաշքներ էր գործում երկար տարիներ: Սա եղել էր աշակերտ Մեծ Դանիելի, որ Տիրան թագավորի ժամանակ էր ապրում, և դեռ կենդանի էր Հայոց երկու թագավորների՝ Խոսրովի ու Արշակի ժամանակ:

Գ լ ու խ Ը

ՀՈՂԱՆ ԵՐԾՎՈՂՈՍԻ, ԿՐԱ ՎԱՐԵՐ, ԱՆՄՏՈՒԹՅԱՆ, ԽՆԵՇ ԿՆՏՔԵՐԻ ՈՐ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ԱՅՆ շՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՍՏՈՒԹՅ ԵՂԱՆ ՆՐԱ ԵՎԱՏՄԱՄԲՈՒ:

Այլ էր Հոհան եպիսկոպոսը՝ նախկին <sup>212</sup> Փառեն հայրապետի որդին, եթե կարելի է նրան եպիսկոպոս կոչել: Սա մի կեղծավոր մարդ էր. մարդկանց աչքում իրեն ձևացնում էր պահեցող և կոշտ ու կոպիտ հանդերձ հագնող, մինչև անգամ ոտնաման չէր հագնում, այլ ամառը պարան էր փաթաթում, իսկ ձմեռը՝ կեմ<sup>213</sup>, Բայց շափից դուրս ընկզմված էր ազահու-թյան մեջ. աստուծու ահն էլ մոռացել էր՝ ազահության պատ-ճառով այն աստիճան, որ անվայել ու անհավատալի բաներ էր անում:

Մի անգամ այնպես պատահեց, որ նա ճանապարհ գնաց. նստել էր գրաստի վրա ու զալիս էր. նրան պատահեց մի անծանոթ աշխարհական մարդ, հասակով պատանի՝ ձի հեծած, մեջքին սուր կապած, գոտուց թուր կախած, մեջքին ազեզ ու կապարճ, մազերը վիացած, օծած, կոկած, գլխին վարսակալ դրած, ուսին մուշտակ<sup>214</sup> գցած: Նա զալիս էր իր ճանապարհով, գուցե ավազակութունից: Իսկ ձին, որ նա հեծել էր, բարձր էր հասակով, աշխույժ և արագավազ, այնպես որ, երբ Հոհան եպիսկոպոսը հեռվից ձին տեսավ, խիստ զարմացավ ու աչքը վրան մնաց: Երբ հեծյալը եկավ ու նրան մոտեցավ,

Հոհանը նրան սպասելով՝ հանկարծ բռնեց ձիու սանձից և ասաց. «Իսկույն ձիուցդ իջի՛ր, հետդ խոսելիք ունեմ»: Մարդն ասաց. «Ո՛չ դու ինձ ես ճանաչում, և ոչ ես քեզ, այդ ի՞նչ բան է, որ ուզում ես ինձ հեռ խոսել»: Մարդը միևնույն ժամանակ հարբած էր և շատ համառոտ՝ չկամենալով ձիուց իջնել: Բայց Հոհանը նրան ստիպեց, ձիուց ներքև իջեցրեց և ճանապարհից մի կողմ տարավ: Այնտեղ մարդուն հրամայեց խոնարհվել և ասաց. «Քեզ քահանա եմ ձեռնադրում»: Իսկ նա իր մասին պատասխան տալով՝ ասաց. «Ես մանկութունից ի վեր եղել եմ ավազակ, մարդասպան, շարագործ, խառնակ վարքի տեր և այժմ էլ նույն գործում եմ գտնվում. ես արժանի չեմ այդ բանին»: Մարդը շատ համառոտ ու վիճեց, բայց Հոհանը ավելի խիստ ստիպեց: Վերջը Հոհանը նրան բռնությամբ գետին զլորելով՝ ձեռքը դրեց նրա վրա՝ քահանա դարձնելու համար և հետո ոտքի կանգնեցնելով՝ հրամայեց վերնազգեստի հանգույցները արձակել, հոգևորականի վերարկու գցել վրան և ասաց. «Գնա՛ր քո գյուղը և եղիր քահանա այն գյուղին, որտեղից որ ես»: Նա նույնիսկ չգիտեր, թե ո՛ր գյուղից է այդ մարդը: Հետո Հոհանը մոտենում բռնում է ձիուց և ասում. «Այս ձին էլ ինձ վարձանվեր լինի, որ քեզ քահանա ձեռնադրեցի»: Մարդը ձիու համար համառոտ, շուգեց տալ: Բայց նա բռնությամբ ձին խլեց ու մաքրուն ճամփու դրեց: Այս բոլորը ձիու համար եղան:

Մարդը ակամայից փիլոնը վրան գցած դառնում է տուն, զալիս ներս է մտնում ընտանիքի մոտ և ասում կնոջն ու ընտանիքին. «Վե՛ր կացեք, աղո՛թք անենք»: Իսկ նրանք ասում են. «Գծվե՛լ ես, ի՞նչ է, հո չե՛ս դիվահարվել»: Իսկ նա ասում է. «Վե՛ր կացեք աղոթք անենք, որովհետև ես քահանա եմ»: Նրանք զարմացել էին. մերթ կարմրում էին, մերթ ծիծաղում: Շատ հակառակվելուց հետո, վերջապես համաձայնվեցին նրա հետ աղոթք անել: Հետո կինը մարդուն ասաց. «Զե՛ր որ դու երեխա էիր, դեռ մկրտված չէիր»: Մարդն ասաց կնոջը. «Տե՛ղիք թողե՛ց գլուխս, շփոթեցրեց, չհիշեցրեց, ես էլ մոռացա այդ բանը նրան ապել. նա ինձ քահանա գարձրեց ու ձին սանձով, թամբով առավ ու գնաց»: Տեսցի՛նքր մարդուն ասացին. «Վեր կկենաս, կրկին կգնաս այդ եպիսկոպոսի մոտ և

կասես. «Ես մկրտված չէի, դու ինձ ինչպե՞ս քահանա դառնա-  
րիր»: Նա էլ վեր կացավ ու գնաց եպիսկոպոսի մոտ և ասաց.  
«Ես մկրտված չէի, դու ինձ ինչպե՞ս քահանա դարձրիր»: Հո-  
հանը ասաց. «Մի սափորով ջուր բերեք»: Զուրն առավ լցրեց  
նրա գլխին ու ասաց. «Գնա՛, ահա քեզ մկրտեցի»: Եվ այս-  
պես իսկույն նրան իր մոտից հեռացրեց:

### Գ Լ Ո Լ Խ Թ

ՆՈՒՑՆ ԼՈՂԱՆԻ ՄԱՍԻՆ:

Մի անգամ այս Հոհանը անցնում էր մեկի այգիների մո-  
տով. այգիները էտելու ժամանակն էր: Մի մարդ այգու ներ-  
սից ձայն տվեց նրան ու ասաց. «Տե՛ր եպիսկոպոս, օրհնի՛ր  
մեզ ու մեր այգիները»: Հոհանն ասաց. «Փուշ և տատասկ  
թող բուսնի»: Մարդն ասաց. «Փուշ ու տատասկը թող բո-  
մարմնի վրա բուսնի, որ մեզ անմեղ տեղը անիծում ես»: Եվ  
աստծուց հրաշք երևաց. որովհետև, երբ եպիսկոպոսն իր կա-  
ցարանը հասավ, հարվածի ենթարկվեց, նրա բոլոր անդամ-  
ներն սկսեցին ծակծկվել, կարծես փշից: Շատ օրեր նա սաս-  
տիկ ցավերից տանջվելով մեծ տագնապի մեջ էր գտնվում:  
Վերջը մարդ ուղարկեց, այգեպանին կանչեց և աղաչեց, որ իր  
վրա աղոթք անի, որպեսզի ցավերից ազատվի: Իսկ այգե-  
պանն ասում է. «Ես ո՞վ եմ, որ կարողանամ մեկին օրհնել  
կամ անիծել, այն էլ եպիսկոպոս մարդու»: Իսկ Հոհանը ըս-  
տիպեց նրան այն աստիճան, որ նա վեր կացավ աղոթքի և  
ասաց. «Տե՛ր աստված, դու գիտես, որ ես մեղավոր, անար-  
ժան մարդ եմ. չգիտեմ ինչպես ընկա այս փորձանքի մեջ.  
դու ինձ փրկիր այս շարից, որովհետև ասում են, թե դու  
եպիսկոպոս մարդուն անիծեցիր, և բո խոսքով այս բանը  
եղավ: Ավելի լավ էր մեռնի. չգիտեմ այս, ինչ որ ասում են  
իմ մասին»: Հենց որ նա այս ասաց, եպիսկոպոսն իսկույն  
բժշկվեց, և ամբողջ մարմնից սկսեց փուշը դուրս թափվել. նա  
նման էր խոտերի փշի: Նա անմիջապես ցավից բժշկվեց և  
առողջ վեր կացավ:

### Գ Լ Ո Լ Խ Ժ

ՆՈՒՑՆ ԼՈՂԱՆԻ ՄԱՍԻՆ:

Այս Հոհան եպիսկոպոսը՝ Փառենի որդին, երբ գնում էր Հա-  
յոց թագավորների մոտ, նրանց համար խեղկատակութուն էր  
անում: Այսպես խեղկատակութուն անելով՝ ինքն իրեն վար-  
ժեցնում էր ազահուսթյան, որին անհագաբար ծարավ էր, և  
(այդ խեղկատակութունները) նրան իրրև միջոց էին ծառա-  
յում<sup>216</sup>: Նա թագավորների առաջ ձեռքերի ու ոտքերի վրա  
ընկնելով՝ շորեթթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր,  
ուղտի նման շրջելով: Կառաչելու ժամանակ մի-մի խոսք էր  
խառնում կառաչելու ձայնով ու ասում էր. «Ո՛ւղտ եմ, ո՛ւղտ  
եմ, թագավորի մեղքերը վերցնում եմ. վրաս դրեք թագավորի  
մեղքերը, որ վերցնեմ»: Իսկ թագավորները գլուղների կամ  
ազարակների պարզևազրեր գրելով ու կնքելով՝ դնում էին  
Հոհանի մեջքի վրա իրենց մեղքերի փոխարեն: Եվ այսպե-  
սուղտ լինելով ու մեղքեր վերցնելով՝ նա Հայոց թագավորնե-  
րից ձեռք բերեց գլուղներ, ազարակներ ու գանձեր: Այսպիսի  
մարդ էր այս Հոհանը, որ իր ամբողջ կյանքում վարակված  
էր ազահուսթյամբ ու ժլատությամբ և ազահուսթյան պատճա-  
ռով անվայել գործեր էր կատարում:

### Գ Լ Ո Լ Խ ԺԱ

ԿԻՐԱԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ:

Ճայքի Կիրակոս եպիսկոպոսը, որ Շահապ էր կոչվում,  
ճշմարիտ և աստվածապաշտ մարդ էր, աստծուն հաճելի. նա  
ճշմարիտ ուղղությամբ առաջնորդում էր իր ժողովրդին և իր  
կյանքի բոլոր օրերում եպիսկոպոսական պաշտոնը կատա-  
րում էր աստծու կամքի համաձայն:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ**

**ՎԱՆԱՆԿԻ ԶՈՐԹՎԱԴ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ:**

Վանանդ գավառի Զորթվադ եպիսկոպոսն էլ սուրբ և պարկեշտ մարդ էր, աստծուն արժանի, լցված էր սուրբ հոգով. բրիստոնեաբար էր վարվում ու գործում, իր ժողովրդին առաջնորդում էր աստծու կամքի համաձայն:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ**

**ՏԻՐԻԿ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԵԳԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ:**

Բառեն գավառում երկու եպիսկոպոսներ կային՝ Մովսեսը և Տիրիկը. առաքինի, հրեշտակալրոն, սուրբ և հավատացյալ մարդիկ, (աստծու) հրավիրման արժանի: Նրանք իրենց ժողովուրդներին առաջնորդում էին աստծու ճանապարհով իրենց կյանքի բոլոր օրերում:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ**

**ԱՀԱՐՈՆ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ:**

Այդ ժամանակներն Հայոց աշխարհում ապրում էր Ահարոն եպիսկոպոսը՝ երևելի, անվանի, քաջ և առաքինի մարդ: Նա իր ժողովրդին առաջնորդում ու լուսավորում էր իր կյանքի բոլոր օրերում:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե**

**ԱՍԳՈՒՐԱԿ ԳԼԵԱՎՈՐ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ:**

Հայոց եպիսկոպոսների զխավորն էր Ասպուրակը, որ մի սուրբ և բարեպաշտ մարդ էր, աստծուց ու մարդկանցից երկրնչոգ. բայց շէր կարող մեկին հանդիմանական խոսք ասել:

այլ ինքը լուռ էր մնում, համեստ, զգաստ ու պարկեշտ, պահեցողությամբ և աղոթքներով: Բայց զգեստի վերաբերմամբ Զավենի մուծած կարգով էր վարվում. հագնում էր զարդարուն և ժապավինված զգեստներ: Բայց նա քաղցր ու խոնարհ, բարեգործ և մարդասեր մարդ էր կյանքի բոլոր օրերում:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ**

**ՍՈՒՐԲ ԵՎ ԱՌԱՔԵՆԻ ԳԻՆԴԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ԲՈՂՈՐ ԱՐԵՂԱՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՅՆԱԿԱՅԱՑ ԱՆԱԳԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԼԵԱՎՈՐՆ ԷՐ:**

Այս Գինդր Տարոն գավառից էր, աշակերտել էր Մեծ Դանիելին և նրանից հետո դարձել էր աբղանների զխավոր, միայնակյացների վարդապետ և առաջնորդ, վանքերի վերակացու, բոլոր անապատականների ուսուցիչ և առհասարակ տեսուչ այն բոլոր մարդկանց, որոնք աստծու սիրո համար հրաժարվել էին աշխարհից և բնակվում էին անապատներում՝ հաստատվելով քարանձավներում, այրերում և երկրի քարածերպերում. մի զգեստ ունեին նրանք, շրջում էին բոբիկ ոտքերով, զգաստ կյանք էին վարում, կերակրվում էին խոտերով, ընդեղեններով, արմատներով. զազանների նման շրջում էին լեռներում, մաշկերով և այծի մորթիներով ծածկված, նեղվում, տառապում, շարշարվում էին, անապատում մոլորված, ենթարկվում էին ցրտի և տոթի, քաղցի ու ծարավի աստծու սիրու համար:

Այսպիսի կյանք նրանք հանձն էին առնում համբերությամբ իրենց կյանքի բոլոր օրերում, քանի որ աշխարհս բնավ արժեք չունի նրանց համար, ինչպես գրված է: Քրոշունների երամների նման նրանք բնակվում էին ժայռերի ճեղքերում, քարանձավների ծերպերում, առանց գույքի ու ստացվածքի, առանց խնամքի և դարմանի, իրենց անձերի մասին ամենևին չհոգալով: Եվ սրանց զխավորն էր սուրբ Գինդր, որին Հայոց աշխարհի բոլոր մարդիկ առհասարակ վարդապետ էին կոչում: Բայց կային նրանց մեջ և ուրիշ աշակերտներ, որոնք նմանվում էին իրենց վարդապետին և

նրա ձեռնասուններն էին, որոնց անուններն են վաշակ, Արտուշտ, Մարախ: Սրանց ընկերն էր և Տրդատը<sup>210</sup>, որ մեծ բահանայապետ Ներսեսի ժամանակ սարկավագապետ էր, իսկ Ներսեսի մահից հետո անցավ մտավ անապատականների կարգի մեջ, հիշյալ վարդապետների մոտ: Սուրբ Գինգն անում է իր ձեռնասուն մանուկ Մուշեին և հաղորդակից է դարձնում իր վարքին: Նա ուներ նաև ուրիշ շատ հրեշտակաբարո աշակերտներ, որոնց վարքը պատմել ոչ ոք չի կարող:

Երբ սուրբ Գինգը և նրա հետ եղողները լցված էին սուրբ հոգով, նրա նման սրանք էլ կատարում էին մեծամեծ հրաշքներ և շատ սքանչելիքներ, հիվանդներ էին բժշկում Հիսուս Քրիստոսի անունով: Եվ շատ հեռավոր աշխարհներ էին շքրչում, հեթանոսների գավառներում, ու շատ շատերին դարձնում էին մոլորութունից, սովորեցնում էին նրանց (հոգևոր) կյանքի գիտությունը և ճշմարտության ճանապարհը: Եվ սուրբ Գինգը լցնում էր բոլոր անապատները միայնակյացներով ու բոլոր շենները՝ վանքերով, և աշխարհում մարդկային կյանքի ուղիղ կարգեր էր սահմանում ըստ աստվածային կրոնի: Նա իր համար բնակության տեղ էր ընտրել այն անապատը, որ տեղից սկսվում են Եփրատ գետի ակունքները, այնտեղ նա բնակվում էր ժայռերի ձեղքերում, առաջին Մեծ Գրիգորի նախկին կաղարանում, որ Ոսկիք էին կոչում. այս նույն ձեղքերում բնակվում էր Գինգը անապատականների մեջ մեծը: Սուրբ Մուշեն շարունակ նրա մոտ էր լինում, իսկ մյուսները շրջում էին այլ գավառներում իրենց գլխավորի՝ Գինգի հրամանով: Իսկ սուրբ Տրդատը բնակություն էր հաստատել Տարոն գավառում, որտեղ իր համար եղբայրանոցներ էր շինել:

9. (Եր. 63). «Բուզանդարան պատմութիւնէ»: Փափսոսի Պատմության հեղինակը մի մականուն է կրում, որ գրչության մեջ երկու տարբեր ձև ունի—1. «Բիւզանդ, Բիւզանդացի» և 2. «Բուզանդ, Բուզանդացի, Բուզանդարան»: Առաջին ձևը պատահում է հենց գրքի վերնագրում—«Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց», և Երրորդ դպրության վերջում, որտեղ գրված է. «Կատարեցաւ երրորդ դարգ (տպ. դարբ) Փաւստեայ Բիւզանդեայ մեծ ժամանակագրի, որ էր ժամանակագիր Յունացո: Երկրորդ ձևը պատահում է Պատմության չորս դպրութունների վերնագիրներում չորս անգամ—«Բուզանդարան պատմութիւնք», նույնպես և Դ. Փարպեցու Պատմության մեջ երկու անգամ—«Փաւստոս» կամ «Փոստոս Բուզանդացի»: Զանց եմ անում ավելի նոր հեղինակները:

Ո՞րն է այս երկու գրութուններից նախնականը, իսկականը: Նկատի ունենալով, որ «Բուզանդ», «Բուզանդարան», «Բուզանդացի» անհասկանալի ձևեր են, անժանոթ ծագումով ու նշանակութամբ՝ դեռ հին ժամանակ փորձեր են արել այս անժանոթ բառը ստուգաբանել «Բուզանդ», «Բուզանդացի» նմանահնչյուն բառերով: Այս սխալ ստուգաբանության օրոշինը պետք է լինի Երրորդ դպրության վերջում գրված տեղեկությունը—«Փաւստեայ Բիւզանդեայ մեծ ժամանակագրի». սակայն այս տեղեկության հեղինակն է ոչ թե գրքի հեղինակ Փափսոսը, այլ նրա Պատմության խմբագրողը, որ այդ ստուգաբանության հիման վրա ավելացրել է՝ «Որ էր ժամանակագիր Յունացո: Այնինչ մենք այժմ հաստատ գիտենք, որ Պատմության հեղինակը ո՛չ հույն է և ոչ Հունաց ժամանակագիր, այլ զտարյուն հայ է, հայկական գրույցների հավաքող: Հետաքրքրական է, որ Դ. Փար-



պեցին, խմբադրի վերահիշյալ խոսքից խարվելով՝ Փափաստսին կոչում է  
Բյուզանդիայում ուսած մարդ, և շնայելով սրան՝ նա հավատարմությամբ  
երկու անգամ պահպանել է «Բիզանդացի» գրությունը: Ուրեմն, իմ կար-  
ծիքով՝ վերջ հիշված երկու ձևերից սկզբնական՝ նախնականն է «Բու-  
զանդ», — արան, — ացի», իսկ «Բիզանդացի» ձևը նրա անհաշող ստուգաբա-  
նությունն է:

Ինչ է նշանակում «Բուզանդ», «Բուզանդարան»:  
Ես դարձրի ուշադրություն «Բուզանդ» բառի վրա և գտա նրա մեջ երկու  
հնդեվրոպական արմատ. առաջինն է սանսկրիտ bhū, bhav, սլավոներեն  
бъ, бу, որոնք նշանակում են լինել, գոյություն ունենալ (быть), այս բա-  
ռից էլ սլավոներեն և ռուսերեն быт, быть, былина = գրույց, առասպել:  
Երկրորդ արմատն է զանդ, որից ունենք զանդիկ, զենդ, զենդերեն: Այս  
երկուսն էլ նշանակում է բացատրություն, մեկնություն (изложение, ком-  
ментарий), այնպես որ ամբողջ «Բուզանդ» բառը սեփական է նշանակի եղելու-  
թյունների, գրույցների մեկնություն կամ բացատրություն, կամ եթե զանդ  
արմատը վերցնենք իբրև ներգործակերպ բայարմատ, պետք է նշանակի  
եղելությունների, գրույցների բացատրել՝ մեկնել: Ավելի ազատ վարկածա-  
նությամբ՝ համապատասխան հայերեն «բանաստեղծ» բառի (վերցնելով  
արան), բառի 5 և 7 նշանակությունները ըստ իմ բառարանի). այս բացա-  
տրությունից բխում է, որ «Բուզանդ» բառը ոչ թե անձի հատուկ անուն է,  
այլ աշուղական կոչում, ինչպես հետոց ի վեր սովորություն է եղել, որ մեր  
աշուղները բնորոշ են իրենց համար կոչումներ պարսկական և տաճկական  
բառերից (Սայաթ-Նովա, Սեյադ, Ջիվանի և այլն). նույնպես վարվել է և  
անձանոթ Փափաստու հեղինակը, պարսկական «բուզանդ» բառը բնորոշելով  
իրեն աշուղական կոչում:

Սրանով պարզվում է և «բուզանդարան» բառի նշանակությունը, իբրև  
բուզանդների ժողովածու, նմանությամբ «երգարան», «տաղարան» և այլն  
բառերի և նշանակում է ժողովածու գրույցների, մեկնության կամ ազատ  
թարգմանության բանաստեղծություն: «Բուզանդարան» բառին կից պատ-  
մաբանությամբ բառը, որ չորս անգամ կրկնվում է (Բուզանդարան պատմա-  
բանությունը) իմ կարծիքով «Բուզանդարան» բառի հայերեն թարգմանությունն է,  
այսինքն՝ ժողովածու պատմությունների, պատմվածքների:

Իմ այս բացատրությունը ես համառոտ կերպով ուղարկել էի Քեհրան,  
իմ բարեկամ, հմուտ իրանագետ մուսրեն Աբրահամյանին՝ նրա կարծիքն  
իմանալու համար: Նա ինձ նամակով հետևյալը պատասխանեց. «Չեմ  
Բյուզանդ բառի բացատրությունը շատ սրամիտ է և օրիգինալ: Միայն,  
սանսկրիտ bhū և սլավոնական бу, бѣ-ից առաջ, կարծում եմ, պետք է  
գետնողի բառի իրանական արմատը՝ bav և ներկայից՝ bu (S. Bartholo-  
mae, Altirensisches Wörterbuch. Եր. 917) նույն իմաստով: Բուզանդ և  
ամբողջությունը հիշեցնող բառ չգտա... բայց կարծում եմ, թե ձեր բա-  
ցատրությունը հիշածս հավելումով այնքան զոհացուցիչ է, որ այդ անհրա-  
ժեշտ չէ. մանավանդ բառը կազմված է հայկական հոգի վրա, արեմի  
նման բառի գոյությունը պարսկերենում պարտադիր չէ»:

2. (Եր. 64). Թե՛ այստեղ և թե՛ ընազրի վերնագրում ավելացրինք «ն  
Արիստակեսի», որ արդարանում է ինչպես գլխի բովանդակությամբ, այն-  
պես էլ «նացունց շիրմացն» խոսքով, որ գործ է ածված հոգնակի:

3. (Եր. 66). Բնագրում՝ «ե սկզբն», որ ուղղական հույովով է և ցույց է  
առնում, թե այս Երրորդ դպրությունը Պատմության սկիզբն է, այսինքն՝  
չկարծվի, թե պակասում են առաջին և երկրորդ դպրությունները: Սրան  
համապատասխան՝ Վեցերորդ դպրության վերնագրում գրված է «վերջ»:  
Ըստ այսմ՝ Փափաստի Պատմությունն սկսվում էր Երրորդ դպրությամբ  
և վերջանում էր Վեցերորդ դպրությամբ:

4. (Եր. 66). Գայթակություն ջար է դարձել բանասիրության համար  
այս ֆրազը, որից այնպես է երևում, թե հեղինակը գրել է Սանատրուկ  
թագավորից առաջ պատահած անցքերը (= «է ինչ մեր Պատմութիւն՝ որ  
առաջին է») և Տրդատից հետո պատահած անցքերը (= «է ինչ՝ որ վեր-  
ջին»): Իսկ միջին ժամանակի, այսինքն՝ Սանատրուկից մինչև Տրդատի  
անցքերը գրված են ուրիշների ձեռքով: Ըստ այսմ գուրա է գալիս, որ  
Փափաստի Պատմությունն սկզբից թերի է հասել մեր ձեռքը, մի քան, որ  
հակասում է հեղինակի նախընթաց հայտարարության՝ «թե այս պատմու-  
թյունը բազկացած է չորս մասյանից»: Այս հարցի մասին մանրամասն  
տե՛ս ներածությունում:

5. (Եր. 67). «Կոտակ» պահանջներն բառ է՝ Kōtak, որ նշանակում  
է «մանուկ, երեխա, փոքր», որ գործ է ածված իբրև մականուն Տրդատի  
որդի Խորով թագավորի: Խորենացին (Գ, ք) նրան կոչում է հայերեն  
բառով՝ Փոքր և շեշտում է նրա կարճահասակ լինելը:

6. (Եր. 68). Բնագիրն այստեղ ունի «ժողովել ի յիշատակ սրբոցն  
որ էին անդ, կատարել անդ ամի ամի Եօթն անգամ»: Մենք այստեղ հե-  
տևեցինք Նորայրի ուղղագրության (Նորյուն, Եր. 274) — «Կատարել անդ  
ամի ամի յԵօթն սահմի ամսոյս: Նորայրի այս ուղղումը հիմնված է Ագա-  
թանգեղոսի վրա (Եր. 425), որտեղ գրված է. «Կատարել անդ ամ յամէ...  
գլխատակ սրբոցն, որ օր Եօթն էր սահմի ամսոյ» (ՎԱՐ. ամսոյն սահմի):  
Փափաստը, անշուշտ, նկատի ունի Ագաթանգեղոսի այս վկայությունը, ըստ  
որի և պետք է ուղղել նրա մեջ մտած աղավաղությունը: — Սահմի ամիսը  
հայոց տոմարի երրորդ ամիսն էր: Շատ բանասերներ այն ծագեցնում են  
վրաց «samis» բառից, որ նշանակում է «տեր» (ինչպես մեր հին տոմարի  
երկրորդ ամի անունը, այն է հուրի, ծագեցնում են վրաց «oriz» բա-  
ռից, որ նշանակում է «երկու») Սակայն շատ պատճառներ կան մերժե-  
լու այս ստուգաբանությունները: Հնչյունների նմանությունը լոկ պատահա-  
կանություն է:

7. (Եր. 69). Բնագրում կրկնված է՝ «ուստի՛ գայք... ուստի՛ եկիք»:  
Վերջին հարցը մենք փոխեցինք՝ «ինչու՞ և եր եկիք»:

8. (Եր. 70). Մենք այսպես հասկացանք ընազրի այս խառն խոսքը՝  
«Ես ետուն զըուն գիւղն Որդուննսց, որոյ անունն էր Որդորու, ուստի  
եպիսկոպոսն Բասանու, ամենայն սահմաօրն հանդերձ, որ ինքն իսկ է  
լերկրին Բասանու»: — Բասանի սովորական ձևն է Բասան:





է ս. Հակոբ Հայրապետին, որ աստծուց շնորհված տապանի կտորով վե-  
րադառնում էր հայրենիք:

28. (Նր. 82). Այս կտորն էլ՝ մինչև Երկրածին ազգերին», նույնպես  
Կորյունից է առնված, բայց մի քանի բառ շունենալով՝ ազգավազված է:

29. (Նր. 83). Բնագրում գրված է. «Ի դահճէ միողէ», որ անշուշտ  
աղավաղություն է: Մենք ուղղեցինք՝ «Ի գահճէ միողէ», և ըստ այսմ թարգ-  
մանեցինք: «Դահճ» բառը նույն նշանակությամբ (=լեռան կատար) գործ  
է ածել հեղինակը նաև Դ, ծթ գլխում— «Ի վերայ բարձր գահուն բարին»:

30. (Նր. 83). Ակնարկություն Քրիստոսի պատվերի վրա, որ տվեց  
առաքյալներին, երբ նրանց ուղարկում էր քարոզելու. «...և ով որ ձեզ  
ընդունի կամ ձեր խոսքերին ըստի, երբ այն քաղաքից դուրս գալու լի-  
նեք, ձեր ոտքերից փոշին թափ տվեք: Ուղիղ եմ ասում ձեզ, սողումացոց  
և գոմորացոց երկրին ավելի հեշտ կլինի դառաստանի օրը, քան այն քա-  
ղաքին» (Մատթ., Ժ., 14, 15):

31. (Նր. 85). Փալատուր միևնույն անձը երբեմն կոչում է զորա-  
վար, երբեմն սպարապետ և երբեմն այս երկու բառով միասին: «Սպարա-  
պետ» պարսկերեն բառ է (հին պարսկերեն՝ spadpati, պահլավերեն՝ spah-  
pat, նոր պարսկերեն՝ spahbat), որ նշանակությամբ համապատասխա-  
նում է կես-հայերեն և կես-պարսկերեն զորավարին: Բայց հայերենում այս  
երկու բառը թվում է, թե մի նույն տարբերություն ունեն: Սպարապետ  
կոչվում էր այն անձը, որ սպարապետության ժառանգական իշխանու-  
թյան կրողն էր տվյալ ժամանակ, իսկ զորավար կոչվում էր այն անձը, որ  
իրապես զորքի ընդհանուր հրամանատարն էր տվյալ ժամանակ: Այսպես  
տեսնում ենք, որ երբ վաչեն սպանվում է պատերազմում, նրա փոքր երե-  
խային՝ Արտավազդին, ապարապետություն իշխանությունն են առնում՝ իբ-  
րև Մամիկոնյան տոհմի ժառանգական իշխանությունն, իսկ քանի որ նա,  
փոքրահասակ լինելով, դեռ չէր կարող զորքին առաջնորդել, զորավարու-  
թյան գործը հանձնում են Արշավիր Կամսարականին և Անդովկ Մյունիին,  
որոնք Մամիկոնյան տան փեսաներն էին, ուրեմն՝ իբրև մի տեսակ խնա-  
ժակային փոքրահասակ սպարապետի վրա:

32. (Նր. 86). Բնագրում գրված է. «Ի վերայ բանակի տեսան աշ-  
խարհիս: Մենք ուղղեցինք՝ «Ի վերայ բանակի տեսան աշխարհիս» և ըստ  
այսմ թարգմանեցինք:

33. (Նր. 86). Բնագրում գրված է. «Ծանուն հօր իւրոյ», որ սխալ  
է: Հոր անունն էր Վաչե, բացի սրանից՝ երեխաներին գնում էին պապե-  
րի անունը և ոչ թե հայրերի: (Սկզբնապես եղել է «հաւուն», որ աղավաղ-  
վելով դարձել է «հաւրն»: Նույն աղավաղությունը կատարվել է և ուրիշ  
տեղ: Տե՛ս ծանոթ. 9): Ուստի մենք ուղղեցինք «Հաւուն իւրոյ» և թարգմա-  
նեցինք «Պապի անունով»: [Այստեղ աղավաղում չկա: «Իւրոյ» պետք է հաս-  
կանալ «նորա», այսինքն՝ Վաչեի, ուստի «Ծանուն հօր իւրոյ» նշանակում է  
«նրա հոր անունով», որը և կլինի Արտավազդի պապի անունով—եմբ.]:

34. (Նր. 87). «Հազարապետը» թեպետ զինվորական պաշտոնյայի  
նշանակություն ունի ըստ կազմության, բայց հազարապետը բոլորովին տար-

բեր պաշտոն էր վարում. նա երկրի տնտեսության և հարկերի գլխավոր տն-  
տեսն էր, ուստի և նրա իշխանությունը տարածվում էր շինականության՝  
գլխավոր հարկատու դասակարգի վրա: Փալատուր նրա պաշտոնը կոչում է  
«աշխարհատես խնամակալութիւն» և այս խնամակալության պատճառով  
նրան որակում է «շինականաշէն» մակդիրով (Դ, բ): Փալատոսի ասելով՝ այս  
պաշտոնն ևս ժառանգական էր և պատկանում էր Գնունյաց տոհմին:—  
Պարսկաստանի մեծ հազարապետների պաշտոնն ու իրավասությունը տար-  
բեր էին և ավելի ընդարձակ, քան Հայաստանում (տ. Աղոնց, ЮСТИНИАН,  
Կր. 445—6):

35. (Նր. 88). Գամիրքը Կապադովկիան է:

36. (Նր. 88). Տափերի կամ Տափերական կամուրջը Արտաշատ քա-  
ղաքի կամուրջն էր Արաքսի վրա: «Տափեր» բառը թվում է բուն ժողովրդա-  
կան բառ՝ «տափ» բառի հոգնակին, որ նշանակում է նաև հարթավայր,  
գաշտ տեղ, ինչպես Փալատոսն էլ գրում է՝ «Ընդ առաջ ելանէր նմա ի  
գաշտն յայնչոյս գետոյն Տափերն կամրջի»:

37. (Նր. 92). Բնագիրն այստեղ աղավաղված է՝ «Քանզի ոչ էին թէ  
որպէս այլոց ազգականացն... հաւատոցն աստուածաբանիւ քարոզու-  
թեանն...»: Մենք ուղղեցինք «Քանզի ոչ թէ որպէս այլոց ազգացն... հա-  
ւատոցն աստուած բանիւ», և ըստ այսմ թարգմանեցինք:

38. (Նր. 94). Եպիսկոպոսները (հուն. ἐπίσκοπος = վերատեսուչ, վե-  
րադիտող) հոգևոր տեսուչներ կամ առաջնորդներ էին թեմերի, ընդարձակ  
մտքով՝ նաև աշխարհների, այժմյան տերմինով՝ թեմի առաջնորդներ: Հին  
նախարարական Հայաստանում ամեն մի իշխանական կալվածք մի հատուկ  
եպիսկոպոսն էր թեմի կազմում և ուներ սեփական եպիսկոպոս: Իսկ քրո-  
նիսկոպոսները (հուն. χρονηςκοπος = վերատեսուչ գավառի կամ գյուղի)  
գավառների կամ գյուղերի առաջնորդներն էին՝ եպիսկոպոսական կամ քա-  
հանայական աստիճանով, թեմի առաջնորդին ստորադրյալ Գանիկ քրո-  
նիսկոպոսին ներսեռ կաթողիկոսը, գնահատելով նրա հավատարմությունն  
ու ընդունակությունները, հանձնել էր ուրիշ պաշտոններ ևս, որոնց մա-  
սին գրում է Փալատուր:

39. (Նր. 94). Բնագրում գրված է. «վերակացու և գլխաւոր եկե-  
ղեաց գաւառին Տարօնոյ»: Պատկանյանը և Նորայրը «եկեղեցաց» բառն  
ուղղում են «եկեղեցեաց», որ միանգամայն ընդունելի է, և որին մենք հե-  
տևեցինք:

40. (Նր. 95). «Անապատ» պահլավերեն բառ է՝ anapat = ոչ-ապատ,  
ոչ-շեն, և նշանակում է անշեն, անմարդաբնակ (տեղ), հակադրությամբ  
ապատի-շենի, բնակելի տեղերի: Այս նախնական նշանակությամբ էլ հա-  
ճախ գործ է ածում Փալատուր «անապատ» բառը և նրանից ածանցված  
«անապատուր» բառը՝ իբրև մենակյաց:

41. (Նր. 97). Բնագրում «Նորին արեամբն», որ կարող է վերաբե-  
րել Քրիստոսին, բայց այս դեպքում պետք է լինի «իւրով արեամբն»:  
Ուղղեցինք «Նոցին արեամբն», այսինքն՝ Հռիփսիմյան նահատակների:

42. (Նր. 100). Բնագրում գրված է. «Որ գաւառին Աղճնեաց և Մեծաց

Մոփաց ի նմանէ իսկ վարդապետեալ էր: Վերջին բառը մենք ուղղեցինք՝ «վարդապետ տունեալ էր» և ըստ այնմ թարգմանեցինք:

43. (Եր. 102). Մարդպետ, հայր: «Մարդպետ» բառը մեր հին հնդկականները գործ են ածում «ներքինապետի» նշանակութեամբ և նրա պաշտոնը կոչում են մարդապետութիւն, մարդպետական իշխանութիւն: Այս բառը, ն. Ագոնցի կարծիքով (ЮСТИНИАН, եր. 417), առաջ է գալիս: Մարդ հատուկ անունից, որ պարսկական մի ավազակաբարոյ ցեղի անունն էր, որ, Հայաստան արշավելով՝ պարսպում էր ավազակութեամբ: Նրանց քնակված տեղը կոչվեց Մարդաստան, և նրանց ցեղապետը կոչվեց մարդպետ: Այս մարդերին հիշում են նաև հին հույն և լատին հնդկականները՝ կոչելով μάργαί, Mardi: Երբ մարդպետները ներքինապետի նշանակութեամբ մարդպետ բառն էլ սկսեց գործածվել ներքինապետի նշանակութեամբ Ագոնցի այս բացատրութիւնն ընդունում է և Արմ. բառարանը:— «Հայր» հատուկ անունն չէ, այլ ամեն մի ներքինապետի հարգական կոչում (ինչպես տաճիկների մեջ էլ ներքինապետը կոչվում էր baba): Այնպես որ «Հայր մարդպետ» բառերից ոչ մեկը մի անձի հատուկ անունն չէ, այլ ներքինապետի պաշտոնի հարգական անունը, և անբաժիր գործ է անվում բոլոր ներքինապետների համար: Միայն մի ներքինապետի հատուկ անուն է պահպանել Փալստոսը, դա Դրաստամատն է, որին հիշում է նա Ծ, է գլխում:

44. (Եր. 103). Բնագրում գրված է. «Եւ ոչ մի որ ի թագաւորացն Հայոց ոչ որ գտանէր նոցա բարեկամ», որի մեջ «Հայոց» բառն անտարակույս աղավաղութիւնն է: Այս բառի տեղ մենք ննթագրեցինք «այլոց» բառը և ըստ այնմ թարգմանեցինք:

45. (Եր. 105). «Կարճազատ» բառը միայն Փալստոսն է գործածել այստեղ: «Վաղապէս» բառարանը չունի այս բառը: Առձեռն բառարանը բերում է և մեկնում՝ «կարիճ ու օձ—չարձձձի՛ք, որ միանգամայն սխալ է: Ուրիշ տեղ այս բառի բացատրութիւնը չգտա: Թվում է, թե կարճազատները ստորին աստիճանի ազատներ—ազնվականներ էին, ազատների հնուավոր ազգականներ, որոնք, սակայն, դեռ կալվածքների տերեր էին: Հացյաց գլուղը այս կարճազատների սեփականութիւնն էր: «Հացյաց» անունը և քիչ հետո «Հացեկացի» բառը հիշեցնում են ս. Մեսրոպի ծննդավայր Հացեկաց գլուղը, և Վրիկը գուցե նրա հոր՝ Վարդանի, փաղաքշական կրճատն են է:

46. (Եր. 106). «Ընտրուկ» պահլավերեն բառ է cartuk, պարսկերեն՝ چارثا, որ նշանակում է օձի գարնող զույն, կարմրավուն (ձի), կարմրի գարնող, մութ-շագանակազույն (Արմ. բառ.): «Ընտնչկեն», «Ընտնչ» բառից, նշանակում է ճանձի նման մանր սև բծեր ունեցող, իմաստարդու-ճանձու-ճերմակ:

47. (Եր. 108). «Քաղաք» բառը, բացի սովորական նշանակութիւնից, Փալստոսի երկում հաճախ գործ է անվում նաև պարիսպ, պարսպապատ տեղ նշանակութեամբ: Այսպես է և ռուսերեն город բառի հին նշանակութիւնը: Ըստ այնմ Աղիորքը քաղաք պետք է հասկանալ՝ պարսպապատ, որպատեղ, նման Խոսրովակերտին: Քանի որ այս տեղը գտնվում էր Ապա-

հունեցում, Տուրուքերան նահանգում, ապա Մասիսը չի կարող լինել Այրարատյան գաղտի հայտնի Ագատ Մասիսը, այլ, ինչպես կարծում է Էփրիկյանը («Բնաշխարհիկ բառարան», եր. 101), Սիփան—Մասիս մեծ և գեղեցիկ լեռը:

48. (Եր. 108). Փալստոսն արդեն պատմել էր (Գ, ժը), որ Մամիկոնյան զորավարներ Արտավազը և Վասակը Տիրանի ձեռքից խնցիկ երկու փոքրահասակ երեխաների՝ Արծրունյաց և Ռշտունյաց տոհմի վերջին մնացորդներին, և նրանց առնելով գնացին, ապավինեցին իրենց Տայք կալվածքի ամուր տեղերը, և այնուհետեւ երկար տարիներ չէին խառնվում Հայոց զործիրին: Այս հանգամանքի վրա է ակնարկում այստեղ Փալստոսը՝ ասելով, թե խռովիլ հեռացել էին:

49. (Եր. 109). Ասորեստանը սահմանակից էր Պարսկաստանին և նրանից բաժանված էր Տիգրիս գետով, որի ձախ ափին շինված էր Պարսից մայրաքաղաք Տիգրանը, իսկ աջ ափին՝ Վենիկավար քաղաքը; և այս երկու քաղաքները միացած էին իրար հետ նավակամուրջով (զոմով): Ուստի այստեղ Ասորեստանի տակ պետք է հասկանալ Տիգրոս մայրաքաղաքը:

50. (Եր. 111). «Մաշկապաճէն», գրված նաև «մաշկապերճան», «մաշկապաճեան» և այլն, պահլավերեն բառ է maškarācēn («մաշկապաճեն») և նշանակում է Պարսից թագավորի կանանոցի վրանը:

51. (Եր. 111). Սատաղ Փոքր Հայքի քաղաք էր Բայբերդից ոչ հեռու Այժմ Սատաղ գլուղ է (Աղոնց, ЮСТИНИАН, 62):

52. (Եր. 112). Բնագրում գրված է. «Ետին զկապուտ բանակին... և զբամբիրն և զբանական ընդ նոսին»: «Բանական» աղավաղութիւնն է, ուղղելի քրանուկան, որ պահլավերեն հոգնակի ձևն է bānuk=տիկին բառի, ուղղումն առաջին անգամ առաջարկել է Կարիերը Արմ. բառ.:

53. (Եր. 112). Բնագրում գրված է. «Ապա գտանէր հրովարտակ-Քազարի Յունաց Վաղէս... «գտանէր»-ը, իրրի աղավաղութիւնն ուղղեցինք՝ «գրեր»: Այս առաջին և միակ անգամն է, երբ Փալստոսը հիշում է Պարսից և Հունաց թագավորներին միաժամանակ և երևան է հանում իր խաչոր ժամանակագրական սխալը: Ներսէս Պարսից թագավորը թագավորել է 296—302 թվերին, Հունաց Վաղես կայսրը թագավորել է 364—374-ին, ուրեմն նրանք ժամանակակից չեն եղել և չէին կարող իրար հետ պատերազմել: Արշակն էլ, որ ըստ Փալստոսի Հայաստանի թագավոր դարձավ այս երկու թագավորների միջև կայացած համաձայնութեան հիման վրա, իրոք թագավորել է 339-ին, ուստի և նրա թագավորութեան սկիզբը չի հանդիպում այս երկու թագավորներից և ոչ մեկի տարիներին:

54. (Եր. 113). Բնագրում գրված է. «Կատարեցաւ երրորդ դարէ», որը Հ. Վարդանյանն ուղղել է՝ «երրորդ դարից», ասորերեն քրաճ բառից, որ նշանակում է կարգ, աստիճան (Արմ. բառ., «կարգ» բառը): Մենք թարգմանեցինք՝ մաս: Մի քանի բառ հետո քննարկելու օրինակ փոխառնելով Բիւզանդեայ, որ Նորայր Բյուզանդացին ուղղել է՝ «Փաւստեայ Բիւզանդեայ»: Բնագրի հաջորդած այս տեղեկութեան մասին տե՛ս ներքինութիւնում:

55. (Եր. 114). Բնագրում անթարգմանելի կուտակություն բառերի՝ «Զորրորդ խոստովանութիւն զոր ասելոց եմ կարգել զգլխութիւն, կանոնք դարբ և դարբ պատմութեանց զրուցաց»: Մենք թարգմանեցինք մոտավորապես: Այստեղ էլ «դարբ և դարբ» Հ. Վարդանյանն ուղղել է՝ «դարկք և դարկք»:

56. (Եր. 114). Բնագրում գրված է. «Հանդերձ այլովքն պատարագով»: Վերջին բառը թե՛ նշանակությամբ և թե՛ հոլովման ձևով անտեղի է: Ուղղեցինք՝ «պատասնողովք» և ըստ այնմ թարգմանեցինք: Այստեղի և բնագրում եղած վերնագրի համեմատությունից կարելի է վերականգնել նախնական ընթերցվածքը՝ «գիտ'րդ զայլ նախարարսն հանդերձ այլովքն պատասնողովք արձակէր յերկիրն Հայոց հանդերձ պատարագօք»: [Ավելի հավանական է «հանդերձ պատարագօք»՝ առանց «այլովքն»-ի:— Խմբ.]:

57. (Եր. 116). Բնագրում գրված է. «Զիտ'րդ յուղարկեաց զհալածանայն Շապուհ», իսկ գլխի վերնագրում գրված է. «Զիտ'րդ յուղեաց Շապուհ...»: Երկու աղավաղված ընթերցվածքներից վերականգնվում է ուղիղ ընթերցվածքը՝ «Զիտ'րդ յուղեաց հալածանայն Շապուհ...», որ և համապատասխանում է գլխի բովանդակությանը:

58. (Եր. 121). «Պայակ» — պահպանել են՝ dāyak, նշանակում է ծծմայր, ստնտու (ներկայումս նշանակում է միայն մանկարար կին): Բայց հին գրականության մեջ գործ էր անում նաև տղամարդկանց մասին՝ դաստիարակ, խնամակալ նշանակությամբ: Հին ժամանակ սովորություն կար, որ թագավորը իր որդիները հանձնում էր որևէ իշխանի դաստիարակության, իշխանը թագավորին սանին սնուցում էր իր տանը իր զավակների հետ, և եթե ինքը ունենում էր ծծկեր երեխա, թագավորն և իշխանն անհրաժեշտ էին կաթնեղբայրներ: Մեծանալիս, թագավորն և եթե թագավոր էր դառնում, իր մոտ էր բերում կաթնեղբորը՝ իբրև մտերիմ ընկերուհի: Եղիշեն (Բ. Եղ.) դառնապես գանգատվում է՝ սսելով. «Հայոց նախարարներից ոմանք նրա (Հագկերտ Բ-ի) եղբայրներին սնուցել էին իրենց մայրենի կաթով—նա ամենից խիստ նրանց հետ էր վարվում»։ նշանակում է՝ Պարսից թագավորները նույնիսկ Հայոց նախարարներին էին հանձնում իրենց որդիների դաստիարակությունն ու խնամակալությունը:

Թագավորների օրինակով՝ ավագ իշխաններն էլ իրենց որդիները հանձնում էին կրտսեր իշխանների կամ սեպուհների դաստիարակության:

59. (Եր. 121). Բնագրում գրված է. «Ե՛ ժամանակս խուլութեան Տիրանայ»: «Եսպութեան» աղավաղված բառն ուղղեցինք՝ «Եսպութեան» = խուլութեան», այսինքն՝ խնլագարություն: [Տե՛ս Նորայր, «Բառաքնն.», էջ 51:— Խմբ.]:

60. (Եր. 121). Բնագրում գրված է. «Որպէս առաջին թագաւորին»: Այս աղավաղությունն ըստ Նորայրի ուղղեցինք՝ «Որպէս առ առաջին թագաւորաւքն»:

61. (Եր. 121). Բնագիրն այստեղ ունի «նայնպէս ստրատելատութեան»

սպարապետութեանն, զօրավարութեանն մարտի կուուելոյ, գործոյ ըսագմիկ ճակատամուղ նիզակին, իրափառն (Var. իրաւափառն), աղանազգիք աղանազօրօք արծուէնշանք, վարժնականիքք». բառերի կուտակություն, որոնցից մի քանիսը անհասկանալի են կամ կասկածելի: Մենք այսպես թարգմանեցինք ենթադրաբար, մոտավորապես: «Ստրատելատ», որից «ստրատելատություն» հունարեն բառ է, «στρατηλατης», որ տառացի նշանակում է զորավար. գործ էր անում այն զորավարների մասին, որոնք այս պաշտոնն ստացել էին Հունաց կայսրներից:

62. (Եր. 121). «Աղանազգի» Աճառյանը (Արմ. բառ.) ծագեցնում է ասորական աղան = ձձձձ բառից, որ նշանակում է իշխան, գլխավոր: Իսկ «աղանազօր» բառը նա համարում է սխալ գրված՝ նախորդ բառի ազդեցությամբ, և ուղղում է «աղանազօր»: Ե. Մ. «աղանազգիք», «աղանազօր» բառերն ուղղում է «աղեղնածիգք», «աղեղնազօր», ինչպես ունի և Մեսրոպ երեցի Վարք ս. Ներսեսի (Սոփիք, Զ., եր. 17): «Իրափառն» կամ «Իրաւափառն» անծանոթ բառ է:

63. (Եր. 122). «Սատրապ» (Var. սատրապետ) հունարեն բառ է՝ «στρατηγ», որ նշանակում է զավառի կառավարի: Հունարենն էլ փոխ է առնված հին պարսկերենից, որի սկզբնական ձևը՝ xšatrapa, նշանակում է աշխարհապահ, երկրպահ: Նույն բառը հայերենում պահպանված է «շահապ» ձևով, որ փոխ է առնված պարսկերենից: Քանի որ Փավստոսը բոլոր տեսակի իշխանների մեջ առաջին տեղում հիշում է սատրապներին, կարելի է սրանից հետևել, թե նա աչքի առաջ ունի բազիլիսերին կամ ավագագույն նախարարներին:

64. (Եր. 126). Բնագրում գրված է. «Ենարհել ամենեցուն միով միարանութեամբ»: «Ենարհել» ուղղեցինք «խորհել»:

65. (Եր. 126). Բնագրում գրված է. «Ե՛ զԲագարատ մեծ իշխանն տապաւապետութեանն»: Վերջին բառը, որ անշուշտ աղավաղված է, ըստ Նորայրի ուղղեցինք «ասպետութեանն»:

66. (Եր. 126). Բնագրում՝ «Ասէին նմ էնկոմիա»: «էնկոմիա» հունարեն բառ է՝ ἐγκώμιον, որ նշանակում է ներբողյան, գովեստ:

67. (Եր. 128). Բնագրում գրված է. «Ե՛ դատաստանացն ամենին»: Վերջին բառը մենք ուղղեցինք «ատենին»:

68. (Եր. 129). Որովհետև ուրկությունը (բորտություն, գողություն) սաստիկ վարակիչ և անբուժելի հիվանդություն է, ուստի ամենահին ժամանակներից ամեն տեղ մեծ զգուշություններ էին ձեռք առնում, որ այս հիվանդությունն ունեցողները շփում չունենան առողջների հետ և նրանց չվարակեն: Միջոցներից մեկն էր — ինչ որ և ներսես կաթողիկոսը հաստատեց Հայաստանում — բնակություններից դուրս հատուկ ուրկանոցներ շինել, որոնց մեջ փակում էին հիվանդներին և նրանց հարկավոր մթերքներն ու այլ պիտույքները մի փոքր բացվածքի միջով ներս էին գցում նրանց ամանների մեջ:

69. (Եր. 129). Բնագրում գրված է. «Ե՛ս պատանս աղբատաց»: «Պատանք» բառը իր նշանակությամբ այստեղ չի հարմարվում: Կարծում ենք,

Յն ազգազգված է՝ փոխանակ ազատադարանս-ի, Այսպես էլ թարգմանեցինք,  
70. (Նր. 132). Հուպի քաղաքում մի հավատացյալ էին կար՝ Տա-  
րիթա անունով, այսինքն՝ Այծմենիկ անունով, որ հայտնի էր բարեգոր-  
ծութեամբ և սղորմութեամբ: Նա հրվանդացավ ու մեռավ: Նրա մարմինը  
լվացին և վերահարկը դրին: Լսելով, որ Պետրոս առաքյալը Հուպիից  
հեռու չէ, նրա եսելից մարդ սուղարկեցին և հրավիրեցին գալ: Պետրոս  
առաքյալը խելոյն եկավ, բոլորին վերնաանից զուրս հանեց, ծունկ չոքեց,  
աղոթք արեց ու հետո դիմեց մեռելին՝ ասելով. «Տարիթա, վեր կաց Հիսուս  
Բրիստոսի անունով»: Մեռելը աչքերը բացեց ու տեղում նստեց. Պետրոսը  
նրա ձեռքից բռնելով ստեղ կանգնեցրեց (Գործք., Բ, 36—40):

71. (Նր. 132). Տն՛ս Գաղ., Բ, 7—10: Հետաքրքրական է Փավստոսի  
մաս, որ այստեղ ունի՝ «որ բուն սրևնքն էին» (Գաղ., Բ—9): Այնինչ հա-  
յերեն թարգմանությունը բնագրում այստեղ գրված է. «որ կտրծնեալ սրևնքն  
էին», ինչպես հունարենում, որ նույնպես ունի «կարծնեալ»  
72. (Նր. 134). Արիոսական— հետևող Արիոսի աղանդին: Արիոսը  
Ալեքսանդրիայի եկեղեցու քահանա էր, որ սուսպանում էր: Յն երրոր-  
գուսթյան երկրորդ տեղը՝ օրդին, ստեղծված է հորթի՝ ոչնչաց, ուրմն մա-  
մանակով կրտսեր է նրանից, նա արարած է և ոչ ծնունդ:

73. [Ստ. Մալխասյանցը բնագրից մոտավորապես 5 էջ չի թարգմա-  
նել: Մենք թարգմանեցինք ու լրացրինք:— նմր.]:  
74. (Նր. 145). Աստված Աբրահամ նահապետին հրամայեց, որ մի  
հեռավոր լեռան վրա իր միակ որդուն՝ Իսահակին, զոհ մատուցի իրեն:  
Աբրահամը Իսահակին առնում զնում է երեք օրվա ճանապարհ, հասնում  
է ցուլց արված լեռը, սեղան է շինում, փայտը դաբրում է, Իսահակին  
կապում և գնում է փայտի վրա: Սուրբ վերցնում է, որ մտքի երեխա-  
յին Հրեշտակը երկնքից արգելում է ձեռք սալ երեխային: Աբրահամը  
չուրջը նայում, տեսնում է, որ Սարեկա ծառից մի խոյ է կախված եզ-  
չյուրներին: Խոյն առնում, զոհում է Իսահակի փոխարեն (Մենգ., ԽԲ,  
1—13): Նրբայական բնագրում Սարեկա ծառի փոխարեն գրված է մա-  
ցառներում:

75. (Նր. 145). Ակնարկություն մանանայի վրա, որ ցողի նման իջ-  
նում էր առավոտները, և որով խորայնացիք անապատում կերակրվեցին  
բառասուն տարի:  
76. (Նր. 146). Բնագիրն ունի. «Որ չերթալ օրեք ի մարդկանէ, այլ  
պատճառ միայն առնէ գանուն իւր ի վերայ անեւելոյք մարմնոյն, մահ է և  
խրոյ արքայութեանն...»: Եղաբով ազգած բառերը զուրս գցեցինք՝ իր-  
րե անհասկանալի:  
77. (Նր. 147). Ս. Ներսեսի վարքում (Սոփերք.: 2. եր. 58) գրված  
է «ամիսս իննս՝ փոխանակ Փավստոսի ինը տարուս»:  
78. (Նր. 148). Բնագրում գրված է. «Իբրև զօր հակառակորդս:  
Մենք ուղղեցինք շիրքի զիւր հակառակորդս և ըստ այսմ թարգմանեցինք»:  
79. (Նր. 149). Բնագրում գրված է. «Ուստի՝ կարծեցես բանիցս պա-»

տասխանիս պատրաստել: Մենք ուղղեցինք «ուստի՝ կարելի է...» և ըստ  
այսմ թարգմանեցինք:

80. (Նր. 153). Բնագիրն ունի «Մի՛ գոցի ոսկւոյ կամ արծաթոյ դա-  
նակ առ ունեք»: «Դանակ»-ը մենք ուղղեցինք «դանակ» և ըստ այսմ թարգ-  
մանեցինք: Գ. Մ. Եղանակ-ը ուղղում է «քանակ»:

81. (Նր. 154). «Սոփեստես» հունարեն բառ է՝ «օգիստը», որ սկզբնապես  
նշանակում էր իմաստասեր, ճարտար: Այս անունով հին Հունաստանում  
կոչվում էին քաղաքացի՝ ճարտարախոս և ճարտարամիտ մարդիկ, որոնք  
սովորեցնում էին փիլիսոփայություն և ճարտասանություն: Շատերը թա-  
փառում էին քաղաքի քաղաք՝ իրենց արվեստը սովորեցնելու: Իրենց գի-  
տություն և մտավոր կրթվածի պատճառով հարգանք էին վայելում: Բայց  
ժամանակի ընթացքում նրանք սկսեցին ի շարք գործ դնել իրենց գիտու-  
թյունը, մանավանդ ճարտարախոսությունը, և պաշտպանում էին սխալ մեթո-  
դներ՝ ճշմարտության կերպարանք տալով: Այս վերջին մտքով էլ այժմ գործ է  
ածվում «սոփեստես» բառը կամ նրա հայերեն թարգմանությունը՝ «իմաստակ»:

82. (Նր. 154). «Մագիստրիստես» հունարեն բառ է՝ «μαγιστρων», որ  
ծագում է լատիներեն magister բառից, որ նշանակում է ավագ վարպետ:  
Մագիստրիստես Բյուզանդիայում կոչվում էին կայսերական տան ավագ  
մտազիկ և ավելի ցեղճանուր՝ նշանակողներ: պետական բարձր պաշ-  
տոնյաներ:

83. (Նր. 155). Սուրբ Սարգիս, Կեսարացի, Կապադոկիայից, ապ-  
րում էր Կոստանդիանոս Մեծի և Տրդատի ժամանակ. զինվորական ծառա-  
ություն մեջ էր և բարձր պաշտոն ուներ, տարածում էր հեթանոս գործի  
մեջ թրիստոնեություն: Մեծ հազթություններ տարավ հույների դեմ՝ իբրև  
Շապուռի զորավար. բայց որովհետև լիակցեցավ կրակին երկրպագել և  
կուռքերը խորտակեց, մահվան դատապարտվեց: Նրա որդին էլ՝ Մարտի-  
րոսը, հավատի համար սպանվեց: Ասքը Մարտիրոս հայերի մեջ մեծ ժողո-  
վրդահանություն է վայելում և համարյա ազգայնացրած սուրբ է, որի  
անվան հետ կապված են զանազան սեռոտիպաշտություններ: Նրա անունով  
շատ կան տաճարներ:— Թեոդորոս ստրատելատ, Պոնտոսի Ամասիա քա-  
ղաքի շրջակայքից, նույնպես զինվորական բարձր պաշտոնյա, ժամանա-  
կակից ու. Սարգսի, որ թրիստոնեական հավատը դավանելու և կուռքերը  
անարգելու պատճառով նահատակվեց իկիանոսից:

84. (Նր. 155). Վաղես կայսրը, որ իր եղբոր՝ Վաղեստիանոսի կող-  
մից նշանակվեց կայսրության արևելյան կեսի կառավարիչ, թաղված  
364—378 թվ. և ընկավ վեստգոթների գեմ մղած պատերազմում: Նա հայտնի  
էր իբրև շեմ արիստական, որի պատճառով և շատ հայաժանրների էր նե-  
թարկում ուղղափառ եպիսկոպոսներին: Նրա մահվան վերաբերյալ այ-  
սովանությունը, որ բերում է Փավստոսը, հայտնի չէ Սոկրատեսին, որ նույն-  
պես գրում է, թե պատերազմի մեջ մեռավ:

85. (Նր. 156). Լուսարան, կազմված ըստ հունարենի, հին եկեղեցի-  
ներում աչև բաժանմունքը, որտեղ մկրտություն էին կատարում. մկրտարան:

86. (Նր. 156). Մեծուպ երեցի մոտ (Վարք ու Ներսեսի, Սոփերք. 2.

եր. 52—53) դեպպանների թիվը տասնութն է, փոխանակ Փավստոսի հիշած իննի, իսկ այն անունների մեջ, որ երկուսն էլ ունեն, կան տարբերություններ. այսպես՝ փոխանակ Փավստոսի Մեհեն-ի, Վարքն ունի Մեհենդակ, փոխանակ Մեհառ-ի՝ Մեհևան, փոխանակ Մուշի-ի՝ Մուշկան, փոխանակ Բագենից՝ Բառենից, փոխանակ Հրսիժորոյ՝ Գաբեղենից: Վրկեն նահապետն Հարուժենից բուրբուլին չկա Վարքում, փոխանակ Փավստոսի Գեմետ նահապետն Գեթունեաց, Վարքն ունի Գենի նահապետն Գեունեաց: 87. (Նր. 157). Բնագրում՝ «զվեց ամ»: Ներսեսի Վարքն ունի 8 ամիս, Ծ. Մ. Փավստոսի վեց ամը ուղղում է վեց ամիս:

88. (Նր. 159). Բնագրում գրված է. «ի լիութեան», որ մենք ուղղեցինք ու թարգմանեցինք «ի լիտութեան» ըստ Նորայրի:

89. (Նր. 159). Բնագրում՝ «Ստաղատը, զրախօսք», որ մենք ենթադրաբար թարգմանեցինք «զատի մեջ ստողներ, զրպարտողներ»: Մի բանն սող հետո՝ աղավաղված ենք համարում բնագիրը, որ ունի «աւանդատու զաւանդս լի զպահեստս բարձեալ»: 90. (Նր. 162). Բաքասեր անձանք տեղ է, ուրիշ տեղ հիշատակված չէ:

91. (Նր. 163). Սողոմ քաղաք Պաղեստինում, Մեռյալ ծովի մոտ, որ բնակիչների՝ սողոմացոց, անօրինակ անառակությունների պատճառով աստծու հրամանով կործանվեց Գոմոր քաղաքի հետ միասին (Մենդ., ԺԹ, ԻԳ և հաջ.): Այնուհետև «Սողոմ», «սողոմացի» բառերը սկսեցին գործածվել նշանակելու համար անառակ վարքի տեր քաղաքներ ու մարդիկ:

92. (Նր. 164). Ժանտախտի առաջին հիշատակությունը Հայաստանում: Մի ուրիշ ժանտախտի դեպք էլ հիշում է Փավստոսը (Գ, Ժե): Նա արժարժվեց Արտագերս ամրոցում և մի ամսում 17 000 մարդ կոտորեց:

93. (Նր. 167). Այս Շավասպը, ինչպես Փավստոսն էլ է ասում, միակ մնացորդն էր Արծրունյաց ցեղից, որին Արտավազդը և Վասակ Մամիկոնյաններն ազատեցին կոտորածից ու տարան Տայր, այնտեղ մեծացրին և իրենց տոհմից նրան կին տվին, որից նորից սերվեց Արծրունյաց տոհմը (Փավստ., Գ, Ժբ): Այս Շավասպի որդին է, անշուշտ, Մերուժանը, որի կատարած շարիքները մանրամասն պատմում է Փավստոսը հաջորդ գլուխներում:

94. (Նր. 168). Բնագրում գրված է. «առ համբաւ ցանկութեան անուան արփեալ լինէր մին ևս հօրեղբորորդիքն... Մենք ուղղեցինք՝ «նուանն... մեա» (=միա): Նորայրը ևս ենթադրում է, թե «անունն» ուղղելի է նուանն:

95. (Նր. 169). Բնագրում գրված է. «Ե թուն բանակի տեղսն Արշակունեացն ի ներքոյ Միւնեացն և ի վերայ ասպարիսացն»: «Բանակի տեղսն» ուղղելի է «բանակետեղն», ինչպես անի Փավստոսը նույն գլխում, քիչ հետո՝ «այնդիման բանակետեղ բնին»: Միւնեացն (var. Միւնեացն) համարել են հատուկ անուն, բայց Ծ. Մ. և նրանից անկախ՝ Աճառյանը (Արմ. բառարան) բացատրում են իբրև պարսպով պատած որսատեղ: Առաջաբն բառն այստեղ գործ է ածված սկզբնական նշանակությամբ՝ «խարշավարան»:

96. (Նր. 169). Բնագրում գրված է. «արքիդիակոնն», որ հունարեն բառ է՝ ἀρχιδιακονος, նշանակում է ավագ սարկավագ. խոսքը քերականորեն անորոշ է այստեղ: Գրված է. «Ծւ զիւր արքիդիակոնն եպիսկոպոսին, որում անուն Մուրիկ կոչէր»: Մուրիկը, հավանորեն, սարկավագի անունն է և ոչ թե եպիսկոպոսի, բայց «եպիսկոպոսի» բառը տարակույսի տեղիք է տալիս. եթե Մուրիկը եպիսկոպոսի սարկավագն է եղել, ապա ինչո՞ւ է ասված «զիւր արքիդիակոնն», այսինքն՝ ներսեսի: Մենք ենթադրաբար թարգմանեցինք՝ «Եր եպիսկոպոսական ավագ սարկավագը»:

97. (Նր. 170). Բնագիրն ունի՝ «ժանեալ», որ աղավաղություն է, փոխանակ՝ «ժանուարալ», ինչպես ունի Փավստոսը, Գ. Բ. և Գ. Ա. «ժանուարալ», «ժանուարօք»: «ժանուար» պարսկերեն բառ է — zanbar, պատգարակի մի տեսակ՝ մարդիկ և իբրև փոխադրելու համար: Հավանորեն՝ երկու օրոք, որ կախում էին գրաստի երկու կողքից, որոնց մեջ նստում էին մարդիկ:

98. (Նր. 170). Բնագիրն այստեղ ունի. «այսմամ թաղատուր զիւր սամոյրսն զզլիտով անեալ՝ ի փոյք կնշանն մտեալ զիւր դէմս երեսացն ծածկէր», որի մեջ նահասկանալի են «ի փոյթ կնշանն»: Հայկ. բառաբանը («կինչ» բառի տակ) այսպես է մեկնում այս խոսքը. «կամ իբրու խողի և կամ կնշան, որպէս ի ձայն խողի, այսինքն խորատալու»: Նորայր Բյուզանդացին (Կորյուն, եր. 342) երկու բառը միացնելով կարգում է «ի փոյթկնշանն» և այս բառը համեմատում է սանսկրիտ paryanka բառի հետ, որ նշանակում է անկողին, մահճակալ: Երկու մեկնություններն էլ անհավանական են: Արմ. բառ. չունի այս բառերը: Ուրիշ բացատրություններ ինձ հայտնի չեն:

Ծու ուրիշ կերպ եմ բացատրում այս բառերը: «Փոյթ» բառը միայն Փավստոսի մեջ պահպանված հնագույն ձևն է «փոթ» բառի, որ ներկայումս միակ գործածականն է մնացել: Ոչ-ո ձայնափոխության օրինակներ ունենք զրաբարի շրջանում՝ անագորոյն և անագորան, իսկ զրաբարի և ժշտարճարարի շրջանում՝ փոյթ—Փոթի (քաղաք), մակոյլ—մաքոք, լոյղ—լոլ: Իսկ «կնշանն» (սեռ. հոլ., ուղղականը՝ կունչ) պարսկերեն kuni բառն է, հին փոխառությամբ, բառի պահպանման ձևից, որի նոր փոխառությունն է զավառական քունչը: Կ-ք ձայնափոխության շատ օրինակներ ունենք. ինչպես՝ կամար—խամար, մակոյլ—մախո, կուժ—խուչ, կեռաս—էրազ, կնշիթ—էունչութ, կարավան—խարավան, կույր—բոռ ևն: «Բունչ» բառը պարսկերենում, բացի անկուն նշանակությունից, նշանակում է նաև խորշ կամ ծալք զգեստի, կապերտի ևն: (Պարսկ.—հայերեն բառարան Գեորգ Տեր-Հովհաննիսյանի):

Ըստ այս բացատրության՝ բնագրի վերոհիշյալ խոսքը տառացի պետք է հասկանալ. «Թագավորը սամուրեանի գլխին քաշելով՝ նրա (=կնշանն) փոթի մեջ (ի փոյթ) մտնելով ծածկում էր իր երեսը: [Մենք նպատակահարմար համարեցինք թարգմանել այսպես՝ «շտապով իր երեսը ծածկում է խոմփացնելով՝ իբր թե քնած է»։—Խմբ.]»:

99. (Նր. 173): Մայր ողբոց և ձայնարկուներ: Մեռելի վրա սուգ կատարելու համար հրավիրում էին հատուկ լավան կանանց: Սրանցից մեկը



ողրի մայր էր դառնում, սկսում էր մեռելի գովեստն անել. երբ մի տուն վերջացնում էր, ձայնարկունները (լուկան կանայք) այս առեղ կրկնում էին, և ուղրի ազգականներ բարձրացնում: Հետո ուղրի մայրը ասում էր գովեստի հաշորդ տունը, և ձայնարկունները կրկնում էին, ու այսպես շարունակ:

100. (Նր. 173). Բնագրում գրված է. «Վ նուանել իրենաց ձայր նիցն», որ մենք ենթադրաբար թարգմանեցինք՝ «երբ նրանց ձայները դաղաբեցին», որի ճշտությունը վստահ չենք: «Վնանել» բառը Փավստոսը ուրիշ երկու անգամ էլ գործ է ածել՝ երկու անգամ էլ անորոշ նշանակությամբ. «Ձիա՛րդ եղէց բարեխոս վասն այնոցիկ, որք նուանեցին» (Գ, 47), «Որպէս առաջին թագաւորքն նուանեալք՝ յիրարանչիր շափուս» (Գ, 5):

101. (Նր. 175). «Երկրորդական մեծ առեւ» շատ որոշ չէ: Մենք հասկանում ենք այն մեծ կալվածքը, որ ըստ օրենքի պատկանում էր Պարսից թագավորի երկրորդին և գտնվում էր Ասորդատականում:

102. (Նր. 177). Անկասկած, այստեղ բնագրից մի թերթ դուրս է բերված, որի մեջ մանրամասն պատմվում էր, թե ինչպես Վասակը հաջողեցրեց Արշակի փոխուստը Պարսկաստանից, ինչպես Շապուհը զայրացավ այդ փոփոխութիւնը և հրովհրեց իր մոտ Մաքսիին ու նրան մեղադրում էր: ԺՁ գլխի միջև այս թերթն նկատել է և Ս. Մ. (հր. 26):

103. (Նր. 177). Ժէ գլխի վերնագիրը քննարկում թերթ է՝ «Յաղագս թէ զիարդ յուզեաց Շապուհ արքայ Պարսից ի վերայ քրիստոնէութեան»... նույն վերնագիրը ցանկում գրված է. «Յաղագս թէ զիարդ յուզարկեաց զհալածեայն Շապուհ»... Երկու ազգավորված ընթերցվածքները մենք վերականգնեցինք՝ «Եթէ զիարդ յուզեաց հալածանս Շապուհ արքայ Պարսից ի վերայ քրիստոնէութեան» և այսմ թարգմանեցինք:

104. (Նր. 180). «Շտապան պահուցիքն բառ է՝ Oständ, սոփոց պարսկերենում մնացել է Oständā — զափոռապետ: Հայերենում «տառան» բառը սկզբնապես նշանակում էր Արշակունյաց թագավորական տոհմի կալվածքները, որոնք կոչվում էին արթունի տուն: Այս նշանակությունից է ածանցվել «տառանիկ» բառը, որ նշանակում էր թագավորական կալվածքում ապրող ազնվական գասակարգը, որ հետագայ սերունդն էր կազմում Հայկազյան կամ Արշակունի թագավորների: Արշակունյաց բարձունից հետո «տառան» բառը սկսեց գործածվել ուրիշ նախարարական կալվածքների գլխավոր շաղաքները նշանակելու համար և, մասնավորապես, Գլխի քաղաքի համար, որ պարսիկ մարդկանների մայրաքաղաքն էր: Վերջապես, Ռատան իբրև հատուկ անուն գործածվեց Ռշտունյաց կալվածքի գլխավոր քաղաքի համար՝ Վանա լճի հարավարևոտում:

[Ուստան, ըստ Ագոնցի, նշանակում է շնմ, դուռ, ապա նաև արքունիք: Ուստի «Վ» զգալառան ունէր յոստան աղաբհայտութունը նշանակում է արքունական գարձրեց, այսինքն՝ պետականացրեց:— Խմբ.]:

105. (Նր. 180). Գլխի վերնագրում քննարկն ունի. «Փոխուստական լինէր արքայն Պարսից»: ուղղեցինք ըստ իմաստի և ըստ ցանկի՝ «չարքայն Պարսից»:

106. (Նր. 181). Արվացաստան նույնն է թե Ագորեստան կամ Ասորք:

107. (Նր. 182). Բնագիրն այստեղ աղավաղված է՝ «Ձի կթէ մեք լեալ էար ամենայն Արեաց զօրք հանդերձ այսպիսի աշողութիւն գայր ի ձեռն, քաշ թէ զույգ հասարակ այդպիսի գործ ի միասին կարէաք առնել»: Մենք ուղղեցինք «զօրօք հանդերձ», քաշ թէ այսպիսի աշողութիւն գայր ի ձեռն»... և ըստ այսմ թարգմանեցինք:

108. (Նր. 183). Ինչպես 49-րդ ծանոթության մեջ հիշեցինք, Ասորեստանը սահմանակից էր Պարսկաստանին և Պարսկաստանի Տիգրոսը հենց սահմանազիխի վրա էր՝ Տիգրիսի ափին: Ուստի այստեղ ևս Ասորեստանի սակ պետք է հասկանալ Պարսկաստան և հատկապես Տիգրոս քաղաքը:

109. (Նր. 184). «Նորան» հավանորեն պարսկերեն բառ է, xavran կամ xuzan, որով կոչվում էր Վահրամ Գուրի պալատը ըստ Քիրյաթյանի (Արմ. բառ.): Խորանը նույնպես վրան էր, բայց դասելով նրա զանազանակերպ գործածությունից՝ կարող ենք ասել, որ պետք է լիներ թագավորների և մեծամեծների ընդարձակ, զարդարուն և ներքին հարմարություններ ունեցող վրան:

110. (Նր. 186). Բնագրում գրված է. «զնծրին քաղաք, որ է յԱրուեստանին»: Նծրինը Մծրինն է՝ օտար ազգերի արտասանությամբ (Nisibis). Իսկ Արուեստանը նույն Արուացաստանը կամ Ասորեստանն է (ան՛ս ծան. 108):

111. (Նր. 187). Այս Գանձակը տարբեր է մեր Գանձակ—Գյանջայից (այժմ՝ Կիրովաբադ) և գտնվում էր հին Ասորդատականում, Քավրեղից հարավ: Գիտնականների կարծիքով, այժմյան Քախտի Սուլեյմանն է Ջենջանի մոտ (H. Adontz, Юстиниан, 2). Ինչպես հաճախ հիշվում է Փավստոսի մոտ, Արշակունիների ժամանակ Հայաստանի արևելյան սահմանը, Կասպից ծովի արևմտյան ափերից իջնելով մինչև այստեղ էր հասնում:

112. (Նր. 190). Բնագրի «յուտեստ» բառը թարգմանեցինք «ուտեստի» կերակրվելու համար: Մեծաքանակ զորք մի տեղում նրկար ժամանակ պահելու համար պահանջվում է մեծ քանակությամբ կենսամթերք մարդկանց և ձիերի համար, որ Հայաստանում ամեն տեղ չէր կարելի ձարել՝ հարմար ճանապարհների և փոխադրության միջոցների բացակայության պատճառով: Ուստի սովորություն էր զորքը այնպիսի տեղ պահել, որտեղ կենսամթերքն առատ էր կամ որտեղ նախօրոք ամբարված էր բավականաչափ կենսամթերք: Սա առավելապես վերաբերում է հեծելազորքին: Որովհետև այն ժամանակներն անկարելի էր միլիոնավոր փթերով խոտ պատրաստել և փոխադրել հեծելազորքի կանգնած տեղերը, ուստի ավելի հարմար էին գտնում հենց հեծելազորքը ձմեռները տանել այնպիսի տաք տեղեր, որտեղ ձմեռվա ամիսներին էլ ձիերը կարողանային դաշտերում արածել: Այս տեղերը սովորաբար կոչվում են ձմերոց, ինչպես հաճախ հիշվում է Նիշնի Պատմության մեջ: Այսպիսի մի ձմերոց է եղել Անգեղատունը:

113. (Նր. 191). Բնագրում՝ «Ըստ այլ կաթիլ», բառարաններն այս բառը բացատրել են իբրև «կողմը», ծագեցնելով պարսկերեն «գաթ», «թազ» (?) բառից: Նորայր Բյուզանդացին չույց տվեց այս բացատրու-

Քյան սխալ լինելը և «կաթն» աղավաղված ձևն ուղղեց՝ «կարթնալ»—շուտ առավով, շուտ գալով:

114. (Նր. 193). Սահմանագրի այս երկու տներին մեկը հավանորեն Ատրպատականն էր, մյուսը՝ Աղձնիքը, որտեղից պարսիկները մտնում էին Հայաստանի սահմանները:

115. (Նր. 194). Քավրեշը այժմյան Քավրիզն է Ատրպատականում: Ուրիշ տեղ (Գ, 1Ք) Փավստոսն այս քաղաքը կոչում է Քավրեթ:

116. (Նր. 194). «Կարավան» պահլավերեն բառ է՝ kāravan, որ տաբաժված է ուրիշ շատ լեզուների մեջ ևս: «Կարավան» նշանակում է ճանապարհորդների խումբ, որոնք ճանապարհորդություններ էին կատարում զինված պահապաններով՝ ավազակների հարձակումներից պաշտպանվելու համար: Այս նշանակությամբ այժմ գործ է ածվում «քարվան» ձևով: Բայց հին ժամանակ «կարավանը» նշանակում էր նաև բանակ, ինչպես այստեղ Փավստոսի մեջ և մի քանի անգամ Նղիշի մոտ:

117. (Նր. 196). Բնագրում գրված է. «Տապրիկ զօրօք», որ մենք թարգմանեցինք «Տապարիստանի զօրքով»: Տապարիստանը պարսկական նահանգ էր նախկին Մարաստանում:

[«Տապրիկ» ուղղում ենք «տապարիկ»՝ «տապարավոր» նշանակությամբ:— Խմբ.]

118. (Նր. 199). Բնագրում գրված է. «անկանէր ի ներքոյ ի դակիշն»: «Կակիշ բառի ծագումը որոշ չէ: Ղակիշ կոչվում էր զորքի կայանը, որ թշնամու անակնկալ հարձակման դեմ պաշտպանված էր զանազան միջոցներով՝ պատեններով, թմբերով, ցանկապատերով, խրամատներով ևն: Սերետի մոտ (գլ 1, նոր հրատ.) նկարագրված է արաբաց զակիշը:

119. (Նր. 202). Բնագրի վերնագրում գրված է. «Մարուճան», իսկ բնագրում՝ «Մարին անուն մեծ նախարար»: Մենք ուղղեցինք՝ «Մարուճան մմն մեծ նախարար» և ըստ այսմ թարգմանեցինք:

120. (Նր. 204). «Զինդկապետ» կամ «զինդկապետ» կամ «զինդակապետ» անշուշտ պահլավական բառ է, բայց իրանական գրականության մեջ չի հիշված: Մագման ու ճիշտ նշանակության մասին զանազան ենթադրություններ են եղել. ոմանք ծագեցնում են պարսկերեն zanta փիղ բառից (ուրեմն՝ զինդկապետ = փղապետ), ոմանք՝ զենդերեն zantupaiti բառից = պահլավերեն zandput = խմբակցության պետ: Հյուսիսումը բացատրում է իբրև zindik-ների պետ, բայց այս բառի բացատրությունը չի տալիս, ասում է միայն, որ դրանք զանդիկներ չեն: Փավստոսի գրքում բառի գործածությունից երևում է, որ զինդկապետը պարսից մեջ մի անժանոթ զինվորական բարձր աստիճան էր (Արմ. բառ.):

121. (Նր. 205). Այս գլուխը, բացի այլանդակ բովանդակությունից, աչքի է ընկնում նրանով, որ միանգամայն անտեղի կերպով ընկած է պատերազմական գործողությունների նվիրված մի շարք գլուխների մեջ, որոնց հետ ոչ մի կապ չունի: Արդյոք պատահական աղավաղություն է գրազգիներին, թե նորամույժ հավելված է՝ դժվար է ասել:

122. (Նր. 204). «Անգերձապետ» պահլավերեն բառ է՝ andarzpat, որ

հիմնական նշանակությունն է խորհրդական, andarz բառից, որ նշանակում է խորհուրդ: Այս անունով կոչվում էին հին Պարսկաստանում բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք խորհրդականի պաշտոն էին վարում պետական բարձր իշխանավորների մոտ: Այս բառը հայերենում գրված կա և «հանդերձապետ» ձևով՝ andarz-ը շփոթելով հայերեն «հանդերձ»-ի հետ (որ նույնպես պարսկերեն բառ է), ուստի և սխալմամբ հասկացվում է իբրև արքունի հանդերձատան վերակացու (Արմ. բառ., Պատկ. Матер. арм. сл. II):

123. (Նր. 204). «Շապստան-տակառապետ» — երկու պարսկական բառ: «Շապստան», պահլավերեն՝ šapastān. պարսկերեն šabistān, նշանակում է ներասենյակ կամ կանանոց, իսկ տակառապետ, պահլավերեն՝ takār, պարսկերեն՝ tagār, նշանակում է (գինու) կարաս, որից՝ տակառապետ = (գինու) մատակարար, մատույակ: Ըստ այսմ՝ «շապստան տակառապետ» նշանակում էր այն պաշտոնյան, որ արքունական կանանոցի մատույակն էր, գինու մատակարարը: «Տակառապետ» բառի տեղ մեր հին մատենագրության մեջ գործածված կա «տաճարապետ» բառը, որի մեջ տաճարը «սեղանատուն, կոչունք» է նշանակում, և ամբողջ բառը համապատասխանում է տակառապետի պաշտոնին:

124. (Նր. 205). «Շամբարտակապետ» կամ «ամբարտակապետ» պահլավերեն բառ է՝ anbārakapat, համբարների, այսինքն՝ մթերանոցների վերանուսույ:

125. (Նր. 206). «Դասսընտրեին» անվան փոխարեն, որ միայն այստեղ է պատահում և ուրիշ ոչ մի տեղից հայտնի չէ, ներսիսյան դպրոցի Փավստոսի ձեռագրին ունի ավելի հավանական ընթերցվածք՝ «և դասս ընտիր էին սոքա» (ցույց է տվել Գր. Տեր-Պողոսյանը, «Հանդ. ամս.», 1900, կր. 199 ա):

126. (Նր. 208). Բնագրում գրված է. «զմտապետը շինականաց». ենթադրաբար թարգմանեցինք «զուղղերի համփաներ»: Դասապետները գուցե հազարապետին (տե՛ս ծան. 34) ենթարկված ստորին պաշտոնյաներ էին, որոնց հանձնվում էին գյուղերի գործերը (հողի, ջրի, արոտատեղի և այլնի մասին):

127. (Նր. 209). Ակնարկություն Քրիստոսի առակի վրա անպիտան ծառայի մասին, որ իր տիրոջ տված մի քանքարը փոխանակ շահեցնելու՝ տարել թաղել էր հողի մեջ և վերադարձրեց իր տիրոջը, երբ սա ետ եկավ ուղևորությունից: Տերը նրան մեղադրելով ասաց, որ գոնե պետք է ծառան այդ տաղանդը սեղանավորներին տար, որպեսզի ինքը գոնե տուկոսով ստանար իր փողը (Մատթ., Իէ. 14—28):

128. (Նր. 209). Բնագրում գրված է. «Բայց լալ լիցի ձեզ զնույն սիրել»: Մենք ուղղեցինք «բալ լիցի» և ըստ այսմ թարգմանեցինք:

129. (Նր. 211). Վարազագիր մատանի: Մատանին մատի վրա կրելու օղ էր, որի մեջ ագուցված էր մի թանկագին քար՝ վրան փորագրված տիրոջ անունը, որ և ծառայում էր իբրև կնիք: Վարազագիր մատանի նշանակում է այնպիսի մատանի, որի վրա փորագրված էր լինում վարազ =

Պարսից թագավորների գերբը: Վարազդեր մատանիով, սրբմե Պարսից թագավորի անձնական կնիքով, կնքված աղբ ամենահաստատ անսուտ երգ-ման նշան էր: Վարազ անունը իբրև պատմական շատերը կցում էին իրենց անուններին, ինչպես՝ Վարազ-Վաղան, Վարազ-Շապուհ, Վարազ-Ներսես, Վարազդատ և այլն:

130. (Նր. 211). Բնագիրն այստեղ աղավաղված է թվում կամ գոն մի քանի բառ պակաս: Գրված է. «Եբրեև տեսին զնոսա, արկին զերկուսանն զարբայն Արշակ և զսպարապետն Վասակ և պահելին...», որտեղ «արկին» բառի փոխարենը պակասում է:

[Այստեղ «արկին» նշանակում է «տրոսնցին». այդպես էլ մենք թարգմանեցինք: Փերականորեն ոչինչ չի պակասում ընազրում:—Խմբ.]:

131. (Նր. 211). Բնագրում գրված է. «Դիվը մենք թարգմանեցինք ավելի սովորական զէնուն և զփողեխայն»: «Դիվը» մենք թարգմանեցինք ավելի սովորական «ժեղուն» բառով: Երկուսն էլ ծագումն ու ճիշտ նշանակությունը անհայտ են, և ինչո՞վ են նրանք իրարից տարբերվում՝ դժվար է ասել: «Քաղցեայն» հավանորեն «քաղցեայն» բառի տարբեր ձևն է, իսկ «քաղցեայն» նշանակում է «քաղցեացի», «քաղցեացի», որովհետև պարսկերեն էին աստղաբաշխության մասնակցի և մոլորակների շարժումների հիման վրա գուշակություններ էին անում, ուստի «քաղցեայն»-ն նշանակությունը ավելի մոտ է աստղագետ կամ աստղահամա բառերին:

132. (Նր. 214). Արտավանը Պարսկաստանի վերջին թագավորն էր պարթևական հարստությունից (210—226 Վ. Ք.), որին սպանեց պարսի իշխաններից մեկը՝ Արտաշիր Մասանյանը և եղավ հիմնադիր Պարսկաստանում նոր հարստության, որ նրա անունով կոչվեց Մասանյան Արտավանի թագավորները և թե Արտավանի թագավորները Հայաստանում ըստ ավանդության սերված էին Պարթև Արշակ Մեծից, և հայոց Արշակունիները համարվում էին երկրորդ՝ Պարսկաստանի Պարթևների հետևի Այս պատճառով հայոց Արշակունիները Արտավանին համարում էին իրենց ազգական, իսկ Արտաշիր Մասանյանին և նրան հաջորդող Մասանյան թագավորներին համարում էին հափշտակիչներ, որոնցից իրենք պարտավոր էին Արտավանի սպանության վրեժն առնել, և միևնույն ժամանակ համոզված էին, թե երբ Արտավանի մահով Պարթևաց հարստությունը զազարեց Պարսկաստանում, իրենք՝ հայ Արշակունիները, հանդիսանում էին ավազագույնը Արշակ Մեծի սերունդների մեջ, իսկ Մասանյան տոհմից թագավորներին, որոնք սերվում էին իշխան Արտաշիր Մասանյանից, այսինքն՝ Արտավանի ծառաներից (հպատակներից մեկից), համարում էին ըստ օրենքի հայ Արշակունիների ծառաներ (—հպատակներ): Այսպես էլ ասում է Արշակը Շապուհին, թե «զուր» ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել:»

133. (Նր. 216). Արտագերս բերդի մասին Փալատոսը գրում է (Գ, մթ), թե Արշակ թագավորը շինել տվեց տեղի անառիկ գրբի պատճառով և Արշարունյաց զավառը հասկացրեց այս բերդին՝ կենսամթերք մատակարարելու համար բերդապահներին: Ուրեմն, բերդը առատ համբարա-

նեցներ սենը այն ժամանակ, երբ Փառանձեմը տասնհինգ հազար մարդով գնաց, այնտեղ ապաստանեց:

134. (Նր. 216). Բնագրում գրված է՝ «առ քաղաւորն Յունաց դիպեցաւ». պետք է լինի «առ քաղաւորին»: Պապը Հունաց թագավորի մոտ էր, որովհետև, ինչպես Փալատոսը պատմում է (Գ, մե), Պապը հենց որ պատանեկության հասակը մտավ, պատանդ ուղարկվեց Հունաց կայսեր գուռը:

135. (Նր. 218). Բնագրում՝ «զաւրաւարեմ», որ նորայն ուղղել է «զաւրաւարքեմ», որին և մենք հետեցինք: Սակայն թվում է, ո՞չ բնագրի «զաւրաւարեմ» է ճիշտ և ոչ նորայնի ուղղած «զաւրաւարքեմ»: Բերդից ավառը իջեցնելը զորավարների գործը չէր: Հավանորեն բնագրում եղել է «զաւրաւական»՝ զրբբբբբ, որ դասական հեղինակների մոտ հաճախ գործ է ածվում հավաքական նշանակությամբ:— Մի քանի տող հետո բնագրում սխալմամբ գրված է «յԱւրաւարաւգըւոն բերդին», որ ուղղելի է «յԱւրաւարեմ բերդին»:

136. (Նր. 218). Զլիթը հետևում է Քրիստոսի պատվիրին՝ «Հովի քաջ գանձն իր զնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ, 11—13):

137. (Նր. 219). Այս անվան սովորական ձևն է «Տոսպ», որ պատահում է արդեն ուրարտյան սեպագրի արձանագրությունների մեջ «Տոսպ» է գրում և ինքը՝ Փալատոսը, Գ, մթ գլխում:

138. (Նր. 219). «Ստիկան» պահպանել են ըստ Օստիկան, որ նշանակում է հավասարիմ, վստահելի: Հայերենի մեջ (գրաբարում) ոստիկան էին կոչվում թագավորին հավատարիմ և վստահելի մարդիկ, որոնց թագավորը նշանակում էր վերակացու, կուսակալ որևէ զավառի կամ աշխարհի վրա: Ի միջի այլոց, ոստիկան էին կոչվում արարների կողմից Հայաստանի վրա նշանակված կուսակալները, որոնք առաջ կոչվում էին պարսիկների «մարզպան» բառով, երբ նշանակվում էին Պարսից թագավորներից:

139. (Նր. 220). Բնագիրն այստեղ մտթ և դժվարհասկանալի է (զույցն պակաս բառեր կան). «և հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից որով հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն»: Մենք թարգմանեցինք մոտավորապես: [Պակասող բառեր չկան, և միտքն էլ հասկանալի է:—Խմբ.]:

140. (Նր. 223). Ինչպես Փալատոսը պատմել էր (Գ, իա) Սյունյաց Անդրեղ նահապետը մեկն էր այն երեք պատգամավորներից, որոնք Հունաց կայսեր մոտ գնացին՝ խնդրելով պաշտպանել Հայաստանը պարսիկներից: Ներսես թագավորի ժամանակ Այս պատգամավորության հետևանքը եղավ պատերազմը հույների և պարսիկների միջև, որտեղ շարժար պարտություն կրեց ներսեսը: Ահա Անդրեղի այս պատգամավորության վրեժն է, որ Շապուհը ավելի քան երեսուն տարի հետո լուծում է՝ նրա սերունդը հստորելով: Ներսեսի և Վաղեսի մասին տե՛ս ծանոթ. 53:

141. (Նր. 223). Մազզեղական կրոնը նույն զրադաշտական կրոնն

է, այսինքն՝ երկրպագութիւն արեգակին և կրակին, բազմաթիվ ծիսական պատմութիւններով: Բառը նշխարներով մոտ գործ է անվանուած բուն պահպանութեան ձևով՝ «դեն-ի Մազդեզն»: «Մազդեզն» պահպանութեան բառ է՝ mazdēsn, mazdeyasn, կրճատված է Արամազդ բառից և նշանակում է Արամազդի պաշտող:

142. (Ծր. 224). Բնագրում գրված է. «Վահանայ էր քոյրաթիւ և Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ»: «Քոյրաթիւ» բառը Հայկ. բառարանը բացատրում է «քոյր թուեցեալ՝ համարեալ», որ գոհացուցիչ չէ: Առձեռն բառարանը ավելի որոշ է բացատրում՝ «հորեղբոր կամ հորաքեռն աղջիկ, քոյր սեպված», բայց ճիշտ չէ: «Քոյրաթիւ» բառի մասին մի ուրիշ վկայութիւն է բերում Հայկազյան բառարանը՝ «Արդարև քոյրաթիւ է իմ առ ի հօրէ», այսինքն՝ «հիրավի նա իմ քույրաթիւն է հոր կողմից», որից կարելի է ավելի հավանական նշանակութիւնը դուրս բերել՝ խորթ քույր, ինչպես և մենք թարգմանեցինք: Հստ Փավստոսի՝ Համազասպուհին քույր էր Վարդանի և քույրաթիւ Վահանի: Իսկ Վահանը եղբայր էր Վասակ սպարապետի (Գ. ծ), ուրեմն, Վահանը, Վարդանը և Վասակը հարազատ եղբայրներ էին, և եթէ Համազասպուհին քույր էր Վարդանի, բայց քույրաթիւ էր նրա հարազատ եղբոր՝ Վահանին, նշանակում է՝ այս վերջինիս համար խորթ քույր էր՝ ուրիշ մորից ծնված, հոր կողմից քույր էր, մոր կողմից՝ խորթ-քույրաթիւ:

[Թարգմանութեան մեջ ուղղեցինք «ազգականուհի»։— Խմբ.]

143. (Ծր. 224). «Անակիւզոս» հունարեն բառ է՝ ἀνάκλουσος, որ նշանակում է կարճատրոսն պատմութեան մի տեսակ (Արմ. բառարան):

144. (Ծր. 229). Բնագրում գրված է վերնագրում. «Տան արդոցն Քորգոմայ իշխանին Հայոց»: Ուղղեցինք «աշխարհին», ինչպես սեւի Գ դպրութեան վերնագիրը նույնպիսի տեղում:

145. (Ծր. 231). Բնագրում գրված է. «Էկնեալ յարձակեցա Մուշեղն»: Հայկազյան բառարանը չի բերում «Էկնեալ» բառի համար Փավստոսի այս վկայութիւնը, և ուրիշ գործածութիւնների վրա հիմնվելով՝ բացատրում է լրբանալ, լկտիանալ, որ չի հարմարվում Փավստոսի այս տեղին: Աճառյանը (Արմ. բառ.) բերում է այս վկայութիւնը և «Էկնեալ» բացատրում է «հարձակվել», հիմնվելով երկու հատվածների վրա, որտեղ «լրբեալ» նշանակում է հարձակվել, վրան վազել, բայց որովհետև քննարկում «հարձակվել» բայն էլ գործ է անվանուած «Էկնեալ»-ի հետ, մենք հարմար համարեցինք թարգմանին «համարձակ» բառով, որը նույնպես ընդունում է Արմ. բառարանը [Այստեղ «Էկնեալ», «հարձակվել» նշանակութեամբ ավելագրութիւն է։— Խմբ.]:

146. (Ծր. 231). Բնագրում այստեղ թերութիւն է նկատվում. այնպես է հասկացվում, թէ Հունաց զորքերը բաշխել, տեղավորել էին Սուանդում, Բախիշում և Հայաստանի բոլոր գավառներում, սակայն այս դպրութեան Գ զխում ասված է, թէ Հունաց զորքերը գտնվում էին Սուանդում ու Բախիշում, այսինքն՝ չէին ցրված Հայաստանի մյուս գավառներում ևս: Սուանդ և Բախիշ տեղերը միայն Փավստոսի մոտ են գործածված երկու անգամ, Գիոն Կասիոսը հիշում է Բանդա ձևով մի տեղ Արամանի գե-

տի ափին, որը Ադոնցը նույնացնում է Փավստոսի Սուանդի հետ (ЮСТЯ-НИАН, եր. 37), իսկ Բախիշի տեղը բոլորովին հայտնի չէ:

147. (Ծր. 234). Բնագրում գրված է. «Տային բաշխիչ ի մեծամեծ աւարացն»: Բառարանները այս բառը բացատրում են իբրև պաշխիչ, պարզև: Փավստոսի լեզվում այսպիսի նոր ռամկարանութիւն անընդունելի է: Նորայրը (Կորյուն, եր. 184, ժանթ.) ուղղում է «բաշխել, բաժանել, բաժին հանել», որ միանգամայն ընդունելի է:

148. (Ծր. 236). Բնագիրն ունի. «Միշնդեո խօսեցեալ գային զորքն»: «Խօսեցեալ» անտեղի բառն ուղղեցինք «խաղացեալ» և ըստ այսմ թարգմանեցինք:

149. (Ծր. 236). Բնագրում գրված է. «Տարցուք յաղբաւս ի գործ կաւազործութեան»: «Տարցուք» անսովոր բառի տեղ մի ձեռագիր ունի իսկական բառը՝ «ՅԱղուաւս», որին մենք հետևեցինք:

150. (Ծր. 238). Բնագիրն այստեղ ունի. «Խլեցեւ, այրեցեր զիս»: «Խլել» բայի անսովոր նշանակութեամբ գործածութիւնն այստեղ Հայկ. բառարանը բացատրում է այսպես. «Հանէր զայրն ի ձեռաց իմոց» կամ «ի խեղաց հանէր զիս»: Երկու բացատրութիւններն էլ անհավանական են: Մենք հետևելով խոսքի իմաստին՝ ենթադրաբար թարգմանեցինք «Է՛մ տունը քանդեցինք»: Շարունակութեան մեջ գրված է. «Զի ասացի ես բանս, մի՛ յղբ զայրն զայն ի գործ պատերազմի»: «Բանս» բառն անտեղի է, պետք է ուղղվի՝ «բառ»: Թվում է, թէ սկզբնապես եղել է ճիշտ ձևով՝ բամ.— «Է՛մ տեսցի ես, բամ՝ մի՛ յղբ...»: Հետո «բամ»-ը կա՛մ երկաթագիր Մ և Ս գրերի նմանութեան պատճառով, կա՛մ գրչի ուղղումով փոխվել է բաս, իսկ սա աղավաղվել դարձել է «բանս»: [«Խլեցեւ» նշանակում է «արմատախիլ արեցինք»: Թարգմանութիւնն ուղղեցինք այսպես։— Խմբ.]:

151. (Ծր. 238). Քիչ հին ժամանակի երկայնութեան շափ է, թլեց փոքր, բացված ձեռքի բութ մատի ծայրից մինչև ցուցամատի ծայրը, որ համարվում էր հավասար ութ մատնայափի կամ երկու ուղուկի։— Ներսես կաթողիկոսի այս խոսքը, ինչպես և հաջորդները, անվանուած են ս. Գրքի, մանավանդ Սաղմոսի զանազան տեղերից:

152. (Ծր. 239). Այստեղ դուրս գցեցինք մոտ կես երես, որ պարունակում է Բաբելոնի հնոցը գցված երեք մանուկների աղոթքից հատվածներ (Գան., Գ. 23—45) «Յիրաւունս անցուցեր դու մեզ...» [Բնագրի բաց թողնելու մասը մենք թարգմանեցինք։— Խմբ.]:

153. (Ծր. 241). Հին ժամանակ սովորութիւն կար, որ պատերազմից ետ դարձող զինվորները բերում էին իրենց սպանած թշնամիների գլուխները՝ իբրև ապացույց իրենց գործած քաղութեան: Որքան շատ լինեին գլուխները, այնքան մեծ էր լինում բերող զինվորականի պարծանքն ու պատիվը: Սրանից է մնացել մեր ժողովրդական լեզվի մեջ «Գլուխ ես բերել» ոճը, որ նշանակում է. «Ե՛նչ ես պարծենում, հո թշնամու գլուխ չե՛ս բերել»:

154. (Ծր. 243). Լեզունը հռոմեական զորքի միավոր էր, որ պարունակում էր, զանազան ժամանակներում, 3600-ից մինչև 6 000 կովող զին-

վոր՝ մի քանի ստորաբաժանումներով: Նրանց մեծ մասը ծանր զինված ու սպառազինված էր լինում, փոքր մասը՝ թեթև զինված: Հեզոնների կազմությունը հոտմեացիներից անցավ Բյուզանդիային (ալեյան), որոնցից էլ մտավ բառի գործածությունը հայերենի մեջ (իզոն, իզոնի):

155. (Նր. 246). Այս բառը պատահում է տարբեր ձևերով՝ «զրաստ», «զրասա», «զրաստ» և այլն: Մագումը և ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Տրված են մի քանի բացատրություններ, բայց ոչ հավանական: Փավստոսի բնագրից այսբան կարելի է հասկանալ, թե նշանակում էր վրայի երկայն զգեստ:

156. (Նր. 246). Նրանք դարձյալ սրի մի տեսակ է, բայց ճիշտ ձևը և բառի ծագումը հայտնի չեն: Հավանորեն ավելի կարճ էր, քան սուրը:

157. (Նր. 247). Բայլս, սովորական ձևով՝ Բահլ, կոչված է նաև Բահլ առավոտին, կամ պահլավերեն՝ Բահլի րամիկ—Արեւիլյան Բահլ: Սա շատ հին քաղաք էր Բակտրիա գավառում, Օկսուս (=Ամու-Ռարիս) գետի հովտում, Պարսպամիս և Տյան-Շան լեռների միջև, հիշատակվում է արդեն Դարհհ Վշտասպայի սեպագիր արձանագրությունների մեջ Զ դարում Ն. Ք.: Զրադաշտ մոզի հայրենիքն էր, Կյուրոսի մայրաքաղաքը, ինչպես հետո՝ քուշանների Ալթմ ավերակ է: Մի թիչ հեռու, Աֆղանստանի սահմաններում, շինված է նույն անունը կրող նոր քաղաք:

158. (Նր. 248). Բնագիրն այստեղ ունի, «էնալ էր իշխան տան գաւառի»: Ն. Մ. ուղղել է՝ «Անգեղաան գավառին», որին և մենք հետևեցինք: [Այստեղ բառով, մեր կարծիքով, նշանակում է «արքունիք», ուստի «տան գաւառին» արտահայտությունը պետք է հասկանալ «արքունիքի գավառի», այսինքն՝ այն գավառի, որտեղ արքունիքն էր—ՆԱԲ.]:

159. (Նր. 248). «Թարձ» նույն բանն է նշանակում, ինչ որ պարսկերեն «գահ»-ը:

160. (Նր. 249). Բնագիրն այստեղ աղավաղված է՝ «զհակառակորդն, քան մինչ աշխատ արարել զմեզ»: Մենք ուղղեցինք՝ «զհակառակորդն, որ այնքան աշխատ արար զմեզ», և ըստ այսմ թարգմանեցինք: [Այստեղ աղավաղում չկա: Շապուհի խոսքն ուղղված է խոսակցին՝ Դրասսամատին, արտահայտված է երկրորդ զեմքով: Մենք թարգմանեցինք ըստ բնագրի—ՆԱԲ.]:

161. (Նր. 250). «Ամիհն» հավանորեն իրանական ծագումով բառ է, որի ճիշտ նշանակությունը հայտնի չէ: Գործ է ածված նաև Եղիշի մեջ՝ «ուղղովը զուարակաց և ամճովը երէոց»: Փավստոսի և Եղիշի գործածությունից կարելի է եզրակացնել, թե ամիհը մի համոզ ուտելիք էր՝ էրեի մտ որոջ մասից:

162. (Նր. 250). Այս ընդարձակ նահանգի նախնական անունն է Ատրպատական, ինչպես ունեն ուրիշ հայ հեղինակներ՝ համապատասխան պահլավերեն aturpatakān ձևի: Ավելի նոր ձևեր են՝ Ատրպատականը և ներկայումս գործածական Աղբրջանը: Փավստոսի Ատրպատացին ձևի մեջ արդեն երևան է գալիս նախկին և հնչյունի փոխվելը հ-ի (շ-ի):

163. (Նր. 252). Բնագրում գրված է. «չերկրէն Պարսից և ի Փայտա-

կարն քաղաքէ»: «Պարսից» ակնհայտնի սխալ է, որ ուղղեցինք «Կապից»: Նույնպես է ուղղում և Ն. Մ.:

164. (Նր. 253). Բնագրի վերնագրում այստեղ սխալմամբ գրված է. «այաղապ քաղաւորն Աղձնեաց»: Ուղղեցինք «գավառին», ինչպես ունի և քանկը:

165. (Նր. 254). Բնագրում գրված է. «Յանձն առնէր և միթիարէր»: «Յանձն առնէր» աղավաղված ընթերցվածքը նորայրը ուղղել է «չանձանձէր», որին և մենք հետևեցինք:

166. (Նր. 255). Բնագիրը դժվարհասկանալի է այստեղ՝ «չորէնս սաստեր մեծապէս»: Մենք հետևեցինք Վենետիկյան հրատարակության մի ձևագրի, որ ունի «չանթորէնս», և ըստ այսմ թարգմանեցինք՝ «օրինազանցներին խստությամբ սաստում էր»:

[Մենք ուղղեցինք ըստ բնագրի—ՆԱԲ.]:

167. (Նր. 257). Բնագրում գրված է. «էնդ Կոտինդն խառնեալ»: «Կոտինդ(ն)» բառի մ' ծագումն է հայտնի, մ' շ նշանակությունը. բառը մի անգամ միայն գործ է ածված այստեղ Փավստոսի մոտ: Ոմանք բացատրում են իբրև բաժակ, ուրիշները՝ իբրև ըմպելիք: Մենք ենթադրաբար ընդունեցինք ըմպելիք բառը, քանի որ խոսքը գինու մասին է:

168. (Նր. 258). «Քյուրակն», սովորական գրությամբ՝ «թերիակն», հունարեն բառ է, ծղոյւսի, որ նշանակում է դեղթափ, հակաթուն, հատկապես այն դեղթափը, որ հնարել է Մեծ Միհրդատը՝ Պոնտոսի թագավորը: Հիվանդության նկարագրությունից — սրտի վրա մի նկանակի մեծությամբ կապտակած տեղ, բերանից գունդ-գունդ արյուն գալը—երևում է, որ ներսն կաթողիկոսի թրքերի մեջ մի մեծ երակ է ծակվել, որի հետևանքով արյունաբամ է եղել ու վախճանվել. համեմայն դեպս, նրա մահը թունափոքիւուց չի եղել, և Պապը զուր տեղն է մեղադրվել իբրև զ. Ներսեսի թունավորող, գուցե թշնամարար, քանի որ Պապը նրա մահից հետո ոչնչացրեց ս. Ներսեսի հիմնած թաքեգործական հաստատությունները և մանավանդ հոգևորականության հղբերի մեծ մասը խլեց:

169. (Նր. 259). Այս Տրդատին հիշում է Փավստոսը և Զ գպրության վերջին գլխում, հաղորդելով մի քանի մանրամասնություններ նրա կյանքից— Այստեղ բնագրում գրված է Տրդատ՝ փոխանակ Տրդատ: «Տրդատ» գրության պատահել իմ և ուրիշ ձևագրերում, որ գուցե արտագրության սխալ չէ, այլ ժողովրդական արտասանություն է, նկատի ունենալով արտա-արածի, տիտ—ծիծ, տո—ծո, գուցե և մտանել—մուծանել բառերը:

170. (Նր. 259). Պատկանյանի հրատարակության բնագրում գրված է «աթոռ նահատայ», որի մասին նա դնում է ժանդություն՝ «թերևս Անահատայ, որպէս ի սպ.»: Մենք հետևեցինք այս ժանդության ցուցմանը:

171. (Նր. 260). Անապատականների՝ դազանների բնակալից լինելը և նրանց բժշկելը մի տարածված մտախղ է սրբերի վարքերում: Պատմելով է նաև, որ մի անգամ Հոտմուս կրկեսն էին ցցել մի անապատականի և վրան առյուծ արձակել, որ բզկտի Առյուծը մոտենալով հանա-

չում և անապատականին, որ ժամանակ առաջ անապատում իրեն բժշկել էր, ուստի փոխանակ նրան բղկտելու՝ սկսում է լիզել:

172. (Նր. 264). Երեցի այս երկար աղոթքի գրեթե ամեն մի նախադասությունը կա՛մ թաղվածք է ս. Գրքի զանազան տեղերից, կա՛մ ակնարկություն ս. Գրքի այս կամ այն խոսքի վրա: Այստեղ մանանեխի հառը հիշեցնում է Քրիստոսի այն խոսքը (Մատթ., ԺԷ, 19), թե՛ «Եթե մանանեխի մի հատիկի չափ հավատ ունենաք և այս լեռանն ասեք՝ տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ», նա կտեղափոխվի, և ձեզ համար ոչ մի բան անհնարին չի լինի»:

173. (Նր. 265). «Միւնհոդոսական», «սյունհոդոս» բառից, որ Հունարենն է՝ συνυδος և նշանակում է ժողով, մասնավորապես՝ եկեղեցական ժողով: Սրանից էլ ծագել է «Սինոդ» բառը, որով, ըստ Պոլոսենիայի, կոչվում էր էջմիածնի բարձրագույն վարչական խորհուրդը կաթողիկոսի նախագահության տակ: «Սյունհոդոս» բառի միջի «հ» գիրը ցույց է տալիս, որ բառը ուղղակի հունարենից չի առնված (որովհետև հունարենը «հ» չունի այստեղ), այլ ասորերենից: «Եւ իրքս այս» ուղղելի է՝ «Եւ ընդ իրսս այս»:

174. (Նր. 266). Բնագիրն ունի. «առանց հայրապետին և գրեցին», որ ակներև սխալ է: Մենք ուղղեցինք՝ «և առ հայրապետն գրեցին» և ըստ այնմ թարգմանեցինք:

175. (Նր. 267). Բնագրում գրված է. «վասն ամբապահս տառեզոցն զգուշութեան»: Վեց օրինակ ունեն՝ «առանգոցն»: Երկուսն էլ մենք աղավաղություններ ենք համարում՝ փոխանակ տառեզոցն, ինչպես և թարգմանեցինք: Ս. Ներսեսը կուսանոցները ամուր պարիսպներով պատել էր՝ առևանգումից կույսերին պաշտպանելու համար:

176. (Նր. 267). Բնագիրն ունի. «Կուսանք և հաւատացեալք իցեն»: Մենք ընդունեցինք Նորայրի ուղղումը՝ «Կուսանք հաւատացեալք»: Հավատացյալ, կամ ինչպես ուրիշ հեղինակներն ասում են՝ հավատավոր կույս, հաշվում էին նրանց, որոնք ուխտում էին միշտ կույս մնալ և նվիրվել աստծուն:

177. (Նր. 268). Բնագրում գրված է. «զկարգս պտղոյն և տասանորդացն»: Դեռ շատ հին ժամանակներից սովորություն էր գարձած, որ գյուղացիք իրենց բերքերից կամավոր սուրբ էին վճարում վանքերին, որոնք այս սուրբերը հավաքելու համար հատուկ մարդիկ էին ուղարկում գյուղերը հունձի ժամանակ: Թե ո՛ր բերքերի սուրբերն է Փավստոսը կոչում պտուղ և ո՛րը տասանորդ՝ այժմ դժվար է որոշել: Ընդհանուր գործածության մեջ տասանորդները արմտիքներից պարտադիր սուրբեր էին, որ գյուղացիք վճարում էին պետությանը կամ հողատերին, բայց ոչ վանքերին. վերջիններիս համար տրվող կամավոր սուրբը պտղի էր կոչվում, որ մինչև այս դարի սկզբները գոյություն ունեն և վանքերի արդյունքների զգալի մասն էր կազմում: Քանակությունը սահմանված չէր, այլ կախված էր նվիրողների կամքից և մանավանդ պտղի հավաքող վարդապետի ճարտարությունից: Պտղի տալիս էին թե՛ արմտիքներից և թե՛ կաթնեղենից (յուղ, պանիր) և այլ գյուղական արդյունքներից:

178. (Նր. 268). «Վին» և «փանդիո» երկուսն էլ ցտարագգի բառեր են. վինը արևելյան ծագում ունի (սանսկրիտերեն՝ vīṇā), իսկ փանդիոը՝ փոքրասիական, որտեղից անցել է Հունաստան և ուրիշ շատ տեղեր՝ pandura հիմնական ձևից: Երկուսն էլ լարավոր նվագարաններ էին, բայց ինչո՞վ էին իրարից զանազանվում՝ հայտնի չէ: Փանդիոն սկզբնապես երեք լար է ունեցել, որ հետո զանազան կերպարանափոխություններ է ստացել:

179. (Նր. 270). Ագաթանգեղոսի երկում (զլ. ՃԺԹ) ասված է, թե Տրդատը քահանաների սպասավորություն համար նշանակեց ազարակներում ամեն մի ընտանիքին շորս հող, իսկ ավաններում՝ յոթ հող, բայց չի հասկացվում, թե ի՞նչ հաշվով նշանակվեցին այս հողերը, և որքա՞ն էր ամեն հողի տարածությունը: Փավստոսի Պատմությունը փոքր-ինչ լույս է սփռում այս հարցերի վրա: Պապը, նրա ասելով, յոթ հողից հինգը կտրում գրավում է արքունիք, թողնում է միայն երկու հող՝ մի քահանայի և մի սարկավազի համար, իսկ սրանց եղբայրները և որդիները պետք է ընդհանուր կարգով հարկատու դառնային: Քահանաներին հատկացված այս հողերն ազատ էին հարկեր վճարելուց, ինչպես երևում է այս տեղից և Եղիշի վկայությունից («նաև ի սուրբ եկեղեցույն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եղեր», Բ. Եզ): Այս արտածությունը, որեմն, սահմանափակվեց միայն քահանաների ու սարկավազների համար: Այս երկու հողի տարածությունը այնքան պետք է լիներ, որ բավականություն տար քահանաների և սարկավազների ու նրանց կանանց կարիքին, հաշվելով ժարդ ու կնոջ մի հող:

180. (Նր. 271). Բնագրում գրված է. «Կարգեալք, պսակեալ կային շուրջ զնովա յամենայն կուսէ»: «Պսակեալք» բառը անտեղի է այստեղ՝ Համարեցինք աղավաղություն՝ փոխանակ պատեալք կային» և ըստ այսմ թարգմանեցինք:

[Պսակել գրաբարում նշանակում է շքեղապատել, ուստի հոմանիշ է պատել բառին: Փոխելու կարիք չկար շմմտ. նաև բնագրի նույն էջի պատեալ պսակելին արտահայտությունը.—Խմբ.]:

181. (Նր. 273). «Քաղաք» բառը չպետք է հասկանալ նրա այժմյան, այլ սկզբնական նշանակությամբ՝ ինչպես պարսպապատ, ամրացրած տեղ, որ սահմանված էր զորքի տեղական կայան լինելու (տե՛ս ծանոթ. 47):

182. (Նր. 276). «Առնեզ», գրված կա նաև «արալեզ», «յարալեզ» և բացի այստեղից հիշվում է նաև Եզնիկի ու Սեբեոսի կողմից և ուրիշ տեղեր: Առնեզները երևակայական երկնաքանակ կենդանիներ են եղել՝ շան կերպարանով, որոնք պատերազմի դաշտում ընկած թաշ մարդկանց վերքերը լիզելով կենդանացնելիս են եղել: Այս հավատալիքը թվում է Ասորեստանից է փոխանցվել հայերին: Բառը ստուգաբանելու շատ փորձեր են եղել, որոնց մասին տե՛ս Արմ. բառար., «առնեզ» բառի տակ:

183. (Նր. 277). Այս պատերազմը քուշանների հետ, թվում է, տարբեր է այն պատերազմից, որ հիշում է Փավստոսը Ե գլխի վրա յոթերորդ գլխում, որովհետև այն պատերազմին մասնակից է եղել ինքը՝ Շապուհ Թագավորը, և մահից ազատվել է Դրասամատտի անձնվեր քաշությունից, իսկ

այստեղ Շարպուհը պատերազմին մասնակից չէ:— Քիչ հետո հիշող Մա-  
նուելի եզրոր Կոնս սեղան փոխարին ձեռագրերի մեծ մասն ունի Կոնս,  
որ ազգի ուղիղ է թվում (Մամիկ-Կոն, Մամիկ և Կոնակ):

184. (Նր. 278). Փարսախ կամ հրասախ երկայնության չափ է, հավա-  
սար 5360 մետրի—հինգ ու մի բառորդ կիլոմետրի: Բազը իրանական ծա-  
զում անի: Նրա պահպանողն ԻՏԱՏԱՒ ձևից առաջ է գալիս մեր «հրասախ»-ը,  
իսկ նույն բառի արաբացրած ձևից՝ ԻՏՏԱՒ-ից՝ մեր «փարսախ»-ը: Ուրեմն,  
ըստ Փափասոսի, Կամար հսկա Մանուելին շալակած օրական անցնելիս է  
եղել 52,5 կիլոմետր:

186. (Նր. 279). Մամիկոնյանների ծագման մասին, բացի Փափասո-  
սից, գրում են նաև Խորենացին, Սեբեոսը և Հետագա պատմիչները: Քե-  
պեա նրանք ժամբամասնությունների մեջ զանազանվում են միմյանցից,  
բայց հիմնականում բոլորը համաձայն են, այն է՝ որ նրանք ծագում են  
Ճենաստանից (Չինաստանից), եղել են ազնվազարմ երկու եզրայր: Ենթ-  
դին խոսվությունների պատճառով փախել են Պարսկաստան և այստեղից  
ուղարկվել Հայաստան: Այս բանը տեղի է ունեցել Մեծ Խաղաղի ժա-  
մանակ, իսկ ըստ Խորենացու՝ նրա զրգու՝ Տրդատի ժամանակ:

186. (Նր. 279). Բնագրին այստեղ աղավաղված է. «ն: Լանգի շեմ  
Արշակունի, զի եզի զթագ նախնեաց իմոց...»: Գուցե ուղղելի է. «ն:  
բանդի շեմ Արշակունի, զի՝ եզի...»: այսինքն՝ եթե ես Արշակունի շեմ,  
հասկա ինչպե՞ս իմ նախնաց Թագը զրի: Մենք մտավորապես Բարգմա-  
նեցին, Հեռուելով խոսքի ընթացքին:

187. (Նր. 280). «Ասպարեզ» պահպանողն՝ aspre, պարսկերեն՝ asparēs,  
բառացի նշանակում է ձիարշավ, ձիընթացարան, այսինքն՝ հրապա-  
րակ, օրակ ձի էին թշում: Նրկորդարար այս բառն սկսեց զործածվել  
իրև երկայնության չափ—միլիմետրների երկայնությունը, որ ընդունված  
էր հավասար այժմյան 230,1 մետրի. սա պարսից ասպարեսն է կամ աս-  
պարեսաց ասպարեզ: Կային և ուրիշ սխտեմների ասպարեսներ (Արմ.  
բառ., Մանանդյան, Կշիռները և չափերը):

188. (Նր. 281). Բնագիրն ունի «նկն Համազասպ անեռ. Նորուն ան-  
ցանել առ Նորոզ», որ կրկնակի սխալ է. «Համազասպ զրված է փոխա-  
նակ Համազասպյանի և անհերձ՝ փոխանակ աներորդու: Մենք աղավա-  
զումն ուղղեցինք և ըստ այնմ Թարգմանեցինք:

[Աճեռ-ը կարող էր և գործածվել «աներորդի» իմաստով:—ՆԱՐ.]:

189. (Նր. 281). Բնագրում գրված է՝ «Բժամապետ ապարակիրացն»: զԲժամապետ բառի ծագումն ու ճիշտ նշանակությունը հայտնի չէ: Բազմա-  
թիվ կարծիքներ են հայտնված նրա մասին, որոնք բերված են Արմ. բա-  
սարանում, Ենթադրարար Թարգմանեցինք խմբագրու:

190. (Նր. 282). Բնագիրն ունի. «Կամեցա թիկունս առնի զարթայ  
Յունաց», որ բացարձակ սխալ է. Ն. Ա. ուղղել է՝ «զարթայն Պարսից»,  
ինչպես և մենք Թարգմանեցինք:

191. (Նր. 283). Այստեղ հիշված են մի քանի զարգիք ու պատվա-

նշաններ, որոնք նվիրվում էին բարձրաստիճան անձներին. — վառ պարգե-  
րին՝ ԵՐ, որ գուցե ծագել է պահպանողն ՎՏ-ից և նշանակում է գրա-  
չակ: Հայերենի մեջ այս բառը նշանակում է բող (Նաբեկացու գանձերի  
մեջ՝ «Բոհար վարդըն վառ առնալ ի վեհից վարդին արփեհից») և այլա-  
դրոշակ: Այս վերջին նշանակությամբ պահպանվել է «խաշ-վառ» բառի մեջ,  
որ նշանակում է խաշակիր կամ խաշի դրոշակ: Զարգմանությունն նվիրված  
էր Թագավորական դրոշակ:

Գարգմանակ կործ է ածել միայն Փափասոսն այստեղ: Մագումն ու  
ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Բառարանները բացատրում են իրր  
զարդ խոսքի կամ սաղավարտի վրա: Ուրիշները բացատրում են իրր մի  
ոտանի գլխանից կամ ցողավարտ: Բնագրից՝ ախպեա է հասկացվում, թե  
զարգմանակը ոսկուց ու արծաթից շինված արծիվ էր, որ գլխի (սաղա-  
վարտի) վրա կրում էին իրր գլխի պատիվ:

Պատիվ: որ բացի ընդհանուր նշանակությունից, նշանակում է նաև  
զարդ՝ մարմնի կամ զգեստի վրա կրելու, որ զանազան տեսակ էր լինում  
և շնորհվում էր Թագավորից այս կամ այն անձին ի նշան գոհունակու-  
թյան կամ իրր վարձատրություն նրա ծառայության: Պատիվ մի քանի  
տեսակները հիշում են Խորենացին (տե՛ս նրա Պատմության աշխարհարար  
Խարգմանության Գանութ: 120) և Եղիշեն: Փափասոսը հիշում է երկու ետ  
պատիվ, այն է՝

Աշխարավանդ, հանգույց գլխի վրա՝ արծիվ ետեից կրելու: «Հանգույց»  
բառի նշանակությունը հայտնի է. նույնն է նշանակում և «աշխարավանդ»  
բառի վերջին վանկը՝ վանդ, որ պարսկերեն է՝ band, և նշանակում է  
հանգույց, կապ (Ֆրանսերեն՝ bande, ասերեն՝ ԾԱՒ): Թայց «աշխարա-  
վանդ» բառի կազմ. թյունը և նշանակությունը պարզ չեն: Համարում են,  
թե դա մի ժայպվեն է եղել, որ գլխի ետե: բանը: բանի նման կապում էին և  
երկու ծայրերը: կախ գցում: նման այն բանդին, որ երևում է Տիգրան  
Մեծի դրամի վրա: Տե՛ս և Արմ. բառ.:

Ապիզակ, կրծքի զարդ, որ նույնպես միայն Փափասոսն է գործածել  
այստեղ: Մագումը և ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Թիրյաբյանը հա-  
մարում է ծագած պարսկերեն ԶՅԵԶ: բառից, որ նշանակում է գինդ, օղ,  
բայց Աճառյանը չի ընդունում: Տե՛ս Արմ. բառ.:

192. (Նր. 284). Բնագիրն այստեղ երկգլխի է: Տպարգված է. «Կար-  
գեցին... հարկ» տալ ընծայն և պատարագա, հասկացվում է տալ մարգով,  
թե սահմանեցին ընծաներ ու նվերներ տալ իրր հարկ (կամ հարկի փո-  
խարեն): Բայց կարող է և այլ կերպ հասկացվել՝ «Կարգեցին... հարկ»  
տալ, ընծայն և պատարագա, այսինքն՝ սահմանեցին տալ հարկեր: Ընծա-  
ներ և նվերներ:

193. (Նր. 284). Բնագիրն ունի. «Հասա և կոշիկս և զպիտոյս ոտե-  
կացն»: «Կոշիկ» բառը Փափասոսը գործ է ածում և հետո մի անգամ (Ջ, ք).  
«Այս ինձ կոշիկը լիցին», որտեղ «կոշիկ» պարզապես նշանակում է վարձ,  
սակայն ներկա անգում վարձ նշանակությունը չի հարմարվում, ու-  
տի մենք Թարգմանեցինք՝ առնիկ, իսկ ընտանի պիտոյս ոտեկաց» նշա-

նակում է օրական պարենի՝ ուտելիքների պիտույքներ, ապրուստի մթեր-  
ներ:

194. (Նք. 286). Մի ձեռագիր ունի Արտանգան, Տեղը հայտնի չէ:  
195. (Նք. 289). Մերութանը շփոթվում և տրտմում է ուղևորների  
տված պատասխանից, որովհետև տեղի «Նղշյուրներ» անունը համարել է  
ձախարհության գուշակություն, վտանգի սպառնալիք: Բայց քանի որ նա  
ուղևորներին ծեծել է տվել, թվում է, թե նա «Նղշյուրները» չի հասկացել  
իրև լեռների հատուկ անուն, այլ իբրև այդ տեղերի որակումը ուղևորների  
կողմից՝ իբրև թե ճանապարհը լի է վտանգներով: Կարող է լինել, որ  
այս բառը Մերութանը համարել է գործածված նաև գոհճիկ արտահայ-  
տություն՝ արհամարհելու և վիրավորելու նպատակով, որի պատճառով  
և ծեծել է տալիս ուղևորներին:

196. (Նք. 291). Բնագրում աղավաղված ձևով գրված է. «լընչացք  
երաց», որ նորայր ուղղել է. «լընչաց քերեսաց», այսինքն՝ արհամարհեց:  
197. (Նք. 291). Մերութանը Շավասպի որդին էր, իսկ Շավասպը  
ամուսնացել էր Մամիկոնյան տոհմից մի աղջիկ հետ, ուրեմն Մերութանը  
Մամիկոնյանների քեռորդին էր: «Նղբայր» բառը այստեղ էլ գործ է ածված

լայն նշանակությամբ, ինչպես ցույց տվինք 14-րդ ծանոթության մեջ:  
198. (Նք. 292). Պատերազմական կարգապահությունը խիստ է եղել  
նաև Հայաստանում: Արտավազը պետք է սպանվեր, որովհետև անաստեղ  
էր սպարապետի հրամանին և կոպիտ մասնակցել էր՝ հակառակ նրա բա-  
ցարձակ արգելիքին: Նրան մահից փրկեց նրա արտասովոր քաջությունը,  
որ ապացույց էր, թե նա բավականաչափ հասունացել է և կոպիտ ընդու-  
նակ է, այսինքն թե՛ Մանուելի արգելքը նրա մանկահասակության պատ-  
ճառով անհիմն է եղել:

199. (Նք. 293). Վենետիկյան հրատարակության մի ձեռագիր «խ-  
տուն»-ի փոխարեն ունի «տասն», որ ավելի հավանական է:  
200. (Նք. 296). Բնագիրն ունի. «Ե վերայ նորա եղևն երբեմն, եթե  
որպէս մեղօք հայցէր և առնոյր զազանութիւն ի բազաւուրաց»: Շղագրով  
շարված այս բառերը բնագրի վերնագրում չկան, թվում է, թե սկզբնապես  
այս վերնագիրը վերաբերելիս է եղել Հոհան և պիսկոպոսի վարքին, որ ամ-  
փոփոված է եղել մի գլխի մեջ, բայց հետո հարկ են համարել այս վարքը:  
Նյութին նայելով, բաժանել երեք զատ-զատ գլուխների, և այսպիսով ընդ-  
հանուր վերնագիրը մնացել է առաջին գլխի վրա, իսկ հաջորդ երկու գլուխ-  
ների վերնագրերը մնացել են առանց բովանդակության:

201. (Նք. 297). Ցանկում գրված է. «Ծաղազս Արշարունեաց եպիս-  
կոպոսին», ուղղեցինք՝ «Ահարուն», համաձայն բնագրի վերնագրին և բուն  
բնագրին:

202. (Նք. 298). Բնագրում գրված է. «Վեցերորդ Դպրութիւն, վերջ  
առաջաբանութեան վճարումն՝ մնացուածք բանից ի ծայրէ»: Այստեղ «վերջ»  
բառը պատկանում է «Վեցերորդ դպրության» և ցույց է տալիս, թե Վեց-  
երորդ դպրությունը Փափաստի Պատմության վերջինն է, ինչպես և Եր-  
ջորդ դպրության ցանկում գրված էր՝ «Ե սկիզբն», այսինքն թե՛ Երբորք

դպրությունը Փափաստի Պատմության սկիզբն է:—«Առաջաբանութեան  
վճարումն» նշանակում է նախընթաց պատմության ավարտը և վերաբերում  
է Վեցերորդ դպրության առաջին գլխին, որով վերջանում է իսկապես  
Պատմությունը.— իսկ «Մնացուածք բանից ի ծայրէ» վերաբերում է նույն  
դպրության հաջորդ գլուխներին, որտեղ զետեղված են իրարից անկախ  
հատուկոր հիշողություններ այս ու այն հոգևորականների մասին, որոնք  
Պատմության հետ կապ չունենալով՝ չէին կարող բուն Պատմության մեջ  
գետեղվել:

203. (Նք. 298). Փակագծված բառերը պակասում են այստեղ վերնա-  
գրում: Լրացրինք ցանկի վերնագրից:

204. (Նք. 298). Բնագիրն այստեղ թերի է՝ «Եւ էին թիկունք Արշա-  
կայ թագաւորին Հայոց և Խոսրովու թագաւորն Պարսից»: Մենք լրացրինք  
ինչպես իմաստը պահանջում էր, և ինչպես ենթադրել է Ք. Պատկանյանը  
իր հրատարակության ծանոթության մեջ:

205. (Նք. 299). Բնագրում գրված է. «Որ Սիւեհ գաւառին մնացին»,  
մի ձեռագիր ունի՝ «Որսիւներն»: «Սիւներն» մենք համարեցինք ոչ թե հա-  
տուկ անուն (որ անհայտ և անտեղի կլիներ այստեղ), այլ հասարակ  
անուն՝ փոխաբերաբար գործածված. աշխարհի սյունները՝ հենարանները  
կազմող, հիմնական դավառները:

206. (Նք. 299). Բնագիրն ունի. «Պակասեաց իւրմէ մեծութենէն  
լայն ժամանակն և յապայ»: Վերջին բառը ցույց է տալիս, որ Փափաստի  
Պատմությունը գրված է Հայաստանի այս բաժանումից (384-ին) շատ  
հետո:

207. (Նք. 300). Պճղնավորը երկար զգեստ՝ փարաշա էր, որ մինչև  
պճեղները՝ ոտքերի կոճերն էր հասնում: Սա էր հոգևորականների արտա-  
քին զգեստը, որի պատճառով Հայր մարդպետը ծաղրելով հոգևորական-  
ներին՝ կանանցազգեստ է կոչում (Փափաստ, Դ, 37): Իսկ խոտորկտուրը,  
ինչպես բացատրել են Ս. Պարոնյանը և Հացունին (Արմ. բառ., «խոտոր»  
բառի տակ), նշանակում է զինվորական զգեստ, որ ետևի թղանցքից զեպի  
առաջ՝ մինչև ծնկները կտրված էր լինում, որպեսզի առջևի թղանցքը վա-  
զելուն շխանգարի: Երևի կազմված է «խոտոր» և «կտրել» բառերից, այսին-  
քն՝ շեղակի կտրված:

208. (Նք. 300). Բնագիրն այստեղ ունի. «Եւ ինքն Զաւէնն աթիճեալս  
և զտապակեալս զժապաւինեալս նարօտօք ազանէր», որտեղ «աթիճեալս»  
(կամ «նա թինեալս»՝ «Զաւէն» բառի վերջին ն գիրը համարելով այս բառին  
պատկանող) և «տապակեալս» միայն այստեղ են գործածված և պարզ չեն  
աչ ծագումով և ոչ նշանակությամբ: Արմ. բառ. առաջին բառը հասկա-  
նում է իբրև սպճնված, զարդարված», իսկ «տապակեալս» բառը (տապակ =  
վահանաձև զարդ)՝ իբրև վահանակներով զարդարված:

209. (Նք. 301). Բնագրում գրված է. «Զարթ այր եերփեի ընդ նո-  
սին»: Քանի որ Զարթը եպիսկոպոս է եղել, ինչպես գրված է վերնագրում  
և բնագրի մեջ, ուրեմն նա չէր կարող ներքինի լինել, որ արգելված էր  
եկեղեցական կանոններով: Ուստի մենք թարգմանեցինք «ներքին խորհրդ»



դական», հետևելով բնագրի հաջորդ խոսքին՝ «էին ի ներքնի հայրապետին ի տան իւրում»:

210. (Եր. 301). «Հոռոմ» բառը, որ ծագում է Հոռոմ քաղաքի անունից և սկզբնապես նշանակում էր հոռոմացի, մեր հին մատենագրության մեջ գործ է ածվում նշանակելու համար հոռոմական արևելյան կայսրության, այսինքն՝ Բյուզանդիայի բնակիչներին, որոնց մեջ տիրապետող տարրը կազմում էին հույները, այնպես որ «հոռոմ» սկսեց նշանակել Բյուզանդիայի հույն: Այս բառն է, որ ժողովրդական լեզվի մեջ դարձել է «տառոմ»:

211. (Եր. 302). Այս վերնագրի նկատմամբ տե՛ս ծանոթ. 200:

212. (Եր. 302). Բնագրում գրված է. «Որդի Փառնիայ հայրապետի, հինատուրջ»: Այնպես է գուրս գալիս, թե Փավստոսը «հինատուրջ» — հնացած, զառամյալ կոչում է Հոռոմի եպիսկոպոսին, որ, սակայն, չի հարմարվում այդ եպիսկոպոսի գործողություններին, որոնք երիտասարդ հասակին են հատուկ: Մենք հասկացանք այս բառն իբրև «հին ատուրջ» — հին, անցած օրերի և վերաբերեցինք Փառնի հայրապետին, որ կարճ ժամանակով կաթողիկոսական աթոռը նստեց Տիրան Թագավորի ժամանակ (Գ, ժգ), և որին հարմարվում է «հին ատուրջ» արտահայտությունը:

213. (Եր. 302). Հետև — ոտքերի փաթաթան փոկերից, խտրից կամ այլ նման նյութերից: Կեմ — խոտից ոլորված շվան:

214. (Եր. 302). Բնագրում գրված է «օղիկ», մի ձեռագիր ունի «օղիկ»: Երկուսն էլ անծանոթ բառեր: Ս. Մ. ուղղում է «լողիկ», որին մենք նույնպես չենք լողիկ վերնազգեստ է, վերարկու:

[Ավելի ճիշտ է զմուշապա իմաստը, որպես ուղղեցինք:— Խմբ.]:

215. (Եր. 305). Բնագիրն ունի. «Ստակայն մի նախնալ այն էին նորա»: Ուրիշ օրինակներ ունեն՝ «Միհաննէք»: Բառի իսկական ձևը, ծագումը և նշանակությունը անծանոթ են. գործ է ածված միայն այստեղ՝ Փավստոսի մոտ: Նոր Հայկազյան բառարանը բացատրում է, «Որպէս թէ միակ հասակ, այսինքն խաղ, կատակ, միմաստիւն կամ կեզնւտրութիւն առ ի հանել և քաղել ինչ մի յայտց»: Բայց բառը թույլ չի տալիս այս բացատրությունն ընդունել: Ահաւայանը (Արմ. բառ.) ավելի հարմար է գտնում՝ «փորձանք, վտանգ, փորձություն»: Բուզանդն ուղում է ասել, թե «Հոռոմը ազահուսթյան ժարավի էր, սակայն այս ազահուսթյանը իր գլխին փորձանք էր բերում (ինչպես այգեպանի գեղջում, Բուզ., Բ.): Բայց այգեպանի դեպքում փորձանքի եկավ Հոռոմը ոչ ազահուսթյանից: Մենք ենթադրաբար թարգմանեցինք՝ «այդ խեղճատակութիւններն իբրև միջոց էին ծառայում» (մի բան կորզելու համար):

216. (Եր. 308). Տրգատի մասին տե՛ս ն գլուխ, գլուխ ԻԳ:

## ԱՆՎԱՆԱՑԱԿ

### Ա

Արա (իշխան) — 80	Անակ — 67
Ագարակ — 105	Անահիտի աթոռ — 259
Աղբ — 229, 230, 271	Անգեղ բերդ — 191, 248
Աթանազիեն — 65, 71, 93, 100, 101, 104, 105, 122	Անգեղ տուն — 190, 191, 228, 248, 253
Աթենք — 91	Անդիկան — 116, 182, 188, 195
Ալանայդան — 200, այլև՝ Ալանական — 117	Անգմջը բերդ (Անհուշ) — 118, 211, 215, 216, 226, 245, 247, 249
Ածուխ տե՛ս Գալուրիք	Անդոկ (կամ Անդուկ) Սյունի — 86, 87, 101, 110, 111, 112, 116, 126, 168, 180, 183, 184, 208, 223
Ահարան — 297, 306	Անի բերդ — 87, 191
Աղբիւնոս — 85, 70, 102, 228, 265, 299, 300	Անկյուրիս (քաղաք) — 187
Աղթամար — 78	Անիս — 88, 156, 191, 207, 228, 246, 253
Աղիճովիս (գավառ) — 219	Աշտիշատ — 68, 95, 104, 115, 129, 165, 166
Աղիորք (քաղաք) — 108	Աղսկան Վսեմական — 117, 198, 199
Աղձիք — 96, 100, 117, 175, 181, 191, 195, 206, 228, 253	Աղսանոնյաց երկիր — 198
Աղձք (գյուղ) — 193	Առափյուտք (գյուղ) — 169
Աղվանք — 71, 73, 75, 228, 235, 236, 241, 242, 251, 274	Առնոս (ալան) — 79, 188
Ամասունի Վահան — 79	Ասյուն լիւն — 127, 259
Ամատունյաց տոհմ — 77, 126	Առաստոմ — 296, 301
Ամարալ (գյուղ) — 75	Ասորեստան — 109, 120, 182, 229
Ամիդ (քաղաք) — 84	Ասպուրակ, Ասպուրակես (եպիսկոպոս) — 296, 297, 300, 306
Ամոր (գյուղ) — 301	Ասրիկ կամ Ասրիկ — 161
Ալծնմեիկ — 132	
Ալյարատ (գավառ) — 76, 78, 81, 94, 106, 192, 193, 246, 290, 301	

Քվան (գյուղ) — 290  
Ատամ (իշխան) — 88  
Ատրպատական — 73, 76, 106, 116, 175, 186, 187, 192, 194, 201, 202, 207, 223, 226, 228, 231, 232, 235, 240, 242, 243, 250, 286  
Արագած լեռ — 193  
Արդյանք — 246  
Արիանոս Աղեքսանդրացի — 84  
Արիստակես — 64, 67, 70, 84  
Արծրունի վաչե — 103—104  
Արծրունի Մերուժան տե՛ս Մե-  
րուժան Արծրունի  
Արծրունյաց ցեղ — 167, 189, 197, 222  
Արձախ (գավառ) — 207  
Արշակ (Տիրանի որդի) — 104, 113, 114, 115, 116, 117, 118, 120, 121, 122, 123, 124, 126, 127, 133, 143, 144, 156, 157, 158, 160, 162, 165, 168, 169, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 226, 227, 229, 231, 235, 237, 243, 244, 245, 247, 248, 249, 250, 278, 287  
Արշակ (Պապի որդի) — 282, 283, 289, 292, 293, 294, 296, 298, 299, 301, 302  
Արշակավան — 115, 160, 161, 162, 164  
Արշակունի — 63, 74, 77, 87, 116, 144, 166, 169, 171, 172, 177, 180, 191, 192, 200, 208, 209, 217, 218, 231, 248, 250, 253, 254, 273, 274, 277, 278, 279,

282, 289, 292, 293, 298, 299  
Արշամունիք — 174  
Արշավիր Կամսարական — 86, 87, 101, 111, 112, 126  
Արշարունիք — 86, 126, 158, 180, 216  
Արվաստան կամ Արվացաստան աշխարհ — 181, 186  
Արտազեբրս (բերդ) — 180, 216, 218  
Արտանդան (դաշտ) — 286  
Արտաշատ — 78, 88, 119, 218, 220  
Արտաշես — 277, 280  
Արտաշիր — 292  
Արտավազդ — 70, 76, 86, 87, 104, 289, 291, 292  
Արտավան (Վանանդի իշխան) — 96  
Արտավան կամ Արտևան (Պարսից թագավոր) — 214  
Արտիթ (եպիսկոպոս) — 296, 302  
Արտուշտ — 308

Բարիկ — 287, 290  
Բագավան — 169, 226, 235, 238  
Բագյանք (Բագենից) — 156  
Բագոս (Վասակ սպարապետի կոթայրը) — 188, 189  
Բագրատ (Բագարատ) Բագրատու-  
նի — 77, 126  
Բագրևանդ կամ Բագրավանդ — 115, 158, 222, 226, 235, 271, 288  
Բալխ (քաղաք) — 247  
Բախիշ — 231, 235  
Բակուր բզեշխ — 84, 80  
Բահլ կամ Բալխ — 247, 277  
Բամբիշ — 101, 105, 119  
Բառեշ (ավան) — 95  
Բառնարաս — 132

Բասան երկիր — 70  
Բասեն (գավառ) — 80, 111, 173, 189, 192, 297, 302, 306  
Բատ Սահառունի — 274, 276, 277, 278, 281  
Բարսիլիոս կամ Բարսեղ — 114, 115, 126, 127, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 156  
Բաքսներ (Բագսներ) — 162  
Բզնունիք (գավառ) — 166  
Բնաբեղ (բերդ) — 248  
Բոյական կամ Բոյեկան (նախա-  
բար) — 117, 201

Գ  
Գամիրք երկիր — 88, 101, 102, 123, 126, 148, 157  
Գայանե — 94  
Գանձակ — 76, 187, 226, 231, 242, 243, 245  
Գանի — 78  
Գարդմանաձոր — 102, 207, 251  
Գարեգին Ռշտունի — 77, 224, 230, 281  
Գարրույլ (Մաղխազ) Խոռխոռու-  
նի — 156, 282, 283, 291  
Գեհուկ — 117  
Գինդ — 297, 307, 308  
Գեհլ — 115, 144, 157, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 179, 183, 203, 230  
Գեհլ Անձնացի — 246, 272  
Գեթունյաց ցեղ — 121, 156  
Գեիթ (իշխան) — 88  
Գնունի (Գնունյաց) — 88  
Գողթն — 88  
Գոմկունք (գյուղ) — 174  
Գորութ — 88  
Գրիգոր (քահանայապետ) — 63, 64, 66, 67, 68, 70, 71, 72, 75, 84, 87, 93, 98, 99, 100, 101, 102, 122, 123, 124, 125, 127, 166, 169, 270

Գրիգորիս — 64, 70, 71, 72, 75, 75, 77, 94  
Գուգարք — 207, 252  
Գումանդ Շապուհ — 117, 197, 285, 286

Դ

Դալարիք (գյուղ) — 109  
Դանիել (եպիսկոպոս) — 65, 94, 96, 99, 100, 259, 260, 261, 302, 307  
Դանիել (իշխան) — 126  
Դանուն (հրամանատար) — 281  
Դասանտեն (բռեշխ) — 206  
Դատ (իշխան) — 80  
Դատարե կամ Դատարեն — 78, 79  
Դարանաղի (գավառ) — 67, 87, 90, 94, 166, 191, 231  
Դարյունք (Դարոնք, Դարեոնք) բերդ — 76, 201, 231  
Դեհկան (նահապետ) — 197, 198  
Դեմետ — 156  
Դիմաքսյան (տոհմ) — 96  
Դղակ (Դղակ) — 226, 235, 245, 246, 247  
Դմայունգ (Դմալունդ) Վանա-  
կան — 117, 196  
Դվին — 78  
Դրաստամատ — 226, 247, 248, 249, 250

Ե

Եգիպտոս — 84  
Եկեղյաց գավառ — 67, 87, 96, 166, 191, 257, 260, 299  
Եպիփան — 100, 228, 259, 261, 262, 263, 265  
Եռանդ — 231, 235  
Եվսեբիոս — 114, 115, 126, 127, 147, 149, 150, 151, 152  
Երազմակ — 171

Յրվանգրառու — 219  
Յրևյալ (գավառ) — 188  
Յփրատ — 70, 167, 234, 291

Չ

Չավեն — 296, 299, 300, 301  
Չարավանդ (գավառ) — 78  
Չարհճ (իշխան) — 88  
Չարհճավան, Չարհճավանդ (քա-  
ղաք) — 222, 288  
Չարհշատ — 219  
Չարմանդուխտ — 282, 283, 284,  
285  
Չգոն — 81  
Չիկ — 117, 199, 216, 223, 231,  
298  
Չինդկապետ կամ Չնդկապետ —  
118, 202  
Չոմն (իշխան) — 96  
Չորթ — 296, 301  
Չորթվաղ — 297, 306  
Չվիթ — 119, 218, 220, 221  
Չրվանդուխտ — 298

Ք

Քաղեոս — 64, 66, 88, 98, 124,  
128  
Քավրեշ (Քավրիդ) — 116, 193,  
194, 201, 233  
Քեկզի — 154  
Քեոզորոս — 154, 155  
Քիլ (ավան) — 67, 96, 259, 260  
Քորզոմ — 63, 64, 120, 229, 267  
Քորզոմական աշխարհ — 90  
Քորզան (գյուղ) — 67, 87, 90, 94

Ի

Իսահակ — 145  
Իսրայել — 98

Լսին (քերթ) — 172

Խ

Խաղ — 115, 158, 159, 160, 161,  
162, 169  
Խախ (ավան) — 257, 259  
Խաղտյոց երկիր — 225  
Խարտիզան — 189  
Խեշա (Բահուր բղջիթի քրդին) —  
80  
Խոսրով Ա — 67  
Խոսրով Բ (Կոտակ) — 63, 64,  
67, 70, 71, 75, 76, 77, 78,  
79, 85, 87  
Խոսրով Դ (Արշակունի) — 296,  
298, 299, 301, 302  
Խոսրովակերտ — 78  
Խոր վիրապ — 56  
Խոժաստան — 220, 226, 245, 247

Ս

Սոփթ — 67, 80, 88, 126, 166,  
248, 262, տե՛ս Մեծ Սոփթ

Կ

Կայեն — 171  
Կամսարականներ — 180  
Կասպից երկիր — 252  
Կարեն (իշխան) — 96, 216, 222,  
231  
Կարին (գավառ) — 158, 292  
Կարին (գաղա) — 279  
Կեսարիա — 88, 101, 114, 115,  
123, 126, 147, 149, 152, 153,  
228, 265, 266, 270  
Կեփաս — 132  
Կիչկեն (Կահապետ) — 156  
Կիրակոս — 296, 305

Կոզ (գավառ) — 159, 231, 238  
Կոզր — 207  
Կոզթ — 251  
Կոմս (Մամիկոնյան տոհմից) —  
277, 278  
Կոստանդինոս — 84, 111  
Կովզի երկիր — 76, տե՛ս Կոզ  
Կորդիթ — 207, 251  
Կորդուք (Կորդվաց) — 80, 81,  
100, 175, 251, 260, 261  
Կորճայթ — 205, 288, 292  
Կուր — 75, 251, 252

Հ

Հարանդ (գավառ) — 75  
Հարուժյանք (Հարուժենից) — 156  
Հաղարավուխտ — 116, 187, 188,  
195  
Հակոբ — 64, 81, 82, 83, 84, 145  
Հակորոս — 132, 133  
Համազասպյան — 280, 281  
Համազասպունի — 224, 281  
Հայոց աշխարհ — 65, 67, 69, 70,  
113, 114, 115, 116, 117, 118,  
119, 120, 121, 122, 129, 133,  
143, 156, 161, 163, 175, 178,  
187, 189, 190, 191, 195, 196,  
197, 198, 199, 200, 201, 202,  
204, 206, 208, 210, 211, 212,  
213, 216, 217, 219, 222, 223,  
224, 227, 229, 236, 231, 232,  
235, 241, 243, 247, 254, 256,  
266, 267, 268, 269, 270, 271,  
273, 274, 275, 277, 278, 281,  
282, 283, 284, 286, 287, 288,  
292, 293, 294, 295, 296, 298,  
299, 305, 306, 307  
Հայր մարդպետ — 65, 102, 103,  
115, 165, 166, 167, 217, 226,  
234, 258, 259, 272  
Հաշտենք (Հաշտենից) — 80, 85

Հայցյաց կամ Հայցեկաց գյուղ —  
105

Հայցյաց դրախտ — 96, 100  
Հեր (գավառ) — 78  
Հերակլ — 95  
Հիսուս Քրիստոս — 68, 69, 72,  
73, 74, 75, 81, 82, 84, 85,  
86, 87, 88, 89, 94, 95, 97,  
98, 100, 115, 122, 125, 131,  
132, 133, 134, 135, 136, 137,  
138, 139, 141, 143, 144, 145,  
146, 147, 148, 149, 150, 151,  
162, 153, 154, 155, 167, 171,  
209, 221, 231, 254, 258, 263,  
264, 268, 294, 308  
Հմայակ — 280

Հյուրիանոս (քահանայապետ) —  
219

Հոհան եպիսկոպոս — 296, 302,  
303, 304, 305

Հովիտ (գավառ) — 159  
Հովհաննես մարգարիտ — 68, 94,  
101, 169, 289

Հովսեփ — 145  
Հոփսիմ — 94  
Հրեմոս — 156  
Հրեշտոմ (կամ Հրեշտոմ) —  
117, 200

Հուգա — 86  
Հունաստան — 115, 168  
Հուսիկ — 64, 65, 70, 71, 72, 73,  
87, 88, 89, 90, 93, 98, 99,  
100, 104, 122, 124, 228, 265,  
268

Ջ

Ջորա (գավառ) — 88, 207

Ճ

Ճենաց աշխարհ — 242, 279

Մ

Մախազ— 156  
 Մախազան— 118, 196, 205, 232, 291  
 Մակարե— 86  
 Մակեդոնիա— 132  
 Մահկերտուն— 206  
 Մամբրե (տեղի անուն է)— 228, 261, 262  
 Մամիկոնյաններ— 70, 76, 86, 101, 121, 156, 169, 176, 177, 178, 195, 197, 207, 274, 277, 278, 280  
 Մանազկերտ, Մանավազակերտ— 70, 265, 299  
 Մանակ (իշխան)— 80  
 Մանաձիրճ Ռշտունի— 82, 83  
 Մանասպ (իշխան)— 88  
 Մանավազ (իշխան)— 88  
 Մանավազյաններ— 64, 69, 70  
 Մանուել— 227, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 298  
 Մասրութներ— 64, 71, 74, 75, 76  
 Մատաթիա— 86  
 Մար (իշխան)— 80  
 Մարազ— 158  
 Մարախ— 308  
 Մարաց աշխարհ— 192, 251  
 Մարեր— 228  
 Մարի— 177, 212  
 Մարիամ— 135  
 Մարուճան (Մարիճան)— 118, 202  
 Մեծամորի դաշտ— 78  
 Մեծ Գրիգոր— 67, 88, 94, 95, 96, 308, տե՛ս Գրիգոր (բաճանալապետ)  
 Մեծ Խոսրով— 67  
 Մեծ Մոփթ— 80, 88, 90, 100, 191, 207, 228, 253, 261

Մեծ Հակոբ— 81, 83  
 Մեծ Հայք— 76, 77, 79, 84, 85, 87, 94, 101, 102, 114, 120, 121, 122, 126, 128, 131, 157, 182, 204, 215, 232  
 Մեծ Մասիս— 108  
 Մեծ Մովսես— 82  
 Մեհանդակ (Մեհենդակ) Ռշտունի— 77, 101, 126  
 Մեհառ— 156  
 Մեհեն— 158  
 Մերուժան (Մեհրուժան) Արծրունի— 116, 119, 189, 190, 191, 193, 197, 198, 199, 200, 201, 202, 204, 205, 206, 207, 222, 223, 224, 231, 233, 236, 282, 284, 285, 287, 288, 289, 290, 291, 292  
 Մզոր— 191  
 Միջագետք— 186  
 Մծբին— 64, 81, 84, 181, 186  
 Մծորթ— 167  
 Մշկան— 117, 201, 202  
 Մովսես— 145, տե՛ս Մեծ Մովսես  
 Մովսես (եպիսկոպոս)— 297, 306  
 Մոկան, Մոխկան— 118, 206, 286  
 Մրջունիկ— 115, 168, 174  
 Մուշե— 308  
 Մուշեղ Մամիկոնյան— 217, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 240, 241, 242, 243, 244, 245, 250, 251, 252, 253, 254, 258, 259, 270, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 281  
 Մուշկ— 156  
 Մուրիկ— 169

Ն

Նախճավան— 219  
 Ներսես— 65, 80, 111, 114, 120, 223

Ներսես (եպիսկոպոսապետ)— 105, 114, 115, 118, 122, 124, 126, 127, 129, 133, 134, 140, 141, 142, 144, 145, 147, 148, 152, 156, 157, 158, 160, 161, 162, 164, 165, 166, 168, 169, 170, 171, 172, 174, 175, 179, 208, 215, 221, 228, 230, 231, 232, 236, 237, 238, 240, 242, 243, 254, 255, 256, 257, 259, 260, 261, 265, 266, 267, 268, 269, 294, 301, 308  
 Նիկիա— 84  
 Նիհորական— 206  
 Նոյ (իշխան)— 126  
 Նոյի տապան— 81  
 Նոյիրական— 206, 228, 250  
 Նպատ— 235, 236

Շ

Շակաշեն— 251  
 Շահակ (Աղբիանոսի սերնդից)— 65, 102  
 Շահակ (Կորճեաթի)— 296, 300  
 Շահապ— 305  
 Շահապիման— 169  
 Շահեն (իշխան)— 88  
 Շահունի կամ Շահեի Մոփթ— 80, 126, 191  
 Շաղիտա— 100, 228, 259, 260, 261  
 Շապստան— 118, 204, 205  
 Շապուհ— 116, 117, 118, 119, 175, 176, 177, 178, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 189, 189, 190, 191, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 204, 206, 207, 208, 210, 211, 213, 214, 215, 216, 219, 220, 222, 223, 224, 225, 226, 227, 232, 233, 235, 237, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249,

274, 277, 281, 285, 286  
 Շապուհ-Վարազ— 65, 77, 106, 107, 108, 109, 110, 112  
 Շախասպ Արծրունի— 104, 115, 165, 167  
 Շիրակ (գավառ)— 126, 180

Ո

Ողական (ամրոց)— 234  
 Ողամբի— 115, 174  
 Ոսխա (գյուղ)— 111, 189  
 Ոսկիք— 308  
 Որդորու (գյուղ)— 70  
 Որդունիներ— 64, 69, 70  
 Որմզգուխտ— 207, 225  
 Որոթ— 88

Չ

Չունակ (կաթողիկոս)— 175

Պ

Պաղեստին— 218, 219  
 Պապ (Հուսիկի որդի)— 65, 71, 100, 101, 104, 105  
 Պապ Քաղավոր (Արշակի որդի)— 174, 203, 204, 216, 217, 226, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 241, 242, 244, 245, 246, 254, 255, 256, 257, 259, 265, 266, 267, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 279, 282, 285  
 Պարզև— 126  
 Պարսկաստան— 94, 118, 119, 187, 194, 196, 216, 231, 245, 248, 273, 277  
 Պետրոս— 132  
 Պողոս— 132, 139

Ջանջանակ— 77  
Ջան (իշխան)— 80  
Ջրաբաշխիք (գյուղ)— 77

Ի

Թոստոմ— 145  
Թշտունիք— 79, 83, 156, 224,  
280, 281

Ս

Սակոտան— 118, 204  
Սահաունիք— 156, 274  
Սաղամուտ— 118, 205  
Սաղամուտ— 207  
Սամ— 287  
Սամուել Մամիկոնյան— 225, 291  
Սանաարուկ (Քաղափոր)— 66,  
167, 192  
Սաննան (Քաղափոր)— 74, 75,  
76, 77  
Սասանյան (յեղ), Սասանի  
(տոհմ)— 247, 277  
Սատաղ (քաղաք)— 76, 111  
Սարարադ (լեռ)— 81, 83, Կույ-  
նը Արարատ  
Սարգիս— 154, 155  
Սյունի— 65, 80  
Սյունյաց Վաղինակ— 80  
Սյունյաց Կաթարար— 80, 126,  
168, 183, 287  
Սյունյաց գավառ— 290  
Սպանդարտ (Կամարուկան տոհ-  
մից)— 180  
Սպեր (գավառ)— 292  
Ստեփանոս— 182  
Սուրբ Մուշեղ— 308  
Սուրեն— 117, 192, 199, 227,  
282, 283, 284, 285  
Սուրիկ— 156

Վահագն— 95  
Վահան Ամատունի— 77, 79  
Վահան Մամիկոնյան— 119, 307,  
222, 223, 224, 225, 291  
Վահրիճ Կահրիճ— 117, 196  
Վաղարշ (Հաղարարպետ)— 87, 81  
Վաղարշակ— 115, 282, 288, 289,  
292  
Վաղարշապատ— 76, 218  
Վաղես— 112, 114, 115, 133, 134,  
143, 144, 149, 151, 152, 153,  
154, 155, 156, 157  
Վաղինակ Սյունի— 64, 80, 287  
Վան— 219, 224, 281  
Վանանդ (գավառ)— 86, 96,  
188, 297, 306  
Վաչակ— 308  
Վաչական— 117, 201  
Վաչի Մամիկոնյան— 64, 70, 76,  
77, 78, 79, 80, 85, 86, 87,  
278, 289, 291  
Վասակ Մամիկոնյան— 101, 104,  
115, 116, 117, 118, 121, 156,  
157, 175, 176, 177, 178, 179,  
180, 181, 182, 183, 184, 187,  
188, 190, 192, 193, 194, 195,  
196, 197, 198, 199, 200, 201,  
202, 204, 205, 206, 207, 208,  
215, 217, 229, 232, 233  
278  
Վասնյա գաղա— 75  
Վարազ (իշխան Գիմարայան տոհ-  
մից)— 96  
Վարազ լեռ— 289  
Վարազ Կամինական— 77  
Վարազ Շահունի— 88  
Վարազ (Պարսից զորավար)—  
227, 286  
Վարազ-Շապուհ, տե՛ս Շապուհ-  
Վարազ

Վարազդատ— 227, 228, 278,  
274, 275, 276, 277, 278, 279,  
280, 281, 282  
Վարազդուխտ— 101  
Վարդան Մամիկոնյան— 116,  
121, 156, 157, 169, 177, 178,  
179, 207, 324  
Վարդանդուխտ— 292, 293  
Վարդանուշ— 288  
Վարուժան— 121  
Վին— 116, 194  
Վրաստան— 252  
Վրիկ— 105  
Վրթանես— 63, 64, 65, 67, 68,  
69, 70, 71, 73, 76, 79, 85,  
86, 87, 88, 122  
Վրկեն (Կահակախ)— 156

Տ

Տաճատ— 103, 104  
Տաճար մայրի— 78  
Տայր— 104, 131, 179, 305  
Տարոն— 68, 94, 100, 101, 104,  
105, 115, 129, 165, 166, 174,  
234, 307, 308  
Տափեր կամուրջ— 88, 218  
Տերենտ— 229, 280, 296, 244,  
245, 271, 272  
Տիգրան— 218, 219  
Տիգրանակերտ— 191, 261  
Տիգրոն— 176, 183, 212  
Տիկնունի ապարանք— 78  
Տիրան— 65, 71, 88, 89, 90, 92,  
94, 96, 99, 103, 106, 107,  
109, 113, 114, 120, 121, 123,  
165, 172, 235, 248, 303  
Տիրանամ— 145  
Տիրիթ— 115, 144, 157, 168,  
172, 173, 174

Տիրիկ (Կախկոպոս)— 297, 306  
Տիրոց Իշխան— 88  
Տմորիք— 207, 228, 251  
Տասայ (Տոգր, Տոսր)— 219, 224,  
281  
Տրդատ— 63, 64, 66, 67, 94,  
102, 111, 166, 169, 259, 270,  
308

Ց

Ցուլ գլուխ, Ցուլ (լեռ)— 76, 77,  
85

Ռ

Ռուհա— 270  
Ռոնայր— 226, 235, 236, 241,  
242, 274  
Ռուրիք— 251

Փ

Փայտակարան— 252  
Փառանձեմ— 115, 118, 168, 172,  
173, 174, 178, 183, 203, 216,  
217, 219, 220, 234, 255  
Փառավաղյաններ— 252  
Փառեն— 65, 101, 302, 305  
Փավասոս (Կախկոպոս)— 259,  
296  
Փխակ Սյունի— 65, 106, 107,  
108

Ք

Քուշանաց երկիր— 248  
Քուշանաց Արշակունի— 247

Ը

Յուզակ (Քիչդ)— 76

**Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ներածություն . . . . . 6

**ԲՈՒՋԱՆԴԱՐԱՆ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նախագիտելիք . . . . .	63
Ցանկ Երրորդ դպրության . . . . .	64
Երեւոյ դպրություն. Ակիգր . . . . .	66
Ցանկ Զորրորդ դպրության . . . . .	114
Զորրոյ դպրություն . . . . .	120
Ցանկ Հինգերորդ դպրության . . . . .	226
Հինգերորդ դպրություն . . . . .	229
Ցանկ Վեցերորդ դպրության . . . . .	296
Վեցերորդ դպրություն . . . . .	298
Մանթութիւններ . . . . .	309
Անվանացանկ . . . . .	343

Խմբագիր՝ Ս. Հ. Ումտոյան  
 Նկարիչ՝ Կ. Թ. Տիրատուրյան  
 Գեղ. խմբագիր՝ Ա.Ն. Վ. Գասպարյան  
 Տեխ. խմբագիր՝ Օ.Ն. Ս. Փանիկյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Դ. Ազատյան

Հանձնված է արտադրության 14/VII 1967 թ.:  
 Ստորագրված է տպագրության 24/V 1968 թ.:  
 Քուղթ՝ տպագրական № 1, 34×108<sup>1</sup>/<sub>32</sub>, հրատ. 17,3 մամ.,  
 տպագր. 22,0 մամ.=18,48 պայմ. մամ.: Տիրած 20,000,  
 պատվեր 1185: Գինը՝ 1 ո. 30 կոպ.:  
 «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի  
 պոլիգրաֆարդյունարհրության գլխավոր վարչության Հակոբ  
 Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: